

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՍՏՈՄԻ

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1920-1930-
ԱԿԱՆ ԹԹ.)**

Ատենախոսություն

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1.1 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը և Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցը սփյուռքահայ հասարակական-քաղաքական քննարկումներում.....

... 22

1.2 Հայաստանի անկախության գաղափարի քննարկումները

63

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

2.1 Ապստամբության պատճառների լուսաբանումը սփյուռքահայ կուսակցությունների և մամուլի

կողմից.....144

2.2 Ապստամբության պարտության պատճառների, հետևանքների և խորհրդային իշխանության վերահաստատման մասին մոտեցումները սփյուռքահայ հասարակական-քաղաքական

ըրջանակներում.....213

2.3	Զանգեզուրի խորհրդայնացումը սփյուռքահայ գործիչների գնահատմամբ.....	247
	Եզրակացություններ.....	
		257
	Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ.....	266

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի խորհրդայնացումը հայոց նորագույն պատմության շրջադարձային էջերից է: Բուլճևիկների ամբողջական իշխանության գալը մեր երկրում ոչ միայն վարչակարգի, հասարակական-քաղաքական կարգի փոփոխություն էր, այլև արտաքին-քաղաքական նոր արևելում և, ցավոք, անկախության կորուստ: Հայաստանում խորհրդային իշխանության վերջնական հաստատումը հեշտությամբ չստացվեց: Հայիեդկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի հռչակագիրը, ինչպես նաև դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը լոկ սկիզբն էին այն գործընթացի, որի ավարտին նոր միայն խորհրդային վարչակարգը հանգիստ շունչ քաշեց: Հայիեդկոմի իշխանության գալուց մի քանի օր անց Հայաստանում սկսվեց բռնությունների մի ամբողջ շարք, որի հետևանքը եղավ 1921 թ. փետրվարյան ապստամբությունը: Սակայն գործը Փետրվարյան ապստամբության ճնշումով չվերջացավ: Մի փոքր ուշ ուժի գործադրմամբ խորհրդայնացավ նաև Զանգեզուրը: Խորհրդային Հայաստանը Մոսկվայի ցուցումով նախ

ընդգրկվեց Անդրկովկասի խորհրդային դաշնության, ապա նաև՝ ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Հայ ժողովուրդը ստիպված էր ոչ միայն ընդունել մինչ այդ իր համար խորթ վարչակարգը, այլև ժամանակավորապես հաշտվել անկախության կորստի հետ:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը տարաբնույթ գնահատականների է արժանացել ինչպես հայ պատմագիտության, այնպես էլ հասարակական-քաղաքական մտքի կողմից: Խնդիրն առավել սուր բնույթ է ստացել Հայ հեղափոխական-դաշնակցության և Կոմունիստական կուսակցության միջև առկա գաղափարաքաղաքական անզիջում պայքարի բովում:

Խորհրդահայ պատմաբանները, կոմունիստական գաղափարախոսության պարտադրանքով պայմանավորված, Հայաստանի խորհրդայնացման ամբողջ գործընթացը ներկայացրել են միայն որպես դրական երևույթ, իսկ ընդդիմացողները նրանց կողմից որակվել են որպես հայ ժողովրդի թշնամիներ և դավաճաններ: Սուր գնահատականներ են հնչել հատկապես Ալեքսանդրապոլի պայմանագրի, Փետրվարյան ապստամբության վերաբերյալ՝ դրանք որակելով որպես հակաժողովրդականության ծայրահեղ դրսևորումներ¹: Սփյուռքում նույնպես քիչ չէին խորհրդային պաշտոնական դիրքորոշումը կիսողները: Սակայն Սփյուռքի հասարակական-քաղաքական և պատմագիտական շրջանակները հիմնականում ազատ են եղել իրենց դիրքորոշումն արտահայտելիս ու պետական-կուսակցական գաղափարախոսական ճնշման չեն ենթարկվել: Չնայած պետք է ընդունել, որ Սփյուռքում էլ Հայաստանի խորհրդային իշխանության հաստատման գնահատման հարցում հնարավոր չէր ընդհանրապես զերծ մնալ կուսակցական ազդեցությունից:

Օրինակ՝ ժամանակի բուլժևիկ գործիչ Արտաշես Կարինյանը գրում է, որ Դաշնակցությունը փետրվարյան դեպքերին անդրադառնալիս իրեն ներկայացնում է «որպես «ազատագրական ուժ», իսկ փետրվարի 18-ը՝ որպես «համաժողովրդական բողոքի» հետևանք»²: Ա. Կարինյանը դրանք օգտագործում է հեզնական իմաստով և եզրակացնում. «Անցյալի «դեպքերի» աղավաղված լուսաբանությունը դառնում է այդպիսով հայ հակահե-

¹ Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում (1920-1963), Ուրվագծեր, Երևան, 1967, էջ 364-434, նույնի՝ Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում, (1964-1988), Ուրվագծեր, Երևան, 1990, էջ 333-341:

² Կարինյան Ա., Դաշնակցությունը յեվ իր զինակիցները, Յերևան, 1932, էջ 94:

ղափոխության համար իդեոլոգիական քաղաքական պայքարի զենք պրոլետարիատի և պրոլետարական հեղափոխության դեմ»³: Իր հերթին Փետրվարյան ապստամբության ղեկավարներից մեկը՝ Սիմոն Վրացյանը, անդրադառնալով 1923 թ. Վիեննայում գումարված Հ.Յ. Դաշնակցության խորհրդաժողովի կողմից ապստամբությանը տրված գնահատականին, գրում է. «... ժողովը միաձայնությամբ իր բուռն ծափերով Փետրուար 18ը դասեց հայ ազատամարտի ամենափայլուն էջերի շարքում»⁴:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման պատմության ուսումնասիրության մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այդ գործընթացի վերաբերյալ 1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից տրվող գնահատականները: Միայն այն հանգամանքը, որ այդ տարիներին Խորհրդային Միությունում գործնականում անհնար էր դեպքերին առարկայական գնահատական տալ, իսկ Սփյուռքում անհամեմատ ավելի մեծ էր ազատ մտածելու և տեսակետ հայտնելու հնարավորությունը, շատ ավելի է կարևորվում սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչների ու մամուլի գնահատականների վերաբժնորումը:

Նախ փորձենք հստակություն մտցնել 1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտք ասվածի մեջ: Պարզ է, որ այս շրջանում հայկական սփյուռքն իր դասական ընկալմամբ նոր էր ձևավորվում⁵: Նոր ձևավորվող Սփյուռքում հիմնական ասելիք և անելիք ունեցողները Հայաստանի խորհրդայնացումից հետո արտասահմանում հայտնված հայ քաղաքական տարագիրներն էին: Այդուհանդերձ մենք խուսափել ենք «տարագիր հայ հասարակական-քաղաքական միտք» ձևակերպումից, որովհետև մեր խնդրի շրջանակներում քննարկվել են նաև այնպիսի թերթերի ու գործիչների մտքեր, որոնք կամ ովքեր տարագիր չէին: Բացի դրանից, հայ տարագիր հատվածն էլ այս ընթացքում ձեռնամուխ եղավ հայկական սփյուռքի

³ Նույն տեղում:

⁴ Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. 2, Պէյրուֆ, 1967, էջ 199:

⁵ Տե՛ս Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009, с. 43, հմմտ. Եղիազարյան Ա., Հայ Սփյուռքի պատմության պարբերացումը, «Սփյուռքագիտություն», Տարեգիրք, Երևան, 2013, էջ 35:

կազմավորմանը և հիմնականում հանդես էր գալիս իրեն հետևող սփյուռքահայ որոշակի հատվածի անունից:

Թեմայի համակողմանի ուսումնասիրությունը պայմանավորված չէ միայն պատմագիտական ճանաչողական նպատակներով: Այսօր Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական բարդ ու խրթին երևույթների լաբիրինթոսում: Անհրաժեշտ է մեկտեղել համայն հայության ներուժը: Անհերքելի փաստ է, որ անհնար է պատկերացնել Սփյուռքն առանց Հայաստանի և հակառակը: Հայաստանում և նրա շուրջ տեղի ունեցող ցանկացած երևույթ միշտ էլ մտահոգել է սփյուռքահայությանը: Ցավոք, խորհրդային իշխանության տարիներին սփյուռքահայության կարծիքը հասկանալի պատճառներով ընդհանուր առմամբ հաշվի չէր առնվում հայրենի պետականաշինության գործում: Ավելին, խորհրդային իշխանությունները մտադրություն են ունեցել Սփյուռքում թուլացնելու, հնարավորության դեպքում նաև վերացնելու հայ ազգային կուսակցությունները և հատկապես Դաշնակցությունը⁶: Սակայն ազգային կուսակցությունների նպատակը եղել է խորհրդային Հայաստանի շենացումն ու հզորացումը: Լավագույն մտավորականներով ու մտավոր կարողությամբ համալրված Սփյուռքը փորձել է ոչ միայն նյութական աջակցություն ցուցաբերել Հայաստանին, այլև յուրովի գնահատականներ տալ հայրենիքում կատարվող գործընթացներին՝ փորձելով այդ կերպ ազդել դրանց վրա: Այսօր Սփյուռքի դերն աստիճանաբար աճում է⁷: Ստեղծված պայմաններում պետք է հնարավորինս լայնորեն օգտագործել սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի հնարավորությունները մեր պետականության կայացման գործում:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Այս ուսումնասիրության գլխավոր նպատակն է համակարգված ներկայացնել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման վերաբերյալ Սփյուռքում հնչեցված քաղաքական գնահատականները:

⁶ Տե՛ս Ղազախեցյան Վ., Սփյուռքում խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2008, թիվ 2, էջ 109:

⁷ Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017, էջ 26:

1920-1930-ական թվականներին հայկական սփյուռքում դասական իմաստով պատմագիտական դպրոց գոյություն չունեին: Հայաստանի խորհրդայնացման գործընթացի վերաբերյալ հիմնական պարզաբանումներ կատարողները դեպքերին ականատես տարագիր մտավորական և քաղաքական վերնախավն էր, որն իր տեսակետը ներկայացնում էր կամ առանձին հրատարակությունների (հիմնականում հուշագրություններ), կամ մամուլի միջոցով:

Ուսումնասիրության ընթացքում ականայից մեզ համար խնդիր է հանդիսացել ոչ միայն հարցի վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականների վերլուծությունը, այլև համապատասխան նյութերի ընտրությունը: Ի դեպ, այս հարցը կարող է հետագա գիտական առավել խոր ուսումնասիրության առարկա դառնալ: Այս առումով իրավացի է սփյուռքահայ ականավոր պատմաբան Գառնիկ Գյուլալյանը, որը գրում է. «... պատմութիւնը դառնում է շօշափելի փաստերի և նրանց ընտրութեան գիտութիւն»⁸:

Պետք է նշել, որ մեզ համար համակարգման և վերլուծության ենթակա նյութի ընտրությունը հեշտ չի եղել: Այս հարցում ևս մեր մոտեցումները հիմնավորված են և փաստարկված:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներից շատերը եղել են ոչ միայն Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացի ժամանակակիցները, այլև անմիջական մասնակիցները: Այս առումով նրանց գնահատականները միաժամանակ նաև հույզերի դրսևորումներ կարելի է համարել: Մենք, ըստ էության, փորձել ենք թեկուզ ամենախիստ վերաբերմունք դրսևորելու դեպքում էլ «բարեկամաբար» մոտենալ այդ գնահատականներին, որովհետև այդ մարդիկ վերապրել են դեպքերը հույզերով և, լինելով ժամանակակիցները, փորձել են կատարվածը ներկայացնել միայն դրական կողմերով: Որոշ դեպքերում նույն խնդրի վերաբերյալ նույնիսկ միևնույն քաղաքական կողմնորոշում կամ կազմակերպություն ներկայացնող անհատները, թեկուզ հոգեբանորեն, տարբեր կերպ են արձագանքել իրողությանը:

⁸ Գիւլալեան Գ., Հայաստանի պատմութեան շրջանները, Պէյրուօ, 1946, էջ 8:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները որոշ դեպքերում ոչ համաչափ են անդրադարձել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը: Դաշնակցական գործիչները և թերթերն անհամեմատ ավելի լայնածավալ քննարկում են իրականացրել, փոխարենը՝ հակադիր կողմում գտնվողները շատ քիչ են անդրադարձել խնդրին: Այս հանգամանքն ինքնին դժվարացնում է իրարամերժ տեսակետների համաչափ վերլուծություն կատարելու հնարավորությունը: Չնայած դրան, մեր կողմից արվել է հնարավորը՝ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման վերաբերյալ ներկայացնելու սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի տարբեր թևերի տեսակետները:

Աշխատանքը շարադրելիս փորձել ենք առանձնակի ուշադրություն դարձնել հասարակական-քաղաքական գործիչների հուշագրություններին⁹: Հուշագրական տեղեկությունները, որոնցում կան դեպքերին տրված արժեքավոր բնորոշումներ, շատ կարևոր են դեպքերի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու առումով: Երբեմն այդ տեղեկություններն ինչքան էլ կողմնակալ կամ անստույգ լինեն, վճռորոշ են դեպքերի իրական պատկերը ստանալու համար:

Պատմագիտության տեսաբանները հուշագրությունների արժանահավատության վերաբերյալ հակասական կարծիքներ են ներկայացնում: Օրինակ, գերմանացի փիլիսոփա, պատմության պրոֆեսոր Ֆրիդրիխ Շիլլերը (1759-1805) գտնում է, որ հուշագրություններն իրենց բովանդակության և անբռնազբոսիկ ձևերի արժանիքների շնորհիվ բավարարում են ամենատարբեր ընթերցողներին՝ համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցող կարևորագույն դեպքերին հաճախ տալով ապշեցուցիչ բացատրություններ¹⁰:

Իսկ ահա ֆրանսիացի պատմաբան Շարլ Սենոբուրը (1854-1942) խորհուրդ է տալիս հուշագրություններին վերաբերվել «հատուկ անվստահությամբ, որպես երկրորդական վկայությունների»¹¹:

⁹ Այդ հուշագրությունների մեծ մասը հետագայում հրատարակվել են առանձին հատորներով:

¹⁰ Штѐу Шиллер Ф., Собрание сочинений: В 7 т., т. 5, Москва, 1957, с. 404-405:

¹¹ Лангула Ш.-В., Сеньобос Ш., Введение в изучение истории, Москва, 2004, 305 стр. 140.

Հուշագրությունների հիմնական առանձնահատկությունը՝ որպես սկզբնաղբյուր, դրանց ենթակայականությունն է (սուբյեկտիվություն) և կախվածությունը մարդկային հիշողությունից: Ընդ որում ենթակայականությունը կարող է պայմանավորվել հուշագրի անհատականությամբ և անձնական համակրանքով կամ հակակրանքով: Ի դեպ, հուշագրությունների սուբյեկտիվության աստիճանը կարելի է պարզել դրանց փաստարկվածության մակարդակից: Պետք չէ բացառել նաև դեպքերը միտումնավոր ձևափոխված ներկայացնելու հակումը:

Սակայն մյուս կողմից հուշագրություններում տրվող գնահատականները, թեկուզ և զգացական, շատ դեպքերում ավելի հստակ պատկերացում են տալիս դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ, քան պաշտոնական փաստաթղթերը:

Մամուլի նյութերի ընտրության հարցում նույնպես ցուցաբերել ենք համապատասխան հիմնավորմամբ մոտեցումներ:

Բնականաբար, անկարելի է անդրադառնալ սփյուռքահայ ամբողջ մամուլի նյութերին: Հարուստ նյութի առկայության պայմաններում ստիպված ենք եղել ընտրություն կատարել: Որոշ գնահատականների անդրադարձել ենք առավել ընդգրկուն, որոշ դեպքերում թռուցիկ ակնարկ ենք ներկայացրել, երբեմն էլ, հիմնականում կրկնությունից խուսափելու նպատակով, ստիպված ենք եղել ուշադրություն չդարձնել: Ընտրության հիմքում նախապատվությունը տվել ենք նյութի հեղինակի, թերթի, ամսագրի ունեցած ազդեցիկ հասարակական դիրքին, հասարակության վրա իրենց ազդեցությունը թողած գնահատականներին և տեսակետներին: Դրանով փորձել ենք հնարավորինս ավելի լավ ներկայացնել հասարակության վերաբերմունքը տվյալ խնդրի նկատմամբ: Սա, առաջին հայացքից, թվում է, թե ազատություն է տալիս նյութի ընտրության հարցում: Սակայն դա այդպես չէ, որովհետև աշխատել ենք դուրս չգալ փաստի սահմաններից: Ավելին, փորձել ենք հնարավորինս նրբանկատ լինել գնահատականների, տեսակետների ընտրության հարցում:

Ուսումնասիրության ընթացքում փորձել ենք տարբերակված մոտեցում ցուցաբերել թերթերի և ամսագրերի նյութերի միջև: Թերթերը խնդիրներին անդրադարձել են միայն տարեդարձերի ժամանակ, երբեմն նաև հուշեր և գնահատումներ են տպագրել:

Ամսագրերում ավելի շատ են վերլուծական գնահատականները և հուշերը, որոնք կարևոր սկզբնաղբյուր են: Որոշ թերթերի նյութեր էլ լրատվական բնույթի են, տպագրվել են ընթացող դեպքերին զուգընթաց¹²:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատումներին անդրադառնալիս հաշվի ենք առել հատկապես կուսակցական պատկանելությունը և ուղղվածությունը: Շատ դեպքերում թերթերը պաշտոնապես կուսակցությունների չեն պատկանել, բայց ունեցել են արտոնատերեր: Վերջիններս, եթե որևէ կուսակցության անդամ էլ չեն եղել, ապա ունեցել են քաղաքական հստակ կողմնորոշում: Սակայն մամուլի նյութերի բովանդակությունը պայմանավորված է եղել ոչ միայն և ոչ այնքան արտոնատեր կուսակցության կամ անձի, որքան խմբագիրների և թղթակիցների մասնագիտական, մտավոր կարողություններով ու հմտություններով:

Աշխատության մեջ ներկայացվող նյութերի մեծ մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Այս սկզբունքների կիրառմամբ աշխատանքը շարադրելիս մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- վեր հանել Սփյուռքում հաստատված հայ քաղաքական վտարանդիության գնահատականները Հայաստանի խորհրդայնացման խնդրի վերաբերյալ,
- ներկայացնել 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը ստորագրելու հարցում Հայաստանի օրվա իշխանությունների մոտեցումները և սփյուռքահայ հասարակական-քաղաքական տարաշերտ շրջանակների արձագանքները,
- բացահայտել 1920 թ. դեկտեմբերի 2-3-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելու հանգամանքները և այս խնդրի վերաբերյալ Սփյուռքի դիրքորոշումը,
- պարզաբանել Հայաստանի խորհրդայնացման օրն ընդունելու (նոյեմբերի 29 և դեկտեմբերի 2) սկզբունքային մոտեցումների տարբերությունը,

¹² Խոսքը վերաբերում է 1921-1922 թվականների հրապարակումներին:

- ցույց տալ Փետրվարյան ապստամբության ինքնաբուխ և ժողովրդական բնույթը, վեր հանել այս դեպքերի կապակցությամբ գնահատականների տարբերության իսկական շարժառիթները,

- ցույց տալ Փետրվարյան ապստամբության դրական և բացասական հետևանքները և դրանց վերաբերյալ սփյուռքահայ-հասարակական-քաղաքական մտքի գնահատականները,

- ցույց տալ, որ անկախ գոյություն ունեցող աշխարհաքաղաքական իրավիճակից և մեր տարածաշրջանում գերտերությունների շահերի և ազդեցության աստիճանից, Հայաստանի անկախությունը գերագույն արժեք է, և այդ հարցում սփյուռքահայության ստվար հատվածը նախանձախնդիր ու հետևողական մոտեցում է ցուցաբերել:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները: Ուսումնասիրության մեջ փաստացի հետազոտվում են Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման վերաբերյալ 1920-1930-ական թթ. հնչեցված սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականները: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացը մենք ժամանակագրորեն սկսել ենք 1920 թ. վերջից և հասցրել 1921 թ. ամառ՝ Չանգեզուրի խորհրդայնացումը:

Քննվող նյութի՝ 1920-1930-ական թվականներն ընդգրկող ժամանակաշրջանը պայմանավորված է նրանով, որ Սփյուռքում մինչև 1930-ականների վերջերը խիստ վերապահումներով էին մոտենում Հայաստանի խորհրդայնացման իրողությանը: Հատկապես մինչև արևմտյան երկրների կողմից Խորհրդային Միության ճանաչումը տարագիր հայ հասարակական-քաղաքական շրջանակների հոգու խորքում մեծ հավատ է եղել Հայաստանում խորհրդային իշխանությունը «տապալելու» ուղղությամբ: Միայն ԽՍՀՄ-ի վերջնական ճանաչումից հետո «կրքերը» փոքրիշատե հանդարտվեցին, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը ստեղծեց աշխարհաքաղաքական նոր իրողություն, և Սփյուռքի նույնիսկ ամենաարմատական տրամադրված շերտի վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի հանդեպ բոլորովին փոխվեց: Բացի այդ, ժամանակագրական

սահմանները պայմանավորված են դեպքերի ժամանակակիցների տպավորությունները ներկայացնելու մղումով: Այնուամենայնիվ, աշխատության մեջ անդրադարձել ենք սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի որոշ նյութերի, որոնք հրապարակվել են ավելի ուշ, սակայն իրենց բովանդակությամբ և բնույթով համահունչ են մեր նշած սկզբունքներին:

Հետազոտության մեթոդաբանությունը: Աշխատանքի գիտական արժեքը բարձրացնելու նպատակով փորձել ենք չխուսափել պատմական գիտության ճշմարտության, օբյեկտիվության, համակողմանիության սկզբունքներից: Աշխատանքը գրվել է պատմագիտական հետազոտություններում լայն տարածում ստացած պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ: Պատմագիտական այս մեթոդին զուգահեռ օգտագործել ենք նաև այլ ընդհանուր գիտական մեթոդներ (նկարագրություն, վերլուծություն, բացատրություն):

Աշխատանքի գիտական նորույթը: Ուսումնասիրության մեջ առաջին անգամ փորձ է արվել հնարավորինս ամբողջական ներկայացնելու Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի վերաբերմունքը:

Ուսումնասիրության մեջ նյութից և աշխատության անհրաժեշտությունից բխող որոշակի կանոնակարգում ենք մտցրել սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի, հատկապես մամուլի նյութերի դասակարգման և ընտրության հարցում: Որպես ուսումնասիրության նորույթ առաջադրում ենք սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի նյութերի առավել ամբողջական կանոնակարգման վերաբերյալ հետագա գիտական քննարկումների և առաջարկությունների անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության մեջ հստակեցվել է, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական բոլոր ազդեցիկ ուժերի համար Խորհրդային Հայաստանի զարգացումը համարվել է գերխնդիր: Նույնիսկ խորհրդային պետության համար գաղափարական լուրջ հակառակորդ համարվող Դաշնակցություն կուսակցությունը Սփյուռքում ուղղակի և

անուղղակի քարոզչություն է իրականացրել՝ տնտեսապես աջակցելու հայրենիքի վերաշինությանը:

Խորհրդային Ռուսաստանի ազդեցության հաստատումն Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում նախևառաջ թելադրված է եղել սեփական քաղաքական հավակնությունները բավարարելու մոլուցքով: Հայաստանի Առաջին հանրապետության ղեկավարությունն իշխանությունը բոլշևիկներին է հանձնել միմիայն ժողովրդի ֆիզիկական անվտանգության նկատառումներից ելնելով: Իսկ հայ ժողովրդի գլխին կախված ֆիզիկական բնաջնջման վտանգը մեծապես պայմանավորված էր քեմալաբոլշևիկյան անթաքույց համագործակցությամբ: Յավոք, սփյուռքահայ հասարակական-քաղաքական ոչ դաշնակցական շրջանակները փորձել են չնկատել այս իրողությունը և Հայաստանի խորհրդայնացումը որակել են որպես Խորհրդային Ռուսաստանի բարի կամքի դրսևորում:

Խորհրդային իշխանությունների դեմ սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակների մղած քաղաքական պայքարի հիմքում եղել է Հայաստանի անկախության գաղափարը: Պատմությունն ապացուցել է, որ փոքր ժողովուրդները, ընկնելով խոշոր պետությունների ազդեցության և քաղաքական հավակնությունների դաշտ, հայտնվում են լուրջ սպառնալիքների տակ: Ցույց է տրվել, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի մի կարևոր հատվածը մշտապես գերակա խնդիր է համարել Հայաստանի անկախության վերականգնումը: Անկախ Հայաստանը սփյուռքահայ հանրության մեծ մասի համար եղել է քաղաքական տեսլական: Հայաստանի անկախությանն «ընդդիմացող» հասարակական-քաղաքական շրջանակների համար այդ ճանապարհը եղել է ԽՍՀՄ-ի բարեհաճությունը սիրաշահելը, ինչպես նաև իրենց քաղաքական ընդդիմախոսներին հակառակվելը:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են Սփյուռքում գործող հայկական կուսակցությունների միջև առկա հակասությունների մի շարք խորքային պատճառներ:

Ուսումնասիրության կիրառական նշանակությունը: Հետազոտությունը չի սահմանափակվում լոկ պատմաճանաչողական անհրաժեշտությամբ: Աշխատանքն ունի

նաև կիրառական նշանակություն: Հայոց պետականության կայացումն ու հզորացումը կերտող պետք է համարել ոչ միայն հայաստանցիների, այլև Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայության առաքելությունը: Հայկական սփյուռքը, ըստ ժամանակակից սփյուռքագիտության տեսաբանների, հայրենակենտրոն բնույթ ունի¹³: Հետևաբար՝ բազմամիլիոնանոց տարաշերտ սփյուռքահայության հասարակական-քաղաքական մտքի գնահատականները Հայաստանի քաղաքական կողմնորոշման, անկախության արժևորման, երկրում ժողովրդավարության ամրապնդման և այլ առումներով կիրառելի են նաև այսօր:

Աշխատանքի աղբյուրագիտական բազան: Աշխատանքի աղբյուրագիտական բազան հիմնականում ժամանակի մամուլի նյութերն են, հասարակական-քաղաքական գործիչների հուշերը, վերապրումները, հաղորդումները, ինչպես նաև կուսակցությունների ընդունած համապատասխան հայտարարություններն ու բանաձևերը:

1920-1930-ական թվականներին Դաշնակցությունը, Ռամկավար-ազատական կուսակցությունը և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունն իրենց շրջանային և ընդհանուր պատգամավորական ժողովներում բազմիցս անդրադարձել են Հայաստանի խորհրդայնացմանը, Խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ-ի հանդեպ իրենց որդեգրած ու որդեգրելիք քաղաքականությանը, իրենց դիրքորոշումներն էլ արտահայտվել են համապատասխան հայտարարություններով և բանաձևերով: Այս նյութերը մեծապես օգտակար են եղել մեր աշխատանքը շարադրելիս:

Պակաս արժեքավոր չեն ժամանակակիցների վավերագրությունները: Այս տեսակետից նախ պետք է առանձնացնել Հայաստանի Առաջին հանրապետության գործիչների հուշագրություններն ու վկայությունները: Անձամբ լինելով դեպքերի ոչ միայն ժամանակակիցը, այլև անմիջական ականատեսն ու մասնակիցը՝ Սփյուռքում հաստատված այս գործիչներն անսպառ տեղեկություններ են հաղորդում մեզ: Այս

¹³ Տե՛ս Safran W., *Diasporas in Modern societies: Myths of Homeland and Return*. *Diaspora: A Journal of Transnational Studies*, Volume 1, N 1 (1991), 2. 83.

տեսակետից արժանահիշատակ են Սիմոն Վրացյանի¹⁴, Ալեքսանդր Խատիսյանի¹⁵, Հովհաննես Քաջազնունու¹⁶, Ռուբեն Տեր-Մինասյանի¹⁷, Ավետիս Ահարոնյանի¹⁸, Կարո Սասունու¹⁹, Վահան Նավասարդյանի²⁰, Միքայել Վարանդյանի²¹, Ռուբեն Դարբինյանի²²,

¹⁴ Տե՛ս Վրացեան Ա., Բոլշեվիկեան ազգային քաղաքականութեան բնաշրջումը, «Դրօշակ», 1927, թիւ 6, էջ 164-168, նոյնի՝ Զակֆէդերացիայի տասնամեակը, «Դրօշակ», 1932, թիւ 4, էջ 78-82, նոյնի՝ Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, փետրուար, էջ 32-43, օգոստոս, էջ 69-78, նոյնի՝ Խարխափումներ: Յ. Քաջազնունու «Հ.Յ.Դ. անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, Պոսթըն, 1924, 230 էջ, նոյնի՝ Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս խորհրդայնացաւ Հայաստան, «Հայրենիք» Պոսթըն, 1940, փետրուար, էջ 73-94, նոյնի՝ Կեանքի ուղիներով. Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. 2, Պէյրուս, 1967, 348 էջ, նոյնի՝ Հ. Յ. Դաշնակցութեան 10-րդ Ընդհանուր Ժողովը, «Դրօշակ», 1929, թիւ 1, էջ 3-7, նոյնի՝ Հայաստանը բոլշեվիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Բոստոն, 1941, 271 էջ, նոյնի՝ Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1922թ., դեկտեմբեր, էջ 45-55, 1923, յունուար, էջ 42-48, նոյնի, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 542, նոյնի՝ Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, նոյեմբեր, էջ 63-73, դեկտեմբեր, էջ 66-75, 1924, յունուար, էջ 83-90, 1924, մարտ, էջ 111-120, նոյնի՝ Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, 2 տարի, թիւ 1, էջ 1-10, նոյնի՝ Քաղաքական խնդիրները Հ.Յ.Դ.Մ Ընդհանուր Ժողովում, «Դրօշակ» 1929, թիւ 4-5, ապրիլ-մայիս, էջ 72-77:

¹⁵ Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, հոկտեմբեր, էջ 101-107, նոյեմբեր, էջ 97-102, նոյնի՝ Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, 1930, 368 էջ):

¹⁶ Տե՛ս Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, 108 էջ, նոյնի՝ Յետ մահու: Պատմաաճքներ, յուշեր, յօդուածներ, նամակներ, Հրատարակութեան համար պատրաստեց՝ Ա. Վրացեան, Պէյրուս, 1968, 256 էջ, նոյնի՝ Ռուսաստան թէ Թուրքիա. Բաց նամակ Շ-ին, Պոսթըն, 1924, 54 էջ:

¹⁷ Տե՛ս Տեր-Մինասեան Ռ., Հողվածների ժողովածու (կազմող՝ Խ. Ստեփանյան), Երևան, 2002, 424 էջ, նոյնի՝ Ախալցխա-Ախալքալակի հանրապետութիւնը, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2013, թիւ 3, էջ 1(239)-XVI (պատրաստեց Խաչատուր Ստեփանյանը), նոյնի՝ Հայաստանը Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ, «Դրօշակ», 1926, թիւ 4, էջ 105-110, նոյնի՝ Վասպուրականը իբրեւ անկիւնաքար Միացեալ Հայաստանի, «Դրօշակ», 1926, թիւ 11-12, էջ 299-306:

¹⁸ Տե՛ս Ահարոնեան Ա., Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան, Պոսթըն, 1943, 212 էջ:

¹⁹ Տե՛ս Սասունի Կ., Ազգային հարցը մարքսիզմի քուրայում, «Դրօշակ», 1928, թիւ 6-7, էջ 174-179, նոյնի՝ Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, յուլիս, էջ 110-116, նոյնի՝ Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 72-75, նոյնի՝ Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, հոկտեմբեր, էջ 86-102, նոյեմբեր, էջ 79-104, դեկտեմբեր, էջ 103-120, 1926, յունուար, էջ 74-96, նոյնի՝ Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրուս, 1970, 263 էջ, նոյնի, Ռուսական օրինատացիան, «Հայրենիք», Պոսթըն, 1928, փետրուար, էջ 135-144:

²⁰ Տե՛ս Նաւասարդեան Վ., Հայաստանի անկախութիւնը (Տեսական հիմնաւորման թռուցիկ ակնարկ), Ժընեւ, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, 1924, 56 էջ, նոյնի՝ Հ.Յ.Դաշնակցութեան անելիքը (Մտքեր եւ յուշեր մի գրքոյկի առիթով), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1924, 288 էջ, նոյնի՝ Հ.Յ. Դաշնակցութեան «իկոլիդացիան» (Բոլշեվիզմի սնանկութեան առիթով), Գահիրէ, 1924, 188 էջ, նոյնի՝ Ո՞ր է գաղտնիքը (Խորհրդային Միութեան նոր սահմանադրութեան առիթով), «Հայրենիք», Պոսթըն, 1937թ., փետրուար, էջ 79-96, նոյնի՝ Ի՞նչ չէր եւ ի՞նչ չպիտի լինի մեր ուղին, Գահիրէ, «Յուսաբեր», 1923, 81 էջ:

²¹ Տե՛ս Վարանդեան Մ., Համայնավարութիւնը եւ համաշխարհային յեղափոխութիւն, Գահիրէ, 1926, 238 էջ:

²² Տե՛ս Դարբինեան Ռ., Երկեր, Կեանքիս գրքէն, Ա հատոր, Պէյրուս, 1972, 704 էջ, նոյնի՝ Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք», Պոսթըն, 1923, յունուար, էջ 57-64, յուլիս, էջ 121-128, հոկտեմբեր, էջ 137-144, նոյնի՝ Մեր պատասխանը Յ. Քաջազնունիի, Պոսթըն, 1923, 166 էջ:

Գարեգին Նժդեհի²³, Արտաշես Աբեղյանի²⁴, Համբարձում Տերտերյանի²⁵, Վահան Փափազյանի (Կոմս)²⁶, Վարդան Գևորգյանի²⁷, Հայկ Ասատրյանի²⁸, Սարգիս Արամյանի²⁹, Օնիկ Մխիթարյանի³⁰, Նորայր Բաղայանի³¹, Գևորգ Երեցյանի³² և այլոց վկայությունները: Պակաս արժեքավոր չեն նաև ռամկավար գործիչների վկայությունները, որոնց թվում հիշատակելի են Արտակ Դարբինյանի³³, Արշակ Չոպանյանի³⁴, Հրաչ Երվանդի³⁵, Հովհաննես Պողոսյանի³⁶ և այլոց գրվածքները:

Հնչակյաններից հիշատակելի է Արսեն Կիտուրի կազմած վավերագրերի ժողովածուն³⁷:

²³ Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք», Պոսթըն, 1925, յուլիս, էջ 75-86, նույնի՝ Երկեր: Երկու հատորով, հ. 2, Երևան, 2002, 504 էջ, նույնի՝ Իմ պատասխանը, Հայաստանի ողբերգությունը թրքաթուրքերի փաստաթղթերի լոյսի տակ, Սոֆիա, 1937, 103 էջ, նույնի՝ Լեոնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1923, սեպտեմբեր, էջ 71-78, նույնի՝ Բաց նամակներ հայ մտատրականության, Պէյրուֆ, «Հրազդան», 1929, 32 էջ, նույնի՝ Որդիների պայքարը հայրերի դէմ, Սոֆիա, «Գողթան», 1927, 47 էջ:

²⁴ Տե՛ս Աբեղեան Ա., Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան, «Հայրենիք», 1927, սեպտեմբեր էջ 109-116, նույնի՝ Հայ-վրացական յարաբերությունները (Ազգային քաղաքականության խնդիրներ), «Հայրենիք», 1929, օգոստոս, էջ 135-145, նույնի՝ Հայաստան եւ արտաքին հարեաններ (Ազգային քաղաքականության խնդիրներ), «Հայրենիք», 1929, դեկտեմբեր, էջ 111-126, նույնի՝ Ազգային փոքրամասնությունները Անդրկովկասում, «Հայրենիք», 1929, ապրիլ, էջ 65-78:

²⁵ Տե՛ս Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լեոն Շանթի պատուիրակությունը, «Հայրենիք», Պոսթըն, 1954, մայիս, էջ 1-14:

²⁶ Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր երրորդ, Գահիրէ, 1957, 431 էջ:

²⁷ Տե՛ս Գեորգեան Վ., Լեոնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Պուրբէշ, 1923, 173 էջ:

²⁸ Տե՛ս Ասատրեան Հ., Հայաստանի սահմանները, «Յեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936, թիւ 1, էջ 2-10, նույնի՝ Հայկական ոգու ուժականությունը, «Տարոնի Արծի», Սոֆիա, 1938, թիւ 3-4, էջ 23-33, Հ. Ա., Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ յեղափոխության եւ Մայիս 28-ի մասին, Սոֆիա, 1933, 32 էջ, նույնի՝ Հ. Ա., Յեղանենգ Շէյթանը. Խորհրդածություններ հակադաշնակցական ելոյթների մասին, Սոֆիա, 1933, 56 էջ:

²⁹ Տե՛ս Արամեան Ա., Փետրուարեան յեղափոխությունը և բոլշեիզմը, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միության, Փրակա, 1927, էջ 5-12:

³⁰ Տե՛ս Մխիթարեան Օ., Փետրուարեան ապստամբության աղբյուրները, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միության, Փրակա, 1927, էջ 13-35:

³¹ Տե՛ս Բաղայան Ն., Փետրուար 18 հայկական ազատագրական շարժման ամբողջական մարմնացում, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միության, Փրակա, 1927, էջ 35-41:

³² Տե՛ս Երէցեան Գ., Փետրուար 18-ի նշանակությունը, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միության, Փրակա, 1927, էջ 42-44:

³³ Տե՛ս Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, 640 էջ:

³⁴ Տե՛ս Չոպանեան Ա., Հայ ազգը «մեղաւոր» չէ, Փարիզ, 1926, 16 էջ:

³⁵ Տե՛ս Երուանդ Հ., Ռամկավար Ազատական կուսակցություն. Իր այսօրը եւ վաղը, Պոսթըն, 1927, 32 էջ:

³⁶ Տե՛ս Պողոսեան Յ., Երկու ամիս Հայաստանի մէջ, Պոստոն, 1931, 499 էջ, նույնի՝ Մեր դերը: Ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ, Պոստոն, 1965, 43 էջ:

³⁷ Տե՛ս Պատմություն Ա. Դ. Հնչակեան կուսակցության (1887-1962) (խմբ.՝ Արսէն Կիտուր), Ա հատոր, Պէյրուֆ, 1962, 617 էջ:

Ժամանակակիցների թողած ոչ մեծաթիվ, բայց հետաքրքիր վավերագրեր կան նաև Հայաստանի ազգային արխիվի և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում:

Բացի վերոնշյալներից, աշխատանքի համար աղբյուրագիտական առանցքային բազա են համարվում սփյուռքահայ թերթերը³⁸ («Ապագա», Փարիզ, «Ասպարեզ», Ֆրեզնո, «Արև», Ալեքսանդրիա, Կահիրե, «Արձագանք Փարիզի», Փարիզ, «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, Բոստոն, Նյու Յորք, «Երևան», Փարիզ, «Ժողովրդի ծայնը», Կ. Պոլիս, «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, «Հայրենիք», Բոստոն, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, «Հռոաջ», Փարիզ, «Հուսաբեր», Կահիրե, «Պայքար», Բոստոն, «Պրոլետար», Նյու Յորք, «Սուրիական մամուլ», Հալեպ և այլն):

Հիմնախնդրի ուսումնասիրվածությունը: 1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման դրական և բացասական կողմերը հայ պատմագիտությունն ամբողջական չի ուսումնասիրել: Ավելին, ինչպես վերևում նշեցինք, հասկանալի պատճառներով խնդրի մեկնաբանումը հիմնականում եղել է միակողմանի՝ կոմունիստական կուսակցական գաղափարախոսական պարտադրանքով պայմանավորված: Այս տեսակետից կարևոր է «թույլ տրված» սխալների սրբագրումը, այլապես ֆրանսիացի պատմաբան Մարկ Բլոկի բնորոշմամբ «... պատմության անմիտ մեկնաբանումը, եթե չզգուշանանք, կարող է վերջ ի վերջո հանգեցնել պատմության հանդեպ անվստահության»³⁹:

Օրինակ՝ Փետրվարյան ապստամբության ղեկավարներից մեկի՝ Կարո Սասունու վկայությամբ 1922 թ. սկզբին Խորհրդային Հայաստանում ստեղծվում է մի հանձնախումբ՝ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի գլխավորությամբ, որը պետք է հավաքեր և հրատարակեր «Փետրուարեան շարժման պատմութիւնը»: «Սակայն, այդ գիրքը լոյս չտեսաւ: -

³⁸ Աշխատանքը գրելիս սփյուռքահայ մամուլի օգտագործման ընթացքում մեզ համար խիստ շահեկան են եղել Մ. Բաբլոյանի և Ա. Կիրակոսյանի կազմած հայ պարբերական մամուլի ցանկերը (տե՛ս Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցանկ 1794-1980: Կազմ.՝ Բաբլոյան Մ., Երևան, 1986, 471, էջ, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967). Համահավաք ցանկ: Կազմ.՝ Կիրակոսյան Ա., Երևան, 1970, 623, էջ.):

³⁹ Блок М., Апология истории или Ремесло историка, Москва, 1986, стр. 7.

Փետրուարեան ապստամբութիւնը նրանց ոչ միայն ֆիզիքական պարտութեան մատնեց, այլ շատ վճռական հարուած հասցրեց բարոյական գետնի վրայ: Նրանք իրենց ամփոփած պատմութիւնից միայն ամօթ են զգում: Նրանք այդ տեղ պատմութիւն չունին եւ զարմանալի խոհեմութեամբ, հակառակ առաջի տարուայ բացականչութիւնների, գիտցան լռել եւ ծրարուած պահել տխրահոջակ «ղեկավարներ»-ի հաւաքած գրութիւնները»,- գրում է Կ. Սասունին⁴⁰: Պարզ է, որ Խորհրդային Հայաստանում այդ ժամանակ «հրատարակվելիք» գրքում սփյուռքյան տեսակետներ չէին ներառի: Սակայն այդ փաստն ինքնին ակներև է դարձնում դեպքերը փոփոխված ներկայացնելու խորհրդային կողմի հակվածությունը:

Խորհրդահայ բոլշևիկ գործիչներից և պատմաբաններից Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը տրված սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականներին որոշ առումներով անդրադարձել են Արտաշես Կարինյանը⁴¹, Աշոտ Հովհաննիսյանը⁴², Գրիգոր Չուբարյանը⁴³, Լեոն⁴⁴, Արշավիր Հակոբյանը⁴⁵, - Սամվել Ալիխանյանը⁴⁶, Ռոբերտ Խաչատրյանը⁴⁷, Լենդրուշ Խուրշուդյանը⁴⁸, Յուրա Հովսեփյանը⁴⁹ և ուրիշներ: Չնայած պարտադրված միակողմանի մեկնաբանություններին՝

⁴⁰ Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, յունուար, էջ 96:

⁴¹ Տե՛ս Կարինյան Ա., Դաշնակցությունը յեվ իր զինակիցները, Յերևան, 1932, 170 էջ, նույնի՝ Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, 88 էջ, նույնի՝ Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, 246 էջ:

⁴² Տե՛ս Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը, Յերեվան, 1926, 30 էջ:

⁴³ Տե՛ս Չուբարյան Գ., Դաշնակցության տաճկական ոիրենտացիան յեվ հայրենիքի փրկության կոմիտեն, Յերեվան, 1929, 86 էջ:

⁴⁴ Տե՛ս Լեո, Անցեալից. Յուշեր, թղթեր, դիտումներ, Թիֆլիս, 1925, 482 էջ:

⁴⁵ Տե՛ս Հակոբյան Ա., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921թ., Երևան, 1948, 113 էջ, նույնի՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921թ. քաղաքացիական կռիվներում, Երևան, 1960, 92 էջ:

⁴⁶ Տե՛ս Ալիխանյան Ա., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Երևան, 1966, 413 էջ:

⁴⁷ Տե՛ս Խաչատրյան Ռ., Արտասահմանում հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, 1960, 151 էջ:

⁴⁸ Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական-քաղաքական և կազմակերպական կրախը (1920-1921թթ.), Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու), Երևան, 1987, էջ 185-225:

⁴⁹ Տե՛ս Հովսեփյան Յու., Սովետահայ պատմագրությունը Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործման մասին, Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու), Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, էջ 28-52, նույնի՝ 1921 թ. փետրվարյան խռովության առաջացման պատճառների նենգափոխումը հայ

իրենց հարուստ աղբյուրագիտական բազայով առանձնանում են Արամայիս Մնացականյանի⁵⁰, Գալուստ Գալոյանի⁵¹, Հրաչիկ Սիմոնյանի⁵², Կարլեն Դալլաքյանի⁵³, Աշոտ Աբրահամյանի⁵⁴ խորհրդային ժամանակաշրջանի աշխատանքները: Իր ժամանակներին ոչ հատուկ համարձակ մեկնաբանությունների համար կարելի է եզակի համարել Բագրատ Բորյանի⁵⁵ աշխատությունը:

Հիմնահարցի համապարփակ ուսումնասիրության համար բացառիկ կարևորություն ունեն նաև սփյուռքահայ պատմաբանների աշխատությունները:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և անկախության վերականգնման խնդիրները Դաշնակցություն կուսակցության դիրքերից են քննարկել սփյուռքահայ պատմաբաններ Գառնիկ Գյուզալյանը⁵⁶, Հրաչ Տասնապետյանը⁵⁷, Ռուբինա Փիրումյանը⁵⁸: Չնայած տրամաբանական համարվող կուսակցական կողմնորոշմանը՝ այս հեղինակների գործերը կարևոր են հիմնախնդրի առավել ամբողջական պատկերացման համար: Գ. Գյուզալյանի ուսումնասիրությունն արժեքավոր է որպես համընդգրկուն վերլուծություն: Աղբյուրագիտական բազայի տեսակետից գնահատանքի են արժանի Հ. Տասնապետյանի և Ռ. Փիրումյանի գործերը: Այս հեղինակները դրվատանքով են գրում Փետրվարյան ապստամբությունն արժևորող, Հայաստանի անկախությունը վերականգնելու գաղափարը քարոզող սփյուռքահայ գործիչների մասին:

բուրժուական պատմագիտության մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, թիվ 4, էջ 49-55 :

⁵⁰ Տե՛ս Մնացականյան Ա., Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Երևան, 1976, 116 էջ:

⁵¹ Տե՛ս Գալոյան Գ., Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961, 408 էջ, նույնի՝ *Борьба за Советскую власть в Армении, Москва, 1957, 256 стр*, նույնի, *Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900-1922, Ереван, 1969, 508 стр*:

⁵² Տե՛ս Սիմոնյան Հ., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968, 674 էջ:

⁵³ Տե՛ս Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, 1987, 480 էջ:

⁵⁴ Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Երևան, 1967, 423 էջ:

⁵⁵ Տե՛ս Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М-Л, 1929, 434 с.

⁵⁶ Տե՛ս Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Փարիզ, 1927, 157 էջ:

⁵⁷ Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողովը (1890-1924), Աթէնք, 1988, 259 էջ:

⁵⁸ Տե՛ս Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեվիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երևան, 1997, 421 էջ:

Իրենց տրամադրության տակ եղած փաստական նյութը վերլուծելու առումով պակաս արժեքավոր չեն նախկին դաշնակցական պատմաբաններ Թորգոմ Վեհապետյանի⁵⁹, Լևոն Չորմիսյանի⁶⁰ աշխատությունները: Չնայած պետք է նշել, որ հատկապես Թ. Վեհապետյանը, ճշմարտացիորեն ներկայացնելով փաստերն ու դեպքերը, հաճախ է կողմնակալ եզրակացություններ և ընդհանրացումներ անում:

Ռամկավար հեղինակներից կարելի է առանձնացնել Անդրանիկ Անդրեասյանի⁶¹, Ավետիս Յափուջյանի⁶² և Մանուկ Ճիզմեճյանի⁶³ աշխատությունները: Սփյուռքահայ պատմաբանների այս խումբը ոչ միայն բարձր է գնահատել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը գովերգող և պաշտպանող սփյուռքահայ հասարակական-քաղաքական հատվածին, այլև երբեմն փորձում է նսեմացնել Հայաստանի անկախությունն արժևորող գործիչներին:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը, Հայաստանի անկախության գաղափարի վերլուծությանը և դրանց հանդեպ սփյուռքահայ ազգային կուսակցությունների մոտեցմանը չեզոք դիրքերից է անդրադարձել ամերիկահայ պատմաբան Սարգիս Ադամյանը⁶⁴: Մեզ համար վերապահելի մի շարք մեկնաբանություններով և եզրակացություններով հանդերձ, գործ ունենք արժեքավոր մի աշխատության հետ, որտեղ հեղինակը, բացի հայկական աղբյուրներից, օգտագործել է ինչպես ռուսական, այնպես էլ արևմտյան պատմաբանների ուսումնասիրություններ: Հեղինակն առանձին-առանձին վերլուծել, ապա համեմատության մեջ է դրել Հայաստանի

⁵⁹ Տե՛ս Վեհապետյան Թ., Նոր սերունդը՝ քաղութան նոխագ, Բ հատոր, Ալեքսանդրապոլի դաշնագիրը եւ Փետրուարեան ապստամբութիւնը իրենց յարակից հարցերով, Պէյրուֆ, 1985, 207 էջ:

⁶⁰ Տե՛ս Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները եւ հայրենիքը, Փարիզ, 1946, 163 էջ, նոյնի՝ Կուսակցութիւնները, Պէյրուֆ, 1965, 308 էջ:

⁶¹ Տե՛ս Անդրեասեան Ա., Պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան Ամերիկայի Արեւմտեան շրջանակի, Լոս Անճելըս, 1981, 200 էջ, նոյնի՝ Սփիւռքը եւ Հայրենիքը. Տպաւորութիւններ եւ Դատումներ, Պէյրուֆ, 1962, 261 էջ:

⁶² Տե՛ս Եափուջեան Ա., Ո՛վ կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը եւ ի՞նչ եղավ անոր հետեանքը, Գահիրէ, 1968, 136 էջ:

⁶³ Տե՛ս Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնո, 1930, 367 էջ:

⁶⁴ Տե՛ս Atamian S., The Armenian Community: The historical development of a social and ideological conflict, New York, 1955, 479 p.

անկախության, հայության ինքնության պահպանության վերաբերյալ դաշնակցականների և ռամկավար-ազատականների մոտեցումները:

Հետխորհրդային շրջանում հայաստանյան պատմագիտության մեջ խորհրդային իշխանության հաստատման վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականները որոշ չափով ուսումնասիրվել և դրանց անկողմնակալ գնահատականներ են տրվել: Անցյալի դեպքերն իրենց արժեքավոր աշխատություններում նորովի են մեկնաբանել բեղմնավոր գրիչ ունեցող պատմաբաններ Գալուստ Գալոյանը⁶⁵, Հրաչիկ Սիմոնյանը⁶⁶, Վլադիմիր Ղազախեցյանը⁶⁷, Կարլեն Դալլաքյանը⁶⁸: Ակադեմիկոս Գալուստ Գալոյանի ուսումնասիրությունն առանձնանում է ոչ միայն արտասահմանյան բազմատեսակ արխիվային նյութերի առատությամբ, այլև մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ արված գնահատումներով: Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանն իր ուրույն գիտական դիպուկ ոճով հանգում է մի շարք եզրակացությունների, որոնց հետ չի կարելի չհամաձայնվել: Պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանն իր ծավալուն մենագրության և մի շարք հոդվածների մեջ հետաքրքիր բացահայտումներ ու ընդհանրացումներ է անում: Պատմական գիտությունների դոկտոր Կ. Դալլաքյանը գնահատելի վերլուծություններ է կատարում սփյուռքահայ հանրային մտքի ձևավորման առումով:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացի հանդեպ պոլսահայ մամուլի վերաբերմունքին են մասնակիորեն անդրադարձել Ալբերտ Խառատյանը⁶⁹ և Մարիամ Հովսեփյանը⁷⁰:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականներին ուղղակիորեն

⁶⁵ Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մե՞ծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, 540 էջ:

⁶⁶ Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, 830 էջ, նույնի՝ Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, 630 էջ:

⁶⁷ Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006, 564 էջ, նույնի՝ Հայ սպաների արքունիք 1920-1921թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2003, թիվ 2, էջ 32-51, նույնի և Գևորգյան Հ., Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2003, թիվ 1, էջ 46-50:

⁶⁸ Տե՛ս Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ), Երևան, 1994, 462 էջ:

⁶⁹ Տե՛ս Խառատյան Ա., Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922), Երևան, 2015, 534 էջ:

⁷⁰ Տե՛ս Հովսեփյան Մ., ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.), Երևան, 2009, էջ 194:

առնչվում է Համլետ Հարությունյանի⁷¹ աշխատությունը: Արարատ Հակոբյանի գիտական լուրջ հետաքրքրություն ներկայացնող ուսումնասիրություններում⁷² հանդիպում ենք արժեքավոր վերլուծությունների և գնահատականների:

Մեզ հետաքրքրող խնդիրների ուսումնասիրվածության առումով կարելի է առանձնացնել նաև Արամ Սիմոնյանի⁷³, Համլետ Գևորգյանի⁷⁴, Գևորգ Ստեփանյանի⁷⁵ աշխատությունները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1.1 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը և Հայաստանի
խորհրդայնացման օրվա հարցը սփյուռքահայ հասարակական-քաղաքական
քննարկումներում

1920 թ. թուրք-հայկական պատերազմում, ստանալով խորհրդային Ռուսաստանի աջակցությունը, քեմալականները պարտության մատնեցին հայկական բանակին: Օգտվելով այս իրավիճակից՝ նախապես Բաքվում կազմավորված Հայիեղկումը, 1920 թ. նոյեմբե-

⁷¹ Տե՛ս Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1920-1930 թթ., Երևան, 2015, 279 էջ:

⁷² Տե՛ս Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2014, 260 էջ, նույնի՝ Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Երևան, 2005, 364 էջ, նույնի՝ Հակոբյան Ա., խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, 339 էջ, նույնի՝ Միակուսակցական վարչակարգի ձևավորումը խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, 366 էջ:

⁷³ Տե՛ս Սիմոնյան Ա., Չանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, 698 էջ:

⁷⁴ Տե՛ս Գևորգյան Հ., Դրո, Երևան, 1999, 557 էջ:

⁷⁵ Տե՛ս Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյան, Երևան, 2016, 1088 էջ, նույնի՝ 1921թ. փետրվարի 14-18-ի իրադարձությունները Երևանի կենտրոնական բանտում. Նոր մանրամասնություններ Հայիեղկումի ոճրագործությունների վերաբերյալ, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2015, թիվ 3, էջ 161-178:

րի 29-ին Հայաստանի հյուսիս-արևելքից մտնելով Իջևան, հանդես եկավ Հայաստանը խորհրդային հռչակելու մասին հայտարարությամբ⁷⁶:

1920 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարության, Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի և ՀՅԴ Բյուրոյի համատեղ նիստում (կառավարության առաջարկությամբ) որոշվեց իշխանությունը բուլժևիկներին փոխանցելու համար լիազորել ՀՀ կառավարության անդամներ Դրաստամատ Կանայանին և Համբարձում Տերտերյանին բանակցություններ վարել ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի հետ⁷⁷: Բանակցություններն էլ վարվեցին Հայաստանի անկախությունը երաշխավորելու սկզբունքով⁷⁸:

1920 թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից Բ. Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Հ. Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Հ.Յ.Դաշնակցությունից բուլժևիկներին: Սահմանվում էին իշխանության փոխանցման հիմնական սկզբունքները. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ձախ-դաշնակցականներ, Դաշնակցություն և մյուս ոչ բուլժևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու Կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը⁷⁹: Հայաստանի անկախությունը ճանաչելու, թուրքերի հետ հաշտություն կնքելու, քաղաքացիական կռիվ թույլ չտալու, ինչպես նաև նոր կառավարության մեջ ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ Դաշնակցության դիրքորո-

⁷⁶ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 119, ց. 1, գ. 248, թ. 1,2, հմմտ. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. 2, էջ 279:

⁷⁸ Տե՛ս Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը, Յերեվան, 1926, էջ 26:

⁷⁹ Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», Բոստոն, 1926թ., հոկտեմբեր, էջ 101, 102:

շումն ընդունվել էր նախօրեին՝ դեկտեմբերի 1-ին, տեղի ունեցած կուսակցության Բյուրոյի, խորհրդարանական ֆրակցիայի և կառավարության վերոնշյալ համատեղ նիստում⁸⁰:

Դեկտեմբերի 2-ին Անդրկովկասի կոմունիստների առաջնորդ Գեորգի Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրում է Մոսկվա Լենինին և Ստալինին. «Հենց նոր Երևանից հաղորդում ստացվեց, որ Երևանում հոչակվել է սովետական իշխանություն»⁸¹: Բոլշևիկների առաջնորդ Վլադիմիր Լենինն էլ իր հերթին հեռագրով ողջունում է «իմպերիալիզմի լծից ազատագրված աշխատավոր Խորհրդային Հայաստանին»⁸²:

1920 թ. դեկտեմբերի 2-ին կարմիր բանակի հրամանատար է նշանակվում Դրոն: Խորհրդային իշխանությունների կողմից Դրոյին կարմիր բանակի հրամանատար նշանակելու հանգամանքը պայմանավորված էր սպայության մեջ նրա ունեցած ազդեցությամբ⁸³:

Դրոն և խորհրդային իշխանության ներկայացուցիչ Օտտո Սիլինը հրաման արձակեցին Հայաստանի բանակը վերակազմավորելու մասին, համաձայն որի պահպանվում էր ամբողջ հրամանատարական կազմը⁸⁴: Նույն հրամանով. «Հայաստանի բոլոր պետական հիմնարկությունները, պաշտոնական անձինք և քաղաքացիները պարտաւոր են այսպաղ կատարել զինուորական հրամանատարութեան կարգադրութիւնները: Նրանք, որոնք կը վարուին հրամանատարութեան կարգադրութիւններու հակառակ, կը ճանաչուեն յանցաւոր և անմիջապէս պատասխանատուութեան կ'ենթարկուին յեղափոխական շրջա-

⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 119, ց. 1, գ. 248, թ. 1: Տե՛ս նաև՝ Տէր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղէտը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբոլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները, պաշէվիքեան տիրապետութիւնը: Անտիպ փաստաթուղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 124:

⁸¹ Օրջոնիկիձե Գ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 35:

⁸² Լենին Վ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 31, Երևան, 1980, էջ 350:

⁸³ Տե՛ս Բաղդասարյան Ա., Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Յերևան, 1931, էջ 10:

⁸⁴ Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Երևան, 1974, էջ 34, հմմտ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 411:

նի օրէնքների համաձայն»⁸⁵: Դրոյի կողմից նման քայլն արվում էր նախկին կարգապահությունը չխախտելու և նոր իշխանություններին ենթարկվելու ցանկությամբ⁸⁶:

Դաշնակցական ղեկավարությունը, հաշտվելով իրավիճակի հետ, ոչ միայն իշխանությունը հանձնեց բոլշևիկներին, այլև փորձեց նեցուկ լինել նոր կազմավորված Հայկեղկոմին երկրում կարգ ու կանոնը պահպանելու գործում: Դաշնակցական գործիչները պատրաստակամություն հայտնեցին խորհրդայնացումից հետո առավել ցածր պաշտոններում հայրենիքի վերաշինության գործում համագործակցել բոլշևիկների հետ՝ ակնկալելով իշխանության անցնում փոխանցումը⁸⁷:

1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը Ս. Կասյանի ղեկավարած Հայկեղկոմի սրտով չէր: Վերջինս ոչ միայն դեմ էր անաղմուկ, անարյուն հեղափոխությանը, այլև ձգտում էր ստվերում չմնալ և Հայաստանի խորհրդայնացման դափնիներն ամբողջովին վերագրել իրեն⁸⁸:

Խորհրդահայ պատմագրությունը Երևանի համաձայնագիրը որակել է որպես դաշնակցական կառավարության կապիտուլյացիա⁸⁹: Իսկ հետխորհրդային շրջանում կարևորվում է համաձայնագրի նշանակությունն արտաքին քաղաքական տեսակետից, քանի որ դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը դառնում էին դաշնակիցներ⁹⁰:

Իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշևիկներին հանձնելու փաստը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից տարբեր գնահատականների է արժանացել:

Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության վերջին նախագահ Սիմոն Վրացյանը, ով ստիպված էր հաստատվել Սփյուռքում, անդրադառնալով

⁸⁵ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վավերագրեր), Գահիրէ, 1946, էջ 300:

⁸⁶ Տե՛ս Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 126:

⁸⁷ Տե՛ս Սեւան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը, «Վէմ», Փարիզ, 1936, Դ տարի, թիւ 1, էջ 91:

⁸⁸ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայաստանը խորհրդաքեմալական հարաբերությունների ոլորտում 1920 թվականին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1997, թիվ 3, էջ 55:

⁸⁹ Տե՛ս Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, էջ 197:

⁹⁰ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 50:

Հայաստանի խաղաղ խորհրդայնացման պատճառներին, գրում է. «Հոռետես թե լավատես սպասում էին, որ 1. վերջ կգտնե երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը, 2. վերջ կգտնե պատերազմը, և թուրքը կհեռանա Հայաստանի սահմաններից, 3. Խորհրդային Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերություններ կհաստատվին Հայաստանի և Թուրքիայի միջև. Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ, այս կամ այն ձևով կլուծվի և թրքահայկական հարցը, 4. կվերականգնվի երկրի ներքին անդորրությունը, և ժողովուրդը նորից հնարավորություն կստանա լծվելու խաղաղ ու շինարար աշխատանքի: Բոլշևիկները իրենց հերթին պաշտոնական թե անպաշտոն շռայլ խոստումներով ուժեղացնում էին այս տրամադրությունները»⁹¹: Այս տողերը գրելուց ավելի վաղ Ս. Վրացյանն ընդունում էր, որ ստեղծված պայմաններում խորհրդային իշխանությունը հայ ժողովրդի համար անհրաժեշտություն էր: Նրա համոզմամբ Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ կլուծվեին երկրի առջև ծառայած խնդիրները: Ավելին, դաշնակցական կառավարության անդամները պատրաստակամ էին օգնել նոր իշխանություններին՝ բոլշևիկներին, երկիրը ծանր վիճակից դուրս բերելու աշխատանքներում: Այդ նպատակով հատուկ շրջաբերական իջեցվեց դաշնակցական մարմիններին, որտեղ հանգամանորեն բացատրվում էր բոլշևիկների հետ գործակցելու անհրաժեշտությունը⁹²:

Փաստորեն տարագրության մեջ հաստատված Հայաստանի վարչապետը եզրահանգում է, որ երկրի խորհրդայնացումը պայմանավորված էր անելանելի կացությամբ, Ռուսաստանի աջակցությամբ ժողովրդին թուրքական յաթաղանից փրկելու մտավախությամբ, ժողովրդի ներքին խաղաղ կյանքը վերականգնելու անհրաժեշտությամբ:

Ս. Վրացյանն անդրադառնում է այն մեղադրանքներին, թե կարելի էր ավելի շուտ իրականացնել Հայաստանի խորհրդայնացումը, «որպեսզի դրանով առաջն առնեինք տաճիկների գործած ավերածութեան»⁹³: Ըստ նրա՝ դա անհնարին էր համարվում նախ

⁹¹ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 542:

⁹² Տե՛ս Վրացյան Ս., Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, փետրուար, էջ 33:

⁹³ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, «Հայրենիք», Պոսթըն, 1922, դեկտեմբեր, էջ 49:

այն պատճառով, որ ոչ ոք չէր սպասում Կարսի անկումից հետո դեպքերի այդքան արագ և ճակատագրական զարգացում, բացի այդ «Հայաստանի բոլշևիկացումը դեռևս երաշխիք չէր, որ տաճիկները կանգ կ'առնեն, որովհետև մինչև ուս բանակի հասնիլը Ազրբեջանից՝ տաճիկները հեշտութեամբ կարող էին գրաւել Երեւանը եւ անլի մեծ աղէտ բերել Հայաստանի գլխին»⁹⁴: Վերջապես, Ս. Վրացյանի կարծիքով դժվար էր հաշտվել անկախության կորստի հետ, որովհետև բոլշևիկյան տիրապետության հաստատումը բոլորի համար հավասարազոր էր անկախության կորստին: Տարագիր վարչապետը շուտ «չբոլշևիկանալու» այլ պատճառներ էլ է բերում. բոլորը հավատում էին Սևրի պայմանագրին և սպասում դաշնակիցներին, բացի այդ Հայաստանի բոլշևիկացումը կարող էր գրկել ամերիկյան այլուրից, որն անհրաժեշտ էր ժողովրդին սովից փրկելու համար⁹⁵:

Սկիզբում հաստատված հայ գործիչների մեծ մասը պնդում է, որ Հայաստանի խորհրդայնացման հարցում ՀՀ իշխանությունների ունեցած մոտեցման հիմքում դրված էր հատկապես հայ ժողովրդի անվտանգության հարցը: Խորհրդայնացման շնորհիվ ակնկալվում էր Ռուսաստանի աջակցությամբ փրկել Արևելյան Հայաստանում պատսպարված հայության մնացորդացը թուրքական յաթաղանից:

Հ. Տերտերյանը վերհիշում է, որ խորհրդայնացման հարցում քննարկումները բավականին թեժ են եղել: «Վիճաբանութիւնները տեւեցին մինչև ուշ գիշեր, երբ Ալէքսանդրապօլից ընկ. Ա. Խատիսեանը տեղեկացրեց, որ թուրքերը այնքան են լրբացել, որ նրանց հետ քիչ թէ շատ ընդունելի դաշնագիր կնքելու շուրջ լեզու գտնելը անհնարին է դարձել: Պատուիրակութեան նախագահ Ա. Խատիսեանի զեկուցումը լսելուց յետոյ խորհրդակցութեան ընդարձակ սրահում տիրեց խորը լռություն եւ վիճաբանութիւնները դադարեցին: Կացութիւնը պարզ էր: Հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը փրկելու համար, հակառակ մեր կամքին, ստիպուած էինք ժամանակաւորապէս հրաժարուել

⁹⁴Նույն տեղում, էջ 50:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

Հայաստանի անկախութիւնից: Ուստի յանձնարարուեց կառավարութեան անմիջապէս բանակցութիւնների մէջ մտնել Լեզրանի հետ», - գրում է Հ. Տերտերյանը⁹⁶:

«Հ կառավարության նախկին անդամը, ըստ էության, փաստում է, որ ստեղծված կացությունը, հատկապէս թուրքերի գործադրած ճնշումները և նրանց կողմից նոր կոտորածների բացահայտ հավանականությունը, ստիպեց իրենց գնալ Հայաստանի խորհրդայնացման:

Իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշևիկներին հանձնելու փաստի կապակցությամբ Դաշնակցության դիրքորոշման մասին գրում է նաև տարագրության մէջ գտնվող՝ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազունին: Ըստ նրա՝ Դաշնակցության քայլը պայմանավորված էր երկու կարևոր հանգամանքով. նախ՝ այլևս անհնար էր դիմադրելը թուրքերի առաջխաղացմանը, ապա՝ նաև հույս կար, թէ Հայաստանի խորհրդային իշխանությունը Ռուսաստանի աջակցությամբ կկարգավորի պետական կյանքը: Հ. Քաջազունին նշում է նաև, որ իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշևիկներին հանձնելու որոշումը միաձայն չի եղել: «Միաձայն չէր այս որոշումը: Կային անհաշտներ, որոնք ոչ մի լաւ բան չէին սպասում բոլշևիկներից, պահանջում էին ընդդիմադրութիւն ու կռիւ, նոյն իսկ ընդունելով պարտութեան անխուսափելիութիւնը: Փոքր էր սրանց թիւը: Երբ առաջարկը մերժեց, ամենից հետեւողականները թողին երկիրն ու հեռացան», - գրում է առաջին վարչապետը⁹⁷:

Սփյուռքահայ գործիչ Վահե Արծրունին ևս անդրադառնում է դեկտեմբերի 1-ի վերոնշյալ համատեղ նիստին, որի ժամանակ որոշում կայացվեց իշխանությունը փոխանցել բոլշևիկներին: Խորհրդակցության ընթացքում ժողովականները բաժանվել են երկու խմբի, մի խումբը դեմ է եղել խորհրդայնացմանը, մյուսը՝ ոչ: Հանրագումարի բերելով խորհրդայնացման դեմ արտահայտվողների կարծիքը՝ Վ. Արծրունին գրում է, որ կարմիրների մուտքը փակել դեպի Հայաստան նշանակում է դեռևս բաց պահել մեր անկախութեան իղձերի էջը: «Անկախականները» գտնում էին, որ միայն արյան գնով

⁹⁶ Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լեւոն Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք», 1954, մայիս, էջ 10:

⁹⁷ Քաջազունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 45:

պետք է թույլ տալ բոլշևիկներին տիրանալ Հայաստանին: Նրանք կոչ էին անում մինչև վերջին մարդը զենքով դիմավորել երկիր մտնող խորհրդային զորքերին⁹⁸:

Անդրադառնալով նիստի քվեարկությանը՝ նույն հեղինակը գրում է, որ, այդուհանդերձ, յոթի դեմ քսանհինգ քվեով որոշվեց իշխանությունը հանձնել կոմունիստներին: Սակայն «... կատարուած քուէարկութիւնը տեսակ մը ինքնախաբէութիւն էր, որովհետեւ նախքան այդ, արդեն, Համօ Օհանջանեան՝ Բիւօի անունով, նիստին յայտարարեր էր, թէ կառավարութիւնը յանձնած է բոլշեւիկներուն», - ավելացնում է Վ. Արծրունին⁹⁹: Ստացվում է, որ Դաշնակցության Բյուրոն ցանկացել էր իր ընդունած որոշումը պատասխանատու գործիչների ավելի ընդլայնված կազմով վավերացնել:

Հայաստանի խաղաղ խորհրդայնացման անհաշտ հակառակորդն է եղել Ս. Վրացյանի կառավարության անդամ, գյուղատնտեսության և աշխատանքի նախարար Արշակ Հովհաննիսյանը¹⁰⁰: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի և նույնանուն ամսագրի խմբագիր, ընդգծված և անհաշտ հակաբոլշևիկ գործչի համբավ ունեցող Ռուբեն Դարբինյանը¹⁰¹ վկայում է, որ ինքն «առաջարկեց նոյնիսկ անմիջապէս ձերբակալել խորհրդային պատուիրակութեան ամբողջ կազմը, Լըգրանի հետ միասին, եւ կտրուկ միջոցներ ձեռք առնել բոլոր անոնց դէմ, որոնք կ'աշխատէին ձգել Հայաստանը բոլշեւիկներուն գիրկը»¹⁰²:

Հ. Տերտերյանն Արշակ Հովհաննիսյանի կողքին ավելացնում է նաև նախկին զինվորական նախարար Սարգիս Արարատյանի անունը: Իրականում, ինչպես նշվեց, այդ նիստում խորհրդայնացման դեմ արտահայտվողների ձայնը վճռորոշ չի եղել: Ավելին,

⁹⁸ Տե՛ս Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը: Շատախ, Երեւան, 2002, էջ 332:

⁹⁹ Նույն տեղում, էջ 333:

¹⁰⁰ Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. 2, էջ 22:

¹⁰¹ Ռ. Դարբինյանն իր հակաբոլշևիկ կեցվածքի մասին արտահայտվել էր դեռևս մինչև Առաջին հանրապետության անկումը և Հայաստանի խորհրդայնացումը: 1920 թ. աշնանը Ռուբեն Դարբինյանը «Յառաջ» թերթում հրապարակում է մի հոդվածաշար՝ «Բոլշևիզմը և Հայաստանը» վերնագրով, որը հրատարակվում է նաև առանձին գրքույկով (տե՛ս Դարբինեան Ռ., Բոլշեւիզմը եւ Հայաստանը, Երեւան, 1920, 51 էջ, նույնի՝ Բոլշեւիզմը եւ Հայաստանը, Իզմիր, 1922, 72 էջ): Օրինակ՝ նա գրում է, որ Հայաստանը, որ բոլոր երկրների մէջ ամենից անելի կարօտ է խաղաղութեան և շինարար աշխատանքի, չի կարող որեւէ յոյս դնել բոլշեւիզմի վրա, որովհետեւ բոլշեւիզմը գերեզման է հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան և նրա քաղաքական անկախութեան համար (տե՛ս Դարբինեան Ռ., Բոլշեւիզմը եւ Հայաստանը, Երեւան, 1920, էջ 51):

¹⁰² Դարբինեան Ռ., Երկեր, Ա հատոր, էջ 502:

հիմնականում հաշվի են առել համեմատաբար ավելի հեղինակություն ունեցողների տեսակետները, ինչպիսիք էին Դրոն և Ռուբեն Տեր-Մինասյանը: Հ. Տերտերյանը գրում է, որ իր համար կարևոր են եղել հատկապես այդ երկուսի՝ գործող և նախկին ռազմական նախարարների կարծիքները: Թե՛ Դրոն, թե՛ Ռուբեն Տեր-Մինասյանն այս առումով հայտնել են, որ «Հայաստանն ի վիճակի չէ դիմագրաւելու բոլշեւիկներին, եւ որ պէտք է համաձայնել երկիրը խորհրդայնացնելու»¹⁰³: Ըստ էության, չնայած բուռն քննարկումներին, ինչպես վկայում են ներկաները, դեկտեմբերի 1-ի նիստը ինչպես ձայների բացարձակ մեծամասնությամբ, այնպես էլ հեղինակությունների տեսակետների գերիշխանությամբ կողմ էր Հայաստանի խորհրդայնացմանը:

Դեկտեմբերի 1-ի խորհրդաժողովից հետո Դրոն և Հ. Տերտերյանը, ինչպես նշեցինք, լիազորվեցին բանակցել խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Բ. Լեգրանի հետ իշխանությունը բոլշեւիկներին հանձնելու պայմանների շուրջ¹⁰⁴:

Հ. Տերտերյանը գրում է, որ խորհրդաժողովը որպես բանակցությունների հիմք տվել էր հետևյալ կետերը. «1) Հայաստանը պէտք է ճանաչուի եւ յայտարարուի իբր անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն: 2) Անվիճելիորէն Հայաստանի անբաժան մասը պիտի համարուեն Երեւանի նահանգն ամբողջովին, Կարսի շրջանի մի մասը, Զանգեզուրը, Ղարաբաղի գաւառից այն մասը, որ մեզ էր անցնում բոլշեւիկների հետ նոյն 1920 թ. Օգոստոսի 10ին ունեցած համաձայնութեամբ, Թիֆլիսի նահանգի այն մասը, որ մեր տիրապետութեան տակ էր մինչեւ 1920 թ. Սեպտեմբերի 28-ը, այսինքն մինչեւ հայ-տաճկական պատերազմի սկիզբը:.. 3) Ոչ մի սոցիալիստական կուսակցութիւն պէտք չէ հալածանքի ենթարկուի, ինչպէս եւ չպէտք է հալածուեն նրանք, որ մասնակցել են բոլշեւիկեան ճնշմանը 1920 թ. մայիս ամսին»¹⁰⁵: Հատկանշական է, որ Հայաստանի էսէռները ևս որոշել էին նոյն հիմքերով բանակցել բոլշեւիկների հետ¹⁰⁶:

¹⁰³ Վրացեան Ա., Կեանքի ուղիներով..., հ. 2, էջ 278:

¹⁰⁴ Լեգրանի պատվիրակության կազմում էին նաև Սահակ Տեր-Գաբրիելյանը և լատվիացի Օտտո Սիլինը (տե՛ս Мнацаканян А., Посланцы советской России в Армении, Ереван, 1959, с 106):

¹⁰⁵ Վրացեան Ա., Կեանքի ուղիներով..., հ. 2., էջ 279:

¹⁰⁶ Տե՛ս նոյն տեղում:

Տերտերյանի մատնանշմամբ պետք է ձևավորվեր կոալիցիոն կառավարություն, ինչին դեմ է եղել Բ. Լեգրանը՝ ավելի շատ կողմնակից լինելով անհատական մասնակցության: Ընդ որում Բ. Լեգրանը հենց Հ. Տերտերյանին և Դրոյին էլ նկատի է ունեցել ընդգրկել բոլշևիկյան կառավարության կազմ: Բանակցությունների արդյունքում դաշնակցական պատվիրակները պնդել են, որ բոլշևիկյան իշխանությունները պարտավորություն ստանձնեն երաշխավորելու ոչ միայն դաշնակցականների, այլև մյուս բոլոր սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչների անվտանգությունը: Նրանք չէին հետապնդվելու իրենց գործունեության և քաղաքական հայացքների համար: Դրոյի և Տերտերյանի պնդմամբ Լեգրանը նաև համաձայնվում է, որ «... հալածանքի չեն ենթարկում նաև նրանք, որ մասնակցել են բոլշևիկների դեմ վարած կռուին»¹⁰⁷:

Այսպիսով, 1920 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն արդեն որոշել էր իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնել բոլշևիկներին: Քաջ գիտակցելով, որ բոլշևիկների իշխանության գալով Հայաստանը կկորցնի իր անկախությունը՝ օրվա իշխանություններն առաջնորդվեցին հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության հրամայականով: Իշխանությունը բոլշևիկներին հանձնելու որոշումն ընդունվել է բուռն քննարկումների արդյունքում և ոչ միաձայն քվեարկությամբ:

Հ. Տերտերյանը, հետագայում խոսելով բոլշևիկ գործիչ, Հայաստանի լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի հետ, պարզել է, որ Բ. Լեգրանը վստահ է եղել Հայաստանի անարյուն իշխանափոխությանը, որովհետև. «Ձախ դաշնակցական կոչուած խմբակը, Արշակ Գրիգորեանի եւ Հայկ Աւալեանի գլխաւորութեամբ, մի քանի անգամ դիմել է Լեգրանին..., վստահեցնելով թէ կուսակցական զանգուածներն իրենց հետ են եւ իրանք ամէն վայրկեան կարող են յեղաշրջում առաջ բերել երկրում, ձեռք առնել իշխանութիւնը եւ փոխանցել բոլշեւիկներին»¹⁰⁸: Մասնավոր խոսակցության ժամանակ Դրոն ռուսական պատվիրակության զինվորական կցորդ գեներալ Բոբրիշչևին ասել է, «թէ Հայաստանի զօրքը կապուած է իր հետ, որ ինքն անվերապահ կողմնակից է ռուսական

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 280:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 276:

օրինատացիայի եւ որ ամէն թոպէ կարող է ներքին յեղաշրջում կատարել»¹⁰⁹: Հայաստանի արագ խորհրդայնացման նպատակով ձևավորված «ձախ» դաշնակցականների խմբակի մասին խոսում է նաև Ս. Վրացյանը¹¹⁰: Ինչպես տեսնում ենք, Դրոն ունեցել է համախոհների մի շրջանակ, որոնք հակված են եղել հնարավորինս շուտ իրականացնել Հայաստանի խորհրդայնացումը և իշխանության հանձնումը բոլշևիկներին: Դրոյի և նրա համախոհների այս մոտեցումը պետք չէ դիտարկել որպես Հայաստանի անկախության դեմ ուղղված դիրքորոշում: Դրոն գիտակցում էր, որ Խորհրդային Ռուսաստանը բոլոր միջոցների գործադրմամբ այնուամենայնիվ տիրելու էր Հայաստանին: Հետևաբար՝ նա անիմաստ էր համարում ավելորդ դիմադրությունը, հատկապես, որ թիկունքում թշնամի Թուրքիան էր:

Հայաստանի խորհրդայնացումից շուրջ մեկ տասնամյակ անց Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակ»-ը, վերագնահատելով խորհրդայնացման փաստը, գրում է. «Դեկտեմբեր երկուսը հայ ժողովրդի համար սուգի օր էր: Այդ օրը խորտակեց նրա ամենանւիրական տենչերից մէկը. այն գաղափարը, որի համար սերունդներ էին զոհել հերոսական պայքարի դաշտում: Թիրքն ու բոլշեիկը եկան նստեցին հայ ժողովրդի կրծքին,- եւ ազատութիւնը նահանջեց բռնութեան առջեւ: Անկախ Հայաստանը դարձաւ Խորհրդային Հայաստան, խորտակւած յոյսերի ու ջախջախւած երազների Հայաստան: Քաղաքական պարտութեան եւ անկման խորհրդանշան...»¹¹¹: Ըստ էության դաշնակցական պաշտոնաթերթը, փաստում է անկախությունից հրաժարվելու խնդրում բոլշևիկների գործադրած պարտադրանքը: Սրան հակառակ Բեյրութի հնչակյան «Արարատ» թերթի հոդվածագիր Սուրեն Երամյանը, վկայակոչելով նախկին դաշնակցական Արշակ Ղազարյանին, ընդգծում է, թե իբր Խորհրդային Ռուսաստանը չի ցանկացել Հայաստանի բռնի խորհրդայնացում, և իբր դեպքերի զարգացումն է ստիպել

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 276,277:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

¹¹¹ «Դրոշակ», 1931, թիւ 1-2, էջ 1:

ռուս բոլշևիկներին «փրկել հայ ժողովրդին»¹¹²: Ավելին, ըստ Ս. Երամյանի, աշխատավոր հայ ժողովուրդն է կանչել ռուսներին¹¹³:

Այստեղ տեսակետների հակասությունը պայմանավորված է ոչ այնքան որոշակի փաստի հանդեպ ունեցած մոտեցումով, որքան Սփյուռքում հայ քաղաքական կուսակցությունների, հետևաբար՝ նաև թերթերի միջև առկա խորը համընդհանուր հակասությամբ¹¹⁴:

Սփյուռքում հաստատված մեկ այլ գործիչ՝ 1921 թ. հակախորհրդային ապստամբության արդյունքում Երևանում իշխանության եկած Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Կարո Սասունին, կարծիք է հայտնում, որ, չնայած նախընթաց անկախ պետականության ավելի քան երկուսուկես տարվա կյանքին, հայ գյուղացիները, մտավորականությունը, զորքը հակված էին ռուսական դիրքորոշմանը՝ նպատակ ունենալով ապահովել ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Թուրքիայի հետ խաղաղություն հաստատելուց բացի, նախատեսվող «նոր կառավարութան բնորոշող գիծը պիտի լինէր **ռուսասիրութիւնը**»¹¹⁵ (ընդգծումը հեղինակինն է – Խ. Ս.): Հեղինակը ցավով է նշում, որ հերթական անգամ հայ ժողովրդի գլխին կախվում է չարյաց փոքրագույնին ապավինելու դարավոր երկընտրանքը՝ բնաջնջումից ազատվելու համար ակնկալելով հյուսիսի աջակցությունը¹¹⁶: Փաստորեն Հայաստանի խորհրդայնացման հիմքում եղել է նաև «ռուսասիրության» խնդիրը: Դեռևս մինչև խորհրդայնացումը իշխող Հ.Յ.Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները, ովքեր երկրի անվտանգությունն առավելապես կապում էին Ռուսաստանի օգնության հետ, հակված էին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը:

¹¹²«Արարատ», Պեյրուֆ, 1938, 23 յունուարի:

¹¹³ Տե՛ս նույն տեղում, 25 յունուարի:

¹¹⁴ Հատկանշական է, որ Սփյուռքում, չնայած հայկական կուսակցությունների և զուգահեռաբար նրանց պաշտոնական մամուլի միջև գոյություն ունեցող անթաքույց հակասությանը, հնչել են նաև միասնաբար հանդես գալու կոչեր: Դեռևս 1921 թ. աշնանը ազգային կուսակցությունների ղեկավար մարմինները՝ ՀՅԴ արտասահմանի մարմինը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության Կ.Պոլսի գործադիր մարմինը, Հայ ռամկավար կուսակցության կենտրոնական վարչությունը և Ազատական կուսակցության կենտրոնական վարչությունը հանդես եկան Հայաստանում տիրող սովի դեմ համատեղ պայքարելու կոչով (տե՛ս «Աշխատատար», Նիւ-Եօրք, 1921, 13 հոկտեմբերի):

¹¹⁵ Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925թ., հոկտեմբեր, էջ 88:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 90:

Ի դեմս Ռուսաստանի՝ Հայաստանի անվտանգության երաշխավորի տեսնելու և այս հիմնավորմամբ իշխանությունը բոլշևիկներին հանձնելու պարզաբանումներ է տալիս նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը: Օրաթերթի հոդվածագիրը նշում է, որ Հայաստանի իշխանությունները բոլշևիկներին չդիմադրեցին այն պարզ պատճառով, որ ի դեմս նրանց ընդունում էին ոռուսներին: Եվ, ըստ թերթի, եթե բոլշևիկների փոխարեն Հայաստան ներխուժեին «Դենիկինի կամ ցար Նիկոլայի զորքերը, հետեանքը կը լինէր նոյնը, մերոնք չէին կռուի»¹¹⁷:

Այսպիսով, 1920 թ. դեկտեմբերի 2-ին խաղաղ ճանապարհով իշխանությունը բոլշևիկներին հանձնելով, դաշնակցականներն ակնկալում էին Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ժողովրդի ֆիզիկական անվտանգության երաշխիքներ: Անկախ Հայաստանի դաշնակցական ղեկավարները հույս ունեին, որ Խորհրդային Ռուսաստանի առկայության գործոնը կկանխեր քեմալականների կողմից հայ ժողովրդին իր հայրենիքում վերջնական բնաջնջման ենթարկելու ծրագիրը: Իսկ Ռուսաստանի գործոնի առարկայականացումը ենթադրում էր Հայաստանի խորհրդայնացում: Այս բարձր գիտակցությամբ էլ տեղի ունեցավ իշխանության խաղաղ փոխանցումը բոլշևիկներին: Դաշնակցությունն իշխանությունը հանձնելիս մեծապես կարևորեց քաղաքացիական կռվից խուսափելու հանգամանքը¹¹⁸:

Վերոնշյալ տեսակետն է հայտնում նաև Հ.Յ.Դաշնակցության Բյուրոյի նախկին անդամ Շահան Նաթալին: Վերջինս խնդրի կապակցությամբ գրում է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին միակ մտահոգությունն էր **«փրկել Արարատի դաշտին մէջ, մահուան քրտինքներու մէջ լողացող Հայութեան ֆիզիքական գոյութիւնը** (ընդգծումը հեղինակինն է – Խ. Ս.), որ այդ օրերուն ամենէն շատ վտանգուած էր, որովհետեւ Քեազիմ Գարապէքիր¹¹⁹ փաշան իր բանակով նստած էր Ալէքսանդրապոլի մէջ եւ ամէն վայրկեան կը սպառնար կոխկռտել եւ բնաջնջել մնացող հայութիւնը: Իշխանութիւնը յանձնողն ալ, ստացողն ալ կը գիտակցէին վտանգի էութիւնը: Հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը

¹¹⁷ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922, 17 յունուարի:

¹¹⁸ Տե՛ս Տէր-Յակոբեան Յ., նշվ. աշխ., էջ 124:

¹¹⁹ 1920 թ. Քյազիմ Կարաբեքիրը քեմալական բանակի արևելյան ռազմաճակատի զորքերի հրամանատարն էր:

վեր է ամեն քաղաքական եւ ընկերային դաւանանքէ: Այլապէս դժուար թէ Դաշնակցութիւնը յանձն առնէր խաղաղ ձեւով իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներուն»¹²⁰: Կարելի է փաստել, որ ժողովրդի անվտանգության գիտակցումը համակել էր թե՛ իշխանությունը հանձնող, թե՛ այն ստացող կողմերին:

Ի տարբերություն Շ. Նաթալու՝ Հայաստանի խորհրդայնացման անդրադառնալիս Դաշնակցության վարած քաղաքականությանը խիստ քննադատական գնահատականներ է տալիս նախկին կուսակցական Գրիգոր Չալխուշյանը¹²¹: Նա Հայաստանի խորհրդայնացման երկու պատճառ է բերում: Առաջինը երկրի աշխարհագրական աննպաստ դրությունը, տնտեսական ծանր պայմանները և «ժողովրդի անգիտակցութիւնն» էին: Ըստ Գ. Չալխուշյանի՝ երկրորդ պատճառը «իրենք դաշնակցականներն էին, որ զուրկ էին պետական հասկացողութենէ»¹²²: Նա կարծում է, որ դաշնակցական կառավարությունն Ադրբեջանի օրինակով պետք է ավելի շուտ իշխանությունը փոխանցեր բոլշեւիկներին: Այդ դեպքում կորուստներն անհամեմատ ավելի թեթև կլինեին¹²³: Գ. Չալխուշյանի կողմից դաշնակցականների հասցեին հնչեցրած անհարկի անձնական մեղադրանքներին ներքևում նույնպես կանդրադառնանք: Այդուհանդերձ նշենք, որ մեր տպավորությամբ դրանք ավելի շուտ ստվերում են Գ. Չալխուշյանի անձը, քան թե տալիս են իրերի իսկական պատկերը:

Հայաստանի խորհրդայնացումը դանդաղեցնելու հարցում դաշնակցականների վարած քաղաքականությունն առավել սուր է բնորոշում Թեհրանում հրատարակվող ակնհայտ հակադաշնակցական կողմնորոշում ունեցող «Գաղափար» թերթի խմբագիր Ս. Բաղդասարյանը: Նա նույնպես կարծում է, որ խորհրդայնացումը Հայաստանի համար փրկության միակ ելքն էր: «Հայ մեծամասնականներն այդ ժամանակ հայ ժողովրդի (Ֆիզիքական գոյութեան) փրկիչները հանդիսացան: Եթե մեծամասնականները չ'գային

¹²⁰ Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, Մարտէլ, 1934, էջ 17:

¹²¹ Իրավաբան, պատմաբան Գրիգոր Չալխուշյանը 1919-1920 թթ. եղել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը Դոնի Ռոստովում: 1920 թ. նոյեմբերին մեկնել է Կ. Պոլիս և Հայաստանի խորհրդայնացումից հետո մնացել է արտասահմանում:

¹²² Չալխուշեան Գ., Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 36:

¹²³ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

Հայաստան, ոչ ոք չի կարող երաշխաւորել, թէ այնտեղ եղած ազգաբնակչութիւնն իր գոյութիւնը կշարունակէր եւ զոհ չէր դառնա՝ մի կողմից տաճկական գազանութիւններին, իսկ միւս կողմից, Վրաստանի բռնած դիրքի պատճառով, սովամահութեան», - գրում է Ս. Բաղդասարյանը¹²⁴: Ինչպէս տեսնում ենք, տպավորություն է ստեղծվում, թե բոլշևիկների կողմից Հայաստանում իշխանության գալու գլխավոր նպատակը եղել է հայ ժողովրդի փրկությունը թուրքական վայրագություններից: Մինչդեռ քեմալականները, ինչպէս կտեսնենք ներքևում, հենց նույն բոլշևիկների տրամադրած ռազմական, նյութական, ինչու ոչ, նաև քաղաքական աջակցությամբ էին հարձակվել Հայաստանի վրա:

Հայաստանում բոլշևիկների իշխանության գալուն իր անմիջական արձագանքն է տալիս նորաստեղծ Հայ ռամկավար կուսակցության կենտրոնական վարչությունը: Վերջինիս կողմից 1920 թ. դեկտեմբերի 13-ին կուսակցության շրջանային վարչություններին հղված շրջաբերականում մասնավորապես ասվում է. «Անդրկովկասի ներկայ պայմաններու մէջ Հայերը Թուրքերու եւ Թաթարներու սպառնալիքին հանդէպ իրենց ֆիզիքական գոյութիւնը, ինչպէս նաեւ, կարելի է ըսել, քաղաքական իրաւունքները ապահովելու համար ուրիշ ռեւէ կողմէ գործնական օգնութիւն չեն կրնար ակնկալել, եթէ ոչ Ռուսաստանէն միայն»¹²⁵: Շրջաբերականում կոչ էր արվում «զգուշանալ անխոհեմ արտայայտութիւններէ ռուսական օգնութիւն ենթադրող ռեւէ փաստի կամ երեւոյթի դէմ»¹²⁶: Հատկանշական է, որ ռամկավարների Կ.Պոլսի «Ժողովրդի ձայնը» պարբերականը, որի խմբագիրն էր ականավոր մտավորական Վահան Թեքեյանը¹²⁷, Երևանի համաձայնագրի վերաբերյալ գրում է, որ թեև այդ պայմանագրով հայ ժողովուրդը փրկվել է վերահաս ջարդերից, այդուհանդերձ չի հավատում Մոսկվայի խոստումներին Հայկական հարցի լուծման առումով¹²⁸: Թերթը կոչ էր անում ըմբռնումով մոտենալ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը, քանի որ

¹²⁴ Բաղդասարեան Ս., Խորհրդային Հայաստան, Թէհրան, 1927, էջ 8:

¹²⁵ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, էջ 466:

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ Վահան Թեքեյանը Կ. Պոլսի «Ժողովրդի ձայն» ռամկավար պաշտոնաթերթը խմբագրել է 1920-1922 թթ. (տե՛ս Ալպոյաճեան Ա., Վահան Թեքեյան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր, Պէյրուֆ, 1988, էջ 263):

¹²⁸ «Ժողովրդի ձայնը», Կ. Պոլիս, 1920, 25 դեկտեմբերի:

«Ռուսահայաստանի բախտը կապված է Խորհրդային Ռուսաստանի հետ»¹²⁹: Թերթն ակնարկում է այն, որ երկար ժամանակ արևմտահայ քաղաքական միտքը հայկական անկախ պետականության վերականգնման առումով հիմնական ուժերը կենտրոնացրել էր Արևմտահայաստանի վրա, իսկ Արևելյան Հայաստանը պատկերացրել էր Ռուսաստանի կազմում՝ առավելագույնը ինքնավար կարգավիճակում:

Ինչպես տեսնում ենք, Հայ ռամկավար կուսակցությունը ևս Հայաստանի խորհրդայնացման հանդեպ ունեցած դրական դիրքորոշումը պայմանավորում էր հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունն ապահովելու մտահոգությամբ: Իսկ ինչ վերաբերում է Հայկական հարցի լուծմանը Մոսկվայի միջամտությանը, ապա ռամկավարների համար լուծումն այն էր, որ Խորհրդային Հայաստանն իրավունք էլ չունի այդ խնդրով զբաղվելու: Ըստ նրանց՝ Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս ամբողջ հայության անունից հանդես գալու իրավունք ունի միայն ազգային պատվիրակությունը¹³⁰: Սա հետաքրքիր է այն առումով, որ հետագայում ռամկավար-ազատականները հայտարարում էին, որ հայ ժողովրդի անունից հանդես գալու իրավունք միայն Խորհրդային Հայաստանն ունի:

Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ մի փոքր ավելի ուշ բուռն եղան նաև նոր կազմավորված Ռամկավար-ազատական կուսակցության թերթերի գնահատականները: Բոստոնի «Պայքար»¹³¹ պաշտոնաթերթը գրում է, որ Հայաստանը խորհրդայնացնող հայ բոլշևիկների հիմնական նպատակը Թուրքիայի ճիրաններից հայ ժողովրդի փրկությունն էր Ռուսաստանի օգնությամբ¹³²: Փարիզի «Ապագա»-ն էլ գրում է,

¹²⁹ «Ժողովրդի ձայնը», 1921, 2 յունուարի:

¹³⁰ Տե՛ս «Ժողովրդի ձայնը», 1920, 29 դեկտեմբերի:

¹³¹ «Պայքար»-ը լույս է տեսել 1922 թվականից: Բոստոնի «Ազգ» (Վերակազմյալ-ինչական կուսակցության ընդդիմադիր ճյուղի հրատարակած թերթը) և «Պահակ» (Վերակազմյալ-ինչական կուսակցության Ամերիկայի պաշտոնաթերթը) թերթերի միավորմամբ ստեղծված «Ազգ-Պահակ»-ի շարունակությունն է (տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924թ.), Երևան, 2000, էջ 140):

¹³² Տե՛ս «Պայքար», Պոսթըն, 1933, 29 նոյեմբերի:

որ Հայաստանը խորհրդայնացրեց կովկասահայերի այն հոսանքը, որը հայ ժողովրդի փրկությունը տեսավ Ռուսաստանի հետ միության մեջ¹³³:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը ոչ միայն ողջունեց Հայաստանի խորհրդայնացումը, այլև հայտարարեց, որ այն տեղի է ունեցել նաև իրենց մասնակցությամբ. «1920թ. Նոյեմբերի 29-ին, Հնչակեան ուժերու մասնակցութեամբ Հայաստանը դարձաւ Խորհրդային երկիր եւ Հայ ժողովուրդը փրկուեց վերջնականապէս ոչնչանալու վտանգից»¹³⁴: Հնչակյանները հույս ունեին, որ Խորհրդային Ռուսաստանը կհարգի Հայաստանի անկախությունը, ավելին. «Տաճկահայաստանն էլ կմիացնի Խորհրդային Հայաստանին»¹³⁵: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հնչակյանների հույսերը զուր էին: Հատկանշական է, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը հնչակյանների կողմից ողջույնի արժանացավ ոչ այնքան հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունն ապահովելու տեսակետից, որքան՝ «սոցիալիստական կառավարության» հաստատման¹³⁶: 1921 թ. Ամերիկայում Հնչակյան և Ամերիկայի կոմկուսի Հայկական հատվածի միության հարցը քննող ընդհանուր համագումարի ժամանակ հնչակյան գործիչ Արամ Զաչգարյանը «հպարտությամբ» հայտարարում է, որ «այսօրուան Խորհրդային Հայաստանը Լենինի կուսակցութեանը կը պարտինք»¹³⁷:

Հայաստանի խորհրդայնացման խնդրին անդրադառնալիս սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը կանգ է առել նաև այս գործում քեմալաբոլշևիկյան համագործակցության վրա:

Ակնհայտ իրողություն է, որ Հայաստանը խորհրդայնացնելու գործում Խորհրդային Ռուսաստանը դաշնակցում էր քեմալական Թուրքիայի հետ: Թուրքերը Հայաստանի խորհրդայնացումով շահագրգռված էին, որովհետև Հայաստան խորհրդային զորք մտցնելով՝ նրանք ապահովված կզգային թիկունքում և իրենց ուժերը

¹³³ Տե՛ս «Ապագայ», Փարիզ, 1928, 1 դեկտեմբերի:

¹³⁴ Յիսնամեակ Սօց. Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 1887-1937, Փրովիտէս, 1938, էջ 324:

¹³⁵ «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1921, 17 յունուար:

¹³⁶ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1920, 22 դեկտեմբերի:

¹³⁷ Մարտիրոսեան Լ., Ամերիկահայութիւնը երեկ եւ այսօր, Պէյրութ, 1973, էջ 54:

կկենտրոնացնեին Արևմուտքում՝ Անտանտի դեմ¹³⁸: Բոստոնի «Հայրենիք»-ի խմբագիր Ռուբեն Դարբինյանը գրում է, որ «բարեկամությունը Քեմալին ու մահմեդական աշխարհին հետ շատ ավելի արժեքավոր է Խորհրդային կառավարության համար, քան Հ. Յ. Դաշնակցության եւ հայության հետ»¹³⁹: Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները Հայաստանի խորհրդայնացումը կարևորում էին նաև քեմալական Թուրքիայի հետ անմիջական հաղորդակցության ցամաքային կապ հաստատելու անհրաժեշտությամբ¹⁴⁰:

Ռուսաստանը և Թուրքիան պայմանավորվել էին հարձակվել Հայաստանի վրա: Ըստ պայմանավորվածության՝ թուրքերը պետք է հասնեին մինչև Սարիղամիշ¹⁴¹: Հետո էր, որ նրանք, խախտելով նախնական համաձայնությունը, ավելի առաջ խորացան: Քեմալականները կարողացել էին համոզել Մոսկվայի բոլշևիկներին, որ իրենց օգնությամբ հեշտությամբ կարելի է բոլշևիկյան հեղափոխություն իրականացնել Արևելքի երկրներում և «յենուելով Արևելքի բազմամիլիոն մահմեդական զանգուածների վրայ, խորտակել Անգլիայի աշխարհակալությունը՝ Հնդկաստանում եւ այլուր»¹⁴²: Հայ բոլշևիկները կարծում էին, որ քեմալականների միջամտությունը Հայաստանի խորհրդայնացմանը բխում է հայ և թուրք ժողովուրդների «շահերից»: Հայիեդկոմի նախագահ Ս. Կասյանը գրում է, որ Հայաստանի խորհրդայնացումով հաղթեցին «խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»¹⁴³:

Քեմալական և բոլշևիկյան զորքերի՝ Հայաստանի վրա կազմակերպված միաժամանակյա հարձակման արդյունքում Հայաստանի Հանրապետության

¹³⁸ Տե՛ս Հակոբյան Ա., Ռուսաստանի ու Հայաստանի խորհրդայնացման գործընթացների և միակուսակցական վարչակարգի հաստատման պատմական մի քանի զուգահեռներ, «Պատմաբանասիրական հանդես», 2014, թիվ 1, էջ 53:

¹³⁹ Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք», Պոսթըն, 1923, յուլիս, էջ 128:

¹⁴⁰ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., էջ 231:

¹⁴¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 144, ց. 2, գ. 25, թ. 94, հմմտ. Սարգսյան Ե., Դավադիր գործարք, Երևան, «Հայաստան», 1994, էջ 162:

¹⁴² Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լեոն Շանթի պատուիրակությունը, «Հայրենիք», 1954, մայիս, էջ 10:

¹⁴³ Կասյան Ս., Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 181:

կառավարությունը հարկադրված էր հրաժարական տալ, վայր դնել իր լիազորությունները և իշխանությունը հանձնել չարյաց փոքրագույնին՝ Խորհրդային Ռուսաստանին¹⁴⁴:

Այս ընթացքում Խորհրդային Ռուսաստանից բացի, իրենց բացասական գործն իրականացրին նաև Հայաստանի բոլշևիկները: Մասնավորապես Ալեքսանդրապոլում տեղի հայ բոլշևիկներն ընդգծված հակապետական և թուրքամետ դիրքորոշում ընդունեցին: Խորհրդահայ պատմաբան Ս. Կարապետյանը նշում է, որ Ալեքսանդրապոլի բոլշևիկների օրգան «Կոմունիստ» թերթը, կանգնելով սխալ տեսակետի վրա, 1920 թ. նոյեմբերին քեմալականների զավթողական հայաջինջ պատերազմը որակեց որպես «դաշնակցության դեմ ուղղված քաղաքացիական պատերազմ, որը ճնշված հայ ժողովրդի համար բաց է անում նոր դարաշրջան»¹⁴⁵: Պատմաբանի կարծիքով այս էր պատճառը, որ հայ բանակայինները հերոսաբար չկռվեցին թուրքերի դեմ: Ս. Կարապետյանն ավելացնում է նաև, որ Ալեքսանդրապոլի կոմունիստ ղեկավարների տարածած սխալ քարոզչության հետևանքով գավառի գյուղացիներն աղ ու հացով էին դիմավորում թուրք ասկյարներին:

Հայ-թուրքական պատերազմում հայ բոլշևիկների խաղացած բացասական դերին իր հուշերում անդրադառնում է Հ. Տերտերյանը: Նա հայ բոլշևիկների կատարած գործողությունները բնորոշում է որպես ազգի և հայրենիքի հանդեպ դավաճանություն: «Ոչ պակաս կարեւոր դեր խաղացին Հայաստանի խորհրդայնացումը արագացնելու խնդրում նաեւ ազգի ու հայրենիքի դաւաճան հայ բոլշևիկները, որոնք պղտորեցին հայ ժողովրդի միտքն ու բարոյալքեցին հայկական զորամասերը՝ կռուի դաշտում գիտակցօրէն մեր զօրքերի շարքում խուճապ առաջացնելով: Հայ բոլշևիկները, ջարդարար թուրք փաշաներին միանալով, դաւեցին իրենց հայրենիքի դէմ, Էնվէր ու Քեմալ փաշաների գործակցութեամբ Հայաստանում «սոցիալիզմ» կառուցելու համար», - գրում է Հ. Տերտերյանը¹⁴⁶: Հուշագիրը բաց չի թողնում նաև այն իրողությունը, որ Հայաստանում

¹⁴⁴ Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, էջ 314:

¹⁴⁵ Կարապետյան Ս., 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, էջ 32:

¹⁴⁶ Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լեւոն Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք», 1954, մայիս, էջ 15:

խորհրդային վարչակարգ հաստատելու խնդրում իրենց ցուցաբերած կարևոր օժանդակության համար հայ բոլշևիկները «ստացան իրենց արժանի վարձատրությունը եւ հետագային Մոսկուայի կողմից բոլորն էլ անխնայ սրածուեցին, որպէս դաւաճաններ ու լրտեսներ»¹⁴⁷:

Պատասխանելով Հ. Քաջազնունու մեղադրանքներին՝ Ս. Վրացյանը ևս հայթորքական պատերազմում Հայաստանի պարտության և Հայաստանի խորհրդայնացման հիմնական պատճառ համարում է բոլշևիկա-քեմալական դավադրությունը¹⁴⁸:

Սկիզբառային հասարակական-քաղաքական միտքն անդրադարձել է նաև Հայաստանի խորհրդայնացման օրը նշելու խնդրին:

Ինչպես նշեցինք, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանում իշխանությունը Դաշնակցությունից փոխանցվեց բոլշևիկներին: Նոր իշխանությունների անդրանիկ հրամանով դեկտեմբերի 2-ը ազդարարվում էր Հայաստանում խորհրդային իշխանության հռչակման օր¹⁴⁹: Հրամանը հրապարակվում է ՀՍԽՀ դեկրետների և հրամանների պաշտոնական ժողովածուի մեջ¹⁵⁰, սակայն հետագայում հանվում է այնտեղից¹⁵¹: «Կարմիր աստղ» պարբերականում հանդես գալով համապատասխան հրապարակմամբ՝ Հայիեղկոմի նախագահ Ս. Կասյանը գրում է, որ դեկտեմբերի 2-ը Հայաստանի խորհրդայնացման օր ընդունելը սխալ է, քանի որ իր կարծիքով այդ օրվա «ակտը արժեքից զուրկ է»¹⁵²:

Դեկտեմբերի 2-ի իշխանության խաղաղ փոխանցումը արժեզրկելու և «հեղափոխական» ճանապարհով Հայաստանում իշխանությունը վերցնելու բոլշևիկյան տեսությունը հիմնավորելու նպատակով 1921 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային Հայաստանի ժողկոմխորհը որոշեց բոլոր դեկրետներում և հրամաններում Հայաստանում

¹⁴⁷ Նույն տեղում:

¹⁴⁸ Տե՛ս Վրացեան Ս., Խարխափումներ. Յ. Քաջազնունու «Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» գրքի առիթով, Պոստոն, 1924, էջ 85:

¹⁴⁹ Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 13:

¹⁵⁰ Տե՛ս Դեկրետների և հրամանների ժողովածու, Էջմիածին, 1921, պր. I (1920թ. նոյեմբերի 29 - 1921թ. փետրարի 18), էջ 5:

¹⁵¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ 4, գ. I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945), Երևան, 2010, էջ 283:

¹⁵² Տե՛ս «Կարմիր աստղ», Երևան, 1921, 29 նոյեմբերի, հմմտ. Կասյան Ս., նշվ. աշխ., էջ 205:

խորհրդային իշխանության հայտարարման օրը դեկտեմբերի 2-ի փոխարեն ընդունել նոյեմբերի 29-ը¹⁵³: Ըստ էության Հայաստանի խորհրդային իշխանություններն այս քայլով փորձում էին քողարկել Հայաստանի խաղաղ խորհրդայնացման իրողությունը և խզել կապն անցյալի իրականության հետ¹⁵⁴:

Խորհրդահայ պատմագրությունը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման օրը համարել է հայ ժողովրդի վերածննդի օր¹⁵⁵: Թերևս պատահական չէ նաև այն, որ պրոֆեսոր Զոն Կիրակոսյանի կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» ժողովածուից «դուրս է մնացել» 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը (վստահաբար կոմունիստական կուսակցական գաղափարախոսական թելադրանքներով)¹⁵⁶:

Հայաստանի խորհրդայնացման օրը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել սփյուռքահայ թերթերի կողմից: Իրականում քննարկումների հիմքում ավելի շատ ընկած էր այս կամ այն քաղաքական ուժին համակրելու կամ մերժելու հարցը և ոչ պատմական իրողությունների վերլուծությունը: Այս համատեքստում երբեմն էլ քննարկումների տիրույթում է եղել Հայաստանի անկախ լինել-չլինելու խնդիրը:

Դաշնակցական թերթերը զայրույթով էին անդրադառնում բոլշևիկների կողմից նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման օր նշելու փաստին: Այս կապակցությամբ Փարիզի «Հառաջ»-ը գրում է. «Երեւանի վարիչները կը յամառին նոյեմբեր 29-էն հաշուել թուական մը, որ իրականին մէջ կը սկսի դեկտեմբերի 2-էն»¹⁵⁷:

Հայաստանի խորհրդայնացման թվականը նոյեմբերի 29-ին նշողներին, առավել ևս այդ օրով Հայաստանի «վերածնունդը» պայմանավորողներին խիստ հակադարձում է նաև Ֆրեզնոյի «Ասպարեզ»-ը: «Մեր մէջ խմբակ մը գոյութիւն ունի,- գրում է թերթը,-

¹⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 43, գ. 30, թ. 39 և հակ.:

¹⁵⁴ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., էջ 44:

¹⁵⁵ Տե՛ս Галоян Г., Борьба за Советскую власть в Армении, Москва, 1957, стр 227.

¹⁵⁶ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) (պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ), Երևան, 1972, 810 էջ:

¹⁵⁷ «Յառաջ», Փարիզ, 1932, 2 դեկտեմբերի:

տարուած հիւանդոտ եւ անիրագործելի «համաշխարհային յեղափոխութեան» գաղափարով, որ ամէն կերպ կը ջանայ արհեստական փոփոխութեան ենթարկել անկախութեան թուականը եւ զայն փոխադրել Նոյեմբեր 29-ին, երբ ռուսական եւ տաճկական սովիններու օժանդակութեամբ հայ բոլշեւիկները տիրեցին մեր երկրին եւ «պրոլետարական» իշխանութիւն հաստատեցին Հայաստանի մէջ»¹⁵⁸: Սփյուռքում հրատարակվող դաշնակցական թերթերը գտնում էին, որ որևէ իմաստ չկա Հայաստանի խորհրդայնացման օրը դեկտեմբերի 2-ից տեղափոխել նոյեմբերի 29-ը: Դաշնակցական թերթերն այս կերպ ոչ միայն պաշտպանում էին իրենց կուսակցության պաշտոնական տեսակետը, այլև ներկայացնում էին պատմական իրականությունը՝ թերևս ինչ-որ տեղ արդարացիորեն ձևով արժևորելով նաև ՀՅԴ դերը:

Խնդրին երկակի մոտեցում էին ցուցաբերում հնչակյան թերթերը: Օրինակ՝ Բեյրութի «Արարատ»-ը, անդրադառնալով Հալեպում Խորհրդային Հայաստանի տարեդարձը նշելու հանդիսությանը, մեջբերում է այդ հանդիսության նախագահողի խոսքերը. «Նոյեմբեր 29-ը տօնն է իրական անկախութիւնը վայելող Խորհրդային Հայաստանի:... Նոյեմբեր 29ը յարութեան տօնն է 600 տարիներէ ի վեր ստրկութեան մէջ տուայտող հայ ազգին»¹⁵⁹: Ըստ էության թերթն առաջնահերթությունը տալիս է խորհրդային մոտեցմանը:

Հնչակյան մեկ այլ՝ «Արձագանք Փարիզի» թերթն ընկնում է մի այլ ծայրահեղության մեջ՝ նոյեմբերի 29-ը համարելով Հայաստանի ստրկացման օր: «Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը կրնայ խանդավառել քանի մը հարիւր կամ հազար հայ կոմունիստներ ամբողջ աշխարհի հայութեան մէջ, բայց Մայիս 28ը նուիրական տօն է ամբողջ պայքարող հայութեան համար, որ ազատ պետական գաղափարով կը ոգեւորուի: Ամէն նոյ. 29ի երբ ամէն տեղ հայ Պոլշեւիկները յավակնութիւնը ունենան ազգային տօնակատարութեան մը, հայ ժողովուրդը միմիայն

¹⁵⁸ «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1927, 27 մայիսի:

¹⁵⁹ «Արարատ», Պէյրութ, 1938, 11 յունուարի:

անտարբերութեամբ պիտի դիմաւորէ, ինչպէս երեկ էր: Ու միշտ պիտի աղաղակէ թէ մեր ստրկութեան տարեդարձն է, որ կը տօնուի», - գրում է թերթը¹⁶⁰:

Հալեպի «Սուրիական մամուլ»-ը Հայաստանի խորհրդայնացման օր հիշատակում է դեկտեմբերի 2-ը՝ այն համարելով «հայկական հեղափոխության» օրը¹⁶¹: Ամերիկայի հնչակյանների պաշտոնաթերթ «Երիտասարդ Հայաստան»-ի 1925 թ. նոյեմբերի 28-ի խմբագրականում նշվում է, որ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը պատրաստվում է «ողջունել **Դեկտեմբերի 2-ը** (ընդգծումը մերն է – Խ. Ս.)՝ իր յաղթանակներուն 5-րդ տարեդարձը, որու հանդէպ անտարբեր չէ եւ չի կարող ըլլալ արտասահմանեան գաղութահայ աշխատաւորական զանգուածը մասնաւորաբար... Դեկտ. 2-ը նոր փառայեղ շրջան մը բացած է հայ աշխատաւորութեան առջեւ»¹⁶²:

Կարելի է եզրակացնել, որ հնչակյան պարբերականները երկակի մոտեցում են ցուցաբերել: Երբեմն չհակադրվելով խորհրդային վարչակարգին՝ Հայաստանի խորհրդայնացման օր ընդունել են նոյեմբերի 29-ը, երբեմն էլ, հիմնականում խմբագրի անձով պայմանավորված, չեն հրաժարվել պատմական ճշմարտությունը բարձրաձայնելուց և որպէս Հայաստանի խորհրդայնացման օր ընդունել են Երևանի համաձայնագրի ստորագրման օրը՝ դեկտեմբերի 2-ը:

Նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման օր էին համարում և որպէս այդպիսին նշում ռամկավար-ազատականները¹⁶³: Բոստոնի «Պայքար» պաշտոնաթերթում ականավոր գործիչ Արշակ Չոպանյանն իր հրապարակումներից մեկում գրում է. «Մայիս 28-ը հայ ազատագրութեան համար մղուած դարաւոր պայքարին գեղեցիկ թուականներէն մին է... Ան անցեալին կը պատկանի: 1919 (պետք է լինի 1920 – Խ. Ս.) Նոյ. 29-էն ի վեր Հայոց պատմութեան մէկ նոր շրջանը կը բացուի, այդ օրը հայ ազգային ինքնավար կեանքին մէկ նոր փուլը կը սկսի, այդ օրը կը ստեղծուի Խորհրդային Հայաստանը, որ

¹⁶⁰ «Արձագանք Փարիզի», 1924, 13 դեկտեմբերի:

¹⁶¹ Տե՛ս «Սուրիական մամուլ», Հալեպ, 1924, 3 փետրուարի:

¹⁶² «Երիտասարդ Հայաստան», Պոսթըն, 1925, 28 նոյեմբերի:

¹⁶³ Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Արշակ Չոպանյանի ֆոնդ, ց. 1, բ. 1, գ. 1815, թ. 1:

այժմեան կենդանի Հայաստանն է...»¹⁶⁴: Նույն հրապարակախոսության մեջ Ա. Չոպանյանը, նախընտրելով նոյեմբերի 29-ը, փորձում է ցույց տալ, որ իր համար Խորհրդային Հայաստանը գերադասելի է «Դաշնակցական Հայաստանին»¹⁶⁵:

«Պայքար»-ի խմբագրականներից մեկում Հայաստանում «խաղաղության, ապահովության ու վերաշինության բեղմնաւոր շրջանի» սկիզբ է համարվում 1920թ. նոյեմբերի 29-ը: Ըստ թերթի՝ այդ օրը «Ազատ Հայաստանի գոյութիւնը դրուեցաւ շիտակ ու ամուր հիմերու վրայ»¹⁶⁶: Ինչպես տեսնում ենք, ռամկավար պաշտոնաթերթը, կարևորելով Հայաստանի խորհրդայնացումը երկրի զարգացման առումով, այդ իրադարձության սկիզբ համարում է նոյեմբերի 29-ը:

Թերթը նման բովանդակությամբ խմբագրական հոդվածներ է հրապարակում նաև հետագա տարիների նոյեմբերի 29-ի համարներում¹⁶⁷: Փաստորեն Ամերիկայի ռամկավարների պաշտոնաթերթը Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցում կիսում էր խորհրդային պաշտոնական տեսակետը: Նման մոտեցման հիմքում դրված էր Խորհրդային Հայաստանի վարչակարգի կողքին կանգնած լինելու ցուցադրության պատրաստակամությունը: Խորհրդահայ իշխանությունները որքան էլ մերժեին սփյուռքահայ քաղաքական կազմակերպություններին և նրանց մամուլի օրգաններին, ռամկավարները ճգնում էին ցույց տալ իրենց նվիրվածությունը խորհրդային վարչակարգին: Իսկ Հայաստանի խորհրդայնացման օրվա պատմագիտական ընկալումը նրանց չէր հետաքրքրում:

Սփյուռքյան համայնավարական թերթերը բնականաբար պետք է անվերապահորեն պաշտպանեին Հայաստանի խորհրդայնացման պատմության խորհրդային տեսակետը: Աթենքի «Արարատ» օրաթերթը գրում է . «...Մայիս 28էն ետք Նոյեմբեր 29 կայ ու մեր ժողովուրդը այսօր իր պետականության կը նայի այդ թուականին մէջ: Այսօրուան Հայաստանի տօնը Նոյեմբեր 29 է»: Կարծում ենք՝ թերթը, հետևելով իր դավանած գաղափարական ուղղությանը, իրավունք ունի պնդելու վերոնշյալը: Սակայն

¹⁶⁴ «Պայքար», 1927, 10 փետրուարի:

¹⁶⁵ «Պայքար», 1927, 12 փետրուարի:

¹⁶⁶ «Պայքար», 1926, 2 դեկտեմբերի:

¹⁶⁷ Տե՛ս «Պայքար», 1928, 29 նոյեմբերի, 1933, 29 նոյեմբերի:

մեկնաբանություններում փորձ է անում նվաստացնելու Մայիսի 28-ը: «Եթե գաղութները դեռ արժանաւորապէս չկրցան հասկնալ այդ թուականը, Մայիս 28ներու վրայ պնդելով չէ, որ մեր ժողովուրդը կը մօտեցնենք ներկայ իրականութեան, այլ ընդհակառակը, զայն աւելի կը հեռացնենք եւ խրամատը, որ կայ Հայաստանի եւ գաղութներու միջեւ, աւելի կը խորացնենք», - ահա այսպէս է հայտնում իր «մտահոգությունը» Աթենքի «Արարատ»-ը¹⁶⁸: Կարծում ենք՝ թերթի բացատրությունները հիմնազուրկ են: Բոլորովին չի կարելի համեմատել հերոսամարտերի արդյունքում ձեռք բերված Մայիս 28-ի անկախության հռչակումը և բոլշևիկյան Ռուսաստանի աջակցությամբ Հայաստան ներխուժած Հայիեդկոմի որևէ իրավական հիմք չունեցող խորհրդայնացման մասին հռչակագիրը:

Աթենքի մեկ այլ համայնավարական թերթ՝ «Սեւան»-ը, ավելի եռանդուն է պաշտպանում նոյեմբերի 29-ը: «Անկցի մեր հայրենիքի ստրկացման օր Մայիս 28ը, Կեցցէ մեր ազատութեան օր Նոյեմբեր 29ը», - գրում է թերթը¹⁶⁹: Թերթը նույն տարվա նոյեմբերի 29-ի համարում գրում է. «Կեցցէ հայ աշխատաւոր ժողովրդի իրական ազատութեան եւ անկախութեան թուականը, Նոյեմբեր 29ը, Կեցցէ խորհրդային Հայաստանը»¹⁷⁰:

Այսպիսով, խորհրդային վարչակարգի քաղաքականությունը պաշտպանող թերթերը ոչ միայն կարևորել են նոյեմբերի 29-ի հռչակագիրը, անտեսել դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագիրը, այլև փորձել են նսեմացնել 1918 թ. մայիսյան հաղթանակներն ու անկախ պետականության վերականգնման իրողությունը:

Ամբողջացնելով Հայաստանում իշխանությունը բոլշևիկներին հանձնելու վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի եզրահանգումները՝ կարելի է ընդհանրացնել, որ.

- սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն անվիճելի է համարում Հայաստանի խաղաղ խորհրդայնացման իրողությունը,
- սփյուռքահայ բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներն աներկբայորեն գտնում են, որ, երկիրը բոլշևիկների կառավարմանը փոխանցելով, դաշնակցական

¹⁶⁸ «Արարատ», Աթենք, 1925, 20 մայիսի:

¹⁶⁹ «Սեւան», Աթենք, 1933, 25 մայիս:

¹⁷⁰ Նույն տեղում, 29 նոյեմբերի:

ղեկավարներն ակնկալել են Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապահովել հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը թուրքական նոր կոտորածներից, ինչն արդեն սկսվել էր,

- Հայաստանի Խորհրդայնացումով դաշնակցական կառավարության անդամներն ակնկալում էին նաև Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը Հայաստանի տնտեսության վերականգնման, հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրների խելամիտ լուծման առումներով,

- Հայաստանի խաղաղ Խորհրդայնացման կարևոր պայմաններից մեկն էլ Հայաստանի անկախության պահպանումն էր,

- Հայաստանի Խորհրդայնացման խնդրում վճռորոշ է եղել նաև հայ ժողովրդի մոտ նախընթաց դարերում ձևավորված պրոռուսական կողմնորոշումը,

- Ժամանակի ընթացքում սփյուռքահայ մամուլի մի կարևոր հատվածը (հնչակյաններ, ռամկավար-ազատականներ), տուրք տալով Խորհրդային պաշտոնական դիրքորոշմանը, փորձել են չտեսնելու տալ Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը և Հայաստանի Խորհրդայնացման օր ընդունել նոյեմբերի 29-ը: Դաշնակցական թերթերը, առաջնորդվելով կուսակցության պաշտոնական տեսակետով, պնդում էին, որ Հայաստանի Խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920 թ. դեկտեմբերի 2-ին: Մեր կարծիքով այս մոտեցումը ոչ միայն կուսակցության դիրքորոշման, այլև պատմական ճշմարտության պաշտպանություն է:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրի ստորագրումից և իշխանությունը բուլշևիկներին փոխանցելուց մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի լույս 3-ի գիշերը (ժամը 2-ին), Ալեքսանդրապոլում թուրքական բանակի արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի հետ բանակցող Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ ստորագրեց

Ալեքսանդրապոլի պայմանագիրը (դաշնագիրը)¹⁷¹: Չնայած հայկական պատվիրակությունն ակնկալում էր Թուրքիայի կողմից զավթված տարածքներից որոշակի զիջումներ, ք. Կարաբեքիրը վերջնագրի տեսքով ներկայացրեց այնպիսի պայմաններ, որոնք շատ ծանր էին Հայաստանի համար: Հայկական պատվիրակությունը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ, և աննշան փոփոխություններով թուրքական պայմաններն ընդունվեցին որպես պայմանագրի հիմք:

Ալեքսանդրապոլի պայմանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, Հայաստանի և Թուրքիայի սահմաններն անցնելու էին Արփաչայ և Արաքս գետերով, Հայաստանն ունենալու էր սահմանափակ թվով զորք, որը պետք է գտնվեր Թուրքիայի վերահսկողության ներքո, թուրքերն Ալեքսանդրապոլից պետք է հեռանային պայմանագրի մյուս բոլոր կետերը լուծելուց հետո¹⁷²: Ալեքսանդրապոլի պայմանագրի՝ Հայաստանի համար նվաստացուցիչ լինելու հանգամանքը երևում է ոչ միայն նրանում առկա ծանր պայմաններից, այլև նրանից, որ պայմանագրի բնագիրը կազմված և ստորագրված է միայն թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով: Թուրքերն այնպիսի նվաստացուցիչ պայմանների մեջ էին դրել Հայաստանի պատվիրակությանը, որ հրաժարվել էին ստորագրել պայմանագրի հայերեն օրինական ուժ ունեցող տեքստը, որը դժվար թե իր նախադեպն ունենա դիվանագիտության պատմության մեջ¹⁷³: Բոլշևիկ գործիչ Արտաշես Կարինյանը, համեմատելով Ալեքսանդրապոլի պայմանագիրն ավելի ուշ (1921թ. հոկտեմբերի 13-ին) ստորագրված Կարսի պայմանագրի հետ, կարծում է, թե վերջինս ավելի նպաստավոր պայմաններ էր ստեղծում Հայաստանի համար¹⁷⁴:

¹⁷¹ Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, սեպտեմբեր, էջ 99:

¹⁷² Պայմանագրի ֆրանսերեն օրինակի պատճենը տե՛ս ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 61-64, իսկ հայերեն թարգմանությունը՝ նույն տեղում, թ. 65-68, ուսերեն թարգմանության վավերացրած պատճենը տե՛ս ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 438-440, կամ ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15-17, հմմտ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 408-411:

¹⁷³ Տե՛ս Սարգսյան Ե., Արեղյան Խ., Սարգսյան Ա., Լեգրանի միսիան (փաստաթղթեր), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, թիվ 3, էջ 103, 104:

¹⁷⁴ Տե՛ս Կարինյան Ա., Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, էջ 156:

Հայ պաշտոնական պատմագրությունը գտնում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական էր, միջազգային իրավունքի տեսակետից որևէ նշանակություն չունեի, քանի որ այն ստորագրել էր մինչ այդ դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով հրաժարական տված կառավարության պատվիրակությունը¹⁷⁵, մանավանդ որ նոր կառավարությունը նախորդ կառավարության պարտավորությունները չէր ստանձնում:

Էդիկ Զոհրաբյանի համոզմամբ, թեև Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական էր, բայց և այնպես թուրքերը մեծապես օգտվեցին նրանից՝ տարածքային զավթումներն օրինականացնելու համար¹⁷⁶: Հետագայում էլ, ըստ պատմաբանի, թուրքական իշխանությունները պահանջում էին, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը կատարի Ալեքսանդրապոլի պայմանագրից բխող մի շարք պայմաններ¹⁷⁷:

Հետխորհրդային շրջանում պատմաբան Արարատ Հակոբյանը կարծում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական է, ժամանակին հայկական կողմը այդ մասին տեղյակ է պահել միջազգային հանրությանը և պետք է չեղյալ համարել այն¹⁷⁸: Ալեքսանդրապոլի պայմանագրի ոչ իրավական լինելու, ուժի պարտադրանքով ստորագրված լինելու հանգամանքն է արձանագրում նաև իրավաբան Տիգրան Սահակյանը¹⁷⁹:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը լայն և տարատեսակ քննարկման արժանացավ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից: Հիմնական հարցադրումն այն էր, թե ինչու Ա. Խատիսյանը ստորագրեց այդ նվաստացուցիչ պայմանագիրը, եթե նրան բանակցությունների լիազորած կառավարությունն արդեն հրաժարական էր տվել:

¹⁷⁵ Տե՛ս Հայոց պատմություն (խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան), հ. 4, գիրք I, 2010, էջ 275, 276:

¹⁷⁶ Տե՛ս Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 358:

¹⁷⁷ Տե՛ս Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 175, 176:

¹⁷⁸ Տե՛ս Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 100, 101:

¹⁷⁹ Տե՛ս Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 349:

Նախ՝ խոսքը տանք Ա. Խատիսյանին: Իր հուշերում Ալեքսանդրապոլի բանակցություններում հայկական պատվիրակության ղեկավարը գրում է, որ դեկտեմբերի 1-ի առավոտյան՝ ժամը 11-ին, բանակցությունների երրորդ ընդհանուր նիստի ժամանակ, «թուրքերը վերջնագրի ձեռով ներկայացուցին իրենց արդեն պատրաստուած դաշնագիրը՝ պահանջելով անվերապահօրէն ընդունել զայն, հակառակ պարագային կը սպառնային, որ թուրքական զօրքերը անմիջապէս նորէն պիտի շարժուին Երեւանի վրայ»¹⁸⁰: Փաստորեն Ալեքսանդրապոլի ծանր պայմանագիրը ստորագրելու հիմնական պատճառ Ա. Խատիսյանը համարում է թուրքերի կողմից Երևանի վրա հարձակվելու սպառնալիքը:

Դեկտեմբերի 1-ին՝ ժամը չորսն անց կեսին, Ա. Խատիսյանը թուրքերի ներկայացրած վերջնագրի մասին տեղեկացնում է վարչապետ Սիմոն Վրացյանին և ակնկալում շտապ պատասխան: Ի պատասխան Ս. Վրացյանը հայտնում է, որ բոլշևիկյան զորքն առանց դիմադրության մտել է Քարվանսարա (Իջևան) և Դիլիջան, «կազմում է կոալիսիոն կառավարութիւն բոլշևիկների հետ՝ մասնակցութեամբ Դրօի եւ Տէրտէրեանի՝ Դաշնակցութեան կողմից: Թուրքերի պայմանները ստիպուած ենք ընդունել: Դուք լիազօրուած եք ստորագրել դաշինքը»¹⁸¹: Ինչպես տեսնում ենք, մի կողմից Ս. Վրացյանն Ա. Խատիսյանին տեղեկացնում է, որ իր կառավարությունը հարաժարական է տալիս, մյուս կողմից «շարունակում է լիազորել» հաշտություն կնքել թուրքերի հետ: Այս երկվությունը գալիս էր իրադրության զարգացման անկանխատեսելի լինելուց: Հատկապես հայկական կողմը չէր կարողանում կամ չէր ուզում տեսնել քաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխությունը:

Դեկտեմբերի 2-ի առավոտյան Ա. Խատիսյանը տեղեկանում է, որ Քարվանսարայից բոլշևիկյան բանակի հրամանատարը «Ռուսական պրոլետարիատից թուրքական պրոլետարիատին» վերտառությամբ ողջույնի հեռագիր է հղել Ք. Կարաբեքիրին¹⁸²: Պատասխան հեռագրում Ք. Կարաբեքիրը շնորհավորում է և հայտնում իր ուրախությունը, որ «հայ պրոլետարիատը վերջապէս կապիտալիստական լծից

¹⁸⁰ Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, սեպտեմբեր, էջ 98:

¹⁸¹ Նույն տեղում, էջ 99:

¹⁸² Տե՛ս նույն տեղում:

ազատուեց»¹⁸³: Ըստ էության դեկտեմբերի 2-ի առավոտյան Խորհրդային Ռուսաստանի դաշնակից Թուրքիայի զորահրամանատարը քաջատեղյակ էր Հայաստանի Խորհրդայնացման գործընթացի ամենաթարմ իրադարձություններին: Սակայն Ք. Կարաբեքիրն ինքն է նաև շտապեցնում Ա. Խատիսյանին ստորագրել պայմանագիրը: Իրականում Թուրքիան ամեն կերպ ջանում էր պատերազմում պարտված Հայաստանի հին կառավարության հետ շուտափույթ հաշտություն կնքել, որպեսզի արդեն Խորհրդայնացող Հայաստանի նոր իշխանություններին կանգնեցնել կատարված փաստի առաջ¹⁸⁴:

Դեկտեմբերի 2-ին՝ ժամը 6-ին, Ա. Խատիսյանին հեռագրաթելի մոտ է հրավիրում Դրոն, որն արդեն ստանձնել էր կարմիր բանակի հրամանատարությունը, և ասում հետևյալը. «Յեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ ձեզ, որ դուք ազատ եք ստորագրել դաշնագիրը կամ ոչ»: Խատիսյանի կողմից ավելի պարզորոշ հրահանգի խնդրանքին ի պատասխան Դրոն ավելացնում է. «Գործեցեք համաձայն ձեր հասկացողութեան, ես խոսում եմ իմ եւ ընկեր Սիլինի անունից»¹⁸⁵: Այստեղ անհասկանալի է նաև Դրոյի դիրքորոշումը: Հավանաբար վստահ է եղել, որ պայմանագրի ստորագրելը կամ չստորագրելը որևէ նշանակություն չէր կարող ունենալ դեպքերի հետագա զարգացման համար: Դրոյի, Ս. Վրացյանի և Ա. Խատիսյանի այս հեռագրազրույցի վերաբերյալ սիյուրքահայ հետազոտող Թորգոմ Վեհապետյանը բազմանշանակ գրում է. «որեւէ մէկը չ'ուզէր պատասխանատուութիւն ստանձնել Դաշնագիրը ստորագրելու համար»¹⁸⁶: Լեոն գտնում է, որ Դրոն պետք է պնդեր պատվիրակության լիազորությունների դադարեցման հանգամանքը և ոչ թե հորդորեր ստորագրել

¹⁸³ Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեվիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երեւան, 1997, էջ 295:

¹⁸⁴ Տե՛ս Հակոբյան Ա., Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավագիտական գնահատականը (1920-1921թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, թիվ 2, էջ 18, 19:

¹⁸⁵ Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, սեպտեմբեր, էջ 99:

¹⁸⁶ Վեհապետեան Թ., Նոր սերունդը՝ քաղութան նոխագ, Բ հատոր, Ալեքսանդրապոլի դաշնագիրը եւ Փետրուարեան ապստամբութիւնը իրենց յարակից հարցերով, Պէյրութ, 1985, էջ 54:

պայմանագիրը¹⁸⁷: Հայաստանի քաղաքական ղեկավարությունն ընտրել էր դեպքերի հետևից գնալու մարտավարությունը, որն այնքան էլ արդարացված չէր: Ավելացնենք նաև, որ անգլիացի հայագետ Քրիստոֆեր Ուոլկերի կարծիքով Դրոյի և Խատիսյանի հեռագրագրույցի բովանդակությունը թուրքերի և դաշնակցականների միջև դավադրության տեսություն մշակելու առիթ է տվել¹⁸⁸:

Այս իրավիճակում Ա. Խատիսյանը պատասխանատվությունը միայն իր վրա չվերցնելու, ինչպես նաև համընդհանուր որոշում կայացնելու մտադրությամբ խորհրդակցություն է հրավիրում պատվիրակության բոլոր անդամների մասնակցությամբ և առաջարկում յուրաքանչյուրին արտահայտել իր տեսակետը: Պատվիրակությունը միաձայնությամբ որոշում է ստորագրել պայմանագիրը¹⁸⁹: Այսպիսով, Խատիսյանը ցույց է տալիս, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելիս ինքնուրույն և միանձնյա ոչինչ չի արել. կամ հետևել է Երևանից տրվող ցուցումներին, կամ խորհրդակցել է ամբողջ պատվիրակության հետ:

Երբ Ա. Խատիսյանը վերադառնում է Երևան, դեկտեմբերի 4-ին Դրոյի և Օ. Սիլինի մոտ եղած ընդունելության ժամանակ Դրոն ասում է, որ իրենք ճիշտ են հասկացել իր խուսափողական պատասխանը և ստորագրել են դաշնագիրը: Ա. Խատիսյանի կարծիքով նոր կառավարությունը դրանով փորձել է խուսափել պատասխանատվությունից ինչպես թուրքերի, այնպես էլ հայ ժողովրդի առաջ¹⁹⁰:

Ի պատասխան հակառակորդ թևից հնչող այն մեղադրանքներին, թե Դաշնակցությունը չքննադատեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Ա. Խատիսյանը գրում է. «Ալեքսանդրապոլի դաշնագրի բնագիրը կը պահուի Երեւանում, Խորհրդային կառավարութեան մօտ: Թող անոնք, որ ուժ եւ հնարաւորութիւն ունին, փոխեն Ալեքսանդրապոլի դաշնագրի ծանր պայմանները: Եւ մենք, այդ դաշնագիրը ստորագրողներս, կը լինենք առաջինները, որ կը ծափահարենք ատոր: Բայց անցած է

¹⁸⁷ Տե՛ս Լեո, Անցեալից. Յուշեր, թղթեր, դիտումներ, Թիֆլիս, 1925, էջ 458:

¹⁸⁸ Տե՛ս Walker Ch., Armenia: The Survival of a Nation. London: Crom Helm, 1980, p. 319-320.

¹⁸⁹ Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, սեպտեմբեր, էջ 99:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 100, 101:

արդեն հինգ տարի եւ դժբախտաբար դրութիւն չէ փոխուած...»¹⁹¹: Ըստ էության Խատիսյանը հասկացնում է, որ խորհրդային իշխանությունները բոլոր հնարավորություններն ունեին շտկելու Ալեքսանդրապոլի սխալները: Ի դեպ, այս հարցի կապակցությամբ հետաքրքիր դիտարկում է անում Արարատ Հակոբյանը: Ըստ նրա՝ Հայկեդկոմը կարող էր, բայց բավարար համարձակություն չի ունեցել՝ ինքնուրույն Ալեքսանդրապոլի պայմանագիրն անվավեր ճանաչելու համար¹⁹²:

Իր հուշերում Ա. Խատիսյանն անդրադառնում է նաև պայմանագրի 3-րդ հոդվածի մի մասին: Ըստ պայմանագրի այդ հատվածի՝ իբր հայկական կողմն ընդունում էր, որ «ինչպէս թիրքական, այնպէս ալ ռուսական, նաեւ ամբողջ աշխարհի վիճակագրութիւնը եւ բոլոր տուեալները ցոյց կուտան որ ամբողջ թիրքական կայսրութեան մէջ չկայ ոչ մէկ կտոր հողամաս, ուր հայ բնակչութիւնը կազմէր մեծամասնութիւն»¹⁹³: Ա. Խատիսյանը պնդում է, որ հայկական կողմն այդ ձևակերպումը հանել է պայմանագրի նախագծից: Սակայն թիրքական «Սաբահ» թերթը հրատարակել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ներառելով նաև նախագծի երրորդ հոդվածի նշված հատվածը: Այնուհետև «Սաբահ» թերթից դաշնագիրը հրատարակել են նաև այլ թերթեր¹⁹⁴:

Ալեքսանդրապոլի պայմանագրի մեջ վերոնշյալ հատվածի առկայության մասին մեղադրանքներ է հնչեցնում Շ. Նաթալին: Նա իր «Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ)» գրքում պայմանագրի մասին գրում է, որ երրորդ հոդվածի՝ Ա. Խատիսյանի մատնանշած հատվածը պայմանագրում կա¹⁹⁵: Սակայն նրա՝ Ալեքսանդրապոլի պայմանագրին նվիրված մյուս երկու գրքերում նման բովանդակությամբ հոդված չի նշում, համենայն դեպս երրորդ հոդվածում նման

¹⁹¹ Նույն տեղում, էջ 101:

¹⁹² Տե՛ս Հակոբյան Ա., Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմահրավական գնահատականը (1920-1921 թթ.), էջ 21:

¹⁹³ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, սեպտեմբեր, էջ 101:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁹⁵ Տե՛ս Շահան «Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), Կ. Ա, Մարտէլ, 1934, էջ 24:

բան չկա¹⁹⁶: Փաստորեն Շ. Նաթալին սկզբում դատապարտում է Ա. Խատիսյանին և նրա համախոհներին Ալեքսանդրապոլի պայմանագրի որոշակի մի հոդվածի որոշ դրույթների համար, սակայն հետո պարզում է, կամ իր կողմից ընդունելի է դառնում, որ նման դրույթ պայմանագրում գոյություն չի ունեցել: Իրականում Ալեքսանդրապոլի պայմանագրի մեջ նման դրույթ չկա¹⁹⁷: Մեր կարծիքով Շ. Նաթալին սկզբնական շրջանում թուրքական թերթի հրապարակումներն օգտագործել է զուտ հակադաշնակցական քարոզչության նպատակով:

Վերադառնալով Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրած Ա. Խատիսյանին՝ ավելացնենք, որ պայմանագրի ստորագրման հաջորդ օրը Բ. Կարաբեքիրը նրան առաջարկում է անվտանգության նկատառումներից ելնելով չգնալ Երևան, այլ Կարսով, Էրզրումով, Տրապիզոնով գնալ Կ. Պոլիս, կամ Արդվինով, Բաթումով՝ Թիֆլիս¹⁹⁸: Սակայն Ա. Խատիսյանը մերժում է այդ առաջարկը:

Այսպիսով, Ա. Խատիսյանը, անդրադառնալով Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելու հանգամանքներին, նշում է, որ չնայած Հայաստանի համար պայմանագրի ծանր պայմաններին՝ հայկական պատվիրակությունն այլընտրանք չի ունեցել: Ըստ նրա՝ Հայաստանի և հայ ժողովրդի համար բավական ծանր կարող էին լինել պայմանագիրը չստորագրելու հետևանքները: Բանակցությունների ընթացքում ակներև է եղել թուրքերի կողմից Երևանի վրա շարժվելու սպառնալիքը: Ա. Խատիսյանը միաժամանակ համոզված է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո իշխանությունները բոլոր հնարավորություններն ունեին վերացնելու Ալեքսանդրապոլի պայմանագրի բացասական հետևանքները:

Իսկ ի՞նչ գնահատական է տալիս Ալեքսանդրապոլի պայմանագրին օրվա վարչապետ Ս. Վրացյանը: Վերջինս նույնպես համոզված է, որ Ալեքսանդրապոլի

¹⁹⁶ Տե՛ս Շահան, «Վերստին յաելուած». Ալեքսանդրապոլի դաշնագրի «ի՞նչպէս»ն ու «ինչո՞ւ»ն պաշտոնական եւ յուշագրական վկայութիւններու լոյսին տակ, Բոստոն, 1955, էջ 13, նույնի՝ Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի, Բաղդատական Զուգակշիռ), Պէյրութ, 1957, էջ 27:

¹⁹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 62, 66, հմմտ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 409:

¹⁹⁸ Տե՛ս Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, սեպտեմբեր, էջ 100:

պայմանագիրը հայկական կողմից չստորագրվելու դեպքում թուրքերը կշարժվեին Երևանի վրա: «Որքան բուռն լինեին հետագայ վիճաբանությունները, թուրքերի վերջնագիրը փաստօրէն վճռեց խնդիրը: Ճնշող մեծամասնութիւնը յանգեց եզրակացութեան՝ որ Լեգրանի վերջնագիրը պէտք էր ընդունուէր, բայց պէտք էր ընդունուէր նաեւ Կարաբեքիւրի վերջնագիրը: Այլապէս, մինչեւ բոլշեւիկների հասնելը՝ Երեւանը կը գրաւուէր թուրք ասկեարների կողմից»,- գրում է Ս. Վրացյանը¹⁹⁹:

Դիտարկելով թուրքերի կողմից առաջադրված Ալեքսանդրապոլի «հաշտության» պայմանները՝ Ս. Վրացյանը գրում է, որ առանձնապէս սաստիկ զայրույթ առաջ բերեց Սուրմալուի պահանջը: Դա նշանակում էր, որ «տաճիկները չեն ուզում հաշտուել անկախ Հայաստանի գոյութեան հետ»²⁰⁰: Իսկապէս, թուրքերի կողմից ներկայացված տարածքային պահանջները զրկում էին Հայաստանին ինքնուրույն գործելու բոլոր հնարավորություններից: Իսկ երկրի օրվա ղեկավարությունն էլ վերջնականապէս համոզվում է, որ Թուրքիայի նպատակը Հայաստանի վերջնական կործանումն է:

Ս. Վրացյանը գնահատական է տալիս նաև Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելու թուրքերի շտապողականությանը: Թուրքերը, ինչպէս նշեցինք վերևում, տեղյակ էին Երևանում կատարվող դեպքերին: Ս. Վրացյանի կարծիքով նրանք «վախենում էին իրենց դաշնակից բոլշեւիկների խաղերից եւ շտապում էին օր առաջ ստորագրել հաշտութիւն»²⁰¹: Ս. Վրացյանը համոզված է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումով չնայած մեծ հարված հասցվեց Դաշնակցության հեղինակությանը, այնուամենայնիվ հնարավոր եղավ հայ ժողովրդին փրկել նոր փորձություններից²⁰²:

Հետաքրքիր է նաև Ալեքսանդրապոլի պայմանագրին Ս. Վրացյանի կողմից տրվող իրավական-քաղաքական գնահատականը: Հայաստանի Առաջին հանրապետության վերջին վարչապետը գտնում է, որ Ալեքսանդրապոլի բանակցություններում հայկական պատվիրակությունը դեկտեմբերի 2-ին՝ Երևանի համաձայնագրի ստորագրումից հետո, դեռևս լիազորություններ ուներ ստորագրելու

¹⁹⁹ Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Դ հատոր, Աթէնք, 1995, էջ 124:

²⁰⁰ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, էջ 71:

²⁰¹ Նույն տեղում:

²⁰² Տե՛ս Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Դ հատոր, էջ 125:

հաշտության պայմանագիր: Նրա կարծիքով, «ըստ Լեգրանի հետ կնքուած պայմանի, իշխանութեան փոխանցումը տեղի պիտի ունենար դեկտ. 2-ի գիշերը, եւ ուրեմն, մինչ այդ՝ Հայաստանի կառավարութիւնը սահմանափակուած չէր այդ իրաւունքների մէջ: Դաշնագիրը ստորագրելու լիազօրութիւնը Խատիսեանի պատուիրակութեան՝ կառավարութիւնը տուել էր դեկտ. 1-ին, հետեւաբար, միջազգային օրէնքի եւ փաստական կացութեան տեսակէտով՝ Հայաստանի կառավարութեան ընթացքը հակաօրինական հանգամանք չունէր»²⁰³: Կարծում ենք, որ Ս. Վրացյանի այն պնդումը, թէ Ա. Խատիսյանի գլխավորած պատվիրակության լիազօրությունները դեռ չէին ավարտվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելու պահին, արդարացված չէ: Բացի դրանից, պայմանագիրը կնքվել է լույս 3-ի գիշերը, երբ դեկտեմբերի 2-ի օրն արդեն ավարտվել էր: Փաստորեն Ա. Խատիսյանը, նույնիսկ ըստ Ս. Վրացյանի պարզաբանման, այլևս իրավազոր չէր այդ պահին կնքելու պայմանագիրը: Ս. Վրացյանը փորձում է նոր փաստարկներ բերել՝ իր կառավարության անսխալականությունն ապացուցելու համար: Այլ բան է, որ այդ պայմանագրով փորձ արվեց կանխելու թուրքերի առաջխաղացումը:

Ս. Վրացյանը, սակայն, կարևորում է պայմանագրի այն կետը, որով կողմերը պետք է մեկ ամսվա ընթացքում վավերացնեին այն: Ու քանի որ այդ վավերացումը տեղի չունեցավ, հետևաբար պայմանագիրն օրինական ուժ չէր կարող ունենալ²⁰⁴: Այս փաստարկումը փաստորեն բավականին հիմնավոր է պնդելու, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը վավերականություն չունեցող փաստաթուղթ է: Հետաքրքիր է, որ Ք. Կարաբեքիրն իմանալով, որ Հայաստանը խորհրդայնանում է, և այդ պայմանագիրը չի վավերացվելու, այդ կետն ինչու է այդպես մտցրել: Կարծում ենք՝ թուրքերին տվյալ իրավիճակում Ալեքսանդրապոլի պայմանագիրն անհրաժեշտ է եղել ոչ այնքան իրավական, որքան քաղաքական տեսանկյունից: Արդարացի պետք է համարել պատմաբան Գալուստ Գալոյանի այն դիտարկումը, որ «եթէ թուրքերի համար խիստ ձեռնտու չլինէր այդ պայմանագրի տակ Հայաստանի՝ իշխանությունից հեռացած կառավարության ներկայացուցչի ստորագրությունը, նրանք առանց վարանելու կհենվեին

²⁰³ Վրացեան Ս., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 197:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 199:

միջազգային ընդունված նորմերի վրա և կմերժեին այն, ինչպես վարվեցին սուլթանի կառավարության կողմից Սևրի պայմանագրի ստորագրման դեպքում»²⁰⁵: Գ. Գալոյանը կարծում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ռազմավարական առումով ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ: Եթե Հայաստանը լրիվ կախման մեջ ընկներ Թուրքիայից, դա խիստ թուլացնելու էր Ռուսաստանի դիրքերն Անդրկովկասում²⁰⁶:

Այսպիսով, Ս. Վրացյանը ևս, ընդունելով Ալեքսանդրապոլի պայմանագրի ծանր իրողությունը, գտնում է, որ այն պարտադրված էր ուժով, և չստորագրելու դեպքում թուրքերը կշարունակեին հարձակումը, որը կարող էր առավել ողբերգական հետևանքներ ունենալ հայ ժողովրդի համար: Միաժամանակ նա նշում է, որ սահմանված ժամկետում չվավերացվելու համար այդ պայմանագիրը որևէ իրավական ուժ չի կարող ունենալ:

Մեր կարծիքով, սակայն, քննության պետք է ենթարկել պայմանագրի ոչ միայն իրավական, այլև քաղաքական կողմը: Այս առումով հետաքրքիր է Ս. Վրացյանի գլխավորած կառավարության անդամ Համբարձում Տերտերյանի պարզաբանումը: Թուրքերի հետ վերջիններիս առաջարկած պայմաններով հաշտություն կնքելու անխուսափելիության մասին Հ. Տերտերյանը հետևյալ բացատրությունն է տալիս. «Նոյն այդ ժողովում (դեկտեմբերի 1-ի – Խ. Ս.) որոշեցինք հեռագրել Խատիսեանին անյապաղ ստորագրել տաճիկների հետ հաշտութեան դաշինքը նրանց առաջարկած պայմաններով: Մենք այդ որոշումը կայացրինք հետեւեալ նկատումներով: Ընդունելով խորհրդայնացում եւ տաճիկների հետ հաշտութեան դաշինք չկնքելով, մենք նրանց իրաւունք տուած կը լինէինք շարունակել իրենց արշաւանքը, նորանոր գաւառներ գրաւել Հայաստանից եւ մտնել Երեւան: Մենք գիտէինք, որ ռուսները Հայաստան էին բերում ամենաշատը 3000 զինուոր, իսկ մինչեւ օգնական ուժեր ստանային՝ տաճիկները Հայաստանում քարը քարի վրայ չէին թողնելու: Պէտք էր փրկել հայութեան եւ Հայաստանի վերջին բեկորները, ուստի ընդունեցինք այդ դաշինքը»²⁰⁷: Մեր հուշագիրը միաժամանակ նշում է, որ այդ դաշինքն ինչ-որ տեղ կարող էր երաշխիք լինել ռուսների հնարավոր հեռանալու դեպքում: Այդ

²⁰⁵ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 376:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 378:

²⁰⁷ Վրացեան Ս., Կեանքի ուղիներով ..., հ. 2, էջ 279:

ժամանակ թուրքերը, պատերազմական վիճակ համարելով, կշարունակեին ռազմական գործողությունները²⁰⁸: Այսպիսով, Հ. Տերտերյանը ևս համոզում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելու հիմնական շարժառիթը թուրքերի առաջխաղացումը կանխելն էր:

Դաշնակցական մեկ այլ գործիչ՝ Կարո Սասունին, սակայն, գտնում է, որ Ա.Խատիսյանը կարող էր այդ պայմանագիրը չստորագրել: Ըստ նրա՝ Հայաստանի կառավարությունը և Դաշնակցությունը բոլոր հնարավորություններն ունեին խուսափելու այս դաշնագիրը ստորագրելու պարտականությունից: «Քանի որ Դեկտ. 1-ին ստորագրած էին Լըզրանի հետ եղած համաձայնությունը: Դեկտ. 2-ին իշխանությունը յանձնուած էր Դրոսին, մինչեւ որ խորհրդայնացած Հայաստանի Յեղկոմը ժամանէր Երեւան: Սակայն այն բոլոր նպաստաւոր պարագաները ժողովուրդին անմիջական շահերէն վեր դասուեցան ու համաձայնութիւն գոյացաւ որ Դրոն, որպէս փոխանցող կառավարութեան պետ, հրահանգ տայ Ա. Խատիսեանին ստորագրելու թուրքերու առաջարկած դաշնագիրը», - գրում է Կ. Սասունին²⁰⁹: Սակայն նա չի պարզաբանում այն հնարավորությունները, որոնց կիրառմամբ կարելի էր կանխել թուրքերի առաջխաղացումը (որի մասին խոսում են Ա. Խատիսյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ) և չստորագրել պայմանագիրը: Բավականին լուրջ է այն մեղադրանքը, թե «բոլոր նպաստաւոր պարագաները ժողովուրդին անմիջական շահերէն վեր դասուեցան»: Ի՞նչ է ուզում ասել Կ. Սասունին: Հավանաբար ակնարկում է, որ օրվա քաղաքական բարձր պատասխանատու ղեկավարությունն անկարողություն է դրսևորել: Մեր կարծիքով, անկախ արտաքին առարկայական հանգամանքներից, խնդիրը մինչև Ալեքսանդրապոլ հասցնելու մեջ էր: Քաղաքական անկարողության արմատները պետք է փնտրել այդտեղ:

Առաջին հանրապետության տարագիր գործիչներից մեկը՝ Հակոբ Իրազեկը (Տեր-Հակոբյան) գտնում է, որ «Ալեքսանդրապոլի դաշինքը կնքուեց խորհրդային իշխանութեան կամ բոլշեիկների գիտութեամբ եւ համաձայնութեամբ»²¹⁰: Ըստ էության ակնարկվում է, որ այդ պայմանագրի ծանր հետևանքների պատասխանատու պետք է

²⁰⁸ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁹ Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, յուլիս, էջ 116:

²¹⁰ Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), Պէյրուֆ, 1956, էջ 91:

համարել նաև բոլշևիկներին: Ալեքսանդրապոլի պայմանագրի պատասխանատուն, իրոք, ոչ միայն Ս. Վրացյանի կառավարությունն էր, այլև Հայիեղկոմը:

Իր հուշերում Ալեքսանդրապոլի պայմանագրին է անդրադարձել նաև Փարիզում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը: Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնի հետ ունեցած մասնավոր զրույցի ժամանակ նա խոսել է Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին և նշել, որ այն հայերին պարտադրվել է ուժի միջոցով և ընդունելի չէ մեզ համար²¹¹:

Ալեքսանդրապոլի դաշնագիրը սուր քննադատության ենթարկվեց հատկապես սփյուռքահայ ոչ դաշնակցական շրջանակների կողմից:

Հ.Յ.Դաշնակցությունից արդեն հրաժարված Հովհաննես Քաջազնունին Ալեքսանդրապոլի պայմանագիրն իր ծանրությամբ չէր տարբերում Բաթումի պայմանագրից²¹²:

Վերևում անդրադարձանք մի կարևոր դրվագի կապակցությամբ Շ. Նաթալու մոտեցմանը: Ընդհանրական առումով, ըստ Շ. Նաթալու, «դաշնագիրը (Ալեքսանդրապոլի – Խ. Ս.) իր պայմաններով կ'ապացուցանէ, թե յաղթական թուրքը իր եաթաղանով ոչ միայն գլխատած է Թրքահայաստանէն թիզ մը հող իսկ ակնկալելու մեր երազը, այլ նաեւ գլխատած է անկախութեան գաղափարը՝ տառ առ տառ, որովհետեւ ըստ այդ դաշնագրին, չկայ իսկապէս ոչ միայն անկախութիւն, այլ նոյնիսկ ոեւէ Հայաստան: Կայ միայն թուրքին ենթակայ մէկ հողամաս, ամէն վայրկեան պատրաստ Թրքահայաստանի ճակատագիրը կրելու»²¹³: Այսպիսով, Շ. Նաթալին ևս գտնում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը սպառնում էր Հայաստանի անկախությանը: Մեր կարծիքով այս գնահատականն արտահայտում էր իրականությունը:

Շ. Նաթալին զարմանալի չի համարում Ալեքսանդրապոլի պայմանագրի վտանգներից ազատվելու համար իշխանությունն ուրիշին զիջելը²¹⁴: Այսինքն՝ տարագիր

²¹¹ Ահարոնեան Ա., Սարդարապատից մինչև Սեւր եւ Լոզան, էջ 112:

²¹² Տե՛ս Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 45:

²¹³ Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, Մարտէլ, 1934, տպ. Ա. Արապեան, էջ 26:

²¹⁴ Տե՛ս նոյն տեղում:

գործիչը գտնում է, որ նույն օրը մի քանի ժամ շուտ ստորագրված Երևանի համաձայնագրի հիմնական նպատակը Ալեքսանդրապոլի պայմանագրի հետևանքների պատասխանատվությունից խուսափելն էր դաշնակցական կառավարության կողմից: Մեր կարծիքով, սակայն, այստեղ խախտվում է իրադարձությունների հաջորդականությունը կամ պատճառահետևանքային կապը: Նախ՝ ստորագրվել է Երևանի համաձայնագիրը, որով դաշնակցականները իշխանությունը զիջել են բոլշևիկներին, հետո նոր ստորագրվել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Շ. Նաթալու տրամաբանությունը ճիշտ կհամարեինք, եթե հակառակ հերթականությամբ զարգացած լինեին դեպքերը, նախ՝ ստորագրվեր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապա իշխանությունը հանձնվեր բոլշևիկներին: Շ. Նաթալին այստեղ ևս, ինչպես պայմանագրի 3-րդ հոդվածի պարագայում, դեպքերը մեկնաբանում է սեփական ենթակայական (սուբյեկտիվ) մոտեցմամբ:

Անդրադառնալով դաշնագիրը ստորագրելու՝ Ա. Խատիսյանին ուղղված Ս. Վրացյանի հորդորին՝ Շ. Նաթալին գրում է, որ իշխանությունից հրաժարված վարչապետը չէր կարող ինքնուրույն «թույլ տալ «ստորագրեցեք»ի համզօր թելադրանք մը ընել»²¹⁵: Նա պետական մաքսանենգություն է համարում պաշտոնից արդեն հրաժարված վարչապետի հորդորը ընդունել թուրքերի պայմանները, իսկ «պաշտօնազրկուած» պատվիրակության կողմից պայմանագրի ստորագրումը՝ պետական կեղծարարություն²¹⁶: Այսպիսով, Շ. Նաթալին, ի տարբերություն Ս. Վրացյանի և Ա. Խատիսյանի, խոսում է ոչ թե Ալեքսանդրապոլի պայմանագրի անվավեր լինելու մասին, այլ մեղադրանքներ է հնչեցնում նշված պետական պատասխանատու անձանց հասցեին անօրինական պայմանագիր ստորագրելու համար:

Շ. Նաթալին պնդում է, որ կարելի էր խուսափել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց: Ըստ նրա, եթե Ա. Խատիսյանը հրաժարվեր ստորագրել այն, և Ք. Կարաբեքիրը շարժվեր Երևանի վրա, նրան անմիջապես դեմ դուրս կգար «նոր

²¹⁵ Նույն տեղում, էջ 27:

²¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

կառավարութեան պատուիրակութիւնը, այսինքն՝ Ռուսաստանի ներկայացուցիչները»²¹⁷:
Իսկ Ք. Կարաբեքիրը, ըստ Շ. Նաթալու, ամեն գնով չէր ուզում ռուսներին հանդիպել:

Ալեքսանդրապոլի պայմանագրին անդրադարձել է նաև Հայաստանի Առաջին հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնյա, Պարսկաստան տարագրված Ա. Ջաղէթյանը: Նրա հողվածները սկզբում լույս են տեսել Իրանում, ապա վերահրատարակվել Երևանում²¹⁸:

Ա. Ջաղէթյանն անդրադառնում է այն փաստին, որ թուրքերը Ալեքսանդրապոլում կարողանում են համոզել հայկական պատվիրակությանը հրաժարվել Լեգրանի ներկայացուցիչ Մդիվանու միջնորդությունից, որից հետո պարտադրում են հայերին ստորագրել հաշտության պայմանագիրը, որն, ըստ Ա. Ջաղէթյանի, ստորագուցիչ էր հայերի համար²¹⁹:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելու վերաբերյալ Հ.Յ.Դաշնակցության ղեկավարների մոտեցումների տարբերությունն Ա. Ջաղէթյանը ներկայացնում է այսպես. «Դաշնակցականների շրջանում կրկին հանդես են գալիս երկու հոսանքները: Տաճկական օրիենտացիայի կողմնակիցները պահանջում են անմիջապես ստորագրել տաճիկների առաջարկած դաշնագիրը՝ ենթադրելով, թե տաճիկները կպաշտպանեն Հայաստանի անկախությունն ընդդէմ Ռուսաստանի: Իսկ ռուսական օրիենտացիայի կողմնակիցները պաշտպանում են Լեգրանի տեսակետը»²²⁰: Սխալ է թուրքական և ռուսական կողմնորոշման բաժանել հայ քաղաքական ղեկավարներին: Հարցի քննարկման հիմքում պետք է ընդունել Հայաստանի անկախության խնդիրը: Հետևաբար՝ ներկուսակցական դիրքորոշումների տարբերությունը ոչ թե Ռուսաստանի կամ Թուրքիայի կողմնակից լինելու մեջ է, այլ Հայաստանի անկախությունը պահպանելու մարտավարության մեջ: Երկու պայմանագրերում էլ հայկական կողմի համար կարևորվել է անկախության հարցը: Սակայն, ինչպես վերևում արդեն արձանագրեցինք, Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի անկախության հնարավորությունները հավասարեցվում էին զրոյի: Այնպես

²¹⁷ Նույն տեղում, էջ 40:

²¹⁸ Տե՛ս Ջաղէթյան Ա., Մոտիկ անցյալից, Երևան, 1967, էջ 5:

²¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 66, 67:

²²⁰ Նույն տեղում, էջ 67, 68:

չէ, որ Երևանի համաձայնագրով Հայաստանը պահպանեց իր անկախությունը, թեև այն երաշխավորվում էր պայմանագրով:

Արժանահիշատակ են նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներից ռամկավար-ազատական գործիչների և մամուլի գնահատականները: Նշենք, որ Դաշնակցությանը հակառակորդ կուսակցության ներկայացուցիչներն ու պարբերաթերթերը հաճախ էին քննադատության համար օգտագործում Ալեքսանդրապոլի պայմանագրի «խաղաթուղթը»:

ՌԱԿ գործիչ Հովհաննես Պողոսյանը կարծում է, թե Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումով Դաշնակցությունը փաստացի «Թրքահայ Դատի անունով խօսելու իրաունքէն ալ կամովին հրաժարած է»²²¹:

Բոստոնի «Պայքար»-ի էջերում Ա. Նազարը (Արմեն Նազարյան) մեղադրում է Դաշնակցությանը, որ «Լոնտոնի ու Լոզանի մէջ, Սէվրի դաշնագրին հիման վրայ մեր պահանջներուն դէմ, թուրքեր մեր առջեւ դրին ոչ թէ Խորհրդային այլ նախկին կառավարութեան՝ Խատիսեանի, ստորագրութիւնը»²²²: Ռամկավար-ազատական հեղինակն ուզում է ասել, որ եթե չլիներ Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապա Սևրի պայմանագիրը վերաքննելու կոչված Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսները հայանպաստ որոշումներ կընդունեին: Կարծում ենք, որ սա միայն Ա. Նազարի տեսակետն է, և այն լուրջ քննության չի դիմանում: Իրականում Լոզանի պայմանագիրը, որով փաստացի «թաղվեց» Հայկական հարցը, ավելի շատ մեծ տերությունների թուրքանպաստ դիրքորոշմամբ էր պայմանավորված, որի վրա, կարծում ենք, Ալեքսանդրապոլի պայմանագիրը որևէ ազդեցություն չէր ունեցել: Արևմտյան երկրներն ամեն կերպ փորձում էին սիրաշահել Թուրքիային և թույլ չտալ նրա վերջնական մերձեցումը Խորհրդային Ռուսաստանի հետ: Ի դեպ, «Պայքար»-ը նույնաբովանդակ մեղադրանքներ հնչեցրել էր նաև Հ. Քաջազնունու հայտնի զեկույցի վերաբերյալ իր հրապարակման մեջ²²³:

²²¹ Պողոսեան Յ., Մեր դերը: Ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ, էջ 39-40:

²²² «Պայքար», Պոստոն, 1925, 22 յունիսի:

²²³ Տե՛ս «Պայքար», 1923, 14 դեկտեմբերի:

Ա. Նազարը գտնում է, որ Ա. Խատիսյանը պետք է խուսափեր Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից և բանակցելու իրավունքը զիջեր խորհրդային իշխանությանը²²⁴: Մենք արդեն վերևում նշեցինք, որ Խատիսյանը Երևանի վրա հարձակվելու թուրքական սպառնալիքի տակ խուսանավելու հնարավորություն չուներ: «Պայքար»-ի հոդվածագիրը կարծում է, թե իբր թուրքերը հույս են տվել Ա. Խատիսյանին, որ պայմանագրի ստորագրումից հետո իրենք օգնական ուժեր կտրամադրեն Հայաստանին «խորհրդային իշխանութիւնը վտարելու եւ Դաշնակցական կառավարութիւնը վերահաստատելու համար Երեւանի մէջ»²²⁵: Սակայն այս կապակցությամբ պատմական որևէ փաստաթուղթ կամ հիշողություն չի պահպանվել: Ռամկավար գործիչն այս կերպ խտացրել է իր հակադաշնակցական քարոզչության գույները:

Դաշնակցության հասցեին հերթական քննադատություններն ուղղելիս Ռամկավար-ազատական կուսակցության նույն պաշտոնաթերթը որոշ ժամանակ անց կրկին օգտագործում է նույն առիթը՝ նշելով, որ դաշնակցականներն իրենց ցանկալի անկախության «վերջը դրել են» Ալեքսանդրապոլի պայմանագրով²²⁶: Եվ, ըստ թերթի, եթե չլիներ Մոսկվայի միջամտությունը, և եթե Հայաստանը խորհրդային չհռչակվեր, ապա «Հայաստանի կառավարութիւնը էնկիւրիի պարզ գործակատարը պիտի ըլլար եւ առանց անոր հրամանին պիտի չհամարձակէր շունչ իսկ առնելու»²²⁷: Մի դեպքում էլ թերթը Ալեքսանդրապոլի պայմանագիրը համարում է հայկական աղետների «պատասխանատու» Դաշնակցության «վերջին սխրագործություն»²²⁸:

Պայմանագրին նվիրված մի հոդվածում էլ Բոստոնի «Պայքար»-ը անկեղծ չի համարում Ս. Վրացյանի ու Ա. Խատիսյանի պարզաբանումներն Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրության հանգամանքների վերաբերյալ: Թերթը հատկանշական է համարում նաև այն հանգամանքը, որ Դաշնակցությունը 13 տարվա ընթացքում

²²⁴ Տե՛ս նույն տեղում:

²²⁵ Նույն տեղում:

²²⁶ «Պայքար», 1926, 30 յունուարի:

²²⁷ Նույն տեղում:

²²⁸ «Պայքար», 1932, 29 նոյեմբերի:

պաշտոնապես չդատապարտեց այդ պայմանագիրը: Թերթի համար ծիծաղելի են նաև այն բացատրությունները, թե իբր բոլշևիկներն իրենց քայլերով ստիպեցին ստորագրել Ալեքսանդրապոլի պայմանագիրը²²⁹:

Այսպիսով, Ռամկավար-ազատական կուսակցության Բոստոնի «Պայքար» պարբերականն իր հակադաշնակցական քարոզչության մեջ մեծ տեղ է հատկացնում Ալեքսանդրապոլի պայմանագրին: Չնայած հնչող մեղադրանքներն առանց հիմքի չէին, այնուամենայնիվ զգացվում է կուսակցական ատելության հողի վրա հանուն քննադատության քննադատելու թերթի հակվածությունը:

Փարիզի «Ապագա» պաշտոնաթերթում ռամկավար-ազատական գործիչ Ա. Թերզիպաշյանն իր ընդարձակ հոդվածում գրում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի պատճառները պետք է փնտրել Սևրի պայմանագրի մեջ: Ըստ հոդվածագրի՝ Սևրի պայմանագիրը հարվածում էր Խորհրդային Ռուսաստանի տնտեսական շահերին (տնտեսապես կաշկանդում էր նրան), և դրանով պայմանավորված Ռուսաստանն աջակցեց քեմալականներին, որպեսզի չիրականանա Սևրի պայմանագիրը²³⁰: Միաժամանակ հեղինակը կարծում է, որ հայ-թուրքական պատերազմը, որն ի վերջո ավարտվեց Ալեքսանդրապոլի պայմանագրով, նույնպես հրահրված էր միաժամանակ հույների և անգլիացիների կողմից²³¹: Ինչպես տեսնում ենք, այստեղ հեղինակը ցույց է տալիս Խորհրդային Ռուսաստանի կատարած բացասական դերն Ալեքսանդրապոլի դաշնագրի հարցում:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, քննելով 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի հետ գրեթե միաժամանակ ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագիրը, հանգում է հետևյալ եզրակացությունների.

- Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրող հայկական կողմը գործնականում պատկերացնում էր, որ այն իրավական ուժ չի կարող ունենալ: Սակայն

²²⁹ Տե՛ս «Պայքար», 1933, 29 նոյեմբերի:

²³⁰ Տե՛ս «Ապագայ», Փարիզ, 1926, 13 փետրուարի:

²³¹ Տե՛ս «Ապագայ», Փարիզ, 1926, 13 փետրուարի:

միաժամանակ կար այն գիտակցությունը, որ չստորագրելու դեպքում թուրքերը կշարժվեին Երևանի վրա, ինչը հղի էր ողբերգական հետևանքներով:

- Թուրքական կողմն ավելի լավ էր գիտակցում պայմանագրի իրավական ուժ չունենալու հանգամանքը: Նրանք ավելի շատ հաշվարկում էին պայմանագրի քաղաքական արժեքը: Թուրքերը ծրագրում էին պայմանագիրը որպես քաղաքական ճնշման միջոց գործադրել և՛ հայերի, և՛ ռուսների դեմ: Նրանք այդ նպատակով էլ ստորագրեցին կամ ստիպեցին ստորագրել իրավական ուժ չունեցող պայմանագիրը:

- Սկիյուռքում հաստատված դաշնակցական գործիչները համոզված են, որ Ալեքսանդրապոլի դաշնագրի հարցում իր բացասական դերն է կատարել նաև Խորհրդային Ռուսաստանը, Հայաստանի խորհրդայնացումն արագացնելու և հեշտացնելու նպատակով:

- Սկիյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ոչ դաշնակցական հատվածի կողմից Ալեքսանդրապոլի պայմանագիրն ավելի շատ օգտագործվել է Դաշնակցությանը մեղադրելու, բոլշևիկների անհաջողությունը Դաշնակցության վրա բարդելու համար: Այդուհանդերձ, չնայած կողմնակալ մեղադրանքներին, ակներև են նաև պայմանագիրը ստորագրող հայ գործիչների սխալները:

1.2 Հայաստան անկախության գաղափարի քննարկումները

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի ստորագրումից հետո շուրջ երկու տարվա ընթացքում Հայաստանի խորհրդային իշխանությունները Մոսկվայի անմիջական ցուցումով մի շարք քայլեր ձեռնարկեցին, որոնք հանգեցրին Խորհրդային Հայաստանի անկախության վերացմանը: Խոսքը նախ Անդրդաշնության, ապա նաև՝ ԽՍՀՄ-ի կազմի մեջ Հայաստանի ՍԽՀ-ի հայտնվելու մասին է:

1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում տեղի ունեցավ ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների

խորհուրդների առաջին համագումարը²³²: Ի թիվս այլ հարցերի խորհուրդների առաջին համագումարը քննարկեց և ընդունեց ՀՍԽՀ առաջին սահմանադրությունը²³³: Սահմանադրության համաձայն՝ ՀՍԽՀ բարձրագույն իշխանությունը Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդների համագումարն էր: Երկրի օրենսդիր մարմինը Կենտրոնական գործադիր կոմիտեն էր, իսկ գործադիր մարմինը՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը²³⁴:

ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայիների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարը քննարկեց նաև Անդրդաշնության կազմակերպման հարցը՝ հանձնարարելով Հայաստանի Կենտգործկոմին «բոլոր միջոցները շտապորեն իրականացնել ֆեդերացիան կյանքի կոչելու համար»²³⁵: Նշենք, որ Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների դաշինք ստեղծելու հրահանգ-գաղափարն ակնարկի ձևով տվել էր Վ. Լենինը դեռևս 1921 թ. ապրիլի 14-ին Ադրբեջանի, Վրաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստներին ուղղված վերևում հիշատակված նամակում²³⁶: Ավելի ուշ ֆեդերացիա ստեղծելու գաղափարը «զարգացրին» Ալեքսանդր Մյասնիկյանը, Իոսիֆ Ստալինը, Գրիգորի Օրջոնիկիձեն²³⁷:

Սկզբնական շրջանում Անդրկովկասյան դաշնության կազմավորման նպատակահարմարությունը բացատրվում էր տնտեսական միություն ստեղծելու անհրաժեշտությամբ: Սակայն պարզ էր նաև, որ տնտեսական միությունը չէր ստացվում

²³² Տե՛ս Սահակյան Ա., Հայաստանը Անդրկովկասյան դաշնության կազմում: Խանդավառ միավորումից մինչև անաղմուկ բաժանում, Վանաձոր, 2013, էջ 58:

²³³ Տե՛ս Խորհրդային Հայաստան (Հինգ տարի, 1920-1925), Երևան, 1926, էջ 441-456:

²³⁴ Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում..., էջ 568-570: Հայիեղկոմի և ՀՍԽՀ իշխանության բարձրագույն մարմինների իրավական կարգավիճակի և իրավական-կազմակերպական ձևերի մասին մանրամասն տե՛ս խորհրդահայ իրավաբան Վլադիմիր Նազարյանի ուսումնասիրությունը (Նազարյան Վ., Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920-1922 թթ.), Երևան, 1974, 247 էջ):

²³⁵ ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայիների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի արձանագրություններ, էջ 120:

²³⁶ Տե՛ս Լենին Վ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 43, Երևան, 1982, էջ 237-240:

²³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 18-23, Сталин И., Сочинения, т. 5, Москва, 1947, с. 88-100, Орджоникидзе Г., Избранные статьи и речи, Ленинград, 1939, с. 136-139.

առանց քաղաքական միության²³⁸: 1922 թ. մարտի 12-ին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտրոնականների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը հիմնադրեց Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը²³⁹: Անդրդաշնության ստեղծումով փաստացի զգալիորեն սահմանափակվեց հանրապետությունների ինքնիշխանությունը, որոշ ազդեցիկ ժողովրդական կոմիսարիատներ լուծարվեցին, և նրանց գործառույթները հանձնվեցին Անդրկովկասյան Միության Խորհրդին կից ստեղծված համապատասխան բաժիններին²⁴⁰: Անդրդաշնության երկրկոմի «Զարյա Վոստոկա» պաշտոնաթերթը գրում է, որ անդրկովկասյան հանրապետությունների լիազորությունների մի մասի փոխանցումն Անդրկովկասի կենտրոնականին և ժողկոմխորհին չի սպառնում ոչնչացնել Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ինքնուրույնությունը²⁴¹: Հայաստանի կոմկուսի պաշտոնաթերթը՝ «Խորհրդային Հայաստան»-ն էլ իր հերթին «բթամիտ ազգայնականներ» անվանեց նրանց, ովքեր կարծում էին, որ Դաշնությունը անկախության վերացում է նշանակում²⁴²:

1922 թ. դեկտեմբերի 10-13-ին Բաքվում տեղի է ունենում Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը, որը որոշեց Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը վերափոխել Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության²⁴³: Համագումարից առաջ տեղի ունեցած Հայաստանի խորհուրդների երկրորդ համագումարում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին) «կոչ էր

²³⁸ Տե՛ս Pipes R., The Formation of the Soviet Union. Cambridge, 1997, p. 267.

²³⁹ Տե՛ս Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, с. 334.

²⁴⁰ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., էջ 164:

²⁴¹ Տե՛ս “Заря Востока”, Тифлис, 1922, 12 декабря.

²⁴² Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Երևան, 1922, 5 դեկտեմբերի:

²⁴³ Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության ստեղծման մասին առավել մանրամասն տե՛ս Թադևոսյան Արտակ, Անդրկովկասյան դաշնության ստեղծումը և Հայաստանը (1921-1922 թթ.): Ատենախոսություն Է.00.01- «Հայոց պատմություն» մասն. պատմ. գիտ. թեկն. գիտ. աստիճանի համար, Երևան, ՀՀԳԱԱ, Պատմ. ին-տ., 2002, 138 էջ:

արել» համագումարի հայաստանցի մասնակիցներին քվեարկել հանուն դաշնության ամրապնդման²⁴⁴:

Ա. Մյասնիկյանը համոզված էր, որ շնորհիվ դաշնության Անդրկովկասը կվերածվի մի ընտանիքի²⁴⁵: «Զարյա Վոստոկա»-ն գրում է, որ Անդրկովկասյան միությունը կառուցվել է կամավորության սկզբունքի հիման վրա, և նրա յուրաքանչյուր անդամը ցանկացած պահի կարող է դուրս գալ նրա կազմից²⁴⁶: Մինչդեռ Խորհրդային Ռուսաստանի գաղտնի պետական մարմինների՝ Կովկասի մասին զեկույցներից մեկում գրված է, որ Կովկասում Խորհրդային իշխանությունը հանդիպել է բնակչության ազգային և կրոնական երևակայություններին, ռուսական լծի հանդեպ ատելությանը²⁴⁷:

Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը որոշեց միավորվել ՌՍԴԽՀ-ի, Ուկրաինայի և Բելոռուսիայի հետ՝ կազմելով մեկ միասնական պետական միավորում: Նախքան այդ խորհրդային հանրապետությունների միավորման գաղափարը քննարկվել էր Ի. Ստալինի առաջարկությամբ: 1922 թ. օգոստոսի 11-ին Ստալինը Խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում իր մշակած «ՌՍԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը», ըստ որի՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելոռուսիան և Ուկրաինան պետք է պաշտոնապես մտնեին ՌՍԴԽՀ կազմի մեջ ինքնավար հանրապետությունների կարգավիճակով²⁴⁸: «Ստալինյան ավտոնոմիզացիայի ծրագիրը» փաստացի ենթադրում էր ազգային հանրապետությունների, թեկուզ և ձևական, ինքնիշխանության կորուստ: Բանաձևը թեզիսների տեսքով ուղարկվեց Խորհրդային հանրապետություններին: 1922 թ. սեպտեմբերի 10-ին Հայաստանի Կ(Բ)Կ կենտկոմը պաշտպանեց առաջարկվող

²⁴⁴ Տե՛ս Սրապիոնյան Ս. (Լուկաշին), Խորհրդային Հայաստանի արտաքին և ներքին դրությունը (Ընկեր Ս. Սրապիոնյանի (Լուկաշին) զեկուցումը Հայաստանի Խորհուրդների II համագումարում – նոյեմբերի 29-30-ին 1922թ.), «Նորք» գրական յեվ քաղաքական հանդես, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, Յերեվան, 1922, էջ 217, հմմտ. Լուկաշին Ս., Հողվածներ, զեկուցումներ, ճառեր, Երևան, «Հայաստան», 1986, էջ 125:

²⁴⁵ Տե՛ս Мясников А., О Закавказской Федерации, Тифлис, Заккнига, 1930, стр. 15.

²⁴⁶ Տե՛ս “Заря Востока”, Тифлис, 1923, 3 января.

²⁴⁷ Տե՛ս Հայաստանը գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), Երևան, 2008, էջ 21:

²⁴⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 62:

գաղափարը²⁴⁹: Հարկ է նշել, որ ազգային հանրապետություններից միայն Հայաստանն անվերապահորեն պաշտպանեց «Ստալինյան թեզիսները»: Բելոռուսիայում, Ուկրաինայում և նույնիսկ Ադրբեջանում պնդում էին ազգային հանրապետությունների իրավունքների ընդլայնման և ոչ թե սահմանափակման մասին: Իսկ Վրաստանի կոմկուսը սպառնալիքներով մերժեց Ստալինի առաջարկը²⁵⁰ և արտահայտվեց ազգային հանրապետությունների լիարժեք անկախության օգտին²⁵¹: Հենց այս շրջանում առաջ եկան այսպես կոչված «վրաց նացիոնալ-ուկրոնիստները»²⁵²:

Սակայն «ստալինյան ավտոնոմիզացիան» չիրականացավ, որովհետև Վ. Լենինը դեմ եղավ: Նա առաջարկեց ազգային հանրապետություններին ՌՍԴԽՀ-ի կազմի մեջ ընդգրկելու փոխարեն վերջինիս հետ միավորել նոր պետական միավորման մեջ²⁵³: Հարկ է նշել, որ Վ. Լենինը ոչ միայն դեմ էր ազգային հանրապետությունների ինքնիշխանության սահմանափակմանը, այլև վաղաժամ էր համարում նոր միութենական պետության ստեղծումը²⁵⁴:

Ինչևիցե, 1922 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհուրդների երկրորդ համագումարը, լսելով Ա. Մռավյանի զեկուցումը ԽՍՀՄ կազմելու մասին, ողջունեց այդ առաջարկը և որոշեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն կազմելու նպատակով պայմանագիր կնքել Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասի և ՌՍԽՍՀ-ի միջև²⁵⁵: 1922 թ. դեկտեմբերի 10-13-ին Բաքվում տեղի ունեցած Անդրկովկասի

²⁴⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 26:

²⁵⁰ Տե՛ս Figes O., A peoples tragedy: The Russian Revolution: 1891-1924, New York, 1998, p. 798.

²⁵¹ Տե՛ս Հայոց պատմություն/խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., հ. 4: Գիրք I, էջ 410, 411:

²⁵² Տե՛ս Վրաց նացիոնալ-ուկրոնիստները ցանկանում էին, որ Վրաստանն անմիջականորեն մտնի ԽՍՀՄ-ի կազմի մեջ առանց Անդրդաշնությանը միջնորդավորված: Նրանց ղեկավարը համարվում էր Վրաստանի կոմունիստների առաջնորդ Բոդու Մդիվանին (տե՛ս Սահակյան Ա., Ազգային հարցը Անդրկովկասում և լուծման տարբերակները 1920-ական թվականներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2002, թիվ 1 (100), էջ 128): Վրաց ազգայնական կոմունիստների այս խումբը 1937 թ. մահապատժի դատապարտվեց (տե՛ս “Заря Востока”, Тифлис, 1937, 27 мая).

²⁵³ Վ. Լենինն առաջարկում էր նոր դաշինքն անվանել Եվրոպայի և Ասիայի հանրապետությունների միություն (տե՛ս Լենին Վ., ԵԼԺ, հ. 45, Երևան, 1983, էջ 252, 253):

²⁵⁴ Տե՛ս Լենին Վ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 30, Երևան, 1980, էջ 368:

²⁵⁵ Տե՛ս Մռավյան Ա., Խորհրդային հանրապետությունների միության մասին, «Նորք» գրական յեվ քաղաքական հանդես, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, Յերեվան, 1922, էջ 239, հմմտ. ՀՄԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների երկրորդ համագումարի արձանագրություններ, Երևան, 1923, էջ 162:

խորհուրդների առաջին համագումարը որոշեց միավորման պայմանագիր ստորագրել ՌՍՖՍՀ-ի, Բելոռուսիայի, Ուկրաինայի հետ, ինչի կապակցությամբ լիազորվեցին իր կողմից ընտրված պատգամավորները: 1922 թ. դեկտեմբերի 30-ին խորհրդային չորս հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսը քննարկում և ընդունում է նախապես մշակված ԽՍՀՄ կազմավորման մասին հռչակագրի ու միութենական պայմանագրի նախագիծը²⁵⁶:

Այսպես ավարտվեց ԽՍՀՄ կազմավորումը: Ռուս խորհրդային հեղինակ Ֆեոդոր Կոժենիկովը գրում է, որ միջազգային իրավունքի տեսակետից ԽՍՀՄ-ի կազմավորումը չէր նշանակում Ռուսաստանի՝ որպես այդ իրավունքի սուբյեկտի անհետացում միջազգային ասպարեզում²⁵⁷: Ըստ էության խորհրդային Ռուսաստանը հավակնում էր միջազգային ասպարեզում մնալ ոչ միայն քաղաքական, այլև իրավական առումով: Փորձ էր արվում ԽՍՀՄ-ը նույնացնել Ռուսաստանի հետ՝ անտեսելով ԽՍՀՄ-ի մեջ մտնող մյուս հանրապետություններին: Կոժենիկովի հետ համաձայն չէ միջազգային իրավունքի խորհրդահայ մասնագետ Ադասի Եսայանը, սակայն վերջինս փորձում է մեղմել իր ռուս գործընկերոջը՝ նշելով, որ վերջինս նկատի է ունեցել ցարական Ռուսաստանը²⁵⁸:

Հետխորհրդային շրջանի ռուսաստանցի հեղինակ Ռամազան Աբդուլատիպովը գրում է, որ չնայած այն հանգամանքին, որ խորհրդային Միության ազգային քաղաքականությունը լծակ հանդիսացավ պետության միասնականությունը պահպանելու համար, այդուհանդերձ որոշ կողմեր ձևական, երբեմն նաև բռնի բնույթ էին կրում²⁵⁹:

Բավականին հետաքրքիր և տպավորիչ է ԽՍՀՄ-ի կազմավորման վերաբերյալ ռուս տարագիր գործիչ Պավել Միլյուկովի արտահայտած տեսակետը. «Եթե ՌՍՖՍՀ-ը տարօրինակ «դաշնություն» է, ապա ԽՍՀՄ-ն առավել տարօրինակ «պետությունների

²⁵⁶ Ст'ю Образование СССР (Сборник документов, 1917-1924), (под редакцией Э. Генкиной), Москва, Ленинград, 1949, с. 332-337, հմմտ. Съезды Советов Союза Советских Социалистических Республик, Сборник документов, 1917-1937, в 7-х т., т III, Москва, 1960, стр. 16-22, նաև Сталин И., Сочинения, т. 5, Москва, 1947, с. 393-401.

²⁵⁷ Ст'ю Кожевников Ф., Советское государство и международное право 1917-1947 гг., Москва, 1948, с. 32:

²⁵⁸ Ст'ю Եսայան Ա., Սովետական Հայաստանի միջազգային իրավական դրությունը, 1920-1922, Երևան, 1967, էջ 206:

²⁵⁹ Ст'ю Абдулатипов Р., Федералогия, СПб., 2004, стр. 77.

միություն» է²⁶⁰: Նա, հիշելով խորհրդային պետականագետ Վ. Գուրվիչին, գրում է. «խորհրդային ինքնավարությունը միակ միջոցներից մեկն է մոտական ժամանակներում հաղթահարել կենտրոնախույս ձգտումները և ուժեղացնել կենտրոնամետ տեղաշարժերը»²⁶¹: Մեկ այլ առիթով նույն հեղինակը ԽՍՀՄ-ն անվանում է կեղծ դաշնություն (лжефедерация), որի կազմում Հայաստանը կորցրեց իր անկախությունը²⁶²:

Ա. Մյասնիկյանն անդրադառնում է Սփյուռքից հնչող այն մեղադրանքներին, որ Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի մեջ մտնելով՝ Հայաստանը կորցրեց իր անկախությունը: Նրա կարծիքով «խորհրդային Միությունն ու Կովկասյան ֆեդերացիան մեծապես զարկ տվին Հայաստանի բարգավաճման գործին»²⁶³: Բնական պետք է համարել այն, որ Ա. Մյասնիկյանը պաշտպանում էր Անդրդաշնության և խորհրդային Միության ստեղծումն արդարացնող տեսակետները: Պետք է նշել, որ Հայաստանի և Սփյուռքի հետ հարաբերություններում ուղղորդող դեր են կատարել հատկապես Ա. Մյասնիկյանի աշխատությունները²⁶⁴:

ԱՄԴԽՀ-ը գոյություն ունեցավ մինչև 1936 թ., երբ ԽՍՀՄ-ի նոր սահմանադրությամբ այդ հանրապետություններն անմիջականորեն ընդգրկվեցին ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Պատմագիտության գնահատմամբ սա ավելի ակնառու դարձրեց ԽՍՀՄ-ի ամբողջատիրական բնույթը²⁶⁵:

1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի ստորագրումից և հատկապես խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ի կազմի մեջ ընդգրկելուց հետո Սփյուռքում գործող ազգային կուսակցությունները, քաղաքական գործիչները, մտավորականները, թերթերը հասարակական լայն քննարկման առարկա դարձրին Հայաստանի անկախության գաղափարը: Այս ընթացքում նաև անկախության գաղափարի շուրջն էին տեղի ունենում

²⁶⁰ Տե՛ս Миллюков П., Национальный вопрос (происхождение национальности и национальные вопросы в России), Прага, 1925, стр. 190.

²⁶¹ Նույն տեղում:

²⁶² Տե՛ս Миллюков П., Россия на переломе: Большевицкий период русской революции, Париж, 1927, т. I, стр. 224.

²⁶³ Մարտունի Ա., խորհրդային Հայաստանի ուղին, Թիֆլիզ, 1924, էջ 33:

²⁶⁴ Տե՛ս Դավաթյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 28:

²⁶⁵ Տե՛ս Հակոբյան Ա., Միակուսակցական վարչակարգի ձևավորումը խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, էջ 104:

հայ քաղաքական մտքի շերտավորումն ու բյուրեղացումը: Սա շատ բնական էր, որովհետև անկախության գաղափարի տեսական ըմբռնումով էր պայմանավորված նաև հարցի գործնական լուծումը:

Նշենք, որ սփյուռքահայ շրջանակների կողմից անկախության համար մղվող քարոզչական պայքարը շատ սուր գնահատականների էր արժանանում Խորհրդային Հայաստանում: Ա. Մյասնիկյանը գրում է, որ Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարի քարոզչությամբ զբաղվում են «հակաաշխատավորական հայ թերթեր, արտասահմանում թրև եկող զանազան տիպի հայ պատգամավորներ, որ կոչված են «լուծելու» հայկական հարց ասվածը, թրքատյաց ու ռուսատյաց, այլ խոսքով՝ «մարդատյաց հայ «մտավորականներ», ու այն կոնտինգենտը, որ ճգնում է Խորհրդային Հայաստանի հանդեպ արտաքին քաղաքականություն տանել»²⁶⁶: Անկախության գաղափարը համարելով նացիոնալիզմի դրսևորում՝ Ա. Մյասնիկյանը «հպարտությամբ» է նշում, որ Խորհրդային Հայաստանը մահվան դատապարտեց հայ «նացիոնալիզմը»²⁶⁷: Ա. Մյասնիկյանի համոզմամբ մեր անկախությունն «օրվա Հայաստանն է»²⁶⁸: Բնականաբար, Ա. Մյասնիկյանը նկատի ունի Խորհրդային Հայաստանը, որն ազատվել էր «կեղեքիչներից և գիշատիչներից»: Նա անկախություն ասելով հասկանում է «բուրժուազիայից» ազատ և անկախ ապրելը: Դաշնակցականների կողմից անկախության մասին բոլոր տեսակի ակնարկները Մյասնիկյանը որակում է որպես բուրժուական պահեստից հանված գաղափարներ²⁶⁹: Անկախության վերականգնման քարոզչական աշխատանքները ներկայացվում էին որպես որդեգրում իմպերիալիզմի այն օրիենտացիայի, որը նպատակ ունի Խորհրդային Միության սահմաններում վերականգնելու բուրժուական քաղաքական գերիշխանությունը, խորտակելու պրոլետարական կարգերը՝ այդ շարժմանը լծակից դարձնելով նախկին Ռուսաստանի այն բոլոր ազգային միավորների հակահեղափոխական կազմակերպություններին, որոնք իրենց «ազգային ինքնորոշման»

²⁶⁶ Մարտունի Ա., Հայաստանի միջազգային քաղաքականությունը, «Նորք» գրական յեվ քաղաքական հանդես, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, Յերեվան, 1922, էջ 208:

²⁶⁷ Նույն տեղում, էջ 212:

²⁶⁸ Մարտունի Ա., Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 77:

²⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 69-71:

ծրագիրը կապում են Խորհրդային Միության տապալման և իմպերիալիզմի հաղթանակի հետ²⁷⁰:

Նման պայմաններում անկախության գաղափարի քարոզը Սփյուռքում շատ ծանր աշխատանք էր լինելու:

Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարի հիմնական և ամենաեռանդուն ջատագովը Դաշնակցությունն էր: Սփյուռքահայ պատմաբան Գառնիկ Գյուզալյանը, վերլուծելով Հայաստանի պետականության և անկախության վերականգնման գաղափարի զարգացման ընթացքը՝ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից, հանգում է այն եզրակացության, որ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի մշակումը Դաշնակցության մեծագույն գործն է՝ կատարած հայ ժողովրդի և պատմության հանդեպ²⁷¹: Չնայած Խորհրդային իշխանությունները փորձում էին ապացուցել, որ Դաշնակցության պայքարի հիմքում ոչ թե ազգային խնդիրներն են, այլ միջազգային հակակոմունիզմին աջակցելը²⁷²: Հատկապես Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին Խորհրդային իշխանությունները ՀՅԴ-ին առնչվող ցանկացած երևույթի նկատմամբ ծայրահեղ անհանդուրժող քաղաքականություն էին վարում²⁷³:

Հայաստանի անկախության անկումից և քաղաքական ղեկավարության տարագրությունից հետո Դաշնակցության հետագա գործունեության համար ուղենիշային դարձավ 1924 թ. նոյեմբերից մինչև 1925 թ. հունվար ամիսը տեղի ունեցած կուսակցության 10-րդ Ընդհանուր ժողովը²⁷⁴: Ի թիվս այլ որոշումների՝ առավել կարևոր էր Անկախ և Միացյալ Հայաստանի մասին բանաձևի ընդունումը²⁷⁵: Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջը որպես կուսակցության քաղաքական գործունեության սկզբունք,

²⁷⁰ Տե՛ս Թորոյան Պ., Դաշնակցության արդի քաղաքականությունը, «Լենինյան ուղի», 1928, թիվ 11, էջ 7:

²⁷¹ Տե՛ս Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, էջ 138:

²⁷² Տե՛ս Atamian S., The Armenian Community: The historical development of a social and ideological conflict, p. 345.

²⁷³ Տե՛ս Caprielian A., The Armenian Revolutionary Federation and Soviet Armenia, “The Armenian Review”, 1975, Vol. 28, N 3, p. 285.

²⁷⁴ Քիրքչեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, «Ազգակ շաբաթօրեակ-Դրօշակ», Պէյրոս, Դ տարի, 1973 թ., թիւ 44, էջ 701:

²⁷⁵ Քաղաքացիներ ՀՅԴաշնակցութեան 10-րդ Ընդհանուր ժողովի որոշումներէն, էջ 30:

որդեգրվել էր նաև 1923 թ. գարնանը Վիեննայում տեղի ունեցած ՀՅԴ արտասահմանյան մարմինների արտակարգ խորհրդաժողովում²⁷⁶:

Մեկնելով 10-րդ Ընդհանուր ժողովի որոշումից՝ դաշնակցական մամուլը, մի շարք ականավոր դաշնակցական մտավորականներ ձեռնամուխ եղան Հայաստանի անկախության վերականգնման գաղափարի քարոզչությանը:

«Միացյալ և Անկախ Հայաստանի» վերաբերյալ բանաձևեր ընդունվեցին նաև ՀՅԴ-դաշնակցության 11-րդ²⁷⁷, 12-րդ²⁷⁸, 13-րդ²⁷⁹ Ընդհանուր ժողովներում:

Սկզբից ևեթ արձանագրենք այն փաստը, որ Դաշնակցությունը, դեմ լինելով խորհրդային կարգերին, միաժամանակ դեմ էր այդ կարգերը բռնի վերացնելու փորձերին: Հայաստանում խորհրդային իշխանության տապալումը կուսակցությունը կապում էր ամբողջ Ռուսաստանում կոմունիստների իշխանության թուլացման և տապալման հետ²⁸⁰:

Կուսակցության պաշտոնաթերթ «Դրօշակ»-ն իր խմբագրականներում սկսեց տարբեր առիթներով քննարկման նյութ դարձնել Հայաստանի անկախության վերականգնման գաղափարը: Շուրջ տասնամյա դադարից հետո նորից հրատարակվելով «Դրօշակ»-ն իր 1925 թ. հունիսի խմբագրականում նշում է, որ անկախ Հայաստանի փաստն ավելի առարկայական է դարձնում Հայ դատի պահանջը: «Հայաստանի Հանրապետության հռչակումով եւ փաստով այլեւս վերանում են մեջտեղից Հայկական Դատի զանազան ձեւակերպումները, ինչպէս օրինակ բարենորոգումների ծրագիր, հայկական ինքնավարութիւն, ֆեդերասիոն Տաճկաստանի եւ Ռուսաստանի սահմաններում եւ այլն, որոնք տարբեր ժամանակներում, մեծ մասամբ արտաքին պայմանների ազդեցութեամբ, առաջ էին քաշում իբրեւ հարցի լուծման գործնական միջոցներ: Այս բոլորի տեղը ներկայումս տիրականօրէն բռնում է Թուրքահայաստանը եւ

²⁷⁶ «Նոր Արշալույս», Պուքրէշ, 1923, 1 յուլիսի: Վիեննայի խորհրդաժողովից հետո բոլշևիկ գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը Դաշնակցությանը կոչ է անում, փոխանակ խորհրդային Միության դեմ պայքարելու, համակերպվել իրականության հետ և հակախորհրդային գործունեություն չծավալել (տե՛ս Հովհաննիսյան Ա., Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք» գրական յեվ քաղաքական հանդես, գիրք երրորդ, ապրիլ-սեպտեմբեր, Յերեվան, 1923, էջ 182):

²⁷⁷ «Դրօշակ», 1929, թիւ 4-5, էջ 65, 66, «Յառաջ», 1929, 9 յունիսի:

²⁷⁸ «Յառաջ», 1933, 2 ապրիլի:

²⁷⁹ Оганесян Э., Век борьбы, т. 2, Мюнхен-Москва, 1991, с. 403.

²⁸⁰ «Յառաջ», 1929, 11 յունիսի:

Ռուսահայաստանը մէկ անկախ մարմնի մէջ միացնելու գաղափարը, մի գաղափար, որ նւիրագործւած է միջազգային ակտերով եւ հայ ժողովրդի անկախ պետական կեանքի փաստով»- գրված է խմբագրականում²⁸¹: «Դրոշակ»-ը խնդիր է դնում հայ ժողովրդի քաղաքական միտքը կենտրոնացնել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի վրա²⁸²: Ըստ էության պարբերականն արձանագրում է այն, որ Հայաստանի Առաջին հանրապետությունը, չնայած իր կարճատև կյանքին, սահմանեց նախընթաց ժամանակաշրջանում հայ քաղաքական մտքի կողմից հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերջնակետի հստակեցումը: Անկախ պետականության վերականգնումը համարվեց այն գլխավոր թիրախը, որին պետք է սևեռված լինի հայ քաղաքական միտքը:

«Դրոշակ»-ի տեսակետով Հայաստանի անկախության գաղափարի արձարծումը սնապարծություն պետք չէ համարել: Անկախությունը կենսական նշանակություն կարող է ունենալ Հայկական հարցի լուծման համար: Առանց Հայաստանի անկախության դժվար է պատկերացնել Արևմտահայաստանի հարցի լուծումը: «Դրոշակ»-ը միայն Հայաստանի անկախության վերականգնումով է հնարավոր համարում Հայաստանի սահմանների ընդարձակումն ու ամբողջականացումը²⁸³:

Անկախության տասնամյակին նվիրված խմբագրականում թերթը զարգացնում է այն հետաքրքիր միտքը, որ 1918 թվականին հռչակված անկախությունը քաղաքական առումով ավելի առարկայական դարձրեց Հայաստան տեղանունը: Այս առիթով նույն խմբագրականում նշվում է, որ «տասը տարի առաջան դէպքերուն բուն իմաստը այն է, որ կարելի եղաւ ստեղծել ազգագրական Հայաստանը: Ուրիշ խօսքով, իրական հայոց հայրենիք դարձնել աշխարհագրական բացատրութիւն մը,- Երևանի նահանգապետութիւնը»²⁸⁴:

Բնականաբար Դաշնակցության պաշտոնաթերթը չէր կարող Հայաստանի անկախությանն անդրադառնալիս քննադատության խոսքեր չուղղել խորհրդային իշխանությունների դեմ: Սակայն «Դրոշակ»-ը, մեղադրելով հայ կոմունիստներին իրենց

²⁸¹ «Դրոշակ», 1925, թիւ 1, էջ 1:

²⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 2:

²⁸³ Տե՛ս «Դրոշակ», 1926, թիւ 5, էջ 131:

²⁸⁴ «Դրոշակ», 1928, թիւ 5, էջ 130:

խոստացած անկախությունը չպահելու մեջ²⁸⁵, այնուամենայնիվ բովանդակ սփյուռքահայությանը կոչ է անում նվիրվել հայրենիքի վերաշինության գործին: Պարզ էր, որ ինչքան հզոր լինեի Խորհրդային Հայաստանը, այնքան ավելի հեշտ կլինեի հասնել նրա անկախությանը: Բացի դրանից, պետք չէր հայրենիքի շենացմանն աջակցելը պայմանավորել օրվա իշխանությունների տրամադրություններով: «Չփոթել երկիրն ու ժողովուրդը ուժիմի հետ, ուժիմներն անցողական են, ժողովուրդն ու երկիրը յափտենական», - գրում է պաշտոնաթերթը²⁸⁶: Այս առիթով մեկ այլ խմբագրականում նշվում է, որ չնայած կորցրել ենք անկախությունը, բայց ոչ հայրենիքը, և վաղվա անկախ Հայաստանի երաշխիքն այսօրվա (Խորհրդային-Խ.Ս.) Հայաստանն է²⁸⁷:

Խմբագրականներից մեկում էլ «Դրոշակ»-ն արժարժում է այն տեսակետը, որ յուրաքանչյուր ժողովուրդ ինքը պետք է ընտրի իր քաղաքական կարգավիճակը՝ անկախ, ինքնավար, թե՛ որևէ դաշնության անդամ: Ժողովրդի ցանկացած քաղաքական կարգավիճակ պետք է բխի նրա շահերից²⁸⁸: Սրանով թերթն ուզում է հասկացնել, որ Հայաստանի անկախությունը որևէ կուսակցության քմահաճ ցանկությունը չէ: Այն բխում է հայ ժողովրդի կենսական շահերից, և որին հասնելու համար նախևառաջ ժողովուրդն ինքն է որոշում կայացնողը:

Այսպիսով, 1925-1932 թթ. ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակ»-ը, ելնելով կուսակցության որդեգրած քաղաքական ուղենիշներից, իր խմբագրականներում մշտապես քննարկում է Հայաստանի անկախության գաղափարը: Խնդիրը հիմնականում դիտարկվում է Հայկական հարցի լուծման անհրաժեշտության տեսանկյունից: Առանց Հայաստանի անկախության թերթն անկարելի է համարում Արևմտյան Հայաստանի կենսական խնդրի լուծումը: Անկախ Խորհրդային իշխանությունների հետ ունեցած հակասություններից, թերթը հանուն վաղվա անկախ Հայաստանի կարևորում է Խորհրդային Հայաստանի հզորացումը:

²⁸⁵ Տե՛ս «Դրոշակ», 1927, թիւ 12, էջ 353:

²⁸⁶ «Դրոշակ», 1926, թիւ 1, էջ 1:

²⁸⁷ «Դրոշակ», 1930, թիւ 5, էջ 121:

²⁸⁸ Տե՛ս «Դրոշակ», 1928, թիւ 3, էջ 66:

Բոստոնի դաշնակցական «Հայրենիք» օրաթերթի խմբագրական հոդվածներում նույնպես հանգամանորեն քննարկվում է Հայաստանի անկախության գաղափարը: Թերթի կարծիքով հայ քաղաքական միտքը պետք է պտտվի «Մայիսի 28-ի առանցքի շուրջը»²⁸⁹:

«Հայրենիք»-ի պատկերացմամբ անկախ կարող է համարվել այն ժողովուրդը, որն իրավական ազատություն և փաստացի հնարավորություն ունի ինքնուրույն սեփական կառավարություն կազմելու՝ առանց որևէ չափով ենթարկվելու օտար որևէ ուժի հարկադրանքին կամ թելադրանքին²⁹⁰: Թերթը կարևորում է ինքնուրույն և հոժարական արտաքին հարաբերություններ մշակելու և դաշինքներ կնքելու ժողովուրդների իրավունքը: Թերթի պատկերացմամբ անկախությունը հայ ժողովրդի՝ սեփական հողի վրա ապրելու, զարգանալու, առաջադիմելու և իր ճակատագիրն ինքնուրույն վարելու անբռնաբարելի իրավունքն է²⁹¹: Ինչպես տեսնում ենք, «Հայրենիք»-ը մեկնաբանում է այն կարևոր հանգամանքները, որոնց առկայությունը ենթադրում է անկախության գոյություն:

«Հայրենիք»-ը գտնում է, որ «Խորհրդային Հայաստանը պետական եւ ազգային տեսակետով ֆիզիքական պատուանդան մըն է միայն, որ ապագային, աւելի նպաստաւոր պայմաններու տակ կարող է դառնալ եւ պիտի դառնայ հայ ազգային բաղձանքներուն ու գաղափարներուն համապատասխան իրականութիւն մը: Սակայն այդ նպատակին հասնելու համար հայ ժողովուրդը պարտաւոր է պատրաստուիլ»²⁹²: Ազգային նպատակների իրականացման համար պետք չէ հրաժարվել անկախության գաղափարից: Ըստ դաշնակցական պարբերականի, պետք է փայփայել գոյություն ունեցող հայրենիքը և միաժամանակ հարատև ու հետևողական պայքարի նախապատրաստվել հանուն այդ հայրենիքի անկախության:

Խմբագրականներից մեկում եվրոպական բազմաթիվ ժողովուրդների օրինակներ են բերվում, որոնք համառ պայքարի շնորհիվ հասան իրենց անկախությանը: Այս պայքարում ցանկացած նահանջ կամ ուրացում մեծապես կվտանգի նպատակակետին

²⁸⁹ «Հայրենիք», 1933, 28 մայիսի:

²⁹⁰ Տե՛ս «Հայրենիք», 1926, 7 մայիսի:

²⁹¹ Տե՛ս «Հայրենիք», 1929, 1 նոյեմբերի:

²⁹² «Հայրենիք», 1931, 28 մայիսի:

հասնելու ուղին: Դաշնակցությունն էլ, թերթի մեկնաբանությամբ, այդ վտանգի գիտակցումով, քայլ առ քայլ, կորովի ու աննահանջ, շարունակում է իր պայքարը հանուն Հայաստանի անկախության վերանվաճման²⁹³: Փաստորեն Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը, կարևորելով անկախության համար պայքարում անզիջում և հետևողական մոտեցումը, առանձնացնում է այդ պայքարում Դաշնակցության դերակատարությունը:

«Հայրենիք»-ը անկախության ձեռքբերման հաջողությունը մեծապես կարևորում է հայ ժողովրդի կամքի հզորացմամբ: «Հայրենիք»-ը հավատում է, որ Հայաստանի անկախության վերականգնման համար կլինեն բազմաթիվ առիթներ, այլ բան է, որ սերունդները պետք է դրանցից օգտվելու բավարար իմաստություն ունենան²⁹⁴: Թերթը համոզված է, որ հայ ժողովուրդը, երկուսուկես տարի ազատ և անկախ կյանքի հրաշագործ վայելքն ու միաժամանակ տառապանքն ունենալուց հետո չի կարևոր այլևս անվրդով կրել ստրկության շղթաները, հանգիստ չպիտի մնա, մինչև որ նորից տիրանա իր կորսված ազատությանը²⁹⁵: Ինչպես տեսնում ենք, սփյուռքահայ պարբերականը հավատով է լցված հայ ժողովրդի իմաստության, ազատամտության և անկախ պետականությունը վերականգնելու կորովի հանդեպ:

«Հայրենիք» օրաթերթն իր խմբագրականներում առանձնակի շեշտադրությամբ է պատասխանում նրանց, ովքեր տարբեր պատճառաբանություններով դեմ են արտահայտվում Հայաստանի անկախությանը: Թերթի խմբագրի համար աններելի սոփեստություն է այն միտքը, թե իբր խորհրդայնացումից հետո Հայաստանը շարունակում է անկախ մնալ, և միայն կառավարությունն է փոխվել: «Քաղաքական հայ իմաստականներ այսօր ալ կը շարունակեն տակալին ողորմելի ճիգեր ընել՝ համոզելու հայ ժողովուրդը, թէ Հայաստանի ներկայ վիճակը գոհացուցիչ է ամէն տեսակէտով եւ կը համապատասխանէ հայ ժողովուրդի կենսական շահերուն ու բաղձանքներուն», - գրում է

²⁹³ Տե՛ս «Հայրենիք», 1930, 29 օգոստոսի:

²⁹⁴ Տե՛ս «Հայրենիք», 1924, 28 մայիսի:

²⁹⁵ Տե՛ս «Հայրենիք», 1929, 28 մայիսի:

թերթը²⁹⁶: Անվիճելի է՝ Խորհրդային Հայաստանն անկախ պետություն չէր, և այս տեսակետից «Հայրենիք»-ի քննադատությունները տեղին էին:

Թերթը մեղադրում է հնչակյաններին, ռամկավարներին, հայ բոլշևիկներին՝ գրելով, որ նրանք շարունակում են հակառակվել հայկական անկախ պետության գոյության գաղափարին՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար ծառայելով օտար շահերի և նպատակների: «Հայրենիք»-ի նման կոշտ քննադատության պատճառն այն է, որ վերջիններս չէին ըմբռնել, որ Մայիսի 28-ը միմիայն իրենց հակառակորդ կուսակցության տոնը չէ, այլև ամբողջ հայ ժողովրդին²⁹⁷: Փաստորեն «Հայրենիք» օրաթերթը փորձում է ցույց տալ, որ Սփյուռքի ոչ դաշնակցական հատվածը Հայաստանի անկախության գաղափարին նայում էր Դաշնակցության հետ իր ունեցած հարաբերությունների տեսանկյունից: Իրականում այս մեղադրանքի մեջ ճշմարտությունը մեծ չափաբաժին է կազմում, սակայն դաշնակցական պարբերականը երբեմն խտացրել է գույները:

«Քաղաքական տհասություն» վերնագրված խմբագրականում անդրադարձ է արվում Կահիրեի «Արև» թերթի կողմից ներկայացված ռամկավար գործիչ Հրաչ Երվանդի բանախոսությանը²⁹⁸: Ըստ թերթի՝ Հ. Երվանդը կարծում է, «որ եթե Հայաստան այսօր ազատ եւ անկախ պետութիւն մը չէ, ատոր փոխարէն ան ազատուած է իր սահմանները ինք պաշտպանելու եւ հարեւաններու հետ տնտեսապէս մրցելու ծանր հոգսէն»²⁹⁹: Թերթը «թյուրիմացություն» է համարում բանախոսի այս միտքը և տեսակետ հայտնում, որ Խորհրդային Միությունը որևէ երաշխիք չի տալիս Թուրքիայի հարձակման դեպքում Հայաստանը և հայ ժողովրդին չլքելու վերաբերյալ: Համաձայն չենք «Հայրենիք»-ի այն պնդմանը, թե Խորհրդային Միությունը չէր պաշտպանի Հայաստանի սահմանները: ԽՍՀՄ-ը Խորհրդային Հայաստանի սահմանները համարում էր իրենը և այդ սահմանների պաշտպանությունն իրականացնում էր իր անվտանգությունից ելնելով: Այլ բան է, որ «հայ ժողովուրդը այսօր ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, ոչ միայն գինուորական, այլև կրթական գերութեան մեջ է Խորհրդային լուծին տակ, իսկ գերութեան

²⁹⁶ «Հայրենիք», 1924, 28 մայիսի:

²⁹⁷ Տե՛ս «Հայրենիք», 1924, 25 յունիսի:

²⁹⁸ Տե՛ս «Արև», Գահիրե, 1925, 2 դեկտեմբերի:

²⁹⁹ «Հայրենիք», 1925, 3 դեկտեմբերի:

մէջ ոչ մէկ ժողովուրդ կարող է ազգայնօրէն զարգանալ ու բարգաւաճիլ:...Հայաստան, ապրելու համար, պէտք է դուրս գայ իր ներկայ խորհրդային գերութենէն եւ դառնայ ազատ եւ անկախ»³⁰⁰: Կարծում ենք՝ «Հայրենիք» օրաթերթը, նույն կուսակցական անհանդուրժողականությամբ պայմանավորված, այս դեպքում, թերևս իր տեսակետի անքննելի ճշմարիտ լինելու հակումով տարված, չի փորձել զանազանել անկախության բաղադրիչները: Պետք չէր թերագնահատել Խորհրդային Միության դերը Հայաստանի անվտանգության առումով: Այս թերագնահատումով, կարծում ենք, խոցելի է դառնում թերթի անկախության քարոզչությունը: Պետք էր կենտրոնանալ ինքնուրույն կրթամշակութային քաղաքական զարգացման վրա՝ միաժամանակ չթերագնահատելով ԽՍՀՄ-ի դերն անվտանգության առումով: Զուգահեռաբար պետք չէր տուրք տալ հակառակ կողմի ատելությանը և փոխադարձ ատելությամբ արձագանքել հակառակորդի տեսակետին, հատկապես, որ նույն այդ ատելության մասին թերթը մի առիթով գրում է. «ատելութիւնը դէպի Դաշնակցութիւնը կը կուրացնէ ոչ միայն հայ բոլշեւիկները, այլ նոյն իսկ ազգայնական ռամկավարները այն աստիճան, որ անոնք ընդունակ կը դառնան ժխտելու պատմական աղաղակող իրողութիւնն ալ, զոր կը խորհրդանշէ Մայիս 28-ի ազգային մեծ տօնը»³⁰¹:

«Հայրենիք»-ի խմբագրականներից մեկում նշվում է, որ խորհրդային կառավարության գովքն անելով՝ ռամկավարները նսեմացնում են անկախության գաղափարը: Թերթի համոզմամբ հայ ժողովրդին թշնամի համակարգը փառաբանելը և անկախության գաղափարը նսեմացնելը բխում են Դաշնակցության հանդեպ ունեցած անսահման ատելությունից³⁰²: Ըստ էության «Հայրենիք»-ն այստեղ ևս գտնում է, որ երբեմն ռամկավարները խորհրդային կառավարության դիրքորոշումը պաշտպանում էին ի հակադրություն Դաշնակցության: Թերթը պարզ ակնարկում է, որ իրենց պատկերացմամբ ռամկավարների առջև խնդիր է դրված ավելի շուտ պայքարել ընդդեմ Դաշնակցության, քան թե հանուն Հայաստանի: Մեկ այլ տեղ, սակայն, «Հայրենիք»-ը

³⁰⁰ «Հայրենիք», 1925, 3 դեկտեմբերի:

³⁰¹ «Հայրենիք», 1932, 28 մայիսի:

³⁰² Տե՛ս «Հայրենիք», 1926, 22 յունուարի:

նկատում է, որ ՌԱԿ Գ. Ընդհանուր պատգամավորական ժողովը մի կողմից նվիրական է համարում Հայաստանի անկախության գաղափարը, մյուս կողմից էլ թելադրում է անկախության ձգտող հայությանը «առանձին քաղաքականութուն չհետապնդել Խորհրդային կառավարութեան հանդէպ»³⁰³: Փաստորեն ՌԱԿ-ի համար առաջնայինը Խորհրդային կառավարութեանն ամեն գնով չնեղացնելն էր, ինչը քննադատութեան է արժանանում «Հայրենիք»-ի կողմից:

Թերթը կարծում է նաև, որ Խորհրդային Հայաստանի կարգավիճակը որպէս անկախութուն ներկայացնելով՝ այդ տեսակետի կողմնակիցները քողարկում են անկախութեան դեմ մղվող բացահայտ պայքարը³⁰⁴:

Շարունակաբար պատասխանելով ՌԱԿ մամուլի կողմից Դաշնակցութեան առաջադրած անկախութեան գաղափարի քննադատութեանը՝ «Հայրենիք»-ը երբեմն ինքն էր նախահարձակ լինում: Օրինակ՝ ՌԱԿ Դ. պատգամավորական ժողովից հետո թերթն անդրադառնում է այդ ժողովի ընդունած հայտարարութեանը: Ըստ թերթի. «ժողովրդի ծոցին մէջ ապրող քաղաքական կուսակցութեան մը առաջին եւ անփոխարինելի նպատակը պիտի ըլլայ նույն ժողովրդի քաղաքական անկախութիւնը, որուն պիտի ձգտի իր ամբողջ կարողութեամբ»³⁰⁵: Թերթի համար տարակուսելի է, որ ռամկավարները, իրենց համարելով ժողովրդական կուսակցութուն, ոչինչ չեն ձեռնարկում հանուն ժողովրդի անկախութեան և վերահաստատում են Խորհրդային իշխանութունների հանդէպ լոյալութեան իրենց դիրքորոշումը: «Հայրենիք»-ի համար առավել անընդունելի էր այն, որ ընկերային ընկալումներով լինելով Կոմունիստական կուսակցութեանը գաղափարական հակառակորդ՝ ռամկավարներն այդ կուսակցութեան դեմ ոչինչ չեն ձեռնարկում: «Աշխարհաբար լեզվով այս արարքը կը որակուի ընկերային դաւանանքի ուրացում: Եթէ կուսակցութիւն մը համոզուած է, որ այսինչ վարդապետութեան փորձարկութիւնը կը վնասէ ժողովուրդի մը տնտեսական վերելքին, ան իրաւունք չունի ըսելու, թէ ինք կը հրաժարի անոր դէմ ոեւէ ձեռնարկ ընելու: Ուրիշ բան պիտի ըլլար, եթէ

³⁰³ «Հայրենիք», 1926, 4 մայիսի:

³⁰⁴ Տե՛ս «Հայրենիք», 1926, 28 մայիսի:

³⁰⁵ «Հայրենիք», 1929, 24 հոկտեմբերի:

ըսուէր թէ հակառակ ձեռնարկ ընելու ոեւէ հնարաւորութիւն չկայ, քանի որ Հայաստանի մէջ կը տիրէ բոլշեւիկեան տարամերժ միահեծանութիւնը», - գրում է թերթը³⁰⁶: Այսպիսով, «Հայրենիք» օրաթերթը փորձում է նաև ընկերային-դավանաբանական առումով արդարացիորեն քննադատել ռամկավարների խորհրդամետ կեցվածքը: Ռամկավարների դավանած լիբերալիզմը որևէ ընդհանուր առնչություն չուներ կոմունիստական գաղափարախոսության հետ: Ռամկավարների այս «քաղաքական-տեսական երկվության» մասին է խոսում Ս. Ադամյանը՝ նշելով, որ այս կուսակցությունը հայտարարում է, որ չի ընդունում կոմունիստական գաղափարախոսությունը, միաժամանակ Հայաստանը չի պատկերացնում ԽՍՀՄ-ի կազմից դուրս³⁰⁷:

Մի առիթով էլ «Հայրենիք» օրաթերթը հայ ժողովրդի հակաանկախական զանգվածների առկայությունը հեգնանքով պայմանավորում է դարեր շարունակ անկախ պետականություն չունենալու փաստով: «Վեց հարիւր տարուայ ստրկութիւնը անհետեանք չէ մնացած հայ ժողովրդի համար: Ան առաջ է բերած հայ ժողովրդի որոշ տարրերու մէջ այնպիսի խորունկ ստրկական հոգեբանութիւն մը, որմէ անոնք երբեք չեն կրնար ազատիլ», - գրում է թերթը՝ հայ ժողովրդի մէջ այդպիսի տարրեր համարելով ռամկավարներին և կոմունիստներին³⁰⁸:

«Հայրենիք»-ի խմբագրականն անդրադառնում է նաև ԱՄՆ-ում հայկական եռագույնի շուրջ ստեղծված իրավիճակին, երբ տեղի հայկական եկեղեցիներում հայ հոգևորականները 1933 թ. ապրիլի 24-ին արգելում են ծածանել հայկական եռագույնը: Թերթը գրում է, որ հայկական եռագույնից հրաժարվելը ենթադրում է հրաժարվել անկախության գաղափարից, և քննադատում է եկեղեցուն ու նրան աջակից ռամկավարներին³⁰⁹:

Հայոց եռագույնի հետ կապված այս խնդրի քննարկումը բավական հետաքրքիր է: Սակայն մեր նյութից չշեղվելու նպատակով մենք այդ մասին կխոսենք այլ առիթով:

³⁰⁶ «Հայրենիք», 1929, 24 հոկտեմբերի:

³⁰⁷ Տե՛ս Atamian S., *The Armenian Community: The historical development of a social and ideological conflict*, New York, 1955, p.315-316.

³⁰⁸ Տե՛ս «Հայրենիք», 1936, 28 մայիսի:

³⁰⁹ «Հայրենիք», 1933, 5 մայիսի:

Այդուհանդերձ հարկ ենք համարում մեջբերել սփյուռքահայ ականավոր գաղափարական գործիչ Հայկ Ասատրյանի այս առիթով գրված հետևյալ տողերը. «Դրոշակը ցեղի քաղաքական պատիւն է: Նա երեւան է գալիս, երբ ցեղի կամքն արձանանում է իբր յաղթանակ, օրինակ, իբր 1918 թուականի Մայիս 28: Այս իմաստով դրոշակը պատմական արժէք է»³¹⁰:

«Հայրենիք»-ը 1933 թ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին գրեթե ամենօրյա հրապարակումներով անդրադառնում է եռագույնի խնդրին:

Հիմնականում ռամկավար մամուլի հակաքարոզչության արդյունքում որոշ օտար պարբերականներ հրապարակումներ են անում, թե իբր եռագույնը Դաշնակցության դրոշակն է, և դաշնակցականներն այն պարտադրում են նաև եկեղեցուն³¹¹: Եռագույնի շուրջ միջկուսակցական պայքարը, ցավոք, ավելի բորբոքվեց, որն անտեղի վատնում էր սփյուռքահայության ներուժը:

Հատկանշական է, որ «Հայրենիք» օրաթերթի խմբագրությունը ևս Հայաստանի անկախությանը հասնելու հույսեր է կապում ԱՄՆ-ի կողմից Խորհրդային Միության հնարավոր ճանաչման հետ³¹²: Սակայն, ինչպես ցույց տվեց նաև դեպքերի ընթացքը, ԱՄՆ-ը նման քայլի չէր գնա: Պատահական չէ, որ հաջորդ օրվա խմբագրականում նշվում է, որ եթե հանկարծ ԱՄՆ-ը ճանաչի Խորհրդային Միությունն առանց Հայաստանի անկախության մասին վերապահման, պետք չէ հիասթափվել: Ընդհակառակը, պայքարը հանուն անկախության պետք է շարունակել նոր թափով³¹³:

Այսպիսով, վերլուծելով Հայաստանի անկախության գաղափարի շուրջ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի էջերում ընթացող քննարկումները, կարելի է եզրակացնել հետևյալը:

Թերթի կողմից որևէ տարակուսանք չի եղել վառ պահելու Հայաստանի անկախության գաղափարը և անվերապահ հավատով, միասնականությամբ ու

³¹⁰ Հ. Ա., Յեղանենգ Շէյթանը. Խորհրդածություններ հակադաշնակցական ելոյթների մասին, Սոֆիա, 1933, էջ 36:

³¹¹ Տե՛ս «Հայրենիք», 1933, 30 օգոստոսի:

³¹² Տե՛ս «Հայրենիք», 1928, 6 սեպտեմբերի:

³¹³ Տե՛ս «Հայրենիք», 1928, 7 սեպտեմբերի:

զոհաբերության գնալու պատրաստակամությամբ նվիրվելու դրա իրականացմանը: Օրաթերթի կարծիքով անկախության գաղափարը կարող էր հանդիսանալ այն կռվանը, որի շուրջ պետք է համախմբվեին հայ տարագիր բոլոր հասարակական-քաղաքական ուժերը: Ցավոք, երբեմն հակառակն էր տեղի ունենում, և որպես միմյանց հակադրվելու պատճառաբանություն՝ ներկայացվում էր նույն անկախության գաղափարի հանդեպ ունեցած հակասական վերաբերմունքը:

Օրաթերթն անկախության համար մղվող անզիջում և հետևողական գաղափարական պայքարում առանձնացնում է Հայ հեղափոխական դաշնակցության դերակատարությունը: Թերթը փորձում է ցույց տալ, որ Սփյուռքի ոչ դաշնակցական հատվածը Հայաստանի անկախության գաղափարին մոտենում է հիմնակետ ունենալով Դաշնակցության հետ իր ունեցած հարաբերությունները: Քննադատության է ենթարկվում Սփյուռքում տիրապետող այն տեսակետը, թե իբր Խորհրդային Հայաստանն անկախ պետություն է: Թերթի կարծիքով իրականում այս կերպ փորձ է արվում քողարկելու անկախության դեմ մղվող բացահայտ պայքարը:

Դաշնակցական պարբերականի կարծիքով անհրաժեշտություն էր փայփայել գոյություն ունեցող հայրենիքի փոքրիկ հատվածը՝ իբրև հենարան ապագա անկախ և միացյալ Հայաստանի: Թերթը Սփյուռքում Հայաստանի անկախության վերականգնման համար կարևորում է նաև Հայաստանի բոլշևիկ ղեկավարների ազգայնական տրամադրությունները, ինչից վերջիններս ընդհանուր առմամբ, ցավոք, զուրկ էին:

Հայաստանի անկախության գաղափարի արժարժման վերաբերյալ պակաս կարևոր չէին նաև Կահիրեի «Հուսաբեր»-ի խմբագրականները:

«Հուսաբեր»-ի խմբագիր Վահան Նավասարդյանը³¹⁴ սովետություն է համարում իրենց ընդդիմախոսների այն փաստարկը, թե բացարձակ անկախություն գոյություն չունի (նույնիսկ Անգլիան բացարձակ անկախ չէ), հետևաբար Հայաստանն էլ կարող է անկախ չլինել կամ լինել այնքան անկախ, որքան է Խորհրդային Միության կազմում³¹⁵: Ի դեպ,

³¹⁴ Հայաստանի անկախության գաղափարին նվիրված Վ. Նավասարդյանի առանձին գրվածքներին կանդորադառնանք ստորև:

³¹⁵ Տե՛ս «Յուսաբեր», 1924, 20 նոյեմբերի:

Հայաստանի անկախության գաղափարի կողմնակիցները հաճախ էին ստիպված լինում պատասխանել նմանատիպ փաստարկներին:

«Հուսաբեր»-ը խմբագրականներից մեկում անդրադառնում է դաշնության և անկախության սկզբունքներին՝ նշելով, որ դրանք չեն կարող հակասել միմյանց: Ավելին, դաշնության գաղափարը, ըստ թերթի, ավելի ամուր հիմքի վրա է դնում «դաշնակցող ազգերու անկախութեան շէնքը»³¹⁶: Փաստորեն թերթը փորձում է հասկացնել, որ դաշնությունը չի կարող արգելք հանդիսանալ ժողովուրդների անկախության ճանապարհին:

Թերթի խմբագրականներից մեկն անդրադառնում է Մայիսի 28-ի տոնին: Թերթը գրում է, որ այդ օրը հայ ժողովուրդն իր կամքի և պայքարի ոգու շնորհիվ իր ազատ և անկախ ապրելու ցանկությունը պարտադրեց ոչ միայն իրեն, այլև իր թշնամիներին: «Մայիս 28-ը կենսանորոգ թուական մըն է հայոց ազգին համար, եւ ատով իսկ, յաւերժական ու կործանարար մղձաւանջ մը՝ անոր ամէն կարգի թշնամիներուն, ներքին թէ արտաքին, կանանչ թէ կարմիր: Պահենք մայիս 28-ը եւ գուրգուրանք անոր վրայ, որովհետեւ ան է, որ պիտի պահէ մեզ վաղուան ազատ ու անկախ Հայաստանին համար»,- եզրափակում է թերթը³¹⁷: Թերթը Հայաստանի անկախության գաղափարի քարոզչության կարևոր գործոն է համարում հենց անկախության տոնը՝ Մայիսի 28-ը՝ այն դիտարկելով որպես պաշտելի թվական:

«Հուսաբեր»-ը ևս Հայաստանի անկախության գաղափարը նույնացնում է Դաշնակցության հետ: «Շաղախուած Դաշնակցութեան գոյութեան հետ, Միացեալ եւ Անկախ հայրենիքի գաղափարը, կասկած չկայ, պիտի իրագործուի կեանքի մէջ, մաս մաս իր շուրջ համախմբելով ժողովրդական լաւագոյն եւ եռանդուն տարրերը»,- գրում է թերթի խմբագիրը³¹⁸:

³¹⁶ «Յուսաբեր», 1926, 2 օգոստոսի:

³¹⁷ «Յուսաբեր», 1929, 1 յունիսի:

³¹⁸ «Յուսաբեր», 1929, 4 յուլիսի:

Թերթի խմբագիրն անկախության գաղափարն ընդհանրապես համարում է «մնայուն եւ տեսական արժէք»՝ պնդելով, որ այդ նույն ըմբռնումը պետք է ունենալ նաև Հայաստանի հարցի անկախության պարագայում³¹⁹:

Անկախությունը հայ ժողովրդի գոյապահպանության տեսակետից պետք է համարել քաղաքական իդեալ: «Տեղապահպանումի հուրը, անոր յարատեւումի մշտաբեղուն կիրքը, ծլարծակող եւ յաւերժորէն կենսառոյգ ու անսասան բունը ցեղի մը քաղաքական իտէալն է՝ ազատ եւ անկախ կեանքի դիւթիչ ու բեղուն տենչը: Անկախ՝ սեփական հողերուն վրայ, եւ ազատ՝ հարազատ իշխանութեան տակ», - ահա այսպիսի գեղեցիկ նկարագրությամբ է թերթը հիմնավորում իր պնդումը³²⁰: Նշենք, որ «Հուսաբեր»-ը նման ունկնահաճո և ակնահաճո ոճով հաճախ է արթնացրել իր ընթերցողների հույզերը:

Սկիւռքում հիմնականում Դաշնակցությանն ընդդիմադիր տրամադրված շրջանակներում էտրիդային Հայաստանի ստեղծումով ավարտված էին համարում հայ ժողովրդի քաղաքական պայքարը: Սակայն թերթը կարծում է, որ էտրիդային Հայաստանով պետք չէ ավարտված համարել գաղութաբնակ թուրքահայության քաղաքական դերը³²¹: Փաստորեն թերթը պնդում է ոչ միայն էտրիդային Հայաստանի անկախության վերականգնման համար իր պայքարի հաստատակամությունը, այլև այդ պայքարում կարևոր դեր է վերապահում տարագիր արևմտահայությանը: Մեր կարծիքով արդարացված է արևմտահայության դերի արժևորումը: Համայն հայության ջանքերով Հայաստանի անկախության վերականգնման գաղափարն ավելի ազդեցիկ կլինէր, բացի դրանից, պետք չէր մոռացության մատնել Արևմտահայաստանի խնդիրը, որի համար պետք էր միշտ արժևորել հաղորդել տարագիր արևմտահայությանը՝ որպէս քաղաքական գործոնի:

«Հուսաբեր»-ի խմբագիրը քննադատաբար է վերաբերվում Բոստոնի «Պայքար»-ի խմբագրականի հետևյալ տողերին. «էտրիդային Հայաստանը այնքան ազատ ու

³¹⁹ Տե՛ս «Յուսաբեր», 1931, 15 յունուարի:

³²⁰ «Յուսաբեր», 1931, 17 յունուարի:

³²¹ Տե՛ս «Յուսաբեր», 1931, 26 հոկտեմբերի:

ինքնավար է, որքան չէ եղած պատմական Հայաստանը ոչ Արշակունեաց եւ ոչ Բագրատունեաց օրով, Մեծն Տիգրանի կարճատեւ շրջանէն յետոյ»³²²: Վ. Նավասարդյանը գրում է, որ նման «զազրախոսությունից» հետո բնականաբար Խորհրդային Միության իշխանություններն Անդրկովկասում Հայաստանին կթողնեն վերջին տեղում³²³:

Հայաստանի անկախության խնդիրը «Հուսաբեր»-ը քննարկում է ռուս տարագիրների տեսակետների եվրասիականության գաղափարախոսությանն անդրադառնալիս: Թերթը ոչ առանց հիմքի գտնում է, որ ռուս տարագիրները դեմ չեն ռուսական մշակութային աշխարհում Խորհրդային Միության ժողովուրդների ձուլվելուն, իսկ անկախության մասին էլ խոսք լինել չի կարող³²⁴: Ինչպես տեսնում ենք, թեև ոչ մեծ աղմուկով արձարծվել է մի թեմա, որը շուրջ մեկ դար անց չի կորցրել իր արդիականությունը: Անկախ Մոսկվայում իշխող կուսակցության գաղափարախոսությունից և այնտեղ տիրող հասարակական-քաղաքական կարգերից, ռուսների համար առաջնային համարվում է իրենց երկրի մեծապետական շահը:

Այսպիսով, շնորհիվ իր փորձված և բեղուն գրիչ ունեցող խմբագրի, Կահիրեի «Հուսաբեր»-ը իրավացիորեն համարվում էր Սփյուռքում Հայաստանի անկախության քարոզչության գլխավոր դերակատարներից մեկը:

Հայաստանի անկախության գաղափարը քննարկվեց նաև Փարիզի «Հառաջ»-ի խմբագրականներում:

«Հառաջ»-ի խմբագիրը՝ Շավարշ Միսաքյանը, արձագանքելով Փարիզի «Երևան» թերթի այն մեղադրանքին, թե իբր Հայաստանում տապալվեց «դաշնակներու բռնապետութիւնը», գրում է. «...իրականին մէջ հայ ժողովրդի անկախութիւնն էր, որ տապալեցաւ: Բայց կը մնայ Դատը: Ձեզի համար ներկան է եղած-չեղածը. Nec plus ultra³²⁵:

³²² «Պայքար», 1935, 2 ապրիլի:

³²³ «Յուսաբեր», 1935, 26 ապրիլի:

³²⁴ Տե՛ս «Յուսաբեր», 1931, 4 օգոստոսի:

³²⁵ Լատիներեն՝ ոչինչ այլևս չկա:

Իսկ այս ժողովուրդը գիտէ, որ այդ վիճակը չի համապատասխանէր իր գերագոյն շահերուն: Ան կը հավատայ իր ապագային»³²⁶:

Խմբագրականներից մեկում թերթը համարում է, որ հայոց ներկա պատմության կիզակետը Հայաստանի անկախությունն է: Թերթը հայ ժողովրդի հավաքական քաղաքական դիմագիծը բնորոշում է իր անկախության ձգտումով: Առանց անկախության հայ ժողովուրդը զուրկ է հավաքականությունից³²⁷: Ըստ էության թերթը կոչ է անում ոչ միայն չհուսահատվել, այլև պնդում է, որ հանուն ապագա միասնական գաղափարների հիմնակետ ընդունվի անկախության ձգտումը:

Անդրադառնալով Մայիսի 28-ի տոնակատարությանը նշելուն՝ թերթը գրում է, որ դրանով նախ՝ հարգվում է բոլոր նրանց հիշատակը, ովքեր պայքարեցին ու ընկան հանուն ազատության և անկախության: Բացի դրանից, օտարության մեջ անկախության տոնակատարության հիշատակումը պայծառացնում և նորոգում է մեր գիտակցությունը՝ ի խնդիր տառապյալ ժողովրդի փրկության³²⁸: Ինչպես տեսնում ենք, փարիզյան դաշնակցական պարբերականը նույնպես անկախության տոնակատարության նշումը կարևորում է ազգային գիտակցությունը բարձր պահելու տեսակետից:

Հայաստանի անկախության հանդեպ անտարբեր չէր նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը: Պարբերականը, պատասխանելով թուրքական թերթերի հրապարակումներին, գրում է, որ ցնորք չէ հայկական անկախ պետություն ունենալը³²⁹: Խոսելով Մայիսի 28-ի մասին՝ թերթը գրում է, որ այն «հետք մը ձգեց ոչ միայն աշխարհագրութեան եւ պատմութեան մէջ, այլեւ միտքերու եւ սիրտերու մէջ»³³⁰:

Թեհրանի «Ալիք» պարբերականն Անկախության օրվան նվիրված խմբագրականում մեջբերում է XVIII դ. գերմանացի փիլիսոփա Հերդերի խոսքը: Վերջինս «Ի՞նչ է հարկավոր ազգի գոյության համար» հարցին պատասխանում է. «Հարկաւոր է ունենալ ազգային ինքնութեան ազնիւ պարծանքը, որ ոչ ոք դրսից չի միջամտի նրա

³²⁶ «Յառաջ», 1926, 31 յունուարի:

³²⁷ Տե՛ս «Յառաջ», 1932, 29 մայիսի:

³²⁸ Տե՛ս «Յառաջ», 1933, 28 մայիսի:

³²⁹ Տե՛ս «Ճակատամարտ», 1922, 2 փետրուարի:

³³⁰ «Ճակատամարտ», 1923, 27 մայիսի:

կեանքի սեփական կառուցման, նրա ինքնահաստատման գործի մեջ, որ ազգը ինքն իր ոյժերով է ուզում կառուցել իր կեանքը, նա պետք է ունենայ նաև սեփական լա պաշտպանուած տերրիտորիա»³³¹: Թերթը նշում է, որ հերդերյան ճշմարտությունը վաղեմություն չունի, և այն արդիական է:

Հայաստանի անկախության 15-ամյակին նվիրված այդ խմբագրականում թերթը գրում է, որ անկախության գաղափարը 15 տարվա ընթացքում կույր բնագրից վեր է ածվել ազգային ինքնության վեհ իդեալի³³²: Ըստ էության խոսվում է այն մասին, որ անկախության գաղափարն աստիճանաբար ավելի է բյուրեղանում:

Մեկ այլ առիթով թերթը չի մոռանում նաև անկախության գաղափարի հակառակորդներին, ովքեր ձգտում են հայ ժողովրդի մեջ մեռցնել ամենաթանկագինը՝ ազատ հայրենիքի գաղափարը, ազգային ոգին, ազգային բարոյականը³³³:

Հայաստանի անկախության գաղափարի անխոնջ շեփորահարն էր Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանի խմբագրած «Հայաստանի ծայն» գրական, քաղաքական շաբաթաթերթը: Թերթի առաջին համարում նշվում է, որ իրենց հիմնական նպատակը Հայաստանի անկախության վերականգնմանը նպաստելն է: «Բովանդակ հայ ժողովրդի իդեալը, հայրենիքում թէ գաղութների մեջ, մնում է միշտ անկախութիւնը, եւ «Հայաստանի ծայն»ը, որ հրապարակ է գալիս հայ ժողովրդի ապրումները և քաղաքական ձգտումներն արտայայտելու, բնականաբար, իր ծրագրի առաջին տեղը պետք է դնէ Անկախ. Միացեալ եւ Դէմօկրատիկ Հայաստանի պահանջը»,- ասվում է թերթի խմբագրականում³³⁴: Թերթը մեծ հավատ է ունեցել, որ հայ ժողովրդի կարողությունների և միջազգային նպաստավոր պայմանների շնորհիվ անկախությունը կվերականգնվի: Ըստ թերթի՝ Հայաստանի անկախության աննահանջ պահանջը, բուլճարական իշխանությունների հանդեպ բացասական վերաբերմունքը ամենևին չեն նշանակում

³³¹ «Ալիք», Թէրան, 1933, 28 մայիսի:

³³² Տե՛ս նույն տեղում:

³³³ Տե՛ս «Ալիք», 1934, 27 մայիսի:

³³⁴ «Հայաստանի ծայն», Փարիզ, 1922, 20 յուլիսի:

հակառակ վերաբերմունք ունենալ Խորհրդային Հայաստանի հանդեպ: Ընդհակառակը, պետք է աջակցել նրան մարդասիրական օգնության կազմակերպմանը³³⁵:

Իր համարներից մեկում թերթը խոստովանում է, որ ՀՀ պատվիրակության գործունեությունը պետք է բխի Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարից³³⁶: Թերթը ԽՍՀՄ կազմավորման առիթով մտահոգություն է հայտնում, որ, չնայած խորհրդային իշխանությունների կողմից տրված խոստումներին, Հայաստանը կորցնում է իր անկախությունը և կանգնում նախապես «Ռուսաստանի մէկ ծայրագաւառը դառնալու հաւանականութեան առջեւ»³³⁷:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի անկախության անկումից հետո Փարիզում գտնվող հանրապետության պատվիրակությունը նախաձեռնում է սեփական թերթի միջոցով անկախության գաղափարի քարոզչությունը: Անչափ կարևոր էր թերթի հավատը Հայ դատի լուծման առումով: Սակայն մեր կարծիքով Լոզանի կոնֆերանսից հետո Հայաստանի պատվիրակության բուն առաքելությունն արդեն ավարտված կարելի էր համարել: Թերթը դադարեց հրատարակվելուց, իսկ անկախության գաղափարի արծարծման խնդիրը թողնվեց դաշնակցական մյուս թերթերին:

Անդրադառնանք նաև Հայաստանի անկախության գաղափարի վերաբերյալ Սփյուռքում հաստատված դաշնակցական գործիչների տեսակետներին և բնութագրումներին:

Հայաստանի անկախության վերականգնման պայքարի շարքերում առաջիններից մեկը Ս. Վրացյանն էր: Մեկնաբանելով ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովի որոշումները՝ նա գրում է, որ անկախության մասին բանաձևի ընդունումը պարզապես ամրագրումն է հայ իրականության մեջ տարիներ ի վեր խոր արմատներ ունեցող գիտակցված մի պահանջի³³⁸:

Ս. Վրացյանը նույնպես համոզված է, որ Հայաստանի անկախության վերականգնման համար նաև պետք է, որ Ռուսաստանում ժողովրդավարություն

³³⁵ Տե՛ս նույն տեղում:

³³⁶ Տե՛ս «Հայաստանի ծայն», 1922, 9 սեպտեմբերի:

³³⁷ «Հայաստանի ծայն», 1922, 30 դեկտեմբերի:

³³⁸ Տե՛ս Վրացյան Ս., Հ.Յ.Դաշնակցութեան 10-րդ Ընդհ. ժողովը, «Դրօշակ», 1925, թիւ 1, էջ 7:

հաստատվի: Կարծում ենք, որ արդարացված և արդիական է Ս. Վրացյանի այն կարծիքը, որ ժողովրդավարական Ռուսաստանը և անկախ Հայաստանն իրական դաշնակիցներ կլինեն: Ըստ նրա, եթե Ռուսաստանի համար ապագայում նույնպես անխուսափելի է լինելու ձգտումը դեպի Միջերկրականի տաք ջրերը, ապա իր շահերի առողջ գիտակցությունն ունեցող ռուս վերնախավի համար տնտեսական ու մշակութային թափանցման ու տարածման լավագույն միջոցը պետք է լինի անկախ Հայաստանը³³⁹:

Ս. Վրացյանը, վերլուծելով ՀՅԴ 11-րդ ընդհանուր ժողովի որոշումները, գրում է. «Միացեալ եւ Անկախ Հայաստանի պահանջը վերացական գաղափար չէ մեզ համար, այլ գործնական պայքարի դրօշակ: Այդ պահանջի իրագործումով միայն հնարաւոր է լինելու հայկական հարցի արմատական լուծումը... Վերացրէք այսօր Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը, եւ հայկական հարցը կը դառնայ անբովանդակ խօսք, իսկ գաղութահայութիւնը կընկնի յուսահատութեան անդունդ եւ արագ կը դիմէ դեպի կորուստ»³⁴⁰: Ինչպես տեսնում ենք, Ս. Վրացյանը նույնպես գտնում է, որ Սփյուռքում հայապահպանությանը զարկ տալու, հայությանը համախմբելու, նրանց դեպի հայրենիք ուղղորդելու նպատակով կարևորում է հայկական անկախ պետականության վերականգնման գաղափարի բյուրեղացումը:

Ս. Վրացյանն Խորհրդային Հայաստանի անկախության խնդիրը քննարկում է նաև Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը դժվարացնելու տեսակետից: Հայաստանը, մտնելով Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմի մեջ և այդպիսով կորցնելով իր անկախությունը, միջազգային իրավունքի տեսակետից գործնականում հնարավորություն չունի ինքնուրույն զբաղվելու Արևմտահայաստանի խնդրով: Ս. Վրացյանը կարծում է, որ անկախության պայմաններում հնարավոր էր արևմտահայկական անկախ Հայաստանին միացնելու մի միջոց գտնել: Քանի որ Խորհրդային Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր, լինելով Անդրկովկասի անբաժան մասը, գործնականում չէր կարող զբաղվել

³³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

³⁴⁰ Վրացեան Ս., Քաղաքական խնդիրները ՀՅԴ XI Ընդհանուր ժողովում, «Դրօշակ», թիվ 4-5, էջ 77, հմմտ. «Յուսաբեր», 1929, 27 մայիսի:

նաև Արևմտյան Հայաստանի խնդրով³⁴¹: Այն, որ անկախության կորուստը բացասաբար ազդեց Հայկական հարցի լուծման վրա, ակներև է, բայց այնքան էլ համոզիչ չէ, որ անկախության պարագայում որևէ միջոց այնուամենայնիվ կգտնվեր՝ Արևմտյան Հայաստանից ինչ-որ տարածք հետ բերելու համար: Բոլորովին դեմ չլինելով Անդրդաշնության՝ Խորհրդային Հայաստանի հանդեպ ունեցած բացասական նշանակության մասին Ս. Վրացյանի եզրահանգմանը՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ Խորհրդային Հայաստանի անկախ լինելու պարագայում նույնպես այդ ընթացքում արևմտահայ տարածքների լուծման խնդիրը գործնականում առանց արտաքին աջակցության բավական դժվար էր լինելու: Այլ բան է, որ եթե Հայաստանը լիներ անկախ և չլիներ Խորհրդային պետություն, միգուցե հակառակորդ ճամբարում լինեին դաշնակիցներ:

«Դրոշակ»-ի մեկ այլ համարում Ս. Վրացյանը, անդրադառնալով «Жизнь национальностей» ամսագրի՝ 1923 թ. թիվ 1-ի հրապարակումներին³⁴², որտեղ պահանջ է դրվում ֆեդերացիայի բոլոր մասերի հարստությունների օգտագործման մեկ ծրագիր ունենալը, գտնում է, որ դրա նպատակը Խորհրդային հանրապետությունների բոլոր միջոցները Մոսկվայի ձեռքում կենտրոնացնելն է, որն էլ իր հերթին «անհրաժեշտ է կօմկուսի դիկտատորութիւնը յարատեւ եւ ամուր դարձնելու համար»³⁴³:

Մեկ այլ առիթով Ս. Վրացյանը (Ս. Մասուրյան ստորագրությամբ) կարծիք է հայտնում, որ եթե խոսք լինի Խորհրդային Հայաստանի անկախության մասին, ապա Անդրդաշնության գոյության հանգամանքը կարող է խանգարել Խորհրդային Հայաստանի անկախության ճանաչմանը³⁴⁴: Տեսականորեն Ս. Վրացյանի մտավախությունը ճիշտ էր: Սակայն գործնականում, ինչպես նշվեց, Հայաստանի անկախացումը պայմանավորված էր

³⁴¹ Տե՛ս Վրացեան Ա., Զակֆեդերացիայի տասնամեակը, «Դրոշակ», 1932, թիւ 4, ապրիլ, էջ 81, 82:

³⁴² Տե՛ս Бекзаян А., Советская Социалистическая Республика Армении, «Жизнь национальностей», 1923, январь, книга первая, с. 161-165, Бройдо Г., Наша национальная политика и очередные задачи Наркомнаца, «Жизнь национальностей», Москва, 1923, январь, книга первая, с. 5-13.

³⁴³ Վրացեան Ա., Բոլշեվիկեան ազգային քաղաքականութեան բնաշրջումը, «Դրոշակ», 1927, թիվ 6, յունիս, էջ 167:

³⁴⁴ Տե՛ս «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1923, 10 օգոստոս:

Ռուսաստանում բոլշևիկյան իշխանության տապալմամբ: Իսկ այդ դեպքում Անդրկովկասի բոլշևիկյան դաշնությունը պարզապես կվերանար:

Հայաստանի անկախության խնդիրը Ս. Վրացյանը քննարկել է նաև Հ. Քաջազնունու հայտնի զեկույցին ուղղված պատասխանում՝ նշելով, որ Անդրկովկասում ո՛չ անկախություն կա, ո՛չ ինքնավարություն, այլ «Մոսկուայի Պօլիտբիւրօի եւ Չէկայի կամայականութիւնը», և 2-3 տարում Ռուսաստանը ծայրահեղ ապակենտրոնացումից վերածվել է ծայրահեղ կենտրոնապաշտ պետության³⁴⁵:

Հայաստանի անկախության խնդրին անդրադառնալիս Ս. Վրացյանը փորձում է պատասխանել Փարիզի «Անահիտ» հանդեսի խմբագրի՝ Արշակ Չոպանյանի հրապարակմանը, որտեղ վերջինս ներկայացնում է Խորհրդային Հայաստանի ձեռքբերումները և կոչ անում սիրել այն³⁴⁶:

Ս. Վրացյանը, բնականաբար դեմ չլինելով Խորհրդային Հայաստանը շենացնելու, այն սիրելու և պաշտելու կոչերին, հավելում է, որ Հայկական հարցի լուծման միակ բանալին Խորհրդային Հայաստանն է: Սակայն մեր հեղինակը պարզաբանում է, որ դա նախևառաջ Հ.Յ.Դաշնակցության գաղափարն է³⁴⁷:

Այսպիսով, տարագիր վարչապետ Ս.Վրացյանն իր գրվածքներում մեծ տեղ է հատկացնում Հայաստանի անկախության վերականգնման գաղափարին՝ համոզված լինելով, որ այդ գաղափարի շուրջ համախմբվելով՝ ոչ միայն հեշտ կլինի փրկել սփյուռքահայությանն ուժացումից, այլև տեսական հիմք ապահովել հայկական հարցի գործնական լուծման համար:

Հայաստանի անկախության խնդրին յուրովի է մոտենում նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը: Նրա կարծիքով. «Ինչպէս ալ ըլլայ մեր վերաբերմունքը դէպի Խորհրդային կարգերը, ճանչնանք թէ չճանչնանք պոլշեիկեան իշխանութիւնը, հայ ժողովրդի շահը եւ մեր ազգային անկախութեան իտէալը կը պահանջեն, որ մենք ամեն

³⁴⁵ Տե՛ս Վրացյան Ս., Խարխափումներ: Յ. Քաջազնունու «Հ.Յ.Դ. անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, Պոսթըն, 1924, էջ 147:

³⁴⁶ Տե՛ս Չոպանեան Ա., Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1932-1933, թիվ 3-6, էջ 78-129:

³⁴⁷ Տե՛ս «Յառաջ», 1933, 15 յունիսի:

ջանք թափենք բարձրացնելու համար Հայաստանի տնտեսական բարօրութիւնը: Ներկայիս կարելի է անվիճելի նկատել այն դրութիւնը, որ Խորհրդային Հայաստանը կը կազմէ ապագայի հայկական պետութեան հիմքը եւ կորիզը»³⁴⁸: Ա. Խատիսյանի համար կարևոր է նաև այն հանգամանքը, որ Խորհրդային իշխանութիւնները գնահատեն Սփյուռքում Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացմանն աջակցող և խթանող ցանկացած քայլ: «Երթալ Հայաստան, տանիլ հոն աշխատանք, գիտութիւն եւ դրամագլուխ. ահա այդ գործնական քայլերը: Պէտք է որ Խորհրդային կառավարութիւնը գնահատէ հայ քաղաքական մտքի այդ նոր նուաճումը»,- եզրակացնում է Ա. Խատիսյանը³⁴⁹: Ըստ էության տարիներ շարունակ Խորհրդային պատմագրութեան կողմից ամենաբացասական գնահատականների արժանացած վտարանդի գործիչներից մեկը, անկարևոր չհամարելով Խորհրդային Հայաստանի անկախութեան փաստացի կորուստը, ստեղծված քաղաքական պայմաններում առաջնահերթութիւն է դիտարկել Հայաստանի տնտեսական վերաշինումը:

Անդրդաշնութեան ստեղծումով և վերջինիս՝ Խորհրդային Միութեան մեջ ընդգրկումով երկրամասում հաստատված խաղաղութեան վերաբերյալ Ա. Խատիսյանը գրում է, որ եթէ Կովկասում խաղաղ է, ապա միաժամանակ գոյութիւն չունեն անկախութիւն, ինքնուրոյնութիւն: «Կովկասեան ազգերը կը ձգտին խաղաղութեան, որ սակայն ըլլալու չէ գերեզմանի խաղաղութիւն, այլ պէտք է ըլլայ ազատ կեանքի եւ յարաբերութեանց խաղաղութիւն»³⁵⁰: Ինչպէս տեսնում ենք, այստեղ վտարանդի վարչապետը քննադատական վերաբերմունք է ցուցաբերում երկրամասում կայունութիւն հաստատելու մասին Խորհրդային իշխանութիւնների թեզին: Ըստ Ա. Խատիսյանի՝ բախումների դադարեցումը տեղի է ունեցել «բռնի» կերպով, մինչդեռ խաղաղութեան հաստատումը պէտք է լինէր բոլորի ազատ կամքը և արդար իրավունքները հաշվի առնելով: Ա. Խատիսյանն արդարացի է: Անդրկովկասում բախումների հիմնական պատճառը տարածքային հավակնութիւններն էին: Մասնավորապէս անկախութեան

³⁴⁸ «Հայրենիք», 1923, 25 ապրիլի:

³⁴⁹ Տե՛ս «Հայրենիք», 1923, 8 յուլիսի:

³⁵⁰ «Հայրենիք», 1925, 23 ապրիլի:

շրջանում Հայաստանը ստիպված եղավ ռազմական գործողություններ մղել հարևան հանրապետությունների դեմ՝ հայկական մի շարք երկրամասեր (Արցախ, Գանձակ, Նախիջևան, Ջավախք, Հյուսիսային Լոռի) իր կազմում պահելու կամ վերամիավորելու համար: Վրաստանը և Ադրբեջանը, օգտվելով տարբեր հանգամանքներից, բռնազավթել էին այդ երկրամասերը: Անդրկովկասի խորհրդայնացումով փաստացի ուժի սպառնալիքով դադարեցվեցին զինված ընդհարումները երեք հանրապետությունների միջև, սակայն տարածքային խնդիրներն արդարացի լուծում չստացան, ինչի հետևանքներն անդրկովկասյան ժողովուրդներն իրենց մաշկի վրա զգացին տասնամյակներ անց:

Այսպիսով, Սփյուռքում հաստատված Հայաստանի նախկին վարչապետը կատարված իրողություն է համարում Խորհրդային Հայաստանն Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտցնելը: Անօգուտ համարելով Խորհրդային Ռուսաստանի առկայության պայմաններում խորհրդային կայսրության կազմից դուրս գալու համար ուժային պայքարը՝ Ա. Խատիսյանը կարևորում է Խորհրդային Հայաստանի տնտեսական հզորացումը, ինչը ոչ միայն էապես կմեծացներ տարագիր հայության՝ հայրենիքում վերահաստատվելու հնարավորություններն ու շարժառիթները, այլև կնպաստեր հետագայում անկախ պետականության վերականգնման գործնական քայլերին:

Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարի լավագույն տեսաբաններից է Կահիրեի «Հուսաբեր» թերթի խմբագիր, Դաշնակցության Բյուրոյի երկարամյա անդամ Վահան Նավասարդյանը:

Հայաստանի անկախության տեսլականը Վ. Նավասարդյանը վերլուծում է տարբեր տեսանկյուններից: Պետք է հատուկ ընդգծել, որ, լինելով հավատավոր ընկերվարական, նա իր բոլոր ուսումնասիրություններում անկախության գաղափարը սերտորեն կապում է ընկերվարության գաղափարի հետ:

Հայաստանի անկախության գաղափարը մեկնաբանելիս Վ. Նավասարդյանը նախ անդրադառնում է դեռևս XIX դարի վերջին հայ ազգային կուսակցությունների ծրագրերում առկա համապատասխան դրույթներին: Հայտնի է, որ հայկական

կուսակցությունների հիմնական նպատակը Օսմանյան կայսրության լծի տակ տառապող հայ ժողովրդի ազատության ձեռքբերումն էր:

Այս ժամանակաշրջանում կուսակցությունների ծրագրերը թեև նպատակների ձևակերպումների առումով տարբերվում էին, սակայն նրանց բոլորի ոգին նույնն էր: Եվ Հայաստանի ապագա կարգավիճակի մասին ծրագրերում առկա է երբեմն ազատ, երբեմն անկախ եզրույթը:

Խոսելով այս խնդրի շուրջ՝ Վահան Նավասարդյանը հետևյալն է գրում. «Հայկական կուսակցությունների ձևաւորման շրջանում գաղափարական խմորումների մէջ իրենց հասարակական մկրտութիւնն ստացած հայ յեղափոխականները, երբ ասում էին «Ազատ Հայաստան»՝ իրենց մտածողութեան մէջ ուրիշ հասկացողութիւն չէին կարող ունենալ, եթէ ոչ՝ «անկախ Հայաստան»³⁵¹: Հրապարակագիրն այստեղ ակնարկում է հայ ազգային կուսակցություններից մեկի՝ Դաշնակցության անդրանիկ ծրագիրը: Այս կապակցությամբ նա գրում է. «...ճամբան հարթել հայրենիքի լիակատար անկախութեան՝ կամ մէկ անգամից (եթէ հնար է այդ) եւ կամ աստիճան առ աստիճան (եթէ մէկ անգամից հնարավոր չէ այդ),- ահա այն հասարակաց նպատակը, որ 1890-ին մէկ ընդհանուր ուխտի եւ «դաշնակցութեան» մէջ համախմբեց Հայ Յեղափոխականներին: ...Անկախութեան պահանջը որեւէ նորոյթ չունէր իր մէջ: Մեր անդրանիկ դաւանագրի առաքեալները «ազատ Հայաստան» ասելու փոխարէն՝ ամենայն դիւրութեամբ կարող էին «անկախ Հայաստան» ասել»³⁵²:

Հայ ազգային մեկ այլ կուսակցության ծրագրի կապակցությամբ Վ. Նավասարդյանը փաստում է, որ «...առաջին կազմակերպուած յեղափոխական հոսանքը, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, որ կեանք առաւ հայ իրականութեան մէջ՝ յստակ ու որոշ, պարզ ու մէկին առաջադրած ունէր Թրքահայաստանի նախ՝ բացարձակ անջատումը Թուրքիայից եւ ապա՝ նրա լիակատար անկախութիւնը»³⁵³:

³⁵¹ Տե՛ս Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալին մէջ, «Հայրենիք», 1924, փետրուար, էջ 79:

³⁵² Նաւասարդեան Վ., ՀՅԴ գաղափարաբանութիւնը, Պեյրուֆ, 1983, էջ 39:

³⁵³ Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալին մէջ, էջ 82:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն յուրովի նրա անկախության ձեռքբերման կամ պահպանման համար մղված պայքարի պատմություն է: Այս տեսակետից Վահան Նավասարդյանն առավել ցայտուն է համարում հայ ժողովրդի պատմության օրինակը: Հայ ժողովրդի ամբողջ պատմությունն անսպառ ու անընդմեջ պայքարի մի ընդարձակ մարտիրոսագրություն է հանուն ազատության³⁵⁴:

Վ. Նավասարդյանի աչքից չի վրիպել այն հանգամանքը, որ հանուն աշխարհակալական ձգտումների տեղի ունեցած ցանկացած բախում, ի վերջո, ավարտվել է հարձակման ենթարկված ժողովուրդների ազատության ձեռքբերումով: Այս երևույթի թերևս լավագույն պատճառաբանությունն այն է համարվում, որ ժողովուրդների ազատության ձգտումից առավել հզոր ուժ դժվար է երևակայել: Ազատության այդ տենչը, Վ. Նավասարդյանի բնութագրմամբ, բնատուր է ազգերին, որ փոխանցվում է սերնդից սերունդ՝ առանց կորցնելու իր հմայքն ու թովչությունը³⁵⁵:

Հետաքրքիր է անկախության գաղափարի մեկնաբանման Վ. Նավասարդյանի մոտեցումը: Նա, սերտ կապվածություն տեսնելով «հայրենիք», «ազատություն», «ազգ», «ազգային ազատություն», «անկախություն» գաղափարների միջև, գտնում է, որ այնուամենայնիվ դրանք տարբերվում են թե՛ իբրև գաղափարներ, թե՛ իբրև արժեքներ: Հայրենիքն այն միջավայրն է, որտեղ ազգերը հյուսում են իրենց պատմությունը, կուտակում իրենց հոգեկան, մշակութային հարստությունը: Հայրենիքում ազգը կարողանում է լավագույնս դրսևորել իր ստեղծագործական տաղանդը, ապահովել իր հարատևության համար նպաստավոր պայմաններ: Վ. Նավասարդյանն ազգի հարատևման գլխավոր նախապայման հայրենիքից զատ համարում է անկախությունը³⁵⁶:

Վ. Նավասարդյանը գտնում է, որ քաղաքակիրթ մարդկության պատկերացմամբ բոլոր ազգերը, անկախ իրենց թվաքանակից, արժանի են և իրավունք ունեն անկախ լինելու: Անդրադառնալով հայ ժողովրդի իրավունքին՝ նա գրում է. «Պայքարել յանուն Հայաստանի անկախութեան, այդ կը նշանակէ ջահակիրը լինել աշխատատուր

³⁵⁴ Տե՛ս Նաասարդեան Վ., Հայաստանի անկախութիւնը (Տեսական հիմնաւորման թռուցիկ ակնարկ), Ժընեւ, 1924, էջ 14:

³⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 13, 14:

³⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 54:

մարդկութեան լուսաւոր գաղափարների, այդ կը նշանակէ՝ զորավիգ հանդիսանալ այն վեհ ու գեղեցիկ պայքարին, որ այսօր տարւում է ընկերվար դրօշի տակ»³⁵⁷:

Տարագիր խմբագիրը փաստում է, որ Հայաստանի անկախությունը ոչ միայն քաղաքակիրթ մարդկության ցանկությունն է, այլև դրան ձգտում է նաև ինքը՝ հայ ժողովուրդը, «որովհետեւ միայն անկախութեան պայմաններում մեր երկիրը կարող է Հայաստան դառնալ, իսկ մեր ժողովուրդը՝ հայ մնալ»³⁵⁸:

Այսինքն՝ անկախությունը՝ որպէս քաղաքակրթական արժեք, պետք է հասանելի լինի բոլոր ազգերին, այդ թվում՝ հայերին: Եվ միայն բոլոր ազգերի անկախության դեպքում կարող է մարդկությունն առաջ ընթանալ դեպի լուսավոր ապագա: Զարգացնելով Հայաստանի անկախության համամարդկային նշանակության մասին իր թեզը՝ Վ. Նավասարդյանը գրում է. «Զգտել Հայաստանի անկախութեան, պայքարել այդ անկախութեան համար եւ տիրանալ նրան,- այդ կը նշանակէ մէկ լուսաւոր յաղթանակով եւս պսակել մարդկային պատմութիւնը, լաւագոյն տուրքը տալ ընկերվար վարդապետութեան, սկիզբը դնել Մերձաւոր արեւելքի իրական ազատարարութեան եւ անդորր, ազատ ու խաղաղ պայմանների մէջ հայութիւնը լծել իր լուսաւոր եւ ստեղծագործ առաքելութեան»³⁵⁹:

Մեկ այլ առիթով Վ. Նավասարդյանը պնդում է, որ հայության քաղաքական մտասևեռումը պետք է լինի մի կետի վրա: Այդ կետն անկախ Հայաստանի պահանջն է, որին պետք է սևեռվեն հայ ժողովրդի բոլոր հատվածների հայացքները³⁶⁰:

Հայ ժողովրդի հետագա պայքարը պետք է ընթանա միայն այդ ուղիով: Եվ եթէ այս ուղուց տեղի ունեցած շեղումները զուտ ժամանակավոր մարտավարական բնույթի չեն, ապա ամեն ինչ կորած պետք է համարել: Վ. Նավասարդյանը եզրահանգում է

³⁵⁷ Նույն տեղում, էջ 53:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 54:

³⁵⁹ Նույն տեղում, էջ 56:

³⁶⁰ Տե՛ս Նավասարդեան Վ., Հ.Յ.Դաշնակցութեան անելիքը (մտքեր եւ յուշեր մի գրքոյկի առիթով), Գահիրէ, 1924, էջ 278:

հետևյալին. «Միայն անկախութեան պայմաններում մեր երկիրը կարող է Հայաստան դառնալ, իսկ մեր ժողովուրդը՝ հայ մնալ»³⁶¹:

Նավասարդյանը քննադատում է հայ իրականության մեջ գոյություն ունեցող որոշ հոսանքների այն մտածումը, թե իբր Հայաստանի անկախության բացարձակ պահանջ գոյություն չունի³⁶²:

Անկախության գաղափարն ավելի ընկալելի դարձնելու համար Նավասարդյանը կատարում է հետևյալ համեմատությունը. «Ինչպես անվերաքննելի է ազատութեան սկզբունքը (խօսելու, գրելու, դաւանելու, հաւաքուելու, շարժուելու ելն) անհատի համար՝ պետութեան մէջ, նոյնպէս անվերաքննելի է անկախութեան սկզբունքը (ազատօրէն, անկախաբար եւ ազգովին ապրելու, զարգանալու, ստեղծագործելու ելն) ազատութեան համար՝ համամարդկային մեծ ընտանիքի մէջ»³⁶³:

Կարելի է եզրակացնել, որ տվյալ պարագայում անկախություն ասելով հրապարակախոսը նկատի ունի մարդկանց հավաքականության ազատ լինելու հանգամանքը: Անկախությունը «ազգ-սուբյեկտի ազատության միակ ձեւն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը»³⁶⁴: Հետևաբար՝ այն նույնպես պետք է հարատևի ազատատենչ մարդկության նպատակներում:

Ինչպես նշեցինք, Վ. Նավասարդյանն անկախության գաղափարը սերտորեն կապում է ընկերվարության գաղափարի հետ: Այս կապակցությամբ նա գրում է, որ անկախության գաղափարն առավել գնահատելի է ընկերվարականների կողմից³⁶⁵: Ըստ Վ. Նավասարդյանի՝ անկախության գաղափարը պետք է ընկերվարական կուսակցությունների ծրագրերի կարևորագույն կետերից մեկը լինի: Նա նշում է, որ ռուսական աշխարհակալությունը վերականգնելու նպատակով բոլշևիզմը կեղծ հայտարարում է, թե իբր ազգային դատի պաշտպան է: Սակայն այստեղ կարևորն այն է

³⁶¹ Նույն տեղում, էջ 279:

³⁶² Տե՛ս Նաւասարդեան Վ., Դաշնակցութեան քաղաքական ուղին (10-րդ Ընդհանուր ժողովի առիթով), Գահիրէ, 1925, էջ 15-19:

³⁶³ Նաւասարդեան Վ., Հայաստանի անկախութիւնը..., էջ 44:

³⁶⁴ Նույն տեղում, էջ 45:

³⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 7:

համարվում, որ նույնիսկ բոլշևիզմի համար է ազգային անկախության գաղափարն արդեն ազդեցիկ դարձել³⁶⁶:

Վ. Նավասարդյանը քննադատաբար է մոտենում խորհրդահայ գործիչների այն պնդումներին, թե իբր ազգի գոյության պահպանումը հնարավոր է նաև առանց անկախության: Ընդհակառակը, ըստ նրա՝ «... քաղաքական անկախութիւնից դուրս գծուած բոլոր ուղիները շեղումն են ազգութեանց պահպանման նուիրական սկզբունքից... ազգերը պէտք է լինեն ազատ եւ անկախ,- որովհետեւ այդ է ազգութեանց պահպանման ու զարգացման միակ ճշմարիտ ուղին, այդ է ճշմարիտ ընկերվարութեան յստակ, պարզ, մէկին ու խրոխտ պատգամը»³⁶⁷:

Ընկերվարության և ազգերի անկախության գաղափարների համեմատության ժամանակ Վ. Նավասարդյանը եզրահանգում է, որ անկախության գաղափարը պետք է սկզբունքային ձևակերպում ստանա ընկերվարական կուսակցությունների (այդ թվում՝ հայկական ընկերվարական կուսակցությունների) ծրագրերում. ընկերվարությունն ընկալելի լինելու համար անկախության գաղափարը պետք է անբաժան լինի նրանից, ընկերվարությունն ինքը պետք է ծնունդ տա ազգերի անկախությունը ծնող գաղափարների³⁶⁸:

Վ. Նավասարդյանը կարևորում է նաև ժողովրդավարության դերը անկախության գաղափարի պաշտպանության գործում: Հեղինակը գտնում է, որ անազատ ժողովուրդների համար քաղաքական անկախության երազը միակ հենարանն է մյուս ժողովրդավարական իրավունքների ու պահանջների: Ըստ նրա՝ ժողովրդավարությունն իր դերը կարող է կատարել միայն անկախության պայմաններում: Առանց անկախության այն արժեք չունի: Այս կապակցությամբ հայ հրապարակագիրը մատնանշում է, որ պառլամենտարիզմը, ընդհանուր ընտրական իրավունքը, խոսքի, խղճի և այլնի ազատությունը ժողովուրդների կյանքում տեղ և արժեք ունեն, եթե նախապես հարգված է

³⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 52:

³⁶⁷ Նույն տեղում, էջ 21:

³⁶⁸ Տե՛ս Նաասարդեան Վ., Ընկերվարութիւնը եւ ազգերի անկախութեան գաղափարը, «Հայրենիք», Պոստոն, 1923, յուլիս, էջ 68:

հիմնական պահանջը, բոլորից վեր է դասված և պահպանված անկախության սկզբունքը³⁶⁹:

Եթե փորձենք հանրագումարի բերել վերոնշյալը, ապա կարելի է ասել, որ Վ. Նավասարդյանի համոզմամբ, հիրավի, անկախության գաղափարին դեմ լինելը ենթադրում է էությանը թշնամի լինել ընկերվարությանն ու ժողովրդավարությանը:

Արժանահիշատակ է նաև Վ. Նավասարդյանի հետևյալ տեսակետը: Ըստ նրա՝ անկախությունը, լինելով բացարձակ արժեք, իրականության մեջ կյանք է առնում հարաբերական բնույթ կրող ձևերով ու միջոցներով: Իսկ այդ հարաբերական կարգավիճակը որոշում է ժողովուրդն ինքը: Ժողովուրդն է իր մեծամասնության որոշմամբ սահմանում իր անկախության ձևը, չափն ու սահմանը³⁷⁰:

Այսպիսով, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայտնվելով տարագրության մեջ՝ ականավոր գործիչ Վ. Նավասարդյանն իր հրապարակախոսության մեջ մեծ տեղ է հատկացնում Հայաստանի անկախության վերականգնման գաղափարին: Անկախությունն ի վերուստ տրված իրավունք է, քաղաքակիրթ մարդկության կողմից պաշտելի արժեք, որին արժանի է նաև հայ ժողովուրդը: Վ. Նավասարդյանը միայն ազգերի անկախ գոյությամբ է պայմանավորում մարդկության խաղաղ և ճշմարիտ զարգացումն ու հարատևումը:

Սկիզբում Հայաստանի անկախության գաղափարը մեծապես պաշտպանվում էր նաև մեծանուն հասարակական-քաղաքական գործիչ, գրող-հրապարակախոս Լևոն Շանթի (Նահաշպետյան, Սեղբոսյան) կողմից: Նրա «Մեր անկախությունը» գրվածքը մեծարժեք գործ է հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման տեսանկյունից: Այն այսօր էլ չի կորցրել իր այժմեականությունը:

«Հայրենիք» օրաթերթը, արժևորելով Լ. Շանթի գիրքը, գրում է. «Կարելի է յամարձակօրէն ըսել, որ վերջին տասնամեակներու ընթացքին հայկական դատին նուիրուած քիչ գրքեր կան, որոնք կրցած են այնքան զմայլելի հարազատութեամբ, պատմա-փիլիսոփայական խորութեամբ ու բիրեղացած եւ խտացած ձեւով ներկայացնել

³⁶⁹ Տե՛ս Նաւասարդեան Վ, Ընկերվարութիւնը եւ դեմոկրատիզմը, Գահիրէ, 1924, էջ 17, 18:

³⁷⁰ Տե՛ս նոյն տեղում, 1924, էջ 22:

հայ ժողովրդի ազատագրական պայքարի այլեւայլ փուլերը, որքան յաջողած է ընել Լեւոն Շանթը իր այս սքանչելի գործին մէջ»³⁷¹:

Լ. Շանթի համոզմամբ որևէ ազգի անկախությունը կարող է բխել տվյալ ազգի ու նաև այլ ազգերի շահերից, սակայն միաժամանակ կարող է աննպաստ համարվել մեկերկու այլ ժողովուրդների համար: Հետևաբար՝ յուրաքանչյուր ժողովուրդ փորձելու է խանգարել կամ օժանդակել տվյալ ազգի անկախությանը³⁷²: Այս առումով նա սխալ է համարում, միջազգային առյանների վրա հույս դնելով, անկախություն ակնկալելը, մինչև որ «... **մենք ինքներս որևէ ուժ ներկայացնենք եւ մեր հարցը դառնայ ուժեղ պետութեան մը հաշիւներուն մէկ մասը** (ընդգծումը հեղինակինն է – Խ. Ս.) մտնէ անոր ծրագիրներուն մէջ»³⁷³: Ըստ էության հայ հրապարակախոսը եզրահանգում է այն պարզ ճշմարտությանը, որ միայն մենք պետք է ի զորու լինենք տեր լինելու մեր անկախությանը, որը ձեռք է բերվում մղված հարատև մաքառումների, գործադրված համառ կամքի և վճռականության շնորհիվ միայն:

Հայաստանի ազատության և անկախության պայքարը հիմնավորելու համար հեղինակը չի բավարարվում միայն հայոց նորագույն անցյալով: Խորասուզվելով հայ ժողովրդի պատմության բոլոր շրջանների մէջ՝ նա երևան է բերում մեր ազգային գոյամարտի և ազատամարտի այն էական պայմաններն ու ձգտումները, որոնք այնքան բնորոշ են իր ժամանակի ոգորումներին:

Անկախության գաղափարը մեկնաբանելիս Լ. Շանթը կարևորում է նաև ժամանակի ոգին, այլ կերպ՝ տվյալ պահին տիրող քաղաքական իրավիճակը: XX դարի սկզբին քաղաքակրթության պահանջներից մեկը դառնում է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը³⁷⁴: Այսպիսով, Լ. Շանթը շեշտում է, որ քաղաքակրթության զարգացման տվյալ մակարդակում ժողովուրդների անկախացման գործընթացն այլևս անկասելի է, ժամանակը գործում է ի նպաստ ազգերի ազատագրության, աշխարհի պատմության

³⁷¹ «Հայրենիք», 1925, 21 օգոստոսի: Ավելի ուշ Լ. Շանթի գրքի վերաբերյալ ծավալուն գրախոսական է գրում Մ. Օզանյանը (տե՛ս «Հայրենիք», 1925, 18-22 նոյեմբերի):

³⁷² Շանթ Լ., Մեր անկախութիւնը, Պոսթըն, տպարան «Հայրենիք»ի, 1925, էջ 9:

³⁷³ Նույն տեղում, էջ 17:

³⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 54:

ընթացքն այդ ուղու վրա է: Իսկ թե ինչպիսին կլինի ժողովրդի անկախության աստիճանը, դա կորոշի ինքը՝ ժողովուրդը:

Հայաստանի անկախության գաղափարի մեջ Լ. Շանթը կարևորում է քրիստոնեության դերը: Համոզմունք հայտնելով, որ հայ ժողովուրդը միայն քրիստոնեության շնորհիվ է կարողացել պահպանել իր ինքնությունը նրա՝ անկախության համար մղած պայքարը համատեղվել է հանուն քրիստոնեության մղած պայքարի հետ³⁷⁵: Անկախության համար մղված պայքարում Լ. Շանթը բախտորոշ է համարում հայ ազնվականության կատարած դերը: Վերջինիս մեծագույն մասի ոչնչացումը, ցավոք, բացասական ազդեցություն է ունեցել: Հեղինակը պատահական չի համարում այն հանգամանքը, որ վերջին շրջանում հայ անկախական շարժումները դրսևորվել են այն երկրամասերում, որտեղ պահպանվել են հայ ազնվականական տների մնացորդներ³⁷⁶:

Լ. Շանթն անդրադառնում է հայ հասարակության այն հատվածին, որի կարծիքով Սիյուռքում Հայաստանի անկախության գաղափարի քարոզչությամբ զբաղվողների համար պայքարն արհեստական է և չի բխում հայ ժողովրդի կենսական շահերից: Ականավոր հրապարակախոսը պատմական համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ անկախության ձգտումը հայ ժողովրդի մեջ այնքան հին է, որքան ինքը՝ հայ ժողովուրդը: Այս քննադատներին Լ. Շանթը պատասխանում է հետևյալ կերպ. «Առանց պետական անկախության՝ հայ քաղաքակրթություն ունենալու գաղափարը անճար ինքնախաբեություն մըն է, կամ ծպտուած խաբեություն մը, կամ կէս-գիտակից խոստովանություն մը, որ ինքը հայ ժողովուրդի օրերը համրուած կը կարծէ»³⁷⁷: Լ. Շանթն ամբողջ հայոց պատմությունը համարում է հայ ժողովրդի անկախության համար մղված պայքարի պատմություն: Երբ հայն անկախություն չունի, հայ մտավորականությունը պետք է ծրագրի Հայաստանի անկախությունը³⁷⁸:

Լ. Շանթն առանձին անդրադառնում է Հայաստանի անկախության հանդեպ մեր հարևանների ունեցած վերաբերմունքին: Խոսելով Հայաստանի հանդեպ թուրքերի

³⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 114, 115:

³⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 122:

³⁷⁷ Նույն տեղում, էջ 151:

³⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 153:

որդեգրած թշնամության պատճառների մասին՝ Լ. Շանթը դրանց շարքում թվարկում է հայերի քրիստոնյա լինելը, որը պատրվակ է հանդիսացել ռուսների համար արշավելու դեպի Հայաստան, հայերի անկախության ձգտումը, որը պատճառ է դարձել Թուրքիայի ներքին ցնցումների, ինչպես նաև եվրոպական միջամտության³⁷⁹: Մինչդեռ Հայաստանի և Թուրքիայի ապագա հարևանությունը, իրական խաղաղությունը հնարավոր են միմիայն Հայաստանի անկախ գոյությամբ: Շանթը նշում է, որ անկախություն պետք է ունենան նաև մեր մյուս փոքրիկ հարևանները³⁸⁰:

Անկախության համար պայքարում Լ. Շանթը կարևորում է հայ և վրաց ժողովուրդների որդեգրած դիրքորոշումները Թուրքիայի և Ռուսաստանի հանդեպ: Նա նախ փաստում է, որ հայ և վրաց ժողովուրդների անկախությունները փոխադարձ շահեկան են: Առանց Հայաստանի անկախության Վրաստանը ևս կորցնելու է իր անկախությունը՝ ողբերգական հետևանքներով: Երևանը, Դիլիջանը և Լոռին գրավողը չի կարող Թիֆլիսը չգրավել³⁸¹:

Երկու ժողովուրդների վերաբերմունքը նույնը պետք է լինի նաև Ռուսաստանի հանդեպ: Ռուսաստանն էլ իր հերթին իրերի թելադրանքով նույն վերաբերմունքն է ցույց տալու անդրկովկասյան ժողովուրդներին: Եվ եթե նույնիսկ քաղաքական կողմնակալ նկատառումներով Ռուսաստանն անդրկովկասյան ժողովուրդներից մեկի հանդեպ առավել բարեհամբույր է գտնվում, ապա դա լրկ ժամանակավոր երևույթ է:

Լ. Շանթն անդրադառնում է նաև Ադրբեջանի և Հայաստանի փոխադարձ անվստահության մթնոլորտին, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ անկախության վրա: Թուրքիայի առաջխաղացման դեպքում Հայաստանը գրեթե չի բացառում Ադրբեջանի կողմից հարված ստանալը: Ավելին, Ադրբեջանի կողմից հայկական հողերի (Արցախ, Զանգեզուր, Նախիջևան) հանդեպ ունեցած հավակնությունները նախևառաջ թելադրվում և պահանջվում են Թուրքիայի կողմից³⁸²:

³⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 167:

³⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 172:

³⁸¹ Տե՛ս նույն տեղում, էջ 217:

³⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 228:

Հետևաբար՝ շատ կարևոր է անկախության համար պայքարում հաշվի առնել նաև Ադրբեջանի գործոնը:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը չի սահմանափակվում հայ ժողովրդի բազմադարյա պատմության շրջանները և դրանց ընթացքում գոյություն ունեցած ազգային-քաղաքական պայմանները վերլուծելով: Նա մեծ հմտությամբ վեր է հանում մեր հարևան ժողովուրդների խաչաձևվող պահանջները, ինչպես նաև համայն մարդկության ձգտումներն ու զարգացման փուլերը: Այսինքն՝ Լ. Շանթը ջանում է մեր ազգային դատը ներկայացնել միջազգային ընդարձակ խորապատկերի վրա, բազմակողմանիորեն պարզելով հայկական ազատամարտի ոչ միայն ներքին, ազգային դրդապատճառները, այլև արտաքին, միջազգային ազդակները:

Անկախության ձգտումը պայմանավորված է ոչ միայն մեր ազգային իղձերն ի կատար ածելու ցանկություններով, այլև հարևանների համանման ձգտմամբ: Լ. Շանթի կարծիքով, եթե մենք չփորձենք քայլել նրանց նման, արգելք կդառնանք նրանց համար: Փաստորեն, եթե մենք «ծուլանում» ենք անկախության համար պայքարում, հարվածում ենք ոչ միայն մեր, այլև անկախության ձգտող մեր հարևանների շահերին:

Լ. Շանթը եզրակացնում է, որ եթե մենք «... իմաստուններու խորհուրդովը, կռիւէ խուսափելու, հանգիստ մնալու, հարստանալու եւ «բարգաւաճելու» համար հրաժարիլ կ'ուզենք մեր անկախութեան ձգտումէն, եթէ տառապիլ, հալածուիլ ու պայքարիլ չուզենանք, պէտք է ստիպուինք տառապելու, հալածուելու, փախչելու ու ջարդուելու ռուսներու տիրապետութեանը գործիք ծառայելու համար, եւ հէնց ռուսները իրենք պիտի սարքեն նորէն հայ-թաթարական ու հայ-վրացական կռուրջտուքն ու ջարդերը»³⁸³: Մինչդեռ ստորաքարշությամբ և ծառայություններ մատուցելով՝ հնարավոր չէ ակնկալել ռուսների հարգանքն ու բարեկամությունը, որը ձեռք է բերվում սեփական արժանապատվությամբ միայն: Պետք է համաձայնվել Լ. Շանթի այն համոզման հետ, որ ցանկացած պահի ռուսները մեզ որպես գործիք օգտագործելուց հետո կպաշտպանեն

³⁸³ Նույն տեղում, էջ 276:

վրացիների կամ թաթարների (ադրբեջանցիների) շահերը: Իսկ դրա մեղավորը կլինեն ոչ թե ուսները, այլ մենք՝ մեր սխալ հաշվարկներով և հանցավոր անձնատվությամբ:

Ուստի, օտարի շահերին ծառայող գործիք չլինելու, միմիայն սեփական շահերով առաջնորդվելու համար Լ. Շանթի համոզմամբ. «... մեր բոլոր շարժումներուն, մտածումներուն, ծրագիրներուն, ձեռնարկներուն, պրոպագանտին ու քաղաքականութեան **հիմքն ու առանցքը է եւ պէտք է ըլլայ ձգտիլը անկախութեան**»³⁸⁴ (ընդգծումը հեղինակինն է – Խ. Ա.):

Այս թեմայով հետաքրքիր է նաև Լևոն Շանթի արտասանած ճառը Հայաստանի անկախության 9-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված հանդիսությանը, որի ընթացքում ասում է. «Ամէն ժողովուրդ անխուսափելի պահանջ ունի իր անկախութեանը տիրանալու, հակառակ իր թշնամիներու կամքին... Եւ այն ժողովուրդները, որ ասկէ ետքը իրենց պետական անկախութեանը չհասնին, ապրիլ չեն կրնար... Ապրելու համար պէտք է լրիվ ու առողջ անկախ գոյութիւն»³⁸⁵:

Այսպիսով, Սփյուռքում հաստատված ականավոր գործիչ Լևոն Շանթն իր հրապարակախոսության մեջ մեծ տեղ է հատկացնում Հայաստանի անկախության գաղափարին: Բազմակողմանի վերլուծության ենթարկելով այդ գաղափարի տարբեր կողմերը՝ նա եզրահանգում է, որ հանուն հայ ժողովրդի հարատևության, Հայաստանի հզորացման և տարածաշրջանային խաղաղության անկախությունը պատմական անհրաժեշտություն է:

Հայաստանի անկախության գաղափարին առանձնահատուկ տեղ է տվել նաև մեծանուն պետական և ռազմական գործիչ, փիլիսոփա Գարեգին Նժդեհը: Իր «Հիշիր պատերազմը»³⁸⁶ արժեքավոր գրվածքում ականավոր գործիչը գրում է, որ Հայաստանի

³⁸⁴ Նույն տեղում, էջ 279:

³⁸⁵ «Յուսաբեր», 1927, 8 յունիսի:

³⁸⁶ Նժդեհի նշված աշխատանքը հողվածաշարի ձևով առաջին անգամ լույս է տեսել Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի 1930՝ մայիս-հունիս ամիսների համարներում: Աշխատանքն ամբողջական խմբագրվել և հրատարակվել է մեր կողմից (տե՛ս Նժդեհ Գ., Յիշիր պատերազմը, Երեւան, 2013, 101 էջ):

անկախությամբ հայ ժողովուրդը մարդկությանն օգտակար լինելու և Մերձավոր Արևելքում պատմական մեծ առաքելություն իրականացնելու կարելիություն է ստանում³⁸⁷:

Ցեղասպանության, հայրենագրկման և անկախության կորստի հետևանքով աշխարհացրիվ հայությանը սպառնում էր ձուլման վտանգը, որի դեմ պայքարում Գ. Նժդեհը նախևառաջ ակնկալում էր երիտասարդության զգոնությունն ու ջանադրությունը: Երիտասարդների հետ տարվող քարոզչական աշխատանքներում Գ. Նժդեհը նրանց կոչ է անում ապրել միայն երկու բանի համար՝ Հայրենիքի և Անկախության³⁸⁸: Ինչպես տեսնում ենք, Գ. Նժդեհը երիտասարդներին համոզում և բացատրում է, որ անկախ հայրենիք ունենալը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Նա գտնում է, որ միայն անկախության պայմաններում է հնարավոր ապահովել ազգի բնականոն զարգացումը, և միայն պետական գերիշխանությամբ է հնարավոր արդարացնել սեփական գոյության իրավունքը:

Հայ ժողովրդի կրած զրկանքները հոգեբանական լուրջ հարված էին հասցրել այդ զրկանքն ապրող սերնդին: Թերևս հոգեբանական լուրջ ապրումների հետևանքով այս սերնդի բազմաթիվ ներկայացուցիչներ ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում հակված էին հրաժարվել անկախության գաղափարից՝ գտնելով, որ հենց անկախության ձգտումն է եղել հայ ժողովրդի դժբախտությունների հիմնական պատճառը: Ուստի, Գ. Նժդեհը երիտասարդ սերնդին կոչ է անում չխաբվել ավագների մոլորությունից: Նա առաջարկում է ուսումնասիրել այլ ժողովուրդների պատմությունը: Անկախությունը համարելով ի վերուստ տրված պարգև՝ ժողովուրդներն ամեն ջանք գործադրում են՝ պահպանելու, նվաճելու կամ վերանվաճելու այն՝ նույնիսկ գնալով ամենաթանկ զոհողությունների³⁸⁹:

Գ. Նժդեհի համոզմամբ անկախության գաղափարի դավանանքը քաղաքակրթական արժեք է: Միայն անկախության պայմաններում են ժողովուրդներն ինքնադրսևորման լիարժեք հնարավորություն ստանում: «Ազգերի հանճարը

³⁸⁷ Տե՛ս «Հայրենիք», 1930, 30 մայիսի:

³⁸⁸ Տե՛ս Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դեմ, Սոֆիա, 1927, էջ 8:

³⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 57:

ստեղծագործ, իսկ նրա արտահայտությունը յորդաբուխ է լինում միայն բացարձակ անկախության մթնոլորտում: Ահա թե ինչու մարդկության անկախ օգտակար լինելու համար, ժողովուրդները պիտ լինեն ինքնիշխանօրէն ազատ եւ անկախ», - ասում է Գ. Նժդեհը³⁹⁰:

Գ. Նժդեհը, ինչպես նշեցինք, բուռն քննադատության է ենթարկում անկախության գաղափարը մերժողներին: Վերջիններիս առավել տպավորիչ բնութագրելու համար նա աստվածաշնչյան հայտնի պատմությունն է հիշեցնում, ըստ որի՝ հրեական ամբոխը Պիղատոսից պահանջում է խաչին հանել Հիսուսին: «Նոյն տխուր տեսարանը եւ այսօր մեզանում: Նոյն ամբոխը, դատաւորը՝ նոյն: Տարբեր է միայն զոհը գերագոյն: Այսօրուանը Յիսուսը չէ, այլ՝ մեր Անկախության Գաղափարը: Նոյն աստվածասպան ամբոխն է, մեր ցեղի վատասերած տականքը, որ օտարի միջոցով խաչել է տալիս այն ամենը, ինչ որ ազգային է: Նա կատարում է յանձնումը մեր Ազատության ու Պատմության եւ շնականօրէն յայտարարում. – Մենք այլ թագաւոր չունենք Կեսարից զատ», - գրում է Գ. Նժդեհը³⁹¹:

Անկախության հասնելու համար Գ. Նժդեհը կարևորում է ժողովրդի հոգեբանական և բարոյական որակների ամրապնդումը: Ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայության մի ստվար հատված պայքարի փոխարեն ավելի շատ խնդրողի դերում է հանդես գալիս: Իսկ անկախությունը ոչ թե տրվում է, այլ նվաճվում: Օտար պետությունների շահադիտական աջակցությունը, բարեգթությունն ակնկալելը թուլացնում է ժողովրդի պայքարի կորովը՝ նրան վերածելով քաղաքական մուրացկանի: Հրապարակախոսն առաջարկում է ձերբազատվել մուրացկանի և լալկանի կերպարից, հրաժարվել քաղաքական հովանավորներից և ապավինել սեփական ուժերին այն պարզ պատճառով, որ «մուրացկանին եւ հաշմանդամին անկելանոց են տալիս եւ ոչ անկախ հայրենիք»³⁹²: Գ. Նժդեհը ցույց է տալիս, որ անկախ պետություն ունենալու համար պետք

³⁹⁰ Նոյն տեղում, էջ 62:

³⁹¹ Նոյն տեղում, էջ 69:

³⁹² Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Պէյրոս, 1929, էջ 13, հմմտ. «Արաքս», Սոֆիա, 1926, 10 փետրուարի:

է ինքնուրոյն մտածելակերպ որդեգրել, ունենալ ինքնուրոյն քաղաքական միտք, լինել նախաձեռնող և ինքնավստահ:

Անկախության գաղափարի տարածման և արմատավորման հարցում Գ. Նժդեհին առանձնակի կարևորում է հայ մտավորականության դերը: Մտավորականությունն է, որ ի զորու է վերացնելու ներքին անհանդուրժողականությունը և հանուն անկախության զոհելու սեփական «ես»-ը³⁹³:

Անկախության գաղափարի ջատագովության գործում Գ. Նժդեհը նույնպես առանձնացնում է Հ.Յ.Դաշնակցության դերը: «Տանելով իրեն պարտադրուած անօրինակ պայքարը՝ նա (Հ.Յ.Դաշնակցությունը – Խ.Ս.), ինչպէս ամեն դաշնակցական, հետապնդում է ոչ թէ ապախորհրդայնացումը, այլ իրականացումը Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի: Նա համակած է ուժեղ հայրենաբաղձութեամբ: Նրա համար հակադաշնակցականությունն այն ներքին պատմական չարիքն է, որ «տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր անվան եւ ձեւի տակ, մեծապես դժարացրել է մեր ցեղի չուն՝ իր հաւիտենական ճամբի վրայ: Ահա թէ ինչու նա ներքին չարիքին մոտենում է ոչ թէ մակերեսայնօրէն, այլ ապրելով մեր ողբերգութեան խորութիւնը, գիտակցում է, որ հայ կեանքի հազար գլխանի չարիքը կվերանայ մեր ճակատագրի բոլոր հանգոյցների քակումով՝ Միացեալ եւ Անկախ Հայրենիքի ստեղծումով միայն»³⁹⁴:

Այսպիսով, 1920-1930-ական թվականներին Սփյուռքում ազգային-քարոզչական գործունեության ընթացքում Գարեգին Նժդեհը մեծ տեղ է հատկացնում Հայաստանի անկախության գաղափարին: Անկախության գաղափարը Գ. Նժդեհի պատկերացմամբ այն անհրաժեշտ կռվանն էր, որի միջոցով պետք էր պայքարել վտանգավոր չափերի հասնող ձուլման երևոյթի դեմ: Անկախության հասնելու համար կարևոր են նաև այդ գաղափարի ընկալումն ու արժևորումը, ինչպէս նաև սեփական ուժերին ապավինելը: Հատկապէս հայ մտավորականությունը և երիտասարդությունը պետք է համառ պայքար մղեն՝ սեփական ժողովրդի անկախությունը վերանվաճելու համար:

³⁹³ Տե՛ս Նժդեհ Գ., Յեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932, էջ 29:

³⁹⁴ Նժդեհ Գ., Ամերիկահայութիւնը, ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935, էջ 74:

Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարի քննարկումը չէր կարող լինել առանց Բոստոնի «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանի մասնակցության: Արդեն նշել ենք, որ վերջինս առանձնանում էր իր հակառուսական ընդգծված դիրքորոշմամբ: Նրա համոզմամբ որևէ տարբերություն չկա ցարական և բոլշևիկյան իմպերիալիզմների միջև³⁹⁵: Խոսելով Հայաստանի անկախության գաղափարի մասին՝ Ռ. Դարբինյանը գտնում է, որ դրա յուրացման ուշացումն ապացույցն է հայ քաղաքական մտքի «ապիկարութեան»³⁹⁶:

Ռ. Դարբինյանի կարծիքով հայ քաղաքական մտքի առանցքը պետք է լինեն ոչ թե սոցիալ-տնտեսական և պատմափիլիսոփայական քննարկումները, այլ ազգային գոյության և անկախության վերաբերյալ կենսական խնդիրները³⁹⁷: Ինչպես տեսնում ենք, Ռ. Դարբինյանը գտնում է՝ առավել նպատակահարմար է խնդիրների գործնական քննարկումների անցկացումը, որը կհանգեցնի հայկական անկախ պետականության վերականգնման իրագործմանը:

Ռ. Դարբինյանը հայոց պատմության մեջ առանցքային է համարում 1918 թ. մայիսի 28-ը: Նրա կարծիքով մինչ այդ անկախության մշուշոտ իդեալը Մայիս 28-ով «միս ու արյուն» ստացավ և վերածվեց լուրջ գաղափարի³⁹⁸: Ռ. Դարբինյանը խոսում է այն մասին, որ տասնյակ տարիներ հայ ժողովրդի ազատագրական պայքարը ռուսական կամ թուրքական հովանավորության տակ ինքնավարություն ունենալու նպատակից անմիջապես անցում կատարեց լիակատար անկախության: Հայաստանի անկախության գաղափարի շեփորահարման և հետապնդման գործում Ռ. Դարբինյանը նույնպես առանձնացնում է Դաշնակցության դերակատարությունը³⁹⁹:

Ռ. Դարբինյանը Հայաստանի անկախությունը համարում է հայ ժողովրդի քաղաքական երկու կողմնորոշումներից մեկը: Մյուս կողմնորոշումը հեղինակի կարծիքով

³⁹⁵ St' u Darbinian R., The Soviet Nationalities and the Question of Their Independence, "The Armenian Review", 1953, vol. 6, No. 4, p. 51.

³⁹⁶ Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք», 1923, յունուար, էջ 63:

³⁹⁷ Տե՛ս նույն տեղում, յուլիս, էջ 121:

³⁹⁸ Նույն տեղում

³⁹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 122, 123:

Խորհրդային Ռուսաստանի հետ լինելն է⁴⁰⁰: Հետևաբար՝ Հայաստանի անկախության դեմ արտահայտվողները խորհրդային արևելյան (օրինատացիա) կողմնակիցներն են: Անկախության արևելումը Ռ. Դարբինյանն անվանում է նաև հայկական կամ հակաբոլշևիկյան: Ինչպես տեսնում ենք, հեղինակն իսկապես շատ սուր էր դնում բոլշևիզմին հակադրվելու հարցը: Այդուհանդերձ, Ռ. Դարբինյանը խոստովանում է, որ նույնիսկ Հ.Յ.Դաշնակցության մեջ քիչ չեն մարդիկ, ովքեր խորհրդային կողմնորոշման սատարողներ են, սակայն նրանց թիվն աստիճանաբար պակասում է⁴⁰¹: Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ նա անկախության կողմնակից է՝ խորհրդային վարչակարգին հակադրվելու համար: Պատահական չէ, որ նա հայ քաղաքական կյանքի առանցքում դնում է Խորհրդային Ռուսաստանի հետ կամ դեմ լինելու այլընտրանքը⁴⁰²:

Այսպիսով, Ամերիկայի ամենահայտնի դաշնակցական պարբերականի՝ «Հայրենիք»-ի խմբագիր Ռուբեն Դարբինյանը Հայաստանի անկախության վերականգնման հարցում երբեք չնահանջեց հակաբոլշևիզմի դիրքերից: Ըստ էության նրա համար անկախության համար պայքարը և հակաբոլշևիկյան պայքարը հոմանիշներ էին:

Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարի ջերմեռանդ քարոզիչն էր ականավոր մտավորական Արտաշես Աբեղյանը: Բեռլինում Հայաստանի անկախության 5-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ նա ասում է. «Տարակոյս չունենանք, որ այսօր էլ Հայոց Աշխարհի քաղաքացին եւ գիւղացին, աշխատաւորն ու մտաւորականը, որչափ եւ կաշկանդուած ու կծկուած, իրենց հոգու խորքերում, իրենց սրտի ծալքերում, իրենց հարազատներով շրջապատուած, իրենց գորշ խրճիթների տակ մայիս 28-ի նուիրական տօնն են սրբազնագործում, իրենց ողջ էութեամբ ազատ ու անկախ կեանքը վերապրում, նրան վերանուածելու ուխտը երդնում»⁴⁰³: Նա նույնպես համոզված է, որ հայ ազգային քաղաքականության գլխավոր խնդիրն անկախ Հայաստանն է լինելու: Ընդ որում այս ասպարեզում հիմնական առաջ մղող ուժը լինելու է Հայաստանի ժողովուրդը,

⁴⁰⁰ Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, էջ 137:

⁴⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 138:

⁴⁰² Տե՛ս նույն տեղում, էջ 143:

⁴⁰³ «Հայրենիք», 1923, 30 յունիսի:

իսկ գաղութահայությունն ու արտաքին նպաստավոր պայմանները միայն օժանդակ ազդակ կարող են հանդիսանալ⁴⁰⁴: Փաստորեն Ա. Աբեղյանի կարծիքով Հայաստանի անկախության գաղափարի քարոզչության հիմնական դաշտը պետք է լինի Խորհրդային Հայաստանը: Ճիշտ է, Սփյուռքում էլ դա պետք է արվի, սակայն շատ կարևոր է, որ անկախության առաջին պահանջատերը լինի Հայաստանում ապրող ժողովուրդը, որն իր պայքարում կստանա Սփյուռքի աջակցությունը:

Հայաստանի անկախությանը նվիրված հրապարակումներով է հանդես գալիս Ալեքսանդր Խատիսյանը: Անկախության 10-ամյակին նվիրված իր հոդվածում նա գրում է, որ պետք չէ հուսալքվել, այլ մտածել մշակույթի զարգացման, ազգի հզորացման մասին այն ակնկալիքով, որ ազատությունն ու անկախությունն անպայման գալու են: Իսկ դա պայմանավորված է ժողովրդի ունեցած ձգտումով⁴⁰⁵: Մի քանի տարի անց Ա. Խատիսյանը կրկին անկախության տարեդարձի առիթով գրում է. «... իտեալը մեր հոգիներու խորքը փայփայելու կամ առջեւն աղօթելու համար չէ միայն: Ունենալ իտեալ՝ կը նշանակէ պայքարիլ, պատրաստուիլ այդ իտեալին հասնելու համար: Ահա մեր առջեւ դրուած կարելոր խնդիրներէն մէկը: Դժբախտաբար, հայ քաղաքական գործիչներէն ոմանք, դրդուած հայ դատի աննպաստ պայմաններէն, ալ չեն հաւատար անկախութեան գաղափարին»⁴⁰⁶: Ըստ էության նախկին վարչապետը կոչ է անում վառ պահել անկախության գաղափարը և հավատալ դրա իրականացմանը:

Սփյուռքում հայկական անկախ պետականության վերականգնման հավատավոր գաղափարախոսներից էր Հայկ Ասատրյանը, ով մեծագույն ջանքեր էր ներդնում Սփյուռքում հայապահպանության համար: 1930-ականներին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում հրատարակվող «Խռովք», «Տարոնի Արծի», «Յեղ և Հայրենիք» ամսագրերում հրատարակված նրա բարոյախոսական, քաղաքական, վերլուծական հոդվածները լայն արձագանք են գտնում սփյուռքահայության մեջ⁴⁰⁷: Հայկ Ասատրյանի

⁴⁰⁴ Տե՛ս Աբեղյան Ա., Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան, «Հայրենիք», 1927, սեպտեմբեր, էջ 114:

⁴⁰⁵ Տե՛ս «Հայրենիք», 1928, 28 մայիսի:

⁴⁰⁶ «Հայրենիք», 1931, 28 յուլիսի:

⁴⁰⁷ Հայկ Ասատրյանի գործերի առավել ամփոփ ժողովածուն Մուշեղ Լալայանի խմբագրմամբ հրատարակել է «Ամարաս» հրատարակչությունը (տե՛ս Ասատրյան Հ., Հատընտիր, Երեւան, 2004, 414 էջ):

ուսումնասիրություններն իրավամբ կարելի է իր ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի արժեքավոր նմուշներ համարել: Նրա հայացքներում բավական մեծ և լուրջ տեղ է հատկացված Հայկական բարձրավանդակին⁴⁰⁸, հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած դերին, նշանակությանն ու հաղորդած խորհրդին: Հայաստանի անկախության գաղափարը Հ. Ասատրյանը մեծապես կապում է Հայկական բարձրավանդակի խորհրդի ուսումնասիրության հետ: Նա իրեն յուրահատուկ հարցադրումներով փորձում է ընթերցողին համոզել, որ անկախ Հայաստանի գրավականը նաև Հայկական բարձրավանդակի խոր ուսումնասիրությունն է⁴⁰⁹:

Տարագիր հայ փիլիսոփան կարծում է, որ մեր անկախության կորստի, ինչպես նաև այն վերանվաճելու դժվարությունների հիմնական պատճառը քաղաքական անմիաբանությունն է: Նրա բնորոշմամբ Հայաստանում ի սկզբանե տեղի չունեցավ «ցեղային ներդաշնակություն»: Մեր նախնիները հետապնդեցին տարբեր իդեալներ, «եւ հենց դրա շնորհիւ էլ հայոց մշակութային եւ քաղաքական «ես»-ը մնաց պառակտուած»⁴¹⁰: Փոքր-ինչ փիլիսոփայական, առասպելական նկարագրումներով ու բացատրություններով Հ. Ասատրյանը ներկայացնում է նաև իր ապրած ժամանակաշրջանը, երբ հայ ժողովրդի պառակտվածության պատճառով Հայաստանի անկախության գաղափարը միասնական քաղաքական օրակարգ չդարձավ: Սակայն հեղինակը կոչ է անում չհուսալքվել և զինվել համբերությամբ: «Նարեկացուց մի հազարամեակ յետոյ, «Ձախորդ օրեր»-ի հեղինակ Ջիանին՝ հայ ժողովրդի մտածող-աշուղը, կեանքի լաւատեսութեան հիմքը տեսնում է հենց նրանում, որ այս աշխարհում ոչինչ է կայուն, որ «փոփոխակի անցքեր շարունակ՝ կուգան ու կ'երթան»: Ուժապաշտ մարդ-էակի բարոյական երջանկության ըմբռնում է սա, ընդդէմ կայապաշտական կենսահայեցողութեան բարոյականի քարոզիչներին, որոնք կեանքի յոռետեսութեան հիմքը տեսնում են անցաւորութեան մէջ»,- գրում է Հ. Ասատրյանը⁴¹¹:

⁴⁰⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ստեփանյան Խ., Հայկական բարձրավանդակի խորհուրդը Հայկ Ասատրյանի մտքերում, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք. Պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (2011 թ., 6-8 նոյեմբերի, Ծաղկաձոր), Երևան, 2012, էջ 129-134:

⁴⁰⁹ Տե՛ս Ասատրեան Հ., Հայաստանի սահմանները, «Ցեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936, թիւ 1, էջ 3, 4:

⁴¹⁰ Ասատրեան Հ., Նախնական ծանոթութիւններ ցեղի մասին, «Ցեղ եւ Հայրենիք», 1936, թիւ 1, էջ 19:

⁴¹¹ Ասատրեան Հ., Հայկական ոգու ուժականութիւնը, «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1938, թիւ 3-4, էջ 24, 25:

Այստեղ նա քննադատում է նրանց, ովքեր հանուն տվյալ պահի բարեկեցության կոչ են անում հրաժարվել անկախության գաղափարից:

Հ. Ասատրյանը սուր և անողորք հարվածներ է հասցնում Հայաստանի անկախության գաղափարը հեգնողներին ու ծաղրողներին: Նրանք, ովքեր Մայիսի 28-ը համարում են «թուրքերու պարտադրած անկախութիւն», Հայկ Ասատրյանն անվանում է «օրգանապէս զրանենգ հրէշներ»⁴¹²: Մինչդեռ, ըստ նրա, Մայիսի 28-ի խորհուրդը մեզ պետք է մղի համահայկական և համահայաստանյան քաղաքական միության՝ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացման⁴¹³:

Հ. Ասատրյանը նույնպես Հայաստանի անկախության գաղափարի շուրջ ստեղծված բանավեճը որակում է որպես դաշնակցականություն-հակադաշնակցականություն պայքար: Հատկանշական է, որ լինելով արևմտահայ դաշնակցական՝ նա հակադաշնակցականության մեջ մեղադրում է հատկապես արևմտահայերին: Նրա կարծիքով հատվածամոլությունը կործանարար կարող է լինել ամբողջ ժողովրդի համար: Կարծում ենք, որ հատկապես անկախության համար մղվող պայքարում դա անթույլատրելի պետք է համարել:

Պաշտպանելով իր կուսակցության հետապնդած գաղափարը՝ Հ. Ասատրյանը գրում է, որ Դաշնակցության երազած «Միացյալ և Անկախ Հայաստանը» միայն հողի պահանջ չէ, այլ ազգային ուժերի համադրման, ցեղի ցրված զավակների համախմբման, հայության քաղաքական և հոգեբանական ամբողջացման տենչանք: Ըստ հեղինակի՝ դաշնակցականը Հայաստանը պատկերում է մեկ և ընդհանուր, հակադաշնակցականը Հայաստան ասելով հասկանում է մերթ միայն Տաճկահայաստան, մերթ միայն Կիլիկիա, մերթ էլ միայն Երևան⁴¹⁴:

Անկախության շուրջ միջկուսակցական բանավեճի հիմնական հարցն այն էր, որ դաշնակցականների պնդմամբ Խորհրդային Հայաստանն անկախ չէ: Նրանց

⁴¹² Հ. Ա., Յեղանենգ Շէյթանը. Խորհրդածություններ հակադաշնակցական ելոյթների մասին, Սոֆիա, 1933, էջ 33:

⁴¹³ Տե՛ս Հ. Ա., Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ յեղափոխութեան եւ Մայիս 28-ի մասին, Սոֆիա, 1933, էջ 32:

⁴¹⁴ Տե՛ս Հ. Ա., Յեղանենգ Շէյթանը... էջ 53:

հակառակորդները, մասնավորապես ռամկավարները ճգնում էին համոզել, որ, ընդհակառակը, Խորհրդային Հայաստանն անկախ պետություն է: Դաշնակցական գործիչ Արսեն Միքայելյանը «Հայրենիք»-ում պատասխանում է ռամկավար «Պայքար»-ի հոդվածագիր Տիգրան Պոյաճյանին: Ա. Միքայելյանը գրում է, որ Տ. Պոյաճյանի պատկերացումն անկախության վերաբերյալ թերի է: Նա փաստարկում է, որ Հայաստանը զրկված է արտաքին ինքնուրույն քաղաքականություն վարելու իրավունքից և պարտավոր է հետևելու Մոսկվայի ցուցումներին: «Հայաստանը, պ. Պոյաճեան, Սովիետ Ռուսիոյ հարաւային նահանգներէն մին է: Օրէնքները կը թելադրուին Մոսկուայէն, գաղտնի ուստիկանութիւնը ենթակայ է Մոսկուայի Չեկային եւ այլն»,- գրում է Ա. Միքայելյանը⁴¹⁵: Տիգրան Պոյաճյանն էլ իր հերթին պնդում է, որ Հայաստանը որոշ վերապահումներով անկախ պետություն է համարվում: Ըստ ռամկավար գործիչի՝ այդ վերապահումներից էին Հայաստանի իշխանությունների ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից զուրկ լինելը, խոսքի և մամուլի անազատությունը⁴¹⁶: Մեր կարծիքով այս վերապահումներն արդեն ենթադրում են անկախություն չունենալու իրողության մասին: Այլ բան է, որ Տ. Պոյաճյանը համոզված է, որ Հայաստանի նման փոքր երկրի համար «դառն զրկանք մը չէ արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունք չունենալը»⁴¹⁷:

Հակիրճ անդրադառնանք նաև դաշնակցական այլ գործիչների՝ Հայաստանի անկախության խնդրի հանդեպ ունեցած մոտեցումներին:

Ռ. Տեր-Մինասյանի կարծիքով Հայաստանն ազդեցիկ ուժ և իշխանություն կարող է լինել այն ժամանակ, երբ «ազատ է եւ անկախ»: Ըստ նրա՝ միայն անկախ Հայաստանն իրավունք ունի մտածելու «Տաճկահայաստանի ազատագրման վրայ»⁴¹⁸: Ռուբենը գտնում է, որ ոչ անկախ Հայաստանի նման ձգտումները որակվում են որպես ԽՍՀՄ-ի սահմանների ընդարձակման ձգտում: Իսկ շահագրգիռ պետությունները պետք է գերադասեն Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Անկախ Հայաստանի պարագայում, ըստ հեղինակի, մոտեցումը կարող է այլ լինել:

⁴¹⁵ «Հայրենիք», 1933, 24 օգոստոսի:

⁴¹⁶ «Պայքար», 1933, 31 օգոստոսի:

⁴¹⁷ Նույն տեղում:

⁴¹⁸ Ռուբեն, Վասպուրականը իբրև անկիւնաքար Միացեալ Հայաստանի, «Դրօշակ», 1926, թիւ 11-12, էջ 306:

Արշամ Խոնդկարյանը, համեմատություն անցկացնելով Խորհրդային Հայաստանում և Վրաստանում տեղի ունեցող շինարարական աշխատանքների միջև, փաստում է, որ Հայաստանում այն շատ ցածր մակարդակի վրա է: Պատճառն, ըստ հեղինակի, Խորհրդային Հայաստանի իշխանությունների տկարությունն է, ոչ ազատ լինելը: Իսկ «Հայրենիք»-ի խմբագրականն էլ Ա. Խոնդկարյանի այս հրապարակման վերաբերյալ նշում է, որ վրացիները ցույց են տալիս, որ պատրաստվում են անկախության, իսկ հայ բոլշևիկները՝ ոչ: «Ո՞ր հայ բոլշևիկն է բոլշևիկեան դիմակ հագած ազգային նպատակ հետապնդելու համար», - հռետորական հարց է տալիս խմբագիրը⁴¹⁹: Փաստորեն Սփյուռքում Հայաստանի անկախության վերականգնման համար կարևորվում են նաև հայ բոլշևիկների ազգայնական տրամադրությունները, ինչից վերջիններս ընդհանուր առմամբ, ցավոք, զուրկ էին:

Կարո Սասունին, անդրադառնալով անկախության տոնին, նշում է, որ այն. «կը դառնայ գեղեցիկ առիթ մը հայ ցրուած ժողովուրդը ազգային հաւաքական կեանքի կոչելու, իրարու միացնելու եւ քաղաքական ազատութեան ըմբռնումով տոգորելու, մէկ խօսքով, ի մի բերելու հայ ազգային քաղաքական մտածումը»⁴²⁰: Իսկապես, անկախության գաղափարը կարող էր հանդիսանալ այն կռվանը, որի շուրջ պետք է համախմբվեին հայ տարագիր բոլոր հասարակական-քաղաքական ուժերը: Յավոք, հակառակն էր տեղի ունենում, երբեմն որպես միմյանց հակադրվելու պատճառաբանություն ներկայացվում էր նույն անկախության գաղափարի հանդեպ ունեցած վերաբերմունքը: Տարագիր գործիչը համոզված է, որ գործի հաջողության համար կարևոր են հավատը և դրան հավատացողների բանակ հավաքելը⁴²¹:

Հայ Գնդունին գրում է, որ անկախության գաղափարը դարերից և պատմությունից ժառանգած գերագույն իմաստություն է: Նա անզիջում կեցվածք է պարտադրում անկախության համար պայքարի գործում: Ըստ նրա՝ անկախության գաղափարը վառ պահելով՝ կարելի է «հետզհետե՛ եւ իրերու պողպատեայ հարկադրանքին տակ մեռցնելու

⁴¹⁹ «Հայրենիք», 1929, 10 յունուարի:

⁴²⁰ «Հայրենիք», 1929, 6 յունիսի:

⁴²¹ Տե՛ս «Յառաջ», 1932, 2 յունիսի:

նամկավարին ու պղտելիկին յետին քսութիւնն ու կարմիր քրքիջը»⁴²²: Ըստ էության առաջարկ է արվում անկախության հարցում որևէ զիջման չգնալ, համառորեն պայքարել այնքան, մինչև բոլոր հակառակորդները տեղի կտան:

Ալեքսանդր Դոնի ստորագրությամբ հայ հեղինակը Հայաստանի անկախության վերականգնման համար առանձնացնում է ուժերի երեք գործոն՝ «մենք, մեր անմիջական հարեւաններ եւ արտաքին աշխարհը»⁴²³: Հողվածագիրը կարծում է, որ նախ մենք պետք է համառ գտնվենք մեր անկախության վերանվաճման գործում: Անմիջական հարեւանների գործոնին անդրադառնալիս ուշադրության է առնում Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի թշնամական վերաբերմունքը դեպի մեր անկախությունը: Հեղինակն օտար ուժեր ասելով հատկապես կարևորում է ռուս-անգլիական հակամարտությունից և Թուրքիայի հանդեպ օտար ուժերի վերաբերմունքից օգտվելը⁴²⁴: Հեղինակը գտնում է, որ ինչպես բոլոր բռնապետությունները, Խորհրդային Միությունը ևս կործանվելու է, քանի որ դրան են ձգտում նրա հպատակ ժողովուրդները: Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդր Դոնին նույնպես կարևորել է գաղափարին հավատալն ու անմնացորդ նվիրվելը, իսկ գաղափարի իրականացման համար միշտ էլ կգտնվեն բարեպատեհ առիթներ ու հնարավորություններ:

Սիյուռքահայ դոկտոր Ն. Թաշճյանն էլ գրում է. «Ինչպես անկախութեան համար պայքարիլը, այնպես ալ անկախութեան գաղափարին աւանդապահ ըլլալ շնորհուած է միայն անկախութեան արժէքն ըմբռնող ընտրեալներուն»⁴²⁵: Հայ գիտնականը փորձում է հասկացնել, որ ոչ բոլորը կմիանան անկախության համար պայքարին: Իսկ դա պետք է, որ հուսախաբ չանի պայքարի մասնակիցներին: Անկախության համար պայքարը համարելով միայն ընտրյալների պայքար՝ հեղինակը փաստացի ավելի է ազնվացնում և վեհացնում նույն պայքարի էությունը:

⁴²² «Հայրենիք», 1928, 14 յուլիսի:

⁴²³ «Հայրենիք», 1929, 19 սեպտեմբերի:

⁴²⁴ Տե՛ս «Հայրենիք», 1929, 19 սեպտեմբերի:

⁴²⁵ «Հայրենիք», 1936, 28 մայիսի:

Օնիկ Մխիթարյանն իր մեծածավալ հոդվածաշարում («Ապագայ Ռուսաստանի կնճիռները») ⁴²⁶ անդրադառնում է ռուս քաղաքական տարագրության մեջ տեղի ունեցող քննարկումներին, որոնք վերաբերում էին իրենց պատկերացրած ապագա Ռուսաստանին: Հայ գործիչը մտահոգություն է հայտնում, որ Հայաստանի անկախության գաղափարը չի համընկնում ռուս տարագիրների ծրագրերի հետ⁴²⁷: Օ. Մխիթարյանն ընդգծում է այն պարագան, որ ռուս հայտնի տարագիրներից մեկը անջատողական շարժումը լուրջ սպառնալիք է համարում Ռուսաստանի համար⁴²⁸:

Հոդվածներով են հանդես եկել նաև Հովակ Ստեփանյանը⁴²⁹, դոկտոր Ա. Գասպարյանը⁴³⁰, Վազգեն Շուշանյանը⁴³¹, Հ. Ամատունին⁴³², Լևոն Չորմիսյանը⁴³³, Լ. Նազարյանը⁴³⁴, Իրազեկը⁴³⁵:

Տարբեր առիթներով Հայաստանի անկախության վերաբերյալ զեկուցումներով, դասախոսություններով են հանդես գալիս Ավետիս Ահարոնյանը⁴³⁶, Համո Օհանջանյանը⁴³⁷, Նիկոլ Աղբալյանը⁴³⁸:

Այսպիսով, քննելով Խորհրդային Հայաստանի անկախության գաղափարի վերաբերյալ սփյուռքահայ դաշնակցական մտքի արտահայտած տեսակետները, կարելի է հանգել մի շարք եզրակացությունների:

Նախ՝ այն, որ Սփյուռքում հաստատված դաշնակցական գործիչներն ու պարբերականները, առաջնորդվելով կուսակցության հոչակած սկզբունքներով, Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմում Խորհրդային Հայաստանի ընդգրկվելը համարում

⁴²⁶ Տե՛ս «Յուսաբեր», 1931, 7, 8, 10, 14-17, 20 ապրիլի:

⁴²⁷ Տե՛ս «Յուսաբեր», 1931, 8 ապրիլի:

⁴²⁸ Տե՛ս «Յուսաբեր», 1931, 10 ապրիլի:

⁴²⁹ Տե՛ս «Յուսաբեր», 1928, 17, 18 հոկտեմբերի:

⁴³⁰ «Յուսաբեր», 1928, 19, 20 ապրիլի, 17 նոյեմբերի:

⁴³¹ «Յառաջ», 1926, 10 հոկտեմբերի:

⁴³² «Յառաջ», 1926, 24 մարտի:

⁴³³ «Յառաջ», 1936, 12, 30 յուլիսի, 18 օգոստոսի:

⁴³⁴ «Յուսաբեր», 1933, 27 մայիսի:

⁴³⁵ «Յուսաբեր», 1930, 31 մարտի:

⁴³⁶ Տե՛ս Ահարոնեան Ա., Հայաստանը (Ձեկոյցներ կայացրած դիանագիտական միջազգային կաճառին՝ Փարիզում), «Հայրենիք», 1933, դեկտեմբեր, էջ 69, «Յառաջ», 1928, 30 մայիսի, 1933, 2 յունիսի:

⁴³⁷ Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1923, 6 յուլիսի, «Յուսաբեր», 1924, 15 նոյեմբերի:

⁴³⁸ Տե՛ս «Հայրենիք», 1924, 29 յունիսի, 1925, 30 յունիսի, «Յուսաբեր», 1928, 2 յունիսի, 1931, 13 նոյեմբերի:

էին անկախության և ինքնուրույնության կորուստ: Ժամանակավորապես ընդունելով այդ իրողությունը և պահելով գաղափարական հակառակորդի իրենց կեցվածքը՝ նրանք կարևորում էին Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինումն ու հզորացումը: Տնտեսապես ուժեղ Խորհրդային Հայաստանն առավել հեշտությամբ կանցներ դեպի անկախություն տանող ճանապարհը:

Սփյուռքի դաշնակցական շրջանակներն իրենց գաղափարախոսական գործունեության առանցքը դարձրին Հայաստանի անկախության վերականգնման տեսլականը: Անկախ գոյություն ունեցող ուժերի իրական դասավորությունից և Հայաստանի անկախությունը վերականգնելու միջազգային աննպաստ իրավիճակից, ՀՅԴ-ի համար անկախությունը մնում էր գերագույն արժեք: Այդ գաղափարի շուրջ համախմբվում էր տարագիր հայությունը, որին սպառնում էր ձուլման վտանգը: Անկախ պետությունը վերականգնելու հույսով բազում հայորդիներ ոչ միայն համախմբվեցին, այլև կարևոր շարժառիթ ունեցան՝ հայ մնալու և իրենց սերունդներին հայ դաստիարակելու համար: Բազմաթիվ դաշնակցական գործիչներ տեսական լուրջ հիմնավորումներով ապացուցում էին, որ հայ ժողովրդի շարունակականությունը երաշխավորելու տեսակետից անկախ պետականությունն այլընտրանք չունի:

Անդրադառնանք Հայաստանի անկախության գաղափարի հանդեպ Հովհաննես Քաջազնունու մոտեցմանը: Տարագիր վարչապետը նույնպես կարևորում է, որ անկախ գոյություն ունեցող վարչակարգից Խորհրդային Հայաստանը և նրա մեջ ապրող ժողովուրդը լինի բոլորի հոգաձության առարկան⁴³⁹: Այնուհետև Հ. Քաջազնունին առաջարկում է հաշտվել Հայաստանի անկախ չլինելու մտքի հետ, քանի որ ուրիշ ելք չկա: Քաջազնունու համոզմամբ, եթե Հայաստանը դուրս գա ռուսական ուղեծրից, անմիջապես կհայտնվի թուրք-թաթարական գերիշխանության տակ, մեր ընտրությունը կամ Թուրքիան է, կամ Ռուսաստանը⁴⁴⁰: Ըստ էության Հ. Քաջազնունին Հայաստանի անկախությունը համարում է քաղաքական կողմնորոշման խնդիր, այնպես, ինչպես դա անում էր Ռուբեն Դարբինյանը: Եթե Ռ. Դարբինյանն ասում էր կամ անկախ, կամ Ռուսաստանի հետ, ապա

⁴³⁹ Տե՛ս Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 56:

⁴⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 64, 65:

Քաջազնունին բացառում է անկախ լինելու հանգամանքը և ընտրությունը թողնում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Մեր կարծիքով Քաջազնունու այս մոտեցումը պետք է դիտարկել իր հայտնի զեկուցման ընդհանուր համատեքստում: Ճիշտ է, քաղաքական իրավիճակը ժողովրդի ֆիզիկական անվտանգության առումով պահանջում էր լինել Խորհրդային Ռուսաստանի ճամբարում, սակայն անկախության խնդիրը պետք էր օրակարգի վրա պահել: Քաջազնունին առաջնորդվում է խիստ գործնապաշտության սկզբունքով և առաջարկում է լուծել միայն այդ պահի խնդիրը: «Չը գիտեմ, ինչ է լինելու վաղը, բայց այսօր Ռուսաստանի տէրը՝ բոլշեիկներն են: Այսօր Ռուսաստանի բարեացակամութիւնն ու պաշտպանութիւնը ունենալու համար, Հայաստան ինքը խորհրդային պիտի լինի», - գրում է նա⁴⁴¹: Քաջազնունու այս տեսակետներին անսալու կոչ է անում «Հայաստանի կոչնակի» խմբագիրը⁴⁴²:

Հ. Քաջազնունին, անկախությունը համարելով «շատ առողջ, առաջադիմական, կենսունակ ու կենսատու գաղափար», կարծում է, որ Խորհրդային Հայաստանով «**արդէն իսկ իրականացած է խոշոր չափերով**»⁴⁴³ (ընդգծումը հեղինակինն է – Խ. Ս.): Նա առաջարկում է բառախաղ չանել, չբացարձակացնել անկախության գաղափարը, որովհետև նրա կարծիքով այդ գաղափարի բացարձակացումը խելագարություն կլինի, որովհետև Հայաստանի անկախությունն ականայից սահմանափակ է լինելու: Հ. Քաջազնունին մեկ այլ հետաքրքիր պնդում էլ է անում: Նա նշում է, որ բոլշեիկները ոչ թե մեր հայրենիքը զրկեցին անկախությունից և այն կապեցին Ռուսաստանի հետ, այլ հակառակը, կապելով մեզ Ռուսաստանի հետ՝ նրանք ապահովեցին անկախության այն ձևն ու չափը, որոնք միակ հնարավորն էին այդ պահին⁴⁴⁴:

Փորձելով պատասխանել Հ. Քաջազնունու վերոնշյալ մտքերին՝ Ռ. Դարբինյանը գրում է. «Անկախութիւնը, ինչպէս եւ ազատութիւնը, այո, անսահման ու բացարձակապէս անպայման գաղափար չէ եւ կրնայ ունենալ նաեւ իր ոչ ամբողջական ձեւերը: Բայց յամենայն դէպս ան ունի շատ որոշ եւ շատ հիմնական յատկանիշներ, առանց որոնց

⁴⁴¹ Նույն տեղում, էջ 65:

⁴⁴² Տե՛ս «Հայաստանի կոչնակ», Բոստոն, 1925, 18 ապրիլի, էջ 483:

⁴⁴³ Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 100, 101:

⁴⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 101:

անկախությունը կը դադրի անկախություն լինելէ եւ կը դառնայ իրեն հակառակ բան մը, ինչպէս եւ ազատութեան գաղափարը: Անկախութեան համար, որ աստիճանի եւ ձեւի ալ լինի ան, էական է օտար ոյժի մը անմիջական բռնակալութենէն զերծ լինելու պայմանը գէթ կառավարուելու մէջ»⁴⁴⁵: Ռ. Դարբինյանը, խոսելով անկախության սահմանափակումների մասին, պնդում է, որ խորհրդային իշխանության սահմանափակումները ոչնչացրել են անկախության էությունն ամբողջությամբ՝ «թողնելով միայն դատարկ ու անբովանդակ անուն մը»⁴⁴⁶:

Անկախության խնդրին Հ. Քաջազնունին անդրադառնում է նաև իր նախկին կուսակցական ընկերոջը գրած նամակում, որտեղ կարևորում է Խորհրդային Հայաստանի ընդգրկվելը ԽՍՀՄ-ի կազմում: Նրա կարծիքով Հայաստանն ինքն է հենարան կամ դաշնակից փնտրում: Անդրկովկասի հանրապետությունների՝ ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելու առավելության հարցը Հ. Քաջազնունին դիտարկում է նաև համեմատության մեջ: Նա համոզված է, որ եթե Անդրկովկասի ժողովուրդներն իրենք ընտրություն կատարեն Ռուսաստանի և Թուրքիայի միջև, ապա Հայաստանի ժողովուրդը մեծամասնաբար կընտրի Ռուսաստանին⁴⁴⁷: Զարգացնելով իր այս միտքը՝ Հ. Քաջազնունին իրավացիորեն պնդում է, որ Ռուսաստանի արգելքն է միայն զսպում Թուրքիային մտնել Անդրկովկաս⁴⁴⁸: Արևմուտքում դաշնակիցներ չունենալու պայմաններում Հ. Քաջազնունին կարևորում է «Ռուսաստանի բարեկամությունը եւ դաշնակցությունը Ռուսաստանի հետ»⁴⁴⁹:

Այսպիսով, Հովհաննես Քաջազնունին համոզված է, որ Խորհրդային Հայաստանի անկախության խնդիրը բարձրացնելն այդ պահին ժամանակավրեպ է, իսկ Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմի մեջ լինելը բխում էր հայ ժողովրդի շահերից: Ըստ նրա՝ ստեղծված պայմաններում երկրի և ժողովրդի անվտանգության շահի գիտակցումն այլընտրանք չի թողնում: Հ. Քաջազնունու մտահոգությունները տեղին էին: Եվ չնայած այն հանգամանքին, որ Արշակ Զամայանի կարծիքով նա երբեմն «կանխակալ

⁴⁴⁵ Դարբինեան Ռ., Մեր պատասխանը Քաջազնունիի, Պոսթըն, 1923, էջ 86:

⁴⁴⁶ Նույն տեղում, էջ 87:

⁴⁴⁷ Տե՛ս Քաջազնունի Յ., Ռուսաստան՝ թէ Թուրքիա. Բաց նամակ Z-ին, Պուրեթ, 1924, էջ 16:

⁴⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

⁴⁴⁹ Նույն տեղում, էջ 30:

«եզրակացութիւնների» համար փաստեր է դասաւորում եւ տրամաբանական սիլոգիզմներ (հաւաքաբանութիւն) կազմում»⁴⁵⁰, Հ. Քաջազնունու մոտեցումները պետք է ընդունել որպէս հայրենանվեր պետական գործչին վայել անկեղծ դիտարկումներ:

Բացի Հ. Քաջազնունուց, Սփյուռքի մի շարք նախկին դաշնակցականներ ևս իրենց տեսակետներն են հայտնել Խորհրդային Հայաստանի կարգավիճակի մասին: Նրանցից Հովհաննես Հակոբյանը կարծում է, որ «Խորհրդային Միութենէն դուրս Հայաստանը պարզապէս շնչահեղձ պիտի ըլլայ»⁴⁵¹: Նախկին դաշնակցական Ս. Բաղդասարյանը, որ գործում էր Թեհրանում, նույնպէս կարևորում է Խ. Հայաստանի մտնելը Անդրդաշնութեան և ԽՍՀՄ-ի կազմի մեջ⁴⁵²: Առավել հայտնի գործիչ Գրիգոր Չալխուշյանն էլ իր հերթին գրում է. «... միայն Ռուսաստանի գրկին մէջ մենք հնար ունինք ապահով բազմանալ, զարգանալ եւ բարօրութեան հասնիլ»⁴⁵³: Ավելին, ըստ նրա, Անդրդաշնութունը մի երազ էր, որի շնորհիվ կարգավորվեցին երկրամասում առկա ազգամիջյան լարված հարաբերությունները⁴⁵⁴: Ի դեպ, Գ. Չալխուշյանի գրքին անդրադառնում և Խորհրդային Հայաստանի «կապակցութիւնը Մեծ Ռուսաստանի հետ» կարևորում է Բոստոնի «Հայաստանի կոչնակ» պարբերականը⁴⁵⁵: Ինչպէս տեսնում ենք, Սփյուռքում հաստատված նախկին դաշնակցական մի շարք գործիչներ, անդրադառնալով անկախութեան խնդրին, ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք են ցուցաբերել Խորհրդային Հայաստանի՝ ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկվելուն: Սա կարող էր այդ գործիչների համար միաժամանակ լինել և՛ սեփական քաղաքական համոզմունք, և՛ Դաշնակցութեանը հակադրվելու դրսևորում:

Հայաստանի անկախութեան գաղափարը բոլորովին հակառակ մեկնաբանությունների արժանացավ Ռամկավար-ազատական կուսակցութեան կողմից: Այս կուսակցութեան ընդհանուր պատգամավորական և շրջանային ժողովները

⁴⁵⁰ Զամալեան Ա., Յ. Քաջազնունին եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, «Հայրենիք», 1924, յունուար, էջ 55:

⁴⁵¹ Յակոբեան Յ., Խորհրդային Հայաստան (տպաւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ), Բարիզ, 1929, էջ 48:

⁴⁵² Տե՛ս Բաղդասարեան Ս., Խորհրդային Հայաստան, պրակ առաջին, էջ 16:

⁴⁵³ Չալխուշեան Գ., Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Պոլսքէջ, 1923, էջ 39:

⁴⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵⁵ «Հայաստանի կոչնակ», 1923, 25 օգոստոսի:

հաստատական են մնում խորհրդային կողմնորոշմանը՝ գտնելով, որ Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքը պետք է ընդունել Ռուսաստանը, ինչպիսի պետական ռեժիմ էլ այնտեղ գործելիս լինի⁴⁵⁶: Ամերիկաբնակ պատմաբան Մանուկ Ճիզմեճյանը գրում է, որ տարագիր հայությանը դեպի Խորհրդային Հայաստան տրամադրելու «առողջ գաղափարին յառաջապահը կը հանդիսանայ այսօր Ռամկավար-Ազատական Կուսակցութիւնը»⁴⁵⁷:

ՌԱԿ առաջին ընդհանուր պատգամավորական ժողովը, որը տեղի ունեցավ 1922 թ. հունիսին, արտահայտել են խորհրդայնամետ դիրքորոշում⁴⁵⁸: Ժողովի ժամանակ ելույթ ունեցած պատմաբան Արշակ Սաֆրաստյանը նշել է, որ միայն խորհրդային կառավարությունը «տրուած պայմաններուն մէջ Հայաստանի ժողովուրդին ֆիզիքական գոյութիւնը կրնայ ապահովել»⁴⁵⁹:

2-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը բանաձև ընդունեց՝ «ճանչնալ Հայաստանի կառավարութիւնը»⁴⁶⁰: Բացի այդ կուսակցության համար ընդունելի էր «այն բնական հանգամանքը, որ Հայաստանի կառավարութիւնը կը դասէ Անդրկովկասեան եւ ընդհանուր Սովետական պետականութեան մէջ՝ նկատելով, որ սովետական երկիրներու հետ կապակցութիւնը եւ Արեւելքի բոլոր ժողովուրդներու հանդէպ խաղաղասիրական քաղաքականութեան հետապնդումը բնական հետեանքն է մեր աշխարհագրական դիրքին եւ տնտեսական ու քաղաքական պահանջներուն»⁴⁶¹: Իսկ ահա կուսակցության Եգիպտոսի Բ. շրջանային պատգամավորական ժողովը հայտարարում է, որ Հայաստանը պետք է ապավինի Ռուսաստանի աջակցությանը և դաշնակցի նրա հետ⁴⁶²: Ժողովը միաժամանակ քննադատում է նույն թվականին Վիեննայում տեղի ունեցած ՀՅԴաշնակցության խորհրդաժողովի բանաձևը, որը կոչ էր անում հետապնդել «Անկախ

⁴⁵⁶ Տե՛ս Դավաթյան Կ., Ա. Չոպանյանը և հայոց քաղաքական կողմնորոշման հարցերը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1996, թիվ 1-2, էջ 54, 55:

⁴⁵⁷ Ճիզմեճյան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնո, 1930, էջ 552:

⁴⁵⁸ Տե՛ս Դավաթյան Կ., Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, Երևան, 1999, էջ 62-66:

⁴⁵⁹ Նույն տեղում, էջ 31:

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 83:

⁴⁶¹ «Պայքար», 1924, 3 մարտի:

⁴⁶² Տե՛ս «Արեւ», 1923, 15 մայիսի:

եւ Միացեալ Հայաստանի քաղաքականութիւնը»⁴⁶³: Ըստ ռամկավարների՝ այս վերջինը վտանգավոր կարող էր լինել հայ ժողովրդի համար:

Եգիպտոսի մեկ այլ շրջանային պատգամավորական ժողովի ժամանակ հետևյալն է ասվում. «Հայաստան, ինչ ալ որ ըլլան վերապահութիւնները հոն տիրող ընկերային եւ տնտեսական կարգերուն մասին հայ ներկայ իրականութեան մէջ խանդավառող եւ թանկագին իրողութիւն մըն է: Ասիկա միակ պետական կռուանն է, ոչ միայն ներկայ փրկարար դեր մը կը կատարէ հայ ցեղին կարելորագոյն զանգուածին ֆիզիքական գոյութիւնը ապահովելու տեսակէտով, այլեւ կրնայ յառաջիկային, երբ պայմանները ներեն, առանց նոր արինահեղութեանց՝ տէր դարձնել հայ ազգը իր պատմական անժխտելի իրաւունքներուն»⁴⁶⁴:

ՌԱԿ 4-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը (1929 թ. հուլիս) վերահաստատեց այն որոշումը, որ «կընդունի հայ ազգային պետականության համար ռուսական օրիանթասիոն, կուսակցութեանս հիմնական նպատակներէն առաջինը կը նկատէ օժանդակել Խորհրդային Հայաստանի զարգացման եւ բարգաւաճման, Ռուսիոյ հետ ֆէտէրատիֆ կապերով կապուած ազգերու միութեան մէջ»⁴⁶⁵: Կուսակցությունը հայտարարում է, որ Խորհրդային Միության կազմում լինելը Հայաստանի անվտանգության միակ երաշխիքն է և բավարարվում է միայն Խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ բարյացակամ քննադատությամբ⁴⁶⁶: Իսկ կուսակցության 5-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը (1931 թ. սեպտեմբեր) որոշում է պահպանել իր դրական վերաբերմունքը դեպի Խորհրդային Հայաստանը, քանի որ Խորհրդային Միության պայմաններում Հայաստանը տնտեսական և մշակութային վերելք է ապրում⁴⁶⁷:

ՌԱԿ Ամերիկայի հերթական շրջանային պատգամավորական ժողովը, որը տեղի ունեցավ 1931 թ. սեպտեմբերին, կրկին հաստատեց կուսակցության այն համոզումը որ «հայ ժողովուրդին խաղաղ աճումն ու զարգացումը եւ ապահովութիւնը երաշխատուած

⁴⁶³ Դալլաքյան Կ., Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, էջ 74:

⁴⁶⁴ «Արեւ», 1931, 7 յուլիսի:

⁴⁶⁵ «Ապագայ», 1929, 5 հոկտեմբերի:

⁴⁶⁶ Տե՛ս նոյն տեղում:

⁴⁶⁷ Տե՛ս «Արեւ», 1931, 24 սեպտեմբերի, հմմտ. «Պայքար», 1931, 27 սեպտեմբերի:

են Անդրկովկասեան Հանրապետութեան եւ Խորհրդային Միութեան հետ իր քաղաքական կապակցութիւններով»⁴⁶⁸:

ՌԱԿ ժողովներում Հայաստանի անկախության դեմ և Խորհրդային Ռուսաստանի հովանավորությանը սատարելու կողմ արտահայտվելու հիմնական պատճառաբանությունները ֆիզիկական անվտանգության երաշխիքն էին: Հայաստանի աշխարհագրական բարդ դիրքով պայմանավորված՝ ռամկավարները գտնում էին, որ պետք է հրաժարվել անկախություն երազելուց, երկրի պաշտպանությունը վստահել Խորհրդային Ռուսաստանին, փոխարենը մեր ներուժը կենտրոնացնել երկրի տնտեսական կրթամշակութային զարգացման վրա⁴⁶⁹:

Ինդիրն այնքան էր խորացել, որ ՌԱԿ քարոզամիջոցները հաճախ էին դեմ արտահայտվում նույնիսկ Մայիսի 28-ի տոնակատարությանը: Ռամկավար պաշտոնաթերթերից Բոստոնի «Պայքար»-ը, խոսելով այդ օրվա մասին, գրում է, որ այն «անկախութեան տօն մը չէ, այլ սխալ ու մոլորեցնող մեկնութիւնն է պատմական իրողութեան մը եւ վտանգաւոր նշանացոյց մը՝ ապագայ քաղաքական ուղղութեան մը, որուն կը կապէ ինքզինք այդ կուսակցութիւնը»⁴⁷⁰: Ըստ էության կուսակցական ատելությունից կուրացած պարբերականը չի ընդունում Հայաստանի անկախության տոնը: Թերթի կարծիքով Մայիսի 28-ի տոնակատարությունը ոչ թե անկախության գաղափարի փառաբանություն է, այլ Հայաստանը գերեզմանի դուռ տանելու արկածախնդրություն⁴⁷¹: Պարբերականը գիտակցաբար է ընկել մոլորության մեջ՝ փաստացի անարգելով մեր ազգային ինքնությունը խորհրդանշող տարրերից մեկը՝ Անկախության օրը:

Ռամկավար գործիչները Խորհրդային Հայաստանի կարգավիճակի և Անդրդաշնության ու ԽՍՀՄ-ի կազմում մնալու վերաբերյալ իրենց մոտեցումները հիմնավորելու համար փորձեցին այցելություններով ծանոթանալ Հայաստանին: Առաջին

⁴⁶⁸ «Պայքար», 1931, 16 սեպտեմբերի:

⁴⁶⁹ Տե՛ս «Արեւ», 1923, 15 մայիսի, 1931, 7 յուլիսի, 24 սեպտեմբերի, «Ապագայ», 1924, 23 փետրուարի, 1938, 1 յունուարի:

⁴⁷⁰ «Պայքար», 1928, 18 օգոստոսի:

⁴⁷¹ Տե՛ս նույն տեղում:

այցելուներից մեկը եղավ Արտակ Դարբինյանը, ով 1922 թ. եկավ Հայաստան և առաջին շփումը հաստատեց Հայաստանի ղեկավարների հետ, նրան հաջորդեցին ռամկավար այլ գործիչներ՝ Ավետիս Թերզիբաշյան, Միքայել Պապաջանյան, Հրաչ Երվանդ և ուրիշներ⁴⁷²:

Փարիզաբնակ ռամկավար գործիչ Հովհաննես Պողոսյանն առաջիններից մեկն էր, ով որպես լրագրող՝ 1930 թ. այցելել է Խորհրդային Հայաստան, երկու ամիս շրջել է Հայաստանում և Սփյուռք վերադառնալուց հետո իր տպավորությունների մասին գրել է «Պայքար» թերթում, որոնք 1931 թ. հրատարակվել են առանձին գրքով⁴⁷³:

Ռամկավար գործիչներից Հրաչ Երվանդը, խոսելով Դաշնակցության կողմից առաջ քաշվող անկախության գաղափարի մասին, այն անվանում է «կեղծ անկախասիրություն» և ասում. «Ռամկավար ազատական կուսակցութիւնը իր վճռական ու յստակ ոչը արտասանած է այդ կեղծիքին դէմ եւ իր բոլոր ուժերովը պիտի պայքարի, պիտի աշխատի որ այս ժողովուրդին մէջ մշակուի իրական ու անկեղծ անկախասիրութիւն»⁴⁷⁴: Յավոք, ականավոր գործիչը չի մանրամասնում, թե ինչ նկատի ունի: Մեր կարծիքով սա պարզապես քարոզչական հնարք է՝ հերթական անգամ Դաշնակցությանը քարկոծելու համար:

Հ. Երվանդը, համեմատելով անգլիական և ֆրանսիական հովանավորության պայմաններում Սիրիայի, Պաղեստինի և Միջագետքի կարգավիճակը Խորհրդային Հայաստանի կարգավիճակի հետ, եզրակացնում է, որ որևէ տարակուսանք պետք չէ ունենալ հայկական պետականության հանդեպ⁴⁷⁵: Ըստ էության հեղինակը հետաքրքիր համեմատություններով կրկին փորձում է ապացուցել իր թեզի ճշմարտացիությունը, որն ինչ-որ առումով արդարացված է: Սակայն փաստ է, որ Հայաստանը պետականություն ուներ նաև մինչև Խորհրդայնացումը, ինչի մասին լռում է Հ. Երվանդը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Հ. Երվանդի համոզմամբ Խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ ունեցած վերաբերմունքի սկզբունքային տարբերությամբ է պայմանավորված ՌԱԿ-ի և Դաշնակցության համագործակցության

⁴⁷² Տե՛ս Պողոսեան Յ., Մեր դերը: Ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ, Պոստոն, 1965, էջ 11:

⁴⁷³ Տե՛ս Պողոսեան Յ., Երկու ամիս Հայաստանի մէջ, Պոստոն, 1931, 499 էջ:

⁴⁷⁴ «Ապագայ», 1933, 4 նոյեմբերի:

⁴⁷⁵ Տե՛ս Երուանդ Հ., Ռամկավար Ազատական կուսակցութիւն. Իր այսօրը եւ վաղը, Պօսթըն, 1927, էջ 21:

անհնարինությունը⁴⁷⁶: Այս առումով հետաքրքիր է այն փաստը, որ 1926 թ. Փարիզում տեղի ունեցած ՌԱԿ Գ. ընդհանուր պատգամավորական ժողովը որոշում է, հաշվի առնելով հնչակյանների բարեկամական վերաբերմունքը խորհրդային Հայաստանի հանդեպ, համագործակցել հնչակյանների հետ⁴⁷⁷:

Ռամկավար մեկ այլ գործիչ՝ Արշակ Չոպանյանը, մեծագույն հարգանք վայելելով սփյուռքահայ մտավորականության շրջանում, ամեն առիթով ողջունում է խորհրդային Հայաստանի կարգավիճակը: Խոսելով հայ ժողովրդի սուվար մեծամասնության անունից, որի իրավասությունը նա չուներ, Ա. Չոպանյանը հայկական պետության միակ պաշտպան համարում է Ռուսաստանին⁴⁷⁸: Ինչպես երևում է եգիպտահայ մտավորական Միքայել Կյուրճյանին գրած նամակից, Ռուսաստանի զորության վրա հենվելու հարցում Ա. Չոպանյանի սկզբունքային դիրքորոշումը չի պայմանավորվում Ռուսաստանում տիրող վարչակարգով⁴⁷⁹:

«Նոր Ռուսիան, որ աշխարհիս մեծագոյն ուժերէն մէկն է ներկայ շրջանին, եւ որ վաղը պիտի ըլլայ աւելի եւս մեծ, կազմակերպուած ու հարաճուն ոյժ մը, իր (իմա՝ Հայաստանի) դաշնակիցն ու պաշտպանն է, եւ հայկական քաղաքականութեան հիմնական անխախտ գիծը պէտք է ըլլայ այլեւս հայ տերութեան միշտ դաշնակից ու պաշտպան ունենալ այդ մեծ զորութիւնը... Հայաստանը դաշնակցական ամուր կապերով պէտք է կապուի Ռուսիոյ հետ...», - ընդարձակ հոդվածաշարում գրում է Ա. Չոպանյանը⁴⁸⁰: Սփյուռքահայ մտավորականը գրում է, որ երբեք չի ասել, թե խորհրդային համակարգը կատարյալ է, թե այն համապատասխանում է ռամկավար-ազատականների սկզբունքներին: Սակայն նրա կարծիքով, դրանով հանդերձ, խորհրդային համակարգն ապահովում է հայ ժողովրդի խաղաղությունն ու անվտանգությունը, և դրա համար այն պէտք է գերադասելի համարել⁴⁸¹: Մեկ այլ առիթով Ա. Չոպանյանը կոչ է անում անկախ

⁴⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 27:

⁴⁷⁷ Տե՛ս Ղազարեան Վ., Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրոս, տպարան Մշակ, 1978, էջ 65:

⁴⁷⁸ Տե՛ս Չօպանեան Ա., Հայ ազգը «մեղաւոր» չէ, Բարիզ, 1926, էջ 14:

⁴⁷⁹ Տե՛ս Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, 1987, էջ 366, հմմտ. ԳԱԹ, գ. 15:

⁴⁸⁰ «Պայքար», 1927, 4 փետրուարի:

⁴⁸¹ Տե՛ս «Պայքար», 1927, 10 փետրուարի:

Հայաստանի «անիրականանալի ցնորքին պատճառով» չիրաժարվել Խորհրդային Ռուսաստանի հովանավորությունից⁴⁸²: Մեր կարծիքով Ա. Չոպանյանի նման հարգանք վայելող մտավորականն իրավունք չուներ Հայաստանի անկախությունը «անիրականանալի ցնորք» անվանելու: Ճիշտ է, հայ ժողովրդի անվտանգության մտահոգությունից ելնելով, նա շատ էր կարևորում Հայաստանի խորհրդայնացումը: Այդուհանդերձ հավերժ է անկախության ձգտումը, որով օժտված են բոլոր ժողովուրդները, իսկ հայ ժողովուրդն իր կարկառուն մտավորականի քարոզչությամբ այդ «երազից» պիտի չիրաժարվեր:

Ռամկավար մեկ այլ գործիչ՝ Լևոն Մկրտչյանը, խոսելով Հայաստանի անկախության խնդրի մասին, փորձում է բացատրել, որ Հայաստանի անկախությունը հավասարազոր է Ռուսաստանի անկախությանը⁴⁸³: Ապա ճգնում է համոզել, որ ազգերի ինքնորոշման իրավունքը միայն պատմական բացատրություն է դարձել, և փոքր ժողովուրդներն ակամայից ենթակա են հզորների կամքին: Սրանից հետո Լ. Մկրտչյանը գրում է. «... այս անողոք իրականության հանդեպ ընդունինք, որ արդի Հայաստանի յարաբերական անկախութիւնը չափազանց մխիթարական երեւոյթ մըն է, մանաւանդ երբ նկատի ունենանք թէ այդ անկախութիւնը կրնայ ամէն խորշակներու դիմանալ եւ անվտանգ պահուիլ՝ շնորհիւ հզոր դրացիի մը Խորհրդային Ռուսիոյ հովանավորութեան եւ պաշտպանութեան»⁴⁸⁴: Լ. Մկրտչյանը, որը հարգանք վայելող մտավորական գործիչ էր, իրավունք չուներ այսքան չափով նսեմացնելու անկախության գաղափարը:

Տպավորություն է ստեղծվում, որ Դաշնակցության և ՌԱԿ-ի հակասությունների հիմքում միայն կամ գլխավորապես Խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ ունեցած տարբեր դիրքորոշումն է, որն այնքան էլ այդպես չէ⁴⁸⁵: Այլապես եթե

⁴⁸² Տե՛ս «Պայքար», 1927, 1 մարտի:

⁴⁸³ Արեւ, 1923, 3 յուլիսի:

⁴⁸⁴ Տե՛ս «Արեւ», 1923, 5 յուլիսի:

⁴⁸⁵ Խորհրդահայ պատմագրությունը ևս պնդում է, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո «սփյուռքահայ հասարակական-քաղաքական հոսանքների և ուժերի միջև մղվող պայքարի հիմնական առանցքը, կարևոր հանգույցը դարձավ վերաբերմունքը դեպի մայր հայրենիքը» (տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985, էջ 58):

չիներ բուլճարը, այդ կուսակցությունները միմյանց չէին հակադրվելու: Խորհրդային Հայաստանի հանդեպ դիրքորոշման տարբերությունը պարզապես մի առիթ էր երկուստեք վեր հանելու այն խոր հակասությունները, որոնք, ցավոք, գոյություն ունեին սփյուռքահայ երկու ամենաազդեցիկ կուսակցությունների միջև: Իսկ հակասությունների հիմքում ընկած էին այդ կուսակցությունների ղեկավարների ընդհանուր քաղաքական, մշակութային ընկալումները, որոնք պայմանավորված էին նրանց՝ միմյանցից տարբերվող գերազանցապես արևելահայ կամ արևմտահայ իրականություններից դուրս գալու հանգամանքով:

Մեր կարծիքով խնդիրն այն է, որ ռամկավարները ՀՅԴ-ին նայեցին որպես մի կազմակերպության, որն արևելահայ քաղաքական մշակույթ էր ներկայացնում: 1920-1930-ական թվականների ՀՅԴ ղեկավարների գերակշիռ մասն արևելահայեր էին ոչ միայն ծնունդով, այլև իրենց ստացած կրթամշակութային դաստիարակությամբ: ՌԱԿ ղեկավարությունը, ընդհակառակը, միայն արևմտահայերից էր կազմված: Հատկապես ՌԱԿ կողմը՝ որպես բուրժուական դաս, ինչպես նաև որպես ցեղասպանություն տեսած ժողովրդի կորուստներ կրած հատվածի ներկայացուցիչներ, խեթ աչքով էր նայում ՀՅԴ արևելահայ ղեկավարներին: Կարծում ենք, որ այս խնդիրը հետագա բազմակողմանի քննարկման կարիք ունի:

Խորհրդային Հայաստանի անկախության խնդիրը բնականաբար քննարկեցին նաև ռամկավար-ազատական թերթերը:

Փարիզի ռամկավարների պաշտոնաթերթ «Ապագա»-ի էջերում Վահան Մալեգյանը, խոսելով ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելով Հայաստանի անկախության կորստի վերաբերյալ դաշնակցականների մտահոգության մասին, գրում է. «Այդ անկախութիւնը շատ արագ ապահովուած է անշուշտ Հայաստանի մաս կազմելովը Սովիետական Միութեան եւ Կովկասեան Հանրապետութեանց Դաշնակցութեան: Ատկէ արեւին ոչ միայն ծանրալուծ բեռ մըն է Հայաստանի համար, այլեւ վտանգ մը իր տեւականութեան եւ

ժողովուրդի գործունեության համար»⁴⁸⁶: Ռամկավար գործիչն այստեղ շփոթում է քաղաքական անկախությունը ֆիզիկական անվտանգության հետ:

Պաշտոնաթերթի խմբագրական հոդվածներից մեկում կարծիք է հայտնվում, որ նույնիսկ «գեղեցիկ իտեալի մը անունով «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի տարեդարձեր տօնելը» նշանակում է շեղվել իրատեսության ճանապարհից և ժողովրդին սին հույսերով փայփայել⁴⁸⁷:

Մի առիթով ռամկավար պարբերականի խմբագիրը նշում է, որ իրենց կուսակցությունն ընդունում է անկախության գաղափարը, սակայն այդ պահի դրությամբ դա անիրականանալի է համարում: «Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը ընդունելով հանդերձ թէ անկախութեան մէջ միայն ազգ մը կրնայ լիովին վայելել իր ազատութիւնը եւ ներդաշնակօրէն զարգացնել իր հոգեկան մտաւոր եւ տնտեսական ոյժերը, բայց ան դէմ է երազանքներուն անձնատուր ըլլալուն: ... Անկախութիւնը նպատակ չէ, այլ՝ միջոց ժողովուրդները բախտաւորցնելու համար: Այսօրուան պայմաններուն մէջ այժմու Հայաստանի ժողովուրդը չի կրնար իր մտածման առարկայ ընել Հայաստանի անկախութեան հարցը...», - ասված է թերթի առաջնորդող հոդվածում⁴⁸⁸: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես թերթն իր երկվության պատճառով փորձում է մոլորության մեջ գցել ընթերցողներին:

Նախորդ խմբագրականի շարունակության մեջ թերթը քաղաքական անհրաժեշտություն է համարում Հայաստանի «կապակցութիւնը» Խորհրդային Միության հետ և, դրանից ելնելով, անիմաստ և վտանգավոր է համարում այդ կապը խանգարելու ցանկացած ճիգ և միտք⁴⁸⁹: Այստեղ թերթն իր գաղափարախոսությանը հակասող խորհրդամետ դիրքորոշումն արդարացնելու և Հայաստանի անկախության գաղափարի դէմ խոսելու նպատակով գրում է գոյություն չունեցած ինչ-որ «ըմբոստության» մասին: Հայտնի է, որ հակառակորդ հռչակված Հ.Յ.Դաշնակցությունը բազմիցս է հայտարարել խորհրդային իշխանության դէմ միայն քաղաքական պայքար տանելու և ուժի

⁴⁸⁶ «Ապագայ», 1924, 27 դեկտեմբերի:

⁴⁸⁷ Տե՛ս «Ապագայ», 1929, 1 յունիսի:

⁴⁸⁸ «Ապագայ», 1931, 24 յունուարի:

⁴⁸⁹ Տե՛ս «Ապագայ», 1931, 28 յունուարի:

գործադրման բոլոր մեթոդները մերժելու մասին: Ընդ որում դաշնակցականների այս քայլը պայմանավորված էր ոչ միայն և ոչ այնքան ուժերի բացահայտ անհավասարությամբ, որքան սեփական ժողովրդին ավելորդ կորուստներից զերծ պահելու մտահոգությամբ: Մեր կարծիքով ռամկավար պարբերականը Դաշնակցությանը քարկոծելու համար անկախության գաղափարն այդքան չպետք է նսեմացներ:

Մերթընդմերթ ռամկավար-ազատականների փարիզյան պարբերականը նաև դրական է արտահայտվել անկախության գաղափարի և Մայիսի 28-ի մասին: Օրինակ՝ 1932 թ. մայիսի 28-ի խմբագրականում այդ օրը որակվում է որպես մեր ժամանակակից տարեգրության պատմական խոշորագույն թվական՝ Հայաստանի անկախության հռչակման օր⁴⁹⁰:

Սակայն երկու տարի անց թերթը շարունակում է քարկոծել Անկախության օրը. «Բայց ոմանք մայիս 28-ին կուտան արժեք մը, որ իրողութեան չի համապատասխաներ: Անոնք զանազան նկատումներով կը ջանան եղելութիւնները վերիվայր շրջել եւ մինչեւ անգամ մը կը պնդեն թէ այսօրուան Խորհ. Հայաստանը իր գոյութիւնը կը պարտի մայիս 28-ին: Ճշմարտութիւնը ճիշտ ատոր հակառակն է: Եթէ մենք չհարկադրուէինք ենթարկուիլ մայիս 28-ին, այսօր կունենայինք աւելի ընդարձակածաւալ Հայաստան, աւելի մեծ թիւով ժողովուրդ Հայաստանի հողին վրայ (եւ Անդրկովկասի մէջ) եւ աւելի զօրաւոր ծայնով հայկական խորհրդային կառավարութիւն մը Անդրկովկասի մէջ ու Մոսկուայի առջեւ»⁴⁹¹: Մի քանի օր անց «Ապագայ»-ի խմբագիրը Դաշնակցականների կողմից անկախության տարեդարձը նշելը որակում է որպես «դերասանական շարժում»⁴⁹²: Թերթը չի ուզում որևէ կապ տեսնել 1918 թ. մայիսյան հաղթանակների և անկախության հռչակման հետ: «Կա՛յ, գոնէ հիւլէի մը չափ ճշմարտութիւն իրենց կուսակցական այն սնապարծ խօսքերուն մէջ թէ «եռագոյն դրօշին տակ անկախ Հայաստան ստեղծելու համար կռուեցանք Սարդարապատի եւ Ղարաքիլիսէի առջեւ»⁴⁹³: Յավոք, թերթը չի պարզաբանում իր այս պնդումները, ինչպես նաև երկու տարի առաջ արտահայտած տեսակետին ճիշտ

⁴⁹⁰ Տե՛ս «Ապագայ», 1932, 28 մայիսի:

⁴⁹¹ «Ապագայ», 1934, 2 յունիսի:

⁴⁹² «Ապագայ», 1934, 12 յունիսի:

⁴⁹³ Նույն տեղում:

հակառակ տեսակետ արտահայտելը: Կարծում ենք՝ թերթի այս վերափոխումները պայմանավորված են խմբագրի և կուսակցության ղեկավարության կողմից ՀՅԴ ղեկավարության հետ ունեցած առօրեական հարաբերություններով:

Ընդհանուր առմամբ Հայաստանի անկախության գաղափարի վերաբերյալ «Ապագա»-ն իր տեսակետներով ու գնահատումներով չի տարբերվում Եգիպտոսի «Արև»-ից: Օրինակ՝ այս թերթը ՀՅԴ 1923 թ. արտասահմանյան մարմինների խորհրդաժողովի հայտարարության վերաբերյալ կասկածանք է հայտնում, թե ինչպես է Դաշնակցությունը վերանվաճելու Հայաստանի անկախությունը: «Արև»-ի խմբագիրը կարծում է, որ անկախության գաղափարի քարոզը Դաշնակցության կողմից արվում է միայն ժողովրդի ազգայնական զգացումները գրգռելու և այս կերպով «միամիտների» շարքերի համակրանքը շահելու համար: Թերթը թերահավատորեն է մոտենում անկախության պայմաններում հարևան բոլոր ժողովուրդների հետ համերաշխ ապրելու հավանականությանը⁴⁹⁴: Փաստորեն թերթն ակամայից խոստովանում է, որ Խորհրդային Միությունը շահագրգռված է Հայաստանի և հարևանների միջև լարված հարաբերություններով, որովհետև դրանց առկայության պայմաններում հայ իրականության մեջ որոշ խավեր կիրաժարվեն անկախության գաղափարից: Կարծում ենք սա հեռու չէ իրականությունից: Սակայն սրա մեղավորը ոչ թե անկախության ձգտող ուժերն են կամ անկախության գաղափարն ինքնին, այլ տարածաշրջանում թշնամությունը խրախուսող ուժերը:

Մի անգամ էլ Հայաստանի անկախության գաղափարը «Արև»-ն անվանում է «տիրացուական վերացական գաղափար»⁴⁹⁵: Թերթի համար գործնական քաղաքականության սահմաններում է Ռուսաստանի կողքին լինելը:

Թերթն անիմաստ է համարում անկախության մասին մտածելը, քանի որ «սկզբունքով Խորհրդային Հանրապետություններու Միութեան մաս կազմող իրաքանչիւր ազգը անկախ է, որովհետեւ ուզած պահին ազատ է բաժնուելու համադաշնակցութենէն եւ

⁴⁹⁴ Տե՛ս «Արեւ», 1923, 20 յունիսի:

⁴⁹⁵ «Արեւ», 1923, 16 յուլիսի:

անջատորէն տնօրինել իր ճակատագիրը եւ կամ ուրիշ խմբակցութեան միանալ»⁴⁹⁶: Հետո ավելացնում է, որ Հայաստանն ինքնուրույն չի կարող գոյատևել որպէս անկախ պետություն: Հայաստանն ունի այնքան անկախություն, որքան իրեն անհրաժեշտ է: Իսկ բացարձակ անկախություն գոյություն չունի, թերթը նաև փորձում է համոզել, որ «Հայաստան երբեք անկախ եղած չէ»⁴⁹⁷: Ինչպես տեսնում ենք, «Արեւ»-ը նույնպես հաճախ է հակասական մեկնաբանություններով հանդես գալիս, որի պատճառը ոչ այնքան նրանց տեսակետների փոփոխությունն է, որքան Դաշնակցության հետ ունեցած հարաբերությունների լարվածության աստիճանը:

Պետք է առանձնացնել նաև «Արեւ»-ի որոշ խմբագրականներ, որոնցում փորձ է արվում անկախության դեմ արտահայտվելու տեսակետը հիմնավորել: Օրինակ՝ մի դեպքում խոսվում է այն մասին, որ «ազգային անկախութեան իտէալին հետապնդելու համար պէտք է նկատի ունենալ այն իրական պայմանները, որոնք գոյութիւն ունին այսօր Հայաստանի համար»⁴⁹⁸: Թերթը դրա համար առաջարկում է աստիճանաբար մոտենալ և հասնել անկախության ձգտելու մակարդակին: Մեկ այլ դեպքում թերթը Հայաստանի անկախության չափանիշ համարում է երկրի տնտեսական զարգացածության մակարդակը⁴⁹⁹: Այս դեպքում մենք գործ ունենք որոշակի տրամաբանություն պարունակող փաստարկումների հետ: Սակայն, այնուամենայնիվ, անկախության գաղափարը սակարկության ենթարկել պետք չէ, անկախության ձգտել պետք է նաև շատ տկար վիճակում, առավել ևս, որ անկախության ձգտումը նոր շարժառիթ կհանդիսանա և եռանդ կհաղորդի՝ ուժեղանալու համար:

Հետաքրքիր է Հայաստանի Անկախության օրը չտոնելու «Արեւ»-ի մեկնաբանությունը: Քանի որ բացարձակ անկախությամբ բացարձակ վտանգի մեջ է հայտնվելու Հայաստանի բնակչությունը, նման ծանր վիճակի մեջ չհայտնվելու համար ոչ միայն պետք է գոհ մնալ տիրող կացությունից, այլև պետք է չպայքարել և ցուցադրական

⁴⁹⁶ «Արեւ», 1923, 20 սեպտեմբերի:

⁴⁹⁷ «Արեւ», 1924, 2 մայիսի:

⁴⁹⁸ «Արեւ», 1924, 9 յունիսի:

⁴⁹⁹ Տե՛ս «Արեւ», 1924, 13 նոյեմբերի:

ոչինչ չանել խորհրդային համակարգի դեմ⁵⁰⁰: Ռամկավար խմբագրի համոզմամբ նախընտրելի է միայն տեսականորեն բողոքել ապագային, ոչ ժողովրդավարական իշխանության դեմ, իսկ գործնականում պետք է ոչ միայն համակրել այդ իշխանություններին, այլև մայիսի 28-ի մեջ պարզ պատմական թվական տեսնելուց զատ ոչինչ չձեռնարկել: Անկախության տոնակատարությունը կարող էր թշնամական վերաբերմունքի արժանանալ Խորհրդային Միությունում:

Ինչպես տեսնում ենք, Եգիպտոսի ռամկավար պարբերականը, որը ներկայացնում էր ամբողջ ՌԱԿ-ի ամենաուժեղ կառույցը, իր կոչմանը ոչ հարիր վախվորածություն է ցուցաբերում անկախության խնդրի հանդեպ: Անկախության մասին չխոսելու իր դիրքորոշումն արդարացնելու համար թերթի խմբագիրն անիմաստ է համարում մայիսի 28-ին կորսված անկախության տոնը նշելը, հատկապես որ 1918 թ. մայիսի 28-ի հայտարարության մեջ անկախություն բառը չկա⁵⁰¹: Մեր խնդրից դուրս է անկախության մասին հայտարարության բովանդակությունը քննարկելը, սակայն կարծում ենք, որ թերթը հանրությանը չգոհացնող նոր պատճառներ է փնտրել՝ իրեն ծանր վիճակից դուրս բերելու համար:

Խորհրդային Հայաստանի անկախության գաղափարի հանդեպ ունեցած իր վերաբերմունքով ռամկավար-ազատական թերթերից չէր տարբերվում Բոստոնի «Պայքար»-ը:

Ամերիկայի ռամկավարների ամենաազդեցիկ թերթում կուսակցության հայտնի գործիչ Արտակ Դարբինյանը դեմ է արտահայտվում Խորհրդային Հայաստանի անկախությանը և գրում է, որ Հայաստանն, իր շահերից ելնելով, համաձայնվել է իր անկախ պետության սուվերեն իրավունքի մի մասը զիջել Խորհրդային Ռուսաստանին⁵⁰²: Տարօրինակ է Ա. Դարբինյանի այն համոզումը, թե մինչև համաշխարհային պատերազմը Կովկասյան Հայաստանն իբրև ծայրագավառ, զրկված էր նույնիսկ զեմստվոյական կամ տեղական-վարչական ինքնավարության ամենասահմանափակ իրավունքից անգամ, իսկ

⁵⁰⁰ Տե՛ս «Արեւ», 1928, 29 մայիսի:

⁵⁰¹ Տե՛ս «Արեւ», 1932, 8 յունիսի:

⁵⁰² Տե՛ս «Պայքար», 1925, 27 փետրոարի:

Խորհրդային Միության կազմում սուվերեն պետություն է⁵⁰³: Այստեղ հողվածագիրը «մոռանում» է, որ ցարական վարչակարգից հետո և Խորհրդային Միության կազմի մեջ ինքնավար իրավունքով մտնելուց առաջ Հայաստանն անկախ պետություն էր, որի անկախությունը վերացվեց նաև Խորհրդային Ռուսաստանի ջանքերով:

Առավել հետաքրքիր են «Պայքար»-ի խմբագրական հողվածները: Հետևելով Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին և դրանց արձագանքներին՝ ի սկզբանե հույս հայտնեց, որ Խորհրդային կարգերը բխում են Հայաստանի շահերից⁵⁰⁴:

Խորհրդային Հայաստանի կողմից սեփական արտաքին քաղաքականություն վարելու իրավունք չունենալը դրական է գնահատվում նաև «Պայքար»-ի խմբագրի (Արմենակ Նազար, Նազարեթյան) կողմից: Հայաստանի ձեռքից այդ իրավունքների խլումը դատապարտող դաշնակցականներին նա փորձում է համոզել, որ Հայաստանի ազատության երաշխավորը հենց Խորհրդային իշխանություններն են⁵⁰⁵:

«Պայքար»-ի խմբագրականներից մեկը համոզում է, որ որևէ փաստ չունեն, որը հերքում է Խորհրդային Հայաստանի ազգային քաղաքական ինքնուրույնությունը⁵⁰⁶: Թերթի խմբագիրը կարևորում է Խորհրդային Միության դերն Անդրկովկասում ազգամիջյան հակամարտությունները «մոռանալու» գործում: «Ամեն պարագայի տակ ուրախալի է, որ Անդրկովկասի վարիչներն ու Խորհրդային Միության Կեդրոնական Կառավարութիւնը արժանի կարեւորութիւնը կուտան այս կենսական խնդրոյն, որու յաջող ընթացքէն կախում ունի երեք հանրապետութիւններու, մասնաւորաբար Հայաստանի ապագայ բարօրութիւնն ու բարգաւաճումը», - գրում է թերթը⁵⁰⁷: Խորհրդային Միության «պետական դրութիւնն ու սահմանադրութիւնը», «Պայքար»-ի խմբագրի պնդմամբ, նպաստավոր պայմաններ են ստեղծել նրա մեջ մտնող բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ինքնուրույնության պահպանման համար⁵⁰⁸:

⁵⁰³ Տե՛ս նույն տեղում:

⁵⁰⁴ Տե՛ս «Պայքար», 1923, 27 օգոստոսի:

⁵⁰⁵ Տե՛ս «Պայքար», 1924, 13 յունիսի:

⁵⁰⁶ Տե՛ս «Պայքար», 1931, 25 յունուարի:

⁵⁰⁷ «Պայքար», 1931, 4 ապրիլի:

⁵⁰⁸ Տե՛ս «Պայքար», 1931, 7 յուլիս:

Ինչպես տեսնում ենք, ռամկավար պարբերականն արժևորում է Խորհրդային Հայաստանի կարգավիճակը և ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելու իրողությունը՝ այն համարելով հայ ժողովրդի երազանքների իրականացման լավագույն տարբերակ: Վերջում ավելացնենք, որ «Պայքարի» այս խորհրդամետ դիրքորոշումը ոչ համարժեք գնահատականի է արժանանում խորհրդային իշխանությունների կողմից: Ա. Մյասնիկյանը կասկածամտորեն հեզնում է, որ ռամկավարներին գոհացնում է Խորհրդային Հայաստանը, որովհետև այն նրանց «հույս է տալիս Մեծ Հայաստան դառնալու»⁵⁰⁹: Պարզ է, որ Ա. Մյասնիկյանը ծաղրում էր Մեծ Հայաստանի գաղափարը: Բոլշևիկ գործիչը, չհավատալով ռամկավարների անկեղծությանը, իր կասկածները հիմնավորում էր ռամկավարների հովանավորությամբ գործող ազգային պատվիրակության գոյությամբ: Նրա կարծիքով «մինչև վոր չլուծվի այդ ազգային պատվիրակությունը, մենք չենք դադարի նրան համարել անկոչ, դավաճանական, արկածախնդրական ու խաբեյական»⁵¹⁰:

Աթենքի ռամկավար-ազատական «Արարատ» օրաթերթի խմբագրականը դժգոհում է, որ մայիսի 28-ին Աթենքում Հայաստանի Անկախության օրն է նշվելու: Թերթն առանց տրամաբանական բացատրությունների փորձում է համոզել, որ սխալ էր 1918թ. մայիսի 28-ին անկախություն հռչակելը, և հետևաբար՝ իմաստ չկա այդ օրը տոնելու⁵¹¹: Մեր կարծիքով թերթի նման մոտեցումն առավելապես պայմանավորված էր Դաշնակցության հանդեպ որդեգրած մերժողական կեցվածքով: Նույն թերթը համոզված է, որ անկախությունն ավելորդ խնդիրներ է առաջ բերելու մեզ համար: Մինչդեռ «Խորհրդային Հայաստանի կառավարական ղեկավարները թողնելով Սովիետ Բուսիոյ կառավարութեան հարթել արտաքին բոլոր դժուարութիւններն ու կնճիռները, նուիրուած են հայրենիքի վերաշինութեան ու անոր տնտեսական հաւասարակշռութեան փափուկ

⁵⁰⁹ Մարտունի Ա., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 14:

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 27:

⁵¹¹ Տե՛ս «Արարատ», Աթենք, 1925, 19 մայիսի:

աշխատութեան»⁵¹²: Փաստորեն ինքնուրույն անկախ արտաքին քաղաքականություն վարելը ռամկավար պարբերականի համար ավելորդ դժվարություն է համարվում: Այդ պատճառով էլ Խորհրդային Հայաստանի իշխանությունները գովասանքի են արժանացել:

Ա. Ալպոյաճյանի խմբագրությամբ հրատարակվող Կահիրեի «Ազատ միտք» շաբաթաթերթը գրում է, որ Խորհրդային վարչակարգը, չնայած իր բացասական կողմերին, կարողացել է ապահովել «ցեղին ֆիզիքական գոյութիւնը այն աշխարհամասին մէջ, ուր դժբաղդաբար պարտաւորուած է ապրիլ Հայը իր դէմ ցեղային ատելութիւններով լեցուած ժողովուրդներու միջեւ»⁵¹³: Ըստ էության Ա. Ալպոյաճյանի թերթը նույնպես տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը գերադասում են անկախ ապրելուց: Իհարկէ, ցանկացած ժողովրդի հարատևության համար նաև անհրաժեշտ է ֆիզիկական անվտանգությունը: Սակայն միանշանակորեն այդ պատճառաբանությամբ հրաժարվել անկախության գաղափարից և սերունդներին այդ ոգով դաստիարակելն ընդունելի չէ: Ֆիզիկական անվտանգությունն ապահոված և ոչ անկախ ժողովուրդներն արդյունքում մի օր վերջ կդնեն իրենց պատմությանը:

«Սևան» թերթն առանց հիմքի գրում է, թե «հայ ժողովուրդի պետական օրկանիզմը եւ հաւաքական մեծամասնութիւնը դէմ է Միացեալ Անկախ Հայաստանի գաղափարին»⁵¹⁴:

Այսպիսով, սփյուռքում գործող ռամկավար-ազատական կուսակցության ամբողջ մտավոր ներուժը ոչ միայն իրատեսական չէր համարում Հայաստանի անկախությունը, այլև անհիմաստ էր գտնում այդ գաղափարի քննարկումը: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական այս հատվածն իր մոտեցումը հիմնավորում էր Հայաստանի ժողովրդի անվտանգության վերաբերյալ ունեցած մտահոգություններով: ՌԱԿ-ը կուսակցական ամենաբարձր մակարդակներով դրական էր տրամադրված Խորհրդային Հայաստանի կարգավիճակին: Կուսակցական գործիչներն ու թերթերը գտնում էին, որ դա նախևառաջ ապահովում է տնտեսապես և քաղաքականապես թույլ երկրի և ժողովրդի ֆիզիկական

⁵¹² «Արարատ», 1925, 27 յունուարի:

⁵¹³ «Ազատ միտք», Գահիրե, 1936, 22 օգոստոսի:

⁵¹⁴ «Սեւան», Աթէնք, 1933, 16 յուլիսի:

անվտանգությունը: Ի տարբերություն դաշնակցական կողմի տեսակետի՝ ռամկավարները համոզում էին, որ Խորհրդային Հայաստանը կամավոր է խորհրդայնացել՝ ավելի ուշ մտնելով խորհրդային դաշինքի մեջ: Միաժամանակ նրանք անիմաստ էին համարում կենտրոնական ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վրա՝ գտնելով, որ դա չի բխում ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ կենտրոնական իշխանությունների շահերից:

ՌԱԿ գործիչների և պարբերականների տեսակետով, ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելով, Հայաստանը ձերբազատվել է արտաքին քաղաքականություն վարելու «դժվարին» զբաղմունքից և այն «հանձնել» Մոսկվայի կենտրոնական իշխանություններին: Ընդհանուր առմամբ Ռամկավարների տեսակետներում արտահայտված էր միայն դրականը: Նրանք փորձում էին շրջանցել կամ չնկատել խորհրդային կայսրության մեջ Խորհրդային Հայաստանի բռնի ներառվելու բացասական կողմերը: Ռամկավար-ազատականները շրջանցում էին նաև խորհրդային վարչակարգի հետ ունեցած իրենց դավանած գաղափարախոսական հակասությունը: Ռամկավար գործիչները և թերթերը հայտարարում էին, որ ՌԱԿ-ՀՅԴ հակասությունների հիմնական առանցքը Խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ ունեցած տարբեր վերաբերմունքն է:

Հայաստանի անկախության գաղափարին բացասաբար էին վերաբերվում նաև հնչակյանները: Դեռևս 1921 թ. ապրիլին, երբ Երևանում իշխանությունը նոր էր Հայրենիքի փրկության կոմիտեից կրկին անցել բոլշևիկներին, Բոստոնի հնչակյան պարբերական «Հայաստանի կոչնակ»-ի թղթակից Կ. Թումանյանը Հայաստանի ապագա կարգավիճակի վերաբերյալ գրում է. «այժմու Հանրապետութիւնը (ՀՍԽՀ-ը – Խ. Ս.) թողուլ ռուսական սահմաններուն մէջ, մինչեւ որ քաղաքական նպաստաւոր պարագաներուն երեսան գալով, կամ գուցէ Ռուսիոյ հետ վերջնական համաձայնութիւն գոյացած ժամանակ անոր ալ հաճութեամբ այս երկու մասեր միացուին»⁵¹⁵: Ըստ էության հնչակյան գործիչը համակերպվել էր Հայաստանի անկախության կորստի հետ և ժամանակից շուտ Խորհրդային Հայաստանը պատկերացնում էր Ռուսաստանի կազմում:

⁵¹⁵ Թումանեան Կ., Ազգ. Քաղաքականութեան արդի հնարաւորութիւնները, «Հայաստանի կոչնակ», Բոստոն, 1921, 9 ապրիլ, թիւ 15, էջ 503:

1924 թ. վերջին տեղի ունեցած կուսակցության 8-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովի որոշումներում ասվում է, քանի որ «Խորհրդային Հայաստանը մեր կուսակցության 38 տարիներ է ի վեր հետապնդած նպատակի իրականացումն է, որ ան կը կազմէ գլխավոր կոուանը մեր բոլոր յոյսերուն, ցանկութիւններուն եւ առաջարկութիւններուն եւ իրական ու պաշտոնական ներկայացուցիչն է հայ աշխատատիրութեան հաւաքականութեանը, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը անվերապահօրէն կը կանգնի Խ. Հայաստանի կողքին, կը ջանայ ամէն միջոցով ու եղանակով սատարել անոր բարգաւաճումին ու վերաշինութեանը»⁵¹⁶: Խորհրդային Հայաստանի իշխանություններին աջակից լինելու ոգով որոշումներ ընդունեց նաև 1934 թ. օգոստոսին Մարսելում տեղի ունեցած կուսակցության 9-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը⁵¹⁷:

Ըստ էության Հնչակյան կուսակցությունն ամենաբարձր մակարդակով իր աջակցությունն է հայտնում Խորհրդային Հայաստանի իշխանությունների բռնած ուղուն:

«Հայաստանի կոչնակ»-ը, անդրադառնով ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված Ազատ եւ անկախ Հայաստանի բանաձևին, գրում է, որ կարևորը Հայաստանի վերաշինության խնդիրն է: Թերթը փորձում է համոզել, որ մեզ անկախություն պետք չէ, որովհետև, ըստ թերթի, «... մեր բազմադարեան անցեալին մէջ մի քանի կարճատեւ շրջաններէ դուրս, մենք դժբախտաբար չենք ունեցած Հայաստան մը, որ վայելած ըլլայ բացարձակ ազատութիւն եւ անկախութիւն»⁵¹⁸: Թերթը գրում է, որ Խորհրդային Ռուսաստանի հետ դաշինք կազմելը ոչ միայն աղետ չէ մեզ համար, այլև «ապահովութեան եւ փրկութեան երաշխիք է»⁵¹⁹: Մեկ այլ դեպքում «Հայաստանի կոչնակ»-

⁵¹⁶ «Արձագանք Փարիզի», 1925, 8 փետրուարի, հմմտ. «Սուրիական մամուլ», 1925, 25 փետրուարի, «Երիտասարդ Հայաստան», 1925, 25 փետրուարի, Յիսնամետակ Սօց. Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (1887-1937), Փրովիտէնս, 1938, էջ 331, 332, Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962) (խմբ.՝ Արսէն Կիտուր), Ա հատոր, Պէյրոս, 1962, էջ 516:

⁵¹⁷ Տե՛ս Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962) (խմբ.՝ Արսէն Կիտուր), Ա հատոր, էջ 522:

⁵¹⁸ «Հայաստանի կոչնակ», Բոստոն, 1925, 7 մարտ, թիւ 10, էջ 292:

⁵¹⁹ Նույն տեղում:

ը «Ազատ և Անկախ Հայաստան»-ն անվանում է «բանաստեղծական եւ հռետորական ֆռագ»⁵²⁰:

«Հայաստանի կոչնակ»-ի խմբագիրը, չհավատալով բոլշևիկյան վարդապետությանը, այնուամենայնիվ ընդունում է, որ հայ ժողովուրդը պետք է երախտապարտ լինի նրանց: «Հայաստանի ճակատագիրը կապուած է Ռուսիոյ հետ: Այս է հայութեան ուղղափառ դաւանանքը: Այն Հայր, որ տարբեր քաղաքականութիւն կը քարոզէ՝ իր ազգին եւ հայրենիքին դէմ դաւաճանած կ'ըլլայ, գիտակցաբար թե անգիտակցաբար: «Ազատ եւ անկախ Հայաստան»ի դատին անունով մղուած պայքարը անտեղի է, վտանգաւոր է, աղիտաբեր է»,- գրում է հնչակյան պաշտոնաթերթը⁵²¹:

Մեկ այլ դեպքում «Հայաստանի կոչնակ»-ի՝ Խ. Գուրյան ստորագրությամբ հոդվածագիրը կարծում է, որ Դաշնակցութիւնը հայ ժողովրդից իրավունք չի ստացել «Միացեալ եւ անկախ Հայաստանի պահանջով» սուր ճոճելու Թուրքիայի և Ռուսաստանի դէմ⁵²²: Տպավորութիւն է ստեղծվում, որ հնչակյան գործիչները Թուրքիային և Խորհրդային Ռուսաստանին պաշտպանում են Դաշնակցութիւնից:

Թերթը հայ ժողովրդի պարտականութիւնն է համարում հավատարիմ մնալ խորհրդային իշխանությանը՝ անտեղի և նույնիսկ վտանգավոր համարելով «Ազատ եւ Անկախ Հայաստան»-ի դատի անունով մղվող պայքարը⁵²³: Թերթը նույնպես Խորհրդային Միութեան կազմում մնալը պայմանավորում է Թուրքիայի հարձակումից ապահովագրված լինելու առումով⁵²⁴: Փաստորեն որոշ դեպքերում հնչակյանների՝ խորհրդային իշխանությանը պաշտպանելու քարոզչութիւնն առարկայական հիմնավորում էր ունենում:

Այսպիսով, հնչակյան պարբերականը նույնպես դէմ է արտահայտվում Հայաստանի անկախութեան գաղափարին: Թերթը բոլշևիկյան իշխանութեան և Խորհրդային Ռուսաստանի հովանավորութիւնն է համարում հայ ժողովրդի միակ փրկութիւնը: Այս դիրքորոշումը բացատրվում է Հայաստանի տնտեսական և քաղաքական

⁵²⁰ «Հայաստանի կոչնակ», 1927, 19 մարտ, թիւ 12, էջ 358:

⁵²¹ Նույն տեղում:

⁵²² Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1926, Նյու Յորք, 7 յուլիս, թիւ 29:

⁵²³ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1927, 19 մարտ, թիւ 12:

⁵²⁴ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1927, 2 յուլիս, թիւ 27:

ծանր կացությամբ՝ առանց հաշվի առնելու, որ հայ ժողովրդի ծանր կացության պատճառ է եղել նաև նույն բոլշևիկյան կամ ռուսական կայսերապաշտությունը:

Ամերիկայի մեկ այլ հնչակյան պարբերական՝ «Երիտասարդ Հայաստան»-ը, որի խմբագիրն էր Ստեփան Սապահ-Գյուլյանը, նույնպես դեմ էր Խորհրդային Հայաստանի անկախությանը և ավելի եռանդուն էր պաշտպանում Խորհրդային Ռուսաստանի հետ լինելու կողմնորոշումը: Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելու առաջին օրերին Ս. Սապահ-Գյուլյանը պնդում էր, որ հայկական պետականությունն անկախ է, պարզապես գտնվում է «Ռուսական օրիէնտացիայի մէջ»⁵²⁵: Սակայն մի քանի ամիս անց նա մոռանում է անկախության մասին և սկսում է համոզել, որ քանի կա Խորհրդային Ռուսաստանը, սխալ է անկախ և ինքնուրույն քաղաքականություն վարելը: Նույնիսկ Հայ դատը համարելով միմիայն սոցիալական խնդիր՝ առաջարկվում է դրա լուծումը վերապահել հեղափոխական Ռուսաստանին⁵²⁶: Ս. Սապահ-Գյուլյանը գրում է, որ զուր են դաշնակցականները սպասում խորհրդային կարգերի տապալմանը և Խորհրդային Ռուսաստանի քայքայմանը: Դա տեղի չի ունենալու, և Խորհրդային Հայաստանը մշտապես կապված է մնալու Խորհրդային Ռուսաստանին⁵²⁷: Հնչակյանները Խորհրդային Հայաստանի ապագան պատկերացնում էին միայն պրոլետարական դիկտատուրայի մասը կազմելու շահադիտությամբ⁵²⁸: Ըստ էության հնչակյան պաշտոնաթերթը, ի տարբերություն ռամկավար պարբերականների, որոնք Խորհրդային Հայաստանը գերադասում էին տեսնել ԽՍՀՄ-ի կազմում, Հայաստանի կարգավիճակի խնդիրը դիտարկում է համաշխարհային հեղափոխության խորապատկերում: Թերթի թղթակիցներից մեկն էլ հույս է հայտնում, որ Հնչակյան կուսակցության միջոցով սփյուռքահայ աշխատավորությունը կկապվի Խորհրդային Հայաստանի հետ և կդառնա նրա զինակիցը⁵²⁹:

⁵²⁵ «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1920, 22 դեկտեմբերի:

⁵²⁶ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1921, 5 օգոստոսի:

⁵²⁷ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», Բոստոն, 1924, 19 ապրիլի:

⁵²⁸ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1924, 9 օգոստոսի:

⁵²⁹ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1925, 11 ապրիլի:

Հետագա համարներից մեկում «Երիտասարդ Հայաստան»-ի խմբագիրը «հպարտանում» է, որ խորհրդային կարգերի հաստատումով Հայաստանում «բուրժուական կուսակցությունները» կորցրել են «իրենց ուղի տակի նացիոնալիստական հողը»⁵³⁰: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս ազգային խնդիրներն ու նպատակները հետին պլան են մղվում:

Խորհրդային իշխանությունները, սակայն, հնչակյան թերթերի հանդեպ որևէ դրական կարծիք չէին արտահայտում: Ավելին, շարունակվում էր մերժողական և բացասական վերաբերմունքը սփյուռքահայ բոլոր երեք ազգային կուսակցությունների նկատմամբ: Այդուհանդերձ, այս կապակցությամբ «Երիտասարդ Հայաստան»-ի խմբագրականը հայտարարում է, որ հնչակյանները կմնան բարեկամ Խորհրդային Հայաստանին⁵³¹: Նրանք մնում են իրենց այն համոզումին, որ Խորհրդային Միության թևերի մեջ Հայաստանը քաղաքական, տնտեսական և մշակութային վերածնություն է ապրում⁵³²:

Խորհրդային Հայաստանի՝ անկախությունից հրաժարվելու հարցում «Երիտասարդ Հայաստան»-ին չի զիջում Հալեպի «Սուրիական մամուլ»-ը: Հնչակյան այս պարբերականը նույնիսկ դեմ է արտահայտվում Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս և նրանից անկախ որևէ «Ազգային օջախ»-ի ստեղծմանը, որի նպատակը թերթի կարծիքով հայ ժողովրդին բուրժուական պետությունների գաղութատիրական քաղաքականության զոհ դարձնելն է⁵³³: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես գործ ունենք ազգային խնդիրները համաշխարհային հեղափոխության ցնորածին գաղափարին ստորադասող երևույթի հետ:

Թերթը հպարտությամբ է գրում, որ իրենց քարոզչության շնորհիվ Խորհրդային Հայաստանի կարգավիճակը մեծապես ընդունելի է դառնում գաղութներում: Իսկ մի քանի տարվա փորձը, ըստ թերթի, արդեն փաստում է, որ Խորհրդային Հայաստանի ղեկավարները շոշափելի քաղաքական հասունություն ունեն: Թերթն այս պնդումներն

⁵³⁰ «Երիտասարդ Հայաստան», 1924, 12 նոյեմբերի:

⁵³¹ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1929, 2 նոյեմբերի:

⁵³² Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1930, 29 նոյեմբերի:

⁵³³ Տե՛ս «Սուրիական մամուլ», Հալեպ, 1923, 30 դեկտեմբերի:

անում է՝ նաև դաշնակցականների քննադատություններին հակահարված տալու նպատակով⁵³⁴: Ի դեպ, այս առումով թերթի խմբագիրը նույնիսկ դաշնակցականներին համարում է Հայաստանի վերաշինության թշնամիներ⁵³⁵: Խորհրդային Հայաստանի կարգավիճակի հարցում հնչակյաններն իրավունք ունեին իրենց դիրքորոշումը քարոզելու: Սակայն դա չէր արդարացնում այն, որ հանիրավի թշնամիների էին «հայտնաբերում»՝ իրենց կեցվածքն ավելի համոզիչ դարձնելու համար: Մինչդեռ երբեմն թերթը ծայրահեղ ստահող տեղեկություններ էր հրապարակում: Օրինակ՝ գրում է, որ Դրոն Քաջազունու նման հրաժեշտ տվեց «երեկույայ կեանքին»⁵³⁶, այսինքն՝ հեռացավ Դաշնակցությունից, որն այդպես չէ:

Պետք է փաստել նաև, որ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության Սիրիայի Դ պատգամավորական ժողովը որոշում էր ընդունել մերժել ցանկացած տեսակի համագործակցություն այն կուսակցությունների հետ, որոնք «ընդդիմադիրի դերին մեջ են հանդէպ Հայաստանի»⁵³⁷: Անժխտելի է, որ այս որոշումն ուղղված է Դաշնակցության դեմ:

Ֆրանսիայի հնչակյանների «Արձագանք Փարիզի» պարբերականն էլ գտնում էր, որ ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս, այդ թվում՝ ոչ խորհրդային գաղութներում հայության ճակատագիրը պետք էր վստահել Խորհրդային Հայաստանի իշխանություններին՝ նրանց դեմ ուղղված կամ նրանց շրջանցող ցանկացած քայլ որակելով որպես «աւանտիւրա»⁵³⁸:

Այսպիսով, սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի հնչակյան հատվածը ևս հակված էր ընդհանուր առումներով պաշտպանելու Խորհրդային Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունն Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելու առումով: Հնչակյաններն իրենց այս դիրքորոշումը պայմանավորում էին իրենց դավանած գաղափարախոսությամբ:

⁵³⁴ Տե՛ս «Սուրիական մամուլ», 1923, 8 յուլիսի, 14 հոկտեմբերի:

⁵³⁵ Տե՛ս «Սուրիական մամուլ», 1924, 25 յուլիսի:

⁵³⁶ «Սուրիական մամուլ», 1924, 27 յուլիսի:

⁵³⁷ «Սուրիական մամուլ», 1924, 3 հոկտեմբերի:

⁵³⁸ «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1923, 23 դեկտեմբերի:

Հայաստանի անկախության գաղափարի մասին լսել անգամ չէր ուզում կոմունիստական ուղղվածություն ունեցող «Երևան» թերթը: Պարբերականն առհասարակ անխնա քննադատում է դաշնակցական, հնչակյան և ռամկավար կուսակցություններին ու նրանց ազդեցության տակ գտնվող մամուլի միջոցներին՝ ծայրահեղ դրական ներկայացնելով Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացը:

«Երևան»-ը տարբեր առիթներով ներկայացրել է Հայաստանի խորհրդայնացման, Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի «առավելությունները»: Օրինակ՝ թերթի՝ 1925 թ. դեկտեմբերի համարներից մեկում առանձնակի եռանդով է խոսվում Փարիզում Հայաստանի խորհրդայնացման հնգամյակի տոնակատարության մասին: Հանդիսությունը վարում է Շիրվանզադեն՝ ասելով. «Հինգ տարի է գոյութիւն ունի անկախ Հայաստանը՝ հայ աշխատատիրութեան հայրենիքը»⁵³⁹: Ի դեպ, հանդիսությանը ներկա է գտնվել նաև Ֆրանսիայում Խորհրդային Միության դեսպան Ռոկոսովսկին, ով հանդես է եկել առանձին ելույթով և գովերգել է խորհրդային կարգերն ու Հայաստանի խորհրդայնացումը: Նույն հանդիսության ժամանակ ելույթ է ունեցել նաև «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարը, ով հավաստիացրել է, թե քանի Հայաստանում իշխում են բանվորն ու գյուղացին, այն անկախ է լինելու⁵⁴⁰:

«Մարտական կուսակցութեան» ղեկավարներու շրջանային ժողովներու մէջ պոտցուցած «Միացեալ եւ անկախ Հայաստանի» բանաձեւը ուրիշ բան չէ, եթէ ոչ մզլուտած վարժապետներու անմիտ կարգախոսը», - այսպիսի արձագանք է ստանում Անկախ Հայաստանի քարոզչությունը Ֆրանսիայի հայ համայնավարների կողմից⁵⁴¹:

Թերթը համեմատության մեջ է դնում Հայաստանի Առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի վիճակները: Ըստ թերթի, եթե Առաջին հանրապետության տարիներին երկիրը չէր կարող ազատորեն հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ հարևանների ունեցած խնդիրների պատճառով, ապա դրանով իսկ անկախ չէր, մինչդեռ խորհրդայնացումից հետո այդ խնդիրը լուծվել է, և դրանով Հայաստանն ավելի անկախ է:

⁵³⁹ «Երևան», 1925, 3 դեկտեմբերի:

⁵⁴⁰ Տե՛ս «Երևան», 1925, 6 դեկտեմբերի:

⁵⁴¹ «Երևան», Փարիզ, 1927, 21 սեպտեմբերի:

Եղել են դեպքեր, երբ Անկախության օրը որակվել է որպես «յեղափոխական դաւաճանութիւն»⁵⁴², «ստրկության տարեդարձ»⁵⁴³ և այլն: Թերթը գրում է, որ Մայիսի 28 տոնելով՝ դաշնակցականները «մահուան սեւ օրերը կ'երազեն»⁵⁴⁴:

Անդրադառնալով Հայաստանի անկախությունը պահանջող ընդդիմախոսներին՝ թերթը գրում է. «Խորհրդային Հայաստանի անարժան թշնամիներն, «Միացեալ եւ անկախ Հայաստանի» ցնօրքի «տեսաբանները» կը կակազեն, որ Հայաստան միանալով Անդրկովկասի եւ Ռուսաստանի ու միւս իւ. Հանրապետութիւններուն՝ կորսնցուց իր անկախութիւնը: Անոնց ըմբռնած «ազատութիւնն» ու «անկախութիւնը» Հայաստանի բանւորներու եւ գիւղացիներու ըմբռնած իսկական ազատութեան ու անկախութեան հետ կապ չունին: Շնորհիւ ստեղծուած ներկայ սիստեմին միայն՝ մեր աշխատաւորութիւնը տէրը դարձաւ իր ճակատագրին եւ հնարաւորութիւն ունեցաւ ազատօրէն բարգաւաճելու տնտեսական ու կուլտուրական ամէն ասպարէզներու մէջ»⁵⁴⁵: Ըստ էության համայնավար թերթի այս մեկնաբանությունները հեռու են բանականությունից: Թերթը կուրորեն է գովերգում խորհրդային իշխանությանը՝ առանց հաշվի առնելու իրականությունը:

Քսանական թվականներին Խորհրդային Հայաստանը ջերմ աջակցության արժանացավ նաև ԱՄՆ-ի հայ կոմունիստների կողմից, որտեղ նրանք քիչ թե շատ լուրջ ուժ էին ներկայացնում⁵⁴⁶: Վերջիններս և Ամերիկայի աշխատավորական կուսակցության հայկական մասնաճյուղը ծավալուն աշխատանք էին իրականացնում ոչ միայն Խորհրդային Հայաստանի կարգավիճակի պաշտպանության, այլև հայկական ազգային կուսակցություններին «փնովելու» ուղղությամբ: Այսպես ամերիկահայ կոմունիստների պարբերական «Պրոլետար»-ի կարծիքով Դաշնակցության ըմբռնած ազատության և անկախության գաղափարը չի իրականացվել, և, ի ուրախություն թերթի, խորհրդային իշխանության հաստատմամբ այն «հիմնովին խորտակած է»⁵⁴⁷:

⁵⁴² «Երեւան», 1926, 30 մայիսի:

⁵⁴³ «Երեւան», 1928, 27 մայիսի:

⁵⁴⁴ «Երեւան», 1930, 28 մայիսի:

⁵⁴⁵ «Երեւան», 1929, 31 յուլիսի:

⁵⁴⁶ Տե՛ս Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ), Երևան, «Գիտություն», 1994, էջ 67:

⁵⁴⁷ «Պրոլետար», Նիւ Եօրք, 1924, 12 յուլիսի:

«Պրոլետար»-ը հեզնում է Դաշնակցության այն հայտարարությունը, որ մնալու է խորհրդային կառավարության հանդեպ լոյալ ընդդիմադիր իր դիրքի մեջ՝ նշելով, որ «լոյալիզմը» «բուրժուական փտած լոզունգ է»⁵⁴⁸: Թերթը չի խնայում նաև ռամկավար-ազատականներին: Անդրադառնալով վերջիններիս կողմից խորհրդային Միության հանդեպ բռնած «բարեկամական» կեցվածքին՝ դրա պատճառ համարում է այն, որ «ռամկավարները իրենց գոյութեան պահպանման սիրոյն հաշտուեցան անպարտելի բոլշեվիկեան իշխանութեան հետ»⁵⁴⁹: Թերթը ռամկավար-ազատականներին քննադատելիս չի շրջանցում նրանց և կոմունիստների գաղափարախոսությունների միջև գոյություն ունեցող հակադրությունը⁵⁵⁰: Այս փաստը թերթը բավարար է համարում՝ ռամկավար-ազատականներին չվստահելու համար: Վերջիններիս պաշտոնաթերթ «Պայքար»-ը որակվում է որպես խորհրդային Հայաստանի կեղծ բարեկամ⁵⁵¹:

Այսպիսով, ՌԱԿ և ՍԴ Հնչակյան կուսակցության մամուլից ու առանձին գործիչներից բացի և նրանցից առավել ոգևորությամբ խորհրդային Հայաստանի անկախության գաղափարին դեմ էր արտահայտվում Սփյուռքում ձևավորված հայ կոմունիստական մամուլը:

Հայաստանի անկախությանն անուղղակիորեն չէր սատարում նաև Կ. Պոլսի «Ժամանակ»-ը, որի էջերում ականավոր մտավորական Բյուզանդ Քեչյանը⁵⁵² գրում է. «Ռուսահայերուն շահը կը պահանջէ հետեւիլ իրենց ենթակայ եղած Տէրութեան օրէնքներուն: Իսկ առհասարակն Ազգին շահը կը պահանջէ, որ Ազգին իրաքանչիւր հատուածը իր բնակած երկիրն Կառավարութեան համերաշխ հաւատարիմ մնայ ըստ ամենայնի, եւ զգուշանայ անոր շահերուն ու հայեացքներուն հակասող ռեւէ ընթացքէ»⁵⁵³:

⁵⁴⁸ «Պրոլետար», 1924, 19 յուլիսի:

⁵⁴⁹ Նոյն տեղում:

⁵⁵⁰ Տե՛ս «Պրոլետար», 1924, 19 յուլիսի:

⁵⁵¹ Տե՛ս «Պրոլետար», 1925, 21 փետրուարի:

⁵⁵² Բյուզանդ Քեչյանը ժամանակին եղել է Կ. Պոլսում հրատարակված «Մասիս» (1852-1908), «Արեւելք» (1884-1896, 1898, 1912), «Բիւզանդիոն» (1896-1918) թերթերի արտոնատերն ու գլխավոր խմբագիրը:

⁵⁵³ «Ժամանակ», Կ. Պոլիս, 1924, 25 հոկտեմբերի:

Այսպիսով, սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Հայաստանի անկախության գաղափարի քննարկման հարցում ևս ուներ բաժանված և միմյանց հակադիր մոտեցումներ, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

- ՀՅԴ-ն ներկայացնող գործիչները և մամուլն ամեն ինչ անում էին Սփյուռքում Հայաստանի անկախության գաղափարը պահելու սփյուռքահայության քաղաքական օրակարգի առաջին կետում: Նրանց պատկերացմամբ այս հանգամանքը ոչ միայն պատմական անհրաժեշտություն էր հայկական անկախ պետականության վերականգնման առումով, այլև կարևոր գործոն էր սփյուռքահայությանը համախմբելու և հայապահպանությանը նպաստելու տեսակետից:

- Հայ հեղափոխական դաշնակցությունը և նրա համակիր շրջանակը դեմ են արտահայտվել Հայաստանի՝ Խորհրդային դաշինքներին անդամակցելուն: Նման դիրքորոշման հիմնական պատճառը եղել է այն, որ այդ քայլով Խորհրդային Հայաստանը գործնականում զրկվել էր անկախությունից: Ինքնիշխանության կորուստը տրամաբանորեն ենթադրում էր բազմաթիվ այլ վտանգավոր հետևանքներ: Օրինակ՝ դաշնակցականների մեկնաբանությամբ Արևմտյան Հայաստանի հարցի լուծման գործում միջազգային աջակցություն ունենալն էլ մեծապես պայմանավորված էր Հայաստանի անկախությամբ:

- Հայաստանի անկախության գաղափարին դեմ արտահայտվող սփյուռքահայ հասարակական-քաղաքական կուսակցություններն ու հոսանքները ոչ միայն ժամանակավրեպ էին համարում հարցի քննարկումը, այլև Հայաստանի բարօրությունը, նրա ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը տեսնում էին Խորհրդային Միության կազմում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

2.1 Ապստամբության պատճառների լուսաբանումը սփյուռքահայ կուսակցությունների և մամուլի կողմից

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բուլժեիկյան իշխանությունն ակտիվ պայքար ձեռնարկեց նախկին իշխանության ներկայացուցիչների և համախոհների դեմ:

1920 թ. դեկտեմբերի 6-ին «հակայեղափոխական շահադէտուպեան (սպեկուլյացիայի) և ի պաշտօնէ յանցագործութեան դէմ մաքառելու համար» Հայիեղկոմի դեկրետով

ստեղծվում է արտակարգ ասանձնաժողով (ՉԵԿԱ - ռուսերեն)⁵⁵⁴: Չնայած 1920 թ. դեկտեմբերի 12-ին ստեղծվում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ, վերջինս շարունակում էր գործել Հայիեղկոմի անմիջական ղեկավարությամբ և ցուցումներով⁵⁵⁵:

1920 թ. դեկտեմբերի 3-ին՝ Թիֆլիսի ճանապարհին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության մի շարք անդամներ (Համո Օհանջանյան, Ռուբեն Դարբինյան, Կորյուն - Ղազարյան, Հովհաննես Քաջազնունի և ուրիշներ): Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի մոտ 600 սպաներ, որոնց Բաքվի վրայով աքսորեցին Ռուսաստան: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը: Ազգայնացվում էին բանկերը, բանկային գործը համարվում էր պետական մենաշնորհ⁵⁵⁶:

Հայաստանի անկախությունը ոտնահարվում էր գրեթե բոլոր բնագավառներում: Հատուկ դեկրետով պարտադիր շրջանառության մեջ դրվեցին ՌՍՖՍՀ դրամանիշները, իսկ դրանք չընդունողները պատժվելու էին հեղափոխական ժամանակների օրենքներով⁵⁵⁷:

Հայիեղկոմի դեկտեմբերի 20-ի դեկրետով Խորհրդային Հայաստանի տարածքում վերանում է «Ռուսական կայսրության Հավաք Օրինացը» այն բոլոր փոփոխություններով, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան սեյմը, Հայաստանի խորհուրդը, Խորհրդարանը և կառավարությունը: Փոխարենը ՀՍԽՀ-ի սահմաններում գործող օրենքներ են համարվում ՌՍՖՍՀ օրենքները՝ այն փոփոխություններով ու լրացումներով, որոնք կմտցնեն Հայիեղկոմը և այլ իրավասու իշխանություններ⁵⁵⁸: Հայիեղկոմի ընդունած դեկրետները և հրամանները «նպատակ ունեին ամրացնելու Հայաստանում պրոլետարական դիկտատուրան եւ միաժամանակ՝ լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ յեղափոխությունը»⁵⁵⁹:

⁵⁵⁴ «Կոմունիստ», Երեւան, 1920, 9 դեկտեմբերի, հմմտ. Դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I, էջմիածին, 1921, էջ 7, 8:

⁵⁵⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 17, թ. 3:

⁵⁵⁶ Տե՛ս Դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I, էջ 9, 10:

⁵⁵⁷ Տե՛ս «Կոմունիստ», 1920, 22 դեկտեմբերի:

⁵⁵⁸ Տե՛ս «Կոմունիստ», 1920, 23 դեկտեմբերի:

⁵⁵⁹ Քաջազնունի Յ., Յետ մահու..., էջ 62:

Եթե նորահռչակ Խորհրդային Ռուսաստանում պետական իշխանության մարմինները բանվորների, զինվորների և գյուղացիների ընտրովի խորհուրդներն էին, ապա Հայաստանում այդպիսիք չլինելու պատճառով իշխանության մարմիններ դարձան բոլշևիկյան կուսակցության կողմից ստեղծված ոչ ընտրովի հեղկոմները⁵⁶⁰: 1921 թ. հունվարի 15-ին ստեղծվում է գերագույն հեղափոխական տրիբունալ: Տրիբունալի որոշումները վերջնական էին և ի կատար էին ածվում 48 ժամվա ընթացքում, բացի մահապատիժ նախատեսող դատավճիռներից, որոնք ենթակա էին Հայհեղկոմի հաստատմանը⁵⁶¹:

Ինչպես գրում է անգլիացի ականավոր պատմաբան Առնոլդ Թոյնբին, ժամանակն իսկապես էլ աշխատում է նրանց դեմ, ովքեր իրենց կայսրությունը բարձրացրել են բռնությամբ⁵⁶²: Նոր իշխանությունների վարած անխոհեմ քաղաքականության հետևանքով ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921 թ. փետրվարին ապստամբություն սկսվեց նրանց դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Խորհրդային իշխանության ներկայացուցիչները և բանակը դուրս վճռվեցին մայրաքաղաքից⁵⁶³:

Երևանի գրավումից հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե, որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները⁵⁶⁴: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառները բազմակողմանի քննության ենթարկվեցին և տարատեսակ գնահատականների արժանացան սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից:

⁵⁶⁰ Տե՛ս Հակոբյան Ա., Ռուսաստանի ու Հայաստանի խորհրդայնացման գործընթացների և միակուսակցական վարչակարգի հաստատման պատմական մի քանի զուգահեռներ, «Պատմաբանասիրական հանդես», 2014, թիվ 1, էջ 49:

⁵⁶¹ Տե՛ս Պետրոսյան Շ., Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը Հայաստանում, էջ 55:

⁵⁶² Թոյնբի Ա., Հասու լինել պատմությանը, Երևան, 2013, էջ 433:

⁵⁶³ Hovhannisian R., Simon Vratzian and Armenian Nationalism, “The Armenian Review”, 1970, Vol. 23, N 1, pp. 30.

⁵⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ., հմմտ. «Ազատ Հայաստան», Երեւան, 1921, 19 փետրուարի:

Սփյուռքահայ մամուլի մեծ մասը գտնում էր, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո առաջին իսկ դժգոհությունների պատճառը բոլշևիկների կողմից 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի սկզբունքները չհարգելն էր:

Այս առումով «Դրօշակ»-ի 1926 թ. փետրվարի խմբագրականում նշվում է. «Համաձայնագրի և ոչ մի կետ չիրագործեց: Երկրի անկախությունը ջնջեց: Սահմանների ընդարձակում չեղաւ: Թուրքերը դուրս չեկան Ալեքսանդրապոլից: Հանրապետութեան շրջանի գործիչները ենթարկեցին վայրագ հալածանքի, և բանտերը լեցեցին հազարաւոր մտաւորականներով: Հայկական բանակը լուծեց, և սպայութիւնը, աւելի քան 1500 հոգի, խաբէութեամբ արքայութեց Ռուսաստանի ներսերը: Ծայր տին անվերջ բռնագրաւումներ, թալան, հարստահարութիւն ու սպանութիւններ: Դրեցին անօրինակ տուրքեր, և գիւղերն ուղարկեցին պատժիչ զորամասեր տուրք չտուող գիւղացիներին պատժելու համար: Ամբողջ երկիրը առնեց Չէկայի հսկողութեան տակ»⁵⁶⁵: Փաստորեն բոլշևիկյան իշխանություններն էական քայլեր չձեռնարկեցին երկրի բարելավման ուղղությամբ: Երևանի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները ոչ մի արժեք չունեին հայ բոլշևիկների համար: Վատթարագույնը թերևս այն էր, որ փաստացի վերացել էր Հայաստանի անկախությունը⁵⁶⁶: Դաշնակցական պարբերականի ներկայացրած փաստարկներից կարելի է եզրակացնել, որ դեկտեմբերի 2-ի համաձայնագրով մեծ ակնկալիքներ են ունեցել երկրում տիրող կացության վերաբերյալ: Իսկ համաձայնագիրը, որով իշխանությունը հանձնվեց բոլշևիկներին, հույս է ներշնչել դաշնակցականներին, որ Հայաստանը կկարողանա շարունակել ազատ և ժողովրդավար զարգացումը: Մինչդեռ բոլշևիկյան իշխանությունների ձեռնարկած առաջին իսկ քայլերը հիասթափություն են առաջացրել:

Դաշնակցական մեկ այլ պարբերական՝ Բոստոնի «Հայրենիք»-ը ևս փաստում է, որ ժողովրդի հիասթափությունը խորհրդային իշխանության հանդեպ շատ շուտ սկսվեց, «կարելի է ասել՝ հենց խորհրդայնացման առաջին օրից»⁵⁶⁷:

⁵⁶⁵ «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 38:

⁵⁶⁶ Տե՛ս «Ճակատամարտ», 1922, 17 յունուարի:

⁵⁶⁷ «Հայրենիք», 1931, 18 փետրուարի:

Դաշնակցական ղեկավար գործիչների կողմից զսպվածության և խոհեմության կոչեր են հնչում՝ ուղղված բոլշևիկ ղեկավարներին: Հնարավոր դժգոհությունները կանխելու նպատակով փորձ է արվում Հայիեղկոմի ղեկավարներին համոզել հեռու մնալ ծայրահեղ քայլերից:

Ծաղկաձորի շրջանի Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Արմեն Սևանը⁵⁶⁸ (Հովհաննես Դևեջյան) տարագրության մեջ գրում է, որ առաջին օրերի հույսերին հաջորդում է կատարյալ հիասթափությունը, որը վերածվում է դժգոհության: Նախկին վարչապետ Ս. Վրացյանի դիմումները Հայիեղկոմի նախագահ Սարգիս Կասյանին⁵⁶⁹, վտանգավոր հետևանքներից խուսափելու համար, ըստ Ա. Սևանի, անօգուտ են անցնում⁵⁷⁰:

Այս մասին գրում է նաև Ֆրեզնոյի «Ասպարէզ»-ը: Ըստ թերթի՝ Վրացյանը փորձել է Ասքանազ Մռավյանին և Ս. Կասյանին համոզել, որ սանձեն Ռուսաստանից եկած «հեղափոխական» հայ բոլշևիկներին⁵⁷¹, սակայն համոզվել է, որ վերջիններիս վրա նրանց

⁵⁶⁸ Փետրվարյան ապստամբության վերաբերյալ «Վէմ»-ում հրապարակված՝ Արմեն Սևանի հուշ-հոդվածը գրվել է դեպքերից անմիջապես հետո, թարմ տպավորության տակ: 1970 թ. Բուենոս Այրեսում հրատարակվել են Ա. Սևանի՝ խորհրդային բանտերում անցկացրած տարիներին (1945-1955 թթ.) նվիրված հուշերը, որոնք վերահրատարակվել են Երևանում 2008 թ. (տե՛ս Սեան Ա., Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիներ Գ. Նժդեհի հետ, Երևան, 2008, 256 էջ):

⁵⁶⁹ Ս. Կասյանին հայ ժողովրդին կոտորելու մեջ մեղադրել է նաև նրա ուսանողական տարիների բարերարը՝ թիֆլիսահայ մեծահարուստ Ալեքսանդր Մելիք-Ազարյանը: Վերջինս, ապրելով Թիֆլիսում, ավելի շատ դժգոհ էր հայ կոմունիստներից, քան վրացի (տե՛ս Էջմիածնեցի, Մօտաւոր անցեալէն. «Հայրենիք», 1937, յուլիս, էջ 129): Փետրվարյան ապստամբությունից 10 տարի անց, երբ Ս. Կասյանն արդեն մեղադրվում էր բոլշևիկների կողմից՝ որպես մեղմ քաղաքականության հետևորդ, ուշագրավ դիտարկում է կատարում Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթը. «Փետրուար 18-ին ասկէ տասը տարի առաջ, Հայաստանէն, հայ ժողովուրդին կողմէ քշուեցաւ օրուան «վարչապետ» Կասեանը, իր խստութեանց համար: Այսօր, փետրուարեան ապստամբութենէն տասը տարի վերջ Հայաստանէն կը քշուի դարձեալ նոյն Կասեանը, եւ այս անգամ կը քշուի սակայն համայնավարներու կողմէ ու կը քշուի ... իր «մեղմութեանց» համար» («Յուսաբեր», 1931, 18 փետրուարի): Ս. Կասյանը մեծ մեղավորություն ունի Հայիեղկոմի կողմից իրականացվող անխոհեմ խստությունների հարցում, սակայն ծայրահեղ մոտեցում է նրան հայ ժողովրդին կոտորելու մեջ մեղադրելը: Իսկ ինչ վերաբերում է տարիներ անց կոմունիստական իշխանությունների կողմից նրան ասպարեզից մի կողմ դնելուն, նշենք, որ դա համընդհանուր երևույթ էր: Խորհրդային Հայաստանի առաջին սերնդի ղեկավարներն իրենց տեղը «գիջում» էին տիրող համակարգին ավելի հավատարիմ մարդկանց:

⁵⁷⁰ Տե՛ս Սեան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 93:

⁵⁷¹ Նույն հոդվածում Ս. Վրացյանը բարձր է գնահատում այդ օրերին Ռուսաստանից եկած մի շարք հայ պաշտոնյաների մարդկային արժանիքները, նրանց ձգտումը օգտակար լինելու հայրենիքին: Սակայն, հաշվի առնելով հայ աշխատավորությանը, Հայաստանի պայմաններին անձանոթ և նույնիսկ խորթ լինելու

ազդեցությունը շատ թույլ էր⁵⁷²: Թերթը գրում է, որ ՉԵԿԱ-յի քմահաճույքներն այնքան անտանելի էին դարձել, որ ժողովուրդը երանի էր տալիս ցարական ժանդարմներին⁵⁷³: «Ասպարեզ»-ի բնութագրմամբ Փետրվարյան ապստամբության հեղինակները բոլշևիկներն էին, «Աթարբեգեաններն ու Ալիսները, որոնք պրովոկացիայի ենթարկեցին ժողովուրդը»⁵⁷⁴: Հայհեղկոմը կարող էր իր քայլերն իրականացնել նաև առանց խստագույն միջոցների, որոնք, ըստ էության, առաջին դժգոհությունների հիմնական պատճառները հանդիսացան: Առավել մտահոգիչն այն էր, որ հենց սկզբից Հայհեղկոմի կազմում առավել զուսպ և խոհեմ գործելակերպի կողմնակիցների ազդեցությունն ուժեղ չէր: Փոխարենը ռուսաստանյան հեղափոխական բովոլ անցած «արմատականները» ամուր դիրքեր ունեին նոր իշխանության մեջ, և, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, սեփական իշխանության «հաստատման» համար միջոցների խտրություն չէին դնում:

Դաշնակցության հանդեպ թշնամաբար տրամադրված Փարիզի ռամկավար-ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Ապագա»-ն է գրում, որ դեկտեմբեր և հունվար ամիսներին քառսն էր տիրում Հայաստանում: «...Սով, հիանդութիւններ, որբացածներ, ամայացած կամ փախստական զանգուածներու կուտակումով ծանրաբեռնուած գիւղեր, իշխանութեան փոփոխումով ջուրի երես ելած ամէն տեսակ տականքներ եւ սանձարձակութիւններ»,- այսպես է նկարագրում թերթը Հայաստանում տիրող իրավիճակը⁵⁷⁵: Նույնիսկ Փետրվարյան ապստամբությունը ղեկավարող կուսակցության գործունեությունը քննադատող սփյուռքյան պարբերականը ևս գտնում է, որ փաստացի նոր իշխանությունների թողտվությամբ տեղի են ունեցել չափն անցնող չարաշահումներ:

Չնայած նոր իշխանությունների հիասթափեցնող քայլերին՝ Երևանում մնացած միակ բյուրոյական Սիմոն Վրացյանը, խորհրդակցելով կուսակցական մի քանի ազդեցիկ ընկերների հետ, կազմում է դաշնակցական շարքերին ուղղված մի շրջաբերական, որի

հանգամանքը, ինչպես նաև «Մոսկուայի որոշումով» Հայաստան գալը, հայ ժողովուրդը նրանց ընկալում էր որպես նոր «Գալիցիներ, Տիգլանհաուգներ»:

⁵⁷² Տե՛ս «Ասպարեզ», 1921, 27 սեպտեմբերի:

⁵⁷³ Տե՛ս նույն տեղում:

⁵⁷⁴ Նույն տեղում:

⁵⁷⁵ «Ապագայ», 1930, 22 փետրուարի:

մեջ շեշտվում է խիստ լոյալության և առանց հետին մտքերի բոլշևիկներին օժանդակելու անհրաժեշտությունը⁵⁷⁶:

1920-1930-ական թթ. սիյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառներից գլխավորը բոլշևիկյան իշխանությունների կողմից իրականացվող բռնագրավումներն էին («ռազմական կոմունիզմը»):

1920 թ. դեկտեմբերին և 1921 թ. հունվարին Ս. Կասյանի հրամանով բռնագրավվում են գործարանները, եկեղեցու կալվածքները, ինչպես, օրինակ՝ Էստապովի պահածոների գործարանը, հանքերը, հանքային ջրերը, լճերը, բոլոր մասնավոր, եկեղեցապական հողերը, անտառները⁵⁷⁷:

Խորհրդահայ պատմագրության մեջ առաջ է մղվել այն թեզը, ըստ որի հողի, կալվածքների, Շուստովի գինու-կոնյակի արտադրության, Էստապովի պահածոների գործարանի, Ավետիքովի մեխանիկական գործարանի, Աֆրիկյանների շենքերի պետականացումով իրականանում էր հեղափոխության տնտեսական ծրագիրը⁵⁷⁸: Ավելացնենք նաև, որ շատ տեղերում բռնագրավումների պատճառով տեղի էին ունենում «տարերային ըմբոստություններ», որոնք ճնշվում էին Երևանից ուղարկված պատժիչ զորամասերի կողմից⁵⁷⁹:

Բոլշևիկյան բռնագրավումների առիթով Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ը գրում է. «Երկու ամսուայ կեսանք ունեցան ընդամենը երեկա մեր «հերոսները» և այդ երկու ու կէս ամսուայ ընթացքում Հայաստանի բոլշևիկ կոչւած ասանտիդիստները ցուցադրեցին իրենց բովանդակ շնորհքը, առանց այն էլ տնտեսապէս քայքայած մեր երկիրն ու հայ աշխատաւորութիւնը աւերի և թալանի վարպետօրէն ենթարկելու գործում»⁵⁸⁰: Ընդ որում բոլշևիկյան թալանն իրականացվում էր առանց որևէ խտրականության: «Կաթերից մի քանի վագօն էլ ուղարկեց Նախիջեանի թաթարներին,

⁵⁷⁶ Տե՛ս Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Երևան, 2008, էջ 116:

⁵⁷⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1253, ց. 1, գ. 2, թ. 1-2, 4-13, գ. 4, թ. 1-3:

⁵⁷⁸ Տե՛ս Մնացականյան Ա., Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Երևան, 1976, էջ 25:

⁵⁷⁹ Տե՛ս Ստեփանյան Խ., 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառներն ու հետևանքները Սիմոն Վրացյանի գնահատմամբ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2015, թիվ 1, էջ 143, 144:

⁵⁸⁰ «Ազատ Հայաստան», 1921, 22 փետրուարի:

որպեսզի նրանք էլ մասնակից լինեն մեր որբանոցների թալանին», - գրում է «Ազատ Հայաստանը»⁵⁸¹: Փաստորեն, ըստ Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթի, «թալանը բաշխվածի գլխավոր աղբիւրն էր, իսկ կեղծիքը, ահաբեկումն և պատերազմը՝ նրա գոյութեան միակ միջոցները»⁵⁸²: Հայրենիքի փրկության կոմիտեն բռնագրավված իրերն իրենց տերերին վերադարձնելու նպատակով ստեղծեց հատուկ ցուցակագրություն:

Հայաստանի կոմունիստները, չունենալով երկրի զարգացման սեփական ծրագիր, կրկնում էին Խորհրդային Ռուսաստանի փորձը, որի ամենավառ օրինակը «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումն էր⁵⁸³:

Զավեշտն այն էր, որ Հայաստանում «ռազմական կոմունիզմը» սկսեցին կիրառել այն ժամանակ, երբ Ռուսաստանում արդեն հրաժարվում էին դրանից⁵⁸⁴: Դաշնակցական ականավոր գործիչ, տեսաբան Միքայել Վարանդյանը գրում է, որ հայ բուլճիկների կիրառած բռնությունների մարտավարությունը «Կարլ Մարքսը եւ իր հոշակաւոր զինակիցը, Ֆրիդրիխ Էնգելսը, ոչ միայն չեն յանձնարարած, այլեւ վճռապէս մերժած են: Մերժած են մասնաւորապէս Ռուսաստանի նման յետամնաց երկիրների նկատմամբ»⁵⁸⁵: Ավելին, չնայած այն հանգամանքին, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Ռուսաստանում իրեն չէր արդարացրել, Հայաստանի նորընծա բուլճիկ ղեկավարությունը որոշեց գործադրել այն նաև տեղում: Պարենավորման ժողկոմիսարիատի, տեղական հեղ-

⁵⁸¹ Նույն տեղում, 26 փետրուարի:

⁵⁸² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 21:

⁵⁸³ «Ռազմական կոմունիզմի» հիմքում դրված էր պարենմասնատրումը: Գյուղացուն թողնվելու էր նրա պարենի մի մասը (ուտելու և սերմացուի համար), իսկ մնացածը բռնագրավվելու էր՝ պետական կարիքները հոգալու համար: Պետականացվելու էին նաև բոլոր գործարանները, արհեստանոցները, արտադրամիջոցները (տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 21): Գրականության մեջ հաճախ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը սխալ է մեկնաբանվում. այն դիտվում է որպես միայն պարենմասնատրման քաղաքականություն: Ճիշտ է, պարենմասնատրումն այդ քաղաքականության կենտրոնական հարցն էր, բայց միայն դրանով չէր բնորոշվում այն: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը տնտեսական միջոցառումների մի ամբողջ համակարգ էր, որը վերաբերում էր ոչ միայն գյուղատնտեսությանը, այլև արդյունաբերությանն ու առևտրին: Ելնելով ռազմական կարիքներից՝ արտադրական ձեռնարկությունները, այդ թվում և մանր ու միջին, պետականացվում էին: Հետագայում անդրադառնալով այդ հարցին՝ Վ. Լենինը հատկապես ընդգծեց, որ սխալ թույլ տրվեց, երբ «ռազմական կոմունիզմի» ժամանակ ազգայնացվեցին նաև մանր ձեռնարկությունները (տե՛ս Գեղամյան Գ., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նէպի տարիներին (1921-1936), Երևան, 1978, էջ 28):

⁵⁸⁴ Տե՛ս Ղազախեցյան Վ., Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, թիվ 1, էջ 48:

⁵⁸⁵ Վարանդեան Մ., Համայնավարությունը եւ համաշխարհային յեղափոխություն, էջ 63, 64:

կոմների, բանակի անմիջական մասնակցությամբ սկսվեցին բռնագրավումները գյուղերում, որոնք տեղի էին ունենում կարմիր բանակին օգնելու և այլ պատճառաբանություններով: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ էր անում հայ գյուղացիներին սեփական փոխադրամիջոցներով հաց հասցնել կարմիր բանակին⁵⁸⁶:

Ցեղասպանության ծանր հետևանքների, հարյուր հազարավոր գաղթականների առկայության, պատերազմից քայքայված տնտեսության պայմաններում նման քաղաքականության կիրառումը հակասում էր երկրի բնակչության շահերին և ակնկալիքներին: Ընդհակառակը, ժողովուրդը սպասում էր սոցիալական վիճակի բարելավում և բնականաբար ցավով էր ընդունում սեփական գույքի, մթերքի անհատույց բռնազավթումը: Ճիշտ է, ստեղծված խառնակ իրավիճակում հնարավոր չէր ընդհանրապես բացառել նման երևույթները: Սակայն խոսքը ոչ թե հատուկենտ տեղական իշխանավորների զանցանքների, այլ բուլճարի իշխանությունների կողմից իրականացվող կազմակերպված թալանի մասին է: Ինչպես գրում է սփյուռքահայ պատմաբան Լևոն Մարտիրոսյանը, «հայ աշխատատիրը, որ երէկ կը կարծէր թէ ինք երկրի վարող ուժն էր դարձեր, տեսաւ որ կուրօրէն տրուած հրամանի մը համակերպելու պարտականութենէն զատ իր իրաւունքի մասին մտածելու պատեհութիւն չունէր»⁵⁸⁷:

Չնայած ներքին տարածայնություններին⁵⁸⁸ հայ բուլճարիկները բռնագրավումներն իրականացնում էին ամենակոպիտ ձևերով: Հաշվի չէին առնում Հայաստանի և հայ ժո-

⁵⁸⁶ Տե՛ս «Կոմունիստ», 1920, 14 դեկտեմբերի:

⁵⁸⁷ Մարտիրոսեան Լ., Դասակարգային կռիւներու գիծը ազգերու պատմութեան մէջ, հ. Ա, Պէրոթ, 1963, էջ 221:

⁵⁸⁸ «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության հարցում Հայաստանի կոմունիստական իշխանության մեջ տարակարծությունը բավական խորն էր (տե՛ս Stepanyan Kh., The criticism of the policy of "military communism" applied in Soviet Armenia by the social-political thought of Armenian Diaspora (1920-1930s), "European science review", «East West» Association for Advanced Studies and Higher Education GmbH, January-February, Vienna, Austria, 2014, № 9-10, September-October, p. 19.): Հայիեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը դեմ է եղել Հայաստանում կիրառել Ռուսաստանում փորձարկված տնտեսական քաղաքականությունը (տե՛ս Կասյան Ս., Ընտիր երկեր, էջ 185: Սարգսյան Կ., Հայաստանում ռազմական կոմունիզմի կիրառման պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, թիվ 12, էջ 13):

ղովրդի յուրահատկությունները և կարճ ժամանակամիջոցում բռնագրավումների անվան տակ կիրառեցին ավերի ու թալանի գործադրման բազմապիսի մեթոդներ⁵⁸⁹:

Զարմանալին այն է, որ կոմունիստները բռնագրավումների և խուզարկությունների դաժանության մեղքը բարդում էին դաշնակցականների վրա: «Դաշնակների գաղտնի ագենտները խցկուած լինելով մեր երիտասարդ խորհրդային հիմնարկութիւնները, ինքնագլուխ գործունէութեամբ եւ ազգաբնակչութեան հետ կոպիտ վարեցողութեամբ ի չիք են դարձնում խորհրդային իշխանութիւնը: Վերջին օրերս ինքնագլուխ բռնագրաւումներ եւ խուզարկութիւններ են նկատուում», - գրում է «Կոմունիստ»-ը⁵⁹⁰: Բոլշևիկյան թերթի նման հրապարակումը միայն քարոզական նպատակ է ունեցել՝ ձգտելով դժգոհությունների իրական մեղքը բարդել նախկին իշխանության ներկայացուցիչների վրա:

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականության վերաբերյալ հնչեցված գնահատականներից առանձնահատուկ են վտարանդիության մեջ հայտնված Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների տեսակետները: Այսպես, Կոմիտեի նախկին անդամ - Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ) գրում է, որ Հայիեղկոմի որդեգրած բռնությունների քաղաքականությունն աննախընթաց դաժանություն ուներ: Բոլշևիկները փորձում էին բռնութեամբ

⁵⁸⁹ Տե՛ս Ստեփանյան Խ., Հայաստանում «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության քննադատությունը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից (1920-1930-ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, թիվ 2, էջ 139: Դրա փոխարեն խորհրդային պատմաբան Արշավիր Հակոբյանը Ս. Կասյանին և Ա. Բեկզադյանին համարում է «օպորտունիստներ»՝ նրանց մեղադրելով «ժողովրդի արյունարբու թշնամիների՝ դաշնակների և մյուս հակառակույցիոներական պարտիանների նկատմամբ միջոցներ չձեռնարկելու մեջ» (Հակոբյան Ա., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Երևան, 1948, էջ 55): Հետխորհրդային շրջանում բռնագրավումների քաղաքականության առումով հետևյալ ընդհանրացումն է արվում, ըստ որի՝ բոլշևիկների մեծամասնությունը (Գ. Ալիսանյան, Ա. Նուրիջանյան և ուրիշներ) կողմ էր առավել կոշտ և բռնի քայլերին, իսկ փոքրամասնությունը (Ս. Կասյան, Ա. Մոսվյան, Ա. Բեկզադյան) ավելի հանդուրժող էր (տե՛ս Հակոբյան Ա., Փետրվարյան ապստամբությունը հայ պատմագրության մեջ, «Վէմ» համահայկական հանդես, 2011, թիվ 1, էջ 138): Փաստորեն նոր իշխանությունների մեջ կային մարդիկ, ովքեր խելամտորեն դեմ էին զանգվածային բռնագրավումներին՝ դրանք համարելով վտանգավոր և հակաժողովրդական: Ցավոք, նման տեսակետ ունեցող գործիչներին չբավականացրին համապատասխան կամքը և ազդեցությունը կանխելու բնակչության մեջ զանգվածային հուզումներ ծնող որոշումը և դրա կիրառումը:

⁵⁹⁰ «Կոմունիստ», 1921, 12 փետրուարի:

յամբ վարչաձև փոխել՝ մոռանալով, որ բոլոր հեղափոխություններն ու ապստամբությունները ծնունդ են բռնությունների⁵⁹¹:

Հ. Տեր-Հակոբյանը նշում է, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրվանից սկսված բռնագրավումները շուտով սովորական են դառնում: Ազգաբնակչությանը թալանում էին ամենուր՝ թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում: Ամեն ինչ ավելի էր բարդացնում ավազակաբարո, պատեհապաշտ մարդկանց մասնակցությունը «բռնագրավում» կոչված կառավարական այդ ձեռնարկին, որը վերածվեց համատարած կողոպուտի⁵⁹²: Ըստ էության, բոլշևիկների գործադրած «ռազմական կոմունիզմի» քաղաքականության «ընձեռած հնարավորությունից» փորձել են օգտվել նաև իշխանության հետ կապ չունեցող որոշ անբարեհույս տարրեր, որոնք ավելի են բարդացրել իրավիճակը:

Ս. Վրացյանի կարծիքով բռնագրավումներն ավելի խստացան, երբ Հայաստան եկավ Համառուսաստանյան ՉԵԿԱ-յի ներկայացուցիչ Գ. Աթարբեկյանը⁵⁹³:

Պատահական չէ, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականության հանդեպ իրենց դժգոհությունն են հայտնում Խորհրդային Հայաստանի իշխանությունների դեմ բարձրացված ժողովրդական ապստամբության ղեկավարները: Թե՛ Վրացյանը, թե՛ Իրազեկը համոզված էին, որ Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային էր բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությունը՝ իր ամենադաժան դրսևորումներով:

Հատկանշական է, որ բռնագրավումների մեթոդներն աստիճանաբար «կատարելագործվել» են: Ս. Վրացյանը գրում է. «Ամենավարպետ ծրագրուած ու կազմակերպուած գործերից մէկն էլ, անշուշտ, եղաւ «Պարէնի շաբաթը» կամ, ինչպէս Երեւանցիք աւելի ճիշտ բնորոշել էին, «Թալշաբաթը» (թալանի շաբաթը), յունուար ամսի վերջերին»⁵⁹⁴: Ոգևորված «թալշաբաթ»-ի «հաջողություններից»՝ բոլշևիկները ծրագրում էին այլ «շաբաթներ» ևս իրականացնել, օրինակ՝ «սպիտակեղենի շաբաթ»: Վրացյանը հեգնանքով մատ-

⁵⁹¹ Տե՛ս Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատեան Հ.Յ.Դաշնակցութեան (1890-1950) (կազմ.՝ Ս. Վրացեան)», Բոստոն, էջ 307:

⁵⁹² Նույն տեղում, էջ 308:

⁵⁹³ Տե՛ս Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, յունուար, էջ 86:

⁵⁹⁴ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, մարտ, էջ 111:

նանշում է, որ այս կերպ «Երեւանը թօթափում էր իր վրայից բուրժուական նախապաշարումները եւ ամուր կերպով ոտք կոխում «կոմունիստական շինարարութեան» ճանապարհի վրայ: Առաջաւոր Ասիայի շէմքին, հայ «պրօլետարիատը» կատարում էր իր պատմական առաքելութիւնը»⁵⁹⁵: Փաստորեն կոմունիստական շինարարություն ասելով հայ բոլշևիկներն ըստ Ս. Վրացյանի՝ նախ նկատի ունեին ժողովրդի ունեցվածքի թալանն ու կողոպուտը:

Բռնագրավումներն աստիճանաբար ավելի անհեթեթ են դառնում: Ս. Վրացյանը գրում է, որ հեղկոմները գյուղերում պահանջում էին ոչ միայն ոչխար, կով և հավ, այլև յուղ, պանիր և ձու: Սևանա լճի ավազանի գյուղերում պարտավոր էին ձուկ մատակարարել բոլշևիկներին: Որոշ գյուղերից պահանջում էին որսի կենդանիներ, օրինակ՝ Զրվեժ գյուղի վրա կաքավի տուրք էր տրվել⁵⁹⁶: Խուզարկված տներից հաճախ տանում էին ոչ միայն կենդանիներ և պարեն, «այլև դրամ, ոսկեղէն ու գոհարեղէն, գորգեր, մետաքսի եւ այլ թանկարժէք կտորներ, շաքար, սապոն, զանազան հագուստ»⁵⁹⁷:

Նշված խնդրին անդրադառնալիս Ս. Վրացյանը մատնացույց է անում նաև խորհրդահայ պատմաբան Բագրատ Բորյանի աշխատությունը և եզրակացնում, որ բոլշևիկ պատմաբաններն անգամ քննադատում էին այդ քաղաքականությունը⁵⁹⁸: Բ. Բորյանը խորհրդային այն եզակի պատմաբաններից էր, որ համարձակություն էր ունեցել վեր հանելու հակաբոլշևիկյան ապստամբության իրական պատճառները՝ դրանց մեջ ընդգծելով նաև բռնագրավումների հիմնահարցը: «Առանց կազմակերպված և կարգապահ վարչամեքենայի, առանց քարոզչական նախապատրաստական աշխատանքի և առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները, Հեղկոմը կարգախոս է հրապարակ նետում. բռնագրավել և գրավել քաղաքների մասնավոր անձանց պարենն ու գյուղացիության հացի պաշարը»,- այսպես բոլշևիկների քաղաքականության հակաժողովրդական բնույթը մերկացնում է Բ. Բորյանը⁵⁹⁹: Ի դեպ, խորհրդային պատմաբանի տեսակետին

⁵⁹⁵ Տե՛ս նոյն տեղում:

⁵⁹⁶ Տե՛ս նոյն տեղում:

⁵⁹⁷ Նոյն տեղում, յունուար, էջ 86:

⁵⁹⁸ Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 206:

⁵⁹⁹ Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, с. 126.

անդրադառնում են նաև «Դրոշակ»⁶⁰⁰ և «Հառաջ»⁶⁰¹ պարբերականները: Կարծում ենք՝ բոլշևիկ պատմաբանի վերոնշյալ համարձակ գնահատականը շատ բան է ասում Հայաստանում «ռազմական կոմունիզմի» աննպատակահարամար լինելու մասին:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը քննադատում էր նաև բոլշևիկյան իշխանությունների այն քաղաքականությունը, ըստ որի՝ բռնագրավված պարենը և ապրանքները դուրս էին բերվում դրանց կարիքը մեծապես ունեցող երկրից: Մինչ ժողովուրդը Ռուսաստանից էր օգնություն սպասում, իրենից վերջին պատառը խլելով՝ ուղարկում էին Ռուսաստան⁶⁰²:

Բոլշևիկյան սարսափների միջով անցած Ա. Սևանը բռնագրավումները բնորոշում է որպես «պաշտօնական թալան» և դժգոհում, որ ժողովրդի ապրուստի վերջին միջոցները զենքի ուժով խլելով՝ կերակրում էին Հայաստանում գտնվող ռուսական զորքին կամ «նվեր» էին ուղարկում Բաքվի ու Մոսկվայի բանվորությանը⁶⁰³:

Բռնագրավված իրերի մի մասը միամտորեն ուղարկվում էր Հայաստանից դուրս՝ հավատացնելու Ռուսաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին, որ սոցիալիստական երեք հանրապետությունների միջև կանոնավոր ապրանքափոխանակություն է սկսվել: Բացի դրանից, Հայաստանի բոլշևիկ ղեկավարներն ուզում էին Ռուսաստանի բոլշևիկներին ապացուցել, որ իրենք նվիրյալ կոմունիստներ են:

Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Արշակ Հովհաննիսյանն իր հուշ-հոդվածում, խոսելով բռնագրավումների ժամանակ գործադրված կամայականությունների մասին, նշում է, որ դրանք երբեմն ավարտվում էին ընտանեկան պատիվն անարգելով⁶⁰⁴: Ընտանեկան պատիվն անարգելու դեպքերի մասին գրում է նաև Կ. Պոլսի «Ժողովրդի ձայնը»⁶⁰⁵:

⁶⁰⁰ Տե՛ս «Դրոշակ», 1931, N 1-2, էջ 4-8:

⁶⁰¹ Տե՛ս «Յառաջ», 1931, 18 փետրուարի:

⁶⁰² Տե՛ս Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 544:

⁶⁰³ Տե՛ս Սեւան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 93:

⁶⁰⁴ Տե՛ս Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, էջ 43:

⁶⁰⁵ «Ժողովրդի ձայնը», Կ. Պոլիս, 1921, 8 մարտի:

Իսկ մեկ այլ տարագիր՝ Օ. Մխիթարյանը վերհիշում է, որ բոլշևիկները կոմունիզմ ասելով հասկանում էին սանձարձակ թալան, XVIII դարի պարսկական խաներին հատուկ բռնություններ և մարդ անհատի բարոյական ոչնչացում ու ստրկացում⁶⁰⁶:

Հ. Քաջազնունին նույնպես մերկացնում է բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությունը՝ նշելով, որ այն Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր: «Ամեն մի դիկտատուրա՝ արդեն իր էությունը բռնութիւն է եւ ուրիշ բան չի կարող լինել: Ամեն մի յեղափոխական կառավարութիւն՝ կռուի շրջանում՝ հարկադրած է դիմելու կտրուկ ու ծայրայեղ միջոցների,- սա եւս մի անխուսափելի անհրաժեշտութիւն է, որ բղխում է դրութեան էութիւնից: Բայց բոլշևիկների բռնութիւնը ու Հայաստանում գործարած միջոցների դաժանութիւնը ունէին մի առանձնայատուկ գիծ, որ ամենից աւելի գրգռիչ ու անհանդուրժելի էին,- այն, որ անիմաստ էին բռնութիւնները, աւելորդ ու աննպատակ... Փետրարեան ապստամբութիւնը բոլշևիկների գործն էր ամբողջովին, բնական հետեւանք նրանց բռնութիւնների ու մանաւանդ անվերջ բռնագրաւումների, որ քանդում էին ժողովրդական տնտեսութեան վերջին մնացորդները, զրկում էին սովահար մարդկանց վերջին կտոր հացից», - գրում է տարագիր վարչապետը⁶⁰⁷: Նրա համար այնքան դաժան են եղել բոլշևիկյան բռնությունները, որ կոչ էր անում միայն իրենց դիակների վրայով թույլ տալ բոլշևիկներին նորից մտնել Հայաստան⁶⁰⁸:

Արժե հիշատակել նաև այն իրողությունը, որ ստեղծվել էր բնակարանների բռնագրավման հատուկ հանձնախումբ՝ նոր ժամանած բոլշևիկ գործիչների և զինվորականների համար անհրաժեշտ բնակարաններ ունենալու համար: Բ. Լեգրանի պատվիրակության անդամ Աշոտ Հովհաննիսյանը փողոց նետեց նախկին զինվորական նախարար - Ռուբեն Տեր-Մինասյանի ընտանիքին և տիրացավ նրա բնակարանին ու գույքին: Աշոտ - Հովհաննիսյանը հետագա օրերին ևս շարունակել է «հոտած բուրժուաններից» կահ-կարասի, սպիտակեղեն, գորգեր և այլ իրեր բռնագրավելու իր գործը⁶⁰⁹: Նախկին պետական

⁶⁰⁶ Տե՛ս «Հայրենիք», 1928, 18 փետրուարի:

⁶⁰⁷ Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 46:

⁶⁰⁸ Տե՛ս Վրացյան Ս., Խարխափումներ: Յ. Քաջազնունու «Հ.Յ.Դ. անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, էջ 20:

⁶⁰⁹ Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, հոկտեմբեր, էջ 103:

պաշտոնյաների ունեցվածքի հանդեպ կիրառվող նման քայլերը վկայում էին նաև բուլղարիկների ցանկացած առումով անհանդուրժող կեցվածքի մասին:

Հայաստանի Առաջին հանրապետության մեկ այլ վարչապետ՝ Ա. Խատիսյանը, գրում է, որ շուրջ 20 տարի աշխատելով ցարական «ռեակցիայի» պայմաններում՝ չէր տեսել այնպիսի բռնություններ, ինչպիսիք տեսավ բուլղարիկների մոտ Հայաստանում իշխանության գալուց անմիջապես հետո⁶¹⁰:

Այսպիսով, տարագրության մեջ հաստատված Հայաստանի Առաջին հանրապետության վարչապետները, Փետրվարյան ապստամբության պատճառների մասին խոսելիս, իրավամբ առանձնացնում են բուլղարիկների գործադրած «ռազմական կոմունիզմը»:

Անդրադառնալով բռնագրավումների խնդրին՝ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը նշում է, որ դրանք ուղեկցվում էին առանձնակի դաժանություններով ու անգթությամբ⁶¹¹: Թերթը հետևություն է անում, որ կառուցողական աշխատանք կատարելու փոխարեն խորհրդային իշխանությունը կազմակերպված կողոպուտ էր իրականացնում Հայաստանում:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ն անդրադառնում է Հեղկոմի հայտարարած միօրյա խուզարկության դաժան բռնագրավումներին. «Հրատարակուած էր հրաման մը, որուն համաձայն իւրաքանչիւր անձ իրաւունք պիտի ունենար իր մօտ պահելու 1 ամսուան պաշար, այսինքն 1 փութ ալիւր, 2 ֆունտ իւղ եւ այլն: Բայց զարհուրելի բան էր այդ խուզարկութիւնը, որ ամբողջ 24 ժամ տեւեց: Խուզարկութիւն չէր այդ, այլ թալան, թալանէն աւելի սոսկալի բան մը: Կամայականօրէն տուներէն առին տարին ինչ որ գտան, մասնաւորաբար իրենց խստութիւնը գործ դնելով արեւմտահայութեան վրայ»⁶¹²: «Ճակատամարտի» համարներից մեկում խոսվում է մասնավոր գրադարանների բռնագրավումների մասին,

⁶¹⁰ Տե՛ս «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

⁶¹¹ Նույն տեղում:

⁶¹² Ստեփանյան Խ., 1921 թ. փետրվարյան ապստամբության անդրադարձը Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ի էջերում, «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք (գիտական հոդվածների ժողովածու), 2016, թիվ 2, էջ 50, 51:

ինչը բուլժիկները «պատճառաբանում» էին նրանով, որ «բուրժուաները» գիրք չեն կարող կարդալ⁶¹³:

Այսպիսով, սփյուռքյան թերթերը ևս, «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը դիտարկելով հիմնականում Փետրվարյան ապստամբության պատճառների շարքում, ներկայացնում են խորհրդային իշխանության բազմաթիվ կամայական գործողություններ, որոնք իրականացվում էին «պետական և հեղափոխական կարիքների համար» տեղի ունեցող բռնագրավումների ժամանակ:

Ակնհայտ է, որ Հայաստանի բուլժիկյան իշխանությունների վարած «ռազմական կոմունիզմը» քննադատեցին ոչ միայն իշխանությունից զրկված դաշնակցականները: Սփյուռքում գործող ոչ դաշնակցական որոշ գործիչներ ևս մեղադրեցին բուլժիկներին՝ Հայաստանում լայնածավալ բռնագրավումներ իրականացնելու համար: Կահիրեում հաստատված ականավոր պատմաբան Արշակ Ալպոյաճյանը ևս քննադատում է բուլժիկների բռնագրավումների քաղաքականությունը, որն, ըստ նրա, Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր: Ալպոյաճյանը գրում է, որ գավառներում, կենտրոնական իշխանության աչքից հեռու, տեղական բախտախնդիր և անբարեխիղճ տարրերը, օգտվելով առիթից, «բնակչությունը կը կեղեքեին, ինչ որ գիղացիները կը դառնացներ: Պուլժեվիքները կը պահանջեին անոնցմէ, որ իրենց ուտեստի մթերքները տրամադրէին Կարմիր Բանակին: Աւարառու արշաախումբեր կը շրջէին, որոնք կը կատարէին խուզարկութիւններ, զէնք ու զինւորական հագուստ կը խլէին գիղացիներէն, արջառ և ոչխար պաշտօնական բռնագրամանց կ'ենթարկէին, իսկ անպաշտօն կերպով կը յափշտակէին ամէն ինչ (խու, մեղր, պանիր, զարդեր, դրամ եւ այլն)»⁶¹⁴: Բռնագրավումների հետևանքը պետք է լիներ դժգոհողների թվի ավելացումը⁶¹⁵:

Պարսկաստանում հաստատված գործիչ Ս. Բաղդասարյանը բռնագրավումների վերաբերյալ գրում է. «Յեղկոմը բուլորովին հաշի չառաւ Հայաստանի ուրոյն պայմաններն ու վարեց այնպէս, ինչպէս մեծամասնականները վարել էին Ռուսաստանում և դա եղաւ -

⁶¹³ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 9 մարտի:

⁶¹⁴ Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, էջ 250:

⁶¹⁵ Նույն տեղում, էջ 251:

Հայաստանի Յեղկոմի ամենախոշոր սխալը, որն և ծնունդ տւեց 1921 թ. փետրուարեան ապստամբութեանը»⁶¹⁶:

Ի դեպ, Հայիեղկոմի կողմից իրականացվող բռնագրավումների քաղաքականությունը քննադատում է նաև Ա. Մռավյանը Մոսկվայում գտնվող հայ կոմունիստներին իր ուղարկած նամակում⁶¹⁷:

Անշուշտ, Ռուսաստանում քննություն չանցած բռնագրավումների դաժան փորձի վերակիրառումը պատերազմներից տնտեսապես քայքայված Հայաստանում առնվազն անմտություն էր: Բռնագրավումների համար բերված բացատրությունները, եթե այդպիսիք լինում էին, որևէ արդարացում չունեին: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումը սոցիալ-տնտեսական ծանր օրեր ապրող Հայաստանում անհետևանք չմնաց:

Արժե հիշատակել նաև, որ Սփյուռքում եղել են որոշ գործիչներ, որոնք արդարացված են համարել բռնագրավումները: Այսպես, Պարսկաստանում հաստատված նախկին դաշնակցական Արշակ Ղազարյանը գտնում էր, որ հեղափոխության հաղթանակն անրապնդելու տեսակետից ճիշտ էին խորհրդային իշխանությունների կողմից սկզբնական շրջանում կիրառվող բռնությունները⁶¹⁸: Մեր կարծիքով, Ա. Ղազարյանի այդ դիրքորոշումն ավելի շատ պայմանավորված է իր նախկին կուսակցությանն ամեն առիթով քննադատելու ցանկությամբ:

1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ էական էր համարում անհարկի ձերբակալությունները և գործադրված բռնությունները, որոնք կիրառվեցին բուլճարի իշխանությունների կողմից:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը գրում է, որ բուլճարիկները ձերբակալություններն անհրաժեշտ էին համարում «հակայեղափոխութիւնը» արմատախիլ անելու եւ բոլոր վնա-

⁶¹⁶ Բաղդասարեան Ա., Խորհրդային Հայաստան, պրակ առաջին, էջ 13:

⁶¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79., թ. 1 և հակ.- 6 և հակ., հմմտ. Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատասխանատու խմբագիր և կազմող Վ. Ղազախեցյան), Երևան, 1999, էջ 19:

⁶¹⁸ Ղազարեան Ա., Ազատութեան ուղին եւ հայի քաղաքական վարքագիծը, Թէիրան, 1924, էջ 30:

սակար տարրերը չէզոքացնելու նպատակով»⁶¹⁹: Ըստ թերթի՝ այս «հիմնավորումը» ևս դժգոհություն առաջ բերեց ժողովրդի մեջ:

Տարագիր հայ գործիչ Գարեգին Նժդեհը նշում է, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը հայ բոլշևիկներն արդեն վրեժխնդրություն էին ծրագրում դաշնակցականների հանդեպ, և դեկտեմբերի 2-ի պայմանագիրը ոչինչ չէր նշանակելու իրենց համար⁶²⁰: Բոլշևիկյան «Կարմիր Ավանգարդ» թերթը սպառնացել էր «բնաջնջել Դաշնակցական ամբողջ հակայեղափոխությունը»⁶²¹: Այս հրապարակման կապակցությամբ Գ. Նժդեհը գրում է. «Ահա այն արնոտ դատավճիռը, որի հաջող գործադրության դեպքում հայ ժողովուրդը պիտի գլխատուէր, պիտի մեռներ կոլտուրապէս: «Գլխովին» ոչնչացնել Հ.Յ.Դաշնակցութիւնը, որ ասել է՝ հայ մտաւորականութեան մեծագոյն մասը և նրա մարտական բոլոր տարրերը»⁶²²: Այսպիսով, Գ. Նժդեհը, անդրադառնալով բոլշևիկների գործադրած սարսափներին, գտնում է, որ դրանք բխում էին ոչ թե ժողովրդի հանդեպ ունեցած անկեղծ մտահոգությունից, այլ վերջիններիս քինախնդրության նենգ դրսևորումներ էին: Հակապետական գործունեության համար կուսակցական մի քանի ընկերների սպանության⁶²³ դիմաց ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի մտավորականությանը, Գ. Նժդեհի բնութագրմամբ, հրեշույթուն էր: Բացի դրանից, Գ. Նժդեհը գրում է, որ Լեռնահայաստանի հերոսամարտը կարողացավ յուրովի «հոգեբանօրէն հրահրել եւ ռազմագիտօրէն կարելի դարձնել Հայաստանի Փետրուարեան ապստամբութիւնը, ապա փրկութեան կամուրջ հանդիսանալ բոլշեւիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտաւորականութեան համար»⁶²⁴: Իհարկէ, հայ բոլշևիկների մեջ քիչ չէին խելամիտ գործիչները, որոնց համար անձնական վիրավորանքը կամ նախկին քաղաքական ձախողումները և անհաջողությունները չէին կարող պայմանավորել իրենց հետագա գործունեությունը: Սակայն Գ. Նժդեհի

⁶¹⁹ «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

⁶²⁰ Դաշնակցականներին ձերբակալելու գործընթացը սկսել է նաև Բ. Լեգրանը (տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 373,374):

⁶²¹ «Կարմիր Ավանգարդ», Բաքու, 1920, 30 հոկտեմբերի:

⁶²² Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 84:

⁶²³ Գ. Նժդեհը նկատի ունի 1920 թ. հակապետական գործունեություն ծավալելու մեղադրանքով Հայաստանի Առաջին հանրապետության դատարանների կողմից մահապատժի ենթարկված բոլշևիկներին:

⁶²⁴ Նժդեհ Գ., Հատընտիր, էջ 333:

փաստարկը մեզ համոզում է, որ շատ դեպքերում նոր իշխանությունների ներկայացուցիչներն իսկապես նաև վրեժ էին լուծում նախկին «դեպքերի» համար: Կարծում ենք՝ գործելակերպի նման մոտեցումը, որն, ինչ խոսք, արձանագրվել է երկուստեք, բացասաբար է անդրադարձել ընդհանուր իրավիճակի վրա: Նոր իշխանության որոշ ներկայացուցիչների վրեժխնդրությամբ պայմանավորված գործողություններն ավելորդ թերահավատություն են ներարկել իշխանությունը զիջողներին:

Խորհրդային իշխանությունները նախապես կազմել էին այն մարդկանց ցուցակը, որոնք պետք է ձերբակալվեին խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ ժամերին⁶²⁵: Ձերբակալությունների հարցում հիմնական դերակատարը ՉԵԿԱ-ն էր: Ս. Վրացյանը գրում է. «Դեկտեմբերի 6-ին կազմեց եւ անմիջապէս գործի անցաւ Չէկան, ու սկսուեցին ձերբակալութիւնները»⁶²⁶: Ըստ նրա, ՉԵԿԱ-յի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, «յատկացուեցին Ռոստոմի և Կարճիկեան փողոցի անկիւնում երկու խոշոր շինութիւններ: Չէկայի նախագահութեան համար բռնագրաւուեց Խորհրդարանի փոխ-նախագահ Ա. Սահակեանի բնակարանը»⁶²⁷: Փաստորեն բոլշևիկներն ի սկզբանե ծրագրել էին իրենց կողմից իրականացվելիք բռնությունների քաղաքականությունը, որը գործադրվելու էր ՉԵԿԱ-յի ձեռամբ:

Աչքի ընկնող ոչ բոլշևիկ գործիչներից առաջինը ձերբակալվում է Հայ ՍԴԿ Կենտկոմի անդամ Բախշի Իշխանյանը⁶²⁸: Ապա բանտարկվեցին խմբապետ Համազասպը⁶²⁹,

⁶²⁵ Տե՛ս Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 1 (113), էջ 107:

⁶²⁶ Վրացեան Ս., Ինչու եւ ինչպէս խորհրդայնացաւ Հայաստան, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 73:

⁶²⁷ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 69, հմմտ. Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Երևան, 2003, էջ 238:

⁶²⁸ Տե՛ս «Коммунист», Эривань, 7 декабря, 1921.

⁶²⁹ Հայիեղկոմի անդամ Ավիսը ժամանակին դաշնակցական էր, մտերիմ է եղել Համազասպի հետ: Վերջինս, «վստահելով իրենց հին մտերմութեան, մի նամակ էր գրել եւ համագործակցութեան պատրաստակամութիւն յայտնել: Ավիսը պատասխանել էր սիրալիր եւ նրան իր մօտ հրաւիրել: Տեսակցութեան ընթացքում նոյնիսկ խոստացել էր պաշտօն տալ, բայց հենց գրասենյակի դռան առջեւ ձերբակալել էր տուել նրան» (տե՛ս Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), էջ 315): Մեկ այլ վկայության համաձայն՝ Ավիսն ինքն էր մասնավոր նամակով Համազասպին Նոր Բայազետից կանչել Երևան, իսկ վերջինս էլ հավատալով եկել էր: Չնայած Դրոյի կշտամբանքներին, որ Համազասպը չպետք է գար, վերջինս պնդում էր, որ որևէ հանցանք չի գործել և մտահոգության առիթ չունի, նոյնիսկ սկզբնական շրջանում Ավիսի մասին Համազասպը բարեկամաբար է արտահայտվել (տե՛ս Աստուածատրեան Ա., Բախշի Իշխանեանի հետ Երևանի բանտում, «Հայրենիք», 1936, սեպտեմբեր, էջ 135): Ավիսին իր կատարած

Նոր Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը և ուրիշներ: Սակայն բոլորը կարծում էին, որ դրանք մասնավոր դեպքեր կարող էին լինել:

Առաջին հանրապետության տարիներին Երևանի քաղաքապետ, 1920 թ. դեկտեմբերին բոլշևիկների կողմից ձերբակալված և բանտում հայտնված Արշալույս Աստվածատրյանը, որի հուշերը շատ ավելի ուշ հրատարակվեցին, դժգոհություն է հայտնում հատկապես նախկին կառավարության անդամների և պետական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների ձերբակալության կապակցությամբ⁶³⁰: Բոլորը միանշանակ պնդում են, որ հասարակության վրա առավել ճնշող տպավորություն թողեց Վրաստան անցնելու նպատակով Երևանից հեռացած կուսակցական և պետական ղեկավար գործիչների ձերբակալությունը⁶³¹: Հ. Օհանջանյանի, Հ. Տեր-Դավթյանի, Ռ. Դարբինյանի, Կ. Ղազարյանի, Վ. Նավասարդյանի, Վ. Բաբայանի, Ա. Աստվածատրյանի, Հ. Մելիքյանի, Գ. Վարշամյանի և ուրիշների ձերբակալության մասին են խոսում գրեթե բոլոր ժամանակակիցները⁶³²: Առավել նվաստացուցիչ էր ձերբակալվածների մի մասին բեռնատար մեքենաներով, իսկ մյուսին ոտքով Երևան բերելը⁶³³:

Դիվիզանում, սակայն, կարմիր բանակի հատուկ բաժինը որոշել էր Հ. Օհանջանյանին, Ռ. Դարբինյանին, Վ. Նավասարդյանին, Հ. Մելիքյանին, Վ. Բաբայանին, Հ. Տեր-

դաժանությունների համար մի քանի դաշնակցականներ որոշում են 1921 թ. հունվարի սկզբին սպանել, սակայն Ս. Վրացյանը, իրադրությունն առավել չարելու նպատակով, արգելում է նրանց նման քայլի դիմել (տե՛ս Փետրուարեան ապստամբությունը (Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), «Հայրենիք», 1956, յունիս, էջ 66): Ավիսի նենգ և անհավասարակշիռ բնավորության մասին գիտեին նաև Հայաստանի սահմաններից դուրս: Պատահական չէ, որ Կովկասի կոմունիստների առաջնորդ Գրիգորի (Սերգո) Օրջոնիկիձե՛ն Հայիեղկոմի նախագահ Ս. Կապյանին ուղղված հեռագրում զգուշացնում է. «Խստագույն հրաման արձակեք որպեսզի բացառված լինի անգամ չնչին խուլիգանություն: Խնդրում եմ հաղորդեք Ավիսին ... որ չդիմեք որևէ ռեպրեսիայի, և ընդհանրապես ցուցաբերել ծայրաստիճան զգուշություն» (Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982, էջ 338):

⁶³⁰ Տե՛ս Աստուածատրեան Ա., Փետրուարեան ապստամբությունը, «Հայրենիք», 1968, թիւ 2, էջ 39:

⁶³¹ Դաշնակցական գործիչների ձերբակալման հրամանն իրականում ավելի շուտ է եղել: Դեկտեմբերի 2-ին հրաման էր ստորագրվել Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալության մասին: Այդ հրամանը, որքան էլ զարմանալի է, արձակել էր Բ. Լեգրանը Երևանի համաձայնագրի ստորագրման օրը՝ դեկտեմբերի 2-ին (տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մե՛ծ տերությունները 1917-1923 թթ., էջ 374): Վ. Ղազախեցյանի բնորոշմամբ Բ. Լեգրանն ամենակոպիտ կերպով ոտնահարում էր իր իսկ ստորագրած համաձայնագիրը, իրեն տեր-տնօրեն համարում Հայաստանում (տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 39):

⁶³² Տե՛ս Աստուածատրեան Ա., Փետրուարեան ապստամբությունը, «Հայրենիք», 1968, թիւ 2, էջ 39:

⁶³³ Տե՛ս Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 69:

Դավթյանին, Գ. Վարշամյանին ու Կ. Ղազարյանին տեղում գնդակահարել: «Սակայն, այդ նոյն գիշերը, երբ այդ մասին իմացեր էր Բագուէն Դիլիջան հասած Հայկական Հեղկոմը, բուռն կերպով ընդդիմացեր էր եւ պահանջեր իրեն յանձնել մեզ՝ Երեւանի մէջ հրապարակով մեզ դատելու եւ պատժելու համար», - գրում է ձերբակալվածներից Ռ. Դարբինյանը⁶³⁴: Դիլիջանում կիրառված բռնությունների կապակցությամբ Գ. Օրջոնիկիձեն կոչ է անում կարմիրբանակայիններին կոպիտ չվերաբերվել բնակչության հետ⁶³⁵: Հայ և ռուս բոլշևիկների վեճի արդյունքում որոշվում է ձերբակալվածներին այնուամենայնիվ տեղափոխել Երևան:

Ս. Վրացյանը գրում է, որ առաջին իսկ օրերից Չեկայում խոսում էին գնդակահարությունների անհրաժեշտության մասին: Նույնիսկ հնչեցվել են գնդակահարության ենթակա թեկնածուների անուններ՝ Ռուբեն Դարբինյան, Սերգեյ Մելիք-Յուլյան, - Համազասպ, Բախշի Իշխանյան և ուրիշներ⁶³⁶: Դատելով Ս. Վրացյանի գրությունից՝ կարելի է ենթադրել, որ բոլշևիկները ծրագրել էին սպանել ձերբակալվածներին:

Նախկին կառավարության անդամներին ձերբակալելն իսկ արդեն խոսում է բոլշևիկյան իշխանությունների իրական մտադրությունների մասին, հատկապես, որ ձերբակալվածները հեռանում էին Հայաստանից և իշխանության համար որևէ վտանգ չէին ներկայացնում: Ձերբակալությունները, ձերբակալվածների հանդեպ անմարդկային վերաբերմունքը վկայում էին բռնությունների վտանգավոր աստիճանի հասնելու միտումի մասին:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ն անդրադառնում է ձերբակալվածների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքին⁶³⁷, որն առավել անտանելի դարձրեց իրավիճակը: Առանձնակի դժգոհություն առաջ եկավ, երբ արդարադատության ժողովրդական կոմիսարիատը ցրեց գործող դատարանները և ցանկացած դատի վարման իրավունքը հանձնեց հեղափոխական տրիբունալներին⁶³⁸: Իսկ առավել զավեշտալին և արտառոցն այն էր, որ հայ բոլշևիկները 1921 թ. հունվարի 11-ին Խորհրդային Հայաստանի արդարադատության

⁶³⁴ Տե՛ս Դարբինեան Ռ., Երկեր, Ա հատոր, էջ 537:

⁶³⁵ Տե՛ս Мнацаканян А., Посланцы советской России в Армении, с 61.

⁶³⁶ Տե՛ս Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, էջ 63-73, դեկտեմբեր, էջ 70:

⁶³⁷ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 2 մարտի:

⁶³⁸ Տե՛ս նույն տեղում, 5 մարտի:

կոմիսար էին նշանակել Սուլեյման Նուրիին⁶³⁹: Վերջինս պաշտոնապես Թուրքիայի կոմունիստական կուսակցության անդամ էր⁶⁴⁰ և, ինչպես պարզվեց Փետրվարյան ապստամբության օրերին, գաղտնի տեղեկություններ էր տրամադրել քեմալականներին⁶⁴¹: 1920 թ. դեկտեմբերի 20-ին ՀՍԽՀ Հեղկոմի որոշմամբ Ս. Նուրին որպես մուսուլման ընդգրկվում է հեղկոմի կազմի մեջ⁶⁴²: Ս. Նուրին մեծ մասնակցություն է ունեցել բանտերում տեղի ունեցող սպանդին⁶⁴³: Ռ. Դարբինյանն իր հուշերում նշում է, որ բռնկիկները բանտարկյալներին սպանելու համար փետրվարի 13-ին հայ և ռուս պահակներին փոխարինեցին թուրքերով, ովքեր բռնկիկների համար ավելի վստահելի էին բանտարկյալներին կոտորելու գործում⁶⁴⁴: Ի դեպ, նույնը վկայում է նաև երևանյան բանտում հայտնված անգլիացի զինվորական Օլիվեր Բոլդուինը⁶⁴⁵:

Ս. Նուրիին ժողովրդական կոմիսար նշանակելը, մինչ այդ նաև Հեղկոմի կազմի մեջ մտցնելը բռնկիկյան իշխանությունների առաջին օրերի մեծագույն սխալներից էր: Որքան էլ իրենց այդ քայլով նրանք փորձեին Ռուսաստանի բռնկիկ ղեկավարներին ցույց տալ, թե Հայաստանում իշխանության մեջ ընդգրկված են նաև մահմեդականների ներկայացուցիչները, նրանք պետք է հաշվի առնեին երկու կարևոր հանգամանք: Հայ ժողովուրդը բազմաթիվ զրկանքներ էր կրել թուրքերից, և անկախ այն հանգամանքից, թե ինչ կուսակցության էր պատկանում Ս. Նուրին, նրա նշանակումն ազգային պատկանելության պատճառով սվիններով պետք է ընդունվեր հասարակ ժողովրդի կողմից: Բացի այդ պետք

⁶³⁹ Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 107:

⁶⁴⁰ Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), էջ 369:

⁶⁴¹ Տե՛ս Աշխատունի Ջ., Դրուագներ մեր ազատության պայքարից, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 131:

⁶⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, գ. 2, թ. 31, հմմտ. Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), էջ 45:

⁶⁴³ Տե՛ս Ստեփանյան Գ., 1921 թ. փետրվարի 14-18-ի իրադարձությունները Երևանի կենտրոնական բանտում. Նոր մանրամասնություններ Հայհեղկոմի ոճրագործությունների վերաբերյալ, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2015, թիվ 3, էջ 164:

⁶⁴⁴ Տե՛ս Դարբինյան Ռ., Երկեր, Ա հատոր, էջ 563:

⁶⁴⁵ Տե՛ս Պոլտոին Օ., Վեց բանտ եւ երկու յեղափոխութիւն: Արկածախնդրութիւններ Անդրկովկասի ու Անատոլիոյ մէջ, 1920-1921, Աղեքսանդրիա, 1933, էջ 128: (Օլիվեր Բոլդուինի նշված հուշագրությունը նախապես հրատարակվել է Լոնդոնում 1924 թ., տե՛ս Baldwin O., Six Prisons and Two Revolutions: Adventures in Trans-Caucasia and Anatolia, 1920-1921, London, 1924, 272 p): Հայերեն թարգմանվել է 1933 թ.: Մենք օգտվել ենք հուշագրության հայերեն թարգմանությունից:

էր ըմբռնել այն պարզ ճշմարտությունը, որ, անկախ կուսակցական պատկանելությունից, թուրք պաշտոնյան հակված էր չարագործություններ կատարել հայ քաղաքացիների հանդեպ: Հենց այս վերջին հանգամանքի գիտակցումով են շատ դեպքերում իշխանություններին ընդդիմացողներին պատժելը վստահել Ս. Նուրիին:

Բոլշևիկների կողմից «հակահեղափոխականների» զանգվածային ձերբակալությունները սկսվեցին 1921 թ. հունվարին: Հունվարյան բռնությունները պայմանավորված էին նաև իշխանությունների՝ հակախորհրդային ելույթների նախապատրաստության մասին ունեցած կասկածներով⁶⁴⁶: Կ. Սասունու վկայությամբ ձերբակալվածների թիվը հասավ 1900-ի⁶⁴⁷: «Հակայեղափոխական» անվան տակ շուրջ 2000 մարդու ձերբակալության մասին է գրում Աշոտ Թաթուրը: Ընդ որում բանտարկվում էին «անմեղները առանց դասակարգի, տարիքի եւ սեռի խտրութեան»⁶⁴⁸:

1921 թ. հունվարին ՌԿ(ք)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշմամբ Հայաստան է ժամանում Կովկասյան ռազմաճակատում Խորհրդային Ռուսաստանի արտակարգ հանձնաժողովի լիազոր Գևորգ Աթարբեկյանը⁶⁴⁹: Վերջինս մինչև Հայաստան գալը բոլշևիկյան տեռոր էր գործադրել Հյուսիսային Կովկասում և դաժան «հեղափոխական-հարվածայինի» անուն էր վաստակել⁶⁵⁰: Նա իր ռուսաստանյան «հեղափոխականի փորձը» ամեն կերպ ձգտում էր կիրառել Հայաստանում: Ռուսաստանից ընդօրինակումը հասել էր այն աստիճանի, որ արտակարգ հանձնաժողովը որոշումներ էր ընդունում համակենտրոնացման ճամբարներում մարդկանց դատապարտելու մասին այն դեպքում, երբ այդպիսիք Հայաստանում չկային, բայց կային Ռուսաստանում⁶⁵¹:

1915 թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ 1921 թ. հունվար-փետրվարին բանտում հայտնված Հայկակ Կոսոյանը այսպես է արտահայտվում Գ. Աթար-

⁶⁴⁶ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., էջ 65:

⁶⁴⁷ Տե՛ս Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 101:

⁶⁴⁸ «Յառաջ», Փարիզ, 1929, 21 փետրուարի:

⁶⁴⁹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, հ. VII, Երևան, 1967, էջ 139:

⁶⁵⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Եфимов Н., Атарбеков - один из зачинщиков красного террора, «Вопросы истории», Москва, 2000, N 6, стр. 130-136:

⁶⁵¹ Տե՛ս Ղազարխեցյան Վ., Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, թիվ 1, էջ 50:

բեկյանի կիրառած բռնությունների մասին. «Գեորգ Աթարբեկովը եկել է Երեւան... Նա վերակազմելու է Չեկան և լծելու է նրան աւելի արմատական ձեւով բոլոր հակայեղափոխականներին, բոլշեիկեան իրաւակարգին թշնամի եղողներին մաքրագործելու, կամ ինչպէս ընդունուած էր չեկայական բացատրութեամբ՝ ռասխոդ անելու: Այս բոլորի համար նպատակահարմար էր քաղաքացիական կռուի ճամբով ընթանալ, հետեւելով Ռուսաստանի մէջ կատարուածին»⁶⁵²: Բանտում հայտնված գործչի տպավորությունը թեև ոչ առարկայական (օբյեկտիվ) կարող է ընկալվել, սակայն նույնպես վկայում է բոլշևիկյան բռնությունների մասին, որոնք համապատասխան դժգոհությունների տեղիք տվեցին: Կարծում ենք՝ Գ. Աթարբեկյանին Հայաստան գործուղելը նպատակ ուներ խստացնելու բռնությունները: - Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկ ղեկավարները փորձում էին նաև սարսափի միջոցով հաստատել իրենց կուսակցության իշխանությունը:

Բոլշևիկների գործադրած բռնությունների մասին է գրում նաև Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանը: Վերջինս, սակայն, գտնում է, որ բոլշևիկ անհատների մեջ քիչ չէին մաքուր հեղափոխական խառնվածքով ու նպատակներով օժտվածները: Պարզապես տարածված «կարմիր-հեղափոխական» մթնոլորտը բոլորին դարձրեց անհանդուրժող և մարդասպան: «Անշուշտ բոլշևիկները բնածին ոճրագործներ չէին: ...Անժխտելի է մինչեւ իսկ, որ նրանց մէջ կային դէմքեր՝ յեղափոխական մաքուր անցեալով եւ մարդասէր խառնուածքով: Այսպէս էին սակայն բոլշևիկները, բայց ոչ բոլշևիզմը: Բոլշևիկեան կարգերը մի արինոտ ու քրէական մթնոլորտ ստեղծեցին Ռուսաստանում...», - գրում է տարագիր հայ խմբագիրը⁶⁵³: Իսկ Աթենքի «Նոր օր»-ի բնութագրմամբ մարդիկ բորենի էին դարձել և ծարավ էին արյան: Հատկապէս հայ բոլշևիկները «առատօրէն հոսեցուցին, յագուրդ տալով ծծեցին ազատութեան ու անկախութեան, իրաւունքի ու հաւասարութեան համար մարտնչող չարչարուած ժողովուրդի մը արիւնը»⁶⁵⁴:

⁶⁵² Կոսոյեան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում»... (Փետրուարեան ապստամբութեան ընդվզումի 30-րդ տարեդարձի առթիւ, 1921-1951), Գահիրէ, 1951, էջ 34, հմմտ. Kosoyan H., The First Taste of Soviet Rule in Armenia, "The Armenian Review", 1953, Vol. 6, No. 1, p. 76.

⁶⁵³ Նաւասարդեան Վ., Հ. Յ. Դաշնակցութեան «իկոլիդացիան» (Բոլշևիզմի սնանկութեան առիթով), Գահիրէ, 1924, էջ 20:

⁶⁵⁴ «Նոր օր», Աթէնք, 1932, 19 փետրուարի:

Փետրվարյան ապստամբությանը նախորդած բռնությունների մասին տարիներ անց Ավետիս Ահարոնյանը բաց նամակով հիշեցնում է Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար Գ. Չիչերինին, որ Հայաստանի դժնդակ ռեժիմի պատճառով հայ ժողովուրդը, նոյնիսկ կիսաքաղց և արյունաքամ, անկարող եղավ հանդուրժել բռնությունները: Փետրվարյան ապստամբությունն ապացույցն էր այն բանի, որ հայ ժողովուրդը չի հանդուրժում «ոչ բուլշեիկեան ռեժիմը, ոչ ձեր դոկտրինը եւ ոչ բռնութիւնը»⁶⁵⁵:

Բուլշեիկյան բռնությունների մեջ ամենազարհուրելին թերևս մտավորականների ձերբակալությունն էր: Հայ մտավորականությանը չձերբակալելու խելամիտ որոշ հայ բուլշեիկների մոտեցումն ու պայքարը Գ. Աթարբեկովը համարում էր սխալաստիկ բանավեճ⁶⁵⁶: Նույնիսկ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի նախագահ Գ. Օրջոնիկիձեն 1921 թ. փետրվարի 1-ին Բաքվից Ս. Կասյանին ուղարկված հեռագրում հորդորում է Դաշնակցության դեմ պայքարը չվերածել մտավորականության դեմ պայքարի, թեկուզ եթե այդ մտավորականները նախկինում դաշնակցական են եղել⁶⁵⁷:

Սակայն, ինչպես բնութագրում է Գ. Նժդեհը, բուլշեիկները գիտակցաբար գնացին հայ մտավորականությանը բարբարոսաբար հալածելու և ոչնչացնելու քայլին: «Խորհրդային իշխանութիւնն էլ գիտեր, որ հանցանք է, ոճիր ամէն մի մտաւորականի «հակայեղափոխական» եւ «խափանարար» հռչակել եւ յանձնել Չէկա կոչուած գազանին: Բայց քաջ գիտեր եւ այն, որ անգլուխ և անղեկավար զանգուածներն աւելի հեշտ են կառավարվում», - գրում է Գ. Նժդեհը⁶⁵⁸:

Փաստորեն բուլշեիկյան հեղափոխությունն ավելի հեշտությամբ խորացնելու «մտադրությամբ» խորհրդային իշխանությունները Հայաստանում մտավորականության զանգվածային ահաբեկում իրականացրցին: Աշոտ Հովհաննիսյանը 1925 թ. ՀԿԿ 4-րդ համագումարի իր զեկույցում նշում է, որ նոյեմբերի 29-ից մինչև փետրվարի 18-ը «քաղաքա-

⁶⁵⁵ «Հայրենիք», 1925, 10 յունիսի:

⁶⁵⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 13:

⁶⁵⁷ Տե՛ս Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Ղազարխեցյան, Երևան, 1999, էջ 17:

⁶⁵⁸ Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 84:

կան տեռոր» է կիրառվել⁶⁵⁹: Նրա կարծիքով այս քայլն ամենաշատը հուզեց ժողովրդին և մեծապես ազդեց Փետրվարյան ապստամբության հասունացման վրա: Հայաստանի Առաջին հանրապետության աշխատանքի նախարար Արշակ Հովհաննիսյանը (Ա. Արշակունին) գրում է, որ բանտում գտնվող մտավորականության կորստի վախը նույնպես պատճառ էր ապստամբություն բարձրացնելու⁶⁶⁰: Մտավորականության հանդեպ կիրառվող չափն անցնող և անտեղի գործողությունները վճռորոշ եղան ապստամբության հասունացման համար:

Բոստոնի «Հայրենիք» ամսագիրը գրում է, որ ապստամբությունը հասունացավ հատկապես փետրվարի 9-10-ի զանգվածային ձերբակալությունների պատճառով⁶⁶¹: Փետրվարի 10-ին Երևան քաղաքում ձերբակալում են շուրջ 120 հոգու⁶⁶²: Բանտերն այնքան լիքն էին, որ այնտեղից ազատ էին արձակում քրեական հանցագործների մեծ մասին⁶⁶³: Բանտում հայտնված անգլիացի սպա Օլիվեր Բոլդուինը գրում է, որ ձերբակալվածների մեջ կային մարդիկ, «որոնք ընկերվարութիւն քարոզած ըլլալնուն համար տարիներով տառապած էին սիպիրիական բանտերուն խորքը, և պաշտպան կանգնած ժողովուրդին դատին նախ քան որ հայ Համայնավար կուսակցութեան անդամներէն կամ երիտասարդ ռուս գործակալներէն ուէ մէկը ծնած ըլլար տակաւին»⁶⁶⁴:

Իրենց գործադրած և գործադրելիք բռնություններն արդարացնելու համար 1921 թ. փետրվարի 12-ին ՀԿԿ կենտկոմը և Երևանի կոմիտեն հատուկ կոչով դիմում են Խորհրդային Հայաստանի բոլոր աշխատավորներին. «Ընկերներ, արթուն եղեք, խմբվեք ձեր Կոմունիստական կուսակցության շուրջը, լրացրեք Կարմիր Բանակի շարքերը, անողորք կոիվ մղեցեք ձեր դասակարգային թշնամիների դեմ: Նրանց պետք է ոչնչացնել»⁶⁶⁵: ԶԵԿԱ-ն փետրվարի 13-ին նպատակահարմար էր համարել ձերբակալել նաև «բոլոր հայտնի մաու-

⁶⁵⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 40:

⁶⁶⁰ Տե՛ս Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 46:

⁶⁶¹ Նույն տեղում, էջ 45:

⁶⁶² Տե՛ս Քաջազնունի Յ., Յետ մահու: Պատմումաճքներ, յուշեր, յօդուածներ, նամակներ, էջ 70:

⁶⁶³ Տե՛ս Դարբինեան Ռ., Երկեր, Ա հատոր, էջ 552:

⁶⁶⁴ Պոլտովն Օ., Վեց բանտ եւ երկու յեղափոխութիւն..., էջ 53:

⁶⁶⁵ Հակոբյան Ա., Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Երևան, 1960, էջ 40:

զերիստների և դաշնակցականների մոտիկ ազգականներին»: Լուր տարածվեց, որ «Չէկան որոշել է բոլոր բանտարկեալներին հանել բակ ու այնտեղ կոտորել»⁶⁶⁶:

Իրագեկը գրում է Հայաստանում գործադրության մեջ մտած մի երևույթի՝ «ռասխողի» մասին, որը բոլշևիկյան տերմինաբանությամբ նշանակում էր ՉԵԿԱ-յի կարգադրությամբ սպանել, ոչնչացնել⁶⁶⁷: Փետրվարյան դեպքերի ականատես Զավեն Աշխատունին (Զաքար Զոլյան) ապստամբության առիթի մասին խոսելիս անդրադառնում է փետրվարի 18-ին նախորդած օրերին տեղի ունեցած գնդակահարություններին. «Փետրուարի 16-ին առաւօտեան «Օրիանտ» հիւրանոցի մուտքի դրանը փակցուած էր Չէկայի կողմից Երեւանի բանտում 22 գնդակահարուած բանտարկեալների ցանկը, որի մէջ Չէկան սպառնում էր նաեւ ենթարկել սպանուածների վիճակին այն բոլոր քաղաքացիներին, որոնք կը յանդգնին մասնակցել «հակայեղափոխական» շարժման՝ սովետական իշխանութեան դէմ»⁶⁶⁸: Գնդակահարվածների ցանկի հայտնվելը բնականաբար ավելի է խորացնում ատելությունը տիրող կացության հանդեպ, և սկսում էին բացահայտ խոսել «ռէժիմի» տապալման անհրաժեշտության մասին⁶⁶⁹: Զ. Աշխատունին նաև նկարագրում է, թե ինչպես փետրվարի 18-ի առավոտյան ապստամբները, կոտրելով բանտի դռները, ներխուժեցին՝ «ազատելու Հայաստանի ազատագրութեան գաղափարախօս մտաւորականութիւնն եւ միւս ընկերները, թո՛ւզ 1700-2100 հոգի»⁶⁷⁰: Բանտում գտնվողների մեծ մասը ծանր հոգեվիճակի մեջ էր հայտնվել: Բոլշևիկյան ռեժիմի կողմից բանտում կիրառվող բռնությունները և գնդակահարությունները ոչ միայն նպաստեցին դժգոհությունների խորացմանը, այլև դրանց մասին հստակ տեղեկություններն ավելի արագացրեին ապստամբությունը: Ապս-

⁶⁶⁶ Աստուածատրեան Ա., Բախշի Իշխանեանի հետ Երևանի բանտում, «Հայրենիք», 1936, հոկտեմբեր, էջ 114:

⁶⁶⁷ Տե՛ս Իրագեկ Յ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), Պէյրուֆ, 1956, էջ 95:

⁶⁶⁸ Աշխատունի Զ., նշվ. աշխ., էջ 135:

⁶⁶⁹ Տե՛ս Ստեփանյան Խ., Բոլշևիկյան բռնաճնշումները որպէս 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառ (1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականները), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2014, հ. 17, էջ 132:

⁶⁷⁰ Աշխատունի Զ., նշվ. աշխ., էջ 135:

տամբների համար առաջնային նպատակ համարվեց վայրկյան առաջ ազատել Երևանի բանտում ձերբակալվածներին:

Բոլշևիկյան բանտային սարսափները մանրամասն նկարագրում է Բախշի Իշխանյանը: Վերջինս Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո ձերբակալվել էր բոլշևիկների կողմից և բանտում ենթարկվել անասելի տանջանքների: Բ. Իշխանյանն իր տարած տանջանքների ազդեցության տակ գրում է, որ բանտը յուրօրինակ ձևով արտացոլում էր բոլշևիկյան պետական կառուցվածքի և կառավարական ռեժիմի էությունը⁶⁷¹:

Նույնիսկ Փարիզի ռամկավար պարբերական «Ապագա»-ն, ունենալով հակադաշնակցական դիրքորոշում, այնուամենայնիվ փաստում է, որ հեղկոմը խստացնում էր իր մեթոդները «դասակարգային թշնամիներու» դեմ, բռնագրաւումներու դէպքերը քաղաքին թէ գիւղին մէջ յաճախադէպ կը դառնային, խուզարկութիւններ, բանտարկութիւններ կը շատանային, եւ փետր. 18ին կը բռնկէր քաղաքացիական կռիւր Երեւանի մէջ եւ արագօրէն կը տարածուէր շրջանները»⁶⁷²: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռամկավար մամուլը հատկապես 1920-1930-ական թվականներին փորձում էր անխնա քննադատության ենթարկել իրենց հակառակորդ Դաշնակցությանը, իսկ այդ քննադատության գլխավոր թիրախներից մեկը համարվում էր Փետրվարյան ապստամբությունը, «Ապագա»-ի վերոնշյալ դիտարկումը փաստում է, որ կիրառվող բռնությունների արդյունքում հասարակական, համաժողովրդական ըմբոստացումն անխուսափելի էր:

Գնդակահարված և գնդակահարման ենթակա մարդկանց խնդրին անդրադառնում է նաև Արշակ Ալպոյաճյանը: «Ամէն օր նախորդ օրը գնդակահար եղողներու ցանկը կը փակցնէին փողոցները, որպէսզի ժողովուրդը գիտնար և ահաբէկէր:... Պողէվիքները ծրագրած էին 600 հոգի մահով պատժել, սակայն իրագործելու ժամանակ չունեցան»,- գրում է սփյուռքահայ ականավոր գործիչը⁶⁷³: Փետրվարյան դեպքերի ընթացքը չէզոք դիրքերից քննած Ա. Ալպոյաճյանի տեսակետը, թերևս փոքր-ինչ չափազանցված, հիմք է

⁶⁷¹ Տե՛ս Իշխանեան Բ., Երկու ամիս բօլշեփկեան բանտում, Գահիրէ, 1924, էջ 2:

⁶⁷² «Ապագայ», Փարիզ, 4 փետրուարի, 1933:

⁶⁷³ Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ.՝ Թէոդիկ), ԺՁ տարի, էջ 252:

տալիս կարծելու, որ, ըստ էության, բոլշևիկյան իշխանության նպատակները բավականին խիստ են եղել: Փաստորեն բոլշևիկների վարած ձերբակալությունների և գնդակահարությունների քաղաքականությունը քննադատվում էր նաև դաշնակցականներին ոչ համակիր և խորհրդային իշխանության հանդեպ լոյալ տրամադրված հասարակական-քաղաքական գործիչը:

Փարիզի ռամկավարների պաշտոնաթերթ «Ապագա»-ն այլ կերպ է ներկայացնում բոլշևիկների բռնությունների շարժառիթները: Ըստ թերթի՝ դաշնակցականներին հալածելու միջոցով բոլշևիկները փորձում էին ծանր վիճակից դուրս գալու փրկության ելք որոնել: Իսկ «Դաշնակցականներն եւս իրենց փրկութիւնը ժողովուրդի դժգոհութիւնը հրահրելու եւ զայն շահագործելու մէջ որոնեցին»⁶⁷⁴: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն դաշնակցական թերթերի, ռամկավար պաշտոնաթերթը մի կողմից ականա հաստատում է, որ փոխանակ երկրում ծանր վիճակը բարելավելուն, բոլշևիկները փորձում էին դաշնակցականներին հալածել: Մյուս կողմից տպավորություն է ստեղծվում, որ դաշնակցականները հանուն իրենց շահերի օգտագործեցին ժողովրդի ծանր կացությունը:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ կարևոր է համարում բոլշևիկների իրականացրած անհարկի ձերբակալությունները: Մենք նույնպես հակված ենք կարծելու, որ, չնայած իշխանության ղեկին հաստատվելու նպատակով որոշակի խստությունների անհրաժեշտությանը, Խորհրդային Հայաստանի նորընծա ղեկավարները ձերբակալությունների հարցում անցան խոհեմության սահմանները: Գործադրված բռնություններն ինքնաբերաբար մեծացրին դժգոհությունները, ինչն էլ, ի վերջո, հանգեցրեց ապստամբության:

Ինչպես գրում է Արշալույս Աստվածատրյանը, բոլշևիկների՝ երկիր կառավարելու ձևը (բռնություններ, անտեղի բանտարկություններ, աքսոր ու սպանություն) կատարելապես անակնկալ էր հայ ժողովրդի համար: Մեր գյուղացին ենթադրում էր, որ գալու է այն ռուսը, որին ինքը սովոր էր պատերազմից առաջ, և որի օրոք թեև ինքը զուրկ է եղել շատ

⁶⁷⁴ «Ապագայ», 1926, 20 մարտի:

բաներից, բայց սովոր է եղել կարգ ու կանոնի, որոշ օրինականության: Իսկ այժմ իր տեսածն ու կրածը ժխտում էին ամեն մի օրենք ու իրավակարգ⁶⁷⁵: Ձերբակալությունները «հիմնավորվում» էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ: Իսկ բանտում հայտնված մտավորական և զինվորական գործիչների գնդակահարություններն ու կացնահարություններն այլևս սպասելու տեղ չթողեցին: Փետրվարյան ապստամբությունը նշված և ներքևում թվարկվող այլ պատճառներով պայմանավորված դարձավ անխուսափելի:

Ավելացնենք, որ Հայրենիքի փրկության կոմիտեն արդեն փետրվարի 20-ին 10 միլիոն ռուբլի հատկացրեց բոլշևիկների կողմից ձերբակալված և սպանված կարիքավոր անհատներին և ընտանիքներին⁶⁷⁶: Քանի որ քաղաքացիական կռիվների ընթացքում Հայրենիքի փրկության կոմիտեի կարգադրությամբ ձերբակալվում էին կոմունիստ գործիչներ, Ս. Վրացյանը մարտի 14-ին կարգադրում է որոշակի խնամք և հոգատարություն ցուցաբերել կոմունիստ բանտարկյալների նկատմամբ, երաշխավորել նրանց կյանքը և անձեռնմխելիությունը⁶⁷⁷:

Փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը, որին անդրադառնում է 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, բոլշևիկյան իշխանությունների վերաբերմունքն էր դեպի հայ զորքն ու սպայությունը:

Հայաստանում վերցնելով իշխանությունը՝ բոլշևիկները որոշում են հայ սպաներին հեռացնել Հայաստանից և քայքայել հայկական բանակը: Հայ սպաներին Ռուսաստան աքսորելու գաղափարն առաջ էր քաշել Լև Տրոցկին՝ առաջարկելով, որ նրանց փոխարինեն ռուսները⁶⁷⁸: Ռազմական գործերի ժողկոմ Ավիս Նուրիջանյանը հայ սպաների աքսորը հիմնավորում է Ռուսաստանի փորձով⁶⁷⁹:

⁶⁷⁵ Տե՛ս Աստուածատրեան Ա., Բախշի իշխանեանի հետ Երևանի բանտում, «Հայրենիք», 1936, հոկտեմբեր, էջ 142:

⁶⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ.37, ց. 1, գ. 9, թ. 72րջ.:

⁶⁷⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 58:

⁶⁷⁸ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества. Документы и комментарии (Сост., отв. Редактор, автор предисловия и комментария профессор Ю. Г. Барсегов), т. 2, ч. 2, Москва, 2003, с. 337.

⁶⁷⁹ Տե՛ս «Կոմունիստ», 1921, 29 յունուարի:

Հայ սպաների բանտարկությունն ու աքսորը տեղի է ունենում Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: Նախաձեռնությունը խորհրդային Ռուսաստանի կենտրոնական իշխանությանն էր և իրականացվել է 11-րդ կարմիր բանակի հրամանատարության կողմից, Հայաստանի իշխանությունների մասնակցությամբ⁶⁸⁰:

Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Կ. Սասունին, ապստամբության պատճառներին անդրադառնալով, գրում է, որ հայ սպաների հանդեպ հալածանքը բխում էր բոլշևիկների վրեժխնդրական զգացումներից: Դեկտեմբերի սկզբին՝ Երևանի համաձայնագրի ստորագրումից հետո, Ղազախի շրջանում հայկական բանակի զորավար Սեպուհի (Արշակ Ներսիսյան) գնդերը հանդիպում են թուրքերին, մալականներին ու բոլշևիկ հայերին: Վերջիններս, սակայն, փորձեցին վրեժ լուծել Սեպուհի գնդերից նախկինում կրած պարտությունների համար: Իսկ Սեպուհի գնդերն իսկապես մարտական հաջող գործողություններ էին մղել Ադրբեջանից Հայաստան ներխուժող զինյալների դեմ՝ պաշտպանելով Հայաստանի անկախությունը: Վրեժով լցված բոլշևիկները, դիմադրության չհանդիպելով, զինաթափում և ձերբակալում են աչքի ընկած հայ սպաներին, որով «սկսում է բոլշևիկների առաջին վրեժխնդրական ծախող քայլը, որ շարունակում է յետագային, անլացնելով հիասթափությունը»⁶⁸¹: Ըստ էության հայ բոլշևիկները, չհարգելով դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, Սեպուհից վրեժ էին լուծում՝ Առաջին հանրապետության շրջանում հակաբոլշևիկյան խռովությունները ճնշելու համար: Հայկական բանակի հանդեպ վրեժխնդրության՝ իր տեսակով առաջիններից մեկը համարվող այս դեպքը հետագայում սովորական դարձավ:

Հայկական բանակի հանդեպ իրենց հալածանքն ավելի լայնածավալ իրականացնելու նպատակով բոլշևիկները նախկին կառավարության անդամ, բանակի հրամանատար Դրոյին աքսորեցին Հայաստանից⁶⁸², ինչն առանձնակի կասկածով համակեց ժո-

⁶⁸⁰ Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայ սպաների աքսորը 1920-1921 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, թիվ 2, էջ 32:

⁶⁸¹ Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 94:

⁶⁸² Տե՛ս Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), «Հայրենիք», 1956, ապրիլ, էջ 22: Խմբապետ Մարտիրոսը՝ Մարտիրոս Աբրահամյանը, Փետրվարյան ապստամբության ակտիվ դերակատարներից էր: Ապստամբության վերաբերյալ նրա հուշերն առաջին անգամ տպագրվել են 1956-1957 թթ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (տե՛ս Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը),

ղովրդին: Այս կապակցությամբ Փետրվարյան ապստամբության դեպքերի ականատես, տարագիր Աշոտ Թաթուլը գրում է. «Բուլշևիկեան որոշումը Դրօի հանդէպ շրջան ըրաւ Երեւանի հայութեան մէջ, որ իր ներքին բնազդական առողջ աչքերով կը տեսնէր խարդախութիւնը, իր բոլոր մութ ծալքերով»⁶⁸³: Անկասկած, Դրոն իր ներկայությամբ մեծապես զսպում էր հայ բուլշևիկներին, իսկ հայկական բանակն ու հայ սպայությունը Հայաստանում Դրոյի ներկայությունն ընկալում էր որպէս հայկական բանակի անվտանգության գրավական:

Դրոյին Հայաստանից արտաքսելուց հետո, ինչպէս գրում է Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը, բուլշևիկները չվարանեցին քայքայելու հայկական զորքը, որը երկրի անվտանգության միակ գրավականն էր: Ժողովուրդը, բնականաբար, դա չընդունեց: Մինչդեռ բուլշևիկները հայ սպաներին բռնի տեղափոխեցին Ադրբեջան և Ռուսաստան: Թերթի բնորոշմամբ «բուլշևիկների այս յանցաւոր քայլը եկաւ լեցնելու հայ ժողովրդի համբերութեան բաժակը»⁶⁸⁴: Դրոյի հեռանալուց անմիջապէս հետո իրականացվեց հայ սպայության զանգվածային հալածանքը: Ինչը համաժողովրդական դժգոհության և հիասթափության տեղիք տվեց:

Միաժամանակ Դրոյի արտաքսումն ահազանգ էր դաշնակցականների համար: Փետրվարյան ապստամբության ակտիվ մասնակից Բաշգառնեցի Մարտիրոսը հիշում է, որ Դրոյի՝ Մոսկվա մեկնելուց հետո Ս. Վրացյանը հրահանգեց արագացնել ապստամբությունը⁶⁸⁵: Մեր կարծիքով Դրոն, ով ընդգծված ռուսամետ դիրքորոշում ուներ, այլևս խոչըն-

«Հայրենիք», 1956, փետրար, էջ 3-12, մարտ, էջ 25-34, ապրիլ, էջ 17-27, մայիս, էջ 39-49, յունիս, էջ 59-69, յուլիս, էջ 32-40, սեպտեմբեր, էջ 49-57, հոկտեմբեր, էջ 68-78, նոյեմբեր, էջ 78-89, 1957, յունուար, էջ 58-66, փետրար, էջ 59-71, մարտ, էջ 99-104) և 1957-1958 թթ. “The Armenian Review” հանդեսում (տե՛ս Hayrapetian Y., The February 18, 1921 Armenian Revolt, “The Armenian Review”, Massachusetts, 1957, Vol. 10, N 2, N 3, pp. 146-157, N 4, pp. 147-158, 1958, Vol. 11, N 1, pp. 143-152, N 2, pp. 153-160, N 3 pp. 151-156): Ավելի ուշ Մ. Աբրահամյանի հուշերը վերահրատարակվել են Թեհրանում և Երևանում (տե՛ս Աբրահամեան Մ, Իմ յիշելի յուշերը, Թեհրան, 1978, 580 էջ, Աբրահամյան Մ., (Բաշգառնեցի Մարտիրոս), Իմ հիշելի հուշերը (20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր ներկայացուցիչ Մարտիրոս Աբրահամյանի հուշերը և մարտական կենսագրությունը): Խմբ., առաջաբ. հեղ.՝ Վ. Պետրոսյան, Երևան, 2016, 640 էջ):

⁶⁸³ «Յառաջ», 1929, 22 փետրուարի:

⁶⁸⁴ «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

⁶⁸⁵ Տե՛ս Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), «Հայրենիք», 1956, մարտ, էջ 31:

դոտ էր հայ բուլճիկների համար: Սկզբնական շրջանում Դրոյի գործոնը մեծապես օգտագործվեց Հայաստանի խորհրդայնացումը հնարավորինս հեշտությամբ իրականացնելու համար: Հայաստանի խորհրդայնացումից հետո նոր իշխանությունների համար Դրոյին ասպարեզից հեռացնելը մեծապես կոյուրացներ բուլճիկների հակաժողովրդական ծրագրերի իրականացումը: Այս նպատակով էլ կազմակերպվեց Դրոյի «աքսորը» Հայաստանից:

1921 թ. հունվարի 24-ին հայ սպայությանն աքսորեցին Հայաստանից⁶⁸⁶: Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Հ. Տեր-Հակոբյանի բնութագրմամբ «դաժան եւ անգութ եղաւ բուլճեիկ իշխանութեան վերաբերումը եւ դէպի հանրապետական բանակի ղեկավարութիւնը... Տուն չկար, որ չողբար Հայրենիքին հասած ահաւոր աղէտի համար»⁶⁸⁷: Եվ այս վայրագություններն իրավիճակը դարձնում են անտանելի: Այսպիսով, հայ սպաների զանգվածային ձերբակալության ու աքսորի պատճառով համաժողովրդական դժգոհությունը հասավ իր գագաթնակետին: Ազգային բանակի, հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերելու պատրաստ զինվորականության հանդեպ հայ բուլճիկների անմարդկային վերաբերմունքը ժողովուրդը չհանդուրժեց: Բանվորագյուղացիական հեղափոխությունը խորացնելու մոլագար գաղափարաբանությամբ տարված՝ հայ բուլճիկները ժողովրդին կանգնեցրին ապստամբության դիմելու փաստի առջև⁶⁸⁸:

Ս. Վրացյանը հայկական բանակի գլխատման հիմնական մեղսակիցներ համարում է Գ. Աթարբեկյանին և Ավիսին⁶⁸⁹: Նա միաժամանակ անդրադառնում է աքսորված սպաների ընտանիքների ծանր վիճակին: «Նրանք (սպաների ընտանիքները - Խ. Ս.),- գրում է Ս. Վրացյանը,- ամենքը բառիս բուն նշանակությամբ մնացին առանց հացի եւ վերին աստիճանի ողորմելի վիճակի մէջ: Կառավարութիւնը, ի հարկէ, իրեն պարտական չէր զգում օգնելու «հակայեղափոխական»ների ընտանիքներին. Թող կոտորուին, որքան

⁶⁸⁶ Հայ սպաներին աքսորել են նաև Վրաստանից և Ադրբեջանից: Մասնավորապես Վրաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո 219 հայ սպաներ աքսորվել են Ռյազան (տե՛ս Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002, էջ 19):

⁶⁸⁷ Իրազեկ, նշվ. աշխ., էջ 310:

⁶⁸⁸ Տե՛ս Ստեփանյան Խ., Բուլճիկների կողմից հայկական բանակի և հայ սպայության հանդեպ հալածանքը որպես 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Երևան, 2014, թիվ 3 (19), էջ 45:

⁶⁸⁹ Տե՛ս Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, յունուար, էջ 87:

շուտ, այնքան լաւ բանուորա-գիւղացիական իշխանութեան համար»⁶⁹⁰: Փաստորեն հայ բոլշևիկների կարծիքով Հայաստանում խորհրդային կարգերի խորացմանը խանգարում էին ոչ միայն հայկական բանակի սպաները, այլև վերջիններիս ընտանիքները:

«Հայրենիք» ամսագրում հայ զինվորականության աքսորին անդրադառնում է նաև տարագիր հայ սպա Հակոբ Մարմանդյանը: Վերջինս այս դեպքերի մասին գրելիս հիշում է, որ Հայաստան մտած ՉԵԿԱ-ն կառավարության հավանությանը ներկայացրեց մի ծրագիր, ըստ որի պետք էր «քշել Հայաստանից բոլոր ղեկավարներին, որոնք անյուսալի են, ապա եւ բոլոր ոչ-կոմունիստ սպաներին, այնուհետեւ քշել մտաւորականութիւնը եւ այդպիսով միանգամ ընդմիշտ ապահովել սովետական իրաւակարգը Հայաստանում»⁶⁹¹: Հ. Մարմանդյանը գրում է, որ մինչև հունվարի 24-ն էլ Հայաստանից աքսորել էին մոտ երկու տասնյակ սպաների՝ իբրև հրամանատարական կարմիր կուրսերն ավարտելու համար: Ապա ուղարկել էին ևս մի քանի տասնյակի, հետո Դրոյին՝ իր մտերիմներով: Ձերբակալել էին և բանտ նետել բոլոր այն սպաներին, ովքեր ճնշել էին Մայիսյան ապստամբությունը: Տարագիր հայ սպայի համար շատ դժվար է վերհիշել հատկապէս 1921 թ. հունվարի 24-ը՝ սպաների զանգվածային ձերբակալությունների և աքսորի օրը: Այդ օրը, ըստ նրա, մի արգահատելի հեգնանք էր՝ ուղղված հայ ժողովրդի դարավոր պատմությանը⁶⁹²:

Հ. Մարմանդյանը գտնում է, որ սպաների ձերբակալությունից հետո ժողովրդի հիասթափությունն արդեն «կատարեալ» դարձավ, ցուցակագրության նպատակով հավաքված սպաներին նենգորեն շրջապատում են ռուսական զորամասերով, զինաթափում և «ապա ձիւն-ձմրան եղանակին քշուեցին մինչեւ Աղստաֆա կայարանը, այնտեղից Բագու-Ռոստով-Ռեազան եւ Արխանգելսկ»⁶⁹³: Սփյուռքում հաստատված հայ զինվորականի վկայությունը փաստում է, որ հայ սպաների աքսորը ևս խոր հիասթափություն առաջ բերեց և նպաստեց Փետրվարյան ապստամբությանը:

⁶⁹⁰ Նույն տեղում, էջ 90:

⁶⁹¹ Մարմանդեան Յ., Հայ սպաների աքսորը (մի էջ հայ սպայի յուշերից), «Հայրենիք», 1934, օգոստոս, էջ 103:

⁶⁹² Տե՛ս նույն տեղում:

⁶⁹³ Նույն տեղում:

Հայ սպաների աքսորի բացասական հետևանքներին են անդրադարձել նաև Ա. Արշակունին⁶⁹⁴, Աշոտ Թաթուլը⁶⁹⁵, Արշակ Ալպոյաճյանը: Վերջինս այս կապակցությամբ գրում է. «Հայ պետության մը առաջին որոշիչ նշանը՝ Հայ Բանակը գոյութիւն ունենալէ կը դադրէր, վասնզի Կասեանի կառավարութիւնը ոչ միայն դեկտ. 17ին զօրացրումով հայ բանակը կը ջնջէր, այլև անոր սպաները դառնալով մը կը հեռացնէր երկրէն»⁶⁹⁶: Փաստորեն նույնիսկ Դաշնակցությանն ընդդիմադիր հասարակական գործիչ Ա. Ալպոյաճյանի համար էր ակնհայտ հայ սպայության ձերբակալության և աքսորի անիմաստ և անհեռատես լինելը: Իսկապես, դավադրություն էր հայկական բանակի սերուցքին երկրից հեռացնելը:

Հայ սպայության ձերբակալությամբ պայմանավորված հիասթափությունների խորացմանն անդրադառնում է նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը⁶⁹⁷:

Հայ սպաների աքսորի կապակցությամբ արժանահիշատակ է բոլշևիկ ղեկավար գործիչ Ասքանազ Մռավյանի գնահատականը: Վերջինս, նկատի ունենալով նաև Հայաստանի հայկական բանակի սպաների արտաքսումը, բացատրում է, որ իրենք՝ բոլշևիկները, դաշնակցականների դեմ սուր և կատաղի պայքարի համար բոլորովին պատրաստ չէին, որ Կենտկոմի վերջին ամսի քաղաքականությունը խորհրդային իշխանության նկատմամբ առաջացրել էր բացասական տրամադրություն⁶⁹⁸: Փաստորեն որոշ հայ բոլշևիկ ղեկավարներ նույնպես ընդունում են հայ սպաներին երկրից արտաքսելու սխալականությունը:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. սիյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, քննելով 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառները, վերջիններիս թվում առանձնացնում է բոլշևիկյան իշխանությունների բացասական վերաբերմունքը դեպի հայ զորքն ու սպայությունը: Հայկական բանակի սպաների ձերբակալությունը և աքսորը խոր հիասթափությունների պատճառ հանդիսացան: Բոլշևիկյան իշխանությունների

⁶⁹⁴ Տե՛ս Արշակունի Ա., նշվ. աշխ., էջ 45:

⁶⁹⁵ Տե՛ս «Յառաջ», 1929, 21 փետրուարի:

⁶⁹⁶ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 250:

⁶⁹⁷ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 8 մարտի:

⁶⁹⁸ Տե՛ս Ղազարխեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 31:

վարած քաղաքականության հանդեպ զանգվածային դժգոհություններն ավելի սրվեցին, ինչը հանգեցրեց համաժողովրդական ապստամբության:

Սիյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային է համարում քաղաքացիական կռիվներ հրահրելու նպատակով բոլշևիկյան իշխանությունների սադրանքները: Քանի որ Հայաստանում բոլշևիկները հենարան չունեին, իրենց մենատիրությունը «կայուն» դարձնելու մտադրությամբ նրանք մի շարք բռնություններ գործադրեցին, որոնք շատ դեպքերում քաղաքացիական կռիվներ էին սադրում⁶⁹⁹: Իրազեկի բնորոշմամբ նման բռնություններ «նոյնիսկ իսրայելցիները չէին տեսել գերութեան մեջ Եգիպտոսում»⁷⁰⁰: Վերջինս գտնում է, որ բոլշևիկյան իշխանությունների գործադրած բռնությունները նպատակաուղղված էին ժողովրդին ըմբոստության մղելուն: Ըստ բոլշևիկների՝ քաղաքացիական կռիվ բռնվելու հաստատված իշխանությունն ավելի ամուր կլիներ⁷⁰¹:

⁶⁹⁹ Հայ բոլշևիկների կողմից քաղաքացիական կռիվներ սադրելու խնդրին անդրադարձել են պատմաբաններ Վլադիմիր Ղազախեցյանը, Գալուստ Գալոյանը և ուրիշներ: «Երբ արդեն այդ պայթյունը տեղի էր ունեցել և երկիրը ներգրավվել էր քաղաքացիական պատերազմի հորձանուտը, Հայիեղկոմի և Հայկոմկուսի Կենտկոմի անդամ Ասքանազ Մռավյանը նամակով դիմեց Մոսկվայում գտնվող հայ գործընկերներին, նրանց միջոցով տեղեկացնելու համար Վ. Լենինին նամակի բովանդակության մասին և խնդրելու համապատասխան օգնություն: Ա. Մռավյանը պարզաբանում է «դաշնակցական արկածախնդրության» պատճառները՝ դա կապելով դաշնակցականների նկատմամբ գործադրած բռնությունների հետ: Թերթը («Կոմունիստ»-Խ.Ս.) աղմուկով և ճղճղան տոնով կոչում էր քաղաքացիական պատերազմի: Մթնոլորտը շիկանում էր յուրաքանչյուր ժամ: Ըստ Մռավյանի՝ դրանից օգտվեցին գաղտնի աշխատանք տանող դաշնակցականները և հաջողությամբ կազմակերպեցին իրենց հակախորհրդային ելույթը», - գրում է Վ. Ղազախեցյանը (տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 31): Ի դեպ, Ա. Մռավյանը «Կոմունիստ» թերթի քաղաքացիական կռիվ կոչերը քննադատող նամակ է գրում նաև Մոսկվա (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 1 և հակ., 6 և հակ., հմմտ. Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 18): Առավել մեղմ, բայց կրկին իրատես գնահատական է տալիս նաև Գ. Գալոյանը. «Հայաստանում հակախորհրդային խռովության բարձրացման խնդրում մեղքի նշանակալից բաժինն ընկնում էր, անշուշտ, Հայաստանի կոմկուսի ղեկավարության վրա: Դաշնակցություն կուսակցության դեմ պայքարի քաղաքականությունը, ինչպես այդ մասին նշել են Ս. Կասյանը և Ա. Մռավյանը 1921 թ. հունվարի 28-ին կուսակցության Կովկասյան բյուրոյին հասցեագրած նամակում, ըստ էության «ուղղված էր ամբողջ հայ մտավորականության դեմ...», ինչը «հոգեբանական սուր ռեակցիա էր առաջացրել ընդդեմ խորհրդային իշխանության...»: Նրանք գտնում էին, որ Հայկոմկուսի ղեկավարության քաղաքականությունը «արհեստականորեն հող է ստեղծում հակահեղափոխության համար»: Չկիսելով այդ քաղաքականությունը, Ս. Կասյանը և Ա. Մռավյանը հայտարարեցին, որ իրենք դուրս են գալիս Հայիեղկոմի կազմից» (տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 426):

⁷⁰⁰ Իրազեկ, նշվ. աշխ., էջ 305:

⁷⁰¹ Տե՛ս նույն տեղում:

Հայաստանում քաղաքացիական կռիվներ հրահրելու մտադրություն հայ բոլշևիկներն ունեցել են ի սկզբանե: Դեռևս 1920 թ. հունվարի 18-19-ին Երևանում կայացած Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարում առաջնահերթ խնդիր է համարվել քաղաքացիական պատերազմն ընդդեմ «տիրապետող դասակարգի և դաշնակցական կառավարության»⁷⁰²:

Քաղաքացիական կռիվ հրահրելու «առաջամարտիկը» «Կոմունիստ» թերթն էր⁷⁰³: Հ. Քաջազնունին գրում է, որ բոլշևիկյան պաշտոնաթերթն անընդհատ փորձում էր հիմնավորել քաղաքացիական կռիվի «անհրաժեշտությունը»: «Յեղափոխության յաղթանակը ապահովուած չէ Հայաստանում, որովհետեւ այստեղ չի եղել քաղաքացիական պատերազմ: Կռիւ է հարկաւոր, որպէսզի իսկապէս բնաջինջ լինեն հակայեղափոխական տարրերը: Կռիւ է հարկաւոր, որպէսզի խորանայ բանուորագիւղացիական դասակարգային գիտակցութիւնը: Յեղափոխական պրոլետարիատը պիտի թափէ իր ձեռքով բուրժուազիայի արիւնը, որպէսզի անանցանելի վիճակի բաց անի իր եւ նրա միջեւ», - բոլշևիկյան քարոզչության մասին այսպես է ներկայացնում Հայաստանի առաջին վարչապետը⁷⁰⁴: «Կոմունիստ»-ի քաղաքացիական կռիվ կոչերին է անդրադառնում նաև Օննիկ Մխիթարյանը⁷⁰⁵: Կարծում ենք՝ «Կոմունիստ»-ի «արյուն հեղելու» հիվանդագին կոչերը չէին բխում ո՛չ գործող և ո՛չ էլ նախկին իշխանությունների շահերից: Պարզապես չափից ավելի հեղափոխական երևալու մարմաջը կուրացրել էր շատերին:

Ս. Վրացյանն իր հուշերում գրում է. «... բոլշևիկների բոլոր ջանքերն ուղղուած էին այն կողմ, որ քաղաքացիական կռիւ ստեղծուի: Եւ «ջահել» կոմունիստները չափազանց

⁷⁰² Ղարիբջանյան Գ., Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորումը և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, թիվ 4, էջ 44:

⁷⁰³ Տարիներ անց «Կոմունիստ» թերթի և ընդհանրապես բոլշևիկյան մամուլի խաղացած բացասական դերի մասին Սփյուռքում գրվում է. «Խորհրդային Միության մէջ պիտի չկատարուէին մեզի ծանօթ սահմոկեցուցիչ ոճիրները, եթէ այդ երկրի մամուլը չդառնար բռնատրտութան գործիքը: Հաւանաբար բռնաւորը պիտի խափանէր անկախ ու պայքարող մամուլը, բայց ատիկա պիտի ըլլար ժողովրդային զանգուածը ցնցումներու եւ պոռթկումներու առաջնորդող ամենէն ուժգին պրոպագանդը» (տե՛ս Ասպարէզ, 1908-1958: Յիսնամեակ, Ֆրէզնօ, ա. թ., էջ 5):

⁷⁰⁴ Քաջազնունի Յ., Յետ մահու..., էջ 63:

⁷⁰⁵ Մխիթարեան Օ., Փետրուարեան ապստամբութեան աղբիւրները, «Փետրուար 18», Փրակա, 1927, էջ 25:

դժգոհ էին, որ «հակայեղափոխութիւնը» Հայաստանում գլուխ չի բարձրացնում»⁷⁰⁶: Վեր-
կում նշել էինք, որ Ս. Վրացյանը և Հ. Տերտերյանը Ս. Կասյանի ուշադրությունը հրավի-
րում են «ստեղծված վտանգաւոր կացութեան»⁷⁰⁷: Մինչդեռ Հայհեղկոմի անդամներ Ս. -
Կասյանը և Ավիսը դեռևս դեկտեմբերի 4-ին իրենց դժգոհությունն են հայտնում Լեգրա-
նին, որովհետև վերջինս համաձայնության է եկել դաշնակցականների հետ, և առանց
կռվի է իշխանությունը փոխանցվել բոլշևիկներին⁷⁰⁸: Բացի այդ բոլշևիկ ղեկավարները
պահանջում են, որ Դրոն և Հ. Տերտերյանը հրաժարական տան և դուրս գան Հայհեղկոմի
կազմից⁷⁰⁹: Քաղաքացիական կռվի տենդով տառապող հայ բոլշևիկների մասին Վրացյա-
նը նաև հետևյալն է գրում. «Եթէ դեկտ. 2-ից յետոյ Հայաստան եկած լինէին սեփական ու-
ղեղի տէր բոլշևիկներ ու ոչ թէ ինքնուրոյնութիւնից զուրկ, թեթեամիտ ու խակ ֆանֆա-
րօններ, պատասխանատւոյան գիտակցութիւնը չունեցող երեխաներ, Աթարբեգեանի ու
Աւիսի պէս հոգեկան հիւանդներ եւ կամ Կասեանի տիպի անկամ ու ողորմելի ներքինիներ՝
մարդիկ, որոնց քաղաքական իմաստութիւնը ոչ թէ սեփական երկրի վիճակից է թելադր-
ում, այլ Լենինների հապճեպով գրուած պատահական նամակներից՝ հայ կեանքի շատ
պայմաններ այլ կերպ կը դասաւորուէին...»⁷¹⁰: Փաստորեն հայ բոլշևիկների համար գերա-
դասելի էր իշխանությունը քաղաքացիական կռվի միջոցով ձեռք բերել, քան խաղաղ և ա-
նարյուն ճանապարհով: Նրանց համար սա կարևոր էր բանվորագյուղացիական հեղափո-
խութեան խորացման տեսակետից:

Բոլշևիկների այս վարքագիծը հետևյալ կերպ է մեկնաբանում Ա. Արշակունին: Նա
գրում է, որ բոլշևիկներից շատերը «անձեռնհաս էին ըմբռնելու սոցիալական յեղափոխու-
թիւնը: Նրանք չէին հասկանում Հոկտեմբերեան յեղաշրջման նպատակն ու իմաստը, հե-
ռու գաղափար իսկ չունէին բանուորական դիկտատուրայի եւ ոչ էլ պետական որևէ ձեւի
մասին: Նրանք չգիտէին սոցիալիզմի ուսմունքն ու էութիւնը»⁷¹¹: Ըստ էութեան հայ բոլշևիկ-

⁷⁰⁶ Վրացեան Ս., Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, փետրուար, էջ 32:

⁷⁰⁷ Նոյն տեղում, էջ 34:

⁷⁰⁸ Տե՛ս Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 67,68:

⁷⁰⁹ Գևորգյան Հ., Դրո, Երևան, 1999, էջ 483:

⁷¹⁰ Վրացեան Ս., Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, փետրուար, էջ 43:

⁷¹¹ Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 42:

ները, Հայաստանում չունենալով սոցիալական հենարան⁷¹², չյուրացնելով սոցիալիստական հեղափոխության հիմնական նպատակները, փորձում էին երկրում սոցիալիստական կարգեր հաստատել, իսկ հեղափոխությունն իրենց համար նախևառաջ քաղաքացիական կռիվներն էին: Իրավացի է Միքայել Վարանդյանը, երբ գրում է, որ բոլշևիզմը ընկերվարություն չէ⁷¹³:

Նույն խնդրին անդրադառնալով՝ Գ.Նժդեհը նշում է, որ «Երեւանի բոլշևիկները բռնուած էին «գերյեղափոխական քոր ու եռով», եւ կազմում էին ղեկավարութեան մեծամասնութիւնը: Հայ բոլշևիկներն աշխատում էին Հայաստանում արհեստական կերպով «յեղափոխական տենդ» ստեղծել»⁷¹⁴: Հայաստանում «հեղափոխության տենդ» տարածելու հարցում Գ. Նժդեհը մեղադրում է հատկապէս ՉԵԿԱ-յի նախագահ Գ. Աթարբեկյանին և Ավիսին, որոնք իրենց արարքներով նպաստեցին հալածանքների և սպանությունների «պսիխոզի ստեղծմանը»: Իսկ հայ կոմունիստների բերածը ոչ թե բոլշևիզմ էր, այլ Գ. Նժդեհի բնութագրմամբ՝ «քաղաքական եւ ընկերային խուլիգանութիւն»⁷¹⁵: Գ. Նժդեհի այս ձևակերպումները վկայում են Հայաստանում քաղաքացիական կռիւ մթնոլորտ ստեղծելու հայ բոլշևիկների նախատրամադրվածության մասին: Անշուշտ, տարագիր հայ գործիչը կարող էր փոքր-ինչ վառ գոյներով ներկայացնել իրականությունը, սակայն հայ բոլշևիկների կողմից ներքին արյունահեղություն հրահրելու մղումն ակնհայտ էր:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում բոլշևիկների կողմից քաղաքացիական կռիւ քարոզելու մասին է հիշատակում նաև տարագիր Օննիկ Մխիթարյանը: Նա ևս դժգոհում է, որ բոլշևիկներն առաջին իսկ օրվանից չհարգեցին դեկտեմբերի 2-ի պայմանագրի և ոչ մի կետը: «Համաձայնագիրը իր բոլոր կետերուն մէջ այսքան շնականօրէն կոխկրտելէ ետք բոլշևիկները անցան ահ ու սարսափի ծանօթ քաղաքականութեան: Իբրեւ առաջին ողջոյնի խօսք Հայաստանի իշխանութեան կոչեցին՝ կեցցե քաղաքացիական կռիւր: «Մեզ հետ կամ մեր դէմ» արին հոտող մարտահրաւեր ուղղեցին արեւմտահայ ապրելու ծածք մը եւ ցամաք հաց իսկ չունեցող գաղթականութեան եւ Դաշնակցութեան դէմ կռուելու բոլոր մի-

⁷¹² Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1920-1930 թթ., Երևան, 2015, էջ 183:

⁷¹³ Վարանդեան Մ., Համայնավարութիւնը եւ համաշխարհային յեղափոխութիւն, էջ 65:

⁷¹⁴ Նժդեհ Գ., Իմ պատասխանը ..., էջ 62:

⁷¹⁵ Նժդեհ Գ., Երկեր: Երկու հատորով, հ. 2, էջ 227:

ջոցները ներելի համարեցին ու գործի անցան», - գրում է Օ. Մխիթարյանը⁷¹⁶: Անկասկած, այս վկայությունը ևս փաստում է քաղաքացիական կռիվ սկսելու բոլշևիկների ունեցած նախատրամադրվածության մասին:

«Հայրենիք» ամսագրի հոդվածագիր Զավեն Աշխատունին (Զաքար Յոյան) անդրադառնում է կոմունիստների ժողովներում անընդհատ քննարկվող քաղաքացիական կռիվների անհրաժեշտության հարցին⁷¹⁷: Ըստ նրա՝ բոլշևիկները պրոլետարիատի գերիշխանությունը հաստատելու համար հակված էին անպայմանորեն արյուն հեղելու: Վերևում մենք անդրադարձանք կարմիր բանակի հրամանատար Դրոյի ունեցած հեղինակությանը: Տեսնելով բոլշևիկների կողմից քաղաքացիական կռիվներ հրահրելու ցանկությունը և գիտակցելով պահի լրջությունը՝ նա, ըստ Զ. Աշխատունու, փորձում է Մոսկվայի միջոցով ազդել հայ բոլշևիկների վրա: Վերջիններս էլ, ինչպես վերևում նշեցինք, կարծում էին, որ Դրոյի ներկայությունը Հայաստանում կարող էր խանգարել իրենց «հեղափոխական» գործունեությանը, և իրենք ևս հակված էին Դրոյին հեռացնելու Հայաստանից: Դրոն թեև գիտակցում էր բոլշևիկների մտադրությունը, այնուամենայնիվ տեղի է տալիս նրանց ճնշմանը և համաձայնվում է մեկնել Մոսկվա⁷¹⁸: Դրոն բոլոր հնարավորություններն ուներ - Հայաստանից չհեռանալու, վատագույն դեպքում նա կարող էր անցնել ընդհատակ: Սակայն իրավիճակը չսրելու ցանկությունը նրան մղեց ենթարկվել իշխանությունների որոշմանը: Ի դեպ, Ս. Վրացյանը գրում է, որ հատկապես Դրոյին Հայաստանից հեռացնելուց հետո բոլշևիկներն ամբողջ թափով սկսեցին «զարգացնել քաղաքացիական կռիւը» եւ «խորացնել բանուորագիւղացիական յեղափոխութիւնը»⁷¹⁹: Փաստորեն տարագիր հայ գործիչները գտնում են, որ հրահրվող քաղաքացիական կռիվներում հաջողությունն ապահովագրելու համար հայ բոլշևիկները նախանձախնդիր կերպով Դրոյին հեռացրին Հայաստանից և «գործուղեցին» Մոսկվա:

Սիյուռքահայ մեկ այլ գործիչ՝ Աշոտ Թաթուլը, Փարիզի «Հառաջ» թերթում գրում է, որ բոլշևիկները ձգտում էին քաղաքացիական կռիվ, որպեսզի արտաքին աշխարհին ա-

⁷¹⁶ «Հայրենիք», 1928, 18 փետրուարի:

⁷¹⁷ Տե՛ս Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 128:

⁷¹⁸ Տե՛ս նույն տեղում:

⁷¹⁹ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, էջ 63-73, յունուար, էջ 83:

պացուցեն, «թէ «Հայաստանի բանուորագիտակական յեղափոխութիւնը տապալեց Դաշնակներու բռնապետական կառավարութիւնը»⁷²⁰: Ինչպես տեսնում ենք, հանուն իրենց «հեղափոխական» հավակնությունների բավարարման հայ բոլշևիկների գործադրած քայլերն ավելի սրեցին իրավիճակը՝ չգիտակցելով երկիրն ավելորդ արյունահեղությունից հեռու պահելու կարևորությունը:

Տեղասպանության և հայ-թուրքական պատերազմի պատճառով հսկայական զոհեր տված հայությանը պետք էր զերծ պահել ավելորդ կորուստներից: Մինչդեռ բոլշևիկյան իշխանություններն ամեն ինչ արեցին՝ նոր արյունահեղություն սադրելու համար:

Բոլշևիկների՝ քաղաքացիական կռիվ հրահրելու ցանկության մասին գրում է նաև Հ. Տերտերյանը, որ ինչքան դաշնակցականները խուսափում էին քաղաքացիական կռիվներից, այնքան այն ավելի ցանկալի էր դառնում բոլշևիկների համար: Վերջիններս, համաշխարհային հեղափոխության գաղափարից կուրացած, պատրաստ էին զոհելու անգամ Հայաստանն ու հայ ժողովրդին: Եթե հայն ու Հայաստանը բոլշևիկների համար լինեին նպատակ և ոչ թե միջոց՝ համաշխարհային հեղափոխության հասնելու, նրանք թույլ չէին տա և ի վիճակի էին թույլ չտալու, որ հայ-թուրքական պատերազմը տեղի ունենար, և չէին օգնի թուրքերին խեղդամահ անելու Հայաստանը⁷²¹: Ճիշտ է Հ. Տերտերյանի այն դիտարկումը, որ հայ բոլշևիկների մեծ մասի համար գերխնդիրը ոչ թե հայ ժողովրդի փրկությունն էր, այլ համաշխարհային հեղափոխությունը:

Անշուշտ, փորձեր են եղել կանխելու եղբայրասպան կռիվը: Սակայն, ինչպես նշվում է «Դրոշակ»ի խմբագրականում, հայ բոլշևիկները լսել անգամ չէին ուզում քաղաքացիական կռիվներից խուսափելու մասին: Նրանք դա Հայաստանում անհրաժեշտություն էին համարում, գտնում էին, որ պետք է «Հայաստանում էլ «բուրժուազիայի» արինը հոսի, որպէսզի խորհրդային իշխանութիւնը ամրանայ ու խորանայ: Եւ իրօք, ամէն օր գումարող բոլոր միտինգներում, «Կօմունիստ» թերթի բոլոր խմբագրականներում ու յօդածներում միայն մէկ իշխող միտք էր արտայայտում – քաղաքացիական կռիւ անհրաժեշտու-

⁷²⁰«Յառաջ», 1929, 21 փետրուարի:

⁷²¹Տե՛ս նույն տեղում, էջ 199:

թիւնը»⁷²²: Այսպիսով, կարելի է ընդունել, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ բոլշևիկյան սադրանքները նրանց քարոզչության հիմնական առանցքներից էին:

Ի դեպ, «Դրոշակ»-ի վերոնշյալ խմբագրականն անդրադառնում է նաև բոլշևիկների այն խոստովանությանը, որ սխալ էր իրենց կողմից Հայաստանում Ռուսաստանյան բռնությունների փորձի կիրառումը⁷²³:

Ամփոփումից առաջ մեջբերենք Ս. Վրացյանի եզրակացությունը բոլշևիկների հրահրած սադրանքների վերաբերյալ. «Փետրուարեան յեղաշրջումը արդիւնք էր ներքին պատճառների՝ հետեւանք բոլշևիկների յանցաւոր քաղաքականութեան: Նա չէր բխում քաղաքական հանգամանքների միջազգային նոր դասաւորութիւնից: Միջազգային կացութիւնն, ընդհակառակն, աւելի նպաստաւոր էր բոլշևիկների համար. Ադրբեջանն անշարժ էր, Վրաստանի անկումն անխուսափելի, Ռուսաստանի ներսը լուրջ շարժումներ չկային, Երոպան զբաղւած էր սեփական հոգսերով, եւ տաճիկ-բոլշևիկեան բարեկամութիւնն աւելի եւս ամրանալու վրա: Յեղափոխութեան քաղաքական պատճառ չկար, եւ շարժումը տեղի չէր ունենայ, եթէ բոլշևիկներն իրենք պրովոկացիայի չենթարկէին ժողովրդին»⁷²⁴:

Ըստ էության, իշխանությունը խաղաղ ճանապարհով վերցնելուց հետո, բոլշևիկները բոլոր հնարավորություններն ունեին քաղաքացիական կռիվներ սադրելու փոխարեն լծվելու երկրի վերաշինության գործին: Ներկայացված աշխարհաքաղաքական իրավիճակը նույնպես ձեռնտու էր նրանց: Չկար նաև ներքին վտանգ: Բռնություն գործադրելու ճանապարհով իրենց իշխանությունը հաստատելու «հեղափոխական» մոլուցքը, սակայն, երկիրը հասցրեց եղբայրասպան քաղաքացիական կռիվների դուռը:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, անդրադառնալով Փետրվարյան ապստամբության պատճառներին, ընդգծում է հայ բոլշևիկների կողմից քաղաքացիական կռիվներ սադրելու կամ հրահրելու հանգամանքը: Սփյուռքյան թերթերն ու գործիչները գտնում են, որ բոլշևիկները չէին համակերպ-

⁷²² «Դրոշակ», 1926, թիւ 2, էջ 39:

⁷²³ Տե՛ս նույն տեղում:

⁷²⁴ Վրացեան Ս., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, 2 տարի, թիւ 1, էջ 4:

վում իշխանությունը խաղաղ ճանապարհով ընդունելու փաստի հետ: Վերջիններս, «բան-վորագյուղացիական հեղափոխությունը» խորացնելու, Մոսկվայի բոլշևիկների մոտ իրենց «հեղափոխականությունն» ապացուցելու մոլուցքով տարված, ամենուր քարոզում և գործում էին ի նպաստ եղբայրասպան քաղաքացիական կռիվների: Հայ բոլշևիկների սադրիչ գործելակերպը, ըստ սփյուռքահայ մամուլի, Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից մեկն էր:

Գործադրվող բռնությունների պայմաններում չէր կարող լինել խոսքի և մամուլի ազատություն: Ս. Վրացյանը գրում է, որ «Հայաստանի ամբողջ տարածութեան վրայ բոլորովին մեռաւ ազատ միտքն ու հասարակական կեանքը»⁷²⁵: Նա խոսում է նաև մամուլի սահմանափակումների մասին. «Մամուլը ներկայացուած էր «Կոմունիստ», «Աղքատ գիւղացի» ու «Կարմիր բանուոր» անբովանդակ ու ողորմելի հայիոյաթերթերով, որոնք փակցւում էին պատերին եւ Դաշնակցականների գլխին թափուած ջղագար լուտանքներից ու կոմունիստական անհամ յօդուածներից զատ ոչինչ չէին պարունակում»⁷²⁶:

Մամուլի և խոսքի ազատության արգելքի փաստն արձանագրում է նաև «Հայրենիք» օրաթերթը⁷²⁷: Բոլշևիկյան թերթերից բացի, մյուս բոլոր թերթերը հռչակվել էին բանվորագյուղացիական իշխանության թշնամիներ⁷²⁸: Ըստ էության բոլշևիկյան մամուլի կողմից իրականացվող հակադաշնակցական, հակաանկախական քարոզչությանը զուգահեռ ոչ կոմունիստական մամուլի արգելումն ավելի սրեց կացությունը:

Ոչ կոմունիստական մամուլի արգելանքի մասին է գրում նաև Ա. Ալպոյաճյանը. «Փակուեցին բոլոր թերթերն ու լրագիրները, բացի կոմունիստականներից: Մասնաւոր տպարանները կամ փակուեցին և կամ պետականացուեցին: Արգիլուեցին բոլոր ժողովներն ու հաւաքոյթները, բացի կոմունիստականներից»⁷²⁹: Սփյուռքահայ ականավոր գործիչը ցավով է նշում, որ իրենց նման գործելակերպով բոլշևիկները բազմաթիվ լրագրողներ

⁷²⁵ Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, յունուար, էջ 85:

⁷²⁶ Նոյն տեղում:

⁷²⁷ Տե՛ս «Հայրենիք», 1931, 18 փետրուարի:

⁷²⁸ Տե՛ս Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 44:

⁷²⁹ Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, էջ 251:

րի, տպարանների աշխատակիցների գրկեցին իրենց ապրուստը հայթայթելու հնարավորությունից⁷³⁰:

Հայաստանում տարբեր կուսակցությունների թերթերի փակման մասին է գրում Կ. Պոլսի «Ճակատամարտը»: Բոլշևիկյան նորընծա իշխանություններն արգելեցին Դաշնակցության պաշտոնաթերթ «Յառաջը», Ժողովրդական կուսակցության «Ժողովուրդը», Ռամկավար-ազատականների «Հայաստանի ձայնը», Սոցիալ-դեմոկրատների «Սօցեալ Դեմօկրատը», Էսեռների «Սօցիալիստ-Յեղափոխականը», զինվորական պաշտոնաթերթ «Ռազմիկը», Հայկոպի պաշտոնաթերթ «Հայաստանի Կօօպերացիան», ինչպես նաև գավառներում հրատարակուող բոլոր թերթերը: Բռնագրավվեցին նաև այն տպարանները, որտեղ լրյս էին տեսնում այդ թերթերը⁷³¹: Կահիրեի «Հուսաբերը» նոր խորհրդայնացված Հայաստանում խոսքի ազատության կտրուկ սահմանափակումների մասին հիշատակելիս մատնանշում է. «Հայաստանի մէջ ոչ միայն ազատութիւն չկար լեզու կամ ոտքեր շարժելու, խօսելու կամ երթելու համար, այլ օդ իսկ չկար անխօս ու անշարժ շնչելու համար»⁷³²:

Ինչպես տեսնում ենք, Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ սփյուռքահայ թերթերի գնահատմամբ պակաս կարևոր չեն նաև բոլշևիկների կողմից խոսքի և մամուլի ազատությունների կտրուկ սահմանափակումները:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ էական էր նաև բոլշևիկների բացասական վերաբերմունքը դեպի ազգային խնդիրները: Ինչպես դիպուկ նկատել է Գ. Նժդեհը, ազգային խնդիրների մերժումով բոլշևիկները «կ'աշխատէին Հայաստանում կեանքի կոչել «նոր» հայր՝ անաստուած, անընտանիք, անհայրենիք»⁷³³:

Արևմտահայության և Արևմտահայաստանի խնդիրների հանդեպ խիստ բացասական վերաբերմունքի առաջամարտիկը «Կոմունիստ» թերթն էր, որի հրապարակումների հետևանքների մասին է վկայում Արմեն Սևանը⁷³⁴:

⁷³⁰ Տե՛ս նույն տեղում:

⁷³¹ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 8 մարտի:

⁷³² «Յուսաբեր», 1931, 18 փետրուարի:

⁷³³ Նժդեհ Գ., Իմ պատասխանը. Հայաստանի ողբերգութիւնը թրքօրոշեիկ փաստաթղթերի լրյսի տակ, էջ 63:

⁷³⁴ Տե՛ս Սեւան Ա., նշվ. աշխ., էջ 95:

Արևմտահայության և Արևմտահայաստանի խնդրի հանդեպ «Կոմունիստ»-ի վերաբերմունքի լավագույն արտահայտությունը թերթից վերցված հետևյալ ընդարձակ մեջբերումն է. «Մենք կոմունիստներս և Հայաստանի Խորհրդային իշխանությունը բոլորովին չենք ցաւում, երբ բանտագիւղացիական Հայաստանից իսպառ կոչնչանան տաճկահայ սպեկուլիանտներն ու թալանչիները, որ տասնեակ տարիների ընթացքում քամել են աշխատաւոր ժողովրդին, և տաճկահայ ինտելիգենտները, որ ժողովրդի մէջ սնել են այն հաւատը, որ փրկութիւնը իմպերիալիստական Եւրոպայից է գալու կամ Տաճկաստանի ոչնչացման մէջն է: ...Մեզ համար «հայոց հարցը» տնտեսական անհրաժեշտութեան և սոցիալական արդարութեան խնդիր է: ... Ուստի Հայաստանի Խորհրդային իշխանութիւնը դեն է շարտում «Միացեալ և անկախ Հայաստանի» ծրագիրը, որ մշակել էին Անտանտան ու հայ բուրժուաները՝ հայ եւ տաճիկ աշխատաւորութեանը ստրկացնելու և կողոպտելու համար»⁷³⁵:

Փաստորեն բոլշևիկյան պաշտոնաթերթը հրապարակավ մարտահրավեր է նետում հայ մտավորականությանը, Արևմտահայաստանի խնդիրը համարում միայն սոցիալական և տնտեսական հարց: Ամենազավեշտալին այն է, որ հայ կոմունիստները Միացյալ Հայաստանի գաղափարը համարում են հայ և թուրք «աշխատավորությանը» կողոպտելու համար առաջացած մի հորինվածք: Հայ բոլշևիկների այս «գրոհը ազգային ոգու դէմ», «ամօթալի թրքասիրութիւնը» Գ. Նժդեհը պայմանավորում է նրանց «հոգեւոր ստրկութեամբ»⁷³⁶: «Կոմունիստ»-ի նմանատիպ հրապարակումները ոչ միայն չէին բխում հայ ժողովրդի շահերից, այլև ուղղակիորեն սադրիչ նպատակներ էին հետապնդում:

Փետրվարյան ապստամբության ղեկավարներից Կարո Սասունին նույնպես փաստում է, որ արևմտահայության դեմ պայքարի «առաջամարտիկի դերը ստանձնել էր «Կոմունիստ» թերթը, որի հունվարյան երկու խմբագրականները խիստ արտառոց էին⁷³⁷: «Մեզ հետ կամ մեզ դեմ» վերնագրով խմբագրականում ճնշում էր գործադրվում արևմտահայերի վրա, ովքեր իրենց լռությամբ դեմ էին արտահայտվում խորհրդային իշխանութ-

⁷³⁵ «Կոմունիստ», 1920, 26 դեկտեմբերի:

⁷³⁶ Տե՛ս Նժդեհ Գ., Հատընտիր, էջ 215:

⁷³⁷ Տե՛ս Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 95:

յուններին: «Միացյալ և անկախ Հայաստանի խնդիրը» վերնագրված խմբագրականը դարձյալ ուղղված էր արևմտահայերի դեմ և «բացորոշ կերպով ասում էր, թե «Տաճկահայաստանի անկախութեան մասին խօսք անելն իսկ աւելորդ է. թե «յեղափոխական եւ դեմոկրատիկ» Թուրքիայի ոչ մի կտոր հողը չպէտք է գրաւուի. թե իմպերիալիստների տուած երազներով անելն աւելորդ է, եւ թէ նրանք, որ դեռ կը հանդգնին այդ յոյսերով ապրել՝ պիտի տրորուին եւ ճզմուին «յեղափոխական» ալիքների տակ: «Մենք,- ասում էին բոլշեւիկները,- մեր ձեռքն ենք կարկառած «եղբայրական, յեղափոխական» Թուրքիային, եւ ովքեր, որ կ'ուզեն իրենց ծննդավայր դառնալ, պէտք է գնան եւ ենթարկուեն Տաճկաստանի յեղափոխական իշխանութեան»⁷³⁸: Ըստ էության համաշխարհային հեղափոխության մոլուցքն այնքան էր բթացրել հայ բոլշեւիկների միտքը, որ արևմտահայության և Արևմտահայաստանի խնդրի հանդեպ նրանց պահվածքը քաղաքական անմեղսունակության դրսևորում կարելի է համարել: Ավելին, բոլշեւիկները կարծում էին, որ արևմտահայերն են թուրքական իշխանությունների՝ Հայաստանի հանդեպ ունեցած վատ տրամադրվածության գլխավոր պատճառը⁷³⁹:

Բոլշեւիկյան իշխանությունները արևմտահայության խնդիրներին հետամուտ լինելու, գաղթականների հոգսերը թեթևացնելու փոխարեն նրանց ստիպում էին կռվի ելնել «դաշնակցականների», «խմբապետների» և այլ կարգի «հակահեղափոխական տարրերի» դեմ, որպեսզի հաղթանակի բանվորագյուղացիական հեղափոխությունը, ինչից հետո, ըստ բոլշեւիկների, գաղթականների դրությունը կբարելավվի⁷⁴⁰: Նրանք գաղթական արևմտահայերին էլ էին տրամադրում և մղում քաղաքացիական պատերազմի: «Գաղթականութեան շահերը պահանջում են, որ նա ակտիւ մասնակցէ յեղափոխութեան խորացման և ամրացմանը թէ քաղաքացիական կռիւ և թէ կոմունիստական շինարարական աշխատանքի ֆրոնտներում»⁷⁴¹: Ինչպես տեսնում ենք, արևմտահայերի խնդիրները լուծելու փոխարեն

⁷³⁸ Նույն տեղում:

⁷³⁹ Տե՛ս Ստեփանյան Խ., Ազգային խնդիրների անտեսումը որպես 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», հ. 15, Երևան, 2014, էջ 164:

⁷⁴⁰ Տե՛ս «Կոմունիստ», 1921, 8 փետրվարի:

⁷⁴¹ Նույն տեղում:

վերջիններիս հայ կոմունիստ ղեկավարները մղում էին «դասակարգային» պայքարի: Ավելի ճիշտ կլիներ արևմտահայերին հեղափոխական պայքարի մեջ ներքաշելու համար հայ բոլշևիկներն ահաբեկելու փոխարեն փորձելն փոքրիշատե լուծել նրանց խնդիրները:

Կ. Սասունին նշում է, որ «դասակարգային» կռվի անվան տակ բոլշևիկյան իշխանությունն առանձնահատուկ պայքար էր մղում արևմտահայ աշխատավորության դեմ⁷⁴²: Նրա պնդմամբ բոլշևիկներին զայրացնում էին արևմտահայերի համերաշխ միասնականությունը, Արևմտյան Հայաստանի ազատագրման և անկախության վերանվաճման փայփայվող գաղափարը: Բացի դրանից, ընչազուրկ արևմտահայերը պատրաստ էին առանց պառակտումների պայքարելու հանուն իրենց իրավունքների պաշտպանության՝ ընդդեմ բռնությունների և հալածանքների⁷⁴³:

Այսպիսով, 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ արևմտահայության հանդեպ բոլշևիկյան իշխանության ունեցած ակնհայտ թշնամական վերաբերմունքն էր: Իրենց հայրենի օջախները վերադառնալ ցանկացող, Արևմտահայաստանի ազատագրումը տենչացող այս մարդկանց բոլշևիկները մեղադրում էին «հեղափոխական Թուրքիայի» դեմ «հանցանք» գործելու մեջ: Բոլշևիկների կողմից գործադրված բռնություններն առավել դաժանաբար էին կիրառվում արևմտահայերի նկատմամբ: Թերևս նաև սրանով էր պայմանավորված այն փաստը, որ ապստամբների հիմնական մասն արևմտահայեր էին⁷⁴⁴:

Բացի արևմտահայության հանդեպ ունեցած արհամարհական վերաբերմունքից, բոլշևիկյան իշխանություններն անարգում էին Հայաստանի անկախության գաղափարն ընդհանրապես: Այս կապակցությամբ «Դրոշակի» խմբագրականը մատնանշում է. «Անվերջ ծաղրի առարկա էր արում Հայաստանի անկախութեան գաղափարը, հայիոյում ու սրբապղծում էին Ժողովրդի բոլոր նւիրական հասկացողութիւնները և ամենագոռեհիկ ձևով մարտահրաւեր էր ուղում երկրին: Եւ արդիւնքը չուշացաւ: Ժողովուրդը չդիմացաւ բռնու-

⁷⁴² Տե՛ս Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 95:

⁷⁴³ Տե՛ս նույն տեղում:

⁷⁴⁴ Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 418:

թեան, թալանին ու իր իդէալների գազանային ոտնահարումին և մի մարդու պէս ոտքի ելաւ»⁷⁴⁵:

Նույն պարբերականը Փետրվարյան ապստամբությունից տասը տարի անց գրում է. «Բոլշեիկները խոստացել էին յարգել հայ ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, ճանաչել էին Հայաստանի անկախութիւնը: Բայց չանցաւ մի քանի շաբաթ, եւ երեւաց, որ Հայաստանի Յեղկոմը, Կասեանի գլխաւորութեամբ, իրաւագուրկ ու ողորմելի խրճիկ է սուկ, եւ Հայաստանի իսկական իշխանութիւնը Երեւան-Բագու ուղիղ հեռագրաթելն է, որով հրահանգներ ու հրամաններ էր ուղարկում 11-րդ բանակի հրամանատարութիւնը՝ Կովկասի փոխարքայ Օրջոնիկիձէի գլխաւորութեամբ: Հայաստանը դարձել էր նաւաւած երկիր, ռուսական մի աննշան գաւառ: Հայ ժողովուրդը տեսաւ ու ըմբռնեց, որ բոլշեիկների անկախութեան խոստումը խաբէութիւն էր լոկ»⁷⁴⁶:

Դեկտեմբերի 2-ի համաձայնագրով բոլշեիկները պարտավորվել էին պահպանել Հայաստանի անկախութիւնը: Անկախության արժեքն արդէն ճաշակած ժողովրդի համար խիստ ցավագին էր իր իշխանությունների կողմից այդ գաղափարի ոտնահարումն ու արհամարհանքը: Հայ ժողովրդի բոլոր խավերն ակնկալում էին իշխանություններից անկախության ամրապնդում: Ինչպէս գրում է Կ. Սասունին, «Հայաստանի անկախութեան հարցը, Տաճկահայաստանի ազատագրումը եւ առհասարակ բռնակալական լուծերից ազատ մնալու խնդիրները մեծապէս յուզում էին հասարակութեան միտքը»⁷⁴⁷: Մեր կարծիքով Խորհրդային Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը թույլ չէին տա, որ Խորհրդային Հայաստանը կատարյալ անկախություն վայելեր: Սակայն անկախության գաղափարի անարգումն ընդհանրապէս անընդունելի էր: Ավելին, անկախության գաղափարի պաշտպանությունն ավելի կուժեղացներ հայ բոլշեիկների դիրքերը Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության մոտ:

Բոլշեիկների կողմից Հայաստանի անկախության գաղափարի ոտնահարման մասին է գրում նաև Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Հ. Տեր-Հակոբյանը: «Հայ ժողո-

⁷⁴⁵ «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 39:

⁷⁴⁶ Նույն տեղում, 1931, թիւ 1-2, էջ 2:

⁷⁴⁷ Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, նոյեմբեր, էջ 87:

վորդը, որ Անկախ Հայաստանի եռագոյնի տակ եւ իր հարազատ Դաշնակցական իշխանութեան օրով, սովորել էր ազատ եւ ինքնանկախ կեանքի, խորհրդայնացած Հայաստանում նա ապրում էր իր ազատութիւնը կորցրած թռչունի նման, կալանաւորի վիճակում, շարունակական մղձաւանջի ու սարսափի ներքոյ»⁷⁴⁸: Կարծում ենք՝ Իրազեկի հայտնած այս մտահոգութիւնը ևս կարող էր հակաբոլշևիկյան ըմբոստության հասունացման պատճառ լինել:

Հայաստանի ինքնուրույնության կորստի հանդեպ իր մտահոգութիւններն է հայտնում նաև Ա.Ալպոյաճյանը: Լինելով Դաշնակցությանն ընդդիմադիր դիրքերում՝ վերջինս, այնուամենայնիվ, խիստ վերապահումներով էր մոտենում բոլշևիկների իրականացրած քաղաքականությանը: Հայաստանի անկախության կորստի կապակցությամբ Ա. Ալպոյաճյանը գրում է. «Հայաստան իր ինքնորոշ և հայեցի դրոշմը կը կորսնցնէ վերստին, ռուսականութեան ենթարկուելով, մանաւանդ Դեկտ.ի վերջերը՝ երբ երկրի ներքին կառավարութիւնն իրապէս կ'անցնէր Չէկա-ին»⁷⁴⁹: Փաստորեն նույնիսկ ոչ դաշնակցական գործիչներն էին քննադատում բոլշևիկների վարած քաղաքականութիւնն ազգային խնդիրների հանդեպ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ դաշնակցականների պնդումները պետք չէ որպէս կուսակցական վրեժխնդրութիւն դիտարկել: Ա. Ալպոյաճյանի նման գործիչը մտահոգութիւն է հայտնում Հայաստանի անկախութիւնից հրաժարվելու հայ բոլշևիկների քաղաքականության հանդեպ:

Հետաքրքիր է Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի այն մեկնաբանութիւնը, որ ապստամբութիւնը պայքար էր՝ անկախութիւնը վերանվաճելու համար: Այս կապակցությամբ թերթը գրում է. «Բայց անվիճելի է մէկ իրողութիւն: Հայ ժողովուրդը թօթափելով դաժան և օտարոտի լուծ մը, ոչ մէկին ասպարէզ կը կարդայ: Ան կռուէր է եւ պիտի կռուի, բացարձակապէս անկախ եւ ազատ ապրելու համար»⁷⁵⁰: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում մատնանշվում է նաև այն հանգամանքը, որ հայ ժողովրդի համար «ազատ եւ ինքնանկախ» ապրելուց հետո անտանելի էր դարձել «շարունակական մղձաւանջի ու սարսափի

⁷⁴⁸ «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

⁷⁴⁹ Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, էջ 250:

⁷⁵⁰ «Ճակատամարտ», 1921, 2 մարտի:

ներքոյ» գոյատևելը⁷⁵¹: Ժողովուրդն իսկապես գիտակցում էր անկախության արժեքը⁷⁵²: «Հայրենիք» օրաթերթն այս պայմաններում բնական էր համարում, որ իրավիճակը հանգելու էր ըմբոստության՝ «ապստամբութեան միջոցով փշրելու իրեն խեղդող շղթաները եւ վրէժխնդիր լինելու իր դահիճներից»⁷⁵³: Փաստորեն Փետրվարյան ապստամբությունը «Հայրենիք»-ը դիտարկում էր որպես յուրատեսակ պայքար հայ ժողովրդի անկախության վերականգնման համար:

Բուենոս Այրեսի «Արմենիա» թերթը նույնպես կարևորում էր անկախության խնդիրը. «Հայ ժողովուրդը մեկ ու կէս ամսուայ մէջ խորապէս զգաց Ազատութեան եւ Անկախութեան կորուստը: Ու մէկ մարդու պէս, տարերային ընդվզումով, առանց իրարմէ լուր ունենալու, ներքին մղումով, աւաններէն, գիւղերէն ու քաղաքներէն ըմբոստութեան լուրեր կը հասնէին մայրաքաղաք... Հարկաւոր էր ձեռք մը, ղեկավար մը, որ տարերային ըմբոստութիւնը դնէր ծրագրի մը տակ՝ լաւագոյն գործադրութեան համար»⁷⁵⁴:

Այսպիսով, սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից մեկը համարում էր բոլշևիկների կողմից Հայաստանի անկախության գաղափարի նսեմացումը: Ժողովուրդը բոլշևիկների գալուց հետո ավելի զգաց անկախության կարևորությունն ու արժեքը, որի համար պատրաստակամություն հայտնեց զենք վերցնելու:

Այն, որ Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառները բոլշևիկյան իշխանությունների գործադրած բռնագրավումները, ապա նաև բռնություններն էին, փորձեցինք պարզաբանել վերևում: Ապստամբությունը յուրատեսակ պայքար էր անկախության վերականգնման համար: Եվ, բնականաբար, բոլշևիկյան իշխանությունների ցանկացած քայլ, որն ուղղված էր անկախության և այդ գաղափարի դեմ, բացասական արձագանքի էր արժանանալու հայ գիտակից զանգվածների կողմից:

Հատկանշական է Կահիրեի «Հուսարեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանի համեմատությունը Փետրվարյան ապստամբության և 1924թ. օգոստոս-սեպ-

⁷⁵¹ «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

⁷⁵² Տե՛ս Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 46:

⁷⁵³ «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

⁷⁵⁴ «Արմենիա», 1933, 18 փետրուարի:

տեմբերին Վրաստանում տեղի ունեցած հակախորհրդային ապստամբության միջև: Նա, խնդիրը դիտարկելով անկախության գաղափարի տեսանկյունից, թերթի խմբագրականում գրում է, որ «Վրաստանը ... չի կրցած, այնուամենայնիւ մինչեւ վերջը լռութեամբ տանիլ կարմիր բորենիներու բոլոր գազանութիւնները եւ սեպտեմբերի 1-ին տարերայնօրէն կրկնած է հայ ժողովրդի «Փետրուար 18»-ը»⁷⁵⁵: Արժանահիշատակ է նաև Վ. Նավասարդյանի այն տեսակետը, որ Վրաստանում հակաբոլշևիկյան ապստամբությունն «ուշացաւ, որովհետեւ վրացի պոլշեիկները – այս վեր է ամէն կասկածէ – բարոյական անկումի ու այլասերումի այն մակարդակին չէ հասած, որուն վրայ կեցած է սկզբի օրէն հայանուն պոլշեիկը»⁷⁵⁶: Վահան Նավասարդյանի այս համեմատությունը վկայում է, որ խորհրդային իշխանությունների գործադրած բռնությունների հետևանքով հպատակ ժողովուրդների պայքարը հանուն անկախության վերականգնման օրինաչափ էր⁷⁵⁷:

Անկախությունից զատ ոտնահարվում էին նաև ազգային այլ արժեքներ՝ դրանք որակվելով որպես բուրժուական ստեղծագործություններ: Ինչպես վերհիշում է Հ. Քաջազունին. «Հայկական եռագոյնը ու «Մեր Հայրենիք»ը, իբրեւ հակայեղափոխական սիմբոլներ, վերացուել էին ասպարիզից: Նրանց փոխարինել էին բոլշեիկեան կարմիրն ու պրոլետարական «ինտերնացիոնալ»ը»⁷⁵⁸:

Ա. Սևանն իր վերոնշյալ հուշ-հոդվածում հիշեցնում է Լեգրանի ստանձնած պարտավորությունները չկատարելու մասին: «Ազգի, հայրենիքի, ժողովրդապետութեան, ազատութեան, հաւասարութեան գաղափարները համարեցան հակայեղափոխական հասկացողութիւններ: Հայ լեզուն անհետացաւ բոլոր պետական եւ հասարակական հիմնարկութիւններէն:... Լըգրանի հետ կնքւած համաձայնագիրը մոռացութեան տրեցաւ ամբողջութեամբ», - գրում է Արմեն Սևանը⁷⁵⁹: Փաստորեն սեփական իշխանության ամրապնդման, համաշխարհային հեղափոխության մասնիկը լինելու ակնկալիքով հայ բոլշևիկները որդե-

⁷⁵⁵ «Յուսաբեր», 1924, 11 սեպտեմբերի:

⁷⁵⁶ Նույն տեղում:

⁷⁵⁷ Վրաստանի 1924 թ. ապստամբության վերաբերյալ սփյուռքահայ մամուլի վերաբերմունքի մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան Խ., Վրաստանի 1924թ. հակախորհրդային ապստամբության արձագանքները սփյուռքահայ մամուլում, «Հայագիտական հանդես», 2017, թիվ 3, էջ 151-162:

⁷⁵⁸ Քաջազունի Յ., Յետ մահու..., էջ 62:

⁷⁵⁹ Սեւան Ա., նշվ. աշխ., էջ 92:

գրել էին ազգային արժեքները մերժելու կործանարար քաղաքականություն, որը սվիններով ընդունվեց ժողովրդի կողմից:

Այսպիսով, 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ, 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, առանցքային էին ազգային խնդիրների հանդեպ բոլշևիկների ունեցած խիստ բացասական քաղաքականությունը, թշնամանքն արևմտահայության և Արևմտահայաստանի խնդրի հանդեպ: Իրենց հայրենի օջախները վերադառնալ ցանկացող, Արևմտահայաստանի ազատագրումը տենչացող արևմտահայերին բոլշևիկները մեղադրում էին բանվորագյուղացիական հեղափոխությանը չաջակցելու, «հեղափոխական Թուրքիայի» դեմ «հանցանք» գործելու մեջ: Բոլշևիկները ոտնահարեցին 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Հայաստանի անկախությունը երաշխավորելու իրենց պարտավորությունը: - Բոլշևիկների իշխանության գալուց հետո հայ ժողովուրդն ավելի զգաց անկախության կարևորությունն ու արժեքը, որի համար դիմեց ապստամբության:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն էական էր համարում նաև բոլշևիկյան նորընծա իշխանությունների կողմից Հայաստանի տարածքային խնդիրները լուծելու անձեռնհասությունը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ակնկալվում էր ոչ միայն վերականգնել հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց եւ մանուֆակտուրա», այլև կարգավորել հարևանների հետ տարածքային խնդիրները և Ռուսաստանի օգնությամբ բարիդրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ⁷⁶⁰: Ռուբեն Դարբինյանը գրում է, որ, դեկտեմբերի 2-ին հանձնելով իշխանությունը, Դաշնակցությունը հույս ուներ, «թե բոլշևիկները կը կատարեն իրենց տուած հրապուրիչ խոստումները, ... թուրքերուն եւ թաթարներուն ձեռքէն կ'առնեն անոնց գրաւած հայկական հողերը»⁷⁶¹:

⁷⁶⁰ Տե՛ս Վրացեան Ս., Ինչո՞ւ և ինչպե՞ս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 76:

⁷⁶¹ Դարբինեան Ռ., Փետրուարեան ապստամբութեան 50-ամեակին առթիւ (խմբագրական), «Հայրենիք», 1971, թիվ 1, գարուն, էջ 2:

Ս. Վրացյանը Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ ևս լուրջ տեղ է հատկացնում բոլշևիկյան իշխանությունների արտաքին-քաղաքական ճախողումներին: «- Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ոտքի հանեցին խորհրդային իշխանության դեմ: Հակառակ իրենց տուած հանդիսաւոր խոստումների եւ յանձնառութիւնների՝ բոլշևիկները ապիկար գտնւեցին եւ արտաքին քաղաքականութեան մէջ», - գրում է նա⁷⁶²: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթն էլ գրում է, որ չքանում են Հայաստանի տարածքային խնդիրները լուծելու բոլշևիկների խոստացած երազները⁷⁶³:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն անդրադառնում է Խորհրդային Ադրբեջանի հետ ունեցած տարածքային խնդիրներին և դրանք լուծելու հարցում - Խորհրդային Հայաստանի իշխանությունների ցուցաբերած թուլությանը: Ճիշտ է ընդամենը երկու ամսում հնարավոր չէր հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրները կարգավորել: Այդուհանդերձ այդ ուղղությամբ բոլշևիկների կողմից գործադրված ջանքերը խիստ անբավարար են դիտարկվել դաշնակցականների կողմից, և, թերևս դրանով պայմանավորված, այս խնդիրը ևս դասվել է Փետրվարյան ապստամբության պատճառների շարքում: Այս առումով Ս. Վրացյանը գրում է. «Հայ կոմունիստները նոյն անկարողութիւնը ցոյց տուին եւ միւս հարեւանների նկատմամբ: Հայազրբեջանեան սահմանային վէճը չլուծուեց, չնայած, որ Ազրբեջանի յեղկօմը դեռ մայիսին⁷⁶⁴ յայտարարել էր, թէ այլեւս Հայաստանի եւ Ազրբեջանի միջեւ ամէն վէճ վերջացած է, եւ Խորհրդ. Ազրբեջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը Հայաստանին: Այսուհետեւ - Ղարաբաղը պէտք է մտնէր Խորհրդային Հայաստանի սահմանների մէջ, եւ այդ հանգամանքը ջերմ գոհունակութեամբ ընդունուեց հայերի կողմից»⁷⁶⁵: Սակայն Ղարաբաղը չհայտնվեց Խորհրդային Հայաստանի կազմում: Հ. Տերտերյանը գրում է, որ Ադրբեջանի այդ հայտարարությունն արվել էր Հայաստանի խորհրդայնացումը հեշտացնելու

⁷⁶² Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 212:

⁷⁶³ Տե՛ս «Հայրենիք», 1931, 18 փետրուարի:

⁷⁶⁴ Այստեղ, կարծում ենք, խոսքը վերաբերում է Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի հայտնի հեռագրին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 1): Սակայն դա տեղի է ունեցել ոչ թե մայիսին, այլ նոյեմբերին (1920 թ.):

⁷⁶⁵ Վրացեան Ս., Ինչո՞ւ և ինչպե՞ս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 78:

նպատակով⁷⁶⁶: Ս. Վրացյանն այս կապակցությամբ բերում է հայ կոմունիստների խոստովանությունը, թե Նարիմանովը Ղարաբաղը զիջելու մտքով չէ, որ արել է այդ հայտարարությունը, այլ՝ որպես հայ բոլշևիկների գործը դյուրացնելու քարոզչական հնարք⁷⁶⁷:

Հայ բոլշևիկների ձախողված քաղաքականությունն Ադրբեջանի հետ հարաբերություններում դժգոհություններ առաջ բերեց Հայաստանում: Խորհրդային Ադրբեջանն ամենևին էլ չէր ցանկանում հրաժարվել Ղարաբաղից, Նախիջևանից և Զանգեզուրից: Հայ բոլշևիկներն էլ կամ անկարող էին, կամ էլ չէին ցանկանում լուծել Ադրբեջանի հետ գոյություն ունեցող տարածքային խնդիրները: Ի դեպ, այս թուլությունը դրսևորվեց նաև Վրաստանի և Թուրքիայի հետ հարաբերություններում:

Ըստ Ս. Վրացյանի՝ ավելի վատ դասավորվեցին հարաբերությունները Վրաստանի հետ: Հայիեղկոմի բոլոր պահանջներին վրացական կողմը պատասխանում էր արհամարհանքով: Վրացիները մերժեցին դատարկել ապօրինի կերպով գրառուած Լոռին, կտրեցին Հայաստանի երկաթուղային հաղորդակցութիւնը Բաթումի և Բաքվի հետ: Հայաստանի բոլշևիկ ղեկավարությունն անզորությունից Լոռու հայ գյուղացիներին գրգռում էր վրացիների դեմ⁷⁶⁸: Այլ խոսքով՝ Վրաստանի իշխանությունները շարունակում էին դեռևս Առաջին հանրապետության ժամանակ կիրառվող շանտաժի քաղաքականությունը՝ Հայաստանին սպառնալով պահել շրջափակման մեջ: Վրաստանի արտգործնախարարին նոտա է հղում նույնիսկ Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը՝ պահանջելով, որ ազատ տրանզիտ տրամադրի Հայաստան ուղարկվող պարենի, վառելիքի և այլ բեռների համար⁷⁶⁹, սակայն ապարդյուն:

Շարունակ հալածվում էր Լոռու հայ բնակչությունը: Իսկ Խորհրդային Հայաստանի ղեկավարները բավարարվում էին միայն բողոքագրեր ներկայացնելով, պահանջելով, որ վրացիները զորքերը հեռացնեն չեզոք գոտուց և բացեն երկաթուղին, որ հացահատիկը

⁷⁶⁶ Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով..., հ. 2, էջ 202:

⁷⁶⁷ Տե՛ս Ստեփանյան Խ., 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), «Պատմություն և հասարակագիտություն», Տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), 2015, թիվ 1, էջ 218,219:

⁷⁶⁸ Տե՛ս Վրացեան Ս., Յուշեր մոտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, մարտ, էջ 119:

⁷⁶⁹ Տե՛ս Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 300, 301:

հասնի Հայաստան⁷⁷⁰: Մինչդեռ Հայրենիքի փրկության կոմիտեի նախկին անդամ, տարագիր Հակոբ Տեր-Հակոբյանի բնորոշմամբ ժողովուրդը սպասում էր, որ Հայաստանի խորհրդայնացումով մեկընդմիջտ կլուծվեն նաև Ախալքալաքի և Բորչալուի «արինոտ հարցերը և այդ բոլոր շրջանները նորից Հայաստանի միացուին»⁷⁷¹:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի բոլշևիկյան իշխանությունները ի զորու չեղան կարգավորելու նաև Վրաստանի հետ ունեցած տարածքային խնդիրները: Իսկ սփյուռքահայ մամուլն իր դժգոհությունն էր արտահայտում այս հարցի կապակցությամբ: Ակնկալվում էր, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները թեկուզ Ռուսաստանի աջակցությամբ արագորեն կլուծեին հայ-վրացական տարածքային խնդիրները և հայկական գավառները կմիացնեին Հայաստանին:

Առավել սուր եղան դժգոհությունները թուրքերի հանդեպ հայ բոլշևիկների թույլ և անօգնական վիճակի պատճառով: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով թերևս ամենաշատն ակնկալվում էր Թուրքիայի հետ հարաբերությունների և տարածքային խնդիրների կարգավորում, 1914 թ. սահմանի վերականգնում, թուրքական զորքի հեռացում Կարսից և Ալեքսանդրապոլից⁷⁷²: Սակայն թուրքերը ոչ միայն չէին լքում Կարսը և Ալեքսանդրապոլը, այլև դաժան վերաբերմունք էին ցուցաբերում այդ երկրամասերի, հատկապես Շիրակի հայ ազգաբնակչության⁷⁷³ նկատմամբ⁷⁷⁴: Վահան Նավասարդյանի բնորոշմամբ «Թուրքիոյ վարիչները Երեւանի «բողոքող» հայերին «դաշնակցական» յայտարարեցին, կասկածի տակ դնելով նրանց կոմունիզմը»⁷⁷⁵:

Հայ ժողովրդի ակնկալիքները չէին իրականանում: Ռուսաստանի արտգործոցը կոմ Գ. Չիչերինի համոզմամբ թուրքերի հետ այնպիսի պայմանագիր պետք է կնքվեր, որ

⁷⁷⁰ Տե՛ս «Կոմունիստ», 1920, 21 դեկտեմբերի:

⁷⁷¹ Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), էջ 94:

⁷⁷² Տե՛ս Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 45:

⁷⁷³ Շիրակում 1920թ. նոյեմբերից մինչև 1921 թ. ապրիլ ամիսը թուրքերի գործադրած բռնությունների և տեղի կոմունիստական կազմակերպության անկարողության մասին առավել մանրամասն տե՛ս Աբրահամյան Հ., Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ (1920 թ. նոյեմբեր-1921 թ. ապրիլ), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, թիվ 2, էջ 122-132:

⁷⁷⁴ Տե՛ս Վրացեան Ա., Ինչո՞ւ և ինչպե՞ս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 79:

⁷⁷⁵ Տե՛ս Նաասարդեան Վ., Հ.Յ. Դաշնակցութեան անելիքը (Մտքեր եւ յուշեր մի գրքոյկի առիթով), էջ 280:

այն չխանգարեր ՌՍՖՍՀ և Անգլիայի միջև համաձայնություն կնքելուն, որ երաշխավորվեր Հայաստանի անկախությունը, որ անկախություն ապահովվեր Արևմտյան Հայաստանի մի մասի համար, բայց ոչ վերջնագրերով, որպեսզի դա չխանգարեր թուրքերի հետ բարեկամական հարաբերություններին⁷⁷⁶:

1920 թ. դեկտեմբերի 15-ի նոտայով Մուխտար փաշան Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության անունից լկտիորեն հայտարարում էր Չիչերինին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ թե բռնի հաշտություն է, այլ հաշտություն, որը հիմնված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, և իրենք ցանկացել են բռնազավթել սուկ թուրքական բնակչություն ունեցող տարածքները⁷⁷⁷:

Թուրքերին Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ Արևելյան Հայաստանից հեռացնելու հայ ժողովրդի ունեցած հույսերի մասին Ս. Վրացյանը գրում է. «Հայ կոմունիստները ամենակծու խօսքերով դատապարտում էին «Դաշնակ»ների ստորագրած Ալեքսանդրապոլի դաշնագիրը, հաւատացնում էին, որ Խորհրդային իշխանութիւնը, կը լուծէ - Հայաստանի սահմանների հարցը եւ նոյն իսկ ակնարկներ էին անում Տաճկահայաստանի մասին»⁷⁷⁸:

1920 թ. դեկտեմբերի 4-ին «Կոմունիստ» թերթում բոլշևիկները բարձրաձայնեցին, որ չեղյալ են հայտարարում Ալեքսանդրապոլի պայմանագիրը⁷⁷⁹: Հ. Տեր-Հակոբյանը գրում է, որ իրականում հայ բոլշևիկները ոչինչ չարեցին իրենց այդ հայտարարությունն արդարացնելու համար, և որ վերջիններիս նպատակը եղել է ժողովրդին գրգռել Դաշնակցության դեմ և տրամադրել հօգուտ բոլշևիկների⁷⁸⁰:

Չի կարելի համոզված պնդել, որ թուրքերի հեռացումն Անդրկովկասից և Արևելյան Հայաստանից հայ բոլշևիկների համար որևէ նշանակություն չի ունեցել: Խնդիրն այն է, որ թուրքերի հեռանալ պարտադրելու կարողություններն ու համառությունը չեն բավա-

⁷⁷⁶ Տե՛ս Խարմանդարյան Ս., Ленин и становление Закавказской федерации: 1921-1923, Ин-т ист. Партии при ЦК КП Армении, Ереван, 1969, стр. 51.

⁷⁷⁷ Տե՛ս Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը): Գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 310:

⁷⁷⁸ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, մարտ, էջ 118:

⁷⁷⁹ Տե՛ս «Կոմունիստ», 1920, 4 դեկտեմբերի:

⁷⁸⁰ Տե՛ս Իրազեկ Յ., Մոտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), էջ 93:

կանացրել: Իսկ քենալականները ոչ միայն չհեռացան Ալեքսանդրապոլից, այլև Խորհրդային Հայաստանի շրջափակումն ամբողջական դարձնելու նպատակով դեկտեմբեր-հունվար ամիսներին մեծ աղմուկ բարձրացրին Նախիջևանում, որով ոչ միայն բացառեցին 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիայով Նախիջևանի միացումը - Հայաստանին, այլև փակեցին հարևան Իրանի հետ առևտուր անելու միակ հնարավոր ճանապարհը⁷⁸¹:

Դեռևս մինչև Փետրվարյան ապստամբությունը Կ. Պոլսի «Ճակատամարտի» խմբագրականում ասվում է, որ «Հայաստան մտած հայ պոլշեիկները, հակառակ բոլոր շլացուցիչ յայտարարություններուն, չեն կրցած կացութեան տէր դառնալ մինչեւ այսօր, և իրենց աչքերը յառած կը պահեն դէպի Պաքու եւ Մոսկուա: Ասոր ամէնէն անվիճելի ապացոյցը այն է, որ իրենց թուրք «ընկեր»ները տակաւին կը յամառին տեղաւորուիլ Կարսի եւ Ալեքսանդրաբոլի մէջ, Իգտիրի եւ Նախիջևանի կողմերը, աւերելով եւ թալանելով, արքորելով եւ կոտորելով, օղակի մը մէջ սեղմած Հայաստանը, իսկ իրենք զբաղած են քարոզչական գործունեութեամբ, քօմունիստական գրականութեան արտածումով եւ մանաւանդ ներածումով»⁷⁸²: Այնուհետև թերթը շարունակում է, որ իրենց ձախողումները թաքցնելու նպատակով բոլշեիկները խոսում են «դաշնակցական դավադրության» մասին: Ըստ թերթի՝ «այդ բոլոր յեղիւրանքները ուրիշ նպատակ չունին, եթէ ոչ արդարացնել նախ՝ նորեկներուն ապիկարութիւնն ու անգործութիւնը, որ արդեն իսկ խոր յուսախաբութիւն պատճառած է ժողովուրդին, երկրորդ՝ պատրուակներ ստեղծել եղբայրասպան, քինախնդրական կամ հաւատաքննական հալածանքներու»⁷⁸³:

Փարիզի «Հառաջ» թերթը նույնպես թուրքերի հետ սահմանային հարցերի լուծման ձախողումը համարում է հայ բոլշեիկների անզորության հետևանք⁷⁸⁴:

⁷⁸¹ Տե՛ս Սարգսյան Կ., Հայաստանում սովետական իշխանության առաջին ամիսների ՀԿԿ ներքին քաղաքականության մի քանի հարցերի մասին, Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու), էջ 10:

⁷⁸² «Ճակատամարտ», 1921, 25 յունուարի:

⁷⁸³ Նույն տեղում:

⁷⁸⁴ Տե՛ս «Յառաջ», 1929, 21 փետրուարի:

Շարունակելով հարևանների հետ Խորհրդային Հայաստանի իշխանությունների վարած ձախողված քաղաքականության թեման՝ Ս. Վրացյանը մատնանշում է հայ բոլշևիկների պարզաբանումները հայերի հանդեպ թուրքերի ունեցած թշնամության մասին: «Նրանք (հայ բոլշևիկները – Խ. Ս.) հաւատացնում էին ամենքին, թէ թուրքերի թշնամութիւնը դէպի հայերը հետեւանք է դաշնակցականների վերաբերմամբ տաճած ատելութեան: Բաւական է յայտարարել Խորհրդային իշխանութիւն եւ եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական յարաբերութիւնները կը բարելաւուին եւ թուրք բանակը անմիջապէս կհեռանայ Ալեքսանդրապոլից ու Կարսից»⁷⁸⁵: Փաստորեն հայ բոլշևիկները թուրքերի հանդեպ ավելի սթափ ու հաշվարկված քաղաքականություն վարելու փոխարեն կարծում էին, որ հայության հանդեպ նրանց թշնամական վերաբերմունքի պատճառը Դաշնակցությունն էր: Խորհրդային իշխանության գալով ժողովուրդն ակնկալում էր թուրքերի հեռացումն առնվազն Կարսից և Ալեքսանդրապոլից:

Ամենազավեշտալին այն էր, որ Հայաստանի բոլշևիկյան իշխանությունները ճգնում էին թուրքերին ապացուցել, որ իրենք տարբերվում են նախկին իշխանություններից: Իսկ այդ անկարող քաղաքականությունն ավելի էր ոգևորում թուրքերին: Ահա թե ինչ է գրում Ս. Վրացյանն այս առիթով. «Հայաստանի Յեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում թուրքերին եւ կաշից դուրս էր գալիս ցոյց տալու համար, որ ինքը «Դաշնակցությունից» տարբեր է, Թուրքիային բարեկամ իշխանութիւն է, Երեւանից բարեկամական հաւաստիացումներ էին ուղարկում Անգորա: Այդ ամէնը բնաւ չփոխեց թուրքերի հակահայ ընթացքը: Ընդհակառակը, կարծես էլ ատելի գրգռեց նրանց հայերի դէմ, որ նորից բռնել էին ռուսների փեշը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական աւանդական քաղաքականութիւնը»⁷⁸⁶:

Ասել, թե Խորհրդային Հայաստանի իշխանությունները ոչինչ չէին անում հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ, սխալ կլինի: 1920 թ. դեկտեմբերի 10-ին Խորհրդային Հայաստանի արտգործօրդկոմ Ա. Բեկզադյանը դիմում է Քեմալական Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Մուխտարին, Արևելյան ռազմաճակա-

⁷⁸⁵ Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի միջեւ, էջ 220:

⁷⁸⁶ Նոյն տեղում:

տի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին՝ խնդրելով նրանց վերջ դնել բռնություններին Ալեքսանդրապոլում⁷⁸⁷: Ավելի ուշ Խորհրդային Ռուսաստանի արտգործոց Պ. Չիչերինն է հեռագրում Բաքու՝ Կովկասի կոմունիստների առաջնորդ Գ. Օրջոնիկիձեին և պատվիրում, որ փոխանցեն թուրքերին՝ անմիջապես դադարեցնեն թալանը և անօրինականությունները ռազմակալված Հայաստանում, կրկնեն Ալեքսանդրապոլը մաքրելու պահանջը⁷⁸⁸:

Այս կապակցությամբ Ս. Վրացյանը գրում է. «Երեւանից «եղբայրական» ոգիով հեռագիրներ էին քաշում Անգորա, իսկ թուրք կառավարութիւնը պատասխանում էր, թէ ինքը ոչ մի տարբերութիւն չի տեսնում «Դաշնակ»ների եւ հայ բոլշեւիկների միջեւ»⁷⁸⁹: Վրացյանը նաև նշում է, որ Խորհրդային Հայաստանի արտգործոց Ա. Բեկզադյանի հեռագրերին թուրքերը կարևորություն չէին տալիս և արհամարհում էին «դաշնակից» բոլշեւիկների պահանջները⁷⁹⁰: Փաստորեն հայ բոլշեւիկները կուրորեն չէին նկատում թուրքերի թշնամությունը և ակնկալում էին վերջիններիս բարեգթությունը հայերի և Հայաստանի հանդեպ: Երբեմն նվաստացման հասնող նրանց հավաստիացումները թուրքերի հետ «եղբայրական քաղաքականություն» վարելու մտադրության մասին միայն ավելի էին թուլացնում Հայաստանի դիրքերը:

Հայիեղկոմի արտաքին քաղաքական ձախողումներին անդրադառնալիս «Դրոշակի» 1931 թ. հունվար-փետրվարի համարը մատնացույց է անում բոլշեւիկ պատմաբան Բ. Բորյանի աշխատությունը⁷⁹¹: Վերջինս, խոսելով այս խնդրի շուրջ, գրում է. «Խորհրդային իշխանությունը ոչ մի գործնական քայլ չէր ձեռնարկում թուրքերին Հայաստանից հեռացնելու ուղղությամբ, մինչդեռ ժողովուրդը համոզված էր, որ խորհրդայնացումից և Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելուց հետո

⁷⁸⁷ Տե՛ս «Կոմունիստ», 1920, 14 դեկտեմբերի, հմմտ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 455, 456:

⁷⁸⁸ Տե՛ս Կузнецова С., Крах турецкой интервенции в Закавказье в 1920—1921 годах, «Вопросы истории», 1951, № 9, стр. 151.

⁷⁸⁹ Վրացեան Ս., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի և թրքական սալի միջեւ, էջ 222:

⁷⁹⁰ Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք», 1922, դեկտեմբեր, էջ 53:

⁷⁹¹ Տե՛ս «Դրոշակ», 1931, թիւ 1-2, էջ 4-8:

թուրքերը Հայաստանում այլևս անելիք չունեին, իսկ Ռուսաստանը թույլ չի տա թուրքերին տիրել Հայաստանի տարածքին, որի վրա նրանք ոչ մի իրավունք չունեին: Ժողովուրդը համոզված էր, որ թուրքերը եկել էին Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ և աջակցությամբ, որպեսզի տապալեն Հայաստանի դաշնակցական կառավարությունն ու Խորհրդային Հայաստանի վրայով կապ հաստատեն Ռուսաստանի հետ: Պարզվեց, որ թուրքերը եկել են որպես զավթիչներ, և երկրի վիճակն ավելի է ծանրացել, որին ժողովուրդը չէր կարող սպասել Խորհրդային իշխանության Հայաստան գալուց»⁷⁹²: Փաստորեն, Սփյուռքում հրատարակվող Դաշնակցության պաշտոնաթերթը բոլշևիկների արտաքին քաղաքական ծախողումները փաստում է նաև Խորհրդային պատմաբանի եզրակացություններով:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. դաշնակցական գործիչներն ու պարբերականները 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային են համարում Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների վարած անկարող և անարդյունավետ արտաքին քաղաքականությունը: Նրանց չհաջողվեց արդարացնել հայ ժողովրդի սպասելիքները Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ ունեցած տարածքային խնդիրների կարգավորման հարցում:

Այդուհանդերձ, որքան էլ դաշնակցական գործիչները փորձեն համոզիչ փաստարկներ ներկայացնել Հայիեդկոմի կողմից Հայաստանի տարածքային խնդիրները լուծելու անկարողության վերաբերյալ, ակներև է, որ երկու-երեք ամսում հնարավոր չէր կարգավորել հարևանների հետ արդեն իսկ բարդացած հարաբերությունները: Թերևս դրա համար ժամանակ էր պետք:

Քննելով Փետրվարյան ապստամբության պատճառները՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը երբեմն այն ներկայացրել է որպես «ավանտյուրա» (արկածախնդրություն): Հատկանշական է այն, որ ապստամբությանն այդպիսի որակավորում տրվել է նույնիսկ դաշնակցական շրջանակների կողմից: Դրոն, ով Փետրվարյան ապստամբության օրերին Մոսկվայում էր գտնվում, տարիներ հետո իր կնոջն ասել է. «Իհարկե,

⁷⁹² Борьян Б., նշվ. աշխ., էջ 135, 136:

Փետրվարյան ապստամբությունը ավանտյուրա էր, բայց ես շատ էի ուզում լինել իմ ընկերների կողքին»⁷⁹³:

Փետրվարյան ապստամբությունը ձգտել են որպես «ավանտյուրա» ներկայացնել նաև խորհրդային պատմաբանները: Արարատ Հակոբյանի դիտարկմամբ այդ ձգտումով է պայմանավորված ապստամբության մասնակիցների թվի հնարավորինս նվազեցված ցույց տալը⁷⁹⁴:

Սակայն ապստամբության մասնակիցները, բնականաբար, չէին ընդունում «ավանտյուրա» եզրույթը: «Հայրենիք» օրաթերթում տարագիր սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը գրում է, որ «ամենից անհիմք մեղադրանքը փետրուարի ապստամբության դեմ, դա այն «ալանտիրա» - արկածախնդրություն կոչելն է»⁷⁹⁵: Նա որպես օրինակ ներկայացնում է 1920 թ. մայիսյան դեպքերը Հայաստանում: Բոլշևիկներն այն անվանում են ապստամբություն, իսկ փետրվարյան իրադարձությունները՝ ավանտյուրա: Մինչդեռ իսկական ավանտյուրա, ըստ Խոնդկարյանի, մայիսյան դեպքերն էին, որոնք, ի տարբերություն փետրվարյան իրադարձությունների, զանգվածային բնույթ չունեցան և պաշտպանություն չգտան ժողովրդի կողմից⁷⁹⁶:

Ս. Վրացյանն ապստամբությունն անվանում է քաղաքացիական կռիվ⁷⁹⁷:

Կ. Սասունին նշում է, որ ապստամբությունը ժողովրդական բնույթ էր կրում, և - հետևաբար՝ ավանտյուրայի մասին խոսք լինել չէր կարող: «Շարժումը ղեկավարում էր դաշնակցությունը, սակայն նրա կողքին էին նաև Ս. Յեղափոխականները, Ս. Դեմոկրատներ, ժողովրդական թե՛ պահպանողական այլ հոսանքներու պատկանողները: Մեզ դեմ էին միայն բոլշևիկներն ու թիւրք-թաթար տարրերը»⁷⁹⁸, - գրում է Կ. Սասունին: Ինչ վերաբերում է քաղաքացիական կռիվի հանգամանքին, նա պնդում է, որ Հայաստանում տեղի

⁷⁹³ Դրոյի այս խոսքերի մասին մեզ հայտնել է նրա թոռնուհին՝ Իրինա Կանայանը, ով դրանք լսել է իր մորից:

⁷⁹⁴ Տե՛ս Հակոբյան Ա., 1921 թ. փետրվարյան իրադարձություններում «կարմիրների» և ապստամբների զինուժի մասին հայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2011, թիվ 2, էջ 3:

⁷⁹⁵ «Հայրենիք», 1928, 1 մարտի:

⁷⁹⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷⁹⁷ Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. 2, էջ 17:

⁷⁹⁸ Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 73:

ունեցած ապստամբությունը քաղաքացիական կռվի հանգամանք չուներ: Իրենց էությամբ այդ կռիվներն ուղղված էին օտար տիրապետության դեմ⁷⁹⁹:

Եթե գտնում ենք, որ Փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը անկախության վերականգնման խնդիրն է, հետևաբար՝ խորքի մեջ այս իրադարձությունները կարելի է որակել որպես օտար տիրապետության⁸⁰⁰ դեմ բարձրացված ապստամբություն:

Ռամկավարները գտնում էին, որ այն եղբայրասպան պատերազմ էր⁸⁰¹: Ապստամբության օրերին արտասահմանում գտնվող ռամկավարները նույնպես քննադատեցին - Դաշնակցությանը, որ ժողովրդին ապստամբության մղեց⁸⁰²: Արձագանքելով մինչ ապստամբությունը Հայաստանում տեղի ունեցող բռնություններին՝ Հայ ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության անդամ Արտակ Դարբինյանը Կ. Պոլսից Երևան՝ կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհրդին հղած նամակում կոչ էր անում հնազանդվել Հայաստանի կոմունիստական իշխանություններին՝ պատճառաբանելով, որ դժգոհությունների պատճառով առաջ եկած քաղաքացիական կռիվներին հայ ժողովուրդը կարող է և չդիմանալ⁸⁰³: Ռամկավար հայտնի գործիչ Վահան Թեքեյանը ապստամբությունն արկածախնդրություն է անվանում⁸⁰⁴: Նույն գործիչը դրանից մեկ տարի առաջ գրել էր, որ Փետրվարյան ապստամբությունը Դաշնակցության «մենիշխանությունը» վերականգնելու փորձ է եղել⁸⁰⁵:

«Պայքարի» 1929թ. սեպտեմբերի 11-ի խմբագրականը փետրվար 18-ն անվանում է «եղբայրասպան արկածախնդրություն»⁸⁰⁶: Հարկ է նշել, որ թերթը արկածախնդրություն որակումը տալիս է՝ Դաշնակցությանը մեղադրելու նպատակով:

Հնչող մեղադրանքներին Ս. Վրացյանը հետևյալ պատասխանն է տալիս. «Բոլշեփիկները մեզ դատապարտում են, որ այնքան հայ սպանուեցաւ քաղաքացիական կռում

⁷⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

⁸⁰⁰ Նկատի ունենք բոլշևիկյան տիրապետությունը, որը ներմուծվել էր օտարների կողմից:

⁸⁰¹ Տե՛ս Անդրեասեան Ա., Պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան Ամերիկայի Արեւմտեան շրջանակի, Լոս Անճելըս, 1981, էջ 14:

⁸⁰² Տե՛ս Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, էջ 475:

⁸⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 473:

⁸⁰⁴ «Ժողովրդի ձայնը», Կ. Պոլիս, 1922, 14 յունուարի:

⁸⁰⁵ «Վերջին լուր», 1921, 28 մարտի:

⁸⁰⁶ «Պայքար», 1929, 11 սեպտեմբերի:

մեր պատճառով, այնքան հարստութիւն փչացաւ: Խորապէս ցաւում ենք, բայց ո՞վ եղաւ քաղաքացիական կռիւ պատճառը: Մե՞նք բանտերը նետեցինք հազարաւոր անմեղ մարդկանց, որոնց գլխին կախուել էր բոլշեւիկեան կացինը, մե՞նք կացնահարեցինք անմեղ մարդկանց, մե՞նք խլեցինք ժողովրդից հացի իր վերջին կտորը, մե՞նք թալանեցինք եւ վատնեցինք հային ունեցուածքը: Խորապէս ցաւում ենք, բայց եթէ Փետրուարեան ապստամբութիւնը տեղի չունենար, պակաս՞ հայեր կը կոտորուէին բոլշեւիկների ձեռքով, պակաս՞ նիւթական կորուստ կ'ունենար հայ ժողովուրդը»⁸⁰⁷:

Աններելի է, իհարկե, եղբայրասպան կռիւներ թույլ տալը: Սակայն փաստերի խոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կռիւների հիմնական սադրողները եղան բոլշեւիկները:

Սիյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից Փետրվարյան ապստամբությանը տրված գնահատականների մեջ առանձնակի տեղ է գրավում ապստամբության ինքնաբոլս կամ նախօրոք կազմակերպված լինելու խնդիրը:

Այստեղ ևս մոտեցումները բազմազան են և իրար հակասող: Ընդ որում հակասական են ոչ միայն մի կողմից դաշնակցական և ոչ դաշնակցական թերթերի տեսակետները, այլև կարծիքների բախում կա Դաշնակցության ներսում:

Փետրվարյան ապստամբության հերթական տարեդարձին նվիրված «Հայրենիք»-ի խմբագրականում նշվում է, որ ապստամբությունն ինքնաբոլս էր, այն նախապես ծրագրված չէր, այլ բան է, որ ընթացքում դաշնակցականները ղեկավարեցին այն: «Անվիճելի իրողութիւն մըն է, որ փետրուարեան ապստամբութիւնը ոեւէ կուսակցութեան կազմակերպած գործը չէր: Ճիշտ է, որ Դաշնակցականները խոշոր եւ նոյնիսկ ղեկավարող դեր կատարեցին այդ ապստամբութեան մէջ: Բայց ճիշդ է նոյնպէս, որ հայ ժողովուրդի բոլոր տարրերն ու հոսանքները, բացի միայն հայանուն բոլշեւիկներէն, իրենց անվերապահ մասնակցութիւնը բերին փետրուարեան ապստամբութեան», - գրում է թերթը⁸⁰⁸:

«Հայրենիք»-ի խմբագիր Ռուբեն Դարբինյանը հետագայում ևս պնդում է, որ ապստամբությունը տարերային և ինքնաբոլս էր. «Բոլշեւիկներու սանձարձակ բռնութիւններն

⁸⁰⁷ Վրացեան Ա., Կեանքի ուղիներով..., հ. 2, էջ 200:

⁸⁰⁸ «Հայրենիք», 1934, 18 փետրուարի:

ու բռնագրաւումները այնպիսի բուռն զայրոյթ էին առաջացուցեր անոնց իշխանութեան դէմ, որ ամէն տեղ ժողովուրդի բանիմաց եւ գործօն տարրերը, **ինքնաբերաբար եւ մեծ մասամբ իրարմէ անկախ** (ընդգծումը հեղինակինն է – Խ. Ա.) գաղտնի խումբեր ու մարմիններ սկսան կազմել, զինուիլ եւ ամէն տեսակ պատրաստութիւններ տեսնել՝ տապալելու համար օր աւուր իրենց աւելի անտանելի դարձնող Սովետական կոչեցեալ օտար իշխանութիւնը»⁸⁰⁹: «Հայրենիք» ամսագրի խմբագիրն անժխտելի իրողություն է համարում այն, որ Դաշնակցության պատասխանատու մարմիններն ու գործիչները դեմ էին խորհրդային իշխանության որևէ ապստամբության: Ստեղծված քաղաքական պայմաններում մեր ժողովուրդը չէր կարող դրսից որևէ օգնություն ստանալ, իսկ եղած իր ուժերն էլ շատ փոքր էին՝ զինված պայքարի մտնելու Խորհրդային Ռուսաստանի նման տերության⁸¹⁰:

Բուենոս Այրեսի «Արմենիա» թերթը (դաշնակցական) գրում է, որ ապստամբությունը հասունանալուց հետո նրա ղեկավարությունը ստանձնեց Դաշնակցությունը, և ավելացնում. «Վերջինիս շուրջը հաւաքուեցան քաղաքական բոլոր կուսակցութիւններն ու հոսանքները՝ Ռամկավար, Սօցիալիստ-Յեղափոխական, Սօց. Դեմոկրատ, Չէզոք, մեծ, պզտիկ, կին, երեխայ, ծեր, երիտասարդ, գիւղացի, մշակ-բանուոր, մէկ խօսքով Հայաստանը միական, միահամուռ եւ վճռական»⁸¹¹: Հետագայում ռամկավարները, որոնք առանձին զորամասով մասնակցել էին Փետրվարյան ապստամբությանը, վերջում հրաժարվեցին այդ պատվից և դարձան այդ «եղբայրասպան» կռվի ոխերիմ հակառակորդները⁸¹²:

Բոստոնի «Պայքար» պարբերականն էլ պնդում է, որ «Փետր. 18ի շարժման ետին Դաշնակցական վարիչներէ զատ ոչ ոք կար»⁸¹³:

Այն, որ ի սկզբանե Դաշնակցությունը տրամադրված չի եղել հակաբոլշևիկյան գործողությունների, երևում է Հայաստանի խորհրդայնացման մասին ընդունած որոշումից: 1920 թ. դեկտեմբերի 1-ի հայտնի որոշումը մեզ հիմք է տալիս համոզվելու, որ գոնե

⁸⁰⁹ Դարբինեան Ռ., Փետրուարեան ապստամբութեան 50-ամեակին առթիւ (խմբագրական), «Հայրենիք», 1971, թիվ 1, գարուն, էջ 1:

⁸¹⁰ Տե՛ս նոյն տեղում, էջ 2:

⁸¹¹ «Արմենիա», 1933, 18 փետրուարի:

⁸¹² Տե՛ս Վրացեան Ա., Կեանքի ուղիներով ..., էջ 199:

⁸¹³ «Պայքար», 1925, 30 յուլիսի:

սկզբնական շրջանում դաշնակցականները տրամադրված էին հանդուրժելու բոլշևիկներին: Ճիշտ է, կային փոքրաթիվ գործիչներ, որոնք նույն դեկտեմբերի 1-ին դեմ էին Հայաստանի խորհրդայնացմանը, սակայն մեծամասնության որոշումով իշխանությունը հանձնվեց Հայիեղկոմին:

Այլ հարց է, որ Հայաստանի խորհրդայնացումից որոշ ժամանակ անց, այնուամենայնիվ, դաշնակցականները սկսեցին նախապատրաստվել հակաբոլշևիկյան գործողությունների:

Աթենքի համայնավար «Սևան» պարբերականը գտնում է, որ ամեն դեպքում ինչ բռնություններ էլ կիրառեին բոլշևիկները, դաշնակցականները պարտավոր էին համակերպվել: Ավելին, թերթը կարծում է, որ ոչ միայն բոլշևիկները, այլև դաշնակցականներն են դրժել դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը: «Ճիշդ է, որ բոլշևիկները քաղաքական բանտարկութիւն, ձերբակալութիւններ, արքոր եւ մահապատիժներ ըրին կողմերու միջեւ կընքուած Դեկտ. 2ի համաձայնագրին հակառակ գործած ըլլալնուն համար: Սակայն օրուան իշխանութիւնը անջնջելի ներողամտութիւն մը փորձած պիտի ըլլար, եթէ թոյլ տար որ Դաշնակ նախարարները յենուած համաձայնագրի մը տրամադրութեան վրայ օր ցերեկով հորը փորէին օրուան իշխանութեան...,- գրում է թերթը և շարունակում,- Սո՛ւտ է դաշնակցական «Իրազեկի» մը 1931 Փետր. «Հայրենիք»ի թիւին մէջ գրածը որ կըսէ «փրկութեան կօմիտէն (դաշնակիզմը) Հայաստանի Խորհրդայնացումից 15-18 օր վերջն իսկ արդէն կազմակերպուած պատրաստ էր եւ գործի վրայ, որ գիտէր թէ բոլշևիկները Հայաստանում թոյլ են եւ ուրեմն շատ հեշտ հետերնին հաշիւ փակել: Եթէ Դաշնակցութիւնը անկեղծ էր իր ստորագրած համաձայնագրին վերաբերմամբ, ապա ուրեմն յանուն ինչի՞ կ'ըլլային այս պատրաստութիւնները բոլշևիկութեան (օրուան իշխանութեան) հետ հաշիւ մաքրելու համար»⁸¹⁴:

Իսկ ո՞րն էր դաշնակցականների կողմից խոստման դրժումը: Նման հիմք քննադատողներին տվել է, ինչպես ակնարկում է «Սևան»-ի հոդվածագիրը, Իրազեկի՝ 1931 թ. փետրվարին «Հայրենիք» օրաթերթում հրատարակված «Դաշնակցությունը եւ Փետրուար

⁸¹⁴ «Սեւան», 1934, 11 մարտի:

18ր» հողվածը: Այստեղ հեղինակը գրում է, որ «նոյն տարուայ (1920թ.) դեկտ. 20ի մօտեր-քը, այսինքն Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը 15-18 օր յետոյ արդէն կազմակերպուած պատրաստ էր եւ գործի վրայ Դաշնակցութեան ղեկավար մարմինը»⁸¹⁵:

Իրազեկի այս հողվածը հիմքեր է տալիս նաև Շահան Նաթալուն, որպեսզի վերջինս ևս պաշտպանի Փետրվարյան ապստամբությունը նախապես ծրագրված լինելու տեսակետը:

Շ. Նաթալին գրում է, որ Փետրվարյան ապստամբության ճիշտ գնահատականի համար անհրաժեշտ է «քննել դեպքերը ժամանակագրական կարգով եւ ճշդել պատճառն ու հետևանքը»⁸¹⁶: Խնդիրն այն է, որ, ըստ Նաթալու, մինչև դեկտեմբերի 20-ը հալածանքներ դաշնակցականների նկատմամբ հիմնականում չեն եղել: Իսկ, ըստ Իրազեկի, դեկտեմբերի 20-ին արդեն ստեղծվել էր Հայրենիքի փրկության կոմիտեն, որի մասին իմանալով՝ բոլշևիկները սկսեցին բռնություններ իրականացնել: Այսինքն՝ դաշնակցականների հանդեպ հալածանքները ոչ թե հետևանք, այլ պատճառ կարող են դիտվել:

Շ. Նաթալին գտնում է, որ սխալ էր Փետրվարյան ապստամբությունը հրահրելը, քանի որ թուրքը դեռ գտնվում էր Ալեքսանդրապոլում, և «ռիսկային» էր դա⁸¹⁷: Նրա կարծիքով, եթե Ս. Վրացյանը չլիներ ապստամբության գլուխ, ապա նա անպայման պետք է պատասխանատվության կանչեր ապստամբության կազմակերպիչներին: Շ. Նաթալին համոզված է, որ Հ. Տեր-Հակոբյանի մատնանշած մարմինը ստեղծվել էր՝ ապստամբություն բարձրացնելու համար: «Մինչեւ Դեկտ. 20, Բօլշեւիկներու կողմէ Հայաստանի մէջ ապստամբութիւն մը արդարացնող պատճառներ չտրուելով մէկտեղ, Վրացեան և կարգ մը իրեն նման «դաշնակցական»ներ կեանքի կը կոչեն «Փրկութեան կօմիտէ»ն, իբր զուտ ապստամբական մարմին», - գրում է Շ. Նաթալին⁸¹⁸:

Հաշվի առնելով այն, որ կուսակցական և պետական մարմինների որոշմամբ դեկտեմբերի 2-ին Դաշնակցությունն իշխանությունը հանձնեց բոլշևիկներին, Շ. Նաթալին

⁸¹⁵ «Հայրենիք», 1931, 20 փետրուարի:

⁸¹⁶ Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, էջ 141:

⁸¹⁷ Տե՛ս նոյն տեղում, էջ 171:

⁸¹⁸ Նոյն տեղում, էջ 238:

գտնում է, որ Փետրվարյան ապստամբությունն իրականացնողները պետք է պատասխանատվության ենթարկվեն թե՛ կուսակցականորեն, թե՛ պետականորեն⁸¹⁹: Մեր կարծիքով Հ. Տեր-Հակոբյանի վերոհիշյալ հոդվածը բավարար հիմքեր չի տալիս պնդելու, թե 1920 թ. դեկտեմբերին Դաշնակցությունն արդեն ստեղծել էր ապստամբություն ծրագրող կուսակցական մարմին: Պետք է համաձայնվել Ա. Հակոբյանի այն համոզման հետ, որ դեկտեմբերի կեսերից Ս. Վրացյանի գլխավորությամբ գաղտնի մարմնի՝ ՀՅԴ Հայաստանի կոմիտեի ստեղծումը բոլորովին չէր նշանակում անցում զինված ապստամբության նախապատրաստության ու կազմակերպման: Այլ բան է, որ հետագա դեպքերի զարգացումը հանգեցրեց այդ քայլին⁸²⁰:

Շ. Նաթալին մեկ այլ առիթով ակնարկում է, որ նույնիսկ դեկտեմբերի սկզբին Երևանից հեռացողներն ապստամբություն էին ծրագրում: Օրինակ, ըստ Նաթալիի, հակախորհրդային ապստամբության կազմակերպման համար Ռուբեն Տեր-Մինասյանն անցնում է «ապստամբ Ջանգեզուր»⁸²¹: Մեր կարծիքով Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին օրերին հակաբոլշևիկյան գործողություններ չեն ծրագրվել, և Ռուբենը Ջանգեզուր է գնում՝ Պարսկաստան անցնելու համար: Այլ բան է, որ Երևանից ստացվող լուրերը նրան ստիպել են մնալ Ջանգեզուրում և օժանդակել բոլշևիկների դեմ հասունացող ժողովրդական ըմբոստությանը⁸²²:

Իսկ նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունների հրահանգով ստիպված էր հեռանալ Հայաստանից և հաստատվել Թիֆլիսում, գրում է, որ Փետրվարյան ապստամբության մասին ինքը տեղեկացել է փետրվարի 21-ին Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորուց⁸²³:

Այն, որ մինչև 1921 թ. հունվարի կեսերն ապստամբություն չի ծրագրվել, երևում է Դրոյի՝ Ջարեհ ծածկանունով 1948 թ. հրատարակած մի հոդվածում: «Հալածանքը սկսա

⁸¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 208:

⁸²⁰ Տե՛ս Հակոբեան Ա., Փետրվարյան ապստամբությունը հայ պատմագրության մեջ, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2011, թիվ 1, էջ 140:

⁸²¹ Տե՛ս Շահան, Երեանի համաձայնագիրը, էջ 371:

⁸²² Տե՛ս Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), էջ 117:

⁸²³ Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», Բոստոն, 1926, նոյեմբեր, էջ 101:

հայկական բանակի հրամանատարութեան դէմ: Յունուարին Մոսկուայի կառավարութիւնը պահանջեց Դրոյի հեռացումը Հայաստանէն: Դրօ որոշեց երթալ՝ հակառակ անոր, որ իր ձեռքին տակ գտնուող հայկական բանակի թիւը շատ անելի մեծ էր, քան եկուոր սովետական բանակը: Կուսակցութեան որոշումով եւ իր համաձայնութեամբ Դրօ բռնեց աքսորի ճամբան: Եթէ այդպէս չընէր, Հայաստանը պիտի իյնար քաղաքացիական սպանիչ կռիւներու գիրկը եւ առանց անոր ալ արիւնաքամ հայութիւնը պիտի ենթարկուէր նոր զրկանքներու»,- նշում է հոդվածագիրը⁸²⁴: Ըստ էութեան այս գրութիւնը ևս փաստում է, որ 1920 թ. դեկտեմբերին ապստամբական մարմին չի ստեղծվել: Այլապէս Դրօն չէր հեռանա Հայաստանից, որի հնարավորութիւնը նա ուներ: Ավելին, ինչպէս տեսանք, Դրոյի՝ Հայաստանից գնալու հիմնական նպատակն այն էր, որ իր ներկայութեամբ հակասութիւն չհրահրի, և քաղաքացիական կռիւներ տեղի չունենան:

Հետագայում խորհրդային Միութիւնում ևս տիրապետող էր այն տեսակետը, որ ապստամբութիւնը նախապէս էր ծրագրվել: Ապստամբութեան նախապէս պատրաստված լինելու մասին տեսակետի հիմք խորհրդային իրավաբան Գրիգոր Չուբարյանին տվել է անգլիական «Թայմս» թերթի՝ 1921 թ. հունվարի 27-ի հաղորդագրութիւնը. «Դաշնակների լիդերներն այս ամսի (հունվար-Խ.Ս.) սկզբներին Թիֆլիզում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիւը բոլշեւիզմի դէմ, սակայն առանց դրսի ոգնութեան ոչ մի հույս չկա, որ Հայաստանը կարողանա ազատվել բոլշեւիկների լծից»⁸²⁵: Սակայն այս հաղորդագրութիւնից չի կարելի եզրակացնել, որ ապստամբութիւն է ծրագրվել Հայաստանի խորհրդային իշխանութեան դէմ⁸²⁶: Արտաշես Կարինյանը գաղտնի մարմին ստեղծելու թվականի վերաբերյալ այլ տեսակետ է հայտնում. «Երևանում դաշնակցական գաղտնի կոմիտեն («Հայաստանի կոմիտե») կազմվել էր դեկտեմբերի 2-ին»⁸²⁷: Իսկ Սիյուռքում հրատարակված ապստամբութեան մասնակիցների հոդվածների մասին

⁸²⁴ «Արեւելք», Գահիրէ, 1948, 18 փետրուարի, հմմտ. Գևորգյան Հ., Դրօ, էջ 489:

⁸²⁵ Չուբարյան Գ., Դաշնակցութեան տաճկական որիենտացիան յեվ Հայրենիքի փրկութեան կոմիտեն, Յերեւան, 1929, էջ 38:

⁸²⁶ Տե՛ս Ղազախեցյան Վ., Գևորգյան Հ., Դաշնակցութեան կողմից Փետրվարյան ապստամբութեան ղեկավարման հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, թիվ 1, էջ 47:

⁸²⁷ Կարինյան Ա., Դաշնակցութիւնը յեվ իր զինակիցները, Յերևան, 1932, էջ 91:

վերջինս գրում է. «Նրանց հողվածների և տեսությունների մեջ հիշատակված փաստերը հաստատում և ապացուցում են, վրի փետրվարի 18-ը յեղել է մաուզերիստական գվարդիայի վաղորոք պատրաստված շարժում»⁸²⁸:

Ինչպես վերևում նշեցինք, դաշնակցական գործիչներն իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո սկզբնական շրջանում որևէ հակապետական գործունեություն չեն ծրագրել: Թիֆլիսում գտնվող ՀՅԴ Բյուրոյի անդամ Սարգիս Արարատյանը 1921 թ. հունվարի 5-ին նամակ է գրում ՀՀ Փարիզի պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին, որտեղ նշում է, որ չնայած բոլշևիկների վարած բռնությունների քաղաքականությանը մինչև կուսակցական կոնֆերանսի հրավիրումը «երկրի մարմիններն ու ընկերները, որոնք այժմս հարկադրաբար վարում են ստորերկրեայ աշխատանք, պիտի խուսափեն ակտիվ քայլեր անելուց և ամեն միջոց պիղի գործադրեն՝ մեղմելու համար սովետական ռեժիմի բացասական կողմերի ազդեցությունը...»⁸²⁹: ՀՅԴ բյուրոյականի համար առավել կարևոր է եղել երկրի անկախության պահպանումը: Պետք է աշխատեն պահել երկրի անկախությունը, թուրքերին դուրս հանել երկրից և ապահովել ժողովրդի ֆիզիկական գոյությունը⁸³⁰: Այսպիսով, 1921 թ. հունվարին Դաշնակցության ղեկավար բարձրագույն մարմինը ոչ միայն գործող իշխանությունների դեմ որևէ գործողություն չէր ծրագրում, այլև կոչ էր անում շարունակել աջակցել պետականաշինական գործունեությանը:

Սակայն իրավիճակը փոխվում է փետրվարին, ինչը երևում է Թիֆլիսում գտնվող մյուս բյուրոյականներ Արշակ Զամալյանի և Գևորգ Ղազարյանի՝ փետրվարի 14-ին Ավետիս Ահարոնյանին հղած նամակից⁸³¹: Այստեղ նամակի հեղինակները դժգոհում են, որ չնայած նախապես իրենց կողմից տրված խոստմանը «երկիրն ամբողջացնելու հարցերում խորհրդային իշխանությունները սահմանափակուել են լոկ «կարմիր կոչերով» եւ դիվանա-

⁸²⁸ Նույն տեղում, էջ 96:

⁸²⁹ ԳԱԹ, Ավետիս Ահարոնյանի ֆոնդ, գ. 214, թ. 2:

⁸³⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 3:

⁸³¹ Այս և վերոնշյալ նամակը մենք հայտնաբերել ենք Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում պահվող Ավետիս Ահարոնյանի ֆոնդում: Փետրվարի 14-ի նամակի կրկնօրինակը պահվում է նաև ՀՅԴ Բյուրոյի Բոստոնի կենտրոնական արխիվում, որտեղից էլ այն հրապարակել են պատմաբաններ Վ. Ղազախեցյանը և Հ. Գևորգյանը (տե՛ս Ղազախեցյան Վ., Գևորգյան Հ., Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, թիվ 1, էջ 46-50):

գիտական յայտարարություններով... Երկիրը ղեկավարում են ռուսական հրամանատարությունը, նրանց հետ Հայաստան ժամանած կոմիսարները»⁸³²: ՀՅԴ բարձրագույն ղեկավար մարմնի անդամները, ներկայացնելով բուլժիկների վարած ծանր քաղաքականությունը, հանգում են հետևյալ եզրահանգման. «Այս հանգամանքներում կենսական պահանջ է դառնում երկրի և ժողովրդի համար խորհրդային իշխանության կազմակերպուած տապալումը Հայաստանում: Այս գործի համար կան մի քանի նախադրեալներ, որոնց լուծումը մեծապէս կախված է ձեզանից և մեր արտասահմանի մարմիններից...»⁸³³: Իսկ ՀՀ պատվիրակությունից և արտասահմանի մարմիններից ակնկալվում էին արտաքին աջակցություն, Թուրքիայի չեզոքության ապահովում, ինչպես նաև ֆինանսական աջակցություն (ՀՀ պատվիրակության տրամադրության տակ եղած միջոցներից)⁸³⁴: Այս նամակից կարելի է համոզված փաստել, որ ՀՅԴ բարձր ղեկավարությունն արդեն 1921թ. փետրվարի առաջին կեսին կողմ էր զինված իշխանափոխությանը:

Իրականում խորհրդային իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացնելու որոշումն ընդունվել է փետրվարի 13-ին Կոտայքի Ջառ գյուղում անցկացված ժողովում⁸³⁵: Ինչ վերաբերում է ապստամբությունը ղեկավարելու խնդրին, պատմաբան Լեոն իրեն հատուկ ոճով գրում է. «Պատերազմն արդեն եկել հասել էր Թիֆլիսին ու մի օր չէ մի օր ռադիո-հեռագիր կախեցին փողոցներում թե Երեվանի մեջ հեղափոխություն է, բուլժիկները վրնդվել են և կազմվել է նոր խառն կառավարություն, որի գլուխն է դարձյալ Ալեքսանդրապոլի հաշտության հերոս Սիմոն Վրացյանը: Միայն այս անունը բավական էր, որ մենք հասկանայինք, թե այս ձեռնարկության գլխավոր դիրիժորն էլ Դաշնակցությունն էր»⁸³⁶:

Այսպիսով, տարագիր դաշնակցական հանրությունը պնդում է, որ Փետրվարյան ապստամբությունը եղել է ինքնաբուխ, իսկ Դաշնակցությունը միայն ղեկավարել և հունավորել է արդեն իրողություն դարձած համաժողովրդական դժգոհությունը: Ոչ դաշնակցական թերթերը, գործիչները, ընդհակառակը, չեն զլանում ապացուցել, որ իշխանությունը

⁸³² ԳԱԹ, Ավետիս Ահարոնյանի ֆոնդ, գ. 208, թ. 2:

⁸³³ Նույն տեղում, թ. 4:

⁸³⁴ Նույն տեղում, թ. 5, 6:

⁸³⁵ Տե՛ս Ղազարխեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 49:

⁸³⁶ Լեո, Անցեալից, Յուշեր, թղթեր, դիտումներ, Թիֆլիս, 1925, էջ 461:

բուլճիկներին հանձնելուց կարճ ժամանակ անց Հայաստանում մնացած դաշնակցականները ծրագրում էին հակախորհրդային ապստամբություն կազմակերպել: Մեր կարծիքով բուլճիկյան իշխանությունը տապալելու համար Դաշնակցության կողմից ապստամբություն կազմակերպելու որոշումն ընդունվել է շատ ավելի ուշ՝ միայն 1921 թ. փետրվարի առաջին կեսին, երբ բուլճիկյան բռնություններն ու ծախսողումները դարձել էին անտանելի:

1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառների վերհանման սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի մոտեցումների վերաբերյալ կարելի է եզրակացնել.

- Հայաստանում իշխանությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին բուլճիկներին հանձնելուց շատ կարճ ժամանակ անց առաջ եկած համաժողովրդական դժգոհության ակիբը բավական լուրջ առարկայական հիմքեր ուներ: Խորհրդային իշխանությունների գործադրած բռնությունները Հայաստանում անհետևանք չէին անցնելու: Հայ կոմունիստների վարած անկարող և անհեռատես քաղաքականությունը դրսևորվեց բոլոր ոլորտներում:

- Առաջին հերթին հիասթափեցնող եղավ բուլճիկների կողմից դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով նախատեսված պայմանների ոտնահարումը: «Հակահեղափոխական»-ի հորջորջումով անհարկի զանգվածային ձերբակալությունները և բռնությունները՝ հատկապես մտավորականների և զինվորականների հանդեպ, համաժողովրդական դժգոհության ակիբ բարձրացրեցին:

- Բացասական է գնահատվում նաև բուլճիկների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, ինչն ուղեկցվեց ոչ միայն ծայրահեղ բռնություններով ու անիշխանության դրսևորումներով, այլև առավել ծանրացրեց առանց այդ էլ թշվառության եզրին հասած ժողովրդի սոցիալական վիճակը:

- Համաժողովրդական ապստամբության գլխավոր պատճառներից էր նաև արևմտահայության խնդիրների անտեսումն ու Հայաստանի անկախության գաղափարի նսեմացումը:

- Պակաս կարևոր չէր նաև օրակարգային համարվող հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրները կարգավորելու հայ բուլճիկների անկարողությունը:

2.2 Ապստամբության պարտության պատճառների, հետևանքների և խորհրդային իշխանության վերահաստատման մասին մոտեցումները սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներում

Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանությունն ընդամենը մեկ ու կես ամիս տևեց: Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին ներխուժեցին Երևան: Մայրաքաղաքն ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: Հայրենիքի փրկության կոմիտեն, զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Դարալագյազ գծով բռնեցին դեպի Ջանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան: 1921 թ. փետրվարյան ապստամբությունն ի վերջո անհաջողությամբ ավարտվեց: Անդրկովկասի բոլշևիկների պաշտոնաթերթ «Ջարյա Վոստոկ»-ն այն բնորոշեց որպես Հայաստանում հակահեղափոխության ոչնչացում⁸³⁷:

Խոսելով ապստամբության պարտության մասին՝ Ա. Արշակունին մատնանշում է այն հանգամանքը, որ ՀՅԴ բարձր խավը տարբեր պատճառներով չղեկավարեց ապստամբությունը. մի մասը հեռացել էր երկրից, մի մասը բանտից նոր էր դուրս եկել և դեռևս խուճապային տրամադրության մեջ էր: Ապստամբության հիմնական մասնակիցները գյուղացիներ էին, ովքեր չունեին անհրաժեշտ կարգապահություն և կանոնավոր զենք⁸³⁸: Կարելի է ենթադրել, որ ապստամբության ղեկավարները պատրաստ չէին դրան:

Նույն հեղինակը, սակայն, ապստամբության անհաջողությունը մեկնաբանում է գաղափարաքաղաքական հետաքրքիր մոտեցմամբ: Ա. Արշակունու կարծիքով ապստամբության պարտությունը մեծապես պայմանավորված էր հայ ժողովրդի «դասակարգային գիտակցության պակասով»: «Նոյնիսկ Հ.Յ. Դաշնակցութիւնն իր համար միանգամայն խորթ եւ անընդունելի է համարում քաղաքացիական կռիւլ մեր ժողովրդի ծոցում փաստորէն: Ձանձրալիութեան չափերի հասցրած, նոյնն են անում հայ իրականութեան մէջ գոր-

⁸³⁷ “Заря Востока”, Тифлис, 1923, 1 апреля.

⁸³⁸ Տե՛ս Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 47:

ծող միւս քաղաքական հոսանքները: Այս է պատճառը, որ մեր հասարակական ըմբռնումները չեն կրում դասակարգային բնույթ: Մենք խնդիրները վեր ենք լուծում ոչ թէ շրջապատող քաղաքական-հասարակական կեանքը նկատի ունենալով, այլ՝ մեր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, թէեւ յաճախ վտանգում ենք այդ գոյութիւնը: Խօսքը վերաբերում է բոլոր քաղաքական հոսանքներին հաւասարաբար», - գրում է Ա. Արշակունին⁸³⁹: Նրա կարծիքով Փետրվարյան ապստամբության պարտությունը պայմանավորված էր ապստամբների կողմից ազգային շահը դասակարգային շահից գերադասելու հանգամանքով: Ա. Արշակունին պարտության պատճառներից մեկն էլ համարում էր «մեր ռուսասիրությունը»⁸⁴⁰: Հեղինակի համոզմամբ, ի դեմս բոլշևիկների, մենք տեսնում էինք ռուսներին և այդ իսկ պատճառով հավուր պատշաճի չպայքարեցինք: Որպես ապստամբության պարտության պատճառ հիշատակվում են նաև զորքի հոգնածությունը և Վրաստանի անկախության անկումը⁸⁴¹, որն առարկայականորեն այդպես էր:

Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանը, վերլուծելով հարցի վերաբերյալ ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովում տեղի ունեցած քննարկումները, գտնում է, որ Փետրվարյան ապստամբության պարտության պատճառ էր նաև այն, որ Հայաստանը փաստացի մենակ մնաց հակախորհրդային պայքարում⁸⁴²:

Հ.Քաջազնունին իր հայտնի զեկույցում, անդրադառնալով Փետրվարյան ապստամբության վերջնական հաջողությանը, կարծիք է հայտնում, որ լավ կռվելու դեպքում կարելի էր արագ հաջողության հասնել, քանի որ բոլշևիկները շատ օգնություն չէին ստացել դրսից, իսկ հակաբոլշևիկյան Վրաստանը դեռ կանգուն էր⁸⁴³: Իսկ ինչ վերաբերում է վատ կռվելուն, այդ մասին նա հետևյալն է գրում. «Վատ կռուցին ոչ այն պատճառով, ի-

⁸³⁹ Նույն տեղում:

⁸⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁸⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

⁸⁴² Տե՛ս «Յուսաբեր», 1925, 10 մարտի:

⁸⁴³ Վրաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1921թ. փետրվարի 25-ին (տե՛ս Աвалов З., Независимость Грузии в международной политике 1918-1921 гг. Воспоминания. Очерки, Париж, 1924, с. 312.): Սկյուրքահայ մամուլը ժամանակին արժևորել է Ջուրաբ Ավալովի աշխատությունը և այն թարգմանաբար վերահրատարակել (տե՛ս Ավալով Ջ., Բաթումի խորհրդաժողովը, «Վէմ», Փարիզ, 1934, թիւ 2, էջ 80-93, թիւ 3, էջ 74-84, թիւ 4, էջ 104-112), Ավալով Ջ., Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք», 1934, դեկտեմբեր, էջ 49-65, 1935թ., յունուար, էջ 69-90, փետրուար, էջ 102-121, մարտ, էջ 61-79, ապրիլ, էջ 95-100, մայիս, էջ 132-143, յունիս, էջ 113-124, յուլիս, էջ 137-142, օգոստոս, էջ 112-121, հոկտեմբեր, էջ 104-114):

հարկէ, որ չէին ուզում կուել (եթէ չուզենային՝ չէին ապստամբի եւ տեղի չէր ունենայ այն ընդհանուր, անօրինակ խանդավառութիւնը, որին ականատես եղանք Երեւանում, ապստամբութեան առաջին օրերին), այլ այն պատճառով, որ վստահութիւն չունէին իրանց ոյժերի վրայ»⁸⁴⁴: Հ. Քաջագնունու եզրահանգմամբ ապստամբությունն իր ներսում արդեն կրում էր պարտության սաղմը, որովհետև հաջողության հավատ չունէր⁸⁴⁵:

Սկիւռքահայ մեկ այլ գործիչ՝ Սարգիս Իզմիրլյանը, ով եղել է դեպքերի ժամանակակիցը և պատկառելի տարիքում փոքրածավալ հուշեր ու տպավորություններ է գրել, նույնպես կարծում է, որ «պարտութիւնը անխուսափելի էր, եւ վախճանը սկիզբէն կնքուած»⁸⁴⁶:

Ապստամբության պարտության վերաբերյալ իրենց պատճառաբանություններն են բերում նաև որոշ թերթեր: Օրինակ՝ Կ. Պոլսի «Ճակատամարտը» գրում է, որ ապստամբության անհաջողության և չտարածվելու պատճառներից մեկն էլ խստաշունչ ձմեռն էր, որի պատճառով դժվարացել էր հաղորդակցությունը⁸⁴⁷: Ֆրեզնոյի «Ասպարեզի» տեսակետով Փետրվարյան ապստամբության ճակատագիրը որոշվեց այն ժամանակ, երբ Վրաստանը խորհրդայնացավ և բուլշևիկները մեծաքանակ ռուսական զորքեր բերեցին - Հայաստան⁸⁴⁸:

Ապստամբության պարտության գլխավոր պատճառն, անշուշտ, ուժերի անհավասար հարաբերակցությունն էր: Ապստամբության ղեկավարները, ի դեմս բուլշևիկների, ռուսների դեմ պատերազմելու հոգեբանորեն անպատրաստ ժողովրդով, սահմանափակ մարդկային, զինական և նյութական միջոցներով արտաքին աշխարհից մեկուսացված լինելու պայմաններում չէին կարող երկար շարունակել պայքարը:

⁸⁴⁴ Քաջագնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, էջ 47:

⁸⁴⁵ Նույն տեղում:

⁸⁴⁶ Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (Անձնական յուշերուս ընդմէջէն), Պէյրութ, 1962, էջ 55, 56:

⁸⁴⁷ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 20 մայիսի:

⁸⁴⁸ «Ասպարեզ», Ֆրէզնօ, 1921, 27 սեպտեմբերի:

Փետրվարյան պարտված ապստամբությունն ունեցավ իր դրական ու բացասական հետևանքները, որոնց լայնորեն անդրադառնում է 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը:

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանը «Վէմ»-ում ապստամբության հետևանքներին անդրադառնալիս նշում է, որ դրանց մեջ «առաջին տեղն է բռնում հայ մտաւորականութեան փրկութիւնը կացինահար լինելուց կամ Ռուսաստան արտուելուց»⁸⁴⁹:

Ֆրեզնոյի «Ասպարէզ»-ը գրում է. «18 Փետրուարին պօլշեիկներու դէմ կատարած յեղափոխութիւնը երեւան հանեց մահուան դատապարտուած չորս հարիւր անձերու ցանկը, որոնք պիտի կատարուէին կարմիրներու կողմէ: Այս ցանկին մէջ եղած են նախկին վարչապետներ Հ. Քաջազնունին և Հ. Օհանջանեանը, նախկին նախարարներ Ա. Չիլինգարեանը, Բժ. Ա. Ղազարեանը, Բժ. Տեր-Դավթեանը և ուրիշներ»⁸⁵⁰:

Նույն խնդրի կապակցությամբ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը նշում է, որ եթե հայ ժողովուրդը փետրուար 18-ի «դիւցազնական ըմբոստացումով» չկարողացավ տևականորեն վերահաստատել ու ապահովել իր ներքին ազատությունն ու պետական անկախությունը, ապա նրան հաջողվեց օտար կամ օտարին ծառայող հայանուն դահիճների ձեռքից խլել ստոյգ մահուան դատապարտուած իր ազատատենչ մտավորականությանն ու զինվորականությանը: Այլ կերպ՝ հայ ժողովուրդը փրկեց իր երեկվա ղեկավարներին վաղվա հաղթանակի համար⁸⁵¹: «Հայրենիք» օրաթերթի մեկ այլ համարում ևս նշվում է, որ հայ ժողովուրդն իր օրհասական ճիգով կարողացավ «ոչ միայն արգիլել իր մտաւորականութեան ու զինուորականութեան բնաջնջումը, այլեւ շօշափելիօրէն մեղմել, աւելի տանելի դարձնել կարմիր լուծը»⁸⁵²:

⁸⁴⁹ Վրացեան Ս., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, 2 տարի, թիւ 1, էջ 5:

⁸⁵⁰ «Ասպարէզ», 1921, 14 հոկտեմբերի:

⁸⁵¹ Տե՛ս «Հայրենիք», 1926, 18 փետրուարի:

⁸⁵² «Հայրենիք», 1927, 18 փետրուարի:

Թերթի 1930 թ. փետրվարի 18-ի խմբագրականը հաստատում է, որ Փետրվարյան ապստամբության բարիքներից առաջինն ազատատենչ հայ մտավորականության և զինվորականության փրկությունն էր⁸⁵³:

Փետրվարյան ապստամբության շնորհիվ փրկվեց ոչ միայն հայ մտավորականությունը, այլև զինվորականությունը: Այս կապակցությամբ «Հայրենիք» ամսագրում Գ. Նժդեհը գրում է, որ Սյունիքում մղվող մարտերը հոգեբանորեն նպաստեցին Փետրվարյան ապստամբությանը, ինչն էլ իր հերթին խորհրդային կացնից փրկեց հայ մտավորականությանը, սպայությանը և խմբապետությանը⁸⁵⁴:

Մտավորականության փրկությանն է անդրադառնում նաև Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Հ. Տեր-Հակոբյանը, ով գրում է. «Փետր. 18-ը, դժբախտաբար, չկարողացաւ վերջնականապէս խորտակել բոլշեւիկեան լուծը եւ Հայոց Աշխարհի ազատութիւն ու անկախութիւն պարգեւել, բայց տուեց մէկը միւսից աւելի կենսական ու բախտորոշ արդիւնքներ մեր հայրենիքի ու ժողովրդի համար: Փետրուարեան նոյն «հրաշագործ» ցնցումի հետեանքով Մոսկուան անսպասելիօրէն Հայաստան վերադարձրեց հայկական բանակի աքսորական սպաներից մեծ մասին, որոնց համար, անկասկած, բոլորովին այլ ճակատագիր էր սահմանուած»⁸⁵⁵:

Պետք է համաձայնվել վերոշարադրյալի հետ, որ Փետրվարյան ապստամբության շնորհիվ բանտերում հայտնված բազմաթիվ հայ մտավորականներ ու զինվորականներ փրկվեցին անխուսափելի «կացնահարություններից»: Հայ ժողովրդի ընտրանուն վերահաս մահվանից փրկելու հարցում Փետրվարյան ապստամբության դերն աներկբայելի է: Որևէ կասկած չկա, որ ապստամբության թեկուզ մի քանի օր ուշացումը կարող էր բանտում հայտնված բազմաթիվ մտավորականների կյանքեր արժենալ: Փետրվարյան ապստամբության շնորհիվ փրկված մտավորականությունը, հետագայում հաստատվելով արտասահմանում, մեծագույն ավանդ ունեցավ հայկական սփյուռքի կազմակերպման, մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում:

⁸⁵³ Տե՛ս «Հայրենիք», 1930, 18 փետրուարի:

⁸⁵⁴ Տե՛ս Նժդեհ Գ., Լեոնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, էջ 78:

⁸⁵⁵ Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատենան Հ.Յ.Դաշնակցութեան (1890-1950), (կազմ.՝ Ս. Վրացեան)», Պոստոն, 1950, էջ 326:

Ցավոք, բուլճարիկները հասցրին բանտում սպանել Համազասպին, Արտուշ խանին, Վաղարշակ Գասպարյանին, գնդապետ Նիկոլայ Ղորղանյանին (Կորգանով) և ուրիշների⁸⁵⁶:

Փետրվարյան ապստամբության դրական հետևանք է համարվում նաև անկախության գաղափարի հաջողված «փորձարկումը»: «Դրօշակի» էջերում Փետրվարյան ապստամբությանն անկախության գաղափարի տեսանկյունից է անդրադառնում ապստամբության ղեկավարներից Կարո Սասունին: «Փետրուարեան ապստամբութեան խելայեղ թափը, ժողովուրդի անհուն հրճուանքը կարելի է բացատրել **անկախ պետութիւն, ազատ հայրենիք** (ընդգծումը հեղինակինն է - Խ. Ս.) ունենալու բուռն բաղձանքով: Ազգային անկախութեան աղաղակն էր, որ կը պռոթակար փետրուարեան ցնցումներուն մէջ: ... - բոլորէն վեր կը խօսէր քաղաքական խոր գիտակցութիւնը – վերականգնել կորսուած անկախութիւնը և հայրենիքը ազատել օտար ու անօգուտ լուծէն», - գրում է Կ. Սասունին⁸⁵⁷:

Այս կապակցությամբ վերջինս մեկ այլ տեղ բնորոշում է, որ Փետրվարի 18-ը հայ ժողովրդի վերածննդի ճանապարհին հայ ժողովրդի և նրա կազմակերպված զանգուածների ազգային-քաղաքական ապրումների խտացված արտահայտությունն է: Փետրվարյան ապստամբությունը ոչ միայն փրկեց 2000-ից ավելի մտավորականների և զինվորականների անխուսափելի գլխատումից, այլև փրկեց հայ ժողովրդին կատարյալ ստրկացումից՝ վերականգնելով նրա ազգային անկախութեան համոզումը⁸⁵⁸: Կ. Սասունու կարծիքով, ըստ էության, Փետրվարյան ապստամբությունը հայ ժողովրդի անկախության ձգտելու դրսևորում էր: Իսկ «փետրվարյան սերնդին» կարելի է անվանել «անկախության սերունդ»⁸⁵⁹: Կարո Սասունին համոզված գրում է, որ «հայ ժողովրդի հոծ զանգուածները,

⁸⁵⁶ Տե՛ս ՀՅԴաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղվարչության գաղտնիություններում (1920-ական թվականներ), (Փաստաթղթերի ժողովածու), կազմող և խմբագիր՝ պրոֆ. Վ. Ղազախեցյան, Երևան, 2016, էջ 19:

⁸⁵⁷ Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 74:

⁸⁵⁸ Տե՛ս «Հայրենիք», 1926, 18 փետրուարի:

⁸⁵⁹ Տե՛ս Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1926թ., յունուար, էջ 96:

կազմակերպուած դաշնակցութիւնը, հայ մտաւորականութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կանգնած կը մնան անկախութեան»⁸⁶⁰:

Ս. Վրացյանը Փետրվարյան ապստամբութիւնից հետո հանրութեան ներկայացրած հաշվետվութեան մեջ ևս անդրադառնում է անկախութեան խնդրին: Ըստ նրա՝ ապստամբութիւնը ևս մեկ անգամ փաստեց, որ հայ ժողովուրդը վաղ թե ուշ հասնելու է իր անկախութեանը: Բոլշևիզմի տիրապետութիւնը ժամանակավոր է: «Մենք հաստատ գիտենք, որ բոլշևիզմը Հայաստանում իշխող կը լինի այնքան, որքան ռուս զօրք կայ այնտեղ», - եզրակացնում է Ս. Վրացյանը⁸⁶¹:

Հ. Տեր-Հակոբյանը կարևորում է այն, որ հայ մտավորականութեան փրկութիւնը Հայաստանի անկախութեան գաղափարը վառ պահելու գրավականներից մեկն էր: «Բոլշևիկները, տիրելով մեր երկրին, այո, ֆիզիքապէս ոչնչացրին Հայաստանի անկախութիւնը՝ գէթ անորոշ ժամանակով, սակայն, չկարողացան հոգեպէս եւս ոչնչացնել, այսինքն՝ մեռցնել անկախութեան գաղափարը, որովհետեւ բնաջնջումից փրկուեցին մեր մտաւորականութիւնն ու ղեկավար տարրերը, որոնք փաստորէն այդ գաղափարի գլխաւոր ջահակիրներն են հանդիսանում», - գրում է Հ. Տեր-Հակոբյանը⁸⁶²: Նույն գործիչը Փետրվարյան ապստամբութեան հերթական տարեդարձի առիթով նշում է, որ այն «հայ ժողովրդի հերոսական ընդվզումի, արդար զայրոյթի եւ իր ազգային իրաւունքների խորունկ գիտակցութեան մի գեղեցիկ յուշարձան է»⁸⁶³:

Հ. Տերտերյանը գրում է, որ Փետրվարյան ապստամբութիւնից հետո բոլոր կուսակցութիւնների գործիչներին մի մոգական ձեռք միացրել էր միևնույն զգացմունքի ու

⁸⁶⁰ Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 74:

⁸⁶¹ Վրացեան Ս., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, 2 տարի, թիւ 1, էջ 9: Սիմոն Վրացյանի այս հանրային հաշվետվութիւնը նախ հրատարակվել է Թավրիզի «Այգ» թերթում, ապա նաև Ֆրեզնոյի «Ասպարէզ»-ի՝ 1921թ. սեպտեմբերի 27-ի համարում (տե՛ս «Ասպարէզ», 1921, 27 սեպտեմբերի):

⁸⁶² Իրազեկ, Փետրուար 18, էջ 324:

⁸⁶³ «Հայրենիք», 1931, 18 փետրուարի:

գաղափարի շուրջ: Զգացմունքը՝ անսահման ու անվերապահ ատելությունը դեպի բոլշեփիկները, և գաղափարը՝ Հայաստանի անկախությունը⁸⁶⁴:

Ն. Բաղալյանն էլ գրում է, որ չնայած պարտությանը, «Փետրուար 18-ը ապացուցեց, որ Հայաստանի անկախութիւնը ժողովրդի գոյութեան, բարգաւաճման եւ զարգացման գլխաւորագոյն պայմանն է, եւ որ ինքը ժողովուրդն է կրողը այդ անկախութեան»⁸⁶⁵:

Այսպիսով, ապստամբության անմիջական ղեկավարները, խոսելով ապստամբության հետևանքների մասին, միանշանակ շեշտում են Հայաստանի անկախության գաղափարի արժևորումը: Փետրվարյան ապստամբությունը յուրատեսակ փորձաքար էր՝ ստուգելու հայ ժողովրդի վերաբերմունքը դեպի ազատությունն ու անկախությունը: Ապստամբության դրական հետևանքների մեջ այս համոզումն առաջնային կարելի է համարել:

Փետրվարյան ապստամբության հետևանքները քննելիս Հայաստանի անկախության գաղափարը յուրահատուկ արժևորում են դաշնակցական թերթերը:

Ապստամբության հնգամյակին նվիրված «Դրօշակ»-ի խմբագրականում ասվում է, որ ապստամբությունը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի անկախության գաղափարի ժողովրդականացման և խորացման առումով: Ըստ պարբերականի՝ տարերայնորեն ծնունդ առած շարժումն առաջին իսկ պահից տոգորված էր Հայաստանի անկախության վերականգնման գաղափարով: Ավելին՝ ապստամբության արագ բռնկումն ու տարածումը ևս պայմանավորված էին այն հանգամանքով, որ ժողովուրդը ցայտուն և թարմ փաստերով տեսավ անկախ և խորհրդային Հայաստանների միջև եղած տարբերությունը⁸⁶⁶:

Այս տեսակետից խմբագրականում ևս մեկ այլ դիտարկում է արվում: Անկախության գաղափարն այնքան էր արմատացել ժողովրդական ամենալայն զանգվածների մեջ, որ հանուն այդ անկախության մոլեգին կռիվ էր մղվում անգամ Ռուսաստանը խորհրդանշող բոլշևիկյան իշխանության դեմ⁸⁶⁷:

⁸⁶⁴ Տե՛ս Վրացեան Ա., Կեանքի ուղիներով ..., հ. 2, էջ 35:

⁸⁶⁵ Բաղալյան Ն., Փետրուար 18 հայկական ազատագրական շարժման ամբողջական մարմնացում, «Փետրուար 18», Փրակա, 1927, էջ 40:

⁸⁶⁶ Տե՛ս «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 39:

⁸⁶⁷ Տե՛ս նոյն տեղում:

«Դրոշակի» մեկ այլ խմբագրական հետևյալ կերպ է անդրադառնում խնդրին. «Եվ հայ գիւղացին ըմբոստացաւ, իր հայրենիքին մէջ, իր տան մէջ, իր մէջքին վրա զգալով բովանդակ արհաւիրքը նոր լուծին: ...Փետրուար 18էն յետոյ էր որ, մարդիկ իրապէս ըմբռնեցին ազատութեան եւ սեփական հայրենիքի արժէքը: Ինչ որ վերացական գաղափար էր կամ բաղձանք, այնուհետեւ դարձաւ թանձրացեալ պատկեր եւ անհրաժեշտութիւն»⁸⁶⁸:

Պարբերականը միաժամանակ փաստում է, որ Փետրվարյան ապստամբությունը յուրօրինակ պարտություն էր «Հայաստանի մարզպաններուն, արհեստական յաղթանակի այդ եղկելի ասպետներուն»⁸⁶⁹: Ըստ պարբերականի՝ փաստորեն օտար իշխանությունների տեղական դրածոները չէին կարող երկար գոյատևել:

Փետրվարյան ապստամբության հետևանքներին լայնորեն անդրադառնում է նաև Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը: Իբր ապստամբության հետևանք՝ Հայաստանի անկախության գաղափարի վերարժևորման մասին է խոսվում թերթի 1927 թ. փետրվարի 18-ի խմբագրականում: Թերթի համոզմամբ հայ ժողովուրդն այս կերպ հայտնել է ազատ ու անկախ ապրելու իր վեհապետական անդրդվելի կամքը և շարունակելու է ապրել ազատ ու անկախ հայրենիքի գաղափարով⁸⁷⁰: Ըստ թերթի՝ հայ ժողովուրդը սեփական հայրենիքի ազատության ու անկախության արժեքն այնքան չէր զգացել, որքան Փետրվարյան ապստամբության օրերին⁸⁷¹: Թերթը միաժամանակ նշում է, որ ապստամբությունը բարձրացրեց հայ ժողովրդի քաղաքական կշիռը ինչպես կովկասյան հարևանների, այնպես էլ թուրքերի և Մոսկվայի մոտ, որովհետև «Փետրուարի ապստամբութիւնը զէնքի փառաւոր քուէարկութիւն մըն էր ի նպաստ Հայաստանի ազատութեան եւ անկախութեան»⁸⁷²: Իսկապես, Փետրվարյան ապստամբությունից հետո, ինչպես ցույց կտրվի ստորև, հատկապես խորհրդային կենտրոնական իշխանություններն առավել զգուշավորությամբ էին մոտենում Հայաստանի խնդիրներին:

⁸⁶⁸ «Դրոշակ», 1930, թիւ 2, էջ 34:

⁸⁶⁹ Նույն տեղում:

⁸⁷⁰ Տե՛ս «Հայրենիք», 1927, 18 փետրուարի:

⁸⁷¹ Տե՛ս «Հայրենիք», 1930, 18 փետրուարի:

⁸⁷² Նույն տեղում:

«Հայրենիք» օրաթերթում Փետրվարյան ապստամբության հետևանքներին է անդրադառնում նաև սփյուռքահայ մամուլի անխոնջ մշակ Օ.Մխիթարյանը: Ըստ նրա՝ ապստամբության շնորհիվ վերահաստատվեց անկախությունը վերականգնելու հայ ժողովրդի ձգտումը, ժողովուրդը հնարավորություն ունեցավ համեմատելու անկախ Հայաստանի օրերը բուլճարի կառավարության օրերի հետ և համոզվեց, որ անկախությունը «բոլորի համար կը դառնար իբրև կենսական անհրաժեշտություն, օդ, լոյս, հաց...»⁸⁷³: Փետրվարյան ապստամբությունը հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ, հոգեբանական առումով վերագնահատվեց բարոյական ուժի ազդեցությունը: Օ. Մխիթարյանը եզրակացնում է, որ «Փետրուարեան ապստամբութիւնը հայ ցեղի հերոսական մէկ սքանչելի ընդվզումն էր ընդդէմ ստրկութեան եւ յանուն ազատ եւ անկախ հայրենիքի»⁸⁷⁴:

Փետրվարյան ապստամբության տարեդարձին նվիրված խմբագրականներից մեկում էլ «Հայրենիքը» Փետրվարյան ապստամբությունը համարում է հայության հերոսական ընդվզում ընդդէմ ստրկության և հանուն ազատ ու անկախ հայրենիքի, մի ընդվզում, «որուն նմանը ցոյց չտուաւ ոեւէ ուրիշ ազգ ամբողջ Խորհրդային Միութեան մէջ»⁸⁷⁵:

Տարագիր հեղինակ Աշոտ Թաթուրլ Փարիզի «Հառաջ» օրաթերթում գրում է, որ ապստամբությունը հայ ժողովրդի անսահման զոհաբերություններով և հերոսության բազում դրվագներով հագեցած համերաշխ պայքարի, օտար նվաճողների դիվային ծրագրերը խափանելու գիտակցության արտացոլումն է: Ավարտելով իր խոսքը՝ հեղինակն ամփոփում է. «...Փետրուար 18-ը հայ ժողովուրդի անկախ եւ ազատ ապրելու փոթորկալի մէկ ցոյցն է»⁸⁷⁶:

Ի դեպ, «Հառաջ» օրաթերթը, խոսելով Փետրվարյան ապստամբության նշանակության մասին, մի քանի անգամ փորձել է այն համեմատել Ռուսաստանում այդ ընթացքում տեղի ունեցած Կրոնշտադտի⁸⁷⁷ ապստամբության հետ⁸⁷⁸: Փետրվարյան

⁸⁷³ «Հայրենիք», 1928, 19 փետրուարի:

⁸⁷⁴ Նույն տեղում:

⁸⁷⁵ «Հայրենիք», 1934, 18 փետրուարի:

⁸⁷⁶ «Յառաջ», 1929, 23 փետրուարի:

⁸⁷⁷ Կրոնշտադտի 1921 թ. ապստամբության մասին մանրամասն տե՛ս Семанов С., Кронштадтский мятеж, Москва, 2003, 254 с., Эврич П., Восстание в Кронштадте, Москва, 2007, 237 с.

⁸⁷⁸ Տե՛ս «Յառաջ», 1935, 6 մարտի:

ապստամբությունը Կրոնշտադտի ապստամբության հետ համեմատության փորձ է արել նաև «Հայրենիքը»⁸⁷⁹:

Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթը գրում է, որ «Փետրուար 18-ը դեպի ապագան յոյսով եւ խանդավառութեամբ լեցնող անմոռանալի թուական մըն է»⁸⁸⁰: Աթենքի «Նոր օր»-ը ևս բոլշևիզմի դեմ պայքարին զուգահեռ արժևորում է հայ ժողովրդի ձգտումը «Հայաստանի անկախութեան եւ ազգային պետութեան գաղափարին»⁸⁸¹:

Բուենոս Այրեսի «Արմենիա» թերթը գրում է, որ փետրվարի 18-ը հայ ժողովրդի միահամուռ կամքի և ուժի ներդաշնակ արտահայտությունն է⁸⁸²: Ըստ թերթի՝ հայ ժողովուրդը, զգալով ազատության և անկախության կորուստը, մեկ մարդու նման ընդվզեց⁸⁸³:

Կարծում ենք, որ տարագրության մեջ հաստատված Փետրվարյան ապստամբության ղեկավարները, ապստամբությունը համարելով անկախության համար պայքարի յուրօրինակ մի դաս, բազում սերունդների են ոգևորել անկախության երազով:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. սիյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, անդրադառնալով Փետրվարյան ապստամբության հետևանքներին և դրանցում արժևորելով Հայաստանի անկախության գաղափարը, հաստատում է, որ հայ ժողովուրդը երբեք չի հաշտվի ստրկության մեջ մնալու մտքի հետ և հարկ եղած դեպքում պատրաստ է մեկ մարդու նման պայքարելու հանուն հայրենիքի անկախության: Փետրվարյան ապստամբությամբ հայ ժողովուրդը մեկ անգամ ևս դրսևորեց ազատ և անկախ ապրելու իր կամքը:

Փետրվարյան ապստամբության արդյունքներից մեկն էլ բոլշևիկյան իշխանությունների՝ ժողովրդի հանդեպ կիրառվող քաղաքական և տնտեսական հալածանքների մեղմացումն էր: Ապստամբությունը թեև պարտությամբ ավարտվեց, սակայն Հայաստանի խորհրդային նոր իշխանությունները, նաև Մոսկվայի ցուցումով, սկսեցին ժողովրդի հանդեպ առավել մեղմ քաղաքականություն կիրառել:

⁸⁷⁹ Տե՛ս «Հայրենիք», 1925, 18 փետրուար:

⁸⁸⁰ «Յուսաբեր», 1924, 21 փետրուար:

⁸⁸¹ «Նոր օր», Աթենք, 1932, 18 փետրուար:

⁸⁸² Տե՛ս «Արմենիա», 1933, փետրուար 18:

⁸⁸³ Տե՛ս նույն տեղում:

Սիմոն Վրացյանն անդրադառնում է Կովկասի կոմունիստներին («Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին») ուղղված Վլադիմիր Լենինի նամակին, որտեղ բոլշևիկների առաջնորդը մեղմ քաղաքականության կոչ էր անում⁸⁸⁴: Ս. Վրացյանը գրում է. «Այս նամակը որքան եւ արդինք էր այն ժամանակուան Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերող մասում մեծապես թելադրուած էր Հայաստանի փետրուարեան ապստամբութեան թողած տպավորութիւնից»⁸⁸⁵: Հենց այս տեսակետից էլ Ս. Վրացյանը բարձր է գնահատում Փետրվարյան ապստամբությունը՝ նշելով, որ այդ շարժման ազդեցությունը փաստացի ավելի մեծ էր, քան Հայաստանի սահմանները⁸⁸⁶:

Մեկնաբանելով ապստամբությունից հետո Հայաստանում բոլշևիկների ավելի մեղմ քաղաքականությամբ՝ Ս. Վրացյանը «Վէմ»-ում նշում է, որ որոշակիորեն դա պայմանավորված էր նաև փետրվարյան դեպքերով: Նա համոզված է, որ «եթէ դեկտեմբերից իշխէր անելի խելացի ու հեռատես քաղաքականութիւն, փետրուարեան ապստամբութիւնը տեղի չէր ունենայ, եւ Հայաստանը ազատ կը մնար մի խոշոր ցնցումից»⁸⁸⁷:

Փարիզի «Հառաջ» թերթի խմբագիր Շավարշ Միսաքյանը հետփետրվարյան բոլշևիկյան քաղաքականության վերաբերյալ գրում է, որ Ռուսաստանում էլ ըմբռնեցին, թե ինչ է նշանակում խաղալ ժողովրդի համբերության ու ազատության հետ⁸⁸⁸:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ն էլ իր հերթին արձանագրում է, որ ապստամբությունից հետո խորհրդային իշխանությունները փոխեցին իրենց վերաբերմունքը, տեղի ունեցան պաշտոնանկություններ, նոր եկած պաշտոնյաները սկսեցին ավելի մեղմ քաղաքականություն վարել⁸⁸⁹: Հայաստան նոր պաշտոնյաներ ուղարկելու փաստն առանձնացնում է նաև Հ. Տեր-Հակոբյանը: Նա Փետրվարյան ապստամբությունը յուրահատուկ դաս է համարում Կրեմլի համար, որը ստիպված եղավ ավելի խոհեմ վերաբերմունք ցուցաբերել

⁸⁸⁴ Տե՛ս Լենին Վ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 43, Երևան, 1982, էջ 237-240:

⁸⁸⁵ Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 243:

⁸⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 244:

⁸⁸⁷ Վրացեան Ս., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, 2 տարի, թիւ 1, էջ 5:

⁸⁸⁸ Տե՛ս «Յառաջ», 1936, 18 փետրուարի:

⁸⁸⁹ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 25 մայիսի:

«մասնատրապէս Կովկասի ժողովուրդների եւ Հայաստանի ու հայութեան հանդէպ»: Հ. - Տեր-Հակոբյանը բոլշևիկյան մեղմ քաղաքականության ապացույց է դիտարկում Ալեքսանդր Մյասնիկյանին Հայաստան գործուղելը: Վերջինիս նա համարում է շրջահայացներից ու լրջմիտներից մեկը հայ բոլշևիկների շարքերում⁸⁹⁰: Մոսկվան միաժամանակ ստիպված եղավ հետ կանչելու Ավիս Նուրիջանյանի նման չարանենգ պետական և կուսակցական պաշտոնյաներին, որոնք այլևս Հայաստան չվերադարձան⁸⁹¹:

Բոլշևիկյան քաղաքականության մեղմացման մասին է խոսում նաև «Հայրենիք» ամսագրի հիմնադիր և խմբագիր Ռուբեն Դարբինյանը: Ըստ նրա՝ Փետրվարյան ապստամբության արդյունքում ոչ միայն մեղմացան հալածանքները, այլև ավելի հայրենասեր բոլշևիկ ղեկավար հայ գործիչներ եկան Հայաստան: «Եթէ 1921-ի Փետրուարին հայ ժողովուրդը գրեթէ մէկ մարդու պէս ապստամբած չըլլար Սովետական լուծին դէմ, Լենինը ստիպուած չէր ըլլար մեղմ եւ ազգային տեսակէտով անելի թոյլատու քաղաքականութիւն վարել Հայաստանի մէջ՝ անելի չափաւոր եւ անելի ազգայնական բոլշևիկ իշխանաւորներ դրկելով Երեսան՝ յանձին Մեասնիկեաններու եւ Լուկաշիններու», - գրում է Ռ. Դարբինյանը⁸⁹²:

Բոստոնի «Հայրենիքը» ևս նկատում է Մոսկվայի խելամիտ կադրային քաղաքականությունը ապստամբությունից հետո: Հայաստան եկած Ա. Մյասնիկյանն ու Ս. Լուկաշինը բոլորովին սանձարձակ չէին իրենց նախորդների Ս. Կասյանի և Ա. Նուրիջանյանի նման⁸⁹³:

«Հայրենիք» ամսագրում Արշակ Զամայանը Փետրվարյան ապստամբությունից հետո բոլշևիկյան քաղաքականության մեղմացման մասին է խոսում, երբ պատասխանում է Հ. Քաջազնունու հայտնի զեկույցին: «Քաջազնունին գիտէ անշուշտ, որ փետրուարեան ապստամբութեան օրերին տաճկահայ ժողովուրդն այնքան զզուած էր բոլշևիկների հալածանքներից, որ գերադասում էր գնալ Իգտիր եւ անձնատուր լինել թիրաքերին, քան թէ նորից տեսնել բոլշևիկների երեսը: Այդ ապստամբութիւնը խրատ եղաւ բոլշևիկների համար

⁸⁹⁰ Տե՛ս Իրազեկ, Փետրուար 18, էջ 325:

⁸⁹¹ Տե՛ս նույն տեղում:

⁸⁹² Դարբինեան Ռ., Փետրուարեան ապստամբութեան 50-ամեակին առթիւ (խմբագրական), «Հայրենիք» (ամսագիր), 1971, թիվ 1, էջ 2:

⁸⁹³ Տե՛ս «Հայրենիք», 1934, 18 փետրուարի:

իրենց քաղաքականությունը, ինչպես շատ ասպարեզներում, նոյնպես եւ այս ասպարեզում փոխելու»,- գրում է Ա. Զամայանը⁸⁹⁴:

Բոլշևիկների քաղաքականության մեղմացմանն է անդրադառնում նաև Զմյունիայի «Արևելյան մամուլը»՝ գրելով, որ ապստամբությունից հետո Մյասնիկյանը վերացրեց Հայհեղկոմի օրոք գործող սարսափները⁸⁹⁵:

Ապստամբությունից հետո՝ 1921 թ. ապրիլի 24-ին, Հայհեղկոմի նախագահ Ա. Կասյանը հրամանագիր ստորագրեց ընդհանուր ներման մասին⁸⁹⁶: Հայհեղկոմի՝ 1921 թ. ապրիլի 10-ի և 16-ի դեկրետներով արգելվեցին բոլոր տեսակի խուզարկություններն ու բռնագրավումները⁸⁹⁷: ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Գ. Օրջոնիկիձեի միջոցով Հայաստանում իրականացվեց քաղաքական բանտարկյալների համաներում: Վերջինիս դերը հայ բոլշևիկների վայրագությունները զսպելու առումով կարևորել է Հովհաննես Թումանյանը⁸⁹⁸:

Ապստամբության պարտությունից հետո Երևանում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ Գ. Օրջոնիկիձեն «Ռուսաստանի կողմից ողջունում է սովետական անկախ - Հայաստանը», ցույց է յայտնում ժողովրդի գաղթի առթիւ, գտնում է, որ «նախկին կոմունիստ կառավարությունը անտակտ է եղել» եւ փոփոխութեան է ենթարկում կազմը⁸⁹⁹:

⁸⁹⁴ Զամայան Ա., Յ. Քաջագունինն եւ Հ.Յ.Դաշնակցությունը, «Հայրենիք», 1924, յունիս, էջ 81:

⁸⁹⁵ «Արևելյան մամուլ», Զմյունիա, 1921, 4 հոկտեմբերի:

⁸⁹⁶ Տե՛ս <ՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, Պրակ II (1921 թ. ապրիլի 2 – օգոստոսի 1), Էջմիածին, 1921, էջ 21, հմմտ. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վավերագրեր), Գահիրե, 1946, էջ 307:

⁸⁹⁷ Տե՛ս <ՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, Պրակ II (1921 թ. ապրիլի 2 – օգոստոսի 1), էջ 12-17, հմմտ. Սարգսյան Կ., Հայաստանում սովետական իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները (1921 թ. ապրիլ-հունիս), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 3, էջ 22:

⁸⁹⁸ Քաղաքացիական կռիվներին վերջ տալու միջնորդության նպատակով Գ. Օրջոնիկիձեն 1921 թ. մարտի 13-ին Հովհաննես Թումանյանին ուղարկում է Երևան (տե՛ս Պետրոսյան Վ., Հայաստան. 1919-1922 թվականներ, հ. 2, Երևան, 2011, էջ 237, Լեո, Անցեալից, էջ 465-468): Թումանյանի՝ Երևան այցը նույնպես տարբեր կերպ է մեկնաբանվել: Գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ Թումանյանի միջոցով բոլշևիկներն ապստամբներին իրենց տրամադրության տակ եղած մեծ թվով ուժեր են ներկայացրել՝ փորձելով հոգեբանական ազդեցություն գործել (տե՛ս Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Երևան, 2004, էջ 265): Բոլշևիկները բողոքում են, որ Թումանյանի առաքելությունն ապարդյուն անցավ (տե՛ս Կարինյան Ա., Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, էջ 93): Ավելացնենք նաև, որ 1937 թ. բոլշևիկյան բռնությունների զոհ է դառնում նաև մեծ բանաստեղծի որդին՝ Համիկը (տե՛ս Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր տասներորդ, Երևան, 1999, էջ 696):

⁸⁹⁹ Մինախորեան Վ., Վերադարձ, «Հայրենիք», Պոսթըն, 1924թ., ապրիլ, էջ 47-53:

1921 թ. ապրիլի 23-ին ընդունված որոշման համաձայն՝ Արտակարգ հանձնաժողովի գծով բանտարկված 117 և նրա հատուկ բաժնի գծով (կարմիր բանակ) 358 քաղաքական բանտարկյալները՝ ընդհանուրը 475 մարդ՝ գրեթե ամբողջությամբ, ազատ արձակվեցին: Ռուսաստանի համակենտրոնացման ճամբարներից տուն վերադարձան հայկական նախկին բանակի աքսորված սպաները⁹⁰⁰:

Լենինի վերոնշյալ մեղմ քաղաքականության կոչին և դրան հետևած բոլշևիկների քաղաքականության խոհեմացմանն են անդրադառնում նաև «Դրոշակ»-ի⁹⁰¹ և «Հայրենիք»-ի⁹⁰² խմբագրականները, Օ. Մխիթարյանը⁹⁰³, Հ. Տեր-Հակոբյանը⁹⁰⁴:

Հայաստանի խորհրդային իշխանությունները հատկապես 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո առանձնահատուկ ուշադրություն էին հատկացնում նաև արևմտահայ գաղթականներին, քանի որ վերջիններս ակտիվորեն մասնակցել էին ապստամբությանը: Այս առիթով ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի «Բյուլետենում» լուսաբանված են Թիֆլիսի արևմտահայերի կոնֆերանսը, Խորհրդային Հայաստանում բնակվող արևմտահայերի համագումարները, միտինգներն ու կոնֆերանսները, որոնք ավարտվում էին խորհրդային իրավակարգի նկատմամբ արևմտահայերի համակրանքն արտահայտող բանաձևերի ընդունմամբ⁹⁰⁵:

Փետրվարյան ապստամբությունը վճռական նշանակություն է ունեցել՝ Հայաստանում բոլշևիկյան բռնությունների թափը մեղմացնելու համար: Փետրվարյան ապստամբությունը լավ առիթ հանդիսացավ, որ Մոսկվան սաստի չափից ավելի «հեղափոխական» բազմաթիվ հայ բոլշևիկների: Ի դեպ, ապստամբությունից հետո հայ ժողովրդի հանդեպ անասելի բռնություններ գործադրած հայ բոլշևիկների մեծ մասը հեռացվեց ասպարեզից:

⁹⁰⁰ Տե՛ս Ղազարխեցյան Վ., Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, թիվ 1, էջ 49:

⁹⁰¹ Տե՛ս «Դրոշակ», 1926, թիվ 2, էջ 39:

⁹⁰² Տե՛ս «Հայրենիք», 1930, 18 փետրուարի:

⁹⁰³ Տե՛ս «Հայրենիք», 1928, 19 փետրուարի:

⁹⁰⁴ Տե՛ս Իրազեկ, Փետրուար 18, էջ 325:

⁹⁰⁵ Սուքիասյան Հ., ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի բյուլետենը (1921-1922 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, թիվ 3, էջ 91:

Այսպիսով, 1921 թ. փետրվարյան ապստամբությունը դրական ազդեցություն ունեցավ բոլշևիկյան բռնաճնշումները մեղմելու առումով: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն այս մեղմացումը կապում է նաև փետրվարյան դեպքերի հետ: Հայաստանում բոլշևիկների քաղաքականության վերափոխումը մեծապես պայմանավորված էր Մոսկվայի ցուցումով: Հաշվի առնելով թույլ տրված կոպտագույն սխալները՝ Վ. Լենինը հրահանգեց վերանայել նախկին քայլերը և ժողովուրդների հանդեպ բռնություններ չկիրառել:

Ինչպես իրավացիորեն նկատում է Աթենքի «Նոր օր» պարբերականը, Փետրվարյան ապստամբության հետևանքով հայ բոլշևիկները Հայաստանի ժողովրդին նոր փորձանքների գիրկը չտարան: «Այս թուականի (1921 թ. փետրվարի 18 – Խ. Ս.) նշանակութունը չեն ժխտեր նաև երբեք հայ պոլշևիկները, որովհետև անոնց համար ալ դարձակէտ մը եղաւ եւ նոր քաղաքականութեան սկիզբ: Հայաստանի ժողովուրդէն կտրուած եւ օտար միջավայրի մէջ ապրած հայ պոլշևիք մտաւորականութիւնը թերեւս մեծ փորձանքներու պիտի առաջնորդէր հայ ժողովուրդը, եթէ չպատահէր փետրուարեան ապստամբութիւնը», - գրում է թերթը⁹⁰⁶:

1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Փետրվարյան ապստամբության հետևանք կամ արդյունք համարում է նաև այն, որ ժողովրդի մեջ վերափոխվեց անվերապահ ռուսական կողմնորոշման տեսլականը: Եթե խորհրդայնացման նախօրեին Հայաստանում ռուսական դիրքորոշումն ընդհանուր առումներով որևէ կասկած չէր հարուցում, ապա գործադրված բռնությունների պատճառով առաջ եկած համաժողովրդական ապստամբությունը կոտրեց այդ կարծրատիպը:

Ռ. Դարբինյանը «Հայրենիք» ամսագրում հրատարակված իր հայտնի «Հայ քաղաքական մտքի դեգերումները» հոդվածաշարում ընդգծում է հայ ժողովրդի՝ ռուսական կողմնորոշման դեմ ընդվզումը, որն արտահայտվեց Փետրվարյան ապստամբությամբ: «Անկասկած, 1921 թ. Փետրուարեան ապստամբութիւնը նոր էջ մը բացաւ հայ ազգի նորագոյն քաղաքական պատմութեան մէջ: Ատիկա իսկապէս ժողովրդական ըմբոստացում մըն

⁹⁰⁶ «Նոր օր», 1932, 18 փետրուարի:

էր Ռուսիոյ եւ ռուսական օրիէնտացիային դէմ, որուն հանդէպ, երկրի մեծ զանգուածը յանկարծ լեցուեր էր աննախընթաց ատելութեամբ մը: Իր ազատութեան եւ անկախութեան համար կռուող հայութիւնը տարերային մղումով մը զէնք էր բարձրացուցեր Խորհրդային - Ռուսիոյ դէմ», -արձանագրում է «Հայրենիք»-ի խմբագիրը⁹⁰⁷: Ըստ Ռ. Դարբինյանի՝ Փետրվարյան ապստամբութիւնը փաստացի եղավ այն դարձակետը, որով հայ ժողովուրդը հիմնական քննարկման առարկա դարձրեց իր քաղաքական կողմնորոշման հարցը: Նա գտնում է, որ հայ ժողովուրդն այլևս հակված չէ մեկ արևելումով, արդեն առաջ են գալիս երկուսը, որոնք տրամագծորեն հակառակ են միմյանց՝ «դեպի Խորհրդային Ռուսիա, կամ ընդդէմ Խորհրդային Ռուսիոյ»⁹⁰⁸:

Սփյուռքահայ մամուլում տարագիր մի շարք հայ գործիչներ ևս Փետրվարյան ապստամբութեան հետևանքների ու արդյունքների մեջ կարևորեցին վերոնշյալ հանգամանքը: Օ. Մխիթարյանը գրում է, որ «Փետրուարեան ապստամբութիւնը կրցաւ ու պիտի կրնայ համոզել... թէ հայ ժողովուրդը ընդդիմադիր է Ռուսաստանին, կ'ատէ բոլշեւիկեան ղեժիմը եւ ոչ միայն կը գիտակցի անկախութեան անհրաժեշտութիւնը, այլեւ կը կռուի անոր վերանուաճման համար հերոսութեան, զոհաբերութեան եւ համերաշխութեան սքանչելի ճիգերով»⁹⁰⁹: Ըստ վտարանդի հայ գործչի՝ «...հիասթափութեան եւ դառնութեան այդ հզօր բռնկումը մաքրեց վերջին հետքերը ռուսական օրիէնտացիա կոչուող խեղդիչ մառախուղին, որ մգլտած էր մեր քաղաքական միտքը մէկ ամբողջ դար»⁹¹⁰:

Կ. Սասունին գրում է, որ Հայաստանի խորհրդայնացումով երևաց, որ Ռուսաստանը նույնիսկ զինակցում է Հայաստանի հանդէպ թշնամաբար տրամադրված Թուրքիային և, վերջինիս հետ համախորհուրդ, փորձ արեց «կոտրել կազմակերպուած հայ աշխատատրութեան մէջքը, ստրկացնել զայն անշնչացնելու աստիճան»⁹¹¹: Ըստ նրա՝ փետրվարյան ապստամբութիւնը փաստացի հարված էր ուղղված ռուսական «օրիանտալիզմ»-ին⁹¹²:

⁹⁰⁷ Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, էջ 142:

⁹⁰⁸ Նույն տեղում, էջ 143:

⁹⁰⁹ «Հայրենիք», 1928, 19 փետրուարի:

⁹¹⁰ Նույն տեղում:

⁹¹¹ Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 73:

⁹¹² Տե՛ս նույն տեղում:

Բուենոս Այրեսի «Արմենիա» թերթն էլ իր հերթին փետրվարյան ապստամբության շնորհիվ այլ կարևոր ճշմարտություններ է բացահայտում: Հայ ժողովրդի մեջ արմատացել է ազատության և անկախության գաղափարը, օրհասական պահերին հայ ժողովուրդը կարող է միակամ լինել արտաքին և ներքին թշնամիների դեմ, առաջվա նման ուրիշներից չի ակնկալում իր վերջնական ազատագրումը, «կ'ատէ թուրքը եւ ռուսին չի սիրեր: Խաչապաշտ ռուսը, իսլամ թուրքը չկայ անոր համար, այլ կայ քաղաքական թուրք եւ քաղաքական ռուս»⁹¹³:

Սոֆիայի «Ազատ խօսք»-ի կարծիքով Փետրվարյան ապստամբությունը ընդվզում էր «ընդդէմ օտար զազիր բռնութեան», իսկ հետագայում խորհրդահայ որոշ ղեկավարներ, «Փետրվարյան ապստամբության մտածողությամբ» հաճախ հակադրվելով Մոսկվային, «նահատակուեցան հայ ժողովուրդի ազատ հայրենիքի պահանջողի «մեղադրանքով»⁹¹⁴: - Թերթն առաջին հերթին նկատի ունի Ա. Խանջանին և Ա. Մյասնիկյանին:

Փետրվարյան ապստամբությամբ հայ ժողովրդի՝ դեպի Ռուսաստան քաղաքական կողմնորոշումը փոխված ներկայացնելու որոշ գործիչների պնդումները չափազանցված են: Օրինակ՝ Ռուբեն Դարբինյանը, ով ընդգծված հակառուս գործիչ էր համարվում, խտացրել է գույները: Միաժամանակ պետք է համաձայնվել տիրող ընդհանուր այն մտայնության հետ, որ եթե Հայաստանի խորհրդայնացմանը չդիմակայելով՝ Հայաստանի ժողովուրդն անուղղակիորեն ընդունում էր ռուսական դիրքորոշում, այնպես էլ հակաբուլժնիկյան ելույթներով ցույց էր տալիս իր ընդվզումը Ռուսաստանի դեմ:

Սիյուռքահայ պատմաբան Լևոն Չորմիսյանը, որ քննադատաբար էր վերաբերվում Փետրվարյան ապստամբության ղեկավարությանը, այնուամենայնիվ նույնպես գտնում է, որ ապստամբությունն ամենից առաջ նյութականացրեց և բյուրեղացրեց հակախորհրդային ոգին, «յստակ եւ շեշտուած դիմագիծ մը տուաւ մեր ժողովուրդի մէկ հատուածին հակապետական դիրքին, ճամբան, ձեւն ու միջոցը ցոյց տուաւ հայրենի իշխանութեան դէմ մղուելիք յետագայ պայքարներուն»⁹¹⁵:

⁹¹³ «Արմենիա», Պուենոս Այրէս, 1933, 18 փետրուար:

⁹¹⁴ «Ազատ խօսք», Սոֆիա, 1938, 19 փետրուար:

⁹¹⁵ Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Պէյրուֆ, 1965, էջ 110:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի որոշ ներկայացուցիչներ Փետրվարյան ապստամբությունը համարեցին որպես հայ ժողովրդի «հոգևոր-բարոյական վերազարթնում»: Ըստ Փարիզի «Հառաջ»-ի՝ ապստամբությունը նաև բարոյական նշանակություն ունեցավ⁹¹⁶: Կ. Սասունին գտնում է, որ Փետրվարյան ապստամբությունը ստեղծեց անկախության համար մարտնչող մի սերունդ, այդ սերունդը համախմբվում է անկախության և ազգային պետության քաղաքական նպատակի շուրջ⁹¹⁷: Հատկապես հայ-թուրքական պատերազմում կրած պարտությունից հետո հայ ժողովուրդն ընկճված էր: Կ. Սասունու ձևակերպմամբ Փետրվարյան ապստամբությունը հայ ժողովրդի ազգային եսի վերականգնումն էր, թուրքերից կրած պարտության վրեժխնդրությունը, որ փրկում էր հայ ժողովրդի մարդկային հպարտությունն ու պատիվը⁹¹⁸: Հետաքրքիր է նաև Գ. Երեցյանի բնորոշումը. «Հեշտ չէ կրկնել փետրուար 18-եր, բայց դժուար է խուսափիլ անոր ներշնչումներէն»⁹¹⁹:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը ևս, խնդրին անդրադառնալով բարոյական նշանակության տեսակետից, ընդգծում է, որ թեև ապստամբությունը պարտությամբ ավարտվեց, «անոր ունեցած բարոյական նշանակութիւնը անչափելի է հայ ժողովրդի ինքնագիտակցութեան եւ ազատագրական պայքարի տեսակէտով: ...Իր ազատութեան ու անկախութեան պայքարը շարունակող հայութեան համար անհկա միշտ պիտի մնայ ներշնչումի եւ ոգեւորութեան աղբիւր մը»⁹²⁰: Թերթը ցավով է նշում, որ այս իմաստով ապստամբության արժեքը ճիշտ չի ընկալվում⁹²¹:

Փետրվարյան ապստամբության բարոյական նշանակության մասին է խոսում նաև Բոստոնի հնչակյան պաշտոնաթերթ «Պայքարը»: Ապստամբության ժամանակ

⁹¹⁶ Տե՛ս «Յառաջ», 1929, 19 փետրուարի:

⁹¹⁷ Տե՛ս Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 74:

⁹¹⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹¹⁹ Երէցեան Գ., Փետրուար 18-ի նշանակութիւնը, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927, էջ 44:

⁹²⁰ «Հայրենիք», 1930, 18 փետրուարի:

⁹²¹ Տե՛ս Ստեփանյան Խ., 1921 թ. փետրվարյան ապստամբության հետևանքները սփյուռքահայ մամուլի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, 484 էջ, 207:

մղված կոիվներն ապացուցեցին խորհրդային իշխանությունների ձախողված բնույթը: «Եթե խնդրի լուծումը թողնուէր հայ ժողովրդին, Յեղկոմը այլեւս երբեք Հայաստանի երես չէր տեսնի», - եզրահանգում է պարբերականը⁹²²:

Այսպիսով, ըստ սփյուռքահայ հասարակական-քաղաքական որոշ շրջանակների, Փետրվարյան ապստամբությունը հայ-թուրքական պատերազմից հետո տիրող համընդհանուր ընկճվածության համապատկերի վրա բարոյական առումով բարձրացրեց հայ ժողովրդի ոգին: Համաժողովրդական ըմբոստության շնորհիվ վերականգնվեց հավատը սեփական ուժերի նկատմամբ: Նման համոզումները թերևս կարող են վիճարկելի համարվել: Ճիշտ է, հայ-թուրքական պատերազմը ծանր ազդեցություն էր ունեցել հայ ժողովրդի վրա, սակայն այդ պատերազմի և Փետրվարյան ապստամբության միջև համեմատություն անցկացնելը, թեկուզ մեթոդաբանական տեսակետից, ընդունելի չէ:

Փետրվարյան ապստամբության մի դրական հետևանքի մասին է ակնարկում Ռուբեն Դարբինյանը: Պատասխանելով Հ. Քաջազնունու զեկույցին՝ դաշնակցական գործիչը նշում է, որ Փետրվարյան ապստամբության շնորհիվ մեղմվեց վրացիների զայրույթը հայերի հանդեպ, որը կարող էր հանգեցնել հայկական ջարդերի⁹²³: Հայտնի է, որ 1921 թ. փետրվարին բուլճիկները նաև Հայաստանից զինված ներխուժում կազմակերպեցին դեպի Վրաստան, և շուտով այն հայտարարվեց խորհրդային: Վրացիների կարծիքով (թեև ոչ արդարացված) իրենց անկախության կործանման պատճառը նաև Հայաստանն էր: - Փետրվարյան ապստամբության միջոցով անուղակիորեն վրացիներին ցույց տրվեց, որ - Հայաստանը և հայ ժողովուրդը կապ չունեն վրաց անկախ պետականության անկման հետ:

Պրագայի դաշնակցական ուսանողների հրատարակած ժողովածուի մեջ Ս. Արամյանը Փետրվարյան ապստամբության փաստին անդրադառնում է որպես

⁹²² Վրացեան Ս., Հայաստանը բուլճեիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 236, 237:

⁹²³ Տե՛ս Դարբինեան Ռ., Մեր պատասխանը Յ. Քաջազնունիի, Պոսթըն, 1923, էջ 66:

ժողովրդավարության ժամանակի պահանջները մարմնավորող շարժում: Հեղինակը հենց սրա մեջ է տեսնում «Փետրուարեան յեղափոխութեան պատմական իմաստը»⁹²⁴:

Անշուշտ, Փետրվարյան ապստամբությունն ունեցավ նաև բացասական հետևանքներ, ինչին անդրադառնում են սփյուռքահայ մի շարք թերթեր, հասարակական-քաղաքական գործիչներ:

Նախ այն, որ զինված ընդհարումների արդյունքում կրկին հայի արյուն հեղվեց: - Հետխորհրդային հայ պատմագիտության մեջ այս առումով նշվում է, որ «արդարացում չի կարող ունենալ քաղաքացիական կռիվը մարդկային թանկ կորուստներով, առավել ևս ցեղասպանություն ապրած հայ ժողովրդի պարագայում»⁹²⁵:

Շահան Նաթալին ցավով է նշում նոր ավերածությունների, խուճապի, արտագաղթի և «20.000 հայորդիներու դիակի» մասին⁹²⁶: Անշուշտ, նույնիսկ նվազագույն մարդկային կորուստները պետք է համարել ծանրագույնը հայ ժողովրդի համար: Սակայն Շ. Նաթալիի բերած 20.000 զոհ իրականության հետ կապ չունի: Զոհերի թիվն իրականում մի քանի անգամ ավելի քիչ է եղել (շուրջ երեք հազար), ինչը, կրկնում ենք, սփոփանք չի կարող լինել:

Փետրվարյան ապստամբության մարդկային, բարոյական և նյութական կորուստների մասին են վկայում Հալեպի հնչակյան «Սուրիական մամուլ»⁹²⁷ և Նյու Յորքի հայ համայնավարների «Պրոլետար»⁹²⁸ պարբերականները:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը Փետրվարյան ապստամբությանն անդրադառնալիս բնականաբար չէր կարող աչքաթող անել Սիմոն Վրացյանի՝ թուրքերից օգնություն խնդրելու հարցը և դրա հետևանքները:

⁹²⁴Արամեան Ս., Փետրուարեան յեղափոխութիւնը և բոլշեիզմը, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Գ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927, էջ 12:

⁹²⁵ Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1921թ. Փետրվարյան ապստամբության ընթացքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, թիվ 2 (644), էջ 104-123:

⁹²⁶ Տե՛ս Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, էջ 239:

⁹²⁷ Տե՛ս «Սուրիական մամուլ», Հալեպ, 1923, 19 յուլիսի:

⁹²⁸ Տե՛ս «Պրոլետար», Նիւ Յորք, 1925, 11 ապրիլի:

1921 թ. մարտի 18-ին Սիմոն Վրացյանը դիմեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը՝ ակնկալելով ռազմական աջակցություն⁹²⁹: Թուրքերին ուղղված նամակում Վրացյանը նշում էր. «... առաջին հերթին, տաճիկ ժողովրդի կենսական շահն է պահանջում Հայաստանի յաղթական դուրս գալն այս կռից եւ անկախ մնալն»⁹³⁰: Ելնելով այդ համոզումից՝ Ս. Վրացյանը թուրքերին խնդրում է վերադարձնել նրանց մոտ պահվող հայ զինվորական ռազմագերիներին, ինչպես նաև տրամադրել որոշակի քանակությամբ ռազմամթերք:

Նամակի վերջում Ս. Վրացյանը նշում է, որ իր դիմումը հիմնվում է «այն բարեկամական յարաբերությունների վրայ, որոնք հիմք են տալիս Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած եւ որոնք խանգարուած են բոլշևիկների իշխանութեան ժամանակ»⁹³¹:

Նախ տեսնենք, թե ինչ մեկնաբանություն է տալիս այս նամակին ինքը՝ Ս. Վրացյանը, ապա անդրադառնանք մյուսների տեսակետներին:

Իր հուշերում Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահն այս խնդրի մասին խոսելիս մեկ անգամ ևս շեշտում է, որ ինքը սարսափելի էր համարում քաղաքացիական կռիվը⁹³²: Նա գրում է, որ ամեն անգամ, երբ խոսք է բացվել բոլշևիկների հետ քաղաքացիական կռիվի մասին, առաջ էր քաշել թուրքական գործոնի առկայությունը՝ սարսափելով թուրքերի հակահայ բնազդի շղթայազերծ լինելուց: Ալեքսանդրապոլի պայմանագրի դասերը, ըստ Ս. Վրացյանի, բավարար էին համոզվելու, որ պանթուրքական ցնորքներով տարված Թուրքիան, որպես խանգարող սեպ, փորձեր ոչնչացնել Հայաստանը⁹³³: Ըստ էության նա գիտակցում էր, որ քաղաքացիական կռիվը - Հայաստանում նշանակում էր թուրքերին հնարավորություն տալ շարունակելու իրենց ցեղասպանական գործողությունները:

⁹²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 66, հմմտ. Բիլլետեն (Հայաստ. Սօց. Խորհրդ. Հանրապետութիւն, Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի Ինֆորմացիոն Բաժին), Երեւան, 1921, N 1, էջ 12:

⁹³⁰ Նույն տեղում:

⁹³¹ Նույն տեղում:

⁹³² Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով..., հ. 2, էջ 17, 18:

⁹³³ Տե՛ս նույն տեղում, էջ 55:

Սակայն Ս. Վրացյանը նշում է, որ բուլժակների գործողություններն այնքան անտանելի դարձան հայ ժողովրդի համար, որ վերջինս «այդքան հեռուները չէր մտածում» և արդեն սկսեց հաշվի չառնել թուրքական վտանգը: Ճիշտ է, բուլժակյան գործադրած բռնություններն արդարացնում էին ապստամբներին: Այդուհանդերձ, սխալ էր թուրքական վտանգը հաշվի չառնելը: Իրականում այդ վտանգը մտահոգել է ապստամբության կազմակերպիչներին, ինչի մասին մենք տեղեկանում ենք Ա. Ահարոնյանին հղված Ա. Ջամալյանի և Գ. Ղազարյանի՝ վերևում հիշատակված նամակից⁹³⁴: Ապստամբության դեպքում թուրքական ագրեսիան կանխելու համար նույնիսկ փորձ է արվել եվրոպական երկրների երաշխիք ունենալ:

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը ներկայացնում է մեկ այլ «փաստարկ»: Փետրվարի 18-ից հետո Երևան է ժամանում քեմալականների ներկայացուցիչ Բեհանդդին բեյը: Նրա «ջերմ շնորհավորանքները» Վրացյանի կարծիքով տպավորություն են թողնում, որ թուրքերն արդեն դրական են տրամադրված դեպի հայերը: «Այս զգացումը արագ տեղ էր գտնում հայերի մէջ կռիւների ընթացքում»⁹³⁵:

Այնուհետև Վրացյանը պարզաբանում է, որ իրենք այնքան միամիտ չէին հավատալու, «թէ Թուրքիան պիտի բռնէ մեր կողմը՝ սովետական իշխանութեան դէմ, որից աշխատում էր նիւթական եւ ռազմական օգուտներ քաղել, բայց յոյս ունէինք, որ մեր գերի սպաներից եւ մեզանից խլուած ռազմամթերքից որոշ քանակութիւն կու տայ մեզ: Միս կողմից, յոյս ունէինք, որ հայերի կողմից նման մի դիմում որոշ վստահութիւն կը ներշնչէ թուրքերին, թէ հայերը իրապէս պաշտպան են անկախութեան»⁹³⁶: Փաստորեն Վրացյանը թուրքերից օգնություն խնդրելու փաստը փորձում է արդարացնել նրանց վստահությունը շահելու մտահոգությունից ելնելով:

Ս. Վրացյանն այս փաստարկները ներկայացնում է նաև «Հայրենիք» ամսագրում հրատարակված Հայաստանի Հանրապետության վերաբերյալ մի հանրային հաշվետվության մեջ: Նա գրում է, որ հայերին թուրքերը չէին օգնի իրենց դաշնակցի դեմ կռվում:

⁹³⁴ Տե՛ս ԳԱԹ, Ավետիս Ահարոնյանի ֆոնդ, գ. 208, թ. 5:

⁹³⁵ Վրացեան Ս., Կեանքի ուղիներով..., հ. 2, էջ 57:

⁹³⁶ Նույն տեղում, էջ 68, 69:

Սակայն այդ դիմումով փորձ է արվել շեշտելու Հայաստանի բարեկամական վերաբերմունքը թուրքերի հանդեպ և վստահություն ձեռք բերելու: Ս. Վրացյանը միաժամանակ համոզում է, թե բոլշևիկյան ռեժիմն այնքան անտանելի էր դարձել, որ նույնիսկ արևմտահայերն էին համաձայնվել թուրքերից օգնություն խնդրելու⁹³⁷:

Ս. Վրացյանը պարտավոր էր տաճկահայերի, զորահրամանատարների, Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների և կուսակցության ներկայացուցիչների՝ թուրքերից օգնություն խնդրելու մոտեցման վերաբերյալ լրացուցիչ փաստարկներ և ապացույցներ բերել: Հակված չենք կարծելու, որ բոլորը միանշանակ հավատում էին տաճիկների աջակցությանը:

Այնուհետև Ս. Վրացյանը շարունակում է. «Պետք է ասել այստեղ, որ Հայրենիքի Փրկութեան Կոմիտեն ձգտում էր նոր հիմքերի վրայ դնել հայ-տաճկական յարաբերությանց խնդիրը եւ փոխադարձ համաձայնութեամբ, թէկուզ մեծ զիջումներով, լուծել սահմանային վէճը: Կեանքի փորձը մեզ ցոյց էր տալիս, որ Հայաստանի անկախ գոյութեան համար ամենից առաջ անհրաժեշտ է տաճկական բարեացակամութիւնը: Շատ նշաններ ունէինք, որ, եթէ Հայաստանը շարունակէր մնալ անկախ, տաճիկներն եւս զիջումներ կ'անէին եւ ընդառաջ կ'երթային մեր քայլերին: Բայց քանի որ բոլշևիկները տալիս էին նրանց աւելին, բնականաբար պէտք չհամարեցին շտապելու եւ այսպիսով պաղ ջուր լցրեցին հայ ժողովրդի գլխին, երբ հոգեբանական շատ նպաստաւոր վայրկեան էր ստեղծուած»⁹³⁸:

Անդրադառնալով իրենց հասցեին հնչող «տաճկասեր», «տաճկական օրիենտացիայի հետևող» մեղադրանքներին՝ Հայրենիքի փրկության կոմիտեի նախկին նախագահն ասում է, որ իրենց համար եղել է միայն «հայկական օրիենտացիա»: Իրենք ձգտել են հայ ժողովրդի անկախության վերականգնմանը և այդ նպատակին հասնելու համար պատրաստ են եղել օգտվելու բոլոր հնարավոր միջոցներից: Այստեղ Ս. Վրացյանը ևս մեկ անգամ պնդում է, որ «անկախ Հայաստանի համար Տաճկաստանը ճակատագրական ոյժ է»⁹³⁹:

⁹³⁷ Տե՛ս Վրացեան Հ., Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք», 1923, յունուար, էջ 44:

⁹³⁸ Նույն տեղում:

⁹³⁹ Նույն տեղում:

Սխալվում էր Ս. Վրացյանը, երբ մտածում էր, որ Թուրքիան կողմնակից կարող էր լինել Հայաստանի անկախությանը: Թուրքիան ձգտում էր ոչնչացնել, եթե ոչ իր ազդեցության տակ վերցնել Հայաստանը: Այս առումով անիմաստ էր որպես Հայաստանի անկախության սատարողի նկատի ունենալ Թուրքիային:

Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստանը» ևս անհրաժեշտություն էր համարում երկու երկրների միջև «բարեկամութիւն հաստատելը»:

Սխալ էր նաև «Անկախ Հայաստանի» այն պնդումը, թե «Անդրկովկասի ժողովուրդները պէտք է լինեն տաճիկների հետ եւ ոչ թէ պոլշեիկների հետ, որովհետեւ միայն տաճիկների հետ գործելով նրանք կարող են ապահովել իրենց ազատութիւնն ու անկախութիւնը»⁹⁴⁰: Թուրքիան, գոնե Հայաստանի պարագայում, ոչ միայն չէր ապահովի անկախություն, այլև ամեն ինչ կաներ՝ շարունակելու Հայոց ցեղասպանությունը:

Եթե տարագիր դաշնակցականներն առանձնապես չեն անդրադարձել այս խնդրին, ապա այն սուր քննադատության է արժանացել հատկապես Դաշնակցությանը հակառակորդ սիյուռքահայ կուսակցությունների և թերթերի կողմից:

Ռամկավարները քննադատում էին Ս. Վրացյանի հեռագիրը՝ նշելով, որ դաշնակցականները չէին կարող իրենց 30-ամյա հակաթուրքական պայքարից հետո իրենց թույլ տալ «թուրքերին Հայաստան հրաւիրել եւ անոնց օգնութեամբ մեր երկիրը խլել պոլշեիկներէն»⁹⁴¹:

Փարիզի «Ապագա» թերթը բացի դաշնակցական ղեկավարներին քաղաքացիական կոիվ սկսելու մեջ մեղադրելուց, «մեծագոյն դավաճանութիւն» է համարում թուրքերից օգնություն խնդրելը՝ «ազատելու համար «անկախ Հայաստանը» Մոսկուայի «լուծ»էն»⁹⁴²:

Ինչպես տեսնում ենք, Ս. Վրացյանի կողմից թուրքերին օգնության խնդրանքով դիմելը, չնայած բերված պարզաբանումներին, սուր քննադատության արժանացավ: Որքան էլ այդ քննադատությունը տեղի էր ունենում հակադաշնակցական տրամադրության համատեքստում, դրանք արդարացված էին, որովհետև Ս. Վրացյանն իրավունք չուներ

⁹⁴⁰ Նոյն տեղում, 20 մարտի:

⁹⁴¹ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890էն 1940), էջ 476:

⁹⁴² «Ապագայ», 1933, 8 փետրուարի:

թուրքերից օգնություն խնդրելու այն պարզ պատճառով, որ թուրքերը երբեք մեզ չէին օգնի: Ինչ վերաբերում է Ս. Վրացյանի այն պարզաբանմանը, որ իրենք մտահոգված էին նաև թուրքերի վստահությունը շահելու խնդրով, չի փաստարկվում: Ենթադրում ենք, որ խոսքը հայերի կողմից թուրքերի հանդեպ թշնամական տրամադրություն չցուցաբերելուն կարող է վերաբերել, ինչին թուրքերը չէին հավատա: Այնուամենայնիվ, Ս. Վրացյանի հասցեին հնչեցված քննադատություններն այս իմաստով արդարացված էին:

Սիմոն Վրացյանի նամակը թուրքերին, Հայրենիքի փրկության կոմիտեի քարոզչությունը թուրքերի հետ հաշտվելու և բարեկամանալու անհրաժեշտության մասին տեղիք տվեց նոր մեղադրանքների: Վրացյանը և նրա համախոհները մեղադրվեցին թուրքական արևելում (օրիենտացիա) ունենալու մեջ:

Հ.Յ.Դաշնակցության Բյուրոյի նախկին անդամ Շ. Նաթալին, որը լուրջ հակասություններ ունեցավ կուսակցական ընկերների հետ և հեռացավ Դաշնակցությունից, խստորեն քննադատել է Հայրենիքի փրկության կոմիտեի արտաքին քաղաքականությունը, նրան մեղադրել թուրքական կողմնորոշում ունենալու մեջ: Նա նախ զարմանք է հայտնում, թե ինչպես Ս. Վրացյանը և նրա նման մտածողները կարող են դիմել թուրքին, երբ վերջինս մշտապես իրեն համարում է հայ ժողովրդի քաղաքական և «ցեղայնօրէն մահացու թշնամի»⁹⁴³:

Շ. Նաթալին Հայրենիքի փրկության կոմիտեի «թուրքական արևելում»-ի արմատները փորձում է փնտրել 1920 թ. աշնանը տեղի ունեցած իրադարձությունների մեջ: Նա հիշեցնում է Երևանում հրատարակվող «Հռուաջ» թերթի⁹⁴⁴ 1920 թ. նոյեմբերի 20-ի «Հատուկաթան» խնդիրը եւ մեր օրիէնդացիան» վերնագրով խմբագրականը, որտեղ մասնավորապես ասվում է. «Եթէ հայ ժողովուրդը կամենում է ապրիլ և ապահովել իր պետական ու ֆիզիքական գոյութիւնը յարատեւօրէն, նա պէտք է ունենայ ոչ թէ ռուսական, այլ թրքական օրիէնդացիա»⁹⁴⁵: Այնուհետև Շ. Նաթալին փորձում է համոզել, որ «Ազատ Հայաստանի»՝ 1921 թ. մարտի 15-ի հրապարակման այն մասը, թե իբր «իրերի պատմական բերումով

⁹⁴³ Շահան, Ալեքսանդրապօլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, էջ 59:

⁹⁴⁴ Շ. Նաթալին թերթը համարում է «Վրացեան-Դարբինեան խումբի օրգան» (տե՛ս նոյն տեղում, էջ 60):

⁹⁴⁵ «Յառաջ», Երեւան, 1920, 20 նոյեմբերի:

Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատութեան իրական պաշտպան կարող է դառնալ միայն Տաճկաստանը»⁹⁴⁶, բխում է Ս. Վրացյանի և նրա համախոհների թուրքամետ կողմնորոշումից:

Բոլորովին նպատակ չունենալով արդարացնել Ս. Վրացյանին կամ մեղմացնել նրա քննարկման ենթակա վերոնշյալ քայլը՝ հակված ենք կարծելու, որ Շ. Նաթալին ևս միտում ունի խտացնելու գույները: Շ. Նաթալին նեղացած էր Ս. Վրացյանից և նրա համախոհներից, նրա քննադատությունը նաև այդ հանգամանքի հետևանք էր: Այլապես, նա իր տեսակետը կարող էր ավելի շուտ հայտնել, օրինակ, երբ ինքը 1924 թ. ընտրվել էր ՀՅԴ Բյուրոյի անդամ: Դրանով հանդերձ, կարծում ենք, որ Շ. Նաթալիի մեղադրանքները, անկախ իրենց հնչերանգից, տեղին են հնչում:

Բոստոնի «Պայքար»-ը Ս. Վրացյանի կարդացած հրապարակային մի դասախոսության վերաբերյալ 1930 թ. փետրվարին գրում է, որ «զինակցութեան փորձը .. Գարապէքի փաշայի թուրքերուն հետ» անիմաստ էր և իր խորքի մեջ ուղղված էր Հայաստանի դեմ⁹⁴⁷:

Դաշնակցությանը թուրքական արևելումի մեջ մեղադրում է նաև ամերիկահայ ռամկավար պատմաբան Մանուկ Ճիզմեճյանը⁹⁴⁸:

Իրականության հետ առնչություն չունի այս խնդրին վերաբերող Բեյրութի «Արարատ» թերթի այն հրապարակումը, թե իբր դաշնակցականների և քեմալականների միջև գաղտնի համաձայնություն է մշակվել, որի համաձայն ապստամբելու դեպքում թուրքերը պետք է օգնեին: Բացի դրանից թերթը գտնում է, որ խորհրդայնացումից հետո բոլոր դաշնակցականները Հայաստանում պետք է բանտարկվեին, որ ապստամբություն չծրագրվեր⁹⁴⁹: Հայաստանում հակաբոլշևիկյան ապստամբություն բարձրացնելու համար դաշնակցականների կողմից քեմալականների հետ պայմանավորվածություն բնականաբար չի եղել, և դրա մասին խոսք անգամ լինել չէր կարող: Առավել անմիտ է նման ծրագ-

⁹⁴⁶ «Ազատ Հայաստան», 1921, 15 մարտի:

⁹⁴⁷ Տե՛ս «Պայքար», 1930, 5 փետրուարի:

⁹⁴⁸ Տե՛ս Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնո, 1930, էջ 408-410:

⁹⁴⁹ Տե՛ս «Արարատ», Պէյրութ, 1938, 24 փետրուար:

րեր հետապնդելու մեջ մեղադրել բանտում հայտնված գործիչներին: Ոչ պակաս հեյրուրանք չէ նաև թերթի հետևյալ մեղադրանքը. «Փրկութեան» կոմիտէն Փետրուար 18ին, ուրեմն **Հայաստան կրկին թուրք լուծին տակ ձգելու ստոր մտադրութեամբ** (ընդգծումը մերն է – Խ.Ս.), ապստամբութեան դրօշը պարզեց եւ ի զուր պատճառ դարձաւ հարիւրաւոր անմեղ հայերու կոտորածին»⁹⁵⁰: Կասկած չկա, որ թերթի նման բովանդակությամբ հրապարակումը պայմանավորված է ՀՅԴաշնակցություն կուսակցության հանդեպ ունեցած անթաքույց ատելությամբ:

Հնչակյան կուսակցության Սոֆիայի մասնաճյուղի վարչությունը Ս. Վրացյանին Փետրվարյան ապստամբության և թուրքերից օգնություն խնդրելու համար անվանում է «հայուն երակներէն պակասձ արիւնը հայուն ձեռքով հոսեցնող» գործիչ և ղեկավար⁹⁵¹:

Ինչպես տեսնում ենք, սփյուռքյան ոչ դաշնակցական թերթերն ու գործիչները սուր քննադատության ենթարկեցին Ս. Վրացյանի կողմից քեմալականներից զինական օգնություն խնդրելու հեռագիրը՝ նրա հեղինակին կամ հեղինակներին մեղադրելով հայ ժողովրդին դավաճանելու և թուրքերի հետ դաշնակցելու մեղքերի մեջ: Անկախ կուսակցական կամ քաղաքական նախատրամադրվածությունից, Ս. Վրացյանի հասցեին հնչող քննադատությունները թեև անհիմն չէին, ծայրահեղություն էր դավաճանության մեղադրանքը:

Սփյուռքահայ հեղինակ Ավետիս Յափունճյանը, օգտագործելով Հ. Տեր-Հակոբյանի (Իրազեկ)՝ «Հայրենիք» օրաթերթում հրատարակված վերը հիշատակվող հոդվածը, գրում է. «Ուրեմն, Իրազեկի այն խոստովանութիւնը, թէ «Պատասխանատու մարմինը գտնում է, որ փրկութեան ուրիշ ելք այլեւս չկար քան ապստամբութիւնը», այդ փրկութիւնը ոչ թէ Հայաստանի կամ հայ ժողովուրդին փրկութիւնն էր, քանի որ փրկութիւնը պիտի գար ոչ թէ թուրքին Հայաստան մուտքով, այլ անկէ հեռացումով, այլ դաշնակցական ղեկավարութեան նախարարական եւ պարլամենտական աթոռներուն փրկութեան շուրջը կը դառնար հարցը, քանի որ զանոնք կրնար փրկել միայն թուրքը, հոգ չէ, թէ այդ փրկութեան գին

⁹⁵⁰ Եռյն տեղում:

⁹⁵¹ Տե՛ս «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1924, 18 մայիսի:

վճարուէր հայուն հայրենիքը, հայութեան գոյութիւնը»⁹⁵²: Իրականում Իրազեկը փրկություն ասելով նկատի ունէր ոչ թէ թուրքի գալը, այլ բուլճարական բռնատիրոջ տապալումը:

Փարիզի «Ապագա»-ն անդրադառնում է իրավաբան Գրիգոր Չուբարյանի⁹⁵³ «Դաշնակցության տաճկական օրինատացիան և Հայրենիքի փրկության կոմիտեն» գրքին⁹⁵⁴, որտեղ հեղինակը, հիմնվելով Ս. Վրացյանի վերոնշյալ հեռագրի և «Ազատ Հայաստանի» հրապարակումների վրա, փորձում է Փետրվարյան ապստամբությունը ներկայացնել որպէս թուրքական արևելումի հետևանք⁹⁵⁵:

Այսպիսով, սփյուռքահայ ոչ դաշնակցական մամուլը և հասարակական-քաղաքական շրջանակները սուր քննադատության ենթարկեցին Սիմոն Վրացյանի կողմից քեմալականներից օգնություն խնդրելու փաստը, ինչպէս նաև Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստանի» կողմից թուրքերի հետ բարեկամանալու վերաբերյալ հրապարակումները: Այդ քննադատությունները թեև տեղին էին, սակայն երբեմն անցնում էին բանականության սահմանները: Չպաշտպանելով Ս. Վրացյանի և նրա համախոհների բացատրություններն այս խնդրի կապակցությամբ, այնուամենայնիվ, նրանք հանուն Հայաստանի և հայ ժողովրդի բարեկեցության էին ապստամբել:

Սփյուռքահայ մամուլի մի մասի կողմից Փետրվարյան ապստամբությանը տրվող բացասական գնահատականը վերաբերում է Հայաստանի տարածքային կորուստներին:

1921 թվականի մարտի 12-ին Ս. Վրացյանը Մոսկվա, ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին հեռագիր է ուղարկում, ըստ որի, քանի որ Հայաստանում արդեն տապալված է խորհրդային իշխանությունը, Ա. Բեկզադյանն այլևս լիազորված չէ խորհրդա-թուրքական կոնֆերանսում ներկայացնելու Հայաստանը⁹⁵⁶: Սփյուռքահայ որոշ թերթեր գտնում են, որ եթէ չլինէր Ս. Վրացյանի այդ հեռագիրը, ապա Խորհրդային Հայաս-

⁹⁵² Եսփուճեան Ա., Ով կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը եւ ինչ եղաւ անոր հետեւանքը, Գահիրէ, 1969, էջ 96:

⁹⁵³ Գ. Չուբարյանն 1921 թ. հունվար-փետրվարին արդարադատության ժողկոմ Սուլեյման Նուրիի օգնականն էր (տե՛ս Աստուածատրեան Ա., Բախշի Իշխանեանի հետ Երևանի բանտում, «Հայրենիք», 1936, սեպտեմբեր, էջ 139):

⁹⁵⁴ Տե՛ս «Ապագայ», 1930, 4, 7, 11 յունիսի:

⁹⁵⁵ Տե՛ս Չուբարյան Գ., Դաշնակցության տաճկական որինտացիան յեվ Հայրենիքի փրկության կոմիտեն, Յերեվան, 1929, էջ 44, 45:

⁹⁵⁶ Տե՛ս Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 409:

տանի տարածքներն ավելի մեծ կլինեին, մասնավորապես նրանում ներառված կլինեին - Կարսը և Սուրմալուն:

Փետրվարյան ապստամբության օրերին Կ. Պոլսի ռամկավար պարբերական «Ժողովրդի ձայնը», խոսելով Ալեքսանդրապոլի պայմանագրից հետո Ա. Խատիսյանի մասնակցությամբ Կ. Պոլսում տեղի ունեցած մի հանրային քննարկման մասին, նշում է, որ դեռ այն ժամանակ Ք. Կարաբեքիրն իրեն խոստովանել է, որ Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնվել են ստանալ Կարսի մարզը⁹⁵⁷: Կարսը Թուրքիայի կազմում թողնելու բոլշևիկ-քեմալական համաձայնությունը կայացվել էր մինչև Փետրվարյան ապստամբությունը: Սակայն հետագայում Դաշնակցությանը քննադատող պարբերականները երբևէ հաշվի չառան այս փաստը և շարունակեցին իրենց քննադատությունը:

Այսպես, «Պայքարի» խմբագրականը գրում է. «... Ճիշտ այդ օրերուն Ռուսերու եւ - Թուրքերու միջեւ բանակցութիւններ կ'սկսէին Մոսկուայի մէջ, առկախ խնդիրներու կարգադրութեան համար: Հայաստանի խորհրդային կառավարութիւնը ապահոված էր, որ Չիչերին Թուրքերէն ետ առնէ Հայաստանի գրաւեալ մասերէն գոնէ Կարսի գաւառը: Թուրքեր գիտէին ասիկա, չէին կրնար զօրաւոր ընդդիմութիւն մը ցոյց տալ Մոսկուայի, որուն բարեհաճութենէն կախում ունէր իրեն զէնքերուն յաղթանակը Անատօլի մէջ: Ռուսներուն կողմէ այդպիսի պահանջի մը արգիլելու համար մէկ ճամբայ կը մնար միայն, - Խորհրդային իշխանութեան տապալումը Հայաստանի մէջ, եւ ասիկա յաջողեցան ընել օգտուելով Վրացեանի թրքասէր հակումներէն եւ դիւրահաւատութենէն»⁹⁵⁸:

Մեկ այլ հրապարակման մեջ «Պայքարը» մեղադրում է դաշնակցական թերթերին, որոնց կարծիքով Վրացյանի հեռագիրը որևէ կերպ չէր կարող ազդել Մոսկվայի կոնֆերանսի որոշումների վրա⁹⁵⁹:

Նույն խմբագրական հոդվածում թերթի խմբագիրը համաձայն չէ նաև այն իրողության հետ, որ Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան նախապես համա-

⁹⁵⁷ Տե՛ս «Ժողովրդի ձայնը», Կ. Պոլիս, 1921, 24 փետրուարի:

⁹⁵⁸ «Պայքար», 1925, 30 յուլիսի:

⁹⁵⁹ Տե՛ս «Պայքար», 1928, 5 մայիսի:

ձայնության են եկել Հայաստանի վրա հարձակվելու: «Մխալ է, թէ 1920ին Թուրքիա ու Սովիետները նախապես իրարու հետ համաձայնել է յետոյ Հայաստանի վրայ ինկան երկու կողմէն եւ զայն բաժնեցին իրանց միջեւ: Ստոյգ է միայն թէ Հայ եւ թուրք պատերազմի միջոցին Սովիետեր Թուրքերուն բարեկամացան, բայց առանց գործօն մասնակցութեան, սպասողական դիրք բռնեցին»⁹⁶⁰:

Այլ առիթներով ևս «Պայքար»-ը համոզմունք է հայտնում, որ Փետրվարյան ապստամբության շնորհիվ թուրքերը ծուղակի մեջ գցեցին Ս. Վրացյանին՝ դրանով դժվարացնելով Խորհրդային Ռուսաստանի գործը, որն իբր հոգուտ Խորհրդային Հայաստանի պետք է վերանայեր Ալեքսանդրապոլի պայմանագիրը⁹⁶¹:

Այսպիսով, ԱՄՆ-ում լույս տեսնող ռամկավար պաշտոնաթերթ «Պայքարը» համոզված պնդում է, որ եթե չլիներ Ս. Վրացյանի հեռագիրը Մոսկվա, ապա Խորհրդային - Հայաստանի պատվիրակությունն ամեն ինչ կաներ՝ Հայաստանի տարածքներն ընդարձակելու համար: Մեր կարծիքով ռամկավարների ամերիկյան պաշտոնաթերթի այս քննադատությունն օրինաչափ է: Կուսակցությունը, որը գաղափարական լուրջ հակասությունների մեջ էր Փետրվարյան ապստամբությունը ղեկավարող Դաշնակցության հետ, բնականաբար պետք է օգտագործեր քննադատության առիթները:

Նման մեղադրանքների մեջ «Պայքարին» չի զիջում Փարիզի «Ապագան»: Օրինակ, թերթն անդրադառնում է «Պայքարի» հիշյալ խմբագրականին և պաշտպանում վերոնշյալ մեկնաբանությունները⁹⁶²:

Փարիզի ռամկավարների պաշտոնաթերթը գրում է, որ Մոսկվայի խորհրդատու-վի ժամանակ հնարավորություն կար վերափոխելու Խորհրդային Հայաստանի սահմանները, սակայն «Փետրուարեան յեղափոխութիւնը ... տկարացուց այդ օրերուն Ալեքսանդրաբօլի դաշնագրին բարեփոխութեան առիթով հայկ. իրաւունքները ջատագովողներու թէզը եւ թոյլ տուաւ, որ հայ ժողովուրդը կորսնցնէ նոր եւ թանկագին պատեհութիւն մը»⁹⁶³:

⁹⁶⁰ Նոյն տեղում:

⁹⁶¹ Տե՛ս «Պայքար», 1925, 22 յունիսի, նաև՝ 1931, 15 փետրուարի:

⁹⁶² Տե՛ս «Ապագայ», 1928, 26 մայիսի:

⁹⁶³ «Ապագայ», 1926, 20 մարտի:

Երբեմն ոչ դաշնակցական թերթերը մրցակցության մեջ էին մտնում՝ Փետրվարյան ապստամբության հետևանքներն առավել ծանր ներկայացնելու համար: «Ապագայի» հրապարակումներից մեկը վկայում է այդ մասին: Թերթը համոզված պնդում է, որ Փետրվարյան ապստամբությունից հետո Ս. Վրացյանի կողմից Մոսկվայի կոնֆերանսի մասնակիցներին ուղարկված հեռագիրը հնարավորություն չի տվել Խորհրդային Հայաստանի ներկայացուցչին արձարժելու Կարսի վերադարձի հարցը: Ռամկավարազատական պարբերականը «կոչ» է անում Դաշնակցության ղեկավարությանը ոչ միայն չնշել Փետրվարի 18-ը որպես «ազատագրական» տոն, այլև վերաքննության ենթարկել դեպքերն ու պատժել մեղավորներին⁹⁶⁴:

Փետրվարյան ապստամբության ղեկավարների հասցեին նմանատիպ մեղադրանքներ է հնչեցնում նաև Փարիզի հայ համայնավարների «Երևան» պարբերականը: «Թէ ի՞նչ եղան քաղաքական հետեւանքները դաշնակներու այս արկածախնդրութեան, այդ արդեն ամբողջ ողբերգութիւն մըն է Հայաստանի ճակատագրի տեսակետէն, որուն համար ռեւէ չքմեղանք չեն կրնար ունենալ», - թերթի էջերում հռետորական հարցադրում է կատարում Գուրգեն Թահմազյանը: Ըստ հոդվածագրի՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները Մոսկվայի բանակցություններում լուծելու էին երկրի տարածքային խնդիրները, սակայն Փետրվարյան ապստամբությունը խանգարեց դրան: «Վրացեանները դառնութեան բաժակին մինչեւ վերջին մրուրը քամել տուին հայ բանտրագիւղացիական հայրենիքին», - եզրահանգում է թերթը⁹⁶⁵: Մեկ այլ տեղ «Երևան»-ը նույն մեղադրանքով գրում է, որ Կ. Սասունին և Ս. Վրացյանը փաստացի թուլացրին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ալեքսանդր Բեկզադյանի դիրքերը⁹⁶⁶:

«Արձագանք Փարիզի» պարբերականն անդրադառնում է Հնչակյան կուսակցության Մարսելի մասնաճյուղի հրապարակային ժողովում (1924 թ. հունիսի 28-ին) Սեդրակ - Քարյանի «Գաղութահայությունը և Մայր Հայրենիքը» թեմայով բանախոսությանը: Այստեղ

⁹⁶⁴ Տե՛ս «Ապագայ», 1933, 8 փետրուարի:

⁹⁶⁵ «Երևան», Փարիզ, 1929, 24 փետրուարի:

⁹⁶⁶ Տե՛ս «Երևան», 1926, 10 յունվարի:

վերջինս մասնավորապես ասում է, որ փետրվարյան «արկածալից շարժումը» խանգարեց խորհրդային իշխանություններին վերադարձնել Կարսը⁹⁶⁷:

Ինչպես տեսնում ենք, սփյուռքահայ ոչ դաշնակցական թերթերը դատապարտում են 1921 թ. մարտին Ս. Վրացյանի կողմից Գ. Չիչերինին ուղղված հեռագիրը: Հնչեցվող մեղադրանքների հիմնական առարկան այն էր, որ Բեկզադյանի օրինական մասնակցության պարագայում Մոսկվայի կոնֆերանսը կարող էր որոշում կայացնել Կարսը և Սուրմալուն - Հայաստանի կազմում թողնելու մասին:

Վերոնշյալ թերթերից այս հարցում հետ չի մնում նաև Շահան Նաթալին: Նրա համոզմամբ թուրքերն ամեն ինչ անում էին, որ Մոսկվայի բանակցություններում Հայկական հարց չքննարկվեր, դրա համար էին ոգևորված Փետրվարյան ապստամբությամբ⁹⁶⁸: «Բարեբախտաբար բոլշևիկները շուտ վերադարձան. այսինքն՝ այնքան շուտ, որ «Փրկութեան Կոմիտեն» կրցաւ միայն Ալեքսանդրապոլի դաշնագրի արտաքին դիւանագիտական մասը իրագործել», - հեզնանքով եզրափակում է Շ. Նաթալին⁹⁶⁹:

Սփյուռքյան այն տեսակետը, որը քննադատում էր Ս. Վրացյանի դիրքորոշումը, հետագայում պաշտպանվել է խորհրդահայ պատմագրության կողմից: Օրինակ, բոլշևիկ պատմաբան Սամվել Ալիխանյանը գրում է. «Մեր նպատակը չէ կոնֆերանսի և նրա ընթացքի պարզաբանումը, սակայն հարկ ենք համարում նշել, որ չնայած Հայաստանի կառավարության պատվիրակությունը՝ Ալեքսանդր Բեկզադյանի գլխավորությամբ, ժամանեց Մոսկվա, բայց նա կոնֆերանսին մասնակցելու հնարավորություն չունեցավ: Թուրքիայի պատվիրակությունը հրաժարվեց մեկ սեղանի շուրջը նստել նրա հետ՝ պատճառաբանելով, որ մտադիր չէ Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայել, որովհետև Վրացյանը, որը Երևանում դաշնակների փետրվարյան հեղաշրջման հետևանքով գտնվում էր իշխանության գլուխ, հեռագրել էր, թե «Հայրենիքի փրկության կոմիտեն» կանգնած է Ալեքսանդրապոլի պայմանագիրը պաշտպանելու դիրքերում»⁹⁷⁰:

⁹⁶⁷ Տե՛ս «Արձագանք Փարիզի», 1924, 13 յուլիսի:

⁹⁶⁸ Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, էջ 45:

⁹⁶⁹ Նույն տեղում, էջ 46:

⁹⁷⁰ Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, էջ 251:

Նման տեսակետ, ի դեպ, հայտնել է նաև Փետրվարյան ապստամբությունից հետո Խորհրդային Հայաստանի առաջին ղեկավարներից մեկը՝ Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրա պնդմամբ Հայաստանի տարածքներն ավելի մեծ կլինեին, «թե չլիներ դաշնակների վերջին ավանտյուրան»⁹⁷¹:

Իրականում Խորհրդային Հայաստանի կառավարությունը հնարավորություն չուներ ապահովելու, որ Չիչերինը Թուրքիայից հետ վերցնի Կարսը: «Պայքար», «Երեւան», «Արձագանք Փարիզի» թերթերի, Շահան Նաթալու այս դիտարկումներն ավելի շատ պայմանավորված են Դաշնակցությանը քարկոծելու ցանկությամբ: Իսկ ինչ վերաբերում է 1921 թ. Մոսկվայի կոնֆերանսին Սիմոն Վրացյանի հղած հեռագրի պատճառով Կարսը Հայաստանի կազմում չթողնելու խնդրին, ապա այդ կապակցությամբ փաստերով ապացուցված է, որ Հայաստանի սահմանների հարցը գործնականում լուծված է եղել մինչև Մոսկվայի կոնֆերանսը⁹⁷²:

Ապստամբության բացասական հետևանքներից էր նաև արտագաղթը: Հնարավոր հետապնդումներից խուսափելու նպատակով շուրջ 12-13 հազար մարդ լքեց հայրենիքը և անցավ Պարսկաստան⁹⁷³: Ըստ Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Վահան Մինախորյանի՝ այդ թիվը կարող էր մեծ լինել: 1921 թ. ապրիլի 2-ին Երևանի անկումից հետո ապստամբները և նրանց համախոհների հիմնական մասը Գառնիի, Դարալագյազի վրայով քաշվեց Սյունիք՝ Պարսկաստան անցնելու: Սակայն շուրջ 5000 մարդ էլ մոտեցել է Մարգարա գյուղին՝ Թուրքիա անցնելու նպատակով⁹⁷⁴: Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը ևս անդրադառնում է պարտությունից հետո գաղթի զանգվածային բնույթին: Գաղթում էին բուլղարական սարսափները նորից չտեսնելու մտավախությունից ելնելով⁹⁷⁵:

Այսպիսով, Փետրվարյան ապստամբությունը 1920-1930-ական թվականների սիյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից արժանացավ բազմատեսակ

⁹⁷¹ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 433:

⁹⁷² Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., էջ 92-97, Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, էջ 52:

⁹⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 71:

⁹⁷⁴ Տե՛ս Մինախորյան Վ., Ապրիլ 2-ի գաղթը (Երեւան-Թավրիզ), «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 89:

⁹⁷⁵ Տե՛ս «Ճակատամարտ», 1921, 21 մայիսի:

գնահատականների, որն ավելի շատ պայմանավորված էր գոյություն ունեցող քաղաքական հակամարտությամբ, քան թե ճշմարտությունն ամեն գնով բացահայտելու մղումով: Այնուամենայնիվ, հատկանշական են հետևյալ ընդհանրացված եզրահանգումները.

- սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը կամ ընդգծում է, կամ չի հերքում այն փաստը, որ Փետրվարյան ապստամբության շնորհիվ փրկվեց հայ մտավորականության և զինվորականության մի ստվար մասը,
- հատկապես դաշնակցական մամուլի և գործիչների կողմից կարևորվում է այն, որ Փետրվարյան ապստամբությամբ հայ ժողովուրդը կրկին փաստեց ազատ և անկախ ապրելու իր կամային դրսևորումները, անհամեմատ մեղմացան բոլշևիկյան բռնությունները,
- Փետրվարյան ապստամբության գնահատականների մեջ ակներև դարձավ նաև այն իրողությունը, որ հայ ժողովրդի մեջ կարող է վերափոխվել անվերապահ ռուսական կողմնորոշումը,
- սփյուռքահայ հասարակական քաղաքական միտքը Փետրվարյան ապստամբության հետևանքների մասին խոսելիս աներկբայորեն ցավում է ունեցած մարդկային կորուստների համար,
- առանց բացառության բոլոր ոչ դաշնակցական մամուլի միջոցներն ու գործիչներն արդարացիորեն քննադատեցին Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանի թուրքերից աջակցություն խնդրելու քայլը:

2.3 Զանգեզուրի խորհրդայնացումը սփյուռքահայ գործիչների գնահատմամբ

Արդեն նշել ենք Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի այն հայտարարության մասին, որի համաձայն Ադրբեջանը հրաժարվում էր Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի հանդեպ ունեցած հավակնություններից ու այդ գավառները համարում էր Խորհրդային Հայաստանի մասեր⁹⁷⁶: Չնայած ադրբեջանցիների՝ Զանգեզուրը Հայաստանի մաս

⁹⁷⁶ Տե՛ս «Կոմունիստ», Երևան, 1920, 7 դեկտեմբերի:

ճանաչելու խոստմանը՝ սյունեցիները չհավատացին դրան⁹⁷⁷: Երևանում խորհրդային իշխանության հաստատումից կարճ ժամանակ անց՝ 1920 թ. դեկտեմբերի 25-27-ին, Տաթևի վանքում գումարված համազանգեզուրյան առաջին համագումարը որոշում ընդունեց Զանգեզուրը հռչակել Ինքնավար Սյունիք⁹⁷⁸:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները 1920 թ. վերջին եւ 1921 թ. սկզբին գործնականում չէին կարող վերահսկողություն սահմանել Զանգեզուրում, և բավարարվում էին միայն երկրամասն իրենց ենթարկելու մասին «դեկլարացիաներ» ներկայացնելով⁹⁷⁹: «Զանգեզուրի գյուղացիությանն» ուղղված դիմումում (1921 թ. հունվարի 29) Հայաստանի հեղկոմը տեղեկացնում էր Ադրբեջանի հեղկոմի հռչակագրի մասին, հայտարարում, որ խորհրդային իշխանության համար առաջնային խնդիր է Զանգեզուրը ՀՍԽՀ-ին միացնելը եւ առաջարկում վերջ տալ «աննպատակ դիմադրությանը եւ ճանաչել Հայաստանի խորհրդային իշխանությունը»⁹⁸⁰: Սակայն զանգեզուրցիները մնացին անդրդվելի, որովհետև նախընթաց մի քանի ամիսների ընթացքում Զանգեզուրն ասպատակող թաթարական հրոսակախմբերի և խորհրդային զորքերի գործադրած վայրագություններից հետո նրանք չէին վստահում բուլձևիկներին:

Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո նոր իրադրություն ստեղծվեց Զանգեզուրում: 1921թ. ապրիլի 26-ին Տաթևում գումարված համազանգեզուրյան երկրորդ համագումարը երկրամասը հայտարարեց Լեռնահայաստան⁹⁸¹: Սակայն խորհրդային զորքերը նույն թվականի հուլիսի սկզբներին իրենց գերակշռության պատճառով ստիպեցին դադարեցնել դիմադրությունը, հուլիսի 13-ին բուլձևիկները գրավեցին Մեղրին⁹⁸²: Խորհրդային իշխանությունը տարածվեց նաև Զանգեզուրում:

⁹⁷⁷ Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 42:

⁹⁷⁸ Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, մայիս, էջ 135:

⁹⁷⁹ Տե՛ս Սուքիասյան Հ., Սյունիքը Հայաստանի կազմում պահպանելու խնդիրը Գարեգին Նժդեհի աշխատություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, թիվ 2-3, էջ 144, 145:

⁹⁸⁰ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 169, թ. 1:

⁹⁸¹ Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, օգոստոս, էջ 138, հմմտ. Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), էջ 142:

⁹⁸² Տե՛ս Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), էջ 622:

1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի ստորագրումից, ապա նաև 1921 թ. փետրվարյան ապստամբության ճնշումից հետո պարզ էր, որ Զանգեզուրի խորհրդայնացումը միայն ժամանակի հարց է: Այդուհանդերձ զանգեզուրցիների հերոսական դիմադրությունը խորհրդային իշխանության հաստատման դեմ բավական համառ ստացվեց, ինչն էլ հետաքրքիր գնահատականների է արժանացել մի շարք սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչների կողմից:

Նախ՝ անդրադառնանք երկրամասի ինքնապաշտպանության ղեկավար Գարեգին Նժդեհի մեկնաբանումներին: Տարագիր գործչի կարծիքով Զանգեզուրի մղած պայքարի գլխավոր պատճառներից մեկը Խորհրդային Հայաստանի կազմում լինելու անկոտրում ցանկությունն էր: Իրականում կռիվն ուղղված չէր որևէ դասակարգի, կուսակցության և խորհրդային իրավակարգի դեմ: «Հայկական լեռնաշխարհը Ադրբեյջանին կցելու տարիներով կրկնուող փորձերը - ահա թե ի՞նչն էր մեր բազուկը զինել եւ մեզ լեռները հանել», - գրում է Գ. Նժդեհը⁹⁸³: Ըստ նրա՝ Սյունիքը մեր ամբողջական հայրենիքի ողնաշարն է, առանց որի Հայաստանը գոյություն ունենալ չի կարող⁹⁸⁴:

Հայտնի է, որ Ադրբեյջանի բոլշևիկ ղեկավարները շարունակում էին մուսավաթականների վարած քաղաքականությունը Զանգեզուրի նկատմամբ: Պանթուրքիզմի ծրագրերն իրականացնելու համար նրանք ցանկանում էին տիրանալ Զանգեզուրին, Արցախին և Նախիջևանին⁹⁸⁵: Գ. Նժդեհը նույնպես անդրադառնում է այս խնդրին՝ գրելով, որ Խորհրդային Ադրբեյջանի հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովը փորձում էր իրականացնել մուսավաթականների ծրագիրը: Նա պատահական չի համարում, որ իր հաջողություններն ամենից շատ նյարդայնացնում էին Նարիմանովին, ով ապրում էր Զանգեզուրը Ադրբեյջանին կցելու հույսով⁹⁸⁶:

Գ. Նժդեհը քննադատությամբ էր մոտենում բոլշևիկյան այն հոետորաբանությանը կամ քարոզչահնարքին, որ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային եվրոպական իմպերիալիստներից պաշտպանելու համար պետք է անմիջական կապ հաստատի նրա

⁹⁸³ Նժդեհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, յունիս, էջ 78:

⁹⁸⁴ Տե՛ս Նժդեհ Գ., Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, էջ 72:

⁹⁸⁵ Տե՛ս Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, էջ 249:

⁹⁸⁶ Տե՛ս Նժդեհ Գ., Էջեր Լեռնահայաստանի գոյամարտին, «Հայրենիք», 1924, ապրիլ, էջ 112:

հետ, և այդ կապը պետք է լինի Չանգեզուրի վրայով⁹⁸⁷: Դեռևս 1920 թ. հուլիսի 11-ին խորհրդային ներկայացուցիչները հայտնել էին սյունեցիներին, որ Չանգեզուրը Ղարաբաղի հետ միասին կցվելու է Խորհրդային Ադրբեջանին, իսկ Չանգեզուրի ժողովուրդը պետք է զենքը վայր դնի և այն հանձնի բոլշևիկներին: Գ. Նժդեհը գրում է, որ ո՛չ այդ պահանջը, ո՛չ էլ նույն թվականի օգոստոսի 10-ի Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև ընդունված պայմանավորվածությունը Չանգեզուրն անորոշ ժամանակով խորհրդային իշխանությանը զիջելու մասին, չկարողացան ազդել երկրամասի ըմբոստ տրամադրության վրա: Նրանք շարունակեցին պայքարը⁹⁸⁸:

Գ. Նժդեհը գրում է, որ այս բոլշևիկները թուրքերին իրենց մոտ պահելու համար չէին թաքցնում Չանգեզուրը Ադրբեջանին հանձնելու իրենց պատրաստակամությունը: Այս պատճառով էլ Լեռնահայաստանը զենքի դիմեց, մինչև որ Ս. Կասյանին փոխարինած Ա. Մյասնիկյանի կառավարության օրոք Մոսկվան վերջնականապես «բարեհաճեց Սիւնիքը կցել Հայաստանին»⁹⁸⁹:

Չանգեզուրը խաղաղ ճանապարհով խորհրդային իշխանություններին հանձնելու բազմաթիվ պահանջներին ի պատասխան Գ. Նժդեհի գլխավոր պայմանը եղել է երկրամասը խորհրդային իշխանությունների կողմից Հայաստանի անբաժանելի մաս ճանաչելը: Լավ իմանալով խորհրդային իշխանությունների նենգ բնույթը՝ Գ. Նժդեհը նրանց սպառնագրերին և «բարեկամական» հորդորներին պատասխանել է հետևյալ կերպ. «Սիւնիքը խորհրդային իշխանութեան առջեւ կը բանայ իր դռները, երբ՝ 1) Չանգեզուրը կը յայտարարուի Հայաստանի անբաժան մասը, 2)թրքական զօրքերը կը հեռացուեն Ալեքսանդրապոլից, 3)հայ մտաւորականութիւնը ազատ կ'արձակուի բանտերից, եւ 4) աքսորուած հայ սպայութիւնը կը վերադարձուի Հայաստան»⁹⁹⁰: Նման

⁹⁸⁷ Տե՛ս Նժդէհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք»,1923, յունիս, էջ 79:

⁹⁸⁸ Տե՛ս Նժդէհ Գ., Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, էջ 78:

⁹⁸⁹ Նժդէհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք»,1923, յունիս, էջ 80:

⁹⁹⁰ Նժդէհ Գ., Իմ պատասխանը, էջ 62:

պնդումներն ընդգծված են եղել 1921 թ. մայիսին Սիսիանում տեղի ունեցած խորհրդազանգեզուրյան բանակցությունների⁹⁹¹ ժամանակ⁹⁹²:

Այսպիսով, ըստ Սփյուռքում հաստատված Գ. Նժդեհի, Զանգեզուրում խորհրդային իշխանություն հաստատելու դեմ ուղղված դիմադրության գլխավոր պատճառն այն էր, որ անհրաժեշտ էին երկրամասը խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու հստակ երաշխիքներ: Նման երաշխիք ստանալուց հետո միայն ինքնապաշտպանության ղեկավարությունը դադարեցրեց պայքարը:

Արդեն նշեցինք, որ Զանգեզուրի խորհրդայնացումը Երևանում բոլշևիկների իշխանության գալուց հետո անխուսափելի էր: Այդ համոզումն ուներ նաև Գ. Նժդեհը: Նա գրում է, որ 1920թ. դեկտեմբերից Զանգեզուրի պայքարը ոչ այնքան նպատակ էր, որքան միջոց խորհրդային իշխանությունների վրա ճնշում գործադրելու համար: Երկրամասը խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու մտավախությունից զատ Գ. Նժդեհին և նրա սյունեցի զինակիցներին անհանգստացրել է Երևանում գտնվող հայ մտավորականության գլխովին ոչնչացման վտանգը⁹⁹³: խորհրդային ուժերին դիմադրություն կազմակերպելով՝ Գ. Նժդեհն ակնկալում էր Երևանում բոլշևիկների կողմից իրականացվող բռնությունների դադարեցում: Զանգեզուրում Գ. Նժդեհի դեմ կռվող կարմիր բանակի հրամանատարները պարտություն կրելուց հետո առաջարկում են հաշտություն և բարեկամական հարաբերություններ: Ամեն անգամ, ի թիվս այլ պայմանների, բոլշևիկներին պատասխան է տրվել, որ կհամաձայնվեն, եթե բանտերից ազատ արձակվեն հայ մտավորականները⁹⁹⁴:

Գ. Նժդեհն անդրադառնում է Հայիեղկոմի՝ 1921 թ. հունվարի 29-ի վերոնշյալ գրությանը, թե քանի դեռ Սյունիքը գրավված չէ, պետք է արգելել ձերբակալություններն ու

⁹⁹¹ 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո մայիսի կեսերին խորհրդային իշխանությունների նախաձեռնությամբ վերջիններիս և Զանգեզուրի ինքնապաշտպանության ղեկավարության ներկայացուցիչների միջև Սիսիանի Ղալաջուղ գյուղում տեղի ունեցան Զանգեզուրը խաղաղ միջոցներով խորհրդայնացնելուն միտված բանակցություններ, որոնք անարդյունք ավարտվեցին (մանրամասն տե՛ս Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 478-514):

⁹⁹² Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, սեպտեմբեր, էջ 86:

⁹⁹³ Տե՛ս նույն տեղում, մայիս, էջ 135:

⁹⁹⁴ Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, յունիս, էջ 132-133:

բռնագրավումները: Հետևաբար, ըստ Նժդեհի, Սյունիքի դիմադրությունը զսպում էր բոլշևիկներին, և հայ մտավորականությանն ապրեցնելու համար Սյունիքը շարունակեց կռիվը⁹⁹⁵: Դիմադրական կռիվները շարունակվեցին այնքան, երբ Երևանից նահանջող մտավորականությունն անցավ Արաքսի պարսկական ափ⁹⁹⁶:

Այսպիսով, Զանգեզուրում խորհրդային իշխանության հաստատման դեմ ուղղված դիմադրական մարտերի մյուս կարևոր պատճառը հայ մտավորականության փրկությունն էր բոլշևիկյան հալածանքներից:

Գ. Նժդեհն անդրադառնում է նաև այն գործոններին, որոնք, իր բնորոշմամբ, արագացրին Զանգեզուրի խորհրդայնացումը: Այս տեսակետից նա կարևորում է Փետրվարյան ապստամբությունից հետո Հայաստան ժամանած Ա. Մյասնիկյանի վարած համեմատաբար մեղմ քաղաքականությունը: Վերջինիս «ներման դեկրետը», ըստ Նժդեհի, ուղղված էր ոչ միայն տարագիրներին, այլև յուրատեսակ ուղերձ էր ապստամբ սյունեցիներին: Ըստ էության, զանգեզուրցիներին կոչ էր արվում օգտագործել ընձեռած հնարավորությունը և դադարեցնել պայքարն ու ընդունել խորհրդային վարչակարգը: Բնականաբար ինչպես Զանգեզուրի բնակչությունը, այնպես էլ այնտեղ գտնվող գաղթականությունը լսում էր այդ մասին և հավատում էր: Բոլշևիկներին հավատացող և Երևան վերադարձող գաղթականների հորդորը Զանգեզուրում գտնվողներին՝ հանձնվել և վերադառնալ, նույնպես ազդում է ընդհանուր դիմադրության ոգու վրա⁹⁹⁷:

Զանգեզուրի ինքնապաշտպանության վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև դեռևս մեկ տարի առաջ Ղարաբաղն առանց կռվի թշնամուն թողնելը⁹⁹⁸:

Գ. Նժդեհի կարծիքով Սյունիքի ինքնապաշտպանության վրա բացասաբար անդրադարձավ Արարատյան դաշտի շուրջ 12000 հայության գաղթը: ՀՅԴ Գերագույն դատական ատյանին 1921 թ. ամռանը ներկայացված բացատրագրություններում Նժդեհը որպես Լեռնահայաստանի անկման գլխավոր պատճառներ մատնանշում է Երևանից Սյունիք հասած գաղթականության հանգամանքը և դրանով պայմանավորված նոր

⁹⁹⁵ Տե՛ս նույն տեղում, յուրիս, էջ 76-78:

⁹⁹⁶ Տե՛ս Նժդեհ Գ., ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, յունիս, էջ 80:

⁹⁹⁷ Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, օգոստոս, էջ 144:

⁹⁹⁸ Տե՛ս Նժդեհ Գ., Հայ-բոլշևիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, էջ 93:

իրավիճակը⁹⁹⁹: Փետրվարյան ապստամբության անկումից հետո Ինքնավար Սյունիքը ծանր փաստի առջև կանգնեց: Փոխանակ միանալու մայր երկրին՝ ստիպված եղավ ընդունել այնտեղից եկած հազարավոր գաղթականների: Երևանյան գաղթականությունը, անմարտունակ լինելուց զատ, նաև քառս տարածեց Սյունիքում¹⁰⁰⁰:

Գ. Նժդեհի կարծիքով բոլշևիկյան ուժերն ավելի խստացրին ճնշումները Սյունիքի վրա, երբ Լեոնահայաստանը հայտարարվեց Հայաստան: Այս փաստն ավելի մտահոգեց բոլշևիկներին: Ըստ Գ. Նժդեհի՝ նրանք մտավախություն ունեին, որ այն ամբողջ Անդրկովկասի հակախորհրդային շարժման համար լուրջ հենարան կհանդիսանա¹⁰⁰¹: Այդ պատճառով բոլշևիկները համախմբվեցին տապալելու «երկրորդ Հայաստանը»: Ըստ էության, Գ. Նժդեհն ակնարկում է, որ Լեոնահայաստանի հռչակումը Հայաստանի ավելորդ էր: Փաստորեն Չանգեզուրի խորհրդայնացումն արագացավ նաև տեղում իշխանության անընդհատ փոփոխությունների պատճառով: Չնայած երկրամասի փաստական ղեկավարը Գ. Նժդեհն էր, այդուհանդերձ մի քանի ամսվա ընթացքում կառավարություններ էին փոփոխվում, ինչն ավելորդ անորոշություն էր մտցնում բնակչության շրջանում:

Չանգեզուրի խորհրդայնացումն արագացրին նաև ուժերի անհավասարությունը, զենքի, զինամթերքի և պարենի պակասը: Ըստ Գ. Նժդեհի՝ Չանգեզուրը կանգնեց սովամահության կամ խորհրդայնացման երկընտրանքի առջև¹⁰⁰²:

Գ. Նժդեհի կարծիքով Սյունիքում պայքարը ժամանակից շուտ դադարեցնելու վրա ազդեցին նաև Ռիգայում այդ օրերին (1921թ. հունիս-հուլիս) ընթացող ՀՅԴ-ՌԿ(Բ)Կ բանակցությունները, որի վերաբերյալ բոլշևիկները Սյունիքում լուրեր էին տարածում, թե ՀՅԴ Արտասահմանյան պատասխանատու մարմինը դեմ է Սյունիքի հակաբոլշևիկյան պայքարին¹⁰⁰³: Մինչդեռ իրականում Ռիգայի բանակցությունների ընթացքում Չանգեզուրի

⁹⁹⁹ Տե՛ս Նժդեհ Գ., Երկեր: Երկու հատորով, հ. 2, Երևան, 2002, էջ 399, 400, հմմտ. Հարությունյան Ա., Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Երևան, 2004, էջ 159:

¹⁰⁰⁰ Տե՛ս Նժդեհ Գ., Երկեր: Երկու հատորով, հ. 2, էջ 403:

¹⁰⁰¹ Տե՛ս Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, սեպտեմբեր, էջ 88:

¹⁰⁰² Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, էջ 131:

¹⁰⁰³ Նժդեհ Գ., Ազատ Սինիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, սեպտեմբեր, էջ 87:

զինված պայքարը դաշնակցական կողմն օգտագործում էր որպես ճնշման միջոց: Պատահական չէ, որ Զանգեզուրի խորհրդայնացումից հետո խորհրդային կողմը կոշտացրեց իր դիրքորոշումը:

Պայքարը դադարեցնելու և խորհրդայնացման գործընթացն արագացնելու վրա ազդեց նաև Ատրպատականի հայոց հոգևոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հանձնվելու մասին նամակ-հորդորը¹⁰⁰⁴, որը հեղինակն ուղարկել էր Ա. Մյասնիկյանին և Գ. Նժդեհին¹⁰⁰⁵:

Խոսելով Զանգեզուրի խորհրդայնացման մասին՝ Գ. Նժդեհն անդրադառնում է խորհրդային բանակի հայ զինվորական Գրիգորի Օգանեզովի գրքույկին, որտեղ հեղինակը ճգնում է ապացուցել, որ Զանգեզուրի խորհրդայնացումը տեղի է ունեցել ոչ թե բանակցությունների, փոխզիջումների, այլ միայն խորհրդային զորքերի մղած մարտական գործողությունների շնորհիվ¹⁰⁰⁶: Նժդեհը քննադատում և մանրամասն փաստարկում է խորհրդային քարոզչության սնանկությունը¹⁰⁰⁷:

Զանգեզուրի ինքնապաշտպանությանը և երկրամասի խորհրդայնացմանն անդրադառնում են Սփյուռքում հաստատված ժամանակի մի շարք այլ գործիչներ ևս:

Գ. Նժդեհի զինակիցներից Վարդան Գևորգյանը Զանգեզուրի խորհրդայնացման պատճառներ համարում է Հայաստանի, ապա նաև Վրաստանի խորհրդայնացումը, Փետրվարյան ապստամբության անկումից հետո Արարատյան դաշտից շուրջ 12.000 գաղթականության նահանջը դեպի Սյունիք, որը բարոյական առումով թուլացրեց պաշտպանությունը Սյունիքում, նահանջող մտավորականության և երիտասարդության վաղաժամ անցնելը Պարսկաստան, պարենի և զինամթերքի պակասը, վարչական երկվությունը¹⁰⁰⁸:

Հայաստանի Առաջին հանրապետության վերջին վարչապետ և Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը նույնպես անդրադարձել է Զանգեզուրի

¹⁰⁰⁴ Նույն տեղում, հոկտեմբեր, էջ 134:

¹⁰⁰⁵ Ղազախեցյան Վ., Նժդեհը Զանգեզուրում (1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս), Երևան, 2001, էջ 62:

¹⁰⁰⁶ Ոգանեզով Գ., Նժդեհի հրոսակախմբի վոչնչացումը, Յերևան, 1931, 62 էջ:

¹⁰⁰⁷ Նժդեհ Գ., Երկեր: Երկու հատորով, հ. 2, Երևան, 2002, էջ 255-269:

¹⁰⁰⁸ Տե՛ս Գեորգեան Վ., նշվ. աշխ., էջ 157:

խորհրդայնացմանը: Խոսելով համազանգեզուրյան առաջին համագումարի մասին՝ նա գրում է, որ Ինքնավար Սյունիքի հոչակումը պայմանավորված էր ոչ միայն Հայաստանին միանալու մղումով, այլև բոլշևիկների կողմից նախորդ 6 ամիսների ընթացքում իրականացված վայրագություններով¹⁰⁰⁹: Ինչպես տեսնում ենք, տարագիր վարչապետը նույնպես Զանգեզուրի կողմից խորհրդային վարչակարգին դիմադրելը պայմանավորում է մայր հայրենիքի կազմում մնալու մղումով և բոլշևիկների գործադրած բռնություններով: Ս. Վրացյանը պատահական չի համարում, որ այդ քաղաքականությունը, ինչպես նաև երկրամասում թաթարների նախկին արտոնյալ դիրքը վերականգնելու բոլշևիկների ցանկությունը ձախողեցին Սիսիանի բանակցությունների դրական արդյունքը: Զանգեզուրի խորհրդայնացման պատճառների մեջ Ս. Վրացյանը դիտարկում է նաև սեփական հնարավորությունների սահմանափակ լինելն ու դրսից օգնություն ստանալու անկարելիությունը¹⁰¹⁰:

Ռուբեն Տեր-Մինասյանը ներկայացնում է հերոսամարտի պատճառները և Գ. Նժդեհի նման պարզաբանում, որ այն պայմանավորված չէր որևէ անձի կամ կուսակցության կամքով¹⁰¹¹: Ռուբենը, սակայն, այլ մտահոգություն է հայտնում: Համառ դիմադրությունից հետո Խորհրդային Հայաստանի կազմում հայտնված Զանգեզուրը խորհրդային իշխանությունների թողտվությամբ կրկին լցվում է անհարազատ թուրք-թաթար տարրերով¹⁰¹²:

Թե որքան անցանկալի է եղել խորհրդային իշխանության հաստատումը Զանգեզուրում, վկայում են արժանահիշատակ տարագիր գործիչ Արշակ Հովհաննիսյանի հուշերը Սիսիանի՝ վերևում հիշատակված բանակցությունների վերաբերյալ: Բանակցություններին զանգեզուրյան կողմից մասնակցած գործիչը նշում է, որ դրանք ուղեկցվել են փոխադարձ մեղադրանքներով: Խորհրդային պատվիրակության անդամներն անընդհատ պնդել են Զանգեզուրի խորհրդայնացման վերաբերյալ, հակառակ դեպքում մտահոգություն հայտնելով, որ անկախ Զանգեզուրը «դառնում է

¹⁰⁰⁹ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 586-594:

¹⁰¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 599, 600:

¹⁰¹¹ Տե՛ս Ռուբեն, Զանգեզուրի պայքարը, «Դրօշակ», 1925, թիւ 6, էջ 168:

¹⁰¹² Տե՛ս նույն տեղում, էջ 175:

գործիք իմպերիալիզմի համար»¹⁰¹³: Հատկանշական է բանակցությունների ժամանակ խորհրդային կողմի ներկայացուցիչների հնչեցրած հայտարարությունն այն մասին, որ Ջանգեզուրի խորհրդայնացման դեպքում Ղարաբաղը ևս պետք է միացվի Խորհրդային Հայաստանին: Չէր բացառվում, որ սա ևս ազդել է բանակցությունների ընթացքի և խորհրդայնացումն արագացնելու տրամադրության վրա: Խորհրդային պատվիրակները փոխանցել են նաև քաղաքական համաներման վերաբերյալ որոշումը, որը տարածվելու էր նաև Ջանգեզուրի և Ղարաբաղի վրա¹⁰¹⁴: Ա. Հովհաննիսյանն անդրադառնում է նաև Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի՝ 1921 թ. հունիսի 13-ի հայտարարությանը՝ ուղղված Ջանգեզուրի ապստամբներին: Հեղինակը նշում է, որ Ջանգեզուրում խորհրդային իշխանություն հաստատելու համար Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը բազմաթիվ խոստումներ տվեց՝ համընդհանուր և լիակատար ներում բուլշևիկյան իշխանությունների բոլոր հակառակորդներին, լքված գյուղերը չվերաբնակեցնել թաթարներով, Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին¹⁰¹⁵: Սակայն այս խոստումները հիմնականում չկատարվեցին: Այսպիսով, Սփյուռքում հաստատված հայ գործիչներից մեկը ևս փաստում է, որ խորհրդային կողմի իրականացրած ճնշող քարոզչությունը մեծ դեր է խաղացել Ջանգեզուրի խորհրդայնացման գործում:

Ջանգեզուրում Երևանից եկած գաղթականության ունեցած բացասական դերի մասին է խոսում տարագիր վարչապետ Հ. Քաջազնունին: Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո ապստամբների նահանջը դեպի Լեռնահայաստան ավելի վատթարացրեց տեղացիների վիճակը՝ առաջ բերելով լքում և հուսահատություն: Հ. Քաջազնունու պնդմամբ այս պայմաններում Ջանգեզուրն իրեն անզոր էր զգում բուլշևիկների հանդեպ¹⁰¹⁶: Փաստորեն երկրորդվում է Գ. Նժդեհի այն կարծիքը, որ գաղթականության հանգամանքն արագացրեց Ջանգեզուրի պարտությունը:

¹⁰¹³ Արշակունի Ա., Սիսեանի բանակցութիւնները, «Հայրենիք», 1926, յունիս, էջ 40:

¹⁰¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

¹⁰¹⁵ Տե՛ս նույն տեղում, յուլիս, էջ 59-62:

¹⁰¹⁶ Տե՛ս Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 48:

Պարենի պակասի մասին է խոսում Զաքար Զոյանը (Զ. Աշխատունի): Նա գրում է, որ երբեմն զորքը կռվում էր քաղցած վիճակում¹⁰¹⁷:

Այսպիսով, ամփոփելով Զանգեզուրի խորհրդայնացման վերաբերյալ Գ. Նժդեհի և Սիյուռքում հաստատված մի շարք այլ հայ գործիչների տեսակետները, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին: 1920 թ. դեկտեմբերի 2-ին իշխանությունը Հայհեղկոմին փոխանցելուց հետո Զանգեզուրի խորհրդայնացումը եղել է միայն ժամանակի հարց: Զանգեզուրի ինքնապաշտպանության ղեկավարները խորհրդայնացման գլխավոր պայման համարել են երկրամասը խորհրդային Հայաստանի կազմ ընդգրկելը: Հստակ երաշխիքներ ստանալուց հետո միայն դադարեցվել է պայքարը: Զանգեզուրի խորհրդայնացմանն ընդդիմանալու գլխավոր գործոններից է եղել նաև հայ մտավորականությանը բոլշևիկյան հետապնդումներից և հալածանքներից փրկելու մտավախությունը: Զանգեզուրի ինքնապաշտպանության անկման վրա բացասական ազդեցություն են ունեցել խորհրդային քարոզչությունը, հազարավոր գաղթականների առկայությունը, Զանգեզուրի կառավարման և հեռանկարի անորոշությունը, ինչպես նաև զենքի, զինամթերքի և պարենի խիստ պակասը:

¹⁰¹⁷ Տե՛ս Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, 1925, սեպտեմբեր, էջ 84:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայաստանի խորհրդայնացման պատմագիտական գնահատականի գործում մեծ նշանակություն ունեն սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի արժևորումները: 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը օրակարգային և սկզբունքային է համարել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացի քննարկումն ու գնահատումը: Հետագա գիտական քննարկման լուրջ առարկա կարող են հանդիսանալ Խորհրդային Հայաստանի ընդհանուր պատմության վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի հայեցակարգային ուսումնասիրությունը, համապատասխան նյութերի ընտրության մեթոդաբանության մշակումը և կիրառումը:

- Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, ի տարբերություն խորհրդահայ մամուլի, պատմագիտության և հասարակական-քաղաքական շրջանակների, անհամեմատ մեծ ազատություն է ունեցել Հայաստանի խորհրդայնացումը գնահատելու գործում: Խորհրդային իշխանության հաստատման ամբողջ գործընթացի գնահատման հարցում տեսակետները Խորհրդային Հայաստանից դուրս հիմնականում բաժանվել են երկու հակադիր ուղղության: Մի ուղղությունը, որին հիմնականում հարել են

Սփյուռքում գործող Հնչակյան և Ռամկավար-ազատական կուսակցությունները, համայնավարները, առավելապես կիսել է խորհրդային պաշտոնական տեսակետը: Մյուս ուղղության հիմնական ներկայացուցիչները հիմնականում դաշնակցականներն էին, որոնք ընդհանուր առմամբ բացասական գնահատական են տվել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը: Չնայած այն հանգամանքին, որ ոչ դաշնակցականները դաշնակցականներին քննադատելու հիմնական հիմնավորում ներկայացնում էին վերջիններիս կողմից խորհրդային իշխանությունների հանդեպ ունեցած անհաշտ դիրքորոշումը, իրականում հակասությունների հիմքերն ավելի խորն էին:

- Սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակների համար աներկբայելի է այն փաստը, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով իշխանությունը խաղաղ ճանապարհով է փոխանցվել բոլշևիկներին: Իշխանությունը հանձնած դաշնակցական ղեկավարներն ակնկալել են, որ Հայաստանի խորհրդայնացումով հնարավոր կլինի Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապահովել հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը թուրքական նոր կոտորածներից, ինչն արդեն սկսվել էր: Դաշնակցական շրջանակներն իրավացիորեն պնդում են, որ իշխանությունը Հայիեղկոմին հանձնելու գործում մեծ է եղել Խորհրդային Ռուսաստանի ճնշումը:

- Հայաստանի խորհրդայնացումով դաշնակցական կառավարության անդամներն ակնկալում էին, որ Խորհրդային Ռուսաստանը կաջակցի Հայաստանին տնտեսության վերականգնման, հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրների խելամիտ լուծման գործում: Խորհրդայնացման կարևոր նախապայմաններից էր Հայաստանի անկախության պահպանումը: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական գրեթե բոլոր շրջանակները համոզմունք են հայտնում, որ Հայաստանի խորհրդայնացման խնդրում վճռորոշ է եղել նաև հայ ժողովրդի մեջ նախընթաց դարերում ձևավորված պրոռուսական կողմնորոշումը:

- Հայաստանում խորհրդայնացման գործընթացում առանցքային է եղել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը նույնպես հետաքրքիր և հակասական գնահատականների է արժանացել: Բոլորն ուղղակի և անուղղակի պնդում են, որ այդ պայմանագիրն ուղղված է հայ ժողովրդի և Հայաստանի անկախության դեմ: Սփյուռքում

հաստատված դաշնակցական գործիչները համոզված են, որ Ալեքսանդրապոլի դաշնագրի հարցում իր բացասական դերն է կատարել նաև Խորհրդային Ռուսաստանը: Դաշնակցական շրջանակների համոզմամբ պայմանագիրը ստորագրող հայկական կողմը գործնականում պատկերացնում էր, որ այն իրավական ուժ չի կարող ունենալ: Սակայն միաժամանակ կար այն գիտակցությունը, որ չստորագրելու դեպքում թուրքերը կշարժվեին Երևանի վրա, ինչը հղի էր ողբերգական հետևանքներով: Թուրքական կողմն ավելի լավ էր գիտակցում պայմանագրի իրավական ուժ չունենալու հանգամանքը և ծրագրում էր պայմանագիրը որպես քաղաքական ճնշման միջոց գործադրել և՛ հայերի, և՛ ռուսների դեմ: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ոչ դաշնակցական հատվածի կողմից Ալեքսանդրապոլի պայմանագիրն ավելի շատ օգտագործվել է Դաշնակցությանը մեղադրելու, բոլշևիկների անհաջողությունը Դաշնակցության վրա բարդելու համար: Այդուհանդերձ, չնայած կողմնակալ մեղադրանքներին, ակներև են նաև պայմանագիրը ստորագրող հայ գործիչների սխալները:

- Սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներում լրջորեն քննարկվեց նաև Հայաստանի անկախության խնդիրը: Դաշնակցական գործիչներն ու պարբերականները, առաջնորդվելով կուսակցության հռչակած սկզբունքներով, Հայաստանի խորհրդայնացումով փաստում էին անկախության և ինքնուրույնության կորուստը: Ժամանակավորապես ընդունելով այդ իրողությունը և պահելով գաղափարական հակառակորդի իրենց կեցվածքը՝ նրանք կարևորում էին Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինումն ու հզորացումը: Տնտեսապես ուժեղ Խորհրդային Հայաստանն առավել հեշտությամբ կանցներ դեպի անկախություն տանող ճանապարհը:

- Դաշնակցական թերթերն ու գործիչներն իրենց գաղափարախոսական գործունեության առանցքը դարձրին Հայաստանի անկախության վերականգնման տեսլականը: Միաժամանակ հստակ էր այն գիտակցությանը, որ անբավարար ուժերի և միջազգային աննպաստ պայմաններում այդ պահին անհնար էր վերականգնել Հայաստանի անկախությունը: Սակայն անկախության գաղափարի քարոզչությունը պայմանավորված չէր միայն Հայաստանը Խորհրդային Միությունից առանձնացնելու և

ժողովրդավարական իշխանություն հաստատելու հեռահար նպատակով: Այս գաղափարի շուրջ համախմբվում էր տարագիր հայությունը, որին սպառնում էր ծուլման վտանգը: Անկախ պետությունը վերականգնելու հույսով բազում հայորդիներ ոչ միայն համախմբվեցին, այլև կարևոր շարժառիթ ունեցան հայ մնալու և իրենց սերունդներին հայ դաստիարակելու համար: Բազմաթիվ դաշնակցական գործիչներ տեսական լուրջ հիմնավորումներով ապացուցում էին, որ հայ ժողովրդի շարունակականությունը երաշխավորելու տեսակետից անկախ պետականությունն այլընտրանք չունի:

- Հայաստանի անկախության գաղափարը բացասաբար էր ընկալվում սփյուռքահայ ոչ դաշնակցական շրջանակների կողմից: Վերջիններս ամենաբարձր մակարդակներով դրական էին տրամադրված խորհրդայնացման հանդեպ: Ռամկավար-ազատական, հնչակյան և նույնիսկ չեզոք գործիչներն ու մամուլի միջոցները նպատակահարմար չէին համարում Հայաստանի անկախության խնդրի քննարկումը: Որոշ դեպքերում, ցավոք, մերժումի տրամադրվածությունն այնքան խորն էր, որ երբեմն դեմ էին արտահայտվում անկախության գաղափարին ընդհանրապես՝ առանց խորամուխ լինելու ազգերի անկախ ապրելու ի վերուստ տրված իրավունքի մեջ: Պատճառաբանելով ֆիզիկական անվտանգության, տնտեսական զարգացման և այլ գործոններ՝ այս ուղղության կողմնակիցները պնդում էին, որ Հայաստանը և հայ ժողովուրդը երջանիկ են Խորհրդային Միության կազմում:

- Ռամկավար-ազատականները շրջանցում էին նաև խորհրդային վարչակարգի հետ ունեցած իրենց դավանած գաղափարախոսական հակասությունը: Ընդհանուր առմամբ նրանց տեսակետներում արտահայտված էր միայն դրականը: Նրանք փորձում էին շրջանցել կամ չնկատել խորհրդային կայսրության մեջ Խորհրդային Հայաստանի բռնի ներառվելու բացասական կողմերը: Եղել են որոշ դեպքեր, երբ ռամկավարները փորձել են բարձրաձայնել Խորհրդային Միությունում գոյություն ունեցող բացահայտ հակահայկական երևույթների մասին: Սակայն իրենց իսկ հայտարարությամբ նման երևույթները և Խորհրդային Հայաստանի դեմ տարվող գաղափարական պայքարը մղվել

է հետին պլան՝ կարևոր համարելով երկրի տնտեսական զարգացումն ու անվտանգությունը:

- Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացում սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը մեծ տեղ է հատկացրել Փետրվարյան ապստամբությանը: Սփյուռքի դաշնակցական շրջանակները փաստում են, որ Հայաստանում իշխանությունը վերցնելուց անմիջապես հետո բոլշևիկները չհարգեցին իրենց իսկ տված խոստումները: Վերջիններիս առաջին լուրջ «բացթողումը» նախկին կառավարության անդամներին ձերբակալելն էր: Բոլշևիկների մուտքը Հայաստան իրենց գործադրած քայլերի պատճառով խոր հիասթափություն առաջ բերեց: Տպավորություն էր ստեղծվել, որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը նշանակութիւն չուներ բոլշևիկների համար: Հայաստանում բոլոր նրանք, ովքեր բոլշևիկ չէին, մահվան և աքսորի սարսափի տակ էին: Բոլշևիկյան հեղափոխությունն ավելի հեշտությամբ խորացնելու «մտադրությամբ» Հայաստանում մտավորականության զանգվածային ահաբեկում իրականացվեց: Ըստ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի՝ մտավորականների հանդեպ կիրառված քաղաքական տեռորն ամենաշատը հուզեց ժողովրդին և մեծապես ազդեց Փետրվարյան ապստամբության հասունացման վրա: Բանտում գտնվող մտավորականության կորստի վախը պատճառ էր ապստամբություն բարձրացնելու: Զանգվածային ձերբակալություններին աստիճանաբար հաջորդում էին գնդակահարությունները: Բանտում գտնվող ազգային, պետական և կուսակցական գործիչների գնդակահարություններն ապստամբություն բարձրացնելու առիթ հանդիսացան: Նույնիսկ սփյուռքահայ ոչ դաշնակցական թերթերն էին փաստում, որ փոխանակ երկրում տիրող ծանր վիճակը բարելավելուն, բոլշևիկները փորձում էին դաշնակցականներին հալածել: Ոչ դաշնակցական մամուլը Փետրվարյան ապստամբության պատճառները մեկնաբանելիս փորձ է անում տպավորություն թողնել, որ դաշնակցականները հանուն իրենց շահերի օգտագործեցին բոլշևիկյան բռնությունների առիթը: Իրականում ժողովուրդը ծանր էր տանում հատկապես մտավորականության հանդեպ հալածանքն ու ձերբակալությունը: Առավել ևս, որ այդ

ձերբակալությունները «հիմնավորվում» էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ:

- Սփյուռքում Փետրվարյան ապստամբության պատճառները մեկնաբանելիս խիստ գնահատականներ էին հնչեցնում բոլշևիկների կիրառած բռնագրավումների կամ այսպես կոչված «ռազմական կոմունիզմի» քաղաքականության վերաբերյալ: Արձանագրվում է, որ բոլորովին անիմաստ էր Ռուսաստանում քննություն չանցած բռնագրավումների դաժան փորձի վերակիրառումը պատերազմներից տնտեսապես քայքայված Հայաստանում: Բոլորովին անմտություն էր բռնագրավված իրերի մեծ մասի դուրսբերումը Հայաստանից, երբ տեղում դրանց կարիքն ավելի էր զգացվում: Սփյուռքյան մամուլն իր գնահատականները տալիս անդրադառնում է խորհրդային որոշ գործիչների տեսակետներին, որոնք նույնպես քննադատում էին գործադրված բռնագրավումները:

- Ըստ Սփյուռքում հնչեցված տեսակետների՝ Փետրվարյան ապստամբության հասունացմանը նպաստեցին նաև հայ սպաների ձերբակալությունն ու աքսորը, նրանց ընտանիքների հանդեպ կիրառված բռնությունները: Պակաս կարևոր չէին նաև բոլշևիկների կողմից խոսքի և մամուլի ազատությունների կտրուկ սահմանափակումները, արևմտահայության հանդեպ նոր իշխանությունների ունեցած ակնհայտ թշնամական վերաբերմունքը: Փետրվարյան ապստամբության համար պարարտ հող ստեղծեց նաև հայ բոլշևիկների ծաղրական և նսեմացուցիչ վերաբերմունքը Հայաստանի անկախության գաղափարի հանդեպ:

- Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ բոլշևիկների համար գերադասելի էր իշխանությունը քաղաքացիական կռվի միջոցով ձեռք բերել, քանզի դա «կարևոր» էր բանվորագյուղացիական հեղափոխության խորացման տեսակետից: Բոլշևիկյան իշխանությունը փորձեց արհեստականորեն «հեղափոխական իրավիճակ» ստեղծել, ինչի անհրաժեշտությունը բնավ չկար: Հայ կոմունիստները, չյուրացնելով սոցիալիստական հեղափոխության հիմնական նպատակները, հեղափոխությունը պատկերացնում էին նախևառաջ որպես քաղաքացիական կռիվներ: Հանուն իրենց «հեղափոխական» հիվանդագին հավակնությունների բավարարման

Նրանք ջանք չէին խնայում հեղելու իրենց «հակառակորդների» արյունը: Չնայած հակառակ կողմից հնչող կոչերին՝ բոլշևիկները ոչ միայն քայլեր չձեռնարկեցին՝ խուսափելու քաղաքացիական կռիվներից, այլև նման սադրանքների հրահրումը դարձրին իրենց քարոզչության հիմնական առանցքներից մեկը: Բոլշևիկյան հետագա այն հռետորաբանությունը, թե իբր քաղաքացիական կռիվները հրահրել են դաշնակցականները, չի դիմանում որևէ տրամաբանական քննադատության: Քեմալաբոլշևիկյան բարեկամությունը, Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանը հաղթահարելու իրողությունը, Ադրբեջանի խորհրդայնացված լինելու փաստը, Վրաստանում անկախության անկման անխուսափելիությունը և այլ հանգամանքներ իշխանությունը կամավոր բոլշևիկներին հանձնած դաշնակցականներին ապստամբելու որևէ հուսալի հեռանկար չէին խոստանում:

- Փետրվարյան ապստամբության պարտության պատճառներին անդրադառնալիս սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը շեշտում է ուժերի անհավասարությունը, ապստամբների մոտ կանոնավոր զորքի բացակայությունը, կռվող ուժերի հոգնածությունը: Անշուշտ հատկանշական է նաև հայ իրականության մեջ ազգային շահը դասակարգային շահից գերադասելը, ինչի պատճառով հայ ժողովուրդը դասակարգային պայքար չմղեց բոլշևիկների դեմ: Պարտության համար պակաս կարևոր չէ նաև հայ ժողովրդի լայն խավերի մեջ արմատացած ռուսասիրությունը: Ի դեմս բոլշևիկների՝ հայ ժողովուրդը տեսավ ռուսներին և այդ իսկ պատճառով հավուր պատշաճի չպայքարեց:

- Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, քննելով Փետրվարյան ապստամբության նախապես ծրագրված լինելու հարցը, նույնպես հանգում է իրարամերժ եզրակացությունների: Դաշնակցականները պնդում են, որ Փետրվարյան ապստամբությունը եղել է ինքնաբուխ: Նրանց ընդդիմախոսները փորձում են համոզել, որ իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց կարճ ժամանակ անց Հայաստանում մնացած դաշնակցականները սկսեցին ծրագրել հակախորհրդային ապստամբություն, որն իրականություն դարձավ 1921 թ. փետրվարին: Իրականում բոլշևիկյան իշխանությունը

տապալելու համար Դաշնակցության կողմից ապստամբություն կազմակերպելու որոշումն ընդունվել է շատ ավելի ուշ՝ միայն 1921 թ. փետրվարի առաջին կեսին, երբ բոլշևիկյան բռնություններն ու ծախողումները դարձել էին անտանելի:

- Սփյուռքի դաշնակցական շրջանակներն ընդգծում են Փետրվարյան ապստամբության շնորհիվ հայ մտավորականության և զինվորականության փրկության փաստը: Բանտերում հայտնված բազմաթիվ հայ մտավորականներ և զինվորականներ դատապարտված էին «կացնահարության»: Ցավոք, բոլշևիկյան բանտերում եղան գնդակահարության և կացնահարության բազմաթիվ դեպքեր: Միայն Փետրվարյան ապստամբությունը կանխեց համազգային այդ արհավիրքը:

- Փետրվարյան ապստամբությունը Հայաստանի անկախության գաղափարի յուրահատուկ փորձաքար հանդիսացավ: 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը հաստատում է՝ Փետրվարյան ապստամբությամբ հայ ժողովուրդը ցույց տվեց, որ երբեք չի հաշտվի ստրկության մեջ մնալու մտքի հետ և հարկ եղած դեպքում պատրաստ է մեկ մարդու նման պայքարելու հանուն հայրենիքի անկախության: 1921 թ. փետրվարյան ապստամբությունը դրական ազդեցություն ունեցավ բոլշևիկյան բռնաճնշումները մեղմելու առումով: Այս մեղմացումն աներկբայելիորեն կապվում է նաև փետրվարյան դեպքերի հետ: Փետրվարյան ապստամբության հետևանք կամ արդյունք է համարվում նաև այն, որ ժողովրդի մեջ վերափոխվեց անվերապահ ռուսական կողմնորոշման տեսլականը: Եթե խորհրդայնացման նախօրեին Հայաստանում ռուսական դիրքորոշումն ընդհանուր առմամբ որևէ կասկած չէր հարուցում, ապա գործադրված բռնությունների պատճառով առաջ եկած համաժողովրդական ապստամբությունը կոտրեց այդ կարծրատիպը:

- Չնայած Սիմոն Վրացյանի և նրա համախոհների պարզաբանումներին՝ սփյուռքահայ ոչ դաշնակցական մամուլը սուր քննադատության ենթարկեց Փետրվարյան ապստամբության օրերին Ս. Վրացյանի կողմից քեմալականներից զինական օգնություն խնդրելու հեռագիրը՝ նրա հեղինակին կամ հեղինակներին մեղադրելով հայ ժողովրդին դավաճանելու և թուրքերի հետ դաշնակցելու մեղքերի մեջ: Սխալ էր նաև «Անկախ

Հայաստանի» այն պնդումը, թե Անդրկովկասի ժողովուրդներն իրենց ազատությունը և անկախությունը կարող են ապահովել միայն թուրքերի աջակցությամբ: Որքան էլ այդ քննադատությունը տեղի էր ունենում հակադաշնակցական տրամադրության համատեքստում, դրանք արդարացված էին, որովհետև Վրացյանն իրավունք չունեի թուրքերից օգնություն խնդրելու, այն պարզ պատճառով, որ թուրքերը երբեք մեզ չէին օգնի: Թերևս կարելի է արդարացված համարել Վրացյանի այն պարզաբանումը, որ իրենք մտահոգված էին նաև թուրքերի վստահությունը շահելու խնդրով: Չպաշտպանելով Ս. Վրացյանի և նրա համախոհների բացատրությունները՝ այնուամենայնիվ, հակված ենք կարծելու, որ նրանք հանուն Հայաստանի և հայ ժողովրդի բարեկեցության էին ապստամբել:

- Սփյուռքահայ ոչ դաշնակցական թերթերը դատապարտում են նաև 1921 թ. մարտին Ս. Վրացյանի կողմից Գ. Չիչերինին ուղղված հեռագիրը: Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը տեղեկացնում էր, որ Հայաստանում խորհրդային իշխանությունը տապալված է, և Ալեքսանդր Բեկզադյանն իրավունք չունեի Մոսկվայի կոնֆերանսում հանդես գալու Հայաստանի անունից: Նշված թերթերը և նրանց համախոհները գտնում էին, որ Բեկզադյանի օրինական մասնակցության պարագայում Մոսկվայի կոնֆերանսը կարող էր որոշում կայացնել Կարսը և Սուրմալուն Հայաստանի կազմում թողնելու մասին: Բոլորովին չարդարացնելով Ս. Վրացյանի կողմից Ա. Բեկզադյանին հետ կանչելու քայլը՝ կարծում ենք, որ հնչեցված մեղադրանքներն այս առումով անհիմն էին, որովհետև Հայաստանի սահմանների հարցը գործնականում լուծված է եղել խորհրդաքեմալական պայմանավորվածությունների արդյունքում մինչև Մոսկվայի կոնֆերանսը:

- Հայաստանում խորհրդային իշխանության վերջնահաստատման կարևոր հանգրվաններից է Զանգեզուրի խորհրդայնացումը: Սփյուռքահայ գործիչների գնահատմամբ Զանգեզուրի ինքնապաշտպանության ղեկավարները համոզված են եղել, որ երկրամասի խորհրդայնացմանն ընդդիմանալով հնարավոր է եղել ոչ միայն երաշխավորել Զանգեզուրի ընդգրկվելը Խորհրդային Հայաստանի կազմում, այլև փրկել հայ մտավորականությանը բոլշևիկյան հետապնդումներից ու հալածանքներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Արխիվային նյութեր

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. Ֆ. 1 (ՀԿԿ Կենտկոմ), գ. 169, ց. 2, գ. 1, 3, 177, ց. 5, գ. 1:
2. Ֆ. 37 (Հայրենիքի փրկության կոմիտե), ց. 1, գ. 9:
3. Ֆ. 113 (ՀՀ կառավարություն), ց. 1, գ. 1, ց. 43, գ. 30:
4. Ֆ. 114 (ՀՍԽՀ արտաքին գործերի կոմիսարիատ), ց. 1, գ. 17, ց. 2, գ. 25, 79:
5. Ֆ. 116 (ՀՍԽՀ ներքին գործերի նախարարություն), , ց. 1, գ. 2:
6. 119, ց. 1, գ. 248,
7. Ֆ. 144 (ՀՍԽՀ Ալեքսանդրապոլի գավառի հեղափոխական կոմիտե), ց. 2, գ. 25:
8. Ֆ. 200 (Հայաստանի Առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ց. 1, գ. 12, 602:
9. Ֆ. 1048 (Ռուբեն Տեր-Մինասյան), ց. 1, գ. 2, 71:
10. Ֆ. 1253 (Հայաստանի հեղափոխական կոմիտե), ց. 1, գ. 2, 4:
11. Ֆ. 1438 (Գևորգ Աթարբեկյան), ց. 1, գ. 10:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան (ԳԱԹ)

1. Ավետիս Ահարոնյանի ֆոնդ, գ. 208, 214:
2. Արշակ Չոպանյանի ֆոնդ, ց. 1, բ. 1, գ. 1632, 1815:

Բ. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

Հայերեն

1. Դեկրետների և հրամանների ժողովածու, Էջմիածին, Պետական հրատարակություն, 1921, պր. I (1920թ. նոյեմբերի 29 - 1921թ. փետրվարի 18), 129 էջ, պրակ II (1921թ. ապրիլի 2 – օգոստոսի 1), 104 էջ:
2. Խորհրդային Հայաստան (Հինգ տարի, 1920-1925), Երևան, Հրատ. Հ.Ս.Խ.Հ. կենտգործկոմի և ժողկոմխորհի, 1926, 471 էջ:
3. Հայաստանը գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), Երևան, «Գիտություն», 2008, 352 էջ:
4. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), (պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ), Երևան, «Հայաստան», 1972, 810 էջ:
5. Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Երևան, «Հայաստան», 1974, 375 էջ:
6. ՀՅԴաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղվարչության գաղտնիթերցումներում (1920-ական թվականներ), (Փաստաթղթերի ժողովածու), կազմող և խմբագիր՝ պրոֆ. Վ. Ղազախեցյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2016, 228 էջ:
7. Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, հրատ. ՀՅԴաշնակցության Բյուրոյի, 1999, 369 էջ:

8. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, Հայկական ՍՍԴ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1960, 643 էջ:
9. ՀՍԽՀ բանուորների, գիւղացիների եւ կարմիրբանակայիների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի արձանագրություններ, Երեւան, Պետական հրատարակչութիւն, 1922, 151 էջ:
10. Յիսնամեակ Սօց. Դէմոկրատ Հնչակեան կուսակցութեան (1887-1937), Փրովիտէնս, Հրատ. Սօց. Դէմ. Հնչակեան Կուս. Կեդր. Վարչութեան, 1938, 352 էջ:
11. Քաղուացքներ ՀՅԴաշնակցութեան 10-րդ Ընդհանուր ժողովի որոշումներէն, Ժնեւ, 1925, 35 էջ:

Այլ լեզուներով

12. Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества. Документы и комментарии (Сост., отв. Редактор, автор предисловия и комментария профессор Ю. Г. Барсегов), т. 2, ч. 2, Москва, 2003, “Гардарики”, 608 с.
13. Образование СССР (Сборник документов, 1917-1924), (под редакцией Э. Генкиной), Москва, Ленинград, Издательство Академии наук СССР, 1949, 471 с.
14. Съезды Советов Союза Советских Социалистических Республик, Сборник документов, 1917-1937, в 7-х т., т III, Москва, Госполитиздат, 1960, 399 стр.

Գ. Տպագիր հուշագրություններ, ժամանակակիցների վկայություններ և հրապարակումներ

1. Արեղեան Ա., Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան, «Հայրենիք», 1927, սեպտեմբեր, էջ 109-116:
2. Արեղեան Ա., Ազգային փոքրամասնութիւնները Անդրկովկասում, «Հայրենիք», 1929, ապրիլ, էջ 65-78:
3. Արեղեան Ա., Հայ-վրացական յարաբերութիւնները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», 1929, օգոստոս, էջ 135-145:

4. Արեղեան Ա., Հայաստան եւ արտաքին հարեւաններ (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», 1929, դեկտեմբեր, էջ 111-126:
5. Աբրահամեան Մ., Իմ յիշելի յուշերը, Թէհրան, տպ. «Ալիք», 1978, 580 էջ:
6. Աբրահամյան Մ. (Բաշգառնեցի Մարտիրոս), Իմ հիշելի հուշերը (20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր ներկայացուցիչ Մարտիրոս Աբրահամյանի հուշերը և մարտական կենսագրությունը): Խմբ., առաջաբանի հեղ.՝ Վ. Պետրոսյան, Երևան, Փրինթինֆո, 2016, 640 էջ:
7. Ահարոնեան Ա., Հայաստանը (Զեկոյց ներկայացուած դիւանագիտական միջազգային կաճառին՝ Փարիզում), «Հայրենիք», 1933, դեկտեմբեր, էջ 57-70:
8. Ահարոնեան Ա., Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան, Պոսթըն, «Հայրենիք», 1943, 212 էջ:
9. Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», Պոսթըն, 1925, յուլիս, էջ 125-136, սեպտեմբեր, էջ 78-85:
10. Ասատրեան Հ., Հայաստանի սահմանները, «Յեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936, թիւ 1, էջ 2-10:
11. Ասատրեան Հ., Հայկական ոգու ուժականութիւնը, «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1938, թիւ 3-4, էջ 23-33:
12. Ասատրյան Հ., Հատընտիր, Երևան, «Ամարաս», 2004, 414 էջ:
13. Ասատրեան Հ., Նախնական ծանոթութիւններ ցեղի մասին, «Յեղ եւ Հայրենիք», 1936, թիւ 1, էջ 11-21:
14. Աստուածատրեան Ա., Բախշի Իշխանեանի հետ Երևանի բանտում, «Հայրենիք», 1936, սեպտեմբեր, էջ 135-150, հոկտեմբեր, էջ 104-117:
15. Աստուածատրեան Ա., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1968, թիւ 2, էջ 37-49:
16. Արամեան Ս., Փետրուարեան յեղափոխութիւնը և բոլշեւիզմը, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927, էջ 5-12:

17. Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայությունը: Ճատախ, Երեւան, «Մուղնի», 2002, 456 էջ:
18. Արշակունի Ա., Սիսեանի բանակցությունները, «Հայրենիք», Պոսթըն, 1926, յունիս, էջ 39-48, յուլիս էջ 53-62:
19. Արշակունի Ա., Փետրուարի ապստամբությունը, «Հայրենիք», Պոսթըն, 1927, փետրուար, էջ 41-51:
20. Աւալով Զ., Բաթումի խորհրդաժողովը, «Վէմ», Փարիզ, 1934, թիւ 2, էջ 80-93, թիւ 3, էջ 74-84, թիւ 4, էջ 104-112:
21. Աւալով Զ., Վրաստանի անկախությունը, «Հայրենիք», Պոսթըն, 1934, դեկտեմբեր, էջ 49-65, 1935, յունուար, էջ 69-90, փետրուար, էջ 102-121, մարտ, էջ 61-79, ապրիլ, էջ 95-100, մայիս, էջ 132-143, յունիս, էջ 113-124, յուլիս, էջ 137-142, օգոստոս, էջ 112-121, հոկտեմբեր, էջ 104-114:
22. Բաղալեան Ն., Փետրուար 18 հայկական ազատագրական շարժման ամբողջական մարմնացում, «Փետրուար 18», հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927, էջ 35-41:
23. Բաղդասարեան Ա., Խորհրդային Հայաստան, պրակ առաջին, Թէիրան, տպ. «Ռովշանայի», 1927, 59 էջ:
24. Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Պուքրեշ, «Զահակիր», 1923, 173 էջ:
25. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890էն 1940), Փարիզ, հրատ. «Հայ ազգային հիմնադրամ»ի 1947, 640 էջ:
26. Դարբինեան Ռ., Բոլշեւիզմը եւ Հայաստանը, Երեւան, «Ուրարդիա», 1920, 51 էջ:
27. Դարբինեան Ռ., Բոլշեւիզմը եւ Հայաստանը, Իզմիր, ա. հ., 1922, 72 էջ:
28. Դարբինեան Ռ., Երկեր, Ա հատոր, Կեանքիս գրքէն, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1972, 704 էջ:
29. Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք», Պոսթըն, 1923, յունուար, էջ 57-64, յուլիս, էջ 121-128, հոկտեմբեր, էջ 137-144:

30. Դարբինյան Ռ., Մեր պատասխանը Յ. Քաջազնունիի, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 1923, 166 էջ:
31. Դարբինեան Ռ., Ռուսական վտանգը, Երևան, «Ազատ խոսք», 1991, 80 էջ:
32. Դարբինեան Ռ. Փետրուարեան ապստամբութեան 50-ամեակին առթիւ (խմբագրական), «Հայրենիք», Պոսթըն, 1961, թիվ 1, գարուն, էջ 1-3:
33. Երէցեան Գ., Փետրուար 18-ի նշանակութիւնը, «Փետրուար 18», հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927, էջ 42-44:
34. Երուանդ Հ., Ռամկավար Ազատական կուսակցութիւն. Իր այսօրը եւ վաղը, Պոսթըն, Ֆրէնքլին ինիլըն հօլ, 1927, 32 էջ:
35. Էջմիածնեցի, Մօտաւոր անցեալէն, «Հայրենիք», Պոսթըն, 1937, յուլիս, էջ 126-131:
36. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր տասներորդ, Երևան, «Գիտություն», 1999, 771 էջ:
37. Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (Անձնական յուշերուս ընդմէջէն), Պէյրութ, տպարան «Սեւան», 1962, 71 էջ:
38. Իշխանեան Բ., Երկու ամիս բօլշեւիկեան բանտում, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1924, 196 էջ:
39. Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), Պէյրութ, 1956, տպ. «Համազգայինի», 154 էջ:
40. Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատեան Հ.Յ.Դաշնակցութեան (1890-1950) (կազմ.՝ Ս. Վրացեան)», Բոստոն, տպ. «Հայրենիք», էջ 302-326:
41. Լենին Վ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան, «Հայաստան», հ. 30, 1980, 816 էջ, հ. 43, 1982, 668 էջ, հ. 45, 1983, 867 էջ:
42. Լուկաշին Ս., Հողվածներ, զեկուցումներ, ճառեր, Երևան, «Հայաստան», 1986, 400 էջ:
43. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, հոկտեմբեր, էջ 101-107, նոյեմբեր, էջ 97-102:

44. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, «Նոր օր», 1930, 368 էջ:
45. Կասյան Ա., Ընտիր երկեր, Երևան, «Հայաստան», 1967, 456 էջ:
46. Կոսոյեան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում»... (Փետրուարեան ապստամբութեան ընդվզումի 30-րդ տարեդարձի առթիւ, 1921-1951), Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1951, 66 էջ:
47. Հ. Ա., Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ յեղափոխութեան եւ Մայիս 28-ի մասին, Սոֆիա, տպարան «Մասիս», 1933, 32 էջ:
48. Հ. Ա., Յեղանենգ Շէյթանը. Խորհրդածութիւններ հակադաշնակցական ելոյթների մասին, Սոֆիա, տպարան «Ռահվիրայ», 1933, 56 էջ:
49. Ղազարեան Ա., Ազատութեան ուղին եւ հայի քաղաքական վարքագիծը, Թէիրան, «Փարոս», 1924, 46 էջ:
50. Մարմանդեան Յ., Հայ սպաների աքսորը (մի էջ հայ սպայի յուշերից), «Հայրենիք», Պոսթըն, 1934, օգոստոս, էջ 102-115:
51. Մալեգեան Վ., Ճամբուս վրայ (Յուշաքաղ), Փարիզ, 1950, տպ. «Արաքս», 361 էջ:
52. Մարտունի Ա., Խորհրդային Հայաստանի ուղին, Թիֆլիզ, Պետական հրատարակչություն, 1924, 48 էջ:
53. Մարտունի Ա., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, Պետական հրատարակչություն, 1924, 141 էջ:
54. Մարտունի Ա., Հայաստանի միջազգային քաղաքականությունը, «Նորք» գրական յեկ քաղաքական հանդես, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, Յերեվան, 1922, էջ 208-214:
55. Մինախորեան Վ., Ապրիլ 2-ի գաղթը (Երեւան-Թավրիզ), «Հայրենիք», Պոսթըն, 1923, դեկտեմբեր, էջ 89-97:
56. Մինախորեան Վ., Վերադարձ, «Հայրենիք», Պոսթըն, 1924, ապրիլ, էջ 47-53:
57. Մխիթարեան Օ., Փետրուարեան ապստամբութեան աղբիւրները, «Փետրուար 18», Հրատ. Հ.Յ.Դ. Փրակայի ուսանողական միութեան, Փրակա, 1927, էջ 13-36:

58. Մռավյան Ա., Խորհրդային հանրապետությունների միության մասին, «Նորք» գրական յեվ քաղաքական հանդես, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, Յերեվան, 1922, էջ 233-240:
59. Յակոբեան Յ., Խորհրդային Հայաստան (տպաւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ), Բարիզ, Գեղարուեստական հայ տպարան, 1929, 306 էջ:
60. Նաւասարդեան Վ., Դաշնակցութեան քաղաքական ուղին (10-րդ Ընդհանուր ժողովի առիթով), Գահիրէ, «Յուսաբեր», 1925, 180 էջ:
61. Նաւասարդեան Վահան, Ընկերվարութիւնը եւ ազգերի անկախութեան գաղափարը, «Հայրենիք», Պոստոն, 1923, յուլիս, էջ 68:
62. Նաւասարդեան Վ., Ընկերվարութիւնը եւ դեմոկրատիզմը, Գահիրէ, «Յուսաբեր», 1924, 34 էջ:
63. Նաւասարդեան Վահան, Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալին մէջ, «Հայրենիք», 1924, փետրուար, էջ 77-86:
64. Նաւասարդեան Վ., Ի՞նչ չէր եւ ի՞նչ չպիտի լինի մեր ուղին, Գահիրէ, «Յուսաբեր», 1923, 81 էջ:
65. Նաւասարդեան Վ., Հայաստանի անկախութիւնը (Տեսական հիմնաւորման թոռօցիկ ակնարկ), Ժընեւ, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, 1924, 56 էջ:
66. Նաւասարդեան Վ., Հ.Յ. Դաշնակցութեան «լիկուիդացիան» (Բոլշեւիզմի սնանկութեան առիթով), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1924, 188 էջ:
67. Նաւասարդեան Վ., Հ.Յ.Դաշնակցութեան անելիքը (Մտքեր եւ յուշեր մի գրքոյկի առիթով), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1924, 288 էջ:
68. Նաւասարդեան Վ., ՀՅԴ գաղափարաբանութիւնը, Պեյրութ, 1983, տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 1983, 151 էջ:
69. Նաւասարդեան Վ., Ո՞ր է գաղտնիքը (Խորհրդային Միութեան նոր սահմանադրութեան առիթով), «Հայրենիք», Պոսթըն, 1937, փետրուար, էջ 79-96:

70. Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք», Պոսթըն, 1925, մայիս, էջ 128-135, յունիս, էջ 130-137, յուլիս, էջ 75-86, օգոստոս, էջ 135-144, սեպտեմբեր, էջ 86-92, հոկտեմբեր, 130-138:
71. Նժդեհ Գ., Ամերիկահայութիւնը, ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935, 116 էջ:
72. Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Պէյրութ, «Հրազդան», 1929, 32 էջ:
73. Նժդեհ Գ., Երկեր: Երկու հատորով, հ. 2, Երևան, ՀՀ Արխիվային գործի գործակալություն, 2002, 504 էջ:
74. Նժդեհ Գ., Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», 1924, ապրիլ, էջ 109-119:
75. Նժդեհ Գ., Իմ պատասխանը, Հայաստանի ողբերգութիւնը թրքօրոյշեիկ փաստաթղթերի լոյսի տակ, Սոֆիա, տպ. Պ. Պալըզեան, 1937, 103 էջ:
76. Նժդեհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, յունիս, էջ 78-82:
77. Նժդեհ Գ., Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1923, սեպտեմբեր, էջ 71-78, 1924, յունվար, էջ 126-134, ապրիլ, էջ 109-119:
78. Նժդեհ Գ., Հայ-բոլշեիկեան կռիւները, «Հայրենիք», 1923, հոկտեմբեր, էջ 93-102:
79. Նժդեհ Գ., Հատընտիր, Երևան, «Հայաստան», 2001, 405 էջ:
80. Նժդեհ Գ., Հատընտիր, Երևան, «Ամարաս», 2006, 708 էջ:
81. Նժդեհ Գ., Յիշիր պատերազմը, Երեւան, հրատարակիչ՝ «Հայրենիք» ակումբ, 2013, 101 էջ:
82. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դէմ, Սոֆիա, «Գողթան», 1927, 47 էջ:
83. Նժդեհ Գ., Յեղի ոգու շարժը, Սոֆիա, տպագր. Պ. Պալըզեան, 1932, 60 էջ:
84. Շանթ Լ., Մեր անկախութիւնը, Պոսթըն, տպարան «Հայրենիք»ի, 1925, 240 էջ:
85. Չալխուշեան Գ., Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Պուքրէշ, ա. հ., 1923, 45 էջ:
86. Չօպանեան Ա., Հայ ազգը «մեղաւոր» չէ, Բարիզ, տպագր. Յ. Պօղոսեան, 1926, 16 էջ:

87. Չոպանեան Ա., Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն, «Անահիտ», Փարիզ, 1932-1933, թիվ 3-6, էջ 78-129:
88. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Դ հատոր, Աթէնք, Հրատարակութիւն Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի, 1995, 524 էջ:
89. Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), (խմբ.: Արսէն Կիտուր), Ա. հատոր, Պէյրութ, տպարան «Շիրակ», 1962, 617 էջ:
90. Պոլտովին Օ., Վեց բանտ եւ երկու յեղափոխութիւն: Արկածախնդրութիւններ Անդրկովկասի ու Անատոլի մէջ, 1920-1921, Աղեքսանդրիա: Ա. Ստեփանեան, 1933, 332 էջ:
91. Պողոսեան Յ., Երկու ամիս Հայաստանի մէջ, Պոստոն, տպարան «Պայքար»-ի, 1931, 499 էջ:
92. Պողոսեան Յ., Մեր դերը: Ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ, Պոստոն, տպարան «Պայքար»-ի, 1965, 43 էջ:
93. Զաղեթյան Գ., Մոտիկ անցյալից, Երևան, «Հայաստան», 1967, 99 էջ:
94. Զամալեան Ա., Յ. Քաջազնունին եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1924, յունիս, էջ 65-82:
95. Ռուբէն, Ախալցխա-Ախալքալակի հանրապետութիւնը, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2013, թիվ 3, էջ I(239)-XVI (պատրաստեց Խաչատուր Ստեփանյանը):
96. Ռուբէն, Զանգեզուրի պայքարը, , «Դրօշակ», 1925, թիւ 6, էջ 168-175:
97. Ռուբէն, Հայաստանը Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ, «Դրօշակ», 1926, թիւ 4, էջ 105-110:
98. Ռուբէն, Վասպուրականը իբրեւ անկիւնաքար Միացեալ Հայաստանի, «Դրօշակ», 1926, թիւ 11-12, էջ 299-306:
99. Սասունի Կ., Ազգային հարցը մարքսիզմի քուրայում, «Դրօշակ», 1928, թիվ 6-7, յունիս-յուլիս, էջ 174-179:

100. Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, յուլիս, էջ 110-116:
101. Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», Փարիզ, 1926, թիւ 3, էջ 72-75:
102. Սասունի Կ., Ռուսական օրիենտացիան, «Հայրենիք», Պոսթըն, 1928, փետրուար, էջ 135- 144:
103. Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրութ, «Համազգային», 1970, 263 էջ:
104. Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, հոկտեմբեր, էջ 86-102, նոյեմբեր, էջ 79-104, դեկտեմբեր, էջ 103-120, 1926, յունուար, էջ 74-96:
105. Սեւան Ա., Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիներ Գ. Նժդեհի հետ, Երևան, հեղ. հրատ., 2008, 256 էջ:
106. Սեւան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը, «Վէմ», Փարիզ, 1936, Դ տարի, թիւ 1, էջ 87-104:
107. Սրապիոնյան Ս. (Լուկաշին), Խորհրդային Հայաստանի արտաքին և ներքին դրոյթունը (ընկեր Ս. Սրապիոնյանի (Լուկաշին) զեկուցումը Հայաստանի Խորհուրդների II համագումարում – նոյեմբերի 29-30-ին 1922թ.), «Նորք» գրական յեկ քաղաքական հանդես, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, Յերեւան, 1922, էջ 215-232:
108. Վարանդեան Մ., Համայնավարութիւնը եւ համաշխարհային յեղափոխութիւն, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1926, 238 էջ:
109. Վրացեան Ս., Բոլշեւիկեան ազգային քաղաքականութեան բնաշրջումը, «Դրօշակ», 1927, թիվ 6, յունիս, էջ 164-168:
110. Վրացեան Ս., Զակֆէդերացիայի տասնամեակը, «Դրօշակ», 1932, թիւ 4, ապրիլ, էջ 78-82:

111. Վրացեան Ա., Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, փետրուար, էջ 32-43, օգոստոս, էջ 69-78:
112. Վրացեան Ա., Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս խորհրդայնացաւ Հայաստան, «Հայրենիք», Պոսթըն, 1940, փետրուար, էջ 73-94:
113. Վրացյան Ա., Խարխափումներ: Յ. Քաջագնունու «Հ.Յ.Դ. անելիք չունի այլեւս» գրքի առթիւ, Պոսթըն, «Հայրենիք», 1924, 230 էջ:
114. Վրացեան Ա., Կեանքի ուղիներով. Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. 2, Պէյրուֆ, տպ. «Համազգային», 1967, 348 էջ:
115. Վրացեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 10-րդ Ընդհանուր Ժողովը, «Դրօշակ», 1929, թիւ 1, էջ 3-7:
116. Վրացեան Ա., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Բոստոն, Հրատ. Հ.Յ.Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէի, 1941, 271 էջ:
117. Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1922թ., դեկտեմբեր, էջ 45-55, 1923, յունուար, էջ 42-48:
118. Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, էջ 542:
119. Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, նոյեմբեր, էջ 63-73, դեկտեմբեր, էջ 66-75, 1924, յունուար, էջ 83-90, 1924, մարտ, էջ 111-120:
120. Վրացեան Ա., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, 2 տարի, թիւ 1, էջ 1-10:
121. Վրացեան Ա., Քաղաքական խնդիրները Հ.Յ.Դ. XI Ընդհանուր Ժողովում, «Դրօշակ», 1929, թիւ 4-5, ապրիլ-մայիս, էջ 72-77:
122. Տեր-Մինասյան Ռ., Հողվածների ժողովածու, Երևան, «Ասողիկ», 2002, 424 էջ:
123. Տէր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղէտը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբօլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները պայլէվիքեան տիրապետութիւնը: Անտիպ

- փաստաթուղթեր դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ, Կ. Պօլիս, տպ. Մ. Տէր Սահակեան, 1921, 126 էջ:
124. Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լեւոն Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1954, մայիս, էջ 1-14:
125. Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր երրորդ, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1957, 431 էջ:
126. Փետրուարեան ապստամբութեան պատճառները, «Դրօշակ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 4-8:
127. Փետրուարեան ապստամբութիւնը (Բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), «Հայրենիք», 1956, փետրուար, էջ 3-12, մարտ, էջ 25-34, ապրիլ, էջ 17-27, մայիս, էջ 39-49, յունիս, էջ 59-69, յուլիս, էջ 32-40, սեպտեմբեր, էջ 49-57, հոկտեմբեր, էջ 68-78, նոյեմբեր, էջ 78-89, 1957, յունուար, էջ 58-66, փետրուար, էջ 59-71, մարտ, էջ 99-104:
128. Քաջազնունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, Միսիթարյանների տպարան, 1923, 108 էջ:
129. Քաջազնունի Յ., Յետ մահու: Պատմութիւններ, յուշեր, յօդուածներ, նամակներ, հրատ. պատրաստեց՝ Ս. Վրացեան, Պէյրութ, «Համազգային», 1968, 256 էջ:
130. Քաջազնունի Յ., Ռուսաստան թէ Թուրքիա. Բաց նամակ Շ-ին, Պուքրէշ, տպ. Cartea Romaneasca S. A., 1924, 54 էջ:
131. Օրջոնիկիձե Գ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, Հայպետհրատ, 1950, 615 էջ:

Այլ լեզուներով

132. Авалов З., Независимость Грузии в международной политике 1918-1921 гг. Воспоминания. Очерки, Париж, 1924, Б. и., 318 с.
133. Миллюков П., Национальный вопрос (происхождение национальности и национальные вопросы в России), Прага, из. «Свободная Россия», 1925, 192 с.

134. Миллюков П., Россия на переломе: Большевицкий период русской революции, Париж, асаса, 1927, т. I, 249 с.
135. Мясников А., О Закавказской Федерации, Тифлис, Заккнига, 1930, 39 с.
136. Орджоникидзе Г., Избранные статьи и речи, Ленинград, Госполитиздат, 1939, 530 с.
137. Сталин И., Сочинения, т. 5, Москва, Государственное издательство политической литературы, 1947, 446 с.
138. Baldwin O., Six Prisons and Two Revolutions: Adventures in Trans-Caucasia and Anatolia, 1920-1921, London, Hodder and Stoughton, 1924, 272 p.
139. Darbinian R., The Soviet Nationalities and the Question of Their Independence, "The Armenian Review", Watertown, 1953, Vol. 6, No. 4, pp. 48-56.
140. Hayrapetian Y., The February 18, 1921 Armenian Revolt, "The Armenian Review", Watertown, 1957, Vol. 10, No. 2, No. 3, (pp. 146-157), No. 4, (pp. 147-158), 1958, Vol. 11, No. 1, (pp. 143-152), No. 2, (pp. 153-160), No. 3 (pp. 151-156).
141. Kosoyan H., The First Taste of Soviet Rule in Armenia, "The Armenian Review", Watertown, 1953, Vol. 6, No. 1, pp. 70-85.

Դ. Ուսումնասիրություններ, կոլեկտիվ աշխատություններ

Հայերեն

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Երևան, Հայպետհրատ, 1967, 423 էջ:
2. Ազատեան Հ., Խորհրդային Հայաստանի անկախութեան խնդիրը, Փարիզ, «Վերելք» մատենաշար, 1926, 27 էջ:
3. Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Երևան, «Հայաստան», 1966, 413 էջ:

4. Ալլաօյաճեան Ա., Վահան Թէքէեան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր, Պէյրութ, հրատ. Թէքէեան մշակութային միութեան Մ. Նահանգներու եւ Գանատայի կենտրոնական վարչութեան, 1988, 400 էջ:
5. Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1982, էջ 338:
6. Անդրեասեան Ա., Պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան Ամերիկայի Արեւմտեան շրջանակի, Լոս Անճելըս, տպ. «Նոր օր», 1981, 200 էջ:
7. Անդրեասեան Ա., Սփիւռքը եւ Հայրենիքը. Տպաւորութիւններ եւ Դատումներ, Պէյրութ, տպ. «Զարթօնք»-ի, 1962, 261 էջ:
8. Ասպարէզ 1908-1958: Յիսնամեակ, տպ. «Ասպարէզ», Ֆրէզնօ, ա. թ., 400 էջ:
9. Ավագյան Բ., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը /Սկզբնավորումից մինչև 1924թ./, Երևան, «Գիտություն», 2000, 240 էջ:
10. Բաղդասարյան Ա., Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Յերևան, Պետհրատ, 1931, 152 էջ:
11. Գալոյան Գ., Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, Հայպետհրատ, 1961, 408 էջ:
12. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, «Գիտություն», 1999, 540 էջ:
13. Գեղամյան Գ., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նէպի տարիներին (1921-1936), Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 306 էջ:
14. Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Փարիզ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1927, 157 էջ:
15. Գիւզալեան Գ., Հայաստանի պատմութեան շրջանները, Պէյրութ, տպ. Հայ ճեմարանի, 1946, 160 էջ:
16. Գևորգյան Հ., Դրո, Երևան, «Զանգակ -97», 1999, 557 էջ:

17. Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ), Երևան, «Գիտություն», 1994, 462 էջ:
18. Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող», 1987, 480 էջ:
19. Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2004, 288 էջ:
20. Դալլաքյան Կ., Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, Երևան, «Գիտություն», 1999, 309 էջ:
21. Եափուճեան Ա., Ո՞վ կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը եւ ի՞նչ եղավ անոր հետեանքը, Գահիրէ, «Ոսկետառ», 1968, 136 էջ:
22. Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, «Միտք», 1965, 374 էջ:
23. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, Երևանի համալս. հրատ., 1979, 344 էջ:
24. Զոհրաբյան Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 1997, 368 էջ:
25. Թադևոսյան Արտակ, Անդրկովկասյան դաշնության ստեղծումը և Հայաստանը (1921-1922 թթ.): Ատենախոսություն Է.00.01- «Հայոց պատմություն» մասն. պատմ. գիտ. թեկն.գիտ. աստիճանի համար, Երևան, ՀՀ ԳԱԱ, Պատմ. ին-տ., 2002, 138 էջ:
26. Թոյնբի Ա., Հասու լինել պատմությանը, Երևան, «Անտարես», 2013, 608 էջ:
27. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վավերագրեր), Գահիրէ, «Նոր աստղ», 1946, 392 էջ:
28. Լեո, Անցեալից. Յուշեր, թղթեր, դիտումներ, Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1925, 482 էջ:

29. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007, 261 էջ:
30. Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2015, 160 էջ:
31. Խաչատրյան Ռ., Արտասահմանում հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, Հայկական ՍՍԴ ԳԱ հրատ., 1960, 151 էջ:
32. Խառատյան Ա., Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922), Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 534 էջ:
33. Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, Երևանի համալս. հրատ., 2002, 316 էջ:
34. Խուրշուդյան Լ., Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական-քաղաքական և կազմակերպական կրախը (1920-1921թթ.), «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու)», Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, էջ 185-225:
35. Կարապետյան Ա., 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, «Հայաստան», 1965, 62 էջ:
36. Կարինյան Ա., Դաշնակցությունը յեվ իր զինակիցները, Յերևան, Պետհրատ, 1932, 170 էջ:
37. Կարինյան Ա., Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, «Զակկնիգա», 1926, 88 էջ:
38. Կարինյան Ա., Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, Պետհրատ, 1926, 246 էջ:
39. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը): Գիրք երկրորդ, Երևան, «Հայաստան», 1983, 464 էջ:
40. Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, «Գիտություն», 2010, 339 էջ:

41. Հակոբյան Ա., Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921թ. քաղաքացիական կռիվներում, Երևան, Հայպետուսմանկիրատ, 1960, 92 էջ:
42. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Երևան, Իրանագիտության Կովկասյան Կենտրոն, 2005, 364 էջ:
43. Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2014, 260 էջ:
44. Հակոբյան Ա., Միակուսակցական վարչակարգի ձևավորումը խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, 366 էջ:
45. Հակոբյան Ա., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921թ., Երևան, ԵՊՀ հրատ., 1948, 113 էջ:
46. Հակոբյան Հ., Հայկական սփյուռքը հարավփոփոխ աշխարհում, Երևան, հեղ. հրատ., 2017, 652 էջ:
47. Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1967, 654 էջ:
48. Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցանկ 1794-1980: Կազմ.՝ Բաբլոյան Մ., Երևան, Պատմ. ինստ., 1986, 471, էջ:
49. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967). Համահավաք ցանկ: Կազմ.՝ Կիրակոսյան Ա., Երևան, ՀՍՍՀ Կուլտ. մինիստր., 1970, 623, էջ:
50. Հայոց պատմություն (խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան), հ. 4, գիրք I, Երևան, «Զանգակ-97», 2010, 800+24 էջ:
51. Հարությունյան Ա., Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Երևան, «Գիտություն», 2004, 239 էջ:
52. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, 299 էջ:
53. Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1920-1930 թթ., Երևան, «Գիտություն», 2015, 279 էջ:

54. Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում (1964-1988), Ուրվագծեր, Երևան, «Հայաստան», 1990, 485 էջ:
55. Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում (1920-1963), Ուրվագծեր, Երևան, «Հայաստան», 1967, 551 էջ:
56. Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը, Յերեվան, Հայպետհրատ, 1926, 30 էջ:
57. Հովսեփյան Մ., ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2009, 194 էջ:
58. Հովսեփյան Յու., Սովետահայ պատմագրությունը Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործման մասին, «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու)», Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, էջ 28-52:
59. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, Պատմ. ինստ., 2006, 564 էջ:
60. Ղազախեցյան Վ., Նժդեհը Չանգեզուրում (1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս), Երևան, «Զանգակ-97», 2001, 112 էջ:
61. Ղազարեան Վ., Համառոտ պատմություն ՌԱԿ-ի, Պէյրուֆ, տպ. «Մշակ», 1978, 80 էջ:
62. Ճիզմէճեան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնօ, տպագր. «Նոր օր»ի, 1930, 567 էջ:
63. Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940թթ., Երևան, «Գիտություն», 2002, 192 էջ:
64. Մարտիրոսեան Լ., Ամերիկահայությունը երեկ եւ այսօր, Պէյրուֆ, տպ. «Շիրակ», 1973, 112 էջ:
65. Մարտիրոսեան Լ., Դասակարգային կոիներու գիծը ազգերու պատմութեան մէջ, հ. Ա, Պէյրուֆ, տպ. ՏՕՆԻԿԵԱՆ, 1963, 883 էջ:

66. Մելիքսերթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1985, 476 էջ:
67. Մնացականյան Ա., Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Երևան, «Հայաստան», 1976, 116 էջ:
68. Նազարյան Վ., Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920-1922 թթ.), Երևան, Երևանի պետական համալսարան, 1974, 247 էջ:
69. Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Երևան, Իրանագիտության կովկասյան կենտրոնի հրատարակչություն, 2003, 280 էջ:
70. Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Երևան, Իրանագիտության կովկասյան կենտրոնի հրատարակչություն, 2004, 344 էջ:
71. Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, Մարտէլ, 1934, տպ. Ա. Արապեան, 259 էջ:
72. Շահան, Երեւանի համաձայնագիրը, Պոստոն, ա. հ., 1941, 112 էջ:
73. Շահան, Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի, Բաղդատական Զուգակշիռ), Պէյրութ, տպ. «Արարատ», 1957, 129 էջ:
74. Շահան, «Վերստին յաւելլուած». Ալեքսանդրապոլի դաշնագրի «ի՞նչպէս»ն ու «ինչո՞ւ»ն պաշտոնական եւ յուշագրական վկայութիւններու լոյսին տակ, Բոստոն, «Պայքար» տպարան, 1955, 144 էջ:
75. Ոգանեզով Գ., Նժդեհի հրոսակախմբի վոչնչացումը, Յերևան, Պետ. հրատ., 1931, 62 էջ:
76. Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Պէյրութ, «Մշակ», 1965, 308 էջ:
77. Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները եւ հայրենիքը, Փարիզ, ARAXES, 1946, 163 էջ:
78. Չուբարյան Գ., Դաշնակցության տաճկական ոիրենտացիան յեվ հայրենիքի փրկության կոմիտեն, Յերեվան, Պետական հրատարակչություն, 1929, 86 էջ:

79. Պետրոսյան Շ., Սովետական պետության կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Երևան, Հայպետհրատ, 1961, 280 էջ:
80. Պետրոսյան Վ., Հայաստան. 1919-1922 թվականներ, հ. 2, Երևան, հեղ. հրատ., 2011, 678 էջ:
81. Սահակյան Ա., Հայաստանը Անդրկովկասյան դաշնության կազմում: Խանդավառ միավորումից մինչև անաղմուկ բաժանում, Վանաձոր, 2013, 276 էջ:
82. Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, «Լուսակն», 2007, 532 էջ:
83. Սարգսյան Ե., Դավադիր գործարք, Երևան, 1995, «Հայաստան», 1994, 204 էջ:
84. Սարգսյան Կ., Հայաստանում սովետական իշխանության առաջին ամիսների ՀԿԿ ներքին քաղաքականության մի քանի հարցերի մասին, «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու)», Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, էջ 5-27:
85. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 2000, 698 էջ:
86. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, «Կասիա», 1996, 830 էջ:
87. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, «Հայաստան», 1991, 630 էջ:
88. Սիմոնյան Հ., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, «Հայաստան», 1968, 674 էջ:
89. Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձության, Երևան, «Լուսակն», 2016, 1088 էջ:
90. Ստեփանյան Խ., 1921 թ. փետրվարյան ապստամբությունը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Երևան, «Լուսակն», 2016, 200 էջ:
91. Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2008, 184 էջ:
92. Վեհապետեան Թ., Նոր սերունդը՝ քավութեան նոխազ, Բ հատոր, Ալեքսանդրապոլի դաշնագիրը եւ Փետրուարեան ապստամբութիւնը իրենց

- յարակից հարցերով, Պէյրուօ, հրատարակութիւն Հովիւեան մատենաշարի, 1985, 207 էջ:
93. Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդի. Ժողովը (1890-1924), Աթէնք, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, 1988, 259 էջ:
94. Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երեւան, Երեւանի համալս. հրատ., 1997, 421 էջ:

Այլ լեզուներով

95. Абдулатипов Р., Федералогия, СПб., Питер, 2004, 320 с.
96. Блок М., Апология истории или Ремесло историка, Москва, “Наука”, 1986, 256 с.
97. Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М-Л, Госиздат, 1929, 434 с.
98. Галоян Г., Борьба за Советскую власть в Армении, Москва, Госиздат, 1957, 256 с.
99. Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900-1922, Ереван, “Айастан”, 1969, 508 с.
100. Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 2009, 207 с.
101. Кожевников Ф., Советское государство и международное право 1917-1947 гг., Москва, Юрид. изд., 1948, 376 с.
102. Лангула Ш.-В., Сеньобос Ш., Введение в изучение истории, Москва, Государственная публичная библиотека России, 2004, 305 с.
103. Мнацаканян А., Посланцы советской России в Армении, Ереван, Айпетрат, 1959, 419 с.
104. Оганесян Э., Век борьбы, т. 2, Мюнхен-Москва, из. «Феникс», 1991, 383-700 с.
105. Хармандарян С., Ленин и становление Закавказской федерации: 1921-1923, Ин-т ист. партии при ЦК КП Армении, Ереван, “Айастан”, 1969, 456 с.
106. Семанов С., Кронштадтский мятеж, Москва, 2003, ЭКСМО: АЛГОРИТМ, 254 с.

107. Шиллер Ф., Собрание сочинений: В 7-ми т., т. 5, Москва, Гослитиздат, 1957, 584 с.
108. Эврич П., Восстание в Кронштадте. 1921/ Пер. Игоревский Л., Москва, Центрполиграф, 2007, 237с.
109. Atamian S., The Armenian Community: The historical development of a social and ideological conflict, New York, Philosophical library, 1955, 479 p.
110. Figes O., A people's tragedy: The Russian Revolution: 1891-1924, New York, Penguin Book, 1998, 923 p.
111. Pipes R., The Formation of the Soviet Union. Cambridge, MA: Harvard University Press, 1997, 365 p.
112. Walker Ch., Armenia: The Survival of a Nation. London: Crom Helm, 1980, 446 p.

Ե. Հոդվածներ

Հայերեն

1. Արրահամյան Հ., Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ (1920 թ. նոյեմբեր-1921 թ. ապրիլ). «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, թիվ 2, էջ 122-132:
2. Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ.՝ Թէոդիկ), ԺՁ տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1922, էջ 235-260:
3. Դալլաքյան Կ., Ա. Չոպանյանը և հայոց քաղաքական կողմնորոշման հարցերը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1996, թիվ 1-2, էջ 47-56:
4. Եղիազարյան Ա., Հայ Սփյուռքի պատմության պարբերացումը, «Սփյուռքագիտություն: Տարեգիրք», Երևան, 2013, էջ 33-51:
5. Թորոյան Պ., Դաշնակցության արդի քաղաքականությունը, «Լենինյան ուղի», 1928, թիվ 11, էջ 55-76:

6. Խաչատրյան Կ., Հայաստանը խորհրդաքեմալական հարաբերությունների ոլորտում 1920 թվականին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1997, թիվ 3, էջ 45-56:
7. Հակոբյան Ա., 1921թ. փետրվարյան իրադարձություններում «կարմիրների» և ապստամբների զինուժի մասին հայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2011, թիվ 2, էջ 3-23:
8. Հակոբյան Ա., Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավագիտական գնահատականը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, թիվ 2, էջ 17-30:
9. Հակոբյան Ա., Ռուսաստանի ու Հայաստանի խորհրդայնացման գործընթացների և միակուսակցական վարչակարգի հաստատման պատմական մի քանի զուգահեռներ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2014, թիվ 1, էջ 48-69:
10. Հակոբեան Ա., Փետրվարյան ապստամբությունը հայ պատմագրության մեջ, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2011, թիվ 1, էջ 132-158:
11. Հարությունյան Հ., Նոր բայազետի գավառը 1921թ. Փետրվարյան ապստամբության ընթացքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, թիվ 2, էջ 104-123:
12. Հովհաննիսյան Ա., Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք» գրական յեթ թաղաքական հանդես, գիրք երրորդ, ապրիլ-սեպտեմբեր, Յերեվան, 1923, էջ 162-185:
13. Հովսեփյան Յու., 1921 թ. փետրվարյան խռովության առաջացման պատճառների նենգափոխումը հայ բուրժուական պատմագիտության մեջ. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, թիվ 4, էջ 49-55:
14. Ղազախեցյան Վ., Հայ սպաների արքորը 1920-1921թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2003, թիվ 2, էջ 32-51:

15. Ղազախեցյան Վ., Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2011, թիվ 1, էջ 45-70:
16. Ղազախեցյան Վ., Գևորգյան Հ., Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2003, թիվ 1, էջ 46-50:
17. Ղարիբջանյան Գ., Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորումը և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1960, թիվ 4, էջ 34-52:
18. Սահակյան Ա., Ազգային հարցը Անդրկովկասում և լուծման տարբերակները 1920-ական թվականներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2002, թիվ 1 (100), էջ 127-137:
19. Սարգսյան Ե., Աբեղյան Խ., Սարգսյան Ա., Լեգրանի միսիան (փաստաթղթեր), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, թիվ 3, էջ 21-104:
20. Սարգսյան Կ., Հայաստանում ռազմական կոմունիզմի կիրառման պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, թիվ 12, էջ 11-20:
21. Սարգսյան Կ., Հայաստանում սովետական իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները (1921 թ. ապրիլ—հունիս), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1986, թիվ 3, էջ 21-27:
22. Ստեփանյան Գ., 1921թ. փետրվարի 14-18-ի իրադարձությունները Երևանի կենտրոնական բանտում. Նոր մանրամասնություններ Հայիեղկոմի ռճրագործությունների վերաբերյալ, «Վէմ» համահայկական հանդես, Երեւան, 2015, թիվ 3, էջ 161-178:
23. Ստեփանյան Խ., 1921թ. փետրվարյան ապստամբության հետևանքները սիյուռքահայ մամուլի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, 484 էջ, էջ 200-212:

24. Ստեփանյան Խ., 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), «Պատմություն և հասարակագիտություն», Տարեգիրք (գիտական հոդվածների ժողովածու), 2015, թիվ 1, 325 էջ, էջ 187-225:
25. Ստեփանյան Խ., 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառներն ու հետևանքները Սիմոն Վրացյանի գնահատմամբ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2015, թիվ 1, էջ 139-151:
26. Ստեփանյան Խ., Ազգային խնդիրների անտեսումը որպես 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», հ. 15, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., Երևան, 2014, էջ 160-171:
27. Ստեփանյան Խ., Բոլշևիկյան բռնաճնշումները որպես 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառ (1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականները), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2014, հ. 17, էջ 125-133:
28. Ստեփանյան Խ., Բոլշևիկների կողմից հայկական բանակի և հայ սպայության հանդեպ հալածանքը որպես 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Երևան, 2014, թիվ 3 (19), էջ 42-48:
29. Ստեփանյան Խ., Խորհրդային Հայաստանում «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության քննադատությունը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի կողմից (1920-1930-ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, թիվ 2 (644), էջ 138-145:
30. Ստեփանյան Խ., Հայկական բարձրավանդակի խորհուրդը Հայկ Ասատրյանի մտքերում, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ. պետություն, հայրենիք. Պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների

միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (2011 թ., 6-8 նոյեմբերի, Ծաղկաձոր), Երևան, 2012, էջ 129-134:

31. Ստեփանյան Խ., Վրաստանի 1924թ. հակախորհրդային ապստամբության արձագանքները սփյուռքահայ մամուլում, «Հայագիտական հանդես», 2017, թիվ 3, էջ 151-162:
32. Սուքիասյան Հ., 1921 թ. փետրվարի 18-ին նախորդած ձերբակալությունների փաստաթղթերը, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2011, թիվ 1, էջ 206-220:
33. Սուքիասյան Հ., ՀՍԽՀ արտգործոլկոմատի տեղեկատու բաժնի բյուլետենը (1921-1922 թթ.). «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, թիվ 3, էջ 87-93:
34. Սուքիասյան Հ., Սյունիքը Հայաստանի կազմում պահպանելու խնդիրը Գարեգին Նժդեհի աշխատություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, թիվ 2-3, էջ 141-148:
35. Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 1 (113), էջ 107-110:
36. Քիրքչեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, «Ազգակ շաբաթօրեակ-Դրօշակ», Դ տարի, Պէյրուֆ, 1973, թիւ 44, էջ 701-703:

Այլ լեզուներով

37. Бекзадян А., Советская Социалистическая Республика Армении, «Жизнь национальностей», 1923, январь, книга первая, стр. 161-165.
38. Бройдо Г., Наша национальная политика и очередные задачи Наркомнаца, «Жизнь национальностей», Москва, 1923, книга первая, январь, с. 5-13.
39. Ефимов Н., Атарбеков - один из зачинщиков красного террора, «Вопросы истории», 2000, N 6, стр. 130-136.

40. Кузнецова С. Крах турецкой интервенции в Закавказье в 1920—1921 годах. «Вопросы истории», 1951, N 9, стр. 143-156.
41. Caprielian A., The Armenian Revolutionary Federation and Soviet Armenia, "The Armenian Review", Watertown, 1975, Vol. 28, No 3, pp. 283-311.
42. Hovhannisian R., Simon Vratzian and Armenian Nationalism, "The Armenian Review", Watertown, 1970, Vol. 23, No. 1, pp. 3-35.
43. Safran W., Diasporas in Modern societies: Myths of Homeland and Return. "Diaspora: A Journal of Transnational Studies", Volume 1, No 1 (1991), pp. 83-99.
44. Stepanyan Kh., The criticism of the policy of "military communism" applied in Soviet Armenia by the social-political thought of Armenian Diaspora (1920-1930s), "European science review", «East West» Association for Advanced Studies and Higher Education GmbH, January-February, Vienna, Austria, 2014, N 9-10, September-October, pp. 19-22.

2. Պարբերական մամուլ

Ամսագրեր, հանդեսներ, տարեգրքեր

Հայերեն

1. «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ», Դ տարի, Պէյրուֆ, 1973, թիվ 44:
2. «Ամենուն տարեցոյցը» (կազմ.՝ Թէոդիկ), ԺՁ տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1922:
3. «Անահիտ», Փարիզ, 1932-1933, թիվ 3-6:
4. «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, թիվ 3; 2002, թիվ 1; 2003, թիվ 1, 2; 2008, թիվ 2; 2009, թիվ 1; 2011, թիվ 1:
5. «Բիլլետեն» (Հայաստ. Սօց. Խորհրդ. Հանրապետութիւն, Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի Ինֆորմացիոն Բաժին), Երեւան, 1921, N 1:
6. «Դրօշակ», Փարիզ, 1925, թիվ 1, 6; 1926, թիվ 1, 2, 3, 4, 5, 11-12; 1927, թիվ 6, 12; 1928, թիվ 3, 5, 6-7; 1929, թիվ 1, 4-5; 1930, թիվ 2, 5; 1931, թիվ 1-2; 1932, թիվ 4:

7. «Լենինյան ուղի», Երևան, 1928, թիվ 11:
8. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1986, թիվ 3; 1987, թիվ 4; 1997, թիվ 3; 2007, թիվ 2; 2008, թիվ 3; 2012, թիվ 2-3, 2015, թիվ 2:
9. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Երևան, 2014, թիվ 3:
10. «Հայագիտական հանդես», Երևան, 2017, թիվ 3:
11. «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», Երևան, 2014, հ. 15:
12. «Հայրենիք», Պոսթըն, 1922, դեկտեմբեր; 1923, յունուար, փետրուար, յունիս, օգոստոս, յուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր; 1924, յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, յունիս; 1925, մայիս, յունիս, յուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, 1926, յունուար, յունիս, յուլիս, հոկտեմբեր, նոյեմբեր, 1927, փետրուար, սեպտեմբեր; 1928, փետրուար; 1929, ապրիլ, օգոստոս, դեկտեմբեր; 1933, դեկտեմբեր; 1934, օգոստոս, դեկտեմբեր, 1935, յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, հոկտեմբեր; 1936, սեպտեմբեր, հոկտեմբեր; 1937, փետրուար, յուլիս; 1940, փետրուար; 1954, մայիս; 1956, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր; 1957, յունուար, փետրուար, մարտ; 1961, գարուն; 1968, ամառ:
13. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2014:
14. Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016:
15. «Նորք» գրական յեվ քաղաքական հանդես, Յերեվան, 1922, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր, 1923, գիրք երրորդ, ապրիլ-սեպտեմբեր:
16. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1960, թիվ 4; 1996, թիվ 1-2; 2011, թիվ 2; 2014, թիվ 1, 2015, թիվ 1:

17. «Պատմություն և հասարակագիտություն», տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2015, թիվ 1:
18. «Սփյուռքագիտություն», Տարեգիրք, Երևան, 2013:
19. «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2011, թիվ 1; 2013, թիվ 3; 2015, թիվ 3:
20. «Վէմ», Փարիզ, 1934, թիվ 2, 3, 4; 1936, թիվ 1, 1938, թիվ 1:
21. «Տարոնի Արծի», Սոֆիա, 1938, թիվ 3-4:
22. «Ցեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936, թիվ 1:

Այլ լեզուներով

23. “Вопросы истории“, Москва, 1951, No 9; 2000, No 6.
24. “Жизнь национальностей“, 1923, книга первая, январь.
25. “Diaspora: A Journal of Transnational Studies“, Volume 1 N 1 (1991),
26. “European science review“, Vienna, 2014, No 9-10.
27. “The Armenian Review“, Watertown, 1953, Vol. 6, No. 1, 4; 1957, Vol. 10, No. 2, No. 3, No. 4, 1958, Vol. 11, No. 1, No. 2, No. 3, 1970; Vol. 23, No. 1, 1975, Vol. 28, No 3.

Թերթեր

Հայերեն

1. «Ազատ խօսք», Սոֆիա, 1938, 19 փետրուարի:
2. «Ազատ միտք», Գահիրե, 1936, 22 օգոստոսի:
3. «Ազատ Հայաստան», Երևան, 1921, 19, 22, 26 փետրուարի, 15 մարտի:
4. «Ալիք», Թեհրան, 1933, 28 մայիս; 1934, 27 մայիս:
5. «Աշխատատար», Նիւ-Եորք, 1921, 13 հոկտեմբերի:
6. «Ապագայ», Փարիզ, 1924, 23 փետրուարի, 27 դեկտեմբերի; 1926, 13 փետրուարի, 20 մարտի; 1928, 26 մայիսի, 1 դեկտեմբերի; 1929, 1 յունիսի, 5 հոկտեմբերի; 1930, 22 փետրուարի, 4, 7, 11 յունիսի; 1931, 24, 28 յունուարի; 1932, 28 մայիսի; 1933, 4, 8 փետրուարի, 4 նոյեմբերի; 1934, 2, 12 յունիսի; 1938, 1 յունուարի:

7. «Ասպարէզ», Ֆրէզնօ, 1921, 27 սեպտեմբերի, 14 հոկտեմբերի; 1923, 10 օգոստոս; 1927, 27 մայիսի:
8. «Արարատ», Աթէնք, 1925, 27 յունուարի, 19, 20 մայիսի:
9. «Արարատ», Պէյրուօ, 1938, 11, 23, 25 յունուարի, 24 փետրուարի:
10. «Արաքս», Սոֆիա, 1926, 24 փետրուարի, 16 մարտի:
11. «Արեւ», Աղէքսանդրիա, 1923, 15 մայիսի, 20 յունիսի, 3, 5, 16 յուլիսի; Գահիրէ, 1923, 20 սեպտեմբերի; 1924, 2 մայիսի, 9 յունիսի, 13 նոյեմբերի; 1925, 2 դեկտեմբերի; 1928, 29 մայիսի; 1931, 7 յուլիսի, 24 սեպտեմբերի; 1932, 8 յունիսի:
12. «Արեւելեան մամուլ», Ջմիւռնիա, 1921, 4 հոկտեմբերի:
13. «Արեւելք», Գահիրէ, 1948, 18 փետրուարի:
14. «Արմենիա», Պուենոս Այրէս, 1933, 18 փետրուարի:
15. «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1923, 23 դեկտեմբերի; 1924, 18 մայիսի, 13 յուլիսի, 13 դեկտեմբերի; 1925, 8 փետրուարի:
16. «Երիտասարդ Հայաստան», Չիկագօ, 1920, 22 դեկտեմբերի; 1921, 17 յունուարի, 5 օգոստոսի; Բոստոն, 1924, 19 ապրիլի, 9 օգոստոսի, 12 նոյեմբերի; 1925, 25 փետրուարի, 11 ապրիլի, 28 նոյեմբերի; Նիւ Եօրք, 1929, 2 նոյեմբերի; 1930, 29 նոյեմբերի:
17. «Երեւան», Փարիզ, 1925, 3, 6 դեկտեմբերի; 1926, 10 յունվարի, 30 մայիսի; 1927, 21 սեպտեմբերի; 1928, 27 մայիսի; 1929, 24 փետրուարի, 31 յուլիսի; 1930, 28 մայիսի:
18. «Ժամանակ», Կ. Պոլիս, 1924, 25 հոկտեմբերի:
19. «Ժողովրդի ձայնը», Կ. Պոլիս, 1920, 25, 29 դեկտեմբերի; 1921, 2 յունուարի, 24 փետրուարի, 8 մարտի; 1922, 14 յունուարի:
20. «Խորհրդային Հայաստան», Երևան, 1922, 5 դեկտեմբերի:
21. «Կարմիր աստղ», Երևան, 1921, 29 նոյեմբերի:
22. «Կարմիր Ավանգարդ», Բաքու, 1920, 30 հոկտեմբերի:

23. «Կոմունիստ», Երևան, 1920, 4, 7, 9, 14, 21, 22, 23, 26 դեկտեմբերի; 1921, 29 յունուարի, 8, 12 փետրվարի:
24. «Հայաստանի կոչնակ», Նիւ Եօրք, 1921, 9 ապրիլի; 1923, 25 օգոստոսի; 1925, 7 մարտի, 18 ապրիլի; 1926, 7 յուլիսի; 1927, 19 մարտի, 2 յուլիսի:
25. «Հայաստանի ծայն», Փարիզ, 1922, 20 յուլիսի, 9 սեպտեմբերի, 30 դեկտեմբերի:
26. «Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն, 1923, 25 ապրիլի, 30 յունիսի, 8 յուլիսի; 1924, 28, մայիսի, 25, 29 յունիսի; 1925, 18 փետրուարի; 23 ապրիլի, 10, 30 յունիսի; 1, 21 օգոստոսի, 18-22 նոյեմբերի, 3 դեկտեմբերի; 1926, 22 յունուարի, 18 փետրուարի, 4, 7, 28, մայիսի; 1927, 18 փետրուարի; 1928, 18, 19 փետրուարի, 1 մարտի, 28 մայիսի, 14 յուլիսի, 6, 7 սեպտեմբերի; 1929, 10 յունուարի, 28 մայիսի, 6 յունիսի, 19 սեպտեմբերի, 24 հոկտեմբերի, 1 նոյեմբերի; 1930, 18 փետրուարի, 30 մայիսի, 29 օգոստոսի; 1931, 18, 19, 20 փետրուարի, 28 յուլիսի; 1932, 28 մայիսի; 1933, 28 մայիսի; 1933, 5 մայիսի, 24, 30 օգոստոսի; 1934, 18 փետրուարի; 1936, 28 մայիսի:
27. «Ճակատամարտ», Կ. Պօլիս, 1921, 25 յունուարի, 2, 5, 8, 9 մարտի, 20, 21, 25 մայիսի; 1922, 17 յունուարի, 2 փետրուարի; 1923, 27 մայիսի, 6 յուլիսի:
28. «Յառաջ», Երեւան, 1920, 20 նոյեմբերի:
29. «Յառաջ», Փարիզ, 1926, 31 յունուարի, 10 հոկտեմբերի; 1929, 19, 21, 23 փետրուարի, 9, 11 յունիսի; 1929, 21, 22 փետրուարի; 1931, 18; 1932, 21 փետրուարի, 29 մայիսի, 2 յունիսի, 2 դեկտեմբերի; 1933, 2 ապրիլի, 28, մայիսի, 15 յունիսի; 1935, 6 մարտի, 1936, 18 փետրուարի, 12, 30 յուլիսի, 18 օգոստոսի:
30. «Յուսաբեր», Գահիրէ, 1924, 21 փետրուարի, 11, սեպտեմբերի, 20 նոյեմբերի; 1925, 10 մարտի; 1926, 2 օգոստոսի; 1927, 8; 1928, 19, 20 ապրիլի, 2 յունիսի, 17, 18 հոկտեմբերի; 1929, 1 յունիսի, 4 յուլիսի; 1930, 31 մարտի; 1931, 15, 17 յունուարի, 18 փետրուարի, 7, 8, 10, 14-17, 20 ապրիլի, 4 օգոստոսի, 26 հոկտեմբերի, 13 նոյեմբերի; 1933, 27 մայիսի; 1935, 26 ապրիլի:
31. «Նոր Արշալոյս», Պուքրէշ, 1923, 1 յուլիսի:

32. «Նոր օր», Աթէնք, 1932, 18, 19 փետրուարի:
33. «Պայքար», Պոստոն, 1923, 27 օգոստոսի, 14 դեկտեմբերի; 1924, 3 մարտի, 13 յունիսի; 1925, 27 փետրուարի, 22 յունիսի, 30 յուլիսի; 1926, 30 յունուարի; 1927, 4, 10, 12 փետրուարի, 1 մարտի; 1928, 5 մայիսի, 18 օգոստոսի, 29 նոյեմբերի; 1929, 11 սեպտեմբերի; 1930, 5 փետրուարի; 1931, 25 յունուարի, 15 փետրուարի, 4 ապրիլի, 7 յուլիսի, 16, 27 սեպտեմբերի; 1932, 29 նոյեմբերի; 1933, 31 օգոստոսի, 29 նոյեմբերի; 1935, 2 ապրիլի:
34. «Պրոլետար», Նիւ-Յօրք, 1924, 12, 19 յուլիսի; 1925, 21 փետրուարի, 11 ապրիլի:
35. «Սեան», Աթէնք, 1933, 25 մայիսի, 16 յուլիսի, 29 նոյեմբերի; 1934, 11 մարտի:
36. «Սուրիական մամուլ», Հալէպ, 1923, 8, 19 յուլիսի, 14 հոկտեմբերի, 30 դեկտեմբերի; 1924, 3, 25 փետրուարի, 25, 27 յուլիսի, 3 հոկտեմբերի; 1925, 25 փետրուարի:
37. «Վերջին լուր», Կ.Պօլիս, 1921, 28 մարտի:

Այլ լեզուներով

38. “Заря Востока“, Тифлис, 1922, 12 декабря; 1923, 3 января, 1 апреля; 1937, 27 мая.
39. “Коммунист“, Эривань, 1920, 7 декабря.